331.500

1285-Uz

2000

1044
12855-ՄՀ
7114-57

# ՍԿԻԶԲՆ ԳԻՐ ՔԱՅՍ ՈՐ ԿՈՉԻ ԺՈՂՈՎԱԾՈՒ

Գիրքս այս ճառէ զպատմութիւնս
նախահարցն սրբոց:
Այլ և զՏեառնէ մերմէ. Յոհ. Բոհ.՝
որ է մեկնէ ըստ առաջադրին իւրոյ,
Գեղեցիկ իմացման ծոփք շարագրեցեալ:
Այլ և քարոզ.ք պիտանացուք ասացեալ
սրբոց Վարդապետաց ի յօգուտ վեր
ծանողաց:
✠ Վերստին տպեցեալ հանդերձ սրբա
գրութեամբ և աշխատասիրութեամբ տպողի:
Ի հայրապետութեան Տեառն Աբրահա
մու Արքայազն. Կաթուղիկոսի ամ հայոց:
Ի [illegible] թուոյ ՌՃՀԹ. Ի Հոկտեմբերի. ԻԶ.
Արդեամբ ազնիւք երից արանց. այս
ինքն, տէրացու Մինասականի կոստան
դնու պօլսեցւոյ. և կեսարացի տէրա
ցու Պետրոսի. նա և Մարտիրոս ա
նիմաստ դպրի տպողի սորին
ի վայելումն մանկանց
սիոնի:

Ա.

[1730]
1730. Կ. Պոլիս

# ՀԱՅՐ ՄԷ



ԱԴԱՄԵՒԱ

Ձ

## Գլուխ. Ա:

Պատմութիւն և Ճառ, Վասն ստեղծմանն ադամայ, և մարդա-
[illegible]

# ՌԽ ԲՍՏԵՂԾ ՃՐ ԶՏ Օ ԳՈՒՆԴՍ ՀՐԵՇՏԱ

կաց և հրեշտակապետաց. 'ի վեր և բարձր արար քան զամ հրեշտակս զսատանայէլ եզբելեար և մեծ փառօք զարդարեաց զնա: Իսկ նմ հրեշտակք և հրեշտակապետք, օրհնէին գովէին և փառաւոր առնէին զնա. եպերծն սատանայ հպարտանայր և զարմանայր ընդ մեծութի փառաց իւրոց: Վ̃որոյ հպարտացաւ և ոչ կամէր օրհնել զա̃ծ. այլ կամէր ևս բարձրագոյն բազմիլ յաթոռս հաւասար աթոռոյն ա̃յ: Եւ բարկացաւ Տր̃ն հրամայեաց ուռնաւոր սերով

բէլեյն եւ բազմաչեայ քերովբէիցն, եւ ամ̃ երկ
նաւոր զօրացն, որք հարին զդասսն սատանայի
եւ թօթափեցին զնմ̃ գունդսն դիւաց. եւ 'ի
վայր հարին որ̃ կարկուտ 'ի յամպոյն: Իսկ
բարերարն մծ̃ փոխանակ հպարտութե̃ն սա
դայելի ըստեղծ զադամ, զի հողեղէն մար
դօք լնուցու զտեղի նր̃: Եւ արկ զթմրութի̃
իվր̃ ադամայ, եւ էառ զմի կողիցն նր̃ եւ ելից
ընդ այնր մարմին եւ եղեւ կին: Իբրեւ զար
թեաւ ադամ 'ի քնոյ, ետես զկինն եւ հաւանե
ցաւ եւ ասաց այժմ սա ոսկր յոսկերաց իմոց, եւ
մարմին 'ի մարմնոյ իմոյ. սա կոչեսցի կին:
Իսկ տր̃ մծ̃ տարեալ եդ զնա 'ի մէջ դրախ
տին ադենայ՝ որ է փառօք լի եւ միջասահման.
եդ իվր̃ նց̃ պատուէր եւ ասաց, թէ ուտելով
կերիցէք զամ̃ պտուղ դրախտին. բայց 'ի պտ
ղոյ գիտութեան մի ուտիցէք. զի յորժամ
ուտիցէք՝ մահու վաղճանեսջիք. վասն այն
պատուէր եդ իվր̃ նոցա. զի փորձեսցէ եւ
տեսցէ թէ պահէին զպատուիրանն այ̃. եւ
թէ ո՞չ ըզփշալից աշխարհին ժառանգեսցեն:
Իսկ պիղծն սատանայ, նախանձեալ վասն
ադամայ կամէր մտանել 'ի դրախտն. եւ ահա
բեկեալ 'ի հրեշտակաց եւ ոչ կարէր. ապա
օձն էր թեւաւոր եւ ունէր լեզու, եւ էր գե
ղեցիկ եւ իմաստուն քան զամ̃ կենդանի, մը
տանէր 'ի դրախտն եւ ելանէր:
* Իսկ ամենաչարն սատանայ ուսոյց օձին

եւ խաբեաց զադամ: Քանզի օձն ետես զեւա
զի ճաշակէր յամ պտղոյ դրախտին. եւ ՚ի միջ
ծառոյն ոչ ուտէր: Իբրեւ հեռացաւ ա-
դամ եւ շրջէր ՚ի դրախտին, օձն խօսեցաւ ընդ
եւայի եւ ասաց ընդէ՞ր յամենայն ծառոց ճա-
շակես, եւ յայդ մին ծառոյն ոչ ճաշակես որ
գեղեցիկ է տեսանելեամբ: Նա եւ՝ զի ած ա-
սաց յորժամ ուտէք ՚ի ծառոյդ մահու մե-
ռանիք: Իսկ օձն ասէ, ած զձեզ խաբեաց.
զի յառաջ ած մարդ էր իբրեւ զձեզ. երբ
կերաւ ՚ի պտղոյ անտի, նա այն մեծ փառ-
քին հասաւ. վասն այն ասաց ձեզ չուտել.
զի մի կերեալ հաւասար լինիք աստուծոյ:
Իբրեւ լուաւ զխրատ օձին, ցանկացաւ
աստուածանալ. փութապէս կտրեաց եւ
կերաւ ՚ի պտղոյն. եւ առժամայն մերկա-
ցաւ: Իսկ եկն ադամ եւ ետես զկինն մերկա-
ցեալ, դառնացաւ եւ ասէ, այս ի՞նչ է զոր
դու գործեցեր. ընդէ՞ր կերեր ՚ի պտղոյդ եւ
մերկացար: Նա եւ՝ խիստ քաղցր է պտուղս
եւ բարեհամ առ դու եւս կեր. նա կամէր խա-
բել զադամ: Նա ադամ. ուտեմ եւ ես քեզ
նման մերկանա՞մ. եւ ասէ եւա ես շատ կերայ
վն այն մերկացայ. դու սակաւ կեր: Նա ա-
դամ ոչ կարեմ ճաշակել եւ քեզ նման լինել.
ասէ եւա՝ թէպէտ եւ դու շատ ուտիցես ոչ մեր-
կասցիս, զի սիրէ զքեզ ած. իբրեւ զայս լսեց
ադամ, եառ զպտուղն ՚ի ձեռն բայց վախէր

ուտել։ Իսկ նա լայր և աղաչէր զնա և ասէր
կե՛ր և մի՛ որոշեր զիս 'ի քեն զանէ։ Մինչ ապ-
րիմք 'ի միասին ապրիմք. եթէ մեռանիմք 'ի
միասին մեռանիմք։ Իսկ ադամ բազում քըն-
նութ̃ անէր զպտուղն 'ի ձեռն մինչև դ̃
ժամ. երբեմն կամէր ուտել և երբեմն ոչ.
բայց երբ հայէր կընոջ յաղաչանքն և յարտա-
սուքն, ողորմութ̃ի անկանէր 'ի սիրտն. երբ
զմերկութ̃ին տեսանէր, վախէր ուտել. երբ
զգեղեցկութ̃ին տեսանէր, խելքն 'ի գլխոյն
թափէր. թէպէտ մերկացեալէր. բայց գե-
ղեցիկէր զի նորաստեղծ էր և իբրև ըսպիտակ
մարգարիտ փայլէր։ Իսկ ադամ վասն սիրոյն
կնոջն ոչ կարաց պահել զինքն և կերաւ 'ի պտ-
ղոյն, և մերկացաւ 'ի լուսոյն։ Ապա՛ վ̃ն մեր-
կուէ̃ ամօթոյն՝ մտեալ 'ի ներքս թզենւոյն
ծածկեցաւ ընդ տերևովն, զի մի՛ տեսցէ ա̃ծ։
Քանզի հանապազ գայր ա̃ծ և խօսէր ընդ-
նոսա սիրով և հանդարտութ̃։ Այլ տեսեալ
ադամայ և եւայի զոտնաձայնն տ̃ն գալոյն ա̃յ
զոր էբր. ծ̃ կանգնաչափ բարձր իւ̃ թզենւոյն
ձայնեաց բարկութ̃ և ասէ ո՞ւր ես ա՛դամ։
Ասէ ադամ տ̃ր զքո ձայնդ լուայ և երկեայ
մերկէի և թաքեայ։ Ասէ ա̃ծ ո՞չ ասացի քեզ
թէ մի՛ ուտեր 'ի պտղոյ անտի. զի յորժամ ու-
տես մերկանաս և մեռանիս. ընդէ՞ր կերար.
ասէ ադամ տ̃ր այս կինն զոր դու ըստեղծեր
սա խաբեաց զիս։ Դարձեալ տ̃րն խօսեցաւ ը̃

և այլ. թէ ընչէ՞ր կերար 'ի պտղոյն. տալէ և
տր այս օձս զոր դու ըստեղծեր ամ խաբեաց
զիս: Ապա՛ բարկացեալ տրն ի վր օձոյն. և ասէ
դու օձդ որ փոխանակ զի արարեր զայդ ա
նիծեալ լիցիս 'ի մէջ ամ գազանաց և ամ կեն
դանեաց. ի վր լանջաց քոց և ի վր որովայնի
քոյ սողալով գնասցես և հող կերիցես զամ
աւուրս կենաց քոց. և եդից զթշնամութի
'ի մէջ քո և 'ի մէջ զաւակի դորա, դու ըսպա
սեսցես դորա զարշապարին, և դա ըսպասես
ցէ քում գլխոյ: Ապա՛ դարձեալ ասաց ցկինն.
փոխանակ զի արարեր զայդ. տրտմութբ և ցա
ւօք ծնցիս և ծնունդ քո 'ի մահ փոխանակեսցի
և դարձեալ առ ադամ ասաց. փոխանակ զի թո
ղեր զպատուէր իմ և լուեցեր կնոջ քոյ՝ փոխա
նակ անմահ տնկոցս փուշ բուսանի քեզ. քր
տամբք երեսաց քոց կերիցես զհաց քո. զի հող
էիր և 'ի հող դարձցիս: Ապա՛ հրամայեաց հրեշ
տակաց հանել զնս 'ի դրախտէն. և հրեղէն
գաւազանաւն պահել զճանապարհ դրախտին.
զի ոչ թէ պտուղն չար էր որ կերան և մերկա
ցան. զի չար պտուղն ինչ կանէր 'ի դրախտն.
զի պտուղն բարի էր բայց ած զայն պտուղն
պատգ եդեր ադամայ. թէ պահեսցէր զայ խօսքն
և չէր կերեալ զպտուղն այլ յետոյ ուտէր, բարձ
րանայր 'ի վերինն եդեմ. զի փորձեաց զնա ած.
ապա ետես որ ո՛չ պահեաց զխրատն այ այլ
փութապէս լըսեցին զխրատ օձին և ցանկա

ցան տեառն. վն այն բարկացաւ տր։ Դար
ձել վն այն եկն ի վր թշնամոյն և հարցաւ թէ
ուր ես ադամ. վն այն հարցանէր՝ թերևս մե
ղայ ասեն և թողութի գտանեն. երբ տեսաւ
տրն որ զպատճառն՝ ի բռաւեղծ օձն ասացին. վն
այն բարկացեալ տր ի վր նց. և արտաքսեաց զնս
՚ի դրախտէն. և անկան ՚ի տեղի մթին և աղ
ջամղջին քաղցած և ծարաւած. մինչև վեց
օր։ Ապա դարձեալ ողորմեցաւ տրն ի վր նց.
և առաքեաց զհրեշտակն հանել զադամ ՚ի խա
ւարային տեղեաց. և բերել ՚ի լոյս աշխարհ.
և եցոյց նմա գործել զերկիր, և ՚ի պտղոյ նր
կերակրիլ։ Իսկ նոքա իբրև տեսին զարեգակն
և զլուսին, ուրախացան մինչև յերեկոյն. և ոչ
գիտէին թէ արեգակն մտանէ և ելանէ. ապա
հանց որ մտաւ արեգակն և մթացաւ երկիր
նց և խաւար կալաւ զնս, տրտմութբ լացին
զգիշերն ամ։ Այս քան առ այս վն ադամայ։
Ո՛ որ տէր ած փրկեալ ազատեսցէ զձեզ ՚ի
խաբէութե չարին սատանայի. և արժանի
արասցէ արդար դատաստանին. և
արքայութե լուսոյն ամէն ։

* Պատմութիւն սատանայէլեան դասուն. Թէ որպիսի պատճառաւ
անկաւ ՚ի փառաց իւրոց ։

* Գլուխ Բ ։

ԱՆԶԻ ՎԱՍՆ ՄԻՈՅ ՄԵ
ղաց և հպարտութեանն՝ աքսորեաց և
թօթափեց ՚ի մեծութե փառացն զսատա-յ

էլ և զա̃մ զօրան նր̃ ը̃ նմա. մն̃ զի խաւարեցոյց
զայնպս մեծ լուսաւորն, զի տեսցեն. Թ. դասք
հրեշտակք. և երկիցեն նոքօք և խրատ առ-
ցեն և մի հպարտասցին: Վասն այն ա̃մ հրեշ-
տակք որք կան առաջի ա̃ծուե̃ն փառօք և
պատուօք՝ ի յահէն ա̃յ ծածկեն զերեսս իւ-
րեանց. աղաղակեն և ասեն սբ սբ սբ Տէր
զօրութե̃ց. գովեն և օրհնեն և փառաբանեն
միշտ անլռելի ձայնիւ. և ոչ դադարին ՚ի փա-
ռաբանելոյ զա̃ծ. նաև բազում փափագ ու-
նին տեսանել զերեսս ա̃յ. բայց մն̃ ահին ոչ
կարեն հայել ՚ի տեսութ̃ի փառացն նր̃: Դարձել
խր̃տեն զմեզ Թէ յորքան սատանայ փառաց և
պատուի մէջ էր և մեծ էր քան զա̃մ հրեշտակս.
ապա մն̃ միոյ մեղաց անկաւ ՚ի բարձրութե̃ և
՚ի մեծութե̃ փառաց. իսկ ,Թ, դասք հրեշտա-
կացն զայն տեսեալ սարսեալ դողան միշտ որ
ամենեքին անմեղք են և սբք: Իսկ մեք որ
չափ պղծիմք լալ և ողբալ դողալ և սարսիլ.
որ միշտ ՚ի մեղս և ՚ի չարագործու̃իս, ՚ի շնու-
Թի̃ս, և ՚ի պղծու̃իս, յագահու̃իս, և յախտակա-
լուԹի̃ս, ՚ի մատնու̃իս, և ըսպանու̃իս. յորակ
որակ և ՚ի պէս պէս մեղս շաղախելով որ ոչ կա-
րեմք յերես բերել մարդոյ և ասել. զայս ա̃մ
մեղս գործեմք օր աւուր. Նա սատանայ զայս
պէսի մեղս ո՛չ գործեաց: Իսկ մեք որ զայս ա̃մ
մեղս միշտ գործեմք. այլ և ս զհպարտու̃ին
իւր̃ գործեմք. ո՞րպէս կարեմք փրկել զմեզ

՚ի ձեռաց դժոխոց. եթէ ոչ կարեմք դարձ գալ ՚ի մեղաց. ո՞րպ պատասխանի տամք յա-հաւրն դատաստանի: Պարծել հրեշտակք որ անմարմին են և ոչ ունին մեղք և ոչ մարմին մեղաց. ոչ դատապարտան ունին և ոչ դժոխք և ոչ տանջանք. նա այնչափ դողան և սարսին. այլև աղաղակեն և օրհնեն և բարեբանեն. վն ահի փառաց ածութե: Իսկ մեք որ չափ պիտի սարսիմք և դողամք. լամք և ողբամք. զի իբրև զլեառն բարձր մեղք եմք դիզեր. նա ո՞րպ պար-տիմք դողալ և սարսափիլ ՚ի յահէ ածութեն. լալ և ցաւագին տագնապաւ կծել. թէ մահ կայ մեր առաջեն և հոգի եմք տալու. վասն այն դառնամք և խոստովանիմք և ապաշխա-րեմք. որ փրկէ զմեզ ՚ի տանջանաց դժոխոցն.

և ՚ի հրոյ ջրէն վիշապացն:

Պարծել մեկնուի պտղոյն ադամայ. քանզի այն պտուղն բարի էր. և չար պտուղ ոչ կայր ՚ի մէջ դրախտին. բայց ած պատ ե-դիր զայն պտուղն ադամայ փորձելով զնա. եթէ ժամանակաւ ինչ պահեալ էր զպատուիրանն ածոյ. երբ հրաման տայր ած յայնժամ ուտէր, ոչ ինչ աւէր նմա. այլ փառօք բարձրանայր ՚ի վերինն եդեմ. ապա երբ մոռացաւ զխրատն ածոյ և կերաւ զպտուղն. վն այն բարկացաւ ած և արտաքսեաց զնա ՚ի դրախտէն: Իսկ նոյն օրինակաւ բերանով առաքելոցն և հայրա

պետաց կանոնք եւ սահմանք եւ պահք եդին մեզ: Իսկ որք պահեն՝ նմանին ենովքայ եւ եղիայի, եւ զերկնից արքայութիւն ժառանգեն. եւ որք ո՛չ պահեն զպատգն եւ զկանոնքն հայրապետաց, ադամայ նման՚ի դրախտէն ելանեն: Դարձեալ զի ա̅ծ ինքն գիտէր որ ադամ կերեալէր՚ի պտղոյն ընդ-է՞ր հարցանէր թէ ո՞ւր ես ադամ. վ̅ն այն հարցանէր՝ թերեւս մեղայ գոչէր. եւ ո՛չ ելանէր՚ի դրախտէն. ապա՛ մեղայ ո՛չ ասաց. այլ եւ զմեղաց պատճառն ի վ̅ր այ էդեր ասելով. թէ այս կինս որ տուեր ինձ. սա խաբեաց զիս. նոյնպէս եւ կինն պատասխանեաց: Վ̅ որոյ եւ տ̅րն բարկացաւ, եւ արտաքսեաց զն̅ա ՚ի դրախտէն: Նոյնպէս եւ մեք յորժամ ՚ի մեղս անկանիմք, երբ երթամք առ քահանային խոստովանիմք, թէ մեր մեղաց պատճառ զմեր միտքն եւ զմեր մարմինն դնեմք եւ զղջանամք ՚ի մեղաց մերոց, եւ փոշիմանիմք եւ դարձ գամք, նոյն ժամայն թողութիւն գտանեմք: Ապա՛ թէ լրբաբար երթամք առ քահանայն եւ պատճառանօք թէ այն կինն խաբեաց զիս կամ այլ ուրիշ մարդ խաբեաց զիս, այնպիսի խոստովանանքն ոչ է ընդունելի. այլ մատնութիւն է թէ ֆալան մարդ արարդու զքեզ անմեղ առնես. վ̅ն որոյ առաւել բարկանայ եւ պատուհասէ զմեզ ա̅ծ: Իսկ ճշմարիտ խոստովանանքն այն է, որ զգլուխդ դնես առ ոտն քահանային եւ լինիս ա̅մ մեղաւոր եւ սեւերես

իբրև մահապարտ. և խփես զանձն քո և զա-
կանջդ. զմիտքդ ՚ի քեզ ժողովես և քննես
զա՛մ մեղս քո. ՚ի միտդ բերես զմահուդ օրն
և զհոգիդ տալն. յիշես զդատաստանն, և
զհամար տալն քո՛. զտանջանքն դժոխոց, և
զհուր գեհենոյն. լալով և արտասուօք խոս-
տովանիս զա՛մ մեղս քո. և զղջանաս ՚ի չա-
րեացդ. նա թէ և քան զաւարէր մեծ մեղք ու-
նենաս, ջնջէ և քաւէ զա՛մ մեղս քո. զի ո՛պ
մոմ առաջի կրակին հալի. և ո՛պ ձիւն ՚ի հա-
րաւ քամոյն. կամ թէ իբրև մութն և խաւար
գիշերոյ նման ես եղեր, ողորմութին ա՛յ
իբրև զարեգակն ծագէ ՚ի սիրտս քո. և փա-
խուցանէ զխաւարն: Իսկ որք անդարձ մը-
նան, ո՛չ գտանեն թողութի. քան զի աղաւ-
ման միոյ մեղաց. Ե՛ռճղթ տարի ՚ի դժոխսն
տանջեցաւ ա՛մ որդովքն. որ ո՛չ ասաց մե-
ղայ: Իսկ մեք որ այնչափ մեղք ունիմք.
շնութի. գողութի. ոխակալութի. մատնու-
թի. բամբասանք. և հայհոյանք. և այլ բազում
մեղք որ ո՛չ փոշիմանիմք ՚ի մեղաց. նա ո՛պ կա-
րեմք փրկել ՚ի դժոխոց: Ո՛ ՚ի առաջին մարգա-
րէքն և առաքեալքն. հայրապետքն. և մարտի-
րոսքն. ճգնաւորքն և կուսանքն. ամենեքեան
նոքա մարմին ունէին իբրև զմեզ. կարէին ու-
տել և ըմպել. զմեղքն և զա՛մ չարութիւնքն
գործել. բայց վա՛ յահէ դատաստանին և վա՛
տանջանաց դժոխոցն. ամենք գլխաւորեցան:

ոմանք քարկոծեցան. ոմանք սղոցեցան. ո-
մանք աղքատացան. ոմանք քաղցեան. ոմանք
ծարաւեցան. ոմանք՝ ի ծնողաց հեռացան. և
՝ի հայրենեաց ելին. պէսպէս տանջանօք չարչա-
րեցան վն սիրոյն քի. և վն յուսոյ արքայութե-
ղայս ամ տանջանս յանձն առին. և համբե-
րութբ իւրեանց հասին անթառամ պսակին:
Իսկ եթէ ոչ կարեմք համբերել յայնպիսի
տանջանս, աղօթիւք և պահօք, ծոմով և ծա-
րաւով, պէսպէս առաքինութբ զարդա-
րեսցուք զանձինս մեր [illegible] և ողորմութբ պաշտ-
մամբ և պատարագօք յիշեսցուք և քաւեսցուք
զմեղս մեր, լալով և արտասուօք. քանզի ասէ
գիրն, թէ տօնասէրն չէ զրկած ՝ի պսակաց
մարտիրոսաց. առանց գանից և տանջանաց
հաղորդ լինին նոցին փառացն: Որոց մասնա-
կից լիցուք ամեցն ՝ի լոյս և մտանել ընդ նո-
սին յարքայութին այ Ամէն:

Վս ելանելոյն ադամայ նախահօրն ՝ի դրախտէն

Գլուխ. Գ:

ՅՈՐԺԱՄ ԱԴԱՄ ԱՆԿԱՒ ՝Ի
լուսոյն, սակաւ մի ուրախացաւ ի վեր
լուսոյ արեգականն թէպէտ չէր հա-
ւասար արեգական լոյսն արքայութեան
լուսոյն. բայց լոյս էր. նա ոչ գիտէր թէ ՝ի
մայրն մտանէր արեգակն: Իսկ որ մթացաւ և
երեկոյ եղև, այնպէս թուեցաւ նմա թէ մութ
եղև և այլ ոչ լուսանայ. քանզի դրախտն

հանապազ լոյս էր. և նոյնպէս գիտէին թէ
աշխարհս ա՟մ լուսով լինի. զի ոչ գիտէին թէ
ցերեկն գիշեր կու փոխի. վ՟որոյ իբրև մտած
արեգակն, և մթացած օրն, նա այնպէս իմա
ցան թէ այլ չի լուսանայր։ Վ՟որոյ լացին
և կոծեցին մինչև ցառաւօտն. իսկ 'ի հաւա
խօսին եկեալ սատանայ 'ի կերպս հրեշտակի
և ասէ ցադամ ընդէ՞ր տրտմիք. ասէ ադամ
վ՟այն տրտմիմք և լամք զի ըստեղծելէր զմեզ
ա՟ծ, և եդեալ 'ի մէջ դրախտին լուսեղէն. և
պատրանօք օձին կերաք 'ի պտղոյն. և արտաք
սեցաք 'ի դրախտէն. և անկաք 'ի տեղիս այս
խաւար մըթին. այժմ կրկին ողորմեցաւ մեզ
ա՟ծ. և առաքեաց զհրեշտակ իւր հանել զմեզ
'ի խաւարէս եբեր 'ի լոյս աշխարհ. այլ ո՛չ գի
տեմք թէ ինչ չար գործեցաք որ բարկացաւ
ա՟ծ ի վ՟ր մեր և խաւար կալաւ զմեզ։ Ասէ սա
տանայ ինչ տըվիք այն հրեշտակին որ եբեր
ըզձեզ 'ի լոյս աշխարհ. ասէ ադամ ինչ ունէ
աք որ տայաք. ասէ սատանայ պարտ էր ձեզ
ծառայ լինիլ նմա. և զա՟մ ծնունդս ձեր խոս
տանալ նմա. երբ զայդ ո՛չ արարիք վ՟այն խա
ւար կալաւ զձեզ։ Ասէ ադամ՝ յափշութի
կալաւ զմեզ. և զայդ ո՛չ իմացաք. ասէ սատա
նայ զինչ տայք ինձ թէ տամ ձեզ զաւետիքն
լուսոյ։ Ասէ ադամ եթէ միւսանգամ լոյս տե
սանիցեմք ծառայ լինիմք քեզ մեք. և ա՟մ ծը
նունդն մեր։ Իսկ սատանայ ցոյց ետ ն՟շ յա

րեւելս եւ ասաց անտի տեսանէք զլոյս. զայս
ասաց սատանայ եւ սակաւ մի հեռացաւ:
* Իսկ ադամ եւ եւայ հայէին ընդարեւելս
եւ տեսանէին զի նշան լուսոյ երեւէր արեգա
կանն. կատարեալ խնդացին. իբրեւ սակաւ
մի բարձրացաւ, եկն առ նա սատանայ եւ ասէ
տեսանէք զաւետիսն իմ որ ուրախացուցի ըզ
ձեզ: Ո՞չ ադամ ծառայ եմք քեզ եւ աւե
տեաց քոց. զի դու լուսաւորեցեր զմեզ. զի
ծառայեմք քեզ մեք եւ տմ̄ ծնունդն մեր:
Իսկ սատանայ բերեալ քար մի եւ եդ առա
ջի ադամայ եւ ասէ դիր զձեռն քո իվր̄ քա
րիդ եւ ասա. այսպէս մինչեւ անծինն ծընա
նի, եւ անմահն մեռանի տմ̄ ծնունդն իմ
քեզ եղիցի: Ասէ եթէ ոչ ասէք այսպէս.
դարձեալ խաւար բերեմ առ ձեզ: Իսկ ա
դամ զձեռն իվր̄ եդեալ ասաց թէ մինչեւ
անծինն ծնանի եւ անմահն մեռանի տմ̄ ծը
նունդն մեր ծառայ քո եղիցի. եւ մնաց նը
շան ձեռացն իվր̄ քարին. այն եղեւ ձեռա
գիր ադամայ ՚ի ձեռն սատանայի: Իսկ սա
տանայ տարեալ զձեռագիր քարն թաղեաց
՚ի գետն յորդանանու: Դարձեալ իբրեւ երե
կոյ եղեւ մտաւ արեգակն ՚ի մայրն. գիտաց
ադամ որ խաբեցաւ, լացին եւ ողբացին մին
չեւ է̄ օր անօթի եւ ծարաւ. աղաչեցին զա̄ծ.
եւ յետ հինգ աւուրցն լրման տ̄ծ աղօթից
նոց եւ առաքեաց ըզհրեշտակ իւր. եւ աւե

տեաց ադամայ վ͞ս մարդանալոյն Տեառն ա͞յ
և ազատելն ՚ի ձեռաց սատանայի. և ետուր
ադամայ զձեռագիրն ա͞յ. և էր գրեալ այս-
պէս։ Մ՚ի տրտմիր ադամ. խաբեաց զքեզ սա-
տանայ. վ͞ս այն որ ասաց թէ մինչև անծինն
ծնանի. և անմահն մեռանի. զի անծինն ես
եմ. և անմահ ա͞ծութ͞ի. զոր ՚ի վեց դարուն
առաքեցից զմիածին որդին իմ ՚ի լուսոյ ա͞ծ-
ութ͞ե իմոյ. և մարմին առցէ ՚ի սուրբ և յանա-
րատ կուսէ. զոր ՚ի զաւակէն քումմէ եղի-
ցի որդին իմ, որդի քո։ Ո՛ ՚ի անծինն ծը-
նանի և ջնջէ զձեռագիր յանցանաց քոց.
և դարձուսցէ զքեզ յառաջին փառան քո.
իբրև զայս աւետիսն լուաւ ուրախ եղև. զի
վեց դարն իբրև ժամ մի համարէր վասն ա-
ւետեացն հրեշտակին։ Որ նոյն ողորմութ͞ն
ողորմեսցի Տ͞ր Ք͞ս Ա͞ծ ձեզ և
մեզ Ա͞մն։

* [illegible] և Մեկնութիւն վասն ադամայ և մարդկային
բնութեան

* Գլուխ։ * Գ *

ՈՐՊԷՍ ՀԱՅՐ ՈՐ ԶԻՒՐ որդին ծախէ եղբօրի տայ. նոյնպէս
և զմեզ զադամ ետ գերի ՚ի ձեռն սատանայի։
Իսկ մարդասէրն ա͞ծ առաքեաց զորդին
իւր սիրելի որ եկեալ մարմին զգեցաւ ՚ի
սուրբ կուսէն, եղև մեզ եղբայր և մարմնա-
կից։ Ա՜յ թէ չէր եկեալ քրիստոս ոչ ոք

պարէր փրկել զմեզ ՚ի ձեռաց սատանայի.
քան զի բազում ծածուկս մարգարէք և նա-
հապետք եկին կռուեցան պահօք և աղօթիւք
հետ սատանայի. բայց ոչ կարացին փրկել
զմեզ ՚ի գերութէ սատանայի: Որպէս նահա-
պետն Նոյ, Աբրահամ, Իսահակ, և Յակոբ,
Մելքիսեդէկ քահանայն. մարգարէն Մով-
սէս, Եսայի, Սամուէլ, Ենովս, Դաւիթ,
Յովնան, և սուրբն Յովհաննէս. և այլ սուրբ
Մարգարէք, և բազում արդարք պատերազ-
մեցան. բայց ոչ կարացին փրկել զմեզ և ոչ
զինքեանս. զի թշնամին սատանայ յաղթող
էր յաղագս ձեռագրին և զամենեսեանսն
գերի ածէր ընդ իւր: Իսկ Թագաւորն ա-
մենեցուն ած ետես որ հազարապետքն,
զօրավարքն և զօրագլուխքն, նահապետքն,
և մարգարէքն, արդարքն ամենեքեան ան-
կան պատերազմաւ հետ սատանայի և ոչ կա-
րացին յաղթել, զի նա յաղթեաց զամենեսեան
և գերի անկան ՚ի ձեռս նր և եդ յարգելական
՚ի բանդին որ է դժոխքն: Ապա բարկացաւ
Թագաւորն ամենեցուն իւր ապստամբել
թշնամւոյն սատանայի և առաքեաց զորդին
իւր սիրելի, որ եկեալ ծնաւ ՚ի սբ կուսէն
մարիամայ, այսէր, անծինն ծնաւ և անմահն
մեռաւ. զի մկրտեցաւ ՚ի յորդանան գետ.
ջախեաց զգլուխ վիշապին որ էր սադայէլ.
զձեռնագիր քարն ստնակոխ արար և ջրն



1044
3114-57

ջեաց միրառւթեն իւրով. և լուաց զմեղս
աշխարհի. և օրհնեցիր արար զմեզ հօրն երկ-
նաւորի. այլ և զմկրտութեան սուրբ աւազա-
նաւ հաստատով ՚ի Քն՝ ազատեաց զամենե-
սեան: Բաց որում պահեաց .խ. օր. և .խ. գի-
շեր. և յաղթեաց զսատանայ, և ոտնակոխ ա-
րար: Սատանայ փախեաւ սատանայ, եմուտ
՚ի դժոխսն. և արար զդուռն պղնձի և
զնիգն երկաթի, և ամրացուցեալ պարփա-
կեաց հնարիւք և ամէր զօրացըն իւրոց՝
և ամենայն դիւացն դասուց. Թէ ահա այր
մի յայտնեալ յերկրի մարմնաւոր մարդ. բայց
զօրաւոր իբրև զԱծ. առնէ գործս հրաշա-
լիս. զի յոյժ զարհուրեալեմ և երկնչիմ ՚ի նմա-
նէ. զի մի եկեալ քակեսցէ զպարիսպըս մեր,
և զգերեալսն մեր յաւար առնիցէ. և ազա-
տեսցէ ՚ի ձեռաց մերոց և զմեզ պատժեսս-
ցէ ՚ի դժոխս ներքինս: Իսկ տէրն մեր զա-
մենայն մարմնաւորք անօրէնութիւն կատա-
րեաց հանդերձ աշակերտօքն մինչև խաչի
համբերեալ և մեռեալ մարմնով և եդեալ ՚ի
գերեզմանի միաւորեալ Աստուածութեն. բայց
յառաջորդութե բանին անծինն ծնաւ և
անմահին մեռաւ: Ո՛ որ և հոգւոյն իջեալ ՚ի
դժոխս անքածանելի Աստուածութն. և կապեաց
զսատանայ հանդերձ զօրօքն և քակեաց զդ-
դժոխսն և ազատեաց զԱդամ բանդարգեալսն. և
կապեաց զկապօղն սատանայ. և կենդանեացս

շնորհեաց զմկրտութեան շնորհս զի նոքաւ
ազատ լինիցիմք: Իսկ որք ոչ ունին մկրտու
թիւն դեռեւս գերի լինին ՚ի ձեռն սատա
նայի: Ո՛վ ի յորժամ տանին զերեխայն ՚ի մկր
տութիւն, երբ հրաժարի ՚ի սատանայէ նա
՚ի գերութենէն ազատի. երբ մկրտի ՚ի յա
ւազանն, ՚ի Ք՛ի ծոցն մտանէ, եւ որդեգիր
լինի Հօրն երկնաւորի. երբ դրոշմի սուրբ
մեռոնաւն, զգենու զշնորհսն ա՛ծային որ
պէս հանդերձ. երբ հաղորդի ՚ի սեղանոյն
՚ի մարմնոյ եւ յարենէ ա՛ծն, նա յա՛ծ բնակի եւ
ա՛ծ ՚ի նա: Իսկ այն մարդն որ օրինօք կե
նայ զարդարեալ, մնայ ՚ի նմա շնորհքն մկր
տութեան եւ հաղորդութեան: Ապա մարդ
որ քանի մեղք գործէ նա ճեանայ եւ աղտե
ղանայ հանդերձ մկրտութեանն, բայց ոչ
մերկանայ: Ո՛վ ի յորժամ խոստովանի զմեղքն
եւ ապաշխարէ, նա դարձեալ պայծառանայ
եւ մաքրի: Ահա թէ զքրիստոս ուրանայ, կամ
յիւրոք հայրապետադիր օրինացն ելանէ,
յայնժամ մերկանայ ՚ի նք մկրտութէն: Վայ
ձեւ այն մարդն որ ունի նշան մկրտու՛թ. եւ ոչ
ունի բարեգործութի. այլ հանապազ շնա
նայ եւ պոռնկի, գողանայ եւ սուտ վկայէ, մար
դոյ արիւն ծծէ, հայհոյէ եւ բամբասէ, ա
դահէ եւ չարաչար մեղք գործէ, եւ ոչ յեկե
ղեցի գայ, ոչ խոստովանի եւ ոչ հաղորդի,
այլ անզեղջ սատակի, նա յայնպիսւոյն սա

նուն զմկրտութին եւ զհաղորդութին եւ մեր
կացնեն զինքն․ եւ այսպէս մտանեն ՚ի հուրն դը-
ժոխոց որպէս մահապարտ։ Խոստպէտ քո ջըն
ջեաց զձեռագիրն ադամայ․ իսկ մարդն որ
իւր կամաւ՛ն ծառայ լինի, եւ զձեռագիր տայ
սատանայի, մինչեւ որ չի փոշիմանի եւ դարձ
դայ եւ խոստովանի, ո՛չ կարէ ջնջել զգիրն մե-
ղաց, եւ ո՛չ կարէ ազատիլ հոգին ՚ի դժոխոց։
Ա՛յ որդեակ եղբարք իմ սիրելիք աղաչեմ ըզձեզ
զի զմկրտութիւնն եւ զՔի մեռոնի շնորհքն
զոր ունիք առ ձեզ՝ մի պահեցէք եւ հեռու ի
կացէք ՚ի մեղաց․ եւ յիշեցնատուրողաց․ եւ յայլ
պէս պէս ախտից։ Բան զի քրիստոնէին
պարտէ որ զքնի պատուիրանն պահէ․ իսկ
այն մարդն որ անունն քրիստոնեայ է եւ
գործքն սատանայի, նա սուտ քրիստոնեայ է
եւ ոչ կարէ մտանել յարքայութին այ։ Արդ
չեմ զձեզ մի մեղանչէք․ եւ եթէ ողալ՛իք ՚ի
սատանայական որոգայթից, անյոյս մի լի-
նիք։ Զի պօղոս առաքեալն ձեզ զօրինակ բերէք
եւ դարձէք ՚ի մեղաց խոստովանութբ եւ ապաշ
խարութբ․ որով փութով թողութի գըտա
նէք, եւ Քի փառքյաւիտեանս Ամէն։

* Պատմութիւն յաղագս Աւգէնի եւ Ամէլի․

* Գլուխ։ * Ա *

ՅՈՒՇԻՐ ԳԱՏՈՒՆԻՐՆ ԱԳԻԱ

Ամայ զոր պատուիրեաց որդւոցն իւ-
րոց եւ ասաց, թէ յորժամ եղայ ՚ի

դրախտէն և անկայ յաշխարհս խաւարայ
ին, դարձեալ ողորմեցաւ ինձ աստուած և
առաքեաց զհրեշտակ իւր և եբեր զիս 'ի լոյս.
և որքան կենդանիք կային զամենեսեան հը-
նազանդեցոյց ինձ. և զեզն լծեալ եմ 'ի
ձեռս իմ և ուսոյց նովաւ վարել և վաստա-
կել և գործել զերկիր և ճաշակել 'ի պտղոյ
նր և լիանալ և ապրել: Նաև հրամայեաց ինձ
յամ պտղոյ բաժին հանել այ: Առ որոյ ադամ
պատուէր ետ զնոյն կատարել որդւոց իւրոց
զի ադամայ առաջին զաւակն կայէն էր և յետ
նր աբէլ: Յորժամ եղև կայէն յիսուն ա-
մաց. և աբէլ քսան ամաց. կայէն հողագործ
էր և աբէլ հովիւ ոչխարաց: Իսկ ադամ խրա-
տեաց զորդիքն իւր և ասէ. յամենայն ընչից
ձերոց տասնէն զմէկն բաժին հանել աստու-
ծոյ: Իբրև եղև ծնունդն ոչխարաց աբէլի,
նա մէկն հազար եղև. ապա ընտրեաց զլաւն
և զընտիրն խաշանց զգէրն և ըզպարարտն
տալ աստուծոյ բաժին. բայց ո՛չ մատոյց այ
վն եղբօրն թէ քոյն ևս հանէին հունձք. ա-
պա իմխասին մատուսցուք զբաժինն այ.
իբրև հասին հունձք ցորենոյ կայէնին. նա
զատեաց զքամատարն և զմնացեալ ստնակոխն
և զփուշն հանեաց բաժին այ. և ժողովեաց
իբրև դէզ մի: Ապա եբեր աբէլ զընտրեալ
դառինսն. և մեծարեաց ըզկայէն վն աստու-
ծոյ ասելով՝ սիրելի եղբայր իմ, դու մեծ

ես եւես փոքր ծառայ քոյ. յառաջ դու մա-
տո՛ զբաժինն իմ. եւ ապա ես։ Իսկ կայէն
կանգնեցաւ յաղօթս առ տէր եւ ասաց. դու
տէր ստեղծօղ ամենայնի. ահա՛ քրտամբք իմովք վաս-
տակեցի եւ վարեցի, ձեռօքս ժողովեցի եւ 'ի
յոյս բարձեալ բերի բաժինն քեզ. արդ ըն-
կալ ըզ զոհս իմ որպէս հաճոյ է քեզ այնպէս
արա։ Այլ տէրն բարկացեալ իվերայ կայէ-
նի. վասնորոյ ամպ մի սեւացեալ եկն իվե-
րայ կայէնի որոտաց եւ թընդաց. եւ ել հողմ
եւ քամի 'ի նմանէ եւ ցրուեաց զամենայն
հասկս նորա. եւ ո՛չ մնաց մի ցորեան. եւ կայ-
էնի երեսքն սեւացան յոյժ գործելն։ Իսկ
աբէլ մատոյց զողջակէզն անդրանիկ դա-
ռանցն առաջի տեառն. եւ զձեռսն տարածեալ
աղաղակեաց եւ ասէ Տէր ամենայն ըստեղծօղ եւ
արարիչ ամենայն բարութեանց՝ աղաչեմ զքեզ
ընկա՛լ զնուէրս իմ զոր մատուցանեմ քեզ
բաժին, զի 'ի քո տըւեալ բարի պարգեւաց
քոց քեզ մատուցանեմ. աղաչեմ եւ պաղատիմ
ընկա՛լ 'ի հաճոյս բարերար կամաց քոց։
* Նոյն ժամայն քաղցր հողմն հընչեաց. եւ
լոյս ծագեաց յերկնից եւ լուսաւորեաց զե-
րեսս աբէլի. եւ եկն բարբառ որ ասէր՝ լը-
սելի եղեն աղօթքք քո. եւ ընդունեցի զընծայս
քո. եւ լուսափայլ ամպն հովանի եղեւ իվերայ
աբէլի։ Իսկ կայէն ոխացաւ ընդ աբէլի եւ
կամէր ըսպանանել զնա՛. բայց ո՛չ գիտէր

Թէ որպէս բաղձանցէ զնա. զի դեռ չէր ըմ-
պաննուամն եղեալ ի կերակրոյ երկրի։ Նա՛ և ա-
բել ո՛չ գիտէր զչար խորհուրդն կայենի.
զի հանապազ ընդ իրեար ուտէին և խմէին
և շրջէին։ Իսկ ՚ի միում աւուր ասէ կայէն
ցեղբայր իւր. ա՛բէլ՝ գնասցուք ՚ի դաշտ
մանգաղ. և ելեալ գնացին ՚ի դաշտն. ապա
աբէլ ուժով էր քան զկայէն. վասն այն ո՛չ
կարէր յայտնել զխորհուրդն իւր. ապա ըս-
կիզբն արար խաղալ ընդ եղբօրն կշտի բըռ-
նելով որ է կիւլէշ. Թէ կարէ՞ գետնով տալ և
կապել զնա. քանզի որ չափ կուշտի բռնե-
ցին, կայէն ոչ կարաց յաղթել զեղբայրն.
և ել կայէն հայեցաւ աստ և անդ, և ետես
զխաղողի ճուղն որ ասմայ ասի. նա՛ ասաց ա-
բէլին Թէ եկ ասմայի մատիւ խաղասցուք.
դու գըրկէ զծառն և ես .գ. անգամ պա-
տեմ ուռամբս. տեսանեմ Թէ կարես կըտ-
րել զնա։ Պարձէլ դու ինձ արա՛ նոյնպէս գ՟
անգամ պատէ զիս, տեսանեմք Թէ ո՞րս է զօ-
րեղ և ուժով։ Իբրև գրկեաց զծառն ա-
բէլ, նա՛ կայէն առեալ զուռն պատեաց զ-
տիւքն և ձեռօքն մինչև ցգլուխն. ապա՛ իմա-
ցաւ աբէլ զչարութիւնն կայէնի. զոր գո-
չեաց լալով առ եղբայրն և ասէր. եղբայր իմ
սիրելի աղաչեմ զքեզ արձակեա զիս. և որ
քան կենդանի եմ ծառայեմ քեզ մի՛ ըսպա-
նաներ զիս. զի ես ո՛չ Թշնամի եմ քեզ, այլ

բարեկամ և միշտ ծառայանդ հրամանաց քոց.
ես առանց քեզ ո՛չ կարեմ ժամ մի կենալ.
դու զի ո՞րդ կարես զես առանց ինձ մ
նալ ի վ͞ր երկրի. և զեղբայրականն սէրն իմ
ի՞նչպէս մոռանաս դու: Իսկ կայծն աստ
ևանդ շրջէր՝ և ո՛չ գիտէր թէ որո՛վ պիտի
ընդպանանել զնա: Նայ սատանայ եղեալ
՚ի կերպս երկու ագռաւուց. և առեալ մինն
քարասուրիկ քար մի, և նովաւ հարեալ ըզ
միւսն և ընպանն զնա ՚ի կլափէն, և քարն սուր
էր որպէս ածելի: Նա՛ կայծն ուսեալ ՚ի սա
տանայէ, և առեալ ըզքարն և փաղեաց ի վե
րայ եղբօրն. իբրև շատ աղաչեաց աբէլ՝
զեղբայրն և ոչ լսեց նմա. և ասաց աբէլ
է՛կ եղբայր մի անգամ համբուրեմ զքեզ.
զի ո՛չ մեռամ կարօտ ՚ի քէն. այլ կայծն ոչ ետ
պատասխանի. ըմբռնեալ զքարն ՚ի խուչակն
և տարբերեալ խաղխաղէր, և քարն փոքր էր
և ո՛չ կտրատէր. նա լալով աղաղակէր ասե
լով թէ ինչպէս ծուղապ կուտաս ծնողացն
իմոց. զի ինձէն խապար չունին նոքա որ ՚ի նջ
նէ հալալութի առնել. քան զի բազում աշ
խատանք ունին յինձ վերայ. և դու ո՞րդ կե
նաս ի վերայ երկրի. և ամենևին ո՛չ լսեց.
այլ չարաչար բռնութ͞բ հաղեց մորթեց զեղ
բայրն. և եդ կապեալ այնպէս ՚ի ծառին.
և ինքն գնաց իբրև ուրախութեամբ:
* Նա երևեցաւ ա͞ծ ի վ͞ր ամպոյ յիստուն

կանգնաչափ հեռի. եւասաց կայենին մուրճ
եղբայրն քո աբէլ: Ասէ կայէն, երբ տը
հիր ինձ պահ, որ ինձանէ խնդրես. մի թէ
ես պահապա՞նէի նմա: Այն բարկացաւ տծ
խլերայ կայենի. թէ երբ պահապան չէիր՝
ըսպաննող վասն էր եղեր. վասնորոյ է. պատ
ժօք պատուհասեաց զկայէն: Ո՛ւ ի՛ի հար
ցանելն տյ զնմ քաղցրութեամբ՝ յապաշխա
րութիւն կոչեաց. թէ զղջացեալ մեղայ դո
չէ: Յորոյ ճակատն կօտօշ բուսաւ. ուր և
երթայր ձայն կուտայր կօտօշն: Առաջին
պատուհասն այս է. թէ սա է եղբայրաս
պանն կայէն: Երկրորդ պատուհասն այն
էր. որ բոլոր մարմինն դողդոջէր:
Երրորդ պատուհասն այն էր, որ քանի ու
տէր, ո՛չ կշտանայր: Չորրորդ պատուհասն
այն էր, որ ինչ որ ուզէր՝ նա ոչ հասանէր
ուտել. և ընդ վայր խուզէր
Հինգերորդ պատուհասն այն էր, որ յաչքն
ամենեւին քուն չէր մտանէր:
Վեցերորդ պատուհասն այն էր, զի հանա
պազ լալով եւ դողալով շրջէր: Եօթներորդ
պատուհասն այն էր, որ աստուած մահ ո՛չ
հրամայեաց կայէնի: Եւ ասաց թէ ինչ
մարդ որ զկայէն ըսպանանէ, նա ցաւն ա
ըսպաննողին դարձցի: Այն ապրեցաւ կայէն.
էճծգ. տարի. զի զմահն կուզէր և ոչ մեռա
նէր: Ի ժամանակին յայնմիկ ղամէք ձիա

հորեալ հանապազ գնայր որս անել: Իսկ
կայէն անձամբ մնաց վասն մահուն խուրոյ:
Ապա հնարս իմացաւ. առեալ մորթ մի վայ
րենի ՚ի ծոցն, գնաց ՚ի լեառն եւ եղեւ ընծայ
նման եւ անկաւ ՚ի ճանապարհին: Իսկ Ղամէք
ելաւ գնաց յորս առնել. եւ ետես զկայէն
եհար նետիւ եսպան զնա: Ապա ցաւն կայ
էնի անկաւ ՚ի վերայ Ղամէքայ. եւ բուսաւ
կոտոշ ՚ի գլուխն: Իսկ Ղամէքայ կինն բարկ
էր. առ սէր աղաղակեաց, եւ այն չափ ելաց
որ յաչերէն արիւն կաթեցաւ փոխանակ ար
տասուացն: Զ՝ որ ետես աստուած զարտա
սուսն եւ զաղաղաչանս կնոջն, ողորմեցաւ աստ
ւածն ամենայնի. եւ բժշկեաց զցաւն Ղամէ
քայ: Դարձեալ յորժամ իմացան ադամ եւ
եւայ զսպանումն աբէլի, գնացեալ բե
րին արեամբ շաղախեալ զմարմինն աբէլի.
որ եւ կոծ մեծ առին լալով եւ ողբալով. եւ
մինչեւ սուգ կենային ՚ի բազում ժամանակս.
* Ապա յորժամ թաղեցին զմարմինն աբէ
լի, նա ելանէր յերես հողոյն. զի հանապազ
արիւնն ոչ ցամաքէր. ոչ հոտէր եւ ոչ որդ
նէր. զի էր իբրեւ զքուն. ոչ փրտէր, եւ ոչ
հող լինէր: Վասնզի ած նախ ադամայ ասաց
հող լինիլ. եւ այս ՚ի նմանէ ծնելոցն. վասն
որոյ պիտէր յառաջ ադամ մեռանէր եւ ՚ի հող
դառնայր, ապա ծնունդ նր մեռանէր եւ ՚ի
հող դառնայր: Մինչեւ ՚ի մահն ադամայ այլ

ոչ որ մեռաւ, վն այն ոչ ՚ի հող դառնայր մարմինն աբէլի: Ապա՝ եւ ադամ մեռաւ եւ թաղեցաւ, նմա առաջ տեղ ետուր որ թաղեցին զաբէլ ՚ի գերեզմանի: Յայնժամ ադամ եւ կինն իւր տեսանէին զաբէլ արեամբ շաղախեալ, եւ զկայէն պատուհասեալ, վն կոծոյն եւ սգոյն իւրեանց՝ այլ ոչ մերձեցան առ միմեանս, զի մի այլ մեծ սուգ գայ ի մէջ ինքեանց վն զաւակացն: Իսկ ած ողորմեցաւ եւ առաքեաց աւետիք վասն ծնանելոյն սեթայ. զոր եւ մխիթարութիւն ետ վասն աբէլի. որեւ զձեզ մխիթարեսցէ յամ տրտմութեանց ձերոց Ամէն:

* Այսմ պատմութեան բանիս պարզաբար՝ ըստ որպէս տեսանոր դեն ՚ի յընկէցէ ի յըեօսյ, բանիւ հրեշտակին:

* Գլուխ: * Զ. *

## ԽԱՐԴ ՄԻՉ. Զ. ԱՑՍ Օ-

րինակաւ խրատ ուսոյց պատուհական դառն աբէլի. թէ որպէս ընդունելի եղեւ այ. եւ լուսաւորեաց զերեսն աբէլի: Նա՛ դարձեալ թէ ինչպէս բարկացաւ ի վերայ կայենի եւ քամատար արար զհասկ եւ զպտուղն նորա. եւ սեւացան երեսք նորա: Նոյնպէս եւ այժմ ինչ մարդ որ ընտրէ զբարին եւ զլաւն եւ զընտիրն տայ ՚ի սէրն աստուծոյ, նա՛ զայնպիսի տուրսն ընդունի ած. եւ սա ՚ի պէսպէս չարեաց փրկէ. եւ անդ բազում բարութեանց եւ արքայութե լու-

սոյն արժանի առնել: Իսկ որ նման է կայե
նի՝ ըղձումն և զքամատարն, և զանպիտանն
տայ Տէր բաժին. այլ նման կայենի սաստ բա
զում պատուհասի և փորձանաց հանդերձի.
և անդ ընդ կայենի տանջի, և՛ ի խորս դժո
խոց հրոյն այրի: Դարձեալ կայէն որ զան
պիտանն և զքամատարն մատոյց Տէր, այնպէս
պատուհասեցաւ: Իսկ որ զրկէ և գողա
նայ, և անտի բաժին տայ Տէր. նոյնպէս պա
տուհասի պիտի հանդերձի: Դարձեալ կայ
էն ըղձէշն և զանպիտանն մատոյց՝ այնպէս
կորեաւ: Իսկ այնոքիկ, որք ունին ինչս բա
զումս, այգիս և անդաստանս՝ ցորեանս և այլ
բարութիւնս լէյլըշտեմարանս, կովս կէթ,
և այլ չորքոտանիք, և ոչ տան զտասանորդս
նա՛ այնպէս պիտի կորուսանին և սատանայի
բաժին: Քանզի ամենայն ազգ և ամենայն
դէրք վկայեն, թէ ինչ ապրանք որ ունի մարդ
եթէ տասանորդ չի տայ. նա Տէր ապրանքն
պիղծ է և հարամ. զի յՏէր ընչից բաժին խընդ
րէ ած ում ասէ սողոմոն. պատուեա զտէր
՛ի քոյոց արդար վաստակոց. և հան նմա պը
տուղ ՛ի քոց արդարութեան արմտեաց: Եւ
հայրն դաւիթ ասէ: Որ զպտուղ իւր ՛ի ժա
մու տացէ. և տերև նորա մի թափեսցի, և
զամենայն զոր ինչ արասցէ յաջողեսցի նմա:
Ա.յլ և մովսէսի ասաց Տէր. զվեց տարին
սերմանեսցես զերկիր քո. և ժողովեսցես

զարմանիս նր. Եւ յամին եօթն երորդի թողու
թիւն արասցես և հանգուսցես զնա և զպը
տուղս առաջին արմտեացքոց բերցես ՚ի
տուն տն. այնպէս արասցես զայգին քո և
զձիթենին։ Ս ՚ի ինքն քն ասէ. զի որ աստ
սերմանէ, անդ հնձէ մեկին հազար, թէ չար
և թէ բարի. և որ ինչ տուեալէ ած մարդոյ
յամ ընչից բաժին կու խնդրէ։ Ր.ԺԼ և ՚ի
Է. զգայարանացն, ՚ի բերանոյն օրհնութիւն
՚ի ձեռացն բարեգործութի և ողորմութի. յո
տիցն ծնրադրութի և աղօթք. ՚ի զաւակացն
զլաւն և զճարտարն, ՚ի յուսումն և ՚ի ծառայ
ութի եկեղեցւոյն։ ՚Ի յայգւոյն և ՚ի պարտէզա
էն, ՚ի յոչխարացն, ՚ի կովէն և ՚ի կթանէն, ՚ի
հաւուցն և ՚ի հաւկթէն. յամենայնէ բաժին
կու խնդրէ ած. ՚ի վարուցդ և ՚ի վաստակոցդ
տասանորդս և երէքբաժին արասցես զմինն
աղքատաց. զմիւսն եկեղեցւոյ. և զմինն ևս
քահանայից։ Բանզի ած յաջողէ, և դու
պարծենաս թէ, ես վաստակեմ. եթէ ոչ տայ
ած ուստի՞ կարես ժողովել. և թէ գնաս ՚ի վա
ճառ, և ոչ տայ ած, ուստի՞ կարես շահիլ. գի
տես որ ամն տրհօղն ած է. զի ա՞րդ ոչ տաս
զիննին մեկն բաժին այ. որ տայ քեզ ՚ի գալ տա
րին մեկին տասն. և թէ ոչ տաս, նա ոչ առ
նուս. և զմնացեալն ևս կորուսանես։ Բան
զի ՚ի տասանէն զմէկն հրէայք և տաճիկք կու
տան մալին սէքեաթ և բաժին այ։ Իսկ նոյ

և աբրահամ յեօթնեն զմէկն տուէին բաժին։
Իսկ տ̃րն ք̃ո ասէ թէ, վաճառեա զա̃մ ինչս
քո, և տուր աղքատաց, եթէ կամիս կատա
րեալ լինել։ Ապա թէ ոչ կարէք զամենն
տալ, նա ՚ի տասանէն զմին տուէք։ Ահա այն
մարդն որ ոչ տայ, չէ քրիստոնեայ. քան
զջհուան այլ վատթարէ և անիծած։
* Պարծեալ ոչ թէ ա̃ծ աղքատ է կամ քաղ
ցած, կամ մերկ, որ խնդրէ ՚ի մեզանէ ողոր
մութ̃ի. ոչ թէ կարօտ է մեր բարեացն այլ
փորձէ զծառայս իւր. տեսանելով թէ ով
է ա̃ծասէր կամ ողորմած. զի սրտի ասէրն ՚ի
ձեռաց տուրքն երկնի. քան զի ՚ի բերանոյ
մարգարէին ասէ. թէ ոչ ուտեմ ես զմիս
զուարակաց քոց, և ոչ զարիւն նոխազաց քոց
ըմպեմ։ Այլ մատո աստուծոյ պատարագ օրհ
նութ̃ե. և կատարեա բարձրելոյն զուխտս
քո։ Կարդացես առ իս յաւուր նեղութ̃ե
քոյ. ես փրկեցից զքեզ. և դու փառաւոր ա
րասցես զիս։ Սակայն ք̃ս նմանութ̃ե առակիս
ասէ, թէ թագաւոր մի կայր որ ունէր ազ
նիւ ծառայ մի և զպատուէ գիրն ետ նմա,
թէ ուր կամի գնայ։ Ահա նա գնացեալ յօտար
աշխարհս մի. և անդ աշխատեալ վաստակօք
և ժողովեալ ինչս բազում ոսկի և արծաթ։
* Իսկ ՚ի դառնալն իւր առ թագաւորն.
կազմեաց թագ մի աննման յորինուածովք, ոս
կեով և մարգարտով, և պատուական ակամբ,

ւբերեալ մատոյց առ իւր Թագաւորն ։
* Իսկ Թագաւորն տեսեալ ուրախացաւ յոյժ. և համբուրեաց զծառայն և ետ ընդ Թագն 'ի գլուխ նր̄. և մեծարեաց և նստոյց զծառայն յոսկիակազմ աթոռն իւր ասելով. Թէ մինչև ցայս ծառայ էիր. ապա այժմ եղեր ինձ սիրելի որդի: Նոյնպէս և մեք Թէ բաժին տամք ա̄յ, և ամենայն պատուիրանաց նր̄ հնազանդիմք, և զարդարիմք ա̄մ առաքինութք̄, նա զայն ա̄մ ժողովէ ա̄ծ, և Թագ կազմէ յաւուրն դատաստանին և 'ի մեր գլուխն դնէ. և ա̄ծ այսին լուսովն զարդարէ. և ա̄ք ար-քայութե̄ն ժառանգեցուցանէ: Իսկ երբ ոչ ունեմք բարեգործութի̄, և ոչ տամք ո-ղորմութիւն, նա բազում փորձանաց հանդի-պիմք. և անդ 'ի հուրն դժոխոց տանջիմք:
* Պարծեալ որք վասն անցաւոր աշխարհիս մարդասպան լինին, նք̄ 'ի կայենի դասուն են. զի որ 'ի ն̄ք աւազանն մկրտեալք են և հաղոր-դեալք 'ի ն̄ք մարմնոյ և յարենէն ք̄ի, յայն ժամ լինիմք մէկ մէկի եղբարք: Իսկ որ զր-կէ զեղբայրն, մանաւանդ և տանջէ, և կամ այլ չարութիւն գործէ՝ այնպիսին 'ի կայենի դա-սուն է. քանզի տէր ա̄ծ գրեալ էր 'ի մ̄ր քա-րեղէն տախտակին Թէ, սիրեսցես զտ̄ր ա̄ծ քո յա̄մ սրտէ քումմէ ։ Այլ և պատուեա զհայր քո և զմայր. և սոյնպէս նման սիրեսցես զեղբարս և զընկերս քո իբրև զանձն քո ։

Այն որ զհայր եւ զմայր իւր մեծարէ եւ պատուո
ւէ, նա զաստուած մեծարէ եւ պատուէ: Այն
որ զընկերս եւ զդրացիս սիրէ, զդասս առաքե
լոյն սիրէ, եւ մեծարի 'ի նոցանէ, եւ մտանէ 'ի
փառս արքայութե̃ն: Աղաչեմք զձեզ եղբարք
ականջ դրնել խրատիս մերում. կալ եւ մնալ
ի ս̃ր հաւատոց եւ պատուիրանացն. այլ եւ 'ի
տուրս աղքատաց. եւ զ̃ս եկեղեցեաց աղօթս
առնել եւ պահս ս̃բս պահել. եւ մ̃մ առաքինու
թե̃բ եւ բարեգործութե̃բ զարդարել զանձինս.
եւ մասնաւորիլ ընդ սրբոցն եւ պատ[illegible] 'ի Քս̃է
Յս̃յ մերմէ Ամէն:

Մասն առաջնոյն սիրոյ զոր էր աստուածն [illegible]
[illegible]
[illegible]

* Գլուխ. * Ա: *

ԶԻ ՏԷՐՆ ՈՂՈՐՄԵՑԱՒ
իվերայ ադամայ եւ առաքեաց զհրեշ
տակ իւր եւ ետ զաւետիս վասն սէթայ. եւ
ասաց ադամայ թէ մերձեցի'ր առ կին քո,
եւ լինի քեզ որդի. եւ անուանեսցես զանուն
նորա սէթ. որ թարգմանի մխիթարութիւն.
Նա եղիցի զաւակ օրհնեալ. եւ գլուխ նահա
պետաց: Ասէ ադամ՝ ոչ կամիմ մերձենալ
'ի կին. զի երկու անգամ մերձեցայ եւ
ինձ մեծ սուգ եղեն քան զելանելն իմ 'ի
դրախտէն. զի զկայէն տեսանեմ որ այնպէս
ցաւագնեալ դողդոջայ, սարսափի եւ մորմո

քի սիրտ իմ, և դալարին աչք իմ։ Ապա զա
բէլ տեսանեմ արեամբ շաղախեալ, նա ցա
ւի սիրտ իմ. և արտասուք իմ ջբրև արեան
կու հեղանի։ Թէ դարձեալ մերձենամ՚ի
կին և լինի զաւակ, վախեմ թէ այլ նոր
սուգ բերէ ինձ։ Ասէ հրեշտակն՝ տալոց է
քեզ Տր̃ բարի որդի, և անուն նորա սէթ.
որ թարգմանի մխիթարութիւն ։
Նա եղիցի զաւակ օրհնեալ. զի որչափ դառ
նացար և տրտմեցար վասն կայենի և աբէ
լի նոյն չափ խնդաս և մխիթարիս սէթաւ.
և բազմանան զաւակ քո, և զաւակ սէթայ.
և նոքօք լցցի աշխարհս։ Բայց մի խառնես
կեացիս ընդ ազգն կայենի. զի ընդ անի
ծիւք են նոքա. Երբ խառնակին ազգն կայ
ենի ընդ ազգն սէթայ և այլ զաւակաց քոց
նա նոքա ևս կորնչին հետ նոցա։ Ապա կայ
ենի զաւակքն բազմացան. և եղեն քսան
ևՃ̃. արու մարդ. ևՃ̃ Ճ Ձ. կին. զի կայեն
երկու Ճ̃Լ. տարի էր որ ամուսնացեալ էր
երբ սէթ ծնաւ. քան զի կայեն Լ̃. տա
րու էր որ ամուսնացաւ. և աբէլ. Ի̃ տարե
կան էր. և էր կոյս երբ սպան զնա։
* Երբ և ծնաւ սէթ, և բազմացան ծը
նունդքն սէթայ և այլ եղբարցն, ՚ի բաց
հալածէին զազգն կայենի. և սրբութեամբ
կային և ոչ ժառանգէին Է̃ ազգն կայենին։
Իսկ բարի պտուղն ենովք, ենարց ՚ի հօ

րէն թէ, վն̃ էր լայք և միշտ տրտմիք և ոչ
ուրախանայք. նա ասաց յաղագս ճաշակման
պտղոյն և արտաքսելոյն ՚ի դրախտէն։ Սորդոյ
ենովք երբ լսեց զայս, նա ասաց՝ ես վճա
րեմ զձեր պարտքն և ոչ ամուսնացաւ։ Այլ
տնկեաց այգի մի յօրինակ դրախտին. և ով
ոք որ անցանէր, նա ՚ի պտղոյն ճաշակէր. և
ինքն ոչ ամենևին ուտէր ՚ի պտղոյն. այլ
յերկաթէ գտակ մի եդ ՚ի գլուխն. զի մի
տեսցէ զպտուղ ծառոյն. քանզի կէ̃. տա
րի ՚ի մէջ այգւոյն կեցաւ և ոչ կերաւ ՚ի պտ
ղոյ անտի. վն̃ այն քաղցրացաւ ած̃ և հրա
մայեաց հրեշտակաց. որ բարձեալ զենովք
տարան ՚ի դրախտն. և է մինչև ցայսօր։

Իսկ այլ որդիքն սեթայ և ադամայ՝ երբ
տեսին որ ենովք վերացաւ մարմնով յեր
կինս, և վն̃ կուսուե̃ և պահուց հասաւ այն
պիսի փառացն։ Ըստ որում՝ բազումք յօժա
րեցան հրաժարիլ յաշխարհէս և կուսութե̃
ճգնիլ ՚ի լերինս. և եղեն թիւք աւելի քան
զե̃ ճ̃ ՚ի ոգի։ Բայց ազգին կայենի յոյժ բազ
մացան առ ջկունք և կանայք. զի զմէկ մարդն
՚ի մէջ .ճ. կնոջ շրջեցուցանէին. զորս կըր
ծէին վասն մարդոյ, և յափշտակէին ՚ի մի
մեանց. այլ և գնացին խառնակիլ յազգն
սեթայ. և նոքա ոչ տային թոյլ. այլ ծեծէ
ին և վարէին զնոսա։ Իսկ նոքա անճար
մնացին։ Նա՝ սկսան պճնիլ և զարդարիլ.

եւ շինեցին ծարուրս եւ դեղեցին զերեսս
իւրեանց եւ ըզձեռսն հինայեցին: Իսկ սահ-
մանեցին զերգս եւ զքնարս ազգի ազգի սա-
զերգք, խաղօք եւ պարուք ծափս հարկանե-
լով. գնացին 'ի լերինս, եւ խաբեցին զճգնա-
ւորսն. եւ խառնակեցան ընդ նոսա: Միայն
զՆոյ ոչ կարացին խաբել. եւ այլք ամենեքեն
խառնակեցան եւ պղծեցան ընդ նոսա, իբրեւ
զշուն լրկեցին զամենեսին. ոչ հայելով
զքոյր եւ զդուստր: Որա Ած բարկացաւ վն
մեղաց նոցա. եւ հրամայեաց հրեշտակին. որ
ասաց Նոյի զի ամուսնասցի: Ասէ Նոյ՝ ոչ կա-
միմ ամուսնանալ վասն անցաւոր աշխար-
հիս. ասէ հրեշտակն՝ բարկացեալէ Ած վն
մեղաց մարդկան, եւ կամի կորուսանել զնոսա
ջրով. վասն այն հրամայեաց աստուած քեզ
կին առնուլ. զի դու եղիցիս նոր ադամ. զի
դք ամենեքեան ջրով խեղդին. եւ դու միայն
ապրիս որդւովքդ եւ կանամբքդ. եւ դու լի-
նիս սերմն եւ հայր աշխարհի: Ասէ Նոյ՝ քանի՞
տարի դեռ եւս պիտի ապրիմ. ասէ հրեշտակն՝
գ Ճ. տարեկան ես. այլեւս. գ ՃԾ տարի ապ-
րիս: Ասէ Նոյ՝ վերջին մահ է եւ աշխարհս ան-
ցաւոր. զի գ ՃԾ. տարին իբրեւ երազ գիշե-
րոյ անցանի. զի մրդ խառնիմ 'ի մեղս աշխար-
հի: Ասէ հրեշտակն՝ հրամանք աստուծոյ է,
կատարել պարտիս. զի աղջիկ մի կայ կոյս
եւ մաքուր 'ի մեղաց 'ի դստերացն սեթայ.

ևանուն նր̅ նեմզար. առ զնա ՚ի քեզ կնու-
թի. և շինեսցես տապան .գ̅. հարիւր կան-
գուն երկայնութի .ծ̅. կանգուն լայնութի .լ̅.
կանգուն բարձրութի. և շինեա .գ̅. տուն.
վերնատուն, միջնատուն, ներքնատուն.
զայս ասաց հրեշտակն ևգնաց ՚ի նմանէ:
Իսկ նա առեալ զնեմզար և ամուսնացաւ
ընդ նմա. և ըսկսեալ արար տապան շինել ՚ի
վր̅ բարձր բլրի միոյ: Եւ որքան շինէին՝
նա ձայն տայր ուրաքն և սղոցն և փայտն
թէ պիտի ջրհեղեղ գայ յերկիրս: Իսկ մար-
դիկն երբ լսէին, նա ծաղր առնէին ասելով.
թէ յայսքան բարձր տեղիս ջուր պիտի հաս-
նի. կամ դու որ զտապանդ շինես՝ դու պի-
տի ապրիս. և մեք խեղդհի՞մք: Ապա դու-
ո՛ւր պիտի ցան ցանես և այգի տնկես թէ եր-
կիրս ջրասոյզ լինի: Եւ ՚ի կատարել. ճ. տա-
րւոյն՝ ապա աւարտ եղև տապանն: Իսկ
՚Նոյի եղև երեք որդի. Սեմ. Քամ.
Յաբեթ: Եւ երևեցաւ հրեշտակն ՚Նոյի
և ասաց թէ՝ առ երեք որդւոց քոց կին ՚ի
զարմէն սէթայ կոյս աղջկունս. որ են ան-
հանքն զանազան. զարմանազան. արագնա-
զան: Բայց կոյս պահեա զորդիքն քո մինչև
որ ելանես ՚ի տապանէն, և արար այնպէս:
Եւ դարձեալ երևեցաւ հրեշտակն և ա-
սաց. մտ̈ու ՚ի տապանդ քո. զի լինի ջրհեղեղ.
Իսկ նա աղաղակեաց առ ա̅ծ և ասէ տ̅ր տուր

համբերութի՟, զի քարոզեցէք, թերեւս դարձ-
ցին 'ի մեղաց. և ա͞ծ ներեաց ամս .ի. զորքա-
րոզէր նոյ ասելով, թէ դարձիք 'ի մեղաց
զի դարձուցէ ա͞ծ զջրհեղեղ պատուհասն:
Կարծեալ ծաղր առնէին զնոյ և ասէին՝
գիտեմք զի ընդ վայր տանջեցար և փոշիմա-
նեալ ես և վ͞ս անձարութեան քոյ քարոզես.
և զինչ տամք քեզ զգին տապանիդ. եւ քակեմք
և տուն շինեմք զփայտն ն͞ր. և այլ բազում
բանիւ՟ տնազ առնէին զնոյ: Ա՟ յետ .ճ.
տարւոյն հրամայեաց ա͞ծ նոյի առնուլ զոր-
դիսն և մտանել 'ի տապանն: Իսկ նոյ խնդ-
րեաց համբերել 'ի տեառնէ մինչև .է. օր
յառնուլ զորդիսն իւր 'ի տապանն. յոր ե-
մուտ ինքն եւ կին իւր. ապա՛ որդիքն և որդ-
ւոց կանայքն. և երկու տախտակ էառ 'ի
ձեռքն. եւ եհար զտախտակն՝ նա ձայն որ
ձայնեցա՟ւ 'ի տախտակէն թէ, փախերուք և
մտէք 'ի տապան. զի էհաս ջրհեղեղն:
Իսկ գազանք և անասունք լսեցին և հա-
ւատացին. եւ եկին ինքեանք և աղաղակէին.
և հրամայեաց ա͞ծ առնուլ զնոսա .բ. .բ. 'ի
ամ͞ց թռչնոց. և յանասնոցն .է. .է. Ա՟ եդ-
զթռչունսն 'ի վերնատունն. 'ի միջնատունն
նոյ և որդիքն: Իսկ 'ի ներքնատունն գազանքն
և անասունքն: Ա՟ յետ .է. աւուր իբրև ժո-
ղովեաց զա͞մ 'ի ներքս տապանին, ապա ծե-
փեաց զդրունսն ներքուստ և արտաքուստ:

Եւ ապա բացան սահմանք երկնից, և պատա
ռեցաւ երկիր և բղխեցաց աղբերականս. և
ջուրք գետերաց արտաՀոսեալ. և յերկնից
անձրևն իբրև գետօրէն իջանէր. և ապա
մարդիկք կամեցան փախչել ՚ի տապանն, և ՚ի
նոյն խեղդեցան. մինչև .խ. օր այնպէս ա
ռատանայր որ մինչև ծածկեցան ՃԺ գլուխ
լերանցն և ՚ի սարերէն էանց .Ժ. մարդու
չափ աւելի: Եւ մինչ ՚ի մէկ տարի շուրջ ե
կեալ տապանն, և գնացեալ Հանգեաւ ՚ի
լեառն մասիսոյ որ այժմ ասեն աղըր տաղ:
Յորում բացաւ նոյ զպատուհանն և առա
քեաց զագռաւն զի բերցէ նշան ցամաքի.
և նա գնացեալ անկաւ ՚ի լեշն այլ ոչ դար
ձաւ. և յետ Է աւուրն արձակեաց զաղաւ
նին. և գնացել եգիտ ցամաք. և եբեր զճուղ
ձիթենւոյ: Եւ բացեալ նոյի զտապանն և ե
տես զգլուխ լերանցն. և արձակեաց զամե
նայն թռչունսն. և յետ երեք ամսոյն ելաւ
ինքն ՚ի տապանէն և որդիքն իւր և զամ կեն
դանիսն արձակեաց: Ապա ՚ի մք կենդանեացն
էառ յէէն զմէկն և պատարագ մատոյց աս
տուծոյ. և խնդրեաց յաստուծոյ այլ ոչ պա
տուհասել ջրով զորդիսն նր. և ձայն եղև առ
նա թէ ոչ կորուսանեմ այսպիսի պատուհա
սիւ թէ մեղանչեն ինձ. այլ ուրիշ խրատով
խրատեցից զնոսա: Եւ երևեցոյց նոյի զա
ղեղն ընդ ամպս կանանչ ու կարմիր ընդ ա

րեւեալ. եւ ասէ այս է նշան ուխտին իմոյ. զի
յորժամ ցուցանեմ զայն նշանն իմացին զմ
որդիքն քո. զի հաստատեալ է ողորմութիւն իմ ի վե՟ր
նց: Այս անուն իջին յարկուռւ. եւ անդ բնա
կեցան. դեռ եւս դաշտն նա լի էր ջրով: իբ
րեւ բազմացան որդիք նոյ, գնաց էջ ի նախիջե
ւան, եւ անդ բնակեցաւ. եւ յետ ջրհեղեղին
ապրեցաւ Նոյ. յ՟ ծ՟ տարի. եւ անդ է գե
րեզմանն նոյի: Այս կնոջ գերեզմանն ի խա
րանդ է. որ մայր ասի անուն նորա: Որոց ա-
ղօթիւք փրկեսցէ տէր աստուած զմ հաւա
տացեալս ի ջրհեղեղէ ցանկու-
թէ աշխարհէս Ամէն:

* Աքսէնիս եւ շինութիւն Հռոմայ *

Գլուխ: Ա.



# ՎԱՍՆ ԱԶՆ ԳԱՏՈՒՀԱՍԱՒ

կորոյս զնոսա զի մեք խրատ առցուք
եւ մեք կորիցուք ոչ զնոսա. զի նոքա
միայն զպոռնկութիւն ախտին ունէին զմեղքն:
Իսկ մեք զամ չարութիւն մեղքն միշտ գոր
ծեմք եւ մեղանչեմք: Այս թէպէտ ասացաւ
թէ այսուհետեւ այլ ոչ ջրով խեղդեմ զոր
դիս մարդկան. այլ որ մեղանչեն, նա ուրիշ
պատուհասիւ տանջեմ զնոսա. զի յամ ժամ
գործեմք զմեղքն. որեւ պատեալէն զմեզ
իբրեւ զջուր նման ծովու. եւ կամին խեղդել
զմեզ. ապա մարդ զգաստ պարտի կենալ աղօ
թիւք եւ պահօք. զի լողամք ի հեղձամուղձ

ծովուս. և երբ մտանեմք ՚ի տապան եկեղեց
ւոյն, զերծ իմք ՚ի խեղդմանէ ջրոյ ցանկութեան
մեղաց: Մինչ տապանի դուռն բաց է, մըտ
ցուք ՚ի նա. և երբ փակի դուռն՝ նա լինիմք
խեղդ և ողորմելի և ջրասոյզ լինիմք և կորնչիմք
Օ ՚ի տապանն օրինակ է սուրբ եկեղեցւոյն
և մայր ամենայն հաւատացելոց. զի վերնա
տունն յորում Թռչունքն բնակեալ էին, օրի
նակ բեմին որ է տեղիք հրեշտակաց. և
միջնատունն յորում ՚Նոյ և որդիքն իւր
բնակեցան, օրինակ է տաճարին յորում քա
հանայքն բնակեն. և ներքնատունն յորում
գազանք և անասունք լցան, օրինակ է ժամա
տանն, յորում արդարք և մեղաւորք և միաբան
ժողովուրդք առ հասարակ աղօթեն: Բան
զի օրինակ է ջրհեղեղն մեղաւորաց. և Նոյ օ
րինակ է քահանայից. զի ձայն կացնոյն և ու
րագին և սղոցին՝ գրոց և աւետարանաց
ձայնքն են զոր հնչեցուցանեն ՚ի լսելիս ժո
ղովրդոց: Նքա որք լսեցին ըզձայն կացնուն
և սղոցին՝ ոչ զգուշացան թէ ջրհեղեղ կու
գայ, և ոչ հաւատացին, ոչ ՚ի մեղաց դարձան,
և ոչ ՚ի տապանն մտան, ամենքն ջրով սատակե
ցան և կորեան: Իսկ որ ծաղր արարին թէ ըն
դէ՞ր շինեցիր զտապանդ, և զուր և անիրաւ
աշխատեցար. անհաւատ երևեցան: Նոյն գու
նակ և մեք թէ ոչ հաւատամք գրոց սբց, ա
ւելի անհաւատ եմք քան զնս. զի Նոյ մի

այն քարոզեաց թէ ջրհեղեղ կու գայ · իսկ
մեզ ·Քս̃ քարոզէ և վարդապետք և քահա-
նայք: Այլև նոցա երկաթն և փայտն քարո-
զէր թէ ջրհեղեղ կու գայ · իսկ մեզ գիրք
և աւետարանն կու քարոզէ թէ պատուհաս
կու գայ վս̃ մեղաց ձերոց · դժոխք և տան-
ջանք կայ · մահ և մեռանիլ կայ · ահեղ դա-
տաստան · հրեղէն ծով կայ · մութ և խաւար
կայ · անքուն որդունք · հրեղէն վէշապք և
անանց կրակ · սառն և ցուրտ կայ · զի զամե-
նեցուն օրինակն որ յաշխարհս կայ , մեզ ցոյց
կու տայ ·Քս̃ ասելով · թէ փախերուք 'ի ծո-
վու մեղաց · և մըտէք 'ի տապանն եկեղեցւոյ
զի ապրեսջիք 'ի պատուհասէ · զի մի սատա-
կեսջիք 'ի մէջ մեղաց ծովուն · փութացէք
լող տալով և ազատիլ 'ի փորձանաց · յորում
աւուր բացէ տապան եկեղեցւոյն : ·Քան
զի դուռն եկեղեցւոյն փակելն այն է · որ քա-
նի մարդն կենդանի է , բաց է նմա դուռն
եկեղեցւոյն թէպէտ և մեղանչէ · բայց յե-
տոյ զղջանայ և դառնայ 'ի մեղաց , և գնայ յե-
կեղեցին լալով , ելանա 'ի ջրոյ մեղաց և փա-
խեաւ և մտաւ 'ի տապան եկեղեցւոյ և ապ-
րեցաւ 'ի սատակմանէն · երբ որ խոստովանի
աղօթէ և արտասուէ` զղջանայ և ապաշ-
խարէ , նըման լինի Նոյի որ հաւատաց և մը-
տաւ 'ի տապանն և ազատեցաւ 'ի ջրհեղեղէն
և սիրելի եղև Այ և խօսեցաւ ընդ նմա ·

եւ եղև նոր ադամ և նահապետաց գըլուխ
անուանեցաւ: Իսկ որ ոչ լսեն պատուիրա
նացն քն̄ի, նա աստ ազգի ազգի պատուհա
սի հանդերձեալին. և անդ ՚ի հուրն դըժոխոց
տանջին. քանի մարդ առողջ է՝ բաց է նմա
դուռն եկեղեցւոյն, կարէ մտանել և ապ
րիլ. և երբ որ մեռաւ՝ փակեցաւ նմա դուռն
եկեղեցւոյն և ողորմութիւնն այ̄ ՚ի նմանէ
հեռանայ և կորնչի ՚ի հուրն դժոխոց: Քան
զի ասէ Քն̄ անդարձ մեղաւորացն. Թէ
դիւրագոյն լիցի երկրին սոդոմայեցւոց յա
ւուրն դատաստանին քան ձեզ: Քանզի
յայնժամ որ ջրով կամ հրով սատակեցան ա
ռաջին մեղաւորքն, նա ոչ գիրք կայր և
ոչ աւետարան. և ոչ օրէնք. վն̄ այն ոչ հա
ւատացին եկած պատուհասին: Իսկ մեք
ունիմք գիրք և աւետարան. վարդապետք
և քարոզիչք՝ որ կու խրատեն զմեզ. եթէ
ոչ լսեմք խրատու գրոց, առաւել տանջիմք
՚ի հուրն դժոխոց քան զնոսա: Նոյնպէս սո
դոմայեցիքն թէպէտ մեղաւորք էին.
բայց ոչ մարգարէ կայր և ոչ քահանայ և
ոչ գիրք. և ոչ Քն̄ էր եկեալ. և ոչ ոք ճանա
չէր զաստուած, կամ խրատէր զնոսա. Թէ
պէտ մեղաւորք էին՝ բայց ոչ ինչ գիտէին:
Իսկ մեք որ զա̄ծ գիտեմք՝ և լսեմք քարոզ և
խրատ գրոց վարդապետաց, և ոչ դառ
նամք ՚ի մեղաց, նա առաւել տանջիմք ՚ի դը

ժոխսն քան զնա. վ՟ն այն սակս ·Ը՟ն· Թէ, դիւ-
րագոյն լիցի երկրին սոդոմայեցւոց քան
ձեզ: Պատրաստեալ Թէպէտ նոցա պատուհա
սին մեռան. բայց երբ ք՟ս խաչեցաւ եգնաց
'ի դժոխս և աւերեաց, զնոսա էհան ընդ
ադամայ և ազատ արար: Իսկ ինչ մարդ որ ան
դարձ մեռանի և մտանէ 'ի դժոխքն, նա այլ
ոչ ելանէ. զիրա այլ ոչ մտանէ ք՟ս 'ի դժոխքն
վ՟ն մեղաւորաց: Ո՛ի յայնժամ վասն այն
ողորմեցաւ ն՟մ և մտաւ 'ի դժոխս, զի ոչ գի
տէին գիրք և օրէնք, և ոչ էին լսեալ քարոզ.
և ոչ գիտէին Թէ դժոխք կայ. կամ տան
ջանք. վասն այն ողորմեցաւ ա՟ծ: Իսկ ·Ը՟ն
ինքն յա՟մ ժամ քարոզէ աւետարանաւն և
ոչ լսեմք խրատու ն՟ր. և ոչ դառնամք 'ի մե
ղաց. վասն այն բարկանայ ա՟ծ ի վ՟ր անդարձ
մեղաւորացն: Ո՛ի Ճշմարիտն այն է որ 'Նոյ
տապանաւն ապրեցաւ. նոյնպ՟ս մեղաւորքն
եկեղեցեաւն ազատին 'ի դժոխոցն: Պատր
ձեալ Նոյ պատմէրեաց Թէ յեօԹնէն զմէկն
տալ բաժին ա՟յ: Իսկ մեք նոյի որդիք եմք
պարտ է լսել հօր մերում Նոյի. յեօԹնէն
զմէկն տալ բաժին ա՟յ: Իսկ որք յեօԹնէն
զմէկն չիտան, և կամ 'ի տասնէն զմէկն չի
տան, ն՟քա չեն ա՟ծապաշտ. քանի որ կենդանի
էք ձեզ ի Ճար տեսէք. արԹուն կացէք և
միշտ յաղօԹից ծուլ մի կենաք. և ողորմուԹիս
շնորհեցէք կարօտելոց. կամ ժամուց և պա

տարագաց: Որպէս ասէ տէրն մեր թէ մի լինիք
որպէս յաճախորսն նոյի որք ուտէին և ըմպէին.
կանայս առնէին և արանց լինէին. և յան
կարծ եկն ջրհեղեղն և կորոյս զամենեսին.
Նոյնպէս և սոդոմայեցիքն ուտէին և ըմ
պէին. գնէին և վաճառէին յորում աւուր
ել ղօվտ ՚ի սոդոմայ, եկն հուր և ծծումբ և
այրեաց զամենեսին: Իսկ մեզ պարտ է լսել
զհրաման Տեառնի, յամենայն ժամ արթուն կենալ.
աղօթել և խոստովանիլ արտասուելով և ա
պաշխարելով. և ողորմութիւն տալ աղքատաց
և կարօտելոց: Զի երբ մահն իւր հասանի,
նա արթուն և պատրաստ գտանիցի: Քանզի
յորժամ մարդն մեռանի, նա ամենայն գործքն նորա
խափանին. այլ ոչ կարէ չար գործել և կամ բա
րի. երբ մահն իւր հասանի, մարդու խելքն գնայ
և ուժն հատանի, և լեզուին ճարտարութիւն տկա
րանայ, և խելացն իմաստութիւն խափանի, աչաց
լոյսն խաւարի, և երեսի գոյնն թարշամի. ձե
ռաց և ոտից կարողութիւն թուլանայ. և ապա յա
փշտակէ սատանայ զարքայութեան բանալին ՚ի ձե
ռացն, որ է յոյսն. և ապա հանէ զհոգին: Այսու
որոյ աղաչեմ զձեզ եղբարք՝ դարձէ՛ք ՚ի մեղաց
և զձեր հոգւոյ ճարն հոգացէք. քանզի որ ժա
մանակն ՚ի ձեռս է. յորոց փրկեսցէ զձեզ Տէր
Քրիստոս մեր յամենայն պատահարից փորձանաց, և ՚ի
սատանայական որոգայթից, և ՚ի խաւարային
դժոխոց, աստ և ՚ի հանդերձելումն Ամէն:

## Գլուխ: Ժ

Ի ՅՈՐԺԱՄ ՎԱԽՃԱՆԵ-ցաւ Նոյ, թոռունքն նորա մոռացան զԱստուածպաշտութիւն եւ պաշտեցին զկուռս. զի ոչ կայր յայնժամ գիր. եւ խրատատու վերոյ ամենքն մոռացան զԱստուած. զի ոչ կայր մարդ որ ճանաչէր զԱստուած մինչ. Թ Ճ Ծ Դ. տարի անցաւ 'ի Նոյէ մինչեւ յԱբրահամ. ոչ ոք յիշէր զանունն Աստուծոյ, քանզի զկուռս պաշտէին: Ո 'ի Թարա հայրն Աբրահամու կուռք շինօղ էր, եւ 'ի տանի կռոցն Թարա ասաց Աբրահամու թէ որդի գնայ 'ի նախիրն եւ բեր ինձ երինջ զի մատաղ անեմք կռոց: Նա Աբրահամ ասաց հա՛յր, թէ իշխանութիւն իմ լինէր. խորտակէի զամենայն կուռսն քո. զի ձեռագործ մարդոյն՝ ո՞րպէս լինի Աստուած մարդոյ. բայց ոչ գիտէր թէ ով է Աստուած: Նա յայն ժամ շնորհօք Աստուծոյ անկաւ ի միտս Աբրահամու. զի հանապազ 'ի միտ ածէր եւ քննէր թէ ո՞վ է Աստուած: Նա 'ի ժամանակին յայնմիկ եկն պատուհաս մի, զի բազումք թռչունք սեւ ագռաւուց գային եւ ուտէին զկալ կորեկին. եւ զայլ ինչ որ սերմանեալ էին՝ զսերմն քաղէին եւ ուտէին. զի այլ ոչ էր եղեալ այնպէս: Իսկ մարդիկքն ամենայն կամէին պահել ըղ փառատակս իւրեանց. եւ ո՛չ կարէին պահել: Գնաց Աբրահամ պահել զկալս իւրեանց. իբրեւ ե-

տես աբրահամ զբազմութիւն թռչնոցն, հիացաւ և ասաց ընդ միտս իւր, թէ մինչև ցայսօր այլ ո՛չ եղև այսպէս, զի մեծ ա͞ծ կայ որ զայս առնէ. հայեցաւ յարեգակն և՛ ի լուսինն թէ սոքա՞ իցեն ա͞ծ, այլ ո՛չ հաճանեցաւ միտքն ա͞ծ ասել զնոսա։ Եւ բարձրաձայն գոչեաց յերկինս ՛ի վեր և ասաց թէ՝ ա՛նծանօթ ա͞ծ որ կաս բազմեալ ՛ի վ͞ր աթոռոյ երկնից՝ զի դու ես արարիչ երկնի և երկրի, արեգական և լուսնի և ամենայն կենդանեաց։ Ո՞վ առաքեցեր զթռչունս զայս խլել զվաստակս մեր, աղաչեմ զքեզ ողորմեայ մեզ և դու պահեա զվաստակս մեր։ Իբրև զայս ասաց աբրահամ, ամենայն թռչունքն ելին ՛ի վաստակոց նո͞ց և փախեան. զամենեցուն վաստակն ուտէին թռչունքն. և ո՛չ մերձենային ՛ի վաստակն աբրահամու։ Ուրախացաւ աբրահամ զի ծանեաւ զա͞ծ որև գոհանայր զա͞յ. և խնդութ͞բ գնաց ՛ի տուն, և պատմեաց հօրն զսքանչելիքն։ Իսկ հայրն ասէ՝ ՛ի զօրութենէ կռոցն եղև այդ սքանչելիդ. զի մեք կուռք շատ ունիմք, վ͞ն այն ոչ ուտեն զվաստակն մեր. և ո՛չ հաճանեցաւ խրատու որդւոյն. այլ ասաց աբրահամու գնալ ՛ի նախիրն. և բերել եզն և արջառ զի մատաղ առցեն կռոցն։ Իսկ աբրահամ առեալ կրակ և եմուտ ՛ի տուն կռոցն. զի այրեսցէ զկուռսն։ Իսկ

նաքովր հօր եղբայր նորա եկն զի անցուսցէ
զկրակն. և նա անկեալ ՚ի մէջ կրակին այրե
ցաւ: Իսկ հայրն և ազգականքն կամէին սպա
նանել զաբրահամ. Իսկ աբրահամ առեալ
զսառա փախեաւ յեգիպտոս: Ապա տեսեալ
եգիպտացիքն զգեղեցկութիւնն սառային,
պատմեցին փարաւոնի: Իսկ փարաւոն բե
րել ետ զաբրահամ վասն սառայի թէ զի՞նչ
է քեզ. և նա ասէ քոյր իմ է: Եւ փարա
ւոն կամեցաւ առնուլ ըզսառա յիւր կնու
թիւն: ՚Ի գիշերին երբ կամեցաւ մերձենալ,
երևեցաւ նմա հրեշտակն հրեղէն գաւա
զանաւ և ասէ՝ մի՛ մերձենար ՚ի սառա զի
կին է աբրահամու. այլ տուր նմա բազում
ինչս զի հայեցար յերեսս սառայի. և թէ
ոչ առնես այնպէս, հրեղէն գաւազանաւ
սատակեմ զքեզ և քանդեմ զթագաւորու
թիւն քո: Իբրև լուաւ թագաւորն, անկաւ
ահ և դողումն ՚ի վ̄ր նորա. կոչեաց զաբրա
համ և ասէ՝ զի՞նչ գործեցեր դու ընդ մեզ.
երբ սառայ քոյ կին էր, ինչի՞ ասեր թէ քոյր
է իմ: Ասէ աբրահամ վ̄ս այն ասացի՝ զի
մի՛ սպանցես զիս վ̄ն կնոջս: Իսկ փարաւոն
ետ սառայի .խ. ծառայս .գ̄. Ճ. ուղտս. և
բազում ձիս և ոչխարս. ոսկիս և արծաթս.
և արձակեաց զն̄ս և ասէ. երկիրդ իմ առա
ջի քո կայ՝ ուր և կամիս անդ բնակեաց:
Եւ բազմացան ոչխարք և ուղտք և ամ̄ ինչ

աբրահամու · և վրանով շրջէր և արածէր զանասունս իւր ուր և կամէր: Իսկ ·ռ͞· ոչխար 'ի վրանին մօտն պահէր վասն ուտելոյ զկաթն և զմածունն, և զգառն · զի 'ի տոան մօտն պատրաստ լիցի հանապազ: Այս հովիւ մի ունէր անուն նորա մամբրէ էր. և խիստ ողորմած էր · և յաւուր միում գնաց ոչխար արածել. և հաց սակաւ տուին նմա այսինքն երեք փոքր բաղարջ · և աստ աբրահամ առ այս ·գ· բաղարջն մինչև որ զհացն եփեն և ես բերեմ քեզ: Երբև սակաւ մի հեռացաւ մամբրէ եկն աղքատ մի և ասէ, վ͞ն սիրոյն ա͞յ տուր ինձ կտոր մի հաց զի սոված եմ: Իսկ մամբրէ կթեաց ոչխար մի բրդեաց ըզհացն և կաթով կերակրեաց զնա · և նա կերեալ օրհնեաց զնա և գնաց: Երբև ճաշու ժամ եղև, եկն մէկ ճանփորթ մարդ մի· աղաչէր զնա և ասէր, թէ սոված եմ. վ͞ն սիրոյն ա͞յ թէ ունիս ինչ կերակուր, սակաւ մի տուր ինձ. Նորա ևս կթեաց ոչխար մի և բրթեաց զբաղարջն ետ որ կերաւ. Նոյնպէս և սա օրհնելով գնաց: Իսկ մամբրէ կամէր ճաշակել զմէկ բաղարջն · բայց ասէր 'ի միտս իւր, թէ այլ ոք եկեալ խընդրեցէ կերակուր վ͞ն սիրոյն աստուծոյ և թէ ոչ լինի հաց` ամօթով մնամ առաջի ա͞յ. և ո՛չ եկեր զհացն: Իսկ յետ կէս աւուր եկն ծեր մի աղաչէր և ասէր, քաղցած եմ վասն սի

վ՟ն սիրոյն ի՟մյ տուր ինձ ուտելու. իսկ մամբ
րէ կթեաց զկաթն և բրդեաց զհացն և կե
րակրեաց զնա: Իբրև լիացաւ ծերն սկսաւ
օրհնել զմամբրէ ասելով, այսպէս և դու
մամբրէ եղիցիս գլուխ ողորմածաց և սեռուն
քո փոխեսցի յըսպիտակութ՟ի. և անուն քո յի
շատակեսցի յաւիտեան. և առեալ զկաղնի
գաւազանն ի ձեռացն մամբրէի, տնկեաց ի
մէջ աւազին և ասաց. այս գաւազանս եղիցի
նշան ի մէջ իմ և ի մէջ քո:

Իբրև օրհնեաց այսպէս և գնաց ծերն, ետես
մամբրէ որ գաւազանն կանաչացեալ էր և տե
րև արձակեալ. ապա որոնեաց մամբրէ զծերն
թէ աւելի ևս օրհնութիւն առցէ ի նմանէ
և ոչ եգիտ. և ետես որ ոչխարքն իսպիտակա
ցեալ էին և ինքն ևս ըսպիտակացեալ. զի սև
ծառայ էր մամբրէ. և դարձեալ հայեցաւ
ի գաւազանն զի մեծ ծառ էր եղեալ. և
աղբիւր մի բղխեալ ի ծառին տակն. եկին
ոչխարքն և խմեցին ի ջրէն և նստան ի հովս
ծառին: Իսկ ի յութն ժամին ել ի տանէն
աբրահամ զի բերցէ հաց մամբրէի. հայե
ցաւ ի դաշտն զի ծառ մի երևէր. և զար
մանայր թէ ուստի իցէ այս մեծ ծառս. զի
ոչ կայր անդ ծառ մինչև ցայսօր. և երազ
համարէր. երբեմն երթայր և երբեմն կանգ
նէր: ✠Եւ գնացեալ եհաս ի ծառն.
եւ ետես զոչխարսն սպիտակ. եւ

մամբրէ բաղխտակ, ոչ ճանաչէր թէ ուր է-
ցէ հովիւն ոչխարքն իւր։ Իսկ մամբրէ յա-
ւաջ ընթացաւ եւ ասէ. հայր աբրահամ արի
եւ տես զզօրութիւնն այ եւ զսքանչելիսն։ Իբ-
րեւ եկն աբրահամ՝ եւ տես զծառն եւ զաղ-
բիւրն եւ զոչխարսն, եւ զմամբրէ բաղխտակա-
ցեալ, զարմանայր վասն սքանչելեացն թէ
զի՞ որդ եղեւ այս ։ Իսկ մամբրէ պատմեաց
նմա թէ .գ. աղքատ հանդիպեցան. եւ մէկ
մէկ կերակրեցի զնս. եւ յետոյն աղքատն էր
ծեր մի. երբ կերակրեցի զնա, նա օրհնեաց
զիս եւ զոչխարս իմ. եւ առեալ զկաղնի գաւա-
զանն իմ՝ ՛ի ձեռուաց իմոց, եւ ցցեալ ՛ի տեղիս
այս, եղեւ սքանչելիս այս։

Իբրեւ լուաւ աբրահամ անկաւ ՛ի վ̅ր ոտից նր̅
եւ ասէր՝ դու իմ հայր եւ ես քեզ ծառայ. եւ
անդ ուխտեաց աբրահամ, թէ քանի որ կեն-
դանի եմ մինչեւ որ հիւր չհանդիպի, հաց
ոչ ճաշակեմ։ Եւ մամբրէ եղեւ պատճառ
հիւրընկալութեն աբրահամու ։ Որ
եւ ձեզ զնոյն շնորհեսցէ հիւրըն-
կալութե սէրն եւ ըստ նմին
արժանասցիք օրհնութե
եւ շնորհաց նորին ամէն ։

Վասն հիւրընկալութեն աբրահամու ի վերայ ճանապարհին
Գլուխ։ Ժ.

ԻԲՐԵՒ ԵՏԵՍ ԱԲՐԱՀԱՄ
զայս մեծ սքանչելիսն, բերեալ զվրա-

նըն ցըցեալ 'ի ներքև կաղնի ծառոյն և արկ
սեղան խաչաձև 'ի վերայ ճանապարհին. եւ
ուխտեաց ընդ աստուծոյ թէ, առանց հիւ-
րի ոչ ճաշակեմ. և անցաւորք ճանապարհին
որք հանդիպէին, զսեղանն լի և պատրաստու-
թբ տեսանէին. կերակրէին և անցեալ գնայ-
ին. թէ .ա. օրն .խ. անգամ հիւր հանդիպէր,
նա .խ. անգամ ճաշակէր աբրահամ վն հիւ-
րին. և թէ .ե. օր. կամ .ժ. օր կամ .ի. օր ոչ
հանդիպէր, ոչ ճաշակէր առանց հիւրի:
Իբրև ետես սատանայ յայնպէս բարեգոր-
ծութն, նախանձեցաւ ընդ աբրահամու. և
կապեաց զճանապարհն. զի ոչ ոք անցանէր և
գայր 'ի նոյն ճանապարհն. զի թէ գայր յետ
դարձուցանէր. և ցուցանէր այլ ճանապարհ.
մինչև .խ. օր ամենևին հիւր ոչ հանդիպե-
ցաւ: Իսկ յոյժ նուաղեցաւ աբրահամ. և սա-
ռա աղաչեաց զտէրն աբրահամ և ասէ՝ ա-
հա սովամահ կու մեռանիս. սակաւ մի հաց
կեր. և աբրահամ ասէ՝ ուխտ եդեալ եմ հետ
աստուծոյ, ոչ կարեմ ուտել. զի միտք իմ վկայ
է, որ այսօր հիւր կու հանդիպի մեզ. եթէ
ոչ հանդիպի, նա մեռանիմ 'ի սէրն աստու-
ծոյ. զի փոքրիկ պատուհան մի շինեալ էր աբ-
րահամ. զի միշտ հայէր վն հիւրի և էր բարձ-
րութիւն նորա երեք մարդաչափ. և ասաց
սառային աբրահամ թէ հայեա 'ի դիտակն. իբ-
րև հայեցաւ, ետես 'ի հեռաստանէ որ. գ.

մարդ կու գայր: Ո՞հետև ես սառա աբրա-
համու ևասէ. տէր ողորմեցաւ քեզ. ևահա
երեք մարդ գան առ քեզ. ևասէ աբրահամ,
շուտով զենէք զհորթն ևեփեցէք. զի հորթ
մի ծնեալէր աբրահամու որ նմանէր գառինն
աբելայ. զայն հորթն զենեաց վասն հիւ-
րոց: Իբրև մօտեցան մարդիքն, զօրացաւ
աբրահամև ել ընդ առաջ նոցա. ևնոքա է-
կին բազմեցան. իսկ մինն յերից խօսէր զբանս
զարմանալիս. ականջ դնէր աբրահամ ևհիա-
նայր. բայց ոչ գիտէր թէ տէրն է: Իբրև
կերան ևլիացան, ասէ տէրն եղիցի զաւակ
՚իսառայէ. ևանուն նորա կոչեսցի իսահակ.
ևնա եղիցի մեծ նահապետ: Իբրև լուաւ
սառա ընդ յետոյ վրանին, նա՛ ծաղրեցաւ.
զի ասէր ընդ միտս իւր, թէ ես ծերացեալ եմ
ո՞րպէս կարեմ ծնանիլ զաւակ. զի նստեալ
էր սառա՛ ծածուկ ՚ի նոցանէ առ յետոյ վրա-
նին: Իսկ տէրն ասէ՝ սա՛ռա զի՞մարդ ծիծա-
ղեցար. և ո՞չ հաւատայցեր ինձ. զի սուտ հա-
մարեցար զբանս իմ. վասն այդ ծիծաղելոյդ
չորեքհարիւր տարի անկցի ազգդ քո գերի ՚ի
ձեռն այլազգեաց. զայս ամենայն լսէր աբ-
րահամ և զարմանայր. բայց ոչ իշխէր հար-
ցանել թէ դու ո՞վ ես. և դարձեալ ասէ՝ օրհ-
նելով օրհնեցից զքեզ ա՛բրահամ. և բազմա-
ցուցանելով բազմացուցից զզաւակ քո որպ
զաստեղս երկնից. և որպէս զաւազ առ ափն

ծովու. և օրհնեաց զտունն և զսեղանն:
Իբրև ելանէ արք ընդ խս մինչև 'ի լեառն սոդոմայ. և 'ի ճանապարհին առաքեաց զերկու հրեշտակն և ասէ. գնացէք 'ի սոդոմ. և անդ կայ այր մի հիւրընկալ անուն նր̃ ղովտ և հանէք զնա անտի. զի կամիմ պատուհասել զքաղաքն: Իբրև գնացին հրեշտակքն, գիտաց աբրահամ զի տէրն է. 'ի յահէն դողալով երթայր ընդ նմա. բայց ոչ իշխէր հարցանել բան ինչ. Իբրև ելին 'ի լեառն, երևեցաւ սոդոմ. ասէ տէրն ցաբրահամ, կամիմ կործանել զքաղաքս զի յոյժ բազմացեալ են մեղք նոցա: Ասէ աբրահամ, տէ՛ր ո՞չ իցէ 'ի նմա .Ծ. արդար զոր ոչ խնայես: Ասէ տէրն՝ եթէ լինիցի .Խ. արդար՝ ոչ կորուսից զնա: Ասէ աբրահամ ես հողեմ և մոխիր. եթէ իցեն անդ ̃Լ կամ ̃Ի ո՞չ խնայես 'ի նա: Ասէ տէրն եթէ լինիցի անդ .Ժ. արդար ո՛չ կորուսից:
Ապա կրկնեալ աբրահամու ասէ, տէր երբ արժանի արարեր զիս խօսիլ ընդ քեզ. աղաչեմ զքեզ. եթէ լինիցի .Ե. արդար ոչ խնայես զնոսա: Յայնժամ վերացաւ տէրն և ձայն եղև աբրահամու և ասաց. ոչ կայ 'ի նմա արդար և ոչ մի. բայց դու կա՛ց 'ի տեղիդ մինչև տեսցես զկատարածն սոդոմայ: Իբրև գնացին .Բ. հրեշտակքն 'ի սոդոմ, մտին 'ի քաղաքն և ընդ երեկս էր իբրև ԺԵ տարեկան

տղի նման. և տեսեալ Ղովտ զնոսա, մեծարել
տարաւ ՚ի տուն իւր ասելով, թէ դուք նո
րահաս մանկունք՝ և քաղաքացիքս չարագործ
մարդիկ՝ ընդէ՞ր մտէք ՚ի քաղաքս: Ասեն հրեշ
տակքն մեք վասն քոյ եմք եկեալ. զի բարկա
ցեալ է աստուած. և կամի կործանել զքա
ղաքս եւ շուտով ՚ի սմանէ. զի մի կորնչիս
դու ընդ սոսին. իսկ Ղովտ աղաչէր բազմիլ
՚ի սեղան և կերակրել ՚ի գիշերի անդ: * Ապա
մինչ դեռ կային անդ, յանկարծ եկեալ պղ
ծագործքն կալան զդուռն Ղովտայ և ասա
ցին. տուր մեզ զայն օտար մարդիկքն որ ե
կեալ են ՚ի տուն քո: Իսկ Ղովտ աղաչէր զնո
սա ասելով. թէ մի մեղանչէք նոցա. այլ ·զբ·
կոյս աղջկունս իմ տամ ձեզ. նոքա սկսան
զդուռն խորտակել: Իսկ հրեշտակքն ասեն
ցՂովտ, մեք հրեշտակ եմք աստուծոյ դու մի
հոգար վասն մեր. այլ փութապէս ել ՚ի քա
ղաքէս մինչև ՚ի գլուխ լերինն. իբրև խորտա
կեցին զդուռն Ղովտայ, ելին հրեշտակքն
և կուրացուցին զաչս նոցա և ասացին Ղովտայ
ելէք և փախերուք ՚ի լեառն և մի յետս հայէք.
իսկ Ղովտ ել ՚ի քաղաքէն ինքն և երկու դըս
տերքն և կինն: Իբրև հասին ՚ի կէս լերինն,
նա կինն դարձաւ յետս հայելով թէ փեսայ
քըս պիտի գան. քանզի նիշանած էին աղջ
կունքն. նա առ ժամայն յաղի քար դարձաւ.
և է մինչև ցայսօր:

Այս հուրն շրջապատեաց զքաղաքն իբրեւ
պարիսպ. եւ ծծումբն տեղացեալ իբրեւ անձ
րեւ. քար եկարկուտ. կրակ եկայծակ ՚ի խմիւսին
վայր թափէր յերկնուց մինչեւ Է օր. որ այ
րեցան քար եթուփ. այլ եւ սեւ ջուր եղան
՚ի գետնէն որ դեռ եւս երեւի ՚ի խաբանչացումն
տեսողացն. եւ ծով եղեւ մինչեւ ցայսօր: Այս
աբրահամ տեսեալ զանցումն նորա, փառս
տայր այ եւ գոհանայր. քանզի ղովտ որ հիւրա
սէր եւ աղքատասէր էր. զնա ազատեաց ՚ի սո
դոմայ. եւ այսպէս կորոյս զնոսա:

Աղաչեմ ըզձեզ եղբարք ուսարուք զտուրս
աղքատաց. եւ զհիւրընկալութի. զմեծարել
զօտարն. զի յօրինակ առէք զմամբրէ եւ տե
սէք թէ աղքատաց ողորմելով որպիսի փա
ռաց արժանաւորեցաւ. եւ կամ աբրահամ որ
հիւրընկալութեամբն, պահօք եւ ծոմօք որ չափ
մեծութե հասաւ. եւ այծ ընդ նմա կերակրե
ցաւ. եւ խօսակցեցաւ. եւ օրհնեաց զնա եւ հայր
ազգաց կացոյց զնա: Ըստ նմին օրինակի
պարտիք ողորմութիւն տալ աղքատաց եւ կա
րօտելոց. տալ հաց քաղցելոց եւ ջուր ծարա
ւելոց. որով գովաբանիք ՚ի գործըս ձեր. եւ
ուրախանան առաքեալք եւ մարգարէք եւ
մենայն արդարք. հրեշտակք եւ երկնաւոր
զօրքն այծ: Որ ինքն բարերարն այծ օրհնէ եւ
փառօք փառաւորէ զձեզ:

Ըստ յայմ պատահարից փրկե. եւ անդ ընդ այբս

դատէ եպասկէ։ Նա՛ արժանացուսցէ զմեզ նոցին փառաց եւ իւր օրհնեալ տեսոյն. որ է օրհնեալ յաւիտեանս Ամէն։

### Վասն ծնընդեանն Իսահակայ

### Գլուխ։ ԺԱ։

ԲՐԵՒ · ՄԵՐՁԵՑԱՒ · ԱԲՐԱ համու սառա կին իւր, յղացաւ եւ ծնաւ զԻսահակ որդին գեղեցիկ եւ պատուականագոյն քան զամենեսին։

Իսկ ծնօղքն սիրէին յոյժ. եւ ոչ չէջուցանէին զճրագն ՚ի գիշերի՝ վասն նորա պայծառ երեսոյն։ Իբրեւ զարգացաւ իսահակ, որք տեսանէին զգեղեցկութին եւզճարտարախօս անուշ լեզուն, զարմանային եւ ապուշ մընային։ Ապա առաքեաց ած զհրեշտակ իւր եւ ասաց աբրահամու թէ, զորդին քո խնդրէ ած պատարագ զիսահակ։ Իբրեւ լուաւ աբրահամ զբանն ՚ի հրեշտակէն, համոզեաց զէշ իւր եւ բարձեալ զհուր եւզփայտ՝ եւզիսահակ ընդ իւր եւերթայր ՚ի տեղի ուխտին։

Նա՛ ՚ի ճանապարհին հարցանէր իսահակ թէ հա՛յր ահա կրակ եւ ահա փայտ, ո՞ւր է ողջակէզ եմատաղ քո։ Ասէ աբրահամ, ած պատրաստեսցէ մատաղ ողջակիզաց. քանզի այնպս խաբէր աբրահամ զիսահակ. բայց մարգարէանայր ավ։ Իբրեւ գնացին ՚ի տեղի ուխտին, կապեաց զորդին իւր զիսահակ եւէառ զսուրն զի զենցէ զորդին իւր։

Իսկ հրեշտակն ձայնեալ ասաց թէ, մի մերձենար 'ի պատանեակդ. զի առաքեաց ած քեզ խոյ մի ողջակէզ կախեալ զեղջերէն 'ի սաբեկայ ծառէն: Ապ՜ առեալ աբրահամու զխոյն եղեն փոխանակ իսահակայ. և արձակեաց զիսահակ. ձայն եղև յերկնից և ասէ՝ աբրահամ աբրահամ. որպէս ոչ խնայեցեր դու զորդին քո վասն իմ. նոյնպէս և ես ոչ խնայեցի զորդի իմ վասն քոյ: Ապ՜ ուրախութեամբ դարձաւ աբրահամ 'ի տուն իւր: Ապ՜ յաւուր միում աղօթէր մինչ աբրահամ, երևեցաւ նմա հրեշտակն և ասէ. հրամայեաց քեզ ած զի գնասցես 'ի կողմն երուսաղեմայ. և գտանիցես 'ի յանտառին այր մի այ ծառայ. անուն նորա մելքիսեդեկ. ըզգլուխն գերծեա՛ և զղընկունսն հարթեա՛. և զգեցո նմա հանդերձս. զի նա վասն քո մատուսցէ պատարագս գինւով և հացով. և նա եղիցի տան քոյ քահանայ, և ամենայն ընտանեաց քոյ յաստուածակոյս կողմանէ:

Ասէ աբրահամ ո՞ւր տեղ գտանեմ զնա. ասէ հրեշտակն յերուսաղէմ 'ի յանտառին. իբրև գնաց աբրահամ 'ի յանտառն, տեսանէր, զի սիւն լուսոյ յերկնից իջանէր 'ի վր անտառին. գիտաց աբրահամ զտեղին. իբրև տի՜ եղև, գնացեալ եգիտ զմելքիսեդեկ ահեղակերպ և գոյնն փոխեալ. և դէմքն այլակերպեալ. և մազն գլխոյն մինչև 'ի ծունկն իջեալ.

և ըղըղնկուտքն թզած հայի. և քամակն ի՞ր իւրև
կրիայի։ Այս ողջունեալ զնա աբրահամ, խօ
սեցաւ ընդ նմա և ասէ. քանի՞ ժամանակ է
որ դու աստ կաս. և կամ ո՞րպէս ճանաչեցեր
զԱծ. ասէ մելքիսեդեկ, զի ․է․ տարի է որ
աստ ճգնիմ անտեսս ՚ի մարդկանէ. այլ ոչ ոք է
տեսեալ զիս բաց ՚ի քէն։ Ասէ աբրահամ՝
պատմեա ինձ ըղհամասայն քո թէ, որպէս
եղև. ասէ մելքիսեդեկ. ես եմ որդի մել
քեայ թագաւորին որդւոյ սաղեմ թագաւո
րին որ զքաղաքս շինեաց։ Այս յաւուր միում
՚ի տօնի կռոցն առաքեաց զիս հայր իմ թէ
գնա ՚ի նախիրն և բեր պարարտ երինջ և առ
ջոր զի զոհեսցուք կռոցն. իբրև գնացի ՚ի
նախիրն, ջոկեցի գէր և ըստածար երինջք և
առ ջուք. և ծագեաց լոյս շնորհացն աստու
ծոյ ՚ի սիրտս իմ. քննեցի և ոչ հաճանեցայ
զկենդանիքս ըսպանանել վասն մեռեալ
պատկերի. Թողի զանասունքն և դարձեալ հայ
եցայ յերկինս և յարեգակն և ՚ի լուսինն և
յամ արարածս . և արարչին շնորհօքն և ՚ի քն
նուէ այնոցիկ ծանեայ զարարիչն Ած. Թողի
զանասունքն և գնացի առ հայրն իմ առանց
ողջակիզի։ Այս եհարց հայրն իմ թէ ո՞ւր են
երինջքն. և ես ասացի հայր իմ դժար թը
ւեցաւ ինձ զկենդանիքն ըսպանանել վն մե
ռեալ և անշունչ և ձեռագործ պատկերաց
որ ոչ են Աստ. այլ աստ հաճք վն այն ոչ բե

րի։ Եւ հայրն իմ ոխացաւ ընդ իս. եւ մտեալ
առաջ մօրն իմ. թէ այսօր երկու որդւոցս
միոյն զոհ մատուցանեմ կուռոցն. եւ մայրն իմ
գիտաց որ ոխացաւ ընդ իս հայրն իմ. ապա
ողբայր մայրն իմ եւ ճանկէր զերեսն իւր եւ
զարհեր գլխոյն. քանզի սիրէր զիս մայրն իմ.
եւ հայրս ատէր զեղբայրն իմ։ Իսկ հայրն իմ
տեսեալ ըզսուգ մօրն իմոյ որ լայր դառնա
պէս, առաջ հայրն իմ մօր իմոյ. ընդէ՞ր սուգ
առնես եւ լաս. արկ ցուք վիճակ իւր ·ի· որդ
ւոցս. ում ելցէ վիճակն զնա զենցուք. զի
հայրն իմ այնպէս կարծէր թէ վիճակն ինձ
ելցէ եւ մեռանիմ վս͞տ կուռոցն. եւ անգամ վի
ճակ արկին. նա է. անգամն այլ անկաւ յեղ
բօրս վերայ, եւ պիտէր որ վս͞տ կռոցն մեռա
նէր։ Իբրեւ եղեւ այս, առեալ հայրն իմ տա
նէր կապեալ զեղբայրն իմ. իսկ մայրն իմ լայր
եւ ասէր ընդ իս ո՞չ ողորմիս եղբօրն քո. եւ
մայրն իմ լալով գնաց փչետ նը զի տեսցէ զկա
տարումն որդւոյն իւրոյ։ Իբրեւ լսեցին իշ
խանքն եւ մեծամեծքն թէ թագաւորն զիւր
որդին մատուցանէ զոհ կուռոցն, բազումք ա
ռեալ զդուստր եւ զորդիս իւրեանց, տա
րան ՚ի զենումն. եւ ես յոյժ լացի վս͞տ եղբօրն
իմոյ փախեայ եւ եկայ ՚ի յանտառս եւ հայէի
՚ի յանտառէն, զի արկին ձեռն յեղբայրն
իմ ըսպանանել. եւ ես խնդրեցի ՚ի տ͞ենէ եւ ասա
ցի, եթէ բացցէն դրունք անդնդոց եւ կլա

նեսցեն զդոսա։ Յակոբն պատառեցաւ եր
կեր և եկուլ զնոսա ընդ կուռսն և ընդ տա
ճարսն, զհայրն իմ և զմայրն իմ ամ ժողովր
դով. և ես միայն մնացի աստ։ Բայց ահա.
է. տարի է որ չէ տեսեալ զիս մարդ։ Իսկ
աբրահամ գերծեաց զգլուխ նր. և կտրեաց
զղընկաւնս նր լծաց և մաքրեաց և զգեցոյց
զնա և տարեալ 'ի տուն իւր. և պատարագ մա
տոյց գինւով և հացիւ. և ճաշակեաց աբրա
համ համայն ընտանեօքն. և եղև քահանայ
տանն աբրահամու յամծակոյս կողմանէ։

Օ յայն եղև առաջին պատարագ հացով և
գինւով. զի մելքիսէթ եղև առաջին քահա
նայ. որ օրինակ էր քի։ Եւ աբրահամ բարե
գործութբ ծերացաւ և հանգեաւ խաղաղու
թբ. և եթող .բ. որդիս, զիսահակ 'ի սառայէ.
և զիսմայէլ 'ի հագարայ. և իսահակայ որ
դիքն եսաւ և յակոբ. և յակոբայ .ժբ. նա
հապետքն յորոց օրհնեցան ազգ և ազինք 'ի
սոցանէ։ Նոյն օրհնութիւն իվր ձեր
եղիցի հանդերձ տամբք և տեղեօք
ձերովք ամէն ։

✠ Սոյն և պատմութիւն Յովսէփայ նահապետին ։

Գլուխ։ ԺԱ։

ԻՍԿ ՅԱԿՈԲ ՈՒՆԷՐ ԺԲ. ՈՐ
դիս. և յետանածինն յովսէփ. որ էր յոյժ
գեղեցիկ և պատուական զաւակ ևսի
րաքելան ծնողացն։ Եւ 'ի միում գիշերի տե

սանէր երազ մի յովսէփ. զի արեգակն եւ լու-
սինն .ժա. աստեղօք եկին յիւրն երկրպա-
գութի մատուցանել. եւ լեալ պատմեաց եղ-
բարցն իւրոց զերազն. իսկ նոքա ծաղր առնէ-
ին ասելով, մի թէ թագաւորե՞ր լինիցիս. որ
մեք հայր եւ մայր քո գամք երկիրպագանել
քեզ: Եւ դարձեալ յաւուր միումն եւս ետես
երազ. որ օրայք կապէին ՚ի կալն իւրեանց
հանդերձ եղբարբն եւ կապեալ զօրայսն երկր-
պագին յովսէփու օրայիցն. եւ զայս եւս պատ-
մեաց նց. Վասնորոյ նախանձեալ եղբարքն
սորա կամեցան սպանանել: Եւ յաւուր մի
ում եղբարքն ոչխար արածէին՝ եւ հեռա-
ցեալ ՚ի տեղւոյն գնացեալ յուրիշ խոտաւէտ
տեղիս, եւ ոչ եկին ՚ի տունս. վասն որոյ
հայրն յակոբ տրտմեցաւ ՚ի չեգալն որդւոցն,
թէ քաղցած մնացին. վասնորոյ կոչեաց զյով-
սէփ եւ ետ նմա հաց եւ այլ ինչ կերակրոց տա-
նիլ իշով եղբարցն. եւ գնացեալ յովսէփ ե-
գիտ զեղբարսն եւ տուեալ զհացսն. եւ նո-
քա առեալ եւ նստեալ կերին եւ միմեանց
ակն արկին. եթէ ահա ժամանակ է եւ օր
հատուցման զի տեսցուք զսորա երազն թէ
ո՞ւր կու կատարի: Եկայք սպանցուք ըզսա.
եւ մեծ եղբայրն ռուբէն ասաց մի սպան-
ցուք. այլ ձգեսցուք ՚ի հոր մի եւ ՚ի նոյն
մեռցի. զայս ասաց նոցա եւ կամէր ազա-
տել զնա ՚ի սպանմանէն. զոր ըմբռնեալ

զյովսէփ հանեն զծաղկեալ պատմուճանն ՚ի յանձնէն եւ ընկեցին զնա ՚ի հոր անջրդի. եւ տեսին որ ահա վաճառականք գնային յեգիպտոս. եւ ասէ յուդա ցեղբարսն իւր՝ զի՞նչ շահ է մեզ ՚ի հորոյն մէջն մեռանիլն. այլ հանցուք եւ ծախեսցուք վաճառականաց. եւ հանին ՚ի գբոյ զյովսէփ եւ ծախեցին ի՟. դահեկանի. բայց ռուբէն ո՛չ էր անդ երբ հանին ծախեցին զյովսէփ. եւ առին իսմայելացիք եւ գնացին յեգիպտոս. եւ եկեալ մեծ եղբայրն ռուբէն ոչ եգիտ զյովսէփ ՚ի հորն. նա պատառեաց զհանդերձն իւր. եւ եկեալ առ եղբարսն թէ զիա՞րդ եղեւ յովսէփու. եւ նոքա ասացին թէ ծախեցաք. ժ՟ե. ոսկի. եւ ե՟. եղբարքն ծախեցին. վ՟ս որոյ գողացան զ.ժ՟ե. ոսկին եւ մորթեցին ուլ մի. եւ յարեան շաղախեցին զպատմուճանն յովսէփու. եւ բերին ցոյց տվին հօրն իւրեանց յակոբայ, թէ ա՛ս է պատմուճանն որդւոյ քո յովսէփայ. զի ՚ի ճանապարհին անկեալ կայր թաթախեալ արեամբ ոչ գիտեմք թէ զի՞նչ եղեւ. գա՞յլն եկեր, կամ այլ չար գազան եկեր չգիտեմք: Ապա ՚ի բազում աւուրս լացին ծնօղքն եւ մեծ սուգ առին վասն յովսէփայ զի յոյժ սիրէին զնա ։ Իսկ վաճառականքն առին զյովսէփ եւ գնացին ՚ի մըսըր. եւ ծախեցին դահճապետին բազում գանձիւք. եւ դահճապետին կինն կարի ցանկացաւ գեղեցկութե-

նորա. որև ըստիպեաց զայրն իւր, թէ մեք որովհետև որդի ոչ ունիմք զաս առնումք մեզ որդեգիր անեմք: Բայց վաճառականն ոչ կամէր ծախել, ապա ահացուցեալ զկինքն, մինչ որ անճար մնաց և ծախեաց զյովսէփ: Այն զյովսէփ արկին ՚ի ծոցս իւրեանց և որդի արարին. և հանապազ քնէր ՚ի ծոց նոցա: Ապա չարն սատանայ արկեալ զտրփական ցանկութի կնոջն պետափրեայ դահճապետին անկանիլ ՚ի մեղս ընդ նմա: Այն յովսէփ ասէ գանձապետին. հայր իմ տուր ինձ խուց մի զի յամ երեկոյի ծառայեմ ձեզ մինչ ՚ի քուն լինիլ. երբ ննջէք դուք, ես գնամ ՚ի խուցն իմ ննջեմ. և հաճոյ թուեցաւ գանձապետին և արար այնպէս. ապա կինն գանձապետին գնայր առ յովսէփ ՚ի գիշերին. և կամէր խաղալ ընդ նմա: Իսկ յովսէփ ամուր փակեալ զդուռն, ոչ թողոյր որ խօսէր ընդ ինքեան: Իբրև ցերեկ լինէր, ասէր յովսէփայ թէ ես զքեզ գնեցի վասն իմ. զի սէրն քո իբրև ըղձոց վառեալէ ՚ի սրտի իմում. զի պահ մի ոչ կարեմ համբերել առանց քոյ տեսոյն. ապա դու վասնէ՞ր հեռի շրջիս յինէն: Ասէ յովսէփ. զի դու մայր ես ինձ. զի ո՞րդ այդպէս խօսիս վասն մեղաց: Ասէ էլի ես կինն՝ ես ո՞րպէս լինիմ քեզ մայր. զի ոչ ծնեալեմ և ո՛չ կաթ տուեալ: Ասէ յովսէփ ես զքեզ ինձ ծնեալ մայր գիտեմ. զի ազգն

մեր սուտ ո՛չ գիտեն. ում որ մայր տանեն,
խելք զմայր պաշտեն։ Ասէ էլինեա ոչ Թո-
ղում ըզկամս քո. իսկ այնու հետև պատրաստ
պահէր յովսէփ զինքն. և ետես որ ոչ կարաց
շրջեցուցանել զմիտքն յովսէփայ, ասաց թէ
դեղեմ զայրն իմ որ մեռանի. և ապա տու-
նումք զիրեար որ դու ժառանգ լինիս հայ-
րենեաց մերոց. ընչից և ապրանաց. և ուրա-
խութ(եամ)բ կատարեսցուք ըզկամս մեր ։
Ասէ յովսէփ՝ ես ո՛չ կարեմ այդպիսի մեղաց
կցորդ լինիլ վ(սն) այս անցաւոր աշխարհիս
համար. զի նա էառ զիս և որդի արար իւրն.
և ես ո՞րպ(էս) մոռանամ զերախտիքն ն(որ)ա. որ այն
քան զիս մեծացոյց և բարձրացոյց։ Այս ապա
սկսաւ բռնութ(եամ)բ արկանել ՚ի նա ձեռն
թէ հեղպէթ պիտի կատարես զկամս իմ. և
նա պատառեալ զհանդերձն իւր հազիւ զեր
ծաւ ՚ի ձեռաց կնոջն և փախեաւ։ Ապա եկն
գանձապետն ՚ի տուն. և կինն լալով յոտքն
անկաւ աղի ողորմ արտասուելով, թէ տես
սուտ որդին քո զինչ գործեաց ինձ. զի կա
մէր բռնութ(եամ)բ լըլկել զիս. և ես ձայն ար
ձակեալ, թէ հասէք ինձ. կոչեցի զծառայս
իմ. և նա եթող զվերարկուն և փախեաւ ՚ի
ձեռաց իմոց։ Իսկ գանձապետն բարկացեալ
ետ արկանել զյովսէփ ՚ի բանտ. իսկ յովսէփ
ո՛չ տրտմեցաւ ՚ի մտանելն ՚ի բանտն. լաւ
համարեցաւ ՚ի բանտին կենալ քան զտուն

գանձապետին մի՛ չարուէ կնոջն։ Նա և անցել
ժամանակս ինչ. փարաւոնի .Բ. ոգւոյ ներքի
նեացն բարկացեալ մինն տակառապետ և մինն
մատակարար, և եդ զնո՛ ի բանտի. և էր յովսէփ
սպասաւոր նոցա երկոցունց. և էին յաւուրս
ինչ ՚ի բանտին. և տեսին երազ երկոքին. և
մուտ յովսէփ ընդ առաւօտն և ետես զնո՛ զի
էին խռովեալք. եհարց զնոսա թէ ընդէ՞ր
խռովեալ էք. և նք ասեն թէ, երազ տեսաք
և ո՛չ ոք է որ մեկնէ մեզ. և ասէ յովսէփ ասա
ցէք ինձ զերազն ձեր. և ես պատմեցից ձեզ։
Ասէ տակառապետն որ է շերբեթճին. Թէ
ունէի ՚ի ձեռին իմոյ .Գ. կանանչ ուռ. և
ունէր .Գ. ողկոյզ խաղող. և բաժակն փարա
ւոնի ՚ի ձեռին իմոյ. առնէի ըզխաղողն և ճմ
լէի ՚ի բաժակն և տայի ըմպել փարաւոնի։
Ասէ ցնա յովսէփ. այս է մեկնութի նր .Գ.
ուռքն .Գ. աւուրքն են. և յիշեսցէ զքեզ
փարաւոն և կրկին իշխանութի շնորհեսցէ.
և տացես զբաժակն փարաւոնի. այլ զիս յի
շեսջիր յորժամ բարի լինիցի քեզ. և արաս
ցես ինձ ողորմութի։ Իբրև ետես մատակա
րարն որ է սեղանապետ՝ որ ուղիղ մեկնեաց
ասէ նա յովսէփու թէ. տեսանէի և ես ե
րազ որ .Գ. խան նաշեայ ունէի ՚ի գլուխ
իմ. և ՚ի վերինում սահանի միջէն յորմէ ուտէր
արքայ փարաւոն. և թռչունք ուտէին ՚ի սա
հանէ անտի որ էր ի վե՛ր գլխոյ իմոյ։

Պատասխանի ետ յովսէփ և ասէ ցնա. այս է մեկնութիւն նորա. երեք խաղողն ՝գ՝. աւուրք են. յետ ՝գ՝. աւուր բարձցէ զգլուխ քո և ուտեն թռչունք զմարմին քո։ Եւ եղև յաւուրն երրորդի որ օր ծննդոց էր փարաւոնի. և առնէր ուրախութիւն ամ ծառայից իւրոց. և յիշեաց զիշխանութիւն տակառապետին, և զիշխանութիւն մատակարարին. և կացոյց զտակառապետն կրկին յիշխանութե իւրում. և ետ զբաժակն ՝ի ձեռն փարաւօնի. և զմատակարարն կախեաց զփայտէ. որպ և մեկնեաց զերազն յովսէփ. այլ ոչ յիշեաց տակառապետն զյովսէփ այլ մոռացաւ զնա։ Եւ եղև յետ երկուց ամաց, ետես փարաւօն երազ. թուէր թէ կայր յեզր գետոյն ՝է՝. երինջ գեղեցիկ տեսլեամբ. և ՝է՝. այլ ևս ելին զազիրք և վատուժք կերին զէ. երինջսն. զարթեաւ փարաւօն. և կրկին ՝ի քուն եմուտ. և ետես երազ երկրորդ. զի ահա եօթն հասք ելանէին ՝ի միում փնջի ընտիրք և գեղեցիկք. և ահա եօթն այլ հասք խորշակահարք և փճունք ելին և կերին զընտիրսն և զգերսն. զարթեաւ փարաւօն. և կոչեաց զամ երազահանսն և զիմաստունսն և
ոչ ոքէր որ մեկնէր զերազն փարաւօնի։

Ապա խօսեցաւ տակառապետն վասն յովսէփու, թէ որպ զերբեանց տեսիլսն մեկնեաց. վասնորոյ հանեալ զյովսէփ ՝ի բանտէն. և

տարեալ առաջի փարաւոնի. և ասէ փարա
ւոն ցյովսէփ. երազ տեսի և ոչ ոք կարաց
մեկնել. բայց ես լուայ զքէն որ մեկնես ե
րազ. պատասխանի ետ յովսէփ թէ, առանց
այ ոչ լինիցի պատասխանի փրկութե. իսկ պատ
մեաց փարաւոն զերազն իւր դ.ը. անգամա
սին։ Եւ ասէ յովսէփ ցփարաւոն. ած կա
մեցաւ զոր ինչ առնելոց է յառաջագոյն ե
ցոյց քեզ. ․է․ երինջքն գեղեցիկ ․է․ տարի
է ․է․ հասկքն կրկին ․է․ տարի է. զի ․է․ երա
զին խորհուրդն մի է վա̄ ճշմարտութե. քան
զի ․է․ ամ առաւել լիութի և աժանութի
լինի. և յետ ․է․ տարւոյն խիստ սղութի լինի
և սով սաստիկ. արդ պա̄րտ է զի գտանիցես
իմաստուն մէկ զիր մի, որ 'ի լիութե ժամանա
կին ժողովէ զամ կերակուրս. և յետ անցման
առատութեն՝ երբ գայ սովն, նա կառավա
րէ որ ոչ մեռանին 'ի սովու։ Եւ ասէ փա
րաւոն ցծառայս իւր. միթէ գտանիցեմք
այր այսպիսի որ ունիցի զհոգի այ։ Եւ ապա
հանեալ զմատանին իւր, ետ յովսէփայ. թէ
դու լեր իվերայ տանն իմոյ հրամանատար.
և բերանոյ քում հնազանդին ամ ժողովուրդ
իմ. և զգեցոյց նմա բեհեզս և ծիրանիս. և է
արկ մանեակ ոսկի 'ի պարանոցի նորա. և կա
ցոյց զնա իվերայ երկրին եգիպտացւոց։
Եւ էր յովսէփ երեսուն տարու. և շինեաց
ամբարանոց և ժողովեաց ․է․ տարուան զլի

ութի ցորենոյ. մինչև եկն՝ սղութի. որ եղև սով ընդ ամ երկիր։ Եւ աղաղակեաց ամ ժողովուրդն առ փարաւոն վասն հացի. և փարաւոն ասաց՝ գնացէք առ յովսէփ. և զոր ինչ ասիցէ ձեզ արասջիք. և եբաց յովսէփ զամենայն շտեմարանս ցորենոյ. և վաճառէր ամենայն եգիպտացւոցն. և սաստկացաւ սովն ամ երկրին եգիպտացւոց։ Եւ լուեալ յակոբայ թէ ցորեան կայ 'ի մսըր. և ասաց որդւոցն թէ գնացէք գնեցէք մեզ ցորեան. և եկին որդիքն յակոբայ 'ի մսըր. և մտին առ յովսէփ և երկիրպագին նմա և ծանեաւ յովսէփ զեղբարսն իւր. և նոքա ոչ ծանեան զնա. և յիշեաց յովսէփ զերազն իւր զոր ետես։ Եւ ասէ եղբարցն թէ, դուք լրտես էք. և նք ասեն ոչ տր. այլ ծառայք քո եկեալ եմք գնել ցորեան. մեք ամենեքեան առն միոյ որդիք եմք. ժբ. եղբարք յերկրէն քանանացւոց. և կրսերն առ հօր մերում է և միւսն չէ 'ի միջի մերում։ Ասէ յովսէփ ճշմարիտ ասեմ որ դուք լրտես էք ոչ թողում զձեզ, մինչ եկեսցէ այն փոքր եղբայրն ձեր աստ՝ որ հաւատամ ձեզ. արդ առաքեցէք զմի ոք 'ի ձէնջ և բերէ զեղբայրն ձեր. և եդ զնոսա 'ի բանտի զաւուրս երեք. և ասէ յովսէփ յաւուրն երրորդի. թէ բերէք զեղբայրն ձեր՝ ապրիք. և ձեր մէկն աստ թողցուք. և դուք առէք զցորեանն և գնացէք

ւբերէք զփոքր եղբայրն ձեր. և հաւատա-
րիմ լիցին բանք ձեր. ապա թէ ոչ՝ մեռանիք:
Եւ ասէին ընդ միմեանս. թէ իրաւի՛ ՚ի
մեղքն մտաք եղբօրս մերում. յորում ահուր
աղաչէր զմեզ և մեք ոչ լուաք, վասնայնո-
րիկ եկն իվերայ մեր այս նեղութիւն:
Պատասխանի ետ ռուբէն մեծ եղբայրն և
ասէ ցնոսա՝ ո՞չ ասացի ձեզ թէ մի մեղան-
չէք մանկանդ. և ո՛չ լուայք ինձ. և ահա ա-
րեան նորա խնդրի. և նոքա գիտէին թէ ոչ լը-
սէր յովսէփ. և անցեալ յովսէփ մեկուսի
ելայր. և եկն միւսանգամ առ նոսա և խօսե-
ցաւ ընդ նոսա: Եւ էառ ՚ի նոցանէ ըզ շը-
մաւօն և կապեաց առաջի նոցա. և ետ հրա-
ման յովսէփ լնուլ զամանս նոցա ցորենով
և դնել զարծաթն իւրաքանչիւր ՚ի քրձի
իւրում: Եւ նոցա բարձեալ իւրաքանչիւր
իշոյ գնացին անտի. և յերեկոյին մի ոմն արձա-
կեալ զքուրձ իւր տալ կերակուր գրաստու
իւրում յիջևանին, ետես զծրար արծա-
թոյն իւրոյ, զի կայր ՚ի բերան քրձի իւրոյ.
ասէ ցեղբայր իւր, թէ գտայ զարծաթն իմ
՚ի քրձի իմում. և ամենեքեան տեսին ՚ի նոյն
և զարմացան: Եւ եկին առ յակօբ հայրն իւ-
րեանց. և պատմեցին նմա զամ ինչ. թէ խօ-
սեցաւ այրն տէր երկրին ընդ մեզ խստա-
գոյնս՝ և ետ զմեզ ՚ի բանտի թէ, լրտես էք
եկեալ երկրի մերում. և մեք երդմամբ ա-

սացաք. թէ, այր խաղաղութե̄ եմք ըէ՛ հայր
մեր անուանի յակոբ. և մեք երկոտասան որ-
դիք ընդ նմա. բայց զմինն չար գազան ե-
կեր. և մին ևս փոքր եղբայրն մեր ընդ հօր մե-
րում է. և նա պատասխանեալ առ մեզ եթէ
իրաւի այդ պէս է. նա ճշմարտոն եղբայր մեր
է առ 'ի պահեստի. թէ երբ գայցէք միւսան-
գամ, բե՛րէ՛ք ընդ ձեզ զփոքր եղբայրն ձեր,
որ իմանամ թէ իրաւի է բանն ձեր։
Եւ երբև լուաւ յակոբ, ելաց ասելով թէ
զիս անորդի թողէք. զյովսէփ գազանակեր
արարէք. և շմարտոն չէ 'ի մէջի. զբենիամին
ևս կամիք առնուլ յինէն ո՞վ որ յինձ վե-
րայ եկն այս ա̄մ։ Եւ սովն որ աճուր սաստ-
կանայր իվ̄ր երկրին. և եղև երբև հատուցին
զբերեալ ցորեանն իւրեանց յեգիպտոսէ,
ասէ հայրն իւրեանց. երթա՛յք գնեցէ՛ք սա-
կաւ մի ցորեան։ Խօսեցաւ ընդ նմա յուդա
և ասէ վկայութեամբ թող ետ զմեզ իշխանն
այն, թէ ո՛չ բերէք ընդ ձեզ զփոքր եղբայրն
ձեր, մի՛ տեսանիցէ՛ք զերեսս իմ. արդ եթէ
գայ բենիամին ընդ մեզ՝ գնասցուք յեգիպ-
տոս. ապա թէ ո՛չ՝ չեմ՝ կարեր յերեսս նո̄
ելանել։ Եւ ասէ յակոբ՝ այս ի՞նչ չարիս
հասուցէք իվերայ իմ, որ ասացէք նմա թէ
կայ ևս փոքր եղբայր մի մեր. և նոքա ասեն.
հարցանելով եհարց մեզ. թէ տակաւին կեն-
դանի՞ է հայրն ձեր և կա՞յ ևս եղբայր ձեր.

մի թէ գիտէաք զայս բանս մեզ առնել. թէ
բերէք զեղբայրըն հետ ձեր: Դարձեալ ա
սէ յուդա հօր իւրում. թէ ինձ տուր զդա.
ես լինիմ երաշխաւոր դորա. և եթէ ոչ բե
րից զդա, քեզ յանցաւոր եղէց զամենայն ա
ւուրս: Ասէ հայրն եթէ այդպէս իցէ, ա
ռէք ՚ի պտղոյ երկրիս. ռետին. մեղր. և
խունկ. և տաշխն. և բեւեկ. և ընկուզ. տա
րէք պատարագս որ է փէշքէշ. և զարծաթն
որ դարձաւ յամանս ձեր՝ տարէք ընդ ձեզ.
չիլինի թէ փորձէ զձեզ. և օրհնեաց յակօբ
զորդիս իւր և ասէ ած իմ տացէ ձեզ զշը
նորհս առաջի իշխանին այնմիկ: Ապա համբու
րեցին զհայրն իւրեանց և իջին յեգիպտոս.
և գնացին առաջի յովսէփայ: Իբրև ետես
զնոսա յովսէփ, և զբենիամին եղբայր իւր
հետ նոցա, ասէ ցհազարապետն իւր, տար
զարսդ ՚ի տուն. և արա խորտիկս. և պատրաստ
եա կերակուրս զի ընդ իս ուտելոց են արք
այդոքիկ: Ապա արար պատրաստութիւն հա
զարապետն. և տարաւ զեղբարսն ՚ի տունն
յովսէփու. և ասեն հազարապետին թէ՝ յա
ռում աւուր իջաք յիջեւանս մեր, տեսաք ՚ի
քրձի մերում զարծաթն ամենեցուն. և ա
հա բերաք զինի մեր. և այլ արծաթ բերաք
զի գնեսցուք ցորեան. բայց ոչ գիտեմք թէ
ով եդ զարծաթն ՚ի քուրձս մեր: Ասէ ցնո
խաղաղութիւն է ընդ ձեզ՝ մի վախէք. ածն

ձեր եդ զարծաթն ձեր ՚ի յամանս ձեր. բայց
ես առի զարծաթն իմ. եւ եհան զՇմաւոն զեղ-
բայրն. եւ բերին ջուր լուանալ զոտս նց. եւ
ետուր կերակուր գրաստուց նոցա. եւ նոքա
պատրաստեցին զընծայսն մինչեւ եկեալէր
յովսէփ ՚ի կէս աւուրն. քանզի իմացան որ
պիտի ընդ իւրեանց ՚ի սեղան նստի ։
Ապա եկն յովսէփ ՚ի տուն, եւ բերին զըն-
ծայսն եւ մատուցին նմա ՚ի վերայ երեսաց իւ-
րեանց։ Եհարց զնոսա յովսէփ, զիա՞րդ կայք.
եւ տակաւ՞ին կենդանի իցէ հայրն ձեր ծե-
րունի. եւ նոքա ասեն ողջ է հայր մեր ծա-
ռայ քո։ Եւ ասէ օրհնեալ է այրն այն յԱյ.
եւ խոնարհեցան եւ երկիրպագին նմա. եւ ետես
զբենիամին զեղբայր իւր, զի ինքն եւ նա ՚ի
մէկ մօրէ եղեալ էին. եւ ասէ ա՞յդ է փոքր եղ-
բայրն ձեր զոր բերիք առ իս. եւ նոքա ասեն
այո. եւ ասէ յովսէփ՝ Ած ողորմեսցի քեզ որ-
դեակ. եւ խռովեցաւ յովսէփ, եւ գալարէին
աղիք նորա ՚ի վերայ եղբօրն. եւ խնդրէր լալ.
եւ մտեալ ՚ի սենեակն անդ ելաց եւ լուացեալ
զերեսս իւր ելաւ ՚ի դուրս. եւ ասէ արկէ՛ք
հաց եւ նստոյց զիւրաքանչիւր սրայով եւ ետ
ամենեցունց հաց. եւ յաւելաւ բենիամենի
հացն հընգպատիկ. եւ կերին եւ արբին ընդ
նմա ։ Եւ հրամայեաց յովսէփ հազարապե-
տին լնուլ ցորեան յամանս իւրեանց եւ դիք
ասէ զարծաթն իւրաքանչիւր ՚ի բերան ա-

մանոյ իւրոյ. և զսկիհն իմ արծաթի դիջիք
յամանի կրտսերոյն. և զգինս ցորենոյ նր. և
արարին այնպէս: Իսկ իբրև առաւօտ եղև,
արձակեցան և ելին 'ի ճանապարհ. և իբրև
ելին 'ի քաղաքէն՝ ասէ յովսէփ ցհազարա
պետն, պնդեաց զհետ նոցա և ասասցես ցնո
սա. զի՞ է զի փոխանակ բարեաց չար հատու
ցէք. ընդէ՞ր գողացայք զսկիհն արծաթի. և
նոքա ասեն. քա՛ւ և մի լիցի այդ բան ծառայ
ից. յորում ամանի ելցէ՝ մեռցի նա. և փու
թացան իջուցին զբեռինսն. և սկսաւ մի մի
որոնել 'ի մեծէն մինչև ցկրսերն. և գտին
'ի բենիամենի բեռին մէջն զարծաթէ թասն.
և պատառեցին զհանդերձան իւրեանց. և
դարձան ամենեքեան 'ի քաղաքն. և եմուտ
յուդա և եղբարքն իւր առ յովսէփ. և ան
կան առաջի նր ի վր երկիր: Իսկ ասէ ցնոսա
յովսէփ՝ զի՞նչ գործեցէք: Ասէ յուդա զի՞նչ
պատասխանեմք տեառն. ահա ամենեքեանքս
կամք առաջի քոյ. զի՞նչ հաճոյ է հրամանացդ
զայն արա. և նա ասէ դուք չէք պարտա
ւորք. միայն յորում ամանի ել սկիհն իմ, նա
դողէ. և դուք գնացէք խաղաղութբ առ
հայրն ձեր: Մատուցեալ առ նա յուդա ա
սէ, աղաչեմ տէր իմ խօսեսցի ծառայ քո
բան մի. զի դու ես յետ փարաւոնի տէր:
Դու հարցիր ցծառայս քո յառաջին գա
լուստն մեր. թէ կա՞յ ձեր հայր կամ եղ

բայր. եւ մեք պատասխանեալ տակաւին կեն-
դանի է հայր մեր. եւ կրտսեր որդին ընդ նը-
մա. եւ եղբայր նորա մեռաւ. եւ նա միայն մնաց
մօր իւրոյ. եւ հայր մեր յոյժ սիրէ զնա. եւ
դու հրամայեցեր, թէ բերէք զնա առ իս. եւ
մեք ասացաք ոչ կարէ գալ մանուկն թողուլ
զհայր իւր. ապա թէ թողուցու զհայր մեր,
մեռանի. եւ դու ասացեր ցծառայս քո, ե-
թէ ոչ գայ եղբայրն հետ ձեր, մի տեսանի-
ցէք զերեսս իմ. եւ իբրեւ ելաք գնացաք առ
հայրն մեր՝ եւ պատմեցաք զբանս տեառն մե-
րոյ, եւ իբրեւ հատաւ ցորեանն մեր, ասէ
հայրն մեր. երթայք դարձեալ եւ գնեցէք սա-
կաւ մի կերակուր. եւ մեք ասացաք ոչ կարեմք
գնալ անդր եթէ ոչ կրտսեր եղբայրն մեր
ընդ մեզ գայ: Նա ասաց հայրն մեր. թէ
կինն իմ երկուս ծնաւ որդիս. զմինն ասա-
ցիք թէ չար գազան եկեր. եւ եթէ զսա եւս
առնուցուք յինէն, եւ պատահեսցի սմա հի-
ւանդութի ի ճանապարհին, զծերութիւ
իմ տրտմութեամբ իջուցանէք ի դժոխս:
Նա արդ՝ եթէ գնամք առ հայր մեր, եւ ոչ
լինիցի մանուկն ընդ մեզ, նա մեռանի հայրն
մեր. զի ծառայ քո եղեալեմ երաշխաւոր
որ է քէֆիլ. ասելով թէ, եթէ ոչ բերեմ
զբենիամին առ քեզ, յանցաւոր եղէց զամ
աւուրս իմ: Նա արդ ես եմ փոխանակ ման-
կանդ ես կայցից առ քեզ միայն. մանուկդ եր

Թողցէ առ հայր իւր. զի մի մեռանիցի հայր
մեր. եւ ել յովսէփ արտաքս զի ոչ կարաց համ
բերել. եւ ձայն բարձեալ լալով եւ ծանօթ
եղբարցն իւրոց. Թէ ես եմ յովսէփ եղբայրն
ձեր զոր դուք վաճառեցիք։ Նա՛ եղբարքն
զարհուրեալ, ոչ կարէին տալ պատասխանի
նմա. զի խռովեցան 'ի յահէ անտի։
Նա՛ ասէ յովսէփ ցեղբարսն՝ մօտ եկայք առ
իս եւ մի վախենայք. Թէպէտ վաճառեցիք
զիս յեգիպտոս, սակայն աստուծոյ կամքն այն
էր որ այսպէս լինէր յաղագս փրկութեան
ձերոյ։ Նա՛ անկեալ ի վերայ պարանոցի բենիա
մենի եղբօրն իւրոյ, լալով համբուրեաց զնա
եւ զամենայն եղբարսն իւր. եւ հնչեաց համ
բաւն 'ի տունն փարաւօնի. եւ ասեն եկին
եղբարքն յովսէփայ. եւ ուրախ եղև փարաւօն
եւ ա̄մ ծառայք նորա։ Նա՛ յովսէփ ասէ ցեղ
բարսն. դուք եւս երկու տարի է սովն որ է
ղե. զի այլ եւս հինգ տարի սղութի̄ կայ. գը
նացէք առ հայրն իմ եւ ասացէք ցնա. այս
պէս ասէ որդին քո յովսէփ. արար ա̄ծ զիս
տէր ա̄մ երկրիս եգիպտացւոց. արդ՝ աղա
չեմ զքեզ ե՛կ է՛ջ առ իս. եւ մի հեղգար. եւ բը
նակեսցիս յերկրի ես եւ դու եւ որդիք քո.
ոչխարք եւ արջառք քո. եւ կերակրեցից զքեզ
անդ։ Նա՛ առեալ կառս եւ երիվարս փարա
ւօնի. եւ նոքա ելեալ գնացին առ հայրն իւ
րեանց աւետիս տալով նմա, Թէ յովսէփ որ

դին քո կենդանի է. և նա է իշխան երկրին
եգիպտացւոց. և զարմացաւ յակոբ զի ոչ հա
ւատայր բանից նոցա. և խօսեցան ընդ նա
զա̅մ զոր ինչ ասաց յովսէփ. իբրև ետես ըզ
սայլսն և զկառսն զոր առաքեաց յովսէփ առ
նուլ զնա, ասէ յակոբ մեծ է ինձ եթէ այր
դարև տակաւին կենդանի իցէ որդին իմ
յովսէփ. երթայց և տեսից զնա մինչչև մե
ռեալ իցեմ. և պատարագ մատոյց աստուծոյ
վ̅ն հօրն իւրոյ իսահակայ: Եւ երևեցաւ
ա̅ծ յակոբայ ի տեսլեան գիշերոյ և ասէ. յա
կոբ մի երկնչիր իջանել յեգիպտոս. ես իջից
ընդ քեզ. և ես հանից զքեզ խաղաղ. և ե
լին ա̅մ ընտանեօք և որդւովք իւրեանց. հե̅.
հոգի մտան յեգիպտոս: Եւ կազմեաց յով
սէփ զկառս. ել ընդ առաջ հօրն յակոբայ
և մեծապէս փառաւորեաց զնա. և յակոբ
գիրկս ածեալ փափագանօք համբուրեաց
զյովսէփ. որով ա̅ծային շնորհիւն խաւա
րեալ աչքն բացան և ետես զյովսէփ քան
զի խաւարեալ էր աչքն ի բազում լալոյն:
Եւ փառաւոր առնէր զա̅ծ և գոհանայր զնը
մանէ թէ յետ տրտմութե̅ս այսքան ուրախա
ցոյց զիս. և երազն յովսէփու ասա կատարե
ցաւ. զոր և յետ փարաւօնի նա եղև թագա
ւոր եգիպտացւոց և անդ վախճանեցաւ յով
սէփ: Յետ որոյ եկն այլ թագաւոր որ ոչ ճա
նաչէր զազգն յակոբայ զոր դերեցուցին ա

մօք բազմօք: Այս է ինքն բարերարն Ա՜ծ․ եր-
րէ զլուլսեփ ողջախոհ առնելով զձեզ, կե
ցուցանէ յանմարմին փարաւոնէ․ եւ տիրել տա
ցէ արդարութ՜ զվերին Թագաւորութ՜ին ամէն:

✠ Վասն գերութեան որդւոյն իսրայէլի:

Գլուխ: ժԳ:

ԵՒ ՅԵՏ ՅՈՎՍԷՓԱՅ ՓՐԿՉՈՅ

մացան ազգն իսրայէլի․ եւ յարեաւ այլ Թագաւոր՝ որ ոչ ճանաչէր զիս րայէլ. եւ ոչ ընդունէր զնոսա․ մինչեւ ․կ․ տա րի. եւ փոխեցաւ եւ եղեւ այլ չարագոյն քան զառաջինն. եւ տեսեալ թէ իսրայէլացիք օր ըստ օրէ բազմանային, 'ի միտս եկեալ Թագաւորին, ասէ․ լինի թէ պատերազմ պատահի մեզ․ եւ սոքա ապստամբեալ ընդ Թշնամեայն լինիցին եւ զմեզ յաղթահարեն:

Ամօրայ խորհուրդ արարեալ ընդ իշխանսն, թէ յոյժ բազմացան ազգն իսրայէլի․ զսոսա 'ի գործ արկցուք ասէ եւ շինեսցուք զքաղաքս․ եւ այսն շինել մ՜ քաղաք․ մեծ ան նեղութեամբ տառապեցուցանէին զնոսա, ա՜ զիւսօք՝ քարամբ եւ քերիճով անհանդիստ աշխատեցուցանէին․ իբր թէ ոչ բազմասցին․ այլ աստուծած աճեցուցանէր զնոսա առաւելագոյն: Յետ այնորիկ չարն սատանայ այլ իմն խորհուրդ էարկ 'ի միտս փարաւոնի, կոչեաց զդայեակս զիսրայէլացւոց․ եւ պատուէր ետ թէ․ յորժամ գնայք 'ի ծնունդս կա

նանց՝ նա որ արու լինի, խեղդեցէք. և թէ էգ, ապրեցուցէք գաղտնի ՚ի ծնողացն։ Իսկ մանկաբարձքն երկեան յԱյ և ոչ արարին այնպէս. և յետ աւուրց կոչեաց փարաւոն զդայեակսն թէ, ո՞չ ապաքէն պատուիրեցի ձեզ թէ, մի՛ ապրեցուցանէք զարու մանուկն այլ խեղդեցէք. ընդէ՞ր ոչ արարէք։ Նո՛քա ասեն, ոչ են իբրև զազգն եգիպտացւոց այլ մինչդեռ կանգնին ի վերայ մեր վտորոյ ո՛չ կարեմք փրկանել զմանկունսն նոցա։ Նա՛ բարկացեալ թագաւորն հրամայեաց յայտնի խլել զմանկունսն և խեղդել ՚ի գետն մինչև ի դ̃. ամսի այնպէս խեղդեցին զմանկունսն։ Մայր ծնաւ մովսէս և տեսին սիրուն և կայտառ մանուկ, և ծնողքն պահեցին մինչև գ̃. ամիս. իբրև տեսին ծնողքն նորա որ այլ ոչ կարեն պահել, եդին ՚ի մէջ սնտուկի մի. և սեաւ ձիթով կպրեցին և ձգեցին ՚ի գետն։ Իսկ քոյրն փարաւոնի ելեալ էր ՚ի զբօսնուլ ՚ի գետն հայէր՝ որ փոքր իրք մի խաղ տայր. և հրամայեաց ծառայից հանել թէ ինչ իցէ նա. և բերեալ տեսին սնտուկն մի զոր բացեալ հայեցան որ կայտառ մանուկ մի կայ գեղեցիկ. իմացան որ յեբրայեցւոց մանկանցն էր. և ուրախացեալ քոյր փարաւոնի առէ առնեմ զնա և որդեգիր առնեմ. որովհետև զաւակ ոչ ունիմ։ Կոչեաց զքոյրն մովսէսի և ասաց. տես թէ ով կայ ծծմայր ՚ի մէջէ

ձեր որ ղայս տղայս սնուցանել. զինչ և իցէ
զվարձուր վարձքն տամ։ Նա կոչեալ ըզ
մայրն, ետ պահել զտղայն. և տարեալ սնոյց
զմանուկն իւր մինչև .գ. տարի. և կտրեալ
՚ի ծըծելն տարեալ ետ քեռ փարաւոնի. և
նա որդեգիր արար զնա. և յոյժ սիրէր զմա
նուկն։ Նա ՚ի խմբում ածուր պատմեաց քոյր
փարաւոնի եղբօրն թէ՝ որդի մի ունիմ յոյժ
գեղեցիկ. իսկ փարաւոն ասաց թէ բե՛ր տե
սանեմ՝ իբրև բերին զմովսէս, տեսեալ սի
րեաց զնա. և առեալ ՚ի գիրկն իւր և համ
բուրեաց զնա. և մովսէս զձեռն ձգեաց ՚ի
մորուսն փարաւոնի. և բարկացեալ փարա

ւոն կամէր սպանանել զմանուկն։

Իսկ իշխանքն բարեխօս եղեն ասելով թէ՝
անգիտութե արար. և ասէ թագաւորն ո՛չ
այլ կամի զթագաւորութի՛ն իմ յափշտակել
թէպէտ մանուկ է. և ասեն իշխանք՝ փորձեա
ցուք զդա բանիւ ինչ։ Սանորոյ բերեալ
երկու թէփսի. մինն ոսկւով և մինն կրակով,
եդ առաջի մովսէսի. եթէ զկրակն առցէ,
ո՛չ գոյ նենգութիւն ՚ի նմա. և թէ զոսկին
առցէ, ճշմարիտ թագաւորութեանս ցան
կայ։ Իսկ մովսէս իսկոյն ձգեալ զձեռն ՚ի կը
րակն, այրեաց զմատունս. և շուտով տարեալ
՚ի բերանն զլեզուն ևս լաբեաց մովսէս. վս
որոյ ողորմեալ փարաւոնի ո՛չ սպան։ Նա իբ
րև զարգացաւ մովսէս, հանապազ շրջէր

ընդ ազգն իսրայէլի եւ սիրէր զնա. եւ յաւուր միում տեսանէր զեգիպտացի մի որ հարկանէր զիսրայէլացին. նա վրէժ խնդիր եղեւ մովսէս. եւ եհար զեգիպտացին եւ ըսպան եւ թաղեաց ՚ի մէջ աւազին եւ գնաց. եւ յետ աւուրց ինչ ետես զիսրայէլացին այն՝ որ կռուէր ընդ այլ ընկերի իւրում. իսկ մովսէս ասաց՝ ընդէ՞ր հարկանէք զմիմեանս. իսկ մինն ասէ. ո՞վ կացոյց զքեզ իշխան եւ դատաւոր իվ̄ մեր. մի թէ կամիս ըսպանանել, ո̄պ յերէկ ըսպանեցեր զեգիպտացին: Իբրեւ ետես մովսէս որ յայտնի եղեւ, փախեաւ յեգիպտոսէ. եւ գնացեալ ՚ի մաթիանացւոց երկիրն. եւ հանգիպեալ ՚ի ջրհոր մի, զի հովիւքն ջուր հանէին ջրել զոչխարսն. եւ եկեալ աղջկունք կամէին ջուր հանել վ̄ն անասնոց իւրեանց. եւ հովիւքն ո՛չ տային ջուր: Իսկ մովսէս կորզեաց զհովիւսն եւ ետ ըմպել անասնոց աղջկանցն. եւ նոքա գնացեալ պատմեցին հօրն թէ, այր մի օտարական ջուր հանեալ ոչխարաց մերոց. եւ նա ասէ նմ̄՝ գնացէք բերէք զայրն այն. զի հաց կերիցէ. եւ մեծարեցին զմովսէս եւ ետեղան դրին. եկեր եւ լիացաւ ՚ի կերակրոյն եւ եհարց զնա ոթորն թէ ո՞վ ունիս: Ասէ զով ոք չունիմ, ո՛չ ազգ եւ ո՛չ ընտանիք. ասէ ոթոր. երբ չունիս զոք առ յերկու դըստերացս զմինն զորն եւ կամիս. եւ քեզ հայր եւ դու ինձ որդի, ունիմ բազում գանձ եւ ոչ

խար. և հաճանեցաւ մովսէս և էառ զմեծ
դուստրն. և ծնաւ ·բ· որդիս: Եւ յաւուր
միում մինչ արածէր զոչխարս ՚ի լերինն, յան
կարծակի հուր վառեցաւ ՚ի մէջ մորենւոյն,
վառէր և բոցն ելանէր յերկինս և ոչ այ
րէր մորենին. իբրև կամեցաւ մերձենալ
և տեսանել թէ զի՞նչ իցէ այն. ձայն եղև
՚ի հրոյն և ասէր. մովսէ՛ս մովսէ՛ս հան զկօ
շիկդ ՚ի յոտանէդ. զի տեղիդ յորում դու
կաս, սուրբ է: Եւ ասէ մովսէս. ո՞վ ես դու տ̅ր:
Եւ ասէ. Ես եմ ա̅ծ հարց քոց. ա̅ծ Աբրահամու,
և ա̅ծ Իսահակայ. և ա̅ծ Յակոբայ, այցե
լով այց արարի ժողովրդեան իմոյ. կամիմ
փրկել զիսրայէլ ՚ի ձեռաց փարաւոնի. և
դու գնասցես առաջի փարաւոնի և ասի
ցես. թէ այսպէս ասէ ա̅ծ հարցն մերոց.
տեսանելով տեսի զչարչարանս ժողովրդեան
իմոյ. և լուայ աղաղակի նոցա ՚ի գործավա
րացն իւրեանց, զի գիտեմ զվիշտս ն̅ց և իջի
փրկել զն̅ս. զի նեղեն զնոսա եգիպտացիքն:
Եւ ասէ մովսէս ցտ̅ր, ո՞վ եմ ես զի երթայ
ցեմ առ փարաւոն արքայն եգիպտացւոց
և հանիցեմ զորդիսն ի̅ղի. և ասէ տէր ես ե
ղէց ընդ քեզ. և այս եղիցի քեզ նշան. թէ
ես առաքեցի զքեզ հանել զժողովուրդ
իմ յեգիպտոսէ. և պաշտեսջիք զա̅ծ ՚ի լե
րինս յայսմիկ: Եւ ասէ մովսէս ցա̅ծ. ահա
ես երթամ առ որդիսն ի̅ղի և ասիցեմ ցն̅ս.

ած հարցն ձերոց առաքեաց զիս առ ձեզ.
և հարցանիցեն զիս թէ զի՞նչ է անուն նր.
զի՞նչ ասացից նց: Ասէ ած ցմովսէս.
ես եմ որ էն, և այսպէս ասա ցորդիսն իս
րայէլի՝ որ էնն առաքեաց զիս:
Պատասխանի ետ մովսէս և ասէ. եթէ ո՛չ
հաւատայցեն ինձ թէ չէ երևեալ քեզ ած
զի՞նչ ասացից նց: Ասէ ցնա տէր՝ զի՞նչ է
այդ որ ՚ի ձեռին քում է. և նա ասէ՝ գաւա
զան. և ասէ ընկեա՛ զնա ՚ի գետին. և ընկեաց
զնա ՚ի գետինն. և եղև վիշապ օձ. և փախեաւ
՚ի նմանէ մովսէս: Ասէ ած ցմովսէս. ձգեա՛
զձեռն և բուռն հար զպոչանէն. և նա՛ ձը
գեաց զձեռն իւր. և բուռն եհար զպոչա
նէն. և եղև գաւազան ՚ի ձեռին նր: Դար
ձեալ ասէ ցնա տր, ա՛րկ զձեռն քո ՚ի ծոց քո.
և էարկ զձեռն իւր ՚ի ծոց իւր. և եհան զնա
՚ի ծոցոյ իւրմէ. և եղև ձեռն նր բորոտ իբ
րև զձիւն. և ասէ տէր ա՛րկ զձեռն քո դար
ձեալ ՚ի ծոց քո. և էարկ զձեռն իւր ՚ի ծոց
իւր. և եհան զնա ՚ի ծոցոյ իւրմէ և դարձեալ
անդրէն ՚ի նոյն հաստատեցաւ ՚ի գոյն մարմ
նոյ իւրոյ: Ասէ դարձեալ զի՞նչ տեսանես
առաջի քո՝ ասէ մովսէս՝ տեսանեմ ջուր:
Ասէ տր առ ափով մի ջուր. և էառ զջուրն
և եղև արիւն. ասէ ած. ա՛րկ զջուրն ՚ի տե
ղի իւր. և էարկ՝ և եղև կրկին ջուր: Ապա ա
սէ տր զայս երեք նշանս արա՛ առաջի փարա

հօնի. և եթէ ոչ լուիցէ քեզ. ապա պատուհասով խրատեմ զնա: Եւ գնաց Մովսէս ՚ի մէջ ժողովրդեանն իսրայէլի. և աւետեաց զփրկութիւն նոցա. և զլուրեալն ՚ի նմանէ պատմեաց նոցա զամենայն. Սակայն զահարօն առեալ ընդ իւր, գնաց առ փարաւօն և խօսեցան առաջի նորա թէ Աստուծոյն մերոյ կամիմք զոհ մատուցանել. Թոյլ տուր որ գնամք յ·գ·. աւուր ճանապարհ. անդ պաշտեսցուք զԱստուածն մեր:

Իսկ փարաւօն ասաց. ո՛չ ճանաչեմ զԱստուածն ձեր. և ո՛չ ազատեմ զիսրայէլ: Եւ ասաց Մովսէս եթէ ոչ ազատես, բազում վնաս պատուհասի տեսանես. և ապա արձակես: Իբրև ելին Մովսէս և ահարօն յառաջի փարաւօնէ, սկիզբն արար Աստուած պատուհասով խրատել զփարաւօն և զեգիպտոս: Առաջին պատուհասն այն էր որ շանաճանճ ետ նոցա. որ ո՛չ կարէին բանալ զաչս և զբերանս և զերեսս իւրեանց զի խոցոտէին և ուռուչէին:

Երկրորդ պատուհասն այն էր որ գորտիւ ապականեաց զբնակութիւնս նոցա. Երրորդ պատուհասն այն էր որ ետ ժանկոյ զվաստակս նոցա: Չորրորդ պատուհասն այն էր որ ետ խառնիճ և մարախ: Հինգերորդ պատուհասն այն էր որ մուկն եռաց յերկրի նոցա: Վեցերորդ պատուհասն այն էր որ եհար ջրով և կարկտով զայգիս և զթզենիս նոցա: Եօթներորդ պատուհասն այն էր որ եղեամբ չորա

ցոյց զնմանեալ տունկս նց։ Ութներորդ պա
տուհասն այն էր՝ որ դարձոյց զանձրևս նոցա
յարիւն զոր ոչ կարէին ըմպել ջուր. քան զի
գետք և աղբիւրք յարիւն կարբեցան. իսկ իս
րայէլացիքն ըմպէին ջուր երնց. և եգիպտա
ցւոց արիւն լինէր։ Ի այս պատուհասս կը
րեաց փարաւոն և ամ͠ ժողովուրդքն իւր. և ոչ
դարձան ՚ի չարեացն։ Դարձեալ երևեցաւ
Տ͠ր մովսէսի և ասաց. երթ խրատեա զժողո
վուրդդ. զի յայս շաբաթս բաղարջ կերի
ցեն. և հաց խմորած մի՛ ուտիցեն. և գառնա
զենս արասցեն. և զարիւն գառանցն քար
շեսցեն խաչանման ՚ի չորս կողմն սեմանց դը
րանց իւրեանց. զի յայսմ գիշերի առաքեմ
զսատակիչ հրեշտակն. և հարկանէ զեգիպ
տոս. զի յոր դրանց վր͠ա նշան տեսանէ՝ անդ
ոչ մտանէ. բայց այն որ ոչ ունի, անողորմ
սատակէ զանդրանիկս նց։ Նոյնպէս ա
րար ամ͠՝ որ սատակեցան եգիպտացւոց ՚ի մի
ում գիշերի ամ͠ անդրանիկքն ՚ի մարդոց
մինչև յանասունս. որքան անդրանիկ կային
ամէն սատակեցան ոչ արու մնաց և ոչ էգ։
Դարձեալ երևեցաւ Տէր մովսէսի և ասէ
գնա առ փարաւոն արձակել զժողովուրդ
իմ. երեք օր ա͠ծ կատարեն ինձ. և զատիկ
արասցեն. և դարձեալ եկեսցեն և ծառայ
եսցեն քեզ. ապա թէ ոչ արձակեսցես զժո
ղովուրդ իմ այլ ևս մեծ պատուհասի հան

դեպիս։ Իսկ ահ մեծ անկեալ ի վր̃ փարաւօ
նի և եգիպտացւոցն. բայց ոչ կամէր փարա
ւօն արձակել զԻսրայէլ. Իսկ նախարարքն և
մեծամեծքն՝ բազում աղաչանօք խնդրեցին
յարքայէն արձակել զժողովուրդն մինչև
գ̃. օր. քանզի ոչ պատեալէր զնոսա. և յայն
ժամ արձակեաց զԻսրայէլ համարով և գը
րով ՚ի ձեռն մովսէսի. և ասաց մինչև .գ̃. օր
երթուքեզ զԻսրայէլ. բայց յետ գ̃. աւուրցն
համարով պարտիս բերել ինձ. զ̃ ճ̃ ռ̃ հ̃ ե̃.
հոգի. և գնաց մովսէս և ասաց ժողովըր
դեանն թէ, այլ ոչ տեսանէք զեգիպտոս.
և ոչ զազգն նց̃. ամ̃էն յիւրաքանչիւր դրա
ցեացն առէք զարդս ոսկեղէնս և արծաթե
ղէնս. և ասացէք նց̃ թէ, յետ երեք աւուրց
դարձեալ տացուք զձեր ինչս։ Իսկ առեալ
մովսէս զժողովուրդն ամ̃, եւ ՚ի քաղաքէն
և գնացին ՚ի յեզր կարմիր ծովուն. անդ
օրհնէին զա̃ծ և գովէին և ուրախանային.
և մովսէս քարոզէր ՚ի մէջ նոցա և ասէր. այլ
ոչ տեսանէք զեգիպտոս, և ոչ ծառայէք
փարաւօնի։ Այլ մի ոմն ծածուկ լրտես եկեալ
էր ընդ նոսա. զի գիտասցէ թէ զինչ կա
մին առնել մովսէս և ժողովուրդ նց̃։
Իբրև լուաւ զայս խօսք ՚ի բերանոյն մով
սէսի թէ, ոչ ծառայէք փարաւօնի. և գնա
ցեալ պատմեաց փարաւօնի. իսկ փարաւօն
բարկացաւ և հրամայեաց ժողովել զա̃մ

զօրսն և գնացին իմէջ ազգին իսրայէլի. իբրև
մօտ հասին զօրքն հրամայեաց մովսէս ած
ժողովրդեանն զա՟մ աղաչել. քանզի առա
ջևն ծով. և յետուստ սուրն ժամանեաց:
Մովսէս զգլուխն խոնարհեցուցեալ ՚ի ծըն
կան մէջն, պաղատէր առ ած. որ և ած ձայ
նեաց ասելով. զի՞ գոչես առ իս մովսէս զի՞նչ
է ՚ի ձեռինքդ. և նա ասէ գաւազան. հա՛ր
զնա ՚ի ծովն. և նա հարեալ ՚ի ծովն, պատառե
ցաւ և եղև ցամաք. և առեալ էր զմարմինն
յովսէփայ ՚ի հետն. և ՚ի մտանելն ընդ ծովն,
աղաղակեաց ասելով. պահեա՛ շարահի՛մ և ա
Թոնի՛մ ա՟ր՝ օգնեա՛ և ապրեցո և փրկեա՛ զմեզ:
Նա՛ առ ժամայն բացաւ ճանապարհ. և մտին
ընդ ծովն. և իբրև զցամաք անցին զկէս ծո
վուն. և հետ եղեն զօրքն փարաւօնի. և մտին
նք ՚ի ծովն. և յորժամ ելին իսրայէլացիքն ՚ի
ցամաք ՚ի միւս կողմն, նա փարաւօնի զօրքն
համանգամայն մտին ՚ի մէջ ծովուն, որո՛չ մը
նաց մէկ մի ՚ի ցամաքի: Նա՛ կրկին է հար մով
սէս զգաւազանն. և առ ժամայն ջուր ծո
վուն ծածկեաց զնո՟ս. ընկղմեցան փարաւօն
և ա՟մ զօրքն նր. և մի ՚ի նոցանէ ոչ ապրեցաւ.
և ելին իսրայէլացիքն անվնաս. և բնակեցան
՚ի ծովեզերին. և ալիք ծովուն հանեալ ե
գիպտացւոց զա՟մ զգետոան և զէնսն. և նք ժո
ղովեալ առին ընդ ինքեանս զզէնս նոցա.
և անտի ելեալ գնացին ՚ի հաղէմ. և անդ էր.

հէ. ծառք արմատենիք: Այս վէմն աւազ
նորդէր նոցա. և հրամանաւն ա̃յ երկոտա
սան վտակ բղխէր ՛ինմանէ յորմէ երկոտա
սան ազգն իսրայէլի ըմպէին. և մանանայիւ
կերակրէր զնոսա. զի զոր ինչ մարդոյ սիրտն
որ ուզէր՝ այն համովն ճաշակէր. թէ հաց
թէ գինի. թէ մեղր, թէ կաթ. և թէ այլ
՛ի մրգաց: Այս իջոյց յերկնից առ նա թռ
չունս թևաւորս և լորամարգի որ է պլտըր
ճին, իբրև զաւազ ծովու: Այսպէս խնամով
պահեաց զնոսա ՛ի քառասուն տարի. զի ոչ
մաշէին և ոչ պատառէին. մինչ ուտէին և
ըմպէին. զի յորժամ լուսինն նորէր, նց̃ հան
դերձն ևս նոր լինէր իբրև զառաջինն. և
զի ոչ յամառն ՛ի տօթոյ նեղէին. և ոչ ՛ի ձը
մեռն ՛ի ցրտոյն. ցորէկն ամպն հովանի լի
նէր նց̃. և ՛ի գիշերին սիւնն լուսոյ:
Այս մովսէս հանապազ խօսէր ընդ ա̃յ. և խնդ
րէր զա̃մ ինչ որ պէտք էր նց̃. բայց իսրայէ
լացւոց ազգն ժանդ և ժպիրհք և երախտա
մոռացք որք մեղադրէին զմովսէս թէ ընդ
է՞ր հանէր զմեզ յերկրէն յեգիպտոսէ.
կամ թէ ընդէ՞ր դու միայն խօսիս ընդ ա̃յ և
զմեզ ոչ տանիս ընդ քեզ. և գաղտ ՛ի մովսէ
սէ կուռք պաշտէին. և ՛ի միում գիշերի օձք
թօթափեցան յերկնից. և հարին զա̃մ ժողո
վուրդն: Իսկ մովսէս շինեաց օձ մի պղնձի.
և կախեաց ՛ի ձողի. և ամենեքեան որ ՛ի նա հայ

էին բժշկէին։ Իսկ որք կուռց երկրպագեալ էին, ամենեքեան սատակեցան։ Այնժամ Մովսէս դարձաւ առ Տր եւ խօսեցաւ. եւ խնդրեաց պատգամ. Իսկ Տր ետ զտախտակն քարեղէն. զպատուէրն Տյ ոչ ընդունեցին ազգն Իէլի. վն որոյ խորտակեաց Մովսէս զքարեղէն տախտակն եւ դարձաւ առ Տր։ Այնժամ Ած կամէր սատակել զնոսա. այլ Մովսէս աղաչեաց զՏր եւ անցոյց զբարկութի նորա։ Այլեւ Մովսէս 'ի գնայն զպատգամն յառնուլ, ընդ Ածա խօսու Խ խ. օր յամեաց. եւ ժողովուրդն Թուլամորթ եւ անհաւան տրտնջեցին զահարոնէ եւ ասացին թէ ուր է Մովսէս. չիգիտեմք թէ ինչ եղեւ նմա. զի փախեաւ ասելով թէ. երթամ խօսիմ ընդ Այ. եւ թէ խօսի վնէ՞ր զմեզ ոչ տանի ընդ իւր. զի մեք եւս խօսիցեմք ընդ Այ. զի մեք կուզեմք այնպէս Ած՝ որ միշտ է ընդ ի մեզ. եւ խօսի ընդ մեզ։ Այնժամ զահարոն բռնադատեցին թէ եղբայրքս կորեաւ՝ շուտով գիտ զնա. կամ դու մեզ ցոյց զԱծն մեր զոր պաշտեսցուք զնա ։ Իսկ ահարոն ասէ թէ մի ասէք այդպէս. զի բարկանայ ձեզ Ած. եւ ոչ անսացին ահարոնի. վն որոյ անճար մնացեալ, ասաց բերէ՛ք ինձ ոսկի եւ արծաթ որ չափ ունիք. զայս ասաց թէ խնայեն եւ ոչ բերեն. եւ նոյնժամայն բերին բազում ոսկի եւ արծաթ։ Իսկ ահարոն անճար մնաց. եւ վառեաց հուր. եւ եդ զոսկին եւ զարծաթն

՚ի մէջ հրոյն եհալեցաւ. իսկ ստամնայ եղև իբրև հորդու գլուխ մի, և ել ՚ի միջոյ հրոյն. իսկ բազումք ՚ի ժողովրդոցն հաւատացին և երկիրպագին նմա. և ասէին սա է աստուածն մեր որ ՚ի հրոյ ծնաւ. և պաշտէին զնա: Դարձաւ Մովսէս և եբեր զտախտակն քարեղէն զոր գրեալ էր մատամբն Այ .Ժ. պատգամսն.

այսինքն:

Առաջին. Ես եմ Տէր աստուած քո. և մի եղիցին քեզ այլ աստուածք բաց յինէն. և մի դիցես զանուն Տն քո ի վերայ սնոտեաց: Երկրորդն. Մի արասցես քեզ կուռս ըստ ամն նմանութե. յերկինս ՚ի վեր. և յերկիր ՚ի խոնարհ: Երրորդն. յիշեա՛ զի սրբեսցես զօր շաբաթուն:

Չորրորդն. պատուեա՛ զհայր քո և զմայր քո: Հինգերորդն. Մի՛ սպանաներ: Վեցերորդն. Մի՛ շնար: Եօթներորդն. Մի՛ գողանար: Ութներորդն. Մի՛ սուտ վկայեր զընկերէ քումմէ: Իններորդն. Մի՛ երդնուր սուտ յանուն Տեառն աստուծոյ քո: Տասներորդն. Մի՛ ցանկանար կնոջ ընկերի քո. և մի տան նորա. և մի ընչից նորա. և մի ամենայն իրաց որք նր իցեն. Ապա Մովսէսի երեսքն փայլէին ՚ի լուսոյն աստուծոյ իբրև զարեգակն. և եկն ՚ի բանակն, և ժողովուրդն ոչ կարէր հայել յերեսս Մովսէսի վս պայծառութե լուսոյն. և ահ մեծ անկաւ ՚ի վյ ժողովրդեանն:

Իսկ մովսէս քօղ արկանէր ի վ͞ր երեսին. և
ապա կարէին ժողովուրդքն խօսիլ ընդ նմա։
Ապա մովսէս սբերեալ զհորթոյն գլուխն խար
տոցեաց և ելից ՚ի մէջ ջրոյն. և ո՛վ ոք որ հա
հատացեալ էր հորթոյ գլխոյն, ըմպէր զջուրն
և փորն ուռենայր և սատակէր. և նոքա որ
ո՛չ հաւատացին, ո՛չ եղև վնաս ամենևին. և
այն էր փորձութե͞ ջուրն յորմէ ա͞ծ ածնայ
ըմպել եսուն. զի այնով փորձէին զմեղա
պարտն և զանմեղն։ Դարձեալ չարացան
ժողովուրդքն և ասացին ը՛ էր հաներ զմեզ
յեգիպտոսէ. զի անդ ուտէաք ձրի զսոխն և
զսխտորն և զպտուղս այն. մինչև յերբ ուտեմք
զմանանայն. և այլ ոչ ինչ ունիմք։
Մինչև այսպէս տրտնջէին և մռմռային
զերախտիսն ա͞յ. և ա͞ծ բարկացաւ ի վ͞ր ն͞ց և
պատուհասեաց երկիր և եկուլ զդաթանն և
զկորխն և ծածկեաց զքանակս զաբիրոնի. և
բոց մաշեաց զժողովս ն͞ց. և զքաղցումն ընտիր
ընտրեան սատակեաց ՚ի մէջ իսրայէլի։ Ապ
պա փենէհէզ այր արդար միջնորդ եղև և
աղաչեաց զմովսէս և հաշտեցոյց ընդ ժողո
վրդեանն։ Իսկ մովսէս և փենէհէզ աղաչէ
ցին զա͞ծ, և արգելաւ մահ։ Ապա դարձաւ
մովսէս առ ա͞ծ. իսկ մովդատ և ելդատ և
հ ը. հոգիք ընդ իւրեանց գնացին հետ մով
սէսի. զի ասացեն թէ մ͞ք խօսի ա͞ծ ընդ
մովսէսի. իբրև հասին ՚ի լեառն քորեփ, որո

տայ և թընդաց և փայլատակեաց հուր. ամէն
անկան իվ̃ր երեսաց և կիսամեռ եղեն. իբ-
րև զարթեան, աւերին զլեառն մէջ և մառա-
խուղ պատեալ. այլ ոչ ոտ եւ ոքին զմովսէս և զա-
շակերտն նր̃. և ՚ի մէջ ամպոյն խօսեցաւ ընդ
մովսէսի. և եւ մովսէս լուսափայլ երեսօքն և
ուրախութ̃բ գնացին ՚ի բանակն. և ՚ի մէջ բա-
նակին կանգնեցաւ սեւն ամպեղէն. և յե-
տոյ վրան սահմանեցին. զի ած̃ախօսութի̃ լի-
նէր ՚ի նմանէ։ Դարձեալ շինեցին տապա-
նակ ուխտի հրամանաւն ած̃յ յանփոյթ փայ-
տէ. և եդ ՚ի մէջ նր̃ զքարեղէն տախտակսն
և զսափորն ոսկի լի մանանայիւ. զոսկեղէն
բուրվառն ահարօնի. և զգաւազանն որ ծաղ-
կեցաւ որ ՚ի նմանէ լինէր ած̃ախօսութի̃. և
այլ բազում սքանչելիս որ առնէր՝ ոչ գրե-
ցաք զ ընթերցասէրն։ Նա մովսէս հանգեաւ
խաղաղութ̃բ. Ճի̃. տարւոյ. մինչև. Լ. օր
սուգ արարին իւր նր̃ ժողովուրդքն. և յե-
տոյ հրեշտակք անփոփեալ զմարմին նր̃. զի ոչ
ոք գիտէ զգերեզման նր̃ ՚ի մարդկանէ մին-
չև ցայսօր։ Որոյ նորին արժանաւոր աղօ-
թիւքն պահեսցէ զձեզ զյամ̃մ փորձութեանց ամէն։

✠ Այսէ մեկնութիւն բանիս խոստովանես

Գլուխ. ԺԳ.

# Ի ՓԱՐԱՒՈՆ ՕՐԻՆԱԿ

էր սատանայի. և մովսէս օրինակ էր
քրի. որ ժողովուրդն խարայէլ ը գ-

րիերին ՚ի ձեռն փարաւոնի. Նոյնպէս և ա-
դամ ամ ծննդովք իւրովք գերի էր ՚ի ձեռն
սատանայի. զի գաւազանն մովսէսի օրինակ
էր խաչին քրի. եգիպտոս օրինակ էր դըժո-
խոց. գառն և բաղարջն օրինակ էր մարմնոյ
և արեանն քրի. զի ոպ արեամբ գառինն իս-
րայէլի ապրեցան ժողովուրդքն յանդրան
կածախ սատակմանէն. Նոյնպէս քրի հաղոր-
դութեամբն և պատարագաւն՝ ապրին ամ հա-
ւատացեալքն ՚ի մահուանէ և ՚ի տանջանաց
դժոխոց. զի ոպ մովսէս եհան զժողովուրդն
իսրայէլի ՚ի ձեռաց փարաւոնի և յեգիպտո-
սէ. Նոյնպէս և քրի իջաւ ՚ի դժոխսն. և հա-
նեալ ազատեաց զամ ազգս մարդկան։
Զի ոպ մովսէս գաւազանաւն պատառեաց
զծովն կարմիր. և ճանապարհ բացաւ որդւոցն
իէլի. Նոյնպէս և քրի աւերեաց զդժոխսն.
և հանեալ ազատեաց զամ գերիսն. Ինչպէս
փարաւոն և ամ զօրքն իւր սատակեցան ՚ի
ծովն. Նոյնպէս սատանայ և ամ դևքն իւր
սատակեցան և կապեցան ՚ի խորս դժոխոց։
Զի ոպ մովսէս առաջնորդ եղև իսրայէլի.
Նոյնպէս և տէրն մեր յի քրի առաջնորդ եղև
ամ հաւատացելոց։ Զի ոպ մովսէս մտաւ ՚ի
ծովն և ամ ժողովուրդ ընդ նմա, և ել ՚ի ցա-
մաք. Նոյնպէս և քրի մտեալ ՚ի գետն յորդա-
նան և մկրտեցաւ. և զմեզ մկրտեաց ՚ի ծովն
աւազանին. և առաջնորդեաց ՚ի խաւարէ ՚ի

լոյս։ Ո ի ոպ̃ մովսէս և ժողովուրդն ՚ի յերկ
նից ելեալ մբ̃ հացէն կերան և լիացան. նոյն
պէս և մեք ք̃նի մբ̃ մարմնով և արեամբն լիա
նամք. և ճաշակելովն անմահանամք։
Դարձեալ որդւոցն իսրայէլի ․ժ̃բ․ աղբիւր
ելանէր քաղցրահամ և արբուցանէր զա̃մ
ժողովուրդն և ․հ̃․ ծառ արմաւենի կայր
որ ընդ հովանեաւ նր̃ հանգչէին. նոքա օրի
նակ էին ․ժ̃բ․ առաքելոցն և ․հ̃․ աշակեր
տացն ․Քս̃ի․ որ նոյին քաղցրահամ քարոզովն
լիացան ա̃մ ազգ քրիստոնէից։ Ո ի ոպ̃ նշ̃
ամպն լոյս տայր ՚ի գիշերին. և ամպն այն օ
րինակ էր մարիամ ա̃ծածնին որ ՚ի նմանէ ծա
գեաց լոյսն ք̃ս և լուսաւորեաց զմեզ։
Ո ի ոպ̃ նշ̃ ես զտապանակ ուխտին որ ՚ի նը
մանէ ելանէր ա̃ծախօսութի̃. նոյնպէս և
մեզ ես զեկեղեցին. յորմէ հանապազ ա̃ծա
խօսութի̃ լինի։ Ո ի ոպ̃ նշ̃ ես զ․քարեղէն
տախտակն յորում գրեալ էր խրատն ա̃յ.
նոյնպէս և Տր̃ն մեր Յս̃ Քս̃ ես մեզ զս̃բ
աւետարանն որ լիակատար գրեալ է ՚ի նմա
ա̃մ պատգամքն ա̃յ։ Ո ի ոպ̃ նոցա ես զսա
փորն ոսկեղէն լի մանանայիւ՝ յորմէ կերակ
րէին և լիանային. նոյնպէս ես մեզ զսուրբ
կոյսն մարիամ. և զս̃բ մանանայն որ է ք̃ս. զոր
հանապազ ճաշակեմք և լիանամք հոգւով և մար
մնով։ Ո ի ոպ̃ նշ̃ ես զբուրվառն ահարոնի
որ պղինձ էր ՚ի յոսկի փոխեցաւ. և յանուշա

հաստատութեն նոր լուսնային քրիզքն անմնեցուն. Նոյնպէս քարոզ վարդապետաց և քահանայ եց քաղցրացուցանեն զքիմս եւ ըմբոշխակելիս մեր։ Ո՛վ, ի որպէս ՚ի մէջ նոցա որք ոչ հաւատա ցին մովսէսի տապանակին ած՝, չարաչար պա տուհասին սատակեցան. նոյնպէս եւ որք ո՛չ հաւատան ամենատարանին, և ո՛չ խնաղանդեն օրինաց, պատուհասին սատակին. և ՚ի հուրն դժոխոց տանջին ։ Պարծեալ նոքա որք հա ւատացին պատգամացն ած՝, ասա ՚ի քաղցրա համ աղբերացն ճաշակեցին . եւ յերկնից հա ցեն կերին եւ ոսկեզէն սափորին եւ մանանայ ին լուցան. և ածային նախախնամութեն ուրախացան. նոյնպէս եւ մեք երկ լսեմք զկը րաս ամենատարանին և տէր փրոցն, ասա մխիթա րեմք մարմնով. և անդ խառնեմք ՚ի դասս ար դարոց. և արքայութին քոյն ժառանգեմք։ Պարծեալ թէպէտ մովսէս ազատեաց զիս րայէլ եանցոյց ՚ի ծով կարմիր, եւ ՚ի նոցա նէ ո՛չ փասնեցան. բայց յորժամ չարացան եւ երկիրպագին կռոցն, ՚ի մէջ բուն գիշերի հա

րան օձից եւ սատակեցան .ծը. հոգի։

Պարծեալ երկիրպագին որթոյն խոստակերի եւ փորձութէ ջրոյն մեռան. Ճ ի ը. հոգի։ Պարծեալ կորխ և դադանեանք որք հակա ռակ կացին ընդդէմ մովսէսի, երկիր պատա ռեցաւ եւ եկուլ զ. Ճ ի ե ը. հոգի։ Ո՛.յլև ա բիրոնեանքն որք զթամուզ ածդ պաշտեցին

հրկիզեցին հեռ. հոգի. և բոց մաշեաց զնոսա
Թէպէտ մովսէս ազատեալ էր զնոսա 'ի գերու-
թէ փարաւոնի. բայց նոքա խարեանց կամս
պաշտօ չարութեան հետևելով սաստ պատու-
հասեցան. և անդ գերի եղեն սատանայի.
սաստ պատուհասիւ սատակեցան. և անդ տան-
ջելոց են 'ի տարտարոսն դժոխոց. նոյնպէս
և 'ի մեզ նոյն չարագործքն: Զի Քս չարչարե-
ցաւ և խաչեցաւ և ազատեաց զմեզ 'ի ձե-
ռաց սատանայի. և ջնջեաց զձեռագիրն ա-
դամայ. և ազատեաց զմեզ յամէ: Իսկ որք ու-
զեն հաւատան նմ աւետարանին Քի, և քա-
րոզութե վարդապետաց, և պահեն զօրէնսն,
հանապազ խոստովանին և հաղորդին, սաստ
հանդչին. և անդ մխիթարին. և որք չարանան
նման զաբիրոնի, և նման այլ չար ընկերաց
նց ոչ հաւատան նմ գրոց աւետարանաց,
և ոչ դառնան 'ի մեղաց և ոչ փոշիմանին 'ի
գործոց. այլ հանապազ անդարձ մնան, և ըզ
հետ մեղաց աշխատին, բարկանայ ած. զի
սաստ պէսպէս փորձանաց հանդիպին. և անդ
զգեհեն հրոյն ժառանգեն:
Թէպէտ Քս եհան զնս մեղաւորսն 'ի դժո-
խոց. բայց ինչ մարդ որ չար գործէ և ան-
դարձ մնայ, և ինքն իւր կամաւն գերի տայ
սատանայի և ծառայ լինի նմա ոչ կարէ ազա-
տիլ: Զի ոչ ոք կարէ բարեխօս լինիլ ան-
դարձ մեղաւորին. և կամ փրկել զնոսա վասն

որոյ աղաչեմ զձեզ ունկնդիր լերուք խրա
տուց և ըստ ամենատարանին Քնի· ուսարուք
զարդարութի և գործեցէք զբարիս· աստ
ջանեցէք՝ որ անդ ժողովէք· աստ տըճէք
որ անդ առնուք· աստ լացէք վսն մեղաց որ
անդ խնդայք· աստ աղօթեցէք որ անդ զար
դարիք· զի այս անցաւոր աշխարհս սուտ է
և խաբէ զմարդն· զի զայս օրն ՚ի վաղն մի ձը
գէք· յանկարծակի մահն ՚ի վր հասանի · և ան
դարձ և անզերծ կորուսանէ զմարդն· ջա
նացարուք մինչդեռ ժամանակն ՚ի ձեռաս
է և հեռացէք ՚ի մեղաց· խոստովանեցէք և
ապաշխարեցէք՝ հաղորդեցարուք սրբութե
և բարի վարուք· որով արժանաւոր լինիցուք
տեսոյն քրիստոսի· Որ և զձեզ և զմեզ ար
ժանացուսցէ իւր օրհնեալ տե
սոյն Ամէն ։

✠ Պատմութիւն վասն Եզեկիայի թագաւորին·

Գլուխ ՃԻԸ ։

ԵԶԵԿԻԱ ԹԱԳԱՒՈՐՆ ԵՐՈՒՍԱՂԷՄԻ ՄԵ
ղաւ ինչ ՚ի ժամանակ իւր· և տծ բար
կացաւ և կամէր սատակել զնա· և մար
գարէն Եսայի յայտնեաց զմեղքն նր· քան
զի հիւանդացեալ էր ասաց Եսայի, թէ կը
տակ արա ընտանեաց քոց· զի ՚ի մտանել ա
րեգականն մեռանիս։ Իսկ թագաւորն Եզե
կիա կարի դառնացեալ սրտիւ ելաց· և խոս
տացաւ պահս և աղօթս առ տէր· և այնքան

արտասուեաց որ յանցացն արիւն կաթեցաւ։
Ապա տր հայեցաւ ՚ի զգլուխն նր թէպէտ
յ.թ. ժամու աւուրն պիտի մտանէր, որ
երեք ժամեր երբ մարգարէն ասաց նմա
թէ, ՚ի մտանել արեգականն հոգիդ ՚ի բաց
պահանջի ՚ի քէն. նա .Գ. ժամու աղօթքն ըն
դունեաց տր, և ողորմեցաւ նմա. և կրկին
ԺԵ. տարի կեանք ետուր: Բայց զի եկն ե
սայի մարգարէն աւետեաց նմա թէ, տր
դարձոյց զհոգի քո. զի լուաւ աղօթից քոց.
և նա ոչ հաւատայ ասելով թէ, ահա հոգիս
կու քաղ վի յինէն. միթէ արեգակն կարէ
դառնալ յետս որ իմ հոգիս յետս դառնայ։
Որում մարգարէն ասաց, եղիցի նշան քեզ
դառնալ արեգականն. և դարձաւ արեգակն
յետնուցն հետէ գնացեալ յառաջելս. դար
ձաւ և եկն. որ եղև .Ժ. օրն մէկ օր. որ բո
վանդակ աշխարհ տեսին զսքանչելիսն այ.
որ վն եզեկիայ թագաւորին եղև զօրութիս
այս, յաղագս աղօթիցն և աղաչանացն։ Որ
և ՚ի ժամ մահուան իւրոյ խրատեաց զորդին
իւր զմանասէ ասելով, թէ կամենաս որդի
որ մեծանաս փառօք ՚ի թագաւորութեան քում,
պահեա զքեզ պահօք և աղօթիւք զամենայն
աւուրս կենաց քոց. և մաքուր կաց ՚ի խառ
նակութենէ այլազգեաց և յամ մեղաց։
Ապա եթէ պահես զխրատն իմ և զպատուէրի
բանին այ, մեծանաս քան զամ թագաւորս

երկրի. այլ ո՛չ կարէ թշնամութիւն առնել քեզ. և եթէ ոչ լսես զխրատն իմ, և ոչ պահես զպատուիրանն ա՟յ, առանց թշնամոյ և առանց պատերազմի ՚ի ձեռն ընտանեաց քոց և ՚ի ձեռն ծառայից քոց անկանիս ՚ի գերութի՟. և ապա փոշիմանիս և յիշես զխրատն իմ. զայս ասաց և վախճանեցաւ.

Եւ թագաւորեաց որդի նորա մանուկ. և մոռացաւ զխրատ հօր իւրոյ. և ո՛չ պահէր զպատուիրանն ա՟յ. և եղև թագաւոր մեծ յոյժ և ահարկու ՚ի վերայ ա՟մ թագաւորաց. մինչ որ հնազանդ եղեն ա՟մ թագաւորք և հարկս տային նմա։ Եւ խնդրեաց ՚ի կռուապաշտից տղայս և աղջկունս ՚ի ծառայութի՟ իւր։ Իսկ թագաւորն կռապաշտից ընտրեաց զտղայս գեղեցիկս և առաքեաց մանկանն. որ և շնայր ընդ աղջկունսն կռապաշտից. իսկ աղջիկ մի գեղեցիկ զոր արար իւր կին. իսկ կինն դեղեաց զինքն և անկաւ հիւանդ. և թագաւորն տեսեալ հիւանդ զկինն, եհարց զնա թէ ինչ են հիւանդութիւնք քո, և նա ասէ. յաղագս կռոց հօր իմոյ այսպէս հալիմ և մաշիմ. և թէ կամիս որ առողջ լինիմ՝ արա վասն իմ կուռս ոսկեղէնս զի պաշտեցից զնա և առողջանամ։ Իսկ թագաւորն շինեաց կուռս ոսկեղէնս մարդաչափ։ Եւ ՚ի միում աւուր ասէ կինն սիրե՞ս զիս թագաւոր։ Ասէ թագաւորն գիտես զի սիրեմ

զ.քեզ: Ասէ կինն երբ սիրես զիս, ընդէ՞ր
ոչ երկիրպագանես իմ կուոցն: Իսկ Թագա
ւորն անկեալ երկիրեպագ կուոցն. և Թա
գաւորն Թագ մի ունէր ՚ի հօրէն յորոյ վ՛ր
ակն մի կայր որ ՚ի ներքև զճրագ վառէր:
Իսկ կինն ասէր այդ Թագդ որ դու ունիս
դիր ՚ի գլուխ կուոցն զի պաշտեսցուք: Ասէ
Թագաւորն Թագս այս յիմ հօրէն է մնա
ցեր. զի ճանաչեն և գիտեն ամ իշխանքն
իմ. և ես այդ Թագովդ նստիմ յաթոռ Թա
գաւորութե և ՚ի մէջ նոցա. և թէ դնեմ ՚ի
գլուխ կուոցն՝ ամենեքեան թշնամի լինին
ինձ և սպանեն զիս: Ասէ կինն՝ ՚ի գիշերի
դիր ՚ի գլուխ կուոցն զի պաշտեսցուք. և ցե
րեկն դիր ՚ի գլուխ քո և նիստ յաթոռ Թա
գաւորութե քոյ: Ասէ Թագաւորն՝ դունա
պանք իմ ամէնն ամծապաշտք են. թէ իմա
նան որ մեք զայդ առնեմք, գնացեալ պատ
մեն մեծամեծացն իմոց և սպանեն զիս և
զ.քեզ: Ասէ կինն՝ և թէ այդպէս է փոխէ
զդունապանսն և ՚ի մեր ազգէն դիր դունա
պան. զի ազգն քո ոչ իմասցէ զկուռս պաշ
տելն մեր: Իսկ Թագաւորն փոխեաց զամ
դունապանս և զպահապանս և արար ՚ի կուռ
պաշտ ազգէն: Իսկ միաբանեցան կին Թա
գաւորին է̅ պահապանսն. գրեցին Թուղթ
և ուղարկեցին առ կռապաշտ Թագաւորն
իւրեանց, թէ մարդ ուղարկէ մեզ. զի գա

զասցուք զԹագաւորն մանաւանդ եբերցուք
առ ուսն քո կապանօք: Իսկ Թագաւորն կռա
պաշտից առաքեաց .Ի. մարդ երկաթազ
գեստ. և եկեալ կացին գիշերով 'ի ծորակ մի:
Իսկ կինն Թագաւորին հին գինի արբոյց
Թագաւորին և քնեցոյց. և 'ի մէջ գիշերին
գողացան զմանաւանդ և կապեալ դրին 'ի մէջ
սնդկի. և կապանօք տարեալ ածին 'ի ձեռն
կռապաշտ Թագաւորին: Իսկ կռապաշտ Թա
գաւորն բերեալ տնազ արար զմանաւանդ Թա
գաւորն. և կապանօք տարեալ ձգեաց 'ի հոր
մի անջրդի. և էր խորութի̃ նր̃ .Խ. կանգուն. և
քար մի մեծ եդեալ 'ի բերան հորոյն զի անդ
սովամահ սատակեսցի: Իսկ Թագաւորն մա
նաւանդ 'ի միտ եբեր զխրատ հօրն և ապաւինե
ցաւ յա̃ծն աբրահամու և սկսաւ լալով և ար
տասուօք և հառաչմամբ ասել:

Տ̃ր ամենակալ Ա̃ծ աբրահամու. իսահակայ
և յակօբայ, և զաւակի նոցա արդարոց ամե
նակալ տէր Թող զմեղս իմ. և ասէր լալով
մինչև .Խ. օր և յամէն օր մէկ կանգուն բարձ
րանայր խորութի̃ հորոյն. և լուաւ տէր աղօ
թից նր̃. և մինչև .Խ. օրն՝ բարձրացաւ հորն
և լցաւ. և գնացեալ բանտապանացն պատ
մեցին Թագաւորին Թէ, մանաւանդ կենդանի է
և հորն լցեալ է. և մանաւանդ 'ի բերան հորոյն
կայ և զա̃ծն իւր օրհնէ: Այն Թագաւորն
նստեալ էր 'ի սեղան և հաց մի խորովեալ

կայր առաջին. ասէ թագաւորն՝ թէ այս
հաւս կենդանանայ, նա Մանասէ ապա կեն
դանի է. և առ ժամայն թէ առեալ հաւն
թռուաւ. զարմացաւ թագաւորն և ա̃մ իշ
խանքն. և ելեալ գնացին 'ի բերան հորոյն
և վերբացուցին զքարն. և տեսին զՄանասէ
պայծառ դիմօք իբրև զառաջինն. և Մանա
սէ յոտին կանգնեցաւ. և բարձան երկաթի
կապանքն յոտիցն և ձեռացն. և ասէ թագա
ւորն՝ այս ի՞նչ սքանչելիք է զոր տեսանեմ
'ի քէն. ասէ Մանասէ ոչ թէ ես առնեմ զըս
քանչելիս. այլ տէր ա̃ծն մեր առնէ զոր մեք
պաշտեմք. ա̃ծ աբրահամու ա̃ծ իսահակայ
և ա̃ծ յակոբայ։ Ասէ թագաւորն՝ երբ դուք
այդպէս զօրաւոր ա̃ծ ունիք, ընդէ՞ր ետ ըզ
քեզ 'ի գերութի՞ 'ի ձեռս մեր։ Ասէ թագա
ւորն Մանասէ լալով, եթէ պահեալ էի ըզ
պատուիրանն ա̃յ իմոյ, ո՞չ ոք կարէր հակա
ռակ լինել ինձ. զի ես մոռացայ զա̃ծն իմ և
զխրատ հօր իմոյ. վ̃ա այն բարկացաւ ա̃ծն իմ.
և մատնեաց զիս 'ի ձեռս քո. և երբ անկայ 'ի
բանտ 'ի խոր գբոյս այս, դարձեալ յիշեցի զխը
րատ հօր իմոյ. և ապաւինեցայ առ ողորմած
ա̃ծն իմ. և աղաչեցի զնա բոլորով սրտիւ.
լուաւ ինձ և էհան զիս 'ի գբոյ հորոյս և ար
ձակեաց զկապանս իմ։ Արդ այժմ դու գի
տես ընդ աստուածն իմ ինչպէս կամիս այն
պէս արա։ Իսկ թագաւորն սաղմանասար

տացս՝ և ես թողում զքեզ վն ոյ քոյ. իսկ
իշխանքն և նախարարքն խորհուրդ արարին
և ասացին թագաւորին. գիտութի լիցի քեզ
արքայ. զի դորա 'ի հօրէ և 'ի պապանց թշնա
միքեն քեզ. մի արձակեր զդա: Իսկ 'ի գիշե
րի երևեալ հրեշտակ տն ահագին տեսլեամբ
և ասէ՝ արձակեա զմանուկ. և թէ ոչ արձա
կես, հրեղէն գաւազանաւս սատակեմ ըզ
քեզ. և քակեմ զաթոռ թագաւորութե քոյ.
և զարթեաւ թագաւորն 'ի յերազէն և 'ի յա
հէ անտի դողայր ողջ մերև 'ի ծառոյ. և 'ի
մէջ գիշերին կոչեաց և եբեր զմանուկն և
պատմեաց նմա զտեսիլն. և ասէ թագաւորն
մեծ է ած քո. զի իշխանքն իմ կամին ըսպա
նանել զքեզ. և ած քո յայտնեաց ինձ արձա
կել զքեզ: Այլ այժմ առաքեմ զքեզ ծա
ծուկ. զի մի գիտասցեն իշխանքն իմ. և արձա
կեաց զմանուկ 'ի մէջ գիշերին. և տարեալ
ծառայքն հասուցին զմանուկ 'ի քաղաքն
իւր: Այլ յառաւօտն տեսին զմանուկ թա
գաւորն իւրեանց որ մտաւ 'ի քաղաքն. իբ
րև տեսին իշխանքն և մեծամեծքն, զարմա
ցան վն գալստեան թագաւորին: Իսկ թա
գաւորն մանուկ պատմեաց նց զգործն և
զսքանչելիսն թէ յորում ժամու վերացաւ.
նաև 'ի խորհէն զվեր գալն. և զ'ի կապանաց լու
ծանիլն: Իբրև պատմէր թագաւորն զհօրն
լցումն և զկապանաց արձակումն, և զտեսիլն

Թագաւորին զհրեշտակն և զզարհուրեցուցա
նելն զինքն, զարմանային ա՛մ լսօղքն որ եղև
զօրութեամբն Ս՛յ և փառաւոր տայրին նմա:

Նա ապա զԹագաւորն Մանասէ բազմեցու
ցին ՚ի յաթոռ Թագաւորութե՛ն իւրոյ. և յետ
կարեալ կենօք հասաւ ՚ի բարուոք ծերութիւն.
և հանգեաւ խաղաղութե՛մբ ունելով իւր յե
շատակ զտէր ամենակալն: Նման որոյ աղա
չեմ զձեզ եղբարք, պահել զպահսն սրբու
թե՛մբ և զպատուիրանն Ա՛յ. զի ձեզ յօրինակ ա
ունէք զԹագաւորն Մանասէ թէ ո՛րպ չար
գործելով պատուհասի դիպաւ. և երբ զղ
ջացաւ և ապաշխարեաց պահօք և աղօթիւք,
նա ՚ի գերութենէն ազատեցաւ: Նոյնպէս
և դուք ՚ի դժարձ եկէք ՚ի մեղաց. խոստովանե
ցէք և ապաշխարեցէք. զի թողութե՛ արժա
նասջիք. և Ա՛յ տեառն փափաքեսջիք. որով
արժանասցուք իւր օրհնեալ տեառն ամէն:

Պատմութիւն Տապանակ ուխտին Տեառն Ա՛յ ։

## Գլուխ ԺԸ ։

ԻՍՐԱՅԷԼԻ ԺՈՂՈ
վուրդն ասացին ցմովսէս թէ դու
ա՛ծախօս մարգարէ եղեր վ՛ն մեր. զի
հանապազ խօսիս ընդ Ա՛յ. որև աղօթս մեր
մատուցանես առ Ա՛ծ և զպատգամս Ա՛յ և ըզ
պատուիրանն առ մեզ բերես և զպատգայն
պատմես: Ապա գայ ժամանակ որ ո՛չ գտանի
իբրև զքեզ մարգարէ. և ոչ խօսի Ա՛ծ ընդ

մարդկան. և այլ ո՛չ պատմէ զբանն այ, զի՞նչ լեցի մեզ: Այս Եբրև միաւսանգամ մովսէս խօսեցաւ ընդ այ, խնդրեաց 'ի տնէ զխնդիրս ժողովրդեանն : Այս հրամայեաց տէր մովսեսի շինել տապանակ մի յանփուտ փայտէ. և ոսկւով ծեփել զերեսն. և զ.քարեղէն տախտակն, և զոսկեղէն սափորն լի մանանայիւ, և զբուրվառն Ահարօնի, և զգաւազանն որ ծաղկեցաւ, դիր աստ 'ի մէջ տապանակին: Այս արար մովսէս այնպէս. զի այն եղև տապանակ ուխտի 'ի մէջ իսրայէլացւոց. զի որք խնդիրք ունէին՝ ուխտիւ և ընծայիւք գընային յերկրպագութի տապանակին. և խընդիրք կարեանց կատարեին : Այս յետ մովսէսի ոն. ծախօսութիւն լինէր 'ի նմանէ. զի որք մարգարէ լինէին և կամ քահանայ՝ երբ երթային 'ի խնկարկութի տապանակին, նա՛ տծախօսութի լինէր 'ի նմանէ. և զտմ գալոցն պատմէր նմ : Իսկ մարգարէքն նովաւ մարգարէանային և զգալոցն պատմէին:

Այս թէ պատուհաս գայր վս տանջանաց, որ փան մեղաց մարդկան, գային առ ոտան տապանակին և աղաչէին փրկել զնոսա 'ի պատուհասէն. և թէ թագաւոր, և կամ թշնամի գայր ի վր ազգին իէլի, առնէին զտապանակ ուխտին և գնային ի վր թշնամւոյն ջարդէին զնոսա: Այս կայր երեքով անուն բերթ մի անդամանդեայ քարով շինեալ.

որ է մօլատող տաշի. և կանգնեցուցեալ պատ
կեր մի կռոց ի վր̄ պարսպին. և զայն ած̄ պաշ
տէին. և կայր ՚ի նմա ՟Ղ ՟Ռ. մարդ այր պատե
րազմօղ. և ելանէին պատերազմ ընդ իէլի և
բազում փոսս առնէին: Իսկ յեսու որդի նա
ւեայ գլուխ ազգին իէլի՝ առեալ զտապա
նակ ուխտին քահանայիւք և գնաց ի վր̄ երի
քովի. իբրև հասին ՚ի գետն յորդանանու.
ժ̄բ̄. քահանայք կային որք ըսպասաւորէին
տապանակին. և քահանայքն մտին ՚ի գետն.
և գետն բացաւ և ցամաքեցաւ. և եղև ճա
նապարհ տապանակին, որ մինչև անցին ժո
ղովուրդքն յայնկոյս գետոյն. և քահանայքն
կային տապանակաւն ՚ի մէջ գետոյն. իբրև
անցին ամենեքեան, . ժ̄բ̄. քարէ արձան
կանգնեցուցին ոտնատեղեացն քահանայ
ից. և կայ մինչև ցայսօր՝ վկայ սքանչելեացն
տապանակին. և արդար քահանայիցն. և ան
ւանեաց զանուն տեղւոյն գաղգաղա որ ասի
տեղի սքանչելեաց: Իբրև հասին յերիքով,
աղօթս առնէին քահանայքն. և զկանոն գր
լուխ սաղմոսն ասէին մինչ ՚ի ՟Զ. տունն և
՟Է. տունն բարձրացուցին և երեք անգամ
շուրջ պատեցին զերիքովի բերթովն. և ինք
նին հալեցաւ քարն. և պարիսպն փլաւ. և
եղև հաւասար հողոյ. և ժողովուրդն միա
բան քաղցր ձայնիւ զտէր աղաչէին. և տէր
ողորմեա՛ գոչէին. և առ հասարակ զամե

նեսեան կոտորեցին. և մի՛ ի նոցանէ ոչ ապրեցաւ. այլև զաւարն ոչ առին. այլ զա͞մ ոսկի և զարծաթն այրեցին։ Բայց զՌաւխաւ պոռնիկն ոչ ըսպանին. զի զլրտեսսն պահեաց։ Պարծեալ միւսանգամ .գ. Թագաւորք եկին ի վ͞ր ի͞ւր. և նոքա առին զտապանակն ընդ քահանայիւք և գնացին ընդդէմ թշնամւոյն. և մինչ դեռ գնային ՝ի ճանապարհին թեքեցաւ տապանակն. և քահանայ մի դէմ կացաւ տապանակին զի մի անկանիցի. և եղ հուր ՝ի մէջ շուրջառին, և շուրջառն ոչ այրեցաւ։ Իբրև հասին ՝ի տեղի պատերազմին, յորում խմբեցաւ պատերազմն ել հողմ ուժգին և անձրևանման քար հոսէր ՝ի տապանակէն. և մտաւ ՝ի բանակս թշնամեաց. առեալ զհողն և զմոխիրն տեղւոյն և կուրացոյց զաչս թշնամւոյն։ Եւ մինչ արեւն ՝ի մուտ էր, աղաչեաց Յեսու որդի Նաւեայ զա͞ծ. զի արեգակն կանգնեալ ոչ գնասցէ, մինչև իսպառ կոտորեսցէ զթշնամիս իւր. և կեցաւ արեգակն ՝ի տեղի այն հրամանաւն ա͞յ, մինչև կոտորեաց զամենն. և

.գ. Թագաւորն գերի բերին յերէմ։

Եւ Իսրայէլացիքն Թագաւոր ոչ ունէին. քան զի ա͞ծ էր նոցա Թագաւորն. և զոր ինչ առնէր ա͞ծ յայտնէր նոցա տապանակաւն. երբ դայր թշնամին պատերազմել ընդ նոսա, միահաղոյն կոտորէին զն͞ս։ Եւ յետ այնորիկ

խնդրեցին թագաւոր իւրեանց՝ զոր ա՜ծ ետ նոցա թագաւոր զսաւուղ կիսեան. թէ պէտ յառաջ ոչ ունէին թագաւոր այլ դատաւորք դատաստան առնէին մինչև ՚ի հեղի քահանայն և .բ. որդիքն նորա ոփնի և փենեհէզ զտապանակ ուխտին նոքա տանէին. բայց կարի չարք էին. մինչ զի շնային ը՜ ժողովրդան. զոր իմացեալ ժողովուրդն գանկատ եղեն հեղեայ հօրն նոցա :

Իսկ հեղի խրատեաց զորդիսն և ասէ. եթէ գայլն յափշտակէ զոչխարն, պիտի որ հովիւն փրկէ զնա. իսկ թէ հովիւն կեր տայ գայլոյն, ո՞վ կարէ պահել զոչխարն: Որդիք դուք քահանայ էք. թէ ժողովուրդն ստնակոխ լինի սատանայի, պիտի որ դուք խրատէք և փրկէք զնա. իսկ դուք ստնակոխ լինիք սատանայի. այլ ո՞վ կարէ կոխել զգլուխ սատանայի: Իսկ նոքա ոչ հաւանեցան խրատոյ հօրն իւրեանց. այլ հանապազ գործէին զչարութի՜ իւրեանց: Եւ բարկացաւ ա՜ծ ի վե՜ր նոցա. և յարոյց ի վե՜ր նոցա թշնամի. և եկին փղշտացիքն ընդ դէմ նոցա ՟լ ՟գ ՟ռ. հեծելօք. և անպատրաստք էին այգն իէլի. ի րև պատերազմեցան, անկան .՟գ ՟ռ. մարդ յազգէն իէլի. և առաքեցին բերել զտապանակ ուխտին, թերևս յաղթեսցեն զթշնամին. բայց ոչ գիտացին թէ տապանակ ուխտին խռովեալ էր նոցա վասն անարժանութեան քա

հանայեցն. և ՚ի միւսում աճուր մոխին ՚ի պա
տերազմ և հարուածս մեծամեծս արարին
այլազգիքն. քան զի նոքա ես աղաղակեցին
կռապաշտքն, թէ ա՛նծանօթ ա՛ծ մեզ եւս
հասիր. բազումք յիսրայելացւոց անկան ՚ի
պատերազմին. և անկան .բ. որդիքն հեղի
քահանային օբնի և փենեհեզ. և զտապանակ
ուխտին տարան ՚ի գերութի. և մարդ մի զերծեալ
՚ի պատերազմէն և եկեալ ՚ի քաղաքն պատա
ռեալ հանդերձիւք, աղաղակեաց մեծաձայն
ողբով և հող ՚ի գլուխս արկանելով: Եւ հե
ղի քահանայն նստեալէր ի վր աթոռոյ. և
յորժամ լուեց զձայն աղաղակին, կոչեաց
զայրն և ասաց թէ ի՞նչ եղև ՚ի պատերազ
մին. նա ասաց՝ պարտեցաւ իէլ ՚ի ձեռաց
այլազգեաց. և բազումք անկան ՚ի սուր սու
սերի. և .բ. որդիքք քո անկան. և տապանակ
ուխտին տարաւ ՚ի գերութի: Եւ երբ որ լը
սեց թէ տապանակ ուխտին գերի անկաւ,
նա ՚ի յաթոռոյն անկաւ. և ՚ի մեծի ազոյն մե
ռաւ: Եւ յաքան փորձանքն յ.բ. որդւոյն հե
ղեայ եղև վա չարութե իւրեանց. զի քահա
նայքէին և պոռնկէին միշտ. որով .Լ. ռ. ռ.
մարդ մեռաւ. և տապանակ ուխտին գերի ան
կաւ: Եւ զտապանակ ուխտին ուրև տարին
՚ի մէջ այլազգեաց, մահ անկաւ յիւրեանց
մէջն. և այլ ինչ հարուած. այսինքն մուկն և
մարեխ և գորդ ապականեաց զերկիր նց. մինչ

որ ոսկի մկունք շինեցին. և լծեցին ՚ի բայլ մի
զ.բ. եզինս. և թողյլ երաւն թէ տեսանեմք
ուր գնան եզինքն առանց ուրեք մարդոյ.
և առեալ բերին երինջքն զտապանակ ուխ
տին յեկեղ՚ի ժամանակս հնձոցն: Իբրև տեսին
հնձօղքն զտապանակն, գնացին ուրախութ
ընդ առաջ նր. և ելեալ տարան ՚ի տեղի իւր:
Իսկ ո͞մ եղեմ ուրախացան վն գալստեան տա
պանակին. իսկ այնու գիտացին, զի հաճե
ցաւ և հաշտեցաւ ա͞ծ ընդ նս. բայց ոչ առ
նէր ըմբանչելիս իբրև զառաջինն. զի ոչ կա
մեցաւ բնակել ՚ի տեղին: Այլ տեսիլ երևե
ցաւ ՚ի հրեշտակաց. և ինքնին գնացեալ ՚ի սի
նեական լերինն. և է անդ մինչև ցայսօր ցե
րեկն ամպ և մէգ պատեալ զլեառն. և ոչ
ոք կարէ գնալ անդ. և ոչ ոք կարէ գտանել
կամ տեսանել զնա, մինչև ՚ի ժամանակս նե
ռին. որ նովաւ պիտի կործանի նեռն: Իսկ տա
պանակն օրինակ էր եկեղեցւոյ. զի նովաւ
ածախօսութի լինէր. և ՚ի նոյն օրինակ եկեղե
ցիս մեր. և աւետարանն քի. և այլ գիրք ս͞րբք:
Այլ և ՚ի մէջ տապ͞նակին քարեղէն տախտակն
որ խորանէր զնս՝ և մանանայն որ ՚ի մէջ ոսկե
ղէն սափորին. իսկ մեք զքն մարմինն ճաշա
կեմք. որով ջնջին մեղք մեր. և լիանան հոգիք
մեր. զի ո͞րպ տապ͞նակն զգալոյ չարն և զբարին
պատմէր: Այնպէս եկեղեցի զահ դատաստա
նին. զտանջանսն դժոխոց. և զանէր արքայութեն

Զի ամ̃ տապանակաւն զթշնամին յաղթեին. այսպէս մեք եկեղեցեաւ կարեմք յաղթել և կոխել զգլուխն սատանայի. զի ամ̃ տապանակաւն արժանաւորքն զբարիս ճաշակէին. և 'ի մեղաց մաքրէին. և որ չարագործք էին պատուհասիւ սատակէին: Նոյնպէս և եկեղեցեաւ որք խոստովանեին մաքրութե̃ և հաղորդին, սատ 'ի բազում չարէ փրկին. և անդ ա̃ծութե̃ փառօք զարդարին. և անդադար հրեշտակացն փառաբանչաց ձայնակից լինին. իսկ որք անդարձ մնան, սատ պատուհասիւ տանջին և անդ 'ի հուրն գեհենին մատնին: Աղաչեմ զձեզ՝ ունկնդիր լերուք խրատոյս. և օրինակ առէք ձեզ. զի որ արդարք էին քահանայքն և ժողովուրդքն՝ տապանակաւն զգետն յորդանան յետս դարձուցին. և զտապանակն 'ի մէջ գետոյն իբրև 'ի ցամաքի անցուցին. և զերիքովի ամուր պարիսպն իբրև զմոմ հալեցին. և զթշնամին գերեցին և կոտորեցին: Դարձեալ յորժամ չարացան քահանայքն և ժողովուրդքն՝ նա 'ի թշնամեացն անկան ·լ̄· դ̄· ռ̄· մարդ. և 'ի սուր սուսերի մաշեցան. և տապանակ ուխտին իւր կամաւն ·ի̄· ամի գերի եկաց 'ի ձեռս այլազգեաց. քանզի ոչ կամեցաւ լինիլ ընդ անարժան քահանայից և չար ժողովրդոց:

Զայս ամ̃ ձեզ օրինակ առէք. և մաքուր կացէք պահօք և աղօթիւք. աղքատաց ողորմու-

թիւն տալով եւ զմիաբանս ոչ բերելով. պատառե
ցիք զօտարն եւ զպանդուխտն եւ զքահանայս
եկեղեցւոյ. զմեղս խոստովանելով արտասուօք
եւ ապաշխարութեամբ. եւ զբերանս ձեր մաքուր պա
հելով յամենայն աղտեղի խօսից, եւ հայհոյանաց:
Որով մաքրեալ եւ յարդարեալ գտանիք. եւ
այդ տեսոյն արժանի լինիք բարեխօսութեան
ամենամաքուր կուսին եւ այլ ամենայն սրբոցն ամէն:

✠ Երանելւոյն Եփրեմի [illegible] Ասորւոյ ասացեալ յաղագս
Նինուէի

Գլուխ: [illegible]

ԱՀԱ ՀՐԱՄԱՆ ՀԱՍԵԱԼ առ մարգարէն Յօնան քարոզել Նինուէի: Լուաւ ՚ի քաղաքն, եւ զահեղ ձայն նորա խռովեցոյց զամենեսեան. քաղաքն հեթանոսաց խռովեցաւ ՚ի ձեռն քարոզին եբրայեցւոյ: Ի մտանելն յօնանու ՚ի ծովն՝ յուզեցան ալիք ծովուն. եւ յորժամ ել ՚ի ցամաք, խռովեցոյց զցամաքն: Խռովեցաւ ծովն ՚ի փախչելն նորա. եւ շարժեցաւ ցամաքն ՚ի քարոզելն նորա: Դադարեցաւ ծովն աղօթիւք. եւ ցամաքն՝ իւրով իշխանութեամբ. Աղօթք զյօնան փրկեաց. եւ զնինուէացիս խնդրուածք իւրեանց: փախեաւ յօնան յար եւ նինուէացիքն ՚ի բարբառէ. զի պարտապանք էին երկոքին կողմունքն. բայց ապաշխարութիւն ցուցին եւ ապրեցան ՚ի նմանէ: Ուսաւ յօնան թէ պարտ է կեալ ապաշխարողաց. զի

իբրև եղև նա ՛ի ծովն՝ եւ եւս զքաղաքն և ե-
բաց զբերան իւր քարոզել։ Յորժամ նինուէ
և տարածեցաւ. մի եբրայեցի խռովեաց զքա-
ղաքն առ հասարակ։ Յոլէց յօնան զբերան
իւր՝ և ետ գուժ նինուէի։ Մինչ բաշխէր այ-
նոցիկ՝ որք լսէինն։ Յոբեկ ձայնիւ իւրով
զզօրութի թագաւորին. զի քաղաքն ամ տա-
պալիւր իվր նդ։ Իմի ձայն՝ ամենեցուն բա-
ժակ մահու արբուցանէր։ Յորժամ թագա-
ւորն տարածեցաւ. ընկեց զթագ իւր և խո-
նարհեցաւ։ Յորժան իշխանքն և տագնապե-
ցան. փոխանակ պատմուճանի քուրձ զգեցան։
Յորժան ծերք պառաւականք. և արկին մոխիր
՛ի գլուխս իւրեանց։ Յորժան մեծատունքն
և բացին զգանձս իւրեանց աղքատաց։
Յորժան փոխատուքն, և մուրհակօքն զարդա-
րութի գործեցին։ Ամենայն մարդ վա ան-
ձին իւրոյ հոգայր զարդարութի։ Ոչ գոյր
անդ մարդ խորամանկ. ՛ի պատերազմ ըստու-
գապէս մտեալ էին. զի իւրաքանչիւր ոք
զանձն իւր շահեսցի։ Յորժան յօնանու գողք
և աւազակք, և դարձուցին զյափշտակեալն
առ տէրս իւրեանց։ Ոչ կողոպտեցեալն ար-
համարհեցին տեարքն իւրեանց. և թողին ա-
ւազակաց զյանցանս նց։ Ամենայն մարդ
զանձն իւր խոշտանկէր. զի բարկութի զամե-
նեսեան կշտամբեաց։ Յորժան ըմպանօղքն և
խոստովան եղեն. և արհամարհեցին զահ բըռ-

նուաճողացն։ Որքան դատաւորքն եղեւեցին·
զի կորեան դատաստանք ՚ի բարկութենէ։
Մեռեալն մարդ զողորմութի՛ ներմանէր· զի հրն
ձեռացն զփրկութիւն։ Որքան յօնաւորու մեղա
հորք· եւ խոստովան եղեն զմեղս իւրեանց։
Որքան եւ ժողովուրդն ազատեցաւ, եւ մեր
կացած զազատութի՛ իւր ՚ի ձայնէն յօնա
նու եւ տիկնեայքն զհպարտութի՛ խորհրդոց
իւրեանց ցածուցին։ Յաչս այնր ապաշխա
րութե՛ մերս ոտղ ըստծեր է· յաչս այնր խըն
դրծածոց՝ մերքս իբրեւ նշմարանք են։
Սակաւք ՚ի մարդկանէ թողուն զպարտս պար
տամնացն· իսկ յայնր պահու նինուէացիքն
զծառայս եւ ազատեցին առանց գնոց։
Իբրեւ առաքեցաւ յօնան ՚ի նինուէ ՚ի քաղաքն
յայն՝ ՚ի ձայն բարձր աղաղակեաց եւ ասէ· այլ
եւս երեք աւուրք եւ նինուէ կործանեսցի· եւ
՚ի ձայնէ նր՝ շարժեցաւ քաղաքն· միգամած եւ
մառախլամած սրտաբեկ լինէր նինուէ· զի ե
տես զերեսս մարգարէին լցեալ ահագին
սաստիւք։ Ո՛չ եւս խրատ քաղաքացւոցն այնո
ցիկ քարոզողն այն թէ ապաշխարեսցէ՛ք· զի
յայտ արարեալ թէ որք ներեալք էցեն՝ պարտ
է նց զի ինքեանք խնդրեսցեն զմ օգուտ իւ
րեանց։ Փակեաց զդուռն ընդդէմ նոցա·
զի ցուցցէ թէ քանի՛ բախիցեն· զի որչափ
եւ խնդրէ մեղուցեալ ապաշխարողն՝ առցէ
զողորմութի՛ խնդրելոյն իւր։

Զայնն ահեղ դողացուցանէր զքաղաքն. զի
տեսանէին ամենեքեան զայօնան եւ խռովէ-
ին. զի խուրև զխոհակէր կայր 'ի մէջ նոցա:
Հիւանդք անկեալք՝ յարեան եւ ընթացան
յապաշխարութիւն: Հիւանդք թողին զմահիճս
իւրեանց. զի գահավյան բարկութեն տեառն:
Ողջք հիւանդացեալք էին 'ի հիւանդու-
թիւն ցանկութեան: Խոստովանեցան ճաշակք թա-
գաւորաց եւ ընթրիք մեծամեծաց: Եթէ որ
ղայք սոնդեայք պահէին, ո՞վ էր որ խընդ-
րէր ուրախութիւն: Եթէ անասունք 'ի ջրոյ
հեռանային, ո՞վ էր որ գինի ըմպէր: Եթէ
թագաւորն քուրձ զգենոյր, ո՞վ էր որ պատ-
մուճան ագանէր: Եթէ բոզքն սրբեցան,
ո՞վ էր որ յամուսնութիւն մերձենայր: Եթէ
ըկուէք զարհուրեցան, ո՞վ պիտոյանայր անդ-
ծաղը. վա՞ զի հանապազ երերեւր քաղաքն,
եւ ո՛չ ոք էր որ պահէր զսուն իւր: Ընկե-
ցեալ կայր ոսկին. եւ ո՛չ ոք գողանայր զնա:
'Ի բաց կային գանձք, եւ ո՛չ ոք յափշտակէր
զնոսա: Որդեկին պատշուեալքն զաչս իւ-
րեանց, զի մի՛ հայիցին 'ի կանայս: Տղեղացու-
ցին կանայք զդեղս իւրեանց. զի մի՛ ոգեղա-
ցուացեն զպատանիս. քան զի ճշմարտապէս
գիտէին եթէ հասեալ է վախճան կորըս-
տեան իւրեանց: Ամենայն մարդ հալածէր
զմեղս: Ամենայն մարդ զընկեր իւր յաղօթս
կոչէր: Ողջ ամ քաղաքն 'ի մէջ ապաշխարու-

Թեւան մի մարմին. զի առ հասարակ մասնե
ցան 'ի կորուստ: Մայրերուչէր և լալն տը
ղայոցն, քան զի զնմ քաղաքն լացուցանէին:
Խլրումն ձայնից անմեղացն՝ զսիրտ և զաղիս
ամենեցուն գալարեցուցանէր: Ոմանք մոխ
րովք թաւալէին. որոց աչքն խղեալ և ըն
կեալ լինէին: Գլուխք սորանց և կանանց խո
նարհութ̃ի ըստացան: Այլ մայրն 'ի միջի. և
մանկունքն շուրջ պատեալ նորա. և բուռն
հարեալ զմայրն իւրեանց յինքեանս ձգե
ին. զի փրկեսցէ 'ի մահուանէն յայնմանէ:
'Ի ձայնէ՛ շարժմանն՝ փախչէր մանուկն 'ի
ծոց հօր իւրոյ: Ո՜ ցայգ և զցերեկ թըշէ
ին՝ զաճուրսն համարէին, և զաղաղակն բարձ
րացուցանէին. զի պակասեալ լինէին յա
ճուրցն՝ ընդ ելանել աճուրցն. և հոգիքն
'ի մարդկանէն ելանէին: Որդիքն հարցա
նէին լալով զմայրսն և ասէին. պատմեցէ՛ք
մեզ Թէ քանի՞ ևս օր կայ յաճուրցն զոր ա
ռաց մեզ երբայեցին. և յորո՞ւմ ժամու զա
ճուրսն նշանակեաց Թէ կենդանոյն իջա
նելոց իցեմք 'ի դժոխս. և ո՞ր օրէ՝ յորում ընդ
տխեղերս իցէ տարածեցեալ համբաւ կոր
ծանման մերոյ. անցցեն անսօղք և տեսցեն
զքաղաքս մեր տապալեալ իմր̃ տերանց իւ
րեանց: Ո՜ այս էբրև լոճան հարքն յորդւոց
իւրե̃նց՝ եռացուցանէին զարտասուսն իւ
րեանց. և արկանէին զանմեղօքն. զի ո՛չ կա

րէին խօսել ՚ի գթոյն։ Որդեկան պատասխա
նիք նց ՚ի լալոյ տղայոցն՝ արգելուին հարք
զարտասուս իւրեանց։ Ունայնասէին զին
քեանս ՚ի մխիթարել իմաստութեամբ զոր
դիս իւրեանց վն հարցմանցն։ Երկնչէին
հարքն պատմել ճշմարտութիւն որդւոց իւ
րեանց՝ թէ մերձ է օրն. և հասեալ ըստ բա
նի մարգարէին. այլ իբրև զաբրահամ մխի
թարէին զորդիս իւրեանց։ Եհարց իսահակ
մարգարէութբ ցհայրն իւր աբրահամ վն պա
տարագին. թէ ուր է գառն. ոչ յայտնեաց
աբրահամ թէ դու ես գառն. զի մի գալա
րեսցէ զաղիս հօրն իւրոյ ողորմելի ձայնիւն.
և լիցի պատարագն արատաւոր. այլ կապես
ցէ զձեռն նր մինչև հանցէ զսուրն.
Ասեն աբրահամ զորդին իւր զի յօժարա
գոյն էր քան զհայրն. Հնարս խնդրէր թէ
ո՞րպ հանձեսցէ զսիրելին։ Երկեաւ ասել թէ
դու ես. մարգարէացաւ թէ այլ է. մարգա
րէացաւ թէ չէ նա։ Լեզուն աբրահամու՝
դիտէր առաւել քան զսիրտն. ելցուք ասէ
ես և պատանեակս և դարձցուք առ ձեզ. կա
մեցաւ ասել՝ և մարգարէացաւ։ Որպէս
նինուէացիքն զայս ասէին որդւոց. քաղցր
և բարերար է ած. և ո՞չ ապականէ զայս քան
բազմութ. ոչ դառնաս ապականի որդեակք.
և ոչ քաղաքս աւազակի. այլ ՚ի ձեռն ըմպառնա
լեացս մերոյ՝ զերթ յապաշխարութ կոչէ։

Հայրն երկնաւոր՝ որ իմաստուն առնէ զմեզ
գաւազանաւ իւրով՝ բարկութեամբ վարե-
ցաւ զի կեցուսցէ զմեզ. զի որպէս մեք զձեզ
խստութեամբ խրատեցաք իմաստունս առ-
նել զձեզ. նոյնպէս և այն քաղցր և ողորմած
տէրն՝ խրատէ՝ ըզմեզ և փրկէ։ Ա՛հա խրատս
այս մերձ լիցի ձեզ հայելի։ Սակաւ է սէրն
մեր որ առ ձեզ. քան զսէրն աստուծոյ որ
առ մեզ։ Արդ՝ որդեակք տրտմեցեալք լը-
ուեցուցէք զարտասուս ձեր. զի բարկութիւնս
այս անցանէ՛ իմէնջ. և դադարէ՛ շարժումն.
քաղաքս հաստատի, և գաւառս մխիթարի։
Զ այս և ևս քան զայնս՝ խօսեցան նինուէ-
ացիքն ցորդիս իւրեանց. սակայն թէպէտ
խօսէին այսպէս. այլ ՚ի լալոյ ո՛չ դադարէ-
ին. խնդրէին զպահսն բազմացուցանէին. և սուգ-
նային զաղօթսն. քանզի վաղճանին առ դու-
րըս հասեալ էր։ Յարուցեալ թագաւորն յա-
թոռոյն եւ արտաքս. և եցոյց զանձն իւր քա-
ղաքին քրձազգեաց. զի զարհուրեալ էր ՚ի
բարձրելոյն։ Արտասուեաց և թագաւորն.
զի ետես զքաղաքն առ հասարակ սգացեալ։
Լալեաց քաղաքն ընդդէմ արքային. զի տեսա-
նէին մոխիր զգլխով նորա։ Ո՛վ աղօթս այն-
պէս. ո՛վ այնպէս աղաչեաց զած. ո՛վ խո-
նարհեցաւ այնպէս. ո՛վ խնդրեաց այնպէս.
ո՛վ մերկացաւ զաղտեղութի իւր. ո՛վ լռեաւ
ձայն մռուամ և պատառեաց զսիրտ իւր.

ո՞վ եդ զլուծ առաջի աչաց իւրոց. ո՞վ եռանես
այնպէս ճշմարիտ զծածուկս իւր. ո՞վ կարէ
համբերել ձայնի լալոյ որդւոցն. լռեա՞ն թէ
կարծեալ են կեանք ձեր. և ո՞վ լինէր բաւա
կան համբերել գոչմանն ծերոցն. ո՞վ կարէր
լսել ըզլալիւն երիտասարդացն. զի մինչ
հարցանէաց ակն ունէին, յանդունդս հրա
հիրեցան: Ո՞վ ոք ո՞չ լայր՝ յորժամ տեսա
նէր զթագաւորն արտասուօք լցեալ. զի փո
խանակ ապարանից իւրոց՝ յանդունդս իջա
նել կայր առաջի. փոխանակ կառաց պատուի
իւրոյ լուաւ թէ տապալի քաղաքն. փոխանակ
ոսկի գահոյիցն՝ ՚ի գժոխս հրահիրեցաւ:
Կենդանոյն ՚ի մահ հրահիրեցաւ քաղաքն:
Կոչեաց թագաւորն զզօրս իւր. և իբրև ե
կին՝ ելաց ի վ՟ր նոցա. լացին և նոքա ի վ՟ր նր՟:
Եւ ել թագաւորն, ՚ի քանի՞ պատերազմ պատահե
ցայ. և ՚ի քանի ճակատու առաջինեցայ. այ
սօր գողացաւ և լուծաւ անձն իմ. և ո՛չ ոք է
որ օգնէ ինձ և փրկէ զիս: Ո՛ ի՞նչ է պատե
րազմ՝ եթէ ելցուք և յաղթեսցուք ըստ սո
վորութեանն: Հսկայք տագնապէին ՚ի մեծ
համբաւէ մերմէ. զի յաղթեաք բազմաց. բար
բառ մեր զթագաւորս տագնապէր. այսօր
ձայն միոյ երբայեցւոյ դողացոյց զմեզ:
Ո՛ քաղաքս բազում կործանեցաք ՚ի միջի
մերում. և յաղթէր մեզ նինուէ. մայրն հըս
կայից՝ ՚ի մօրջէն տկարէ երկեաւ. առիւծն

'ի մարմնոջ իւրում տագնապեցաւ 'ի յեբրայ
եցւոյն. մինչեւ ց երկիրն ասորեստանի. զի
ձայն յօնանու մինչեւ ց 'ի նմա: Այս Թագա
ւորն խրատ զօրաց իւրոց և ասէ. խրատ տամ
ձեզ ո՛վ սիրելիք՝ մարտեսցուք ընդ ղհսկայս և
մի՛ կործեսցուք ընդ զաւկաւս. ո՞ր մարդ է որ 'ի
փորձու է իւրում ոչ քաջալերի և զօրանայ.
եթէ մեռանիցիմք, եղիցուք ընդ ղհսկայս.
և եթէ կեցցեմք, իբրև զառաքինիս:
Եթէ մահէ, անուն բարուոքէ. և եթէ կեանք
են՝ առաքինութի. երկուս շահս ըստանայ
առաքինին 'ի քաջալերելն իւրում: Մարդ՝ վա
րեսցուք. որք թէպէտ և ոչ ինչ գըտանեմք
այլ զանուն նահատակութե ըստասցուք.
Լուեալ է 'ի հարցն մերոց թէ գո՛յ ա͞ծ ըս
տուգութե. գո՛յ և նր͞ ողորմութի. հաշտե
ցուսցուք զստուգութի նորա. և յաճախես
ցուք զողորմութի նորա. թէ հաշտի ըստու
գութի նր͞, ո՛չ եպերին խնդրուածք մեր.
և ո՛չ պատուհասին աղօթք մեր: Պատերազմ
ծանուցէ ով սիրելիք. և զզէնն ծածուկ առ
ցուք: Լուեալ է մեր յառաջնոցն որք քարո
զէին զճշմարտութին յարարածս, թէ ո՛չ է
զրկեալ մարդկութիւնս 'ի գիտութենէ:
Զարողեցաւ տրտմութի յերկիր. զի հայե
ցին 'ինա լուօղք. նկարեցաւ ապաշխարու
թի, զի յուսասցին 'ինա մեղաւորք: Ո՞վ ոք
ոչ լուեալ վասն ջրհեղեղին. մօտ են առ մեղ

վերոյ ցուցք նշ(անի)· յաւուրսն նոյի 'ի կամենայն մե-
ղան· և պարառածորեցաւ գարդն այն· և անդ-
քարողեցաւ ձայն վ(ասն) ջրհեղեղէն, թէ գայ
անօրէնալըծայն· և բարկացուցին զ(ա)ծ · զի
արհամարհեցին զձայնն զայն : Զայն ուրա
քին և ձայն գրոյն, զջրհեղեղն գուշակէր·
զձայն ուրաքին արհամարհեցին· և զձայն գը-
րոյն այպն առնէին: Իբրև կատարեցաւ տա
պանն, յայտնեցաւ ստուգութիւն· գոչեաց
յանկարծակի ջրհեղեղն իվ(եր)ն(ա)յ· որք զձայն
ուրաքին արհամարհեցին, 'ի ձայն որոտման
ընջեցան· և 'ի ճայթիւն փայլատականացն
կուրացան: Ակսան փութալ առ տապանն
զոր արհամարհեցին· և փակեալ եղև դուռն
ընդդէմ նոցա· զի այպն առնէին զշինելն·
Արդ` ով սիրելիք` մի արհամարհեսցուք ըզ
ձայնն յօնանու եբրայեցւոյ· իմաստութե(ան)
հայեսցուք 'ի նա· և յամ(ենայն) կողմանց տեսցուք
զնա: Ի ծուփ մեծ անկայ ես ով եղբարք վ(ասն)
ձայնին յօնանու. եթէ գուցէ ոք զի զնա յի
մար կոչեսցէ: Պանձ մեծ է նա· և միտք նո(ր)ա
հանճար· տեսիլ իւր գծուծ է և անարգ· և
բան իւր հըզօր և պատուականն : Զեր առա
ջի հարցի ցնա հարցմամբ ըստ կամաց իմոց ·
զի իբրև 'իբոլս քննեցի զնա· և ո՛չ փոխեաց
զբան բերանոյ· և ոչ անկաւ իվայր 'ի ճառէց
իւրոց· զի մեծ է ուժ իւր: Լ՛ ոք որ գանձիւ
ապրի· ևէ որ 'ի սիրոյ երկնչի· եդաք մեք զայ

սովիկ առաջին եբրայեցւոյն. և ապրեցա-
նաև յերկոցունց: ցուցաք նմա մեծութիս,
և ծաղր արար ըզմեզ. և զպատուհաս արհա-
մարհեաց: Ո՜վ բան զոր ասէ՝ որպէս սրով
պատառէ: Ո՜ ճակատ խուր ոչ պղնձի պատ-
րաստեաց. և եմուտ 'ի քաղաքս մեր: Եթէ չէ
նութ՞ի քարոզեալէր մեզ, կարծէաք թէ խո-
րամանկ է. զի որ համբաւ բարի քարոզէ, ըզ
վարձս բարիս շահեսցի:

Պիւթն վն օգտութե առնէ զդիւթութին.
պահելն նորա պատրանք լինին. քաղդէ առ-
սալի զծնունդս նըշխրէ բախտից. և բաղում
ինչս առնու յանմտաց. զի բըժիշկ որ իմաս-
տունն է և ըստոյգ՝ զճշմարիտն ասէ հիւան-
դին: Ո՞վ կոչէ սուտ զմարգարէն զայն. և
թէ սուտ էր, նա ձայն նր պատրանաց լինէր.
այլ արդ՝ միտք նր ճշմարիտ են. և թէ պէտ բը
ժիշկ ոչ երկնչի. սակայն վն վարձուցն հըն-
չանդի. այս եբրայեցի և հաց անգամ ոչ կա-
մեցաւ ուտել 'ի քաղաքիս մերում: Ո՞վ նե-
ղեաց զսա. առանց օգտի բարկութիւն մեծ
քարոզեաց մեզ. զի արդ ոչ երկնչի սա քարո-
զել զայս 'ի քաղաքիս մերում: Լուեալ է
մեր յեբրայեցւոցն վասն մովսէսի և եղիայի
թէ, պահեցին զքառասուն օր թըւով՝ դու-
ցէ այնպէս պահեսցէ և այս մարգարէ:

Մեք եկայք պահեսցուք. զի մեղաք՝. եթէ
սա աղաչէ, ճշմարիտ է. մեք խորքով և մոխրով

աղաչեսցուք · թէ եւ պահք և աղօթք իւր
այսեն · զի մի սուտ լինիցի ի միջի մերում ·
զքաղաքս մեր տապալել կամի · զի զքարո
զութի իւր ճշմարտեսցէ: Պահօք մարտնչի
ընդ մեզ. և մեք պահօք մարտիցուք ընդ նմա.
ոչ եթէ ընդ մարգարէին մարտիցուք · զի
ոչ եթէ նա ինչ մեղաւ մեզ , այլ մեղքն մեր:
Լուեալ է մեր վն համբերութե Յոբայ. զի
իբրև զփող քարոզեցին մեզ զյաղթութին նո
րա : Սատանայ չարախօսեաց զնմանէ ըստ
պատմութե . եթէ չարն այն չարախօսեաց
զարդարոյն. քանզի եւ չարախօսէ վասն մե
զաւորացս: Նա եւ տապալեաց զտուն որդ
ւոցն Յոբայ. և խառնեաց զարիւն նոցա ընդ
գինի. և զբաժակ նոցա ընդ ոսկերս. և տա
պալեաց զտունն իւր բնակչաց իւրոց. երկն
չիմ ով սիրելիք. գուցէ թէ նա առաքի տա
պալել զքաղաքս մեր: Ի պատերազմի թագա
ւորաց յաղթեցաք · սատանայի եւ յաղթես
ցուք աղօթիւք: Ելցեն այսուհետև գունդք
ձեր տալ ընդ նմա պատերազմ: Մ՝երկացէք
և ընկեցէք զպատենազէնս ձեր. և ապաստան
լերուք յաղօթս սրբութեան. անարգեցէք
զբատոհերս տկարս. և ընտրեցէք զպահս ա
ռաքինութե. զի սուրն այն հատանէ զծա
ծուկ անօրէնութի քաղաքիս այսորիկ:
Ո՛չ ինչէ յաղթութին այն՝ զոր առնեքն.
այլ ապա եթէ յաղթեսցուք՝ մեծ է քան զամ

յաղթութիւն: Արդ՝ ես եղէց առաջնորդ այսմ սաստիկ պատերազմիս. իբրև զիս վարեցարուք ով զօրք իմ սիրելիք:

Յայնժամ յորդորեցեալ թագաւորն մերկացաւ զհանդերձս իւր. մերկացան և ամենեքեան զհանդերձս իւրեանց ընդ թագաւորին և քուրձ զգեցան: Ասորեստանեայքն փափկասընունդք՝ յանկարծակի հնդեք եղեն. թաճացան խորքով ոտք զեսաճն. զի նեն գուբ զյօնան գողացեն: Սարատայաճ սատանեայ. յաղթեաց յակօբ եսաւայ. յաղթեցին նինուէացիքն յօնանու. յարեաճ թագաճորն առ զօրս իւր. և ել հայիլ զքաղաքն. քարոզ կարդայր ՚ի քաղաքին. զի ամենեքեն ապաշխարօղք եղիցին. պիղծն մերկացեալ զպղծութի իւր. զի մի վիրաւորեսցի ՚ի պատերազմի: Ագահն թողցէ զագահութի իւր. զի մի սկարասցի ՚ի ճակատուն: Սրտուցեալն հաշտեսցի ընդ ընկերի իւրում. զի ճշմարիտ սարտուցեալն հաշտեսցի ընդ մեզ: Մի ոք վրէժս առցէ յանցանաց. զի և մեզ թողցէն յանցանք մեր: Ջայս քարոզեաց ՚ի քարոզէ քաղաքին. թագաւորն կայր հարհարեալ և վերակացու լինէր զօրաց իւրոց. գոչեաց և մերկացոյց զաղօթս. և իբրև պատրաստեաց թագաւորն և վառեաց զզօրս իւր, խորքով իւրով տայր օրինակ, և զքաղաքն ամ խորքով վառէր: Որդի էր սա սաբելի,

որսորդ եւ առաքինի. Թողոյր զգաղտնիսն. եւ ըզ ցանկութիւնն սպանանէր. փոխանակ ոսկի ապատ կառաց խորոց՝ հետեւոս շրջէր ընդ քաղաքն. զի լուծայցէ ՚ինոցանէ ըզպըղծութիւնն: Դնայր նա խոնարհութբ եւ հաստատէր զքաղաքն յերերելոյ: Եսեւ յոգնան եւ յիմարեցան. եւ վասն որդւոյ ժողովրդեան

խորոյ՝ աղաչէր:

՚Ինինուէ տեսանէր զառաքինութի. եւ լոյր
վմ աբրահամեան զաւակին:

Նոտես թէ հաստատեցաւ զաւակն քանանու. եզաւակն յակօբու էր մոլեալ: Տեսանէր զանթլփատն որք թլփատեցան սրտիւք. եւ թլփատեալքն խոստացան: Դորովէր յօնան զորդիսն ժողովրդեան խորոյ. զի շաբաթուք պարծէին: Տեսանէր դարձեալ ըզթլփատեալս ՚ի մէջ մահու՝ կենաց որդի: Խնդագա հօրն նինուէացւոց գիտաց եթէ պատճառք մահու յանցանք են. եհատ վաղ վաղակի ըզ պատճառ չարեացն. ժողովեցան եւ խորհուրդ առին նինուէացիքն եւ ասեն, ո՞րպէս կեցցուք. եդաշինս ուխտի եդին ընդ ած քաղաքն. զի հաշտեցուսցեն ընդ ինքեանս զած: Իսկ նինուէացւոցն յայտնեաց ած զծածուկ խորհուրդն, եթէ պահքն կարօղ է լուծանել զդատապարտութիւն մյ: Ջ այս յօնան ո՛չ յայտնեաց նմ. զի խնթայր վն փրկութե նմ. Նբրեւ տեսին նինուէացիքն եթէ սաստիկ է

մարգարէին քարոզութին, իմացան զաստուածոյն թէ քաղցր և բարերար է: Ո՛չ դարձան ընդդէմ մարգարէին. զի հաշտեցուսցեն ընդ ինքեանս զգթածն ած: Հաւատացին մարգարէին զստուգութին. և յոյժ շնորհըս ողորմութե յուսացան. թէպէտ յօնան զյոյսն հատանէր, սակայն պահքն բազմացուցանէին զյոյսն. թէպէտ յօնան զսիրտ նոցա բեկանէր. սակայն աղօթքն հաստատէին:

Ս խաւարաւ ծածկեալ ամպն՝ խորքով փարատէին: Մինչ երկրի երերեալ լինէին. և հաստատէր ըզնոյն ցածութին: Դորդվեցաւ քաղաքն ՚ի կործանել. և հաստատեցին ըզնա տուրք ողորմութե. գոչէին երամակք անասնոցն՝ զորս պահէին ՚ի ջրոյ: Գոչիւն էր ազգի ազգի և բարբառս անասնոց և մարդկան Լուաւ ստուգութին զգոչիւն նց. և փրկեաց ողորմութին: Մի էր բռնութի ծառայից և աղախնաց. մի հաց էր խոնարհութե մեծատանց և աղքատաց. մի ըմպելի էր թագաւորին և ռամկին. մի թխութի էր խորքոցն վարձկանին և փափուկ արանցն. և ՚ի մի լուծ մտին ապաշխարութե: Ամենայն քաղաքն երերէր ՚ի պաշարմանէ շարժմանցն. իբրև ճընճղուկ ի մէջ բունոյ խղճիւ նստէին. իբրև լուսանայր, ոչ ակն ունէին թէ օրն բարեաւ երեկոյանայ: Ընդ երեկոյանալ աւուրն, ոչ կարծէին թէ բնաւ ծագիցէ ՚ի նոյն առաւօտն:

՚ի բերան մահու կայր ամ ժողովուրդն. և զդրունս անդնդոց բախէր: Յօնան թրջէր զահուրան. և նինուէացիքն յաղօթս աճէին: Իբրև ետես յունան զարտասուսն նց, եր կեաց յոյժ ՚ի պահոց նց: Յօնանու էր դրդմենին հովանի. և նինուէացւոցն տօթն տապախառն. ետես զանձինս նոցա զի հեղեալ էին իբր զջուր առաջի բարձրելոյն:

Մանկունքն ընթացան ՚ի ծոցս մարցն արտասուելով: Ետես զնինուէ՝ զի էր մոլեգնեալ. ետես զախօն՝ զի էր սգացեալ. և զատորեստան՝ զի էր դղրդեալ. և զերուսաղէմ՝ զի էր հպարտացեալ: Երկեաւ յօնան, զի մի՛ սուտ լիցի քարոզութիւնն իւր. զի դիտէր թէ քարոզութիւն իւր լուծանի՛ ապաշխարութբ: Ետես յօնան զթագաւորն նինուէացւոցն՝ զի ճշմարտութբ երկիրպագանէր այ. ետես և զերոբովամ՝ զի որթուց երկրպագանէր. էհաս օրն կործանման և եղև ամ քաղաքն ՚ի կործանումն. ո՛չ յումեք մնաց շունչ յայս տեսիլ դառնութե:

Կացուցին զողջայն առաջի. և էհաս գոչիւն նոցա յերկինս. իբրու զի երերիւր երկիր նոցա. վասն զի հանապազ շարժէր ՚ի ներքոյ նոցա: Լացին վասն մահուն իւրեանց. զի ոչ ոք էր որ պատէր և թաղէր և մխիթարէր. իբրև յիշեցին զայս՝ աղաղակեցին և ասեն. յոր վախճան հրաւիրեցաք. յարեաւ թագաւորն և

կանայք իւր. և ՚ի բաց եդին զԹագն ՚ի գլխոյ Թագաւորին. զի լռեաւ Թէ ՚ի փլաղիռն կործանիմք. զի ամ՚ քաղաքն միաբան գոչէին առ ած. վասն զի ՚ի չնչել հողմոյն, պղտորիւր հող երկրին. քանզի երկինք խռովեալ էին. ամպ և մէգ զմիմեամբք պատէին. և զօրացեալ Թանձրանայր մառախուղն. փայլակն ըզփայլակն փակէր. որոտումն որոտման պատահիւր. կայծակունք զկայծակունս ըստիպէին. դողումն էր անդ և հիացումն սրտից. զի մարդ ընդ գետին հայէր. լացին ամենեքեան ըզմիմեանս ՚ի կատարել աւուրցն, եթէ հաս ժամն այն. կացին ամենեքեան յատուճան մահու. բուռն հարին զմիմեամբք. վասն զի հաս ժամ յուսահատութե. և ՚ի լալն իւրեանց՝ հայէին ընդ երկինս, թէ եկն գիշեր. և չգայ մեզ տեսանել զառաւօտն. և ասէին թէ յորո՞ւմ պահու կործանիմք. յերեկորեա՞յ արդեօք տապալիմք. եկն երեկոյն և քաղաքն կանգնեալ մնայր. ակն ունէին թէ գիշերի ընկղմեսցի. եղև գիշեր, և նա՛ կայր ևս տակաւին. ակն ունէին թէ յառաւօտուն կործանի. եհաս առաւօտն և բացաւ ողորմութեան դուռն Աստուծոյ ՚ի վր քաղաքին. զի յայն աւուրսն երկիրն ՚ի շարժմանէ ո՛չ դադարիւր: Վեց և եօթն աւուրքն այնուքիկ՝ լաւ իսկ էին մեռելոցն քան կենդանեաց. կենդանիք մեռեալք էին, և չէ

ին թաղեալք. եղբայր եղբօր պատահեալ
լինէր և ոչ ճանաչէր զկերպարանս նորա.
և ոչ ունէին կարաց որոշել զձայն ՚ի ձայնէ և
ճանաչել զնոսա. իբրև զխանձող կրակի էին
դէմք նոցա. մորթք և ոսկերք լոկ մնացին
՚ի նոսա: Արդ՝ այժմ քաղցրութիւն և մար-
դասիրութի Աստուծոյ ծագեաց ՚ի նոսա:
Աւետիք ողորմութեան տուաւ քաղաքին.
ամպք և մէգք որք պատեալ էին զքաղաքն՝
յանկարծակի ցրուեցան և սփռեցան, և եղև
խաղաղութիւն: Յայնժամ յարուցեալ իշ-
խանք քաղաքին, հանին զքուրձն յանձնէ
թագաւորին զոր զգեցեալն էր. և զգեցու-
ցին նմա զթագաւորական ծիրանին. ա-
ռին ՚ի նմանէ զթագն վշտատեսութեան,
և եդին ՚ի գլուխ նորա զթագ արքայութե:
փոխեցին և ամենեքեան զհանդերձս ի-
րեանց յուրախութիւն. եդին ծունր առ-
հասարակ և կացին յաղօթս. համբարձին ըզ-
ձեռս իւրեանց յերկինս. և հանին յամե-
նայն բերանոյ օրհնութիւն և գոհութիւն
և փառս Աստուծոյ. որ դարձոյց ՚ի մահուա-
նէ զկեանս նոցա: Դարձաւ թագաւորն
փութապէս և ել արտաքոյ քաղաքին տեսա-
նել զՅօնան. իբրև ետես Յօնան զթագա-
ւորն և զզօրս նորա ցնծալից ուրախութե,
տրտմեցաւ ՚ի տրտմութիւն մեծ. և դժուար
կեալ ոչ հայէր ՚ի նոսա. իբրև տեսին զյօ

նան տրտմեալ՝ գիտացին թէ մն կենաց իւ-
րեանց է. և մատուցեալ Թագաւորն հան-
դերձ բազմութն՝ երկիրպագանէր նմա և
ասէր. ուրախ լեր ընդ մեզ ով երբայեցի. զի
՚ի ձեռն քո գտաք մեք զփրկութի. ուրախ լեր
ընդ մեզ որդի ամաթեայ. զի ՚ի ձեռն քո ծա-
նեաք զած. Տեսին զի տրտմեալ էր՝ և ասեն.
զի՞նչ չար լինէր քեզ ով երբայեցի՝ եթէ
մեք ամենեքեան մեռանեալէաք. կամ զի՞նչ
վնաս եղև քեզ՝ որ շահեցար զքաղաքս մեր.
Ո՞ի տրտմեալ ես ով երբայեցի թէ կեցու-
ցեր զմեզ. կամ զի՞ սրգաս ով առաքինի՝
թէ ապաշխարօղս և առաքինիս ըստացար.
արժան է քեզ ուրախ լինիլ այսօր. զի ած
ուրախ եղև յերկինս. այսօր ուրախ լեր. զի
ամենայն մարդ ոյն քում երկիրպագանէ.
Ով երբայեցի՝ նայեա՛ յանմեղ մանկունսն
որք ապրեցան. և դիր զձեռն քո ՚ի վերայ դո-
ցա. օրհնեա՛ զգաւառս զայս որ պահեցաւ.

և բազմասցի ՚իմամս յիշատակ քո.

Օրհնեա՛ Յո՛նան զքաղաքս մեր. զի այսու-
հետև անուն քո անուանեսցի ՚իմա. զա-
հուրս զայսոսիկ պահեցաք խնամսին մեք և
դու. լո՛յծ զպահս քո և ուրախ լեր ընդ մեզ
որդի երբայեցւոյ. զի քաղաքս և Թագա-
ւորս մեր խոնարհին և երկիրպագանեն քեզ.
Զայսոսիկ և առաւել քան զսոսա՝ խօսե-
ցան նինուէացիքն.

Լուի հոգւին որ ՚ի բերան մարգարէին . և լս
կամն լսել նմա նինուէացիքն. զի հարցանէր,
և ինքեան ՚ի քննութե մտանէր . վն ձէր ընդ
նմա ՚ի բերանոյ նորին . յերկուս դէմս խօ
սէր ընդ նմա զայն և զմարգարէին ՚ի լուր
ամ ժողովրդեանն: Ասէր ած վն քաղա
քին, եթէ՝ յօնան՝ տրտմեցար վասն տկար
դըդմենւոյն . այդ դըդմենիդ որ ցամաքե
ցաւ՝ նմանեացի կենդանացեալ քաղաքիս
այսմիկ. դըդմենին լիցի քեզ վարդապետ. և
ուսիր ՚ի նմանէ զհանճար իմաստութեան :
Յանարգ դըդմենւոյդ փորձեա և ճաշակեա,
թէ զի՞նչ համիցէ գթութեն այ. տաղավար
քո լիցի քեզ հայելի. դու տաղավար միջերկ
րի հարկանես. և զդդմենիդ անարգ՝ պահես.
և զքաղաքս մեծ տապալես: Ո՞ւր է ստուգու
թի քո յօնան. ու տաղավարն է ողորմութի
քո յօնան, և ու քաղաքս խստութիւն. զքա
ղաքս դդմենւոյն ո՞չ համարեցեր . զամե
րեն դդմենւոյն պատուեցա քան զայս խօ
սուն մարդիկքս. զկորուսն դդմենւոյն և զծա
ղէկն նդ պատուեցես քան զանմեղ տղայսն:
Լուան զայն քաղաքին բնակիչք՝ և ընդ մի
բերան հանեին զօրհնութի և զփառս այ . զի
փոխանակ նոցա մարգարէն դատիւր: Ուստ
արար ած զբան մարգարէին. և յօնան վրէժ
խնդիր լինէր այ զի մի սուտ լինիցի ած:
Յարեաւ յօնան և ելեալ ՚ի քաղաքէն և եր

կէր ետուր նմա. ժողովք ժողովրդոց բերէ
ին նմա պատարագս. անմեղքն մատուցանէ
ին նմա զմանկանս իւրեանց՝ և զԱէ հեանդս.
Թագաւորն մատոյց զԹագն և զխոյրն վեր
ջիւքն հանդերձ. յամ բերանոյ փառաւորե
ցաւ խբբե զնա. փառաւորեցին զՅովնան և
հանին ՚ի կառս ոսկի զԹագաւոր:
Ձուկն ՚ի ծովուն կրէր զՅովնան, և կառն ՚ի
ցամաքի: ՚Ի ծովուն՝ ձկունքն երթային ա
ռաջի նորա. և ՚ի ցամաքի հեծելազօրքն: Անհերձ
զծոցն յիջանելն խուռամ: Ձուկն եկուլ
զնա, զի ուժգին էր. և Թագաւորն որ լը
ռաւ նմա սաստիկ էր: Ձուկն շաւիղս պատ
րաստէր նմա. և Թագաւորն ճանապարհս
հորդէր. զձուկն ձկունքն ուղարկէին. և ըզ
կառն՝ ժողովք զօրացն: Որքայն նինուէա
ցւոց հրեշտակս առաքէր առաջի նորա. զի
մարգարէին օթևանս պատրաստիցեն՝ որ ի
ջանիցէ ՚ի նմա: Աստուած ցուցանէր ճանա
պարհ ձկանն թէ ո՞ւր գնասցէ. և պարգևօք
և պատուովք ելանէր Յովնան ՚ի փառաւոր
կառս և գնայր: Ամենայն մարդ ընդ առաջ
ելանէր նմա. Թագաւորք զարհուրէին ՚ի
նմանէ. և դշխոյին ամենեքեան ՚ի նմանէ:
Ա՛ղբարք իմ ահագին կուրութին կայ ՚ի խնդրոս
մեր. և ո՞վ իցէ որ ո՞չ լացցէ զմեզ. սիրունն է
մեզ ժամանակեայ կեանս մեր քան զկեանս
խոստացեալս: Ժամանակեայ սեղանս մեր

սիրելի՛ է մեզ. քան զաեղանս արքայութ̅. և
լաւ է մեզ պարտեզ բանջարոյ՝ քան զոր ժա
ռանգեաց աճապակն. ընդ սակաւ ծառոց
աշխարհիս՝ 'ի ծառս կենաց փոխեցաւ. երբե
մին սպառնալիք մարդկան՝ առաւել զար
հուրեցուցանեն զմեզ քան զդեհեանն. զի
յօնան և նինուէ՝ հայելիք եղեն տիեզերաց:
Ի հասանել յօնանու յաշխարհն իւր՝ դար
ձուցանէր զուղարկաւորսն իւր. ամաչէր յօ
նան 'ի նոցանէ. զի գուցէ զկուապաշտութի
ժողովրդեանն իւրոյ տեսանիցեն. գուցէ
տեսանիցեն հեթանոսքն և ուսանիցին զմեղս
նց. 'ի ժողովրդենէն խիթայր թէ գուցէ
քակիցէ զվէրս կնքեալս և զբժշկեալս. եր
կեաւ յօնան ապականիլ 'ի ժողովրդենէն
իւրմէ. և ասէր թէ մտանիցեն և ապականես
ցին այս ապաշխարողքս. և արձակել զնս ա
ռանց, պատճառանաց՝ ամաչէր. և ընդ եր
թալն նց՝ խիթայր. զի մի մտանիցեն զաւակք
քանանու և այպանիցեն զչաւակսն աբրա
համեան: Ունէր զշնորհս նոց. համբուրէր
զնս սիրով. և օրհնէր սրբութ̅. խնդրէր 'ի նո
ցանէ և ո՛չ պատկառէին. համբուրէր զնս և
ո՛չ դառնային: Գամք ասեն .Է. քե զյաշխարհն
քո. և ուսցուք 'ի նոցանէ զսրբութին. զի
աղաղակ մբ շրջի 'ի նմա. մտցուք 'ի նա և
տեսցուք զպարկեշտան 'ի նմա. մտցուք և
տեսցուք 'ի նմա զճշմարիտն. մտցուք և տես

ցուք զայն՝ յորում ոչ բնակէ կռապաշտու-
թիւն. մտցուք և տեսցուք 'ի նմա զերանե-
լեան զայնոսիկ, յորում ոչ գոյ նենգութի̃.
մտցուք և տեսցուք զառաքինեան զայնոսիկ՝
որք օրինակք եղեն այլոց, հեռի՛ գոլով 'ի
բանբասանաց: Մ՛ի զրկեր զմեզ ո՛վ եբրայե-
ցի զուղարկօղս քո յօգտութենէ մերմէ:
«Թէև եղաք մեք ապաշխարօղք. թէև լեցուք ար-
դարք. փոխանակ ոտից վարձուց վաստակոց
մերոց՝ թուլացո մեզ մտանել 'ի ժողովուրդս
քո. զի առցուք 'ի նոցանէ օրինակ, որ լի՛ է
ուրախութե̃: Իսկ ո՛վ կարէ բաւական լի-
նիլ ապատմել զոր խօսեցան ապաշխարօղքն
այնոքիկ. զի թէպէտ զայն ասացին և առա-
ւել քան զայն՝ լսէր յօնան և լուիկ կայր.
և գլխարկեալ 'ի գետին հայէր. զի ամա-
չէր նա վասն ժողովրդեան իւրոյ. զի ա-
նօրէնք էին և անիրաւք:

Չէր ինչ փոքր այս որդւոյն ամաթեայ, քան
որ ինչ և դդմենւոյն: Ահա խնդրէր ան-
ձին իւրում. չա՛ր էր նմա քան զնոսա, որք
առին և ընկեցին զնա 'ի ծովն. բայց յօնան
աստանօր յոյժ դժուարաւ թագուցանէր
զանօրէնութի̃ ժողովրդեան իւրոյ: Որպէս
հաճեաց զնաւավարն սուտ բանիւք 'ի փախ-
չելն իւրում. այսպէս հաճէր զնինուէա-
ցիսն: Տարեկան մեծ է ասէ յերկրին մե-
րում. և ո՛չ է հնար օտարի ումեք մտանել.

տարեկանն է ժողովրդեան իմում. և չէ՛ ո-
րէն հեթանոսաց մտանել անդր:
Արթո՛յք դուք ու այժմ և դարձջի՛ք խաղա-
ղութե՛ յաշխարհն ձեր. և ապա եկե՛ք յետ
ժամանակի, յորժամ կատարեսցին տարե-
կանքն մեր: Յոհան ՚ի նմանէ միամիտքն եւեր
կրպագեալ դարձան ՚ի նմանէ: Աւին օրհնու-
թիւն ՚ի նմանէ. և չոգեալ գնացին խաղաղու-
թե՛ յաշխարհն իւրեանց: Օրհնութիւնս և
փառս եւտուն Աստուծոյ, որ ոչ յամօթ ա-
րար զժողովուրդն հեթանոսաց. օրհնութի՛ւն
ամեն նմա, որ սիրեաց զարդար ապաշխա-
րողսն. օրհնութիւն նմա եօթելոյ նորա:
Աստուածք ամէք՝ օրհնութիւն և գոհութի՛ւն
և փառք Հօր և Որդւոյ և Հոգւոյն
սրբոյ. այժմ և միշտ և յաւի-
տեանս յաւիտենից Ամէն:

Այլ ճառընթերցուածն Բանին վասն յօնանու.

Գլուխ: ԺԴ:

ՔԱՆԶԻ ՅՕՆԱՆ ՕՐԻՆԱԿ էր քս՟ի. և նինուէ օրինակ էր բոլոր աշխարհիս. զի որպէս յօնան ՚ի փոր ձը-կան մնաց կենդանի երեք տիւ և երեք գի-շեր. նոյնպէս և տէրն մեր յս՟ քս՟ ՚ի գերեզ-մանի մնաց կենդանի զերիս տիւս և զերիս գիշերս. զի որպէս յօնան շրջէր ՚ի յատակս ծովուն ՚ի մէջ ձկան փորուն. նոյնպէս և տէրն քս՟ ՚ի գերեզմանի էր և շրջէր ՚ի խորս դժո-

խոց և քակէր զնա ։ Ի սմ̃ յօնան քարո զեաց նինուէացւոցն. և ապրեցան նինուէ ացիքն. նոյնպէս և քս̃ի աւետարանաւն բո լոր աշխարհիս քարոզեն և ազատեն զնս̃ ։ Ի սմ̃ նինուէացիքն յուսացան յա̃ծ և ապաւինեցան ի պահս և յապաշխարութիւն. և զ̃. աւուր պահօք և ծոմօք և աղօթիւք դար ձուցին զբարկութիւն ա̃յ, և փրկեցան ի պա տուհասից սատակմանէ. այսպէս և մեք փըր կիմք. զի մե̃ծ զօրութիւն և աքանչելիս ունի պահքն և աղօթքն ։ Ի առաջին պահքն այն էր որ ա̃ծ պատուիրեաց ի դրախտին չու տել ի պտղոյն. և թէ պահեալ էր ադամ ըզ պահքն, յայլ բարձրագոյն պատիւ բարձրա նայր. և դեռ և ս ա̃մ ծննդովքն ի մէջ դրախ տին լինէին ։ Օրինակ ձեզ որ Անովք և Եղիա պահօք և աղօթիւք վերացան ի դը րախտն ադամայ. և մարմնօք շրջին ի մէջ նր̃ա։ Ի ադամ. պտղոյն ճաշակելովն՝ ելաւ ի դրախտէն. և. Ե. օր պաք պահելով՝ աւետիք ընկալաւ ի հրեշտակէն վասն մարդեղու թեն ·Քս̃ի։ Պահօք և աղօթիւք Նոյ ապրե ցաւ ի ջրհեղեղէն։ Պահօք և աղօթիւք Աբ րահամ արդարոյ հայր կոչեցաւ և զա̃ծ ի սեղանն իւր իջոյց։ Պահօք և աղօթիւք Մով սէս զծովն պատառեաց և զի̃էլ ազատեաց, և ընկղմեաց զփարաւոն և զա̃մ զօրս իւր։ Պահօք և աղօթիւք երեք մանկունքն ի մէջ

կրակին ոչ այրեցան։ Պահօք և աղօթիւք դա
նիէլ ապրեցաւ ՚ի բերանոյ առիւծուցն։
Պահօք և աղօթիւք յօնան ապրեցաւ ՚ի փորոյ
կիտին։ Պահօք և աղօթիւք ապրեցան նին
ուէացիքն։ Պահօք և աղօթիւք դաւիթ վե
րացոյց զմահն։ Պահօք և աղօթիւք յոբ ար
դար կոչեցաւ։ Պահօք և աղօթիւք ովակիմ
և Աննա ընկալան զաւետիս ծննդեանն Մա
րիամու։ Պահօք և աղօթիւք յովհաննէս ար
ժանի եղև մկրտել զՏէրն մեր։ Պահօք և աղօ
թիւք յաղթեաց Քրիստոս զսատանայ. Ինչ կանէր
Քրիստոս զպահքն և զաղօթքն. զի Քրիստոս սատանայի
ստեղծօղն էր և ոչ կամէր առանց պահոց
յաղթել սատանայի. վասն զմեզ ուսուցանե
լոյ ինքն Քրիստոս պահք պահէր և աղօթք առնէր
զի Քրիստոս ասէր առաքելոցն թէ՝ այս ազգ դև
ոչ ելանէ, եթէ ոչ պահօք և աղօթիւք։
Սի բազում զօրութիւն ունի պահքն. վասն այն
սուրբ հայրապետքն զտարուայն կէսն պահք
սահմանեցին. և զկէսն ուտիք. զի հոգին և
մարմինն եղբարք են. զտարուոյն կէսն պահք
պահեն վասն հոգւոյն. և զկէսն ուտիք վասն
մարմնոյն. որ այս աշխարհականացն է։
Իսկ քահանայից և կրօնաւորաց պարտ է հա
նապազ պահել. վասն այն ամենայն Ճգնա
ւորք հատան ՚ի կերակրոց. ոմանք սիսեռով
պահէին. և ոմանք ապտով պահէին. և ոմանք

բանձարաւ չաստանայէն. ոմանք վիմաս արա
ծէին. ոմանք 'ի ցրտոյն մաշեցան. և ոմանք
'ի տօթոյն հալեցան. ոմանք զքունն կտրե
ցին. ոմանք զոտնականգնութիւն բառնացան.
ոմանք ծարաւ կենային. և այլք բազումք
պէսպէս չարչարանօք զանձինս ետուն վս̃
սիրոյն Քրիստոսի:

Արդ՝ որք կացին և պահեցին 'ի սակաւ ժա
մանակս, արդար կոչեցան յաւիտեանս յա
ւիտենից. իսկ որք ոչ պահեցին ըզպատուի
րանն աստուծոյ, կորեան որպէս կայենի որ
դիքն ջրհեղեղաւ. և որպէս սոդոմայեցիքն
հրով՝ աստ տանջեցան և անդ ևս տանջե
լոցեն:

Իսկ որք պահեցին նման նինուէացւոցն փըր
կեցան յամենայն պատուհասէ. և անդ զար
դարեալք են ա̃ծային ճառագայթիւքն և
փառօքն յամենայնի:

Նոյնպէս և զմեզ զարդարեսցէ իւր աստ
ւածային փառօքն
Ամէն:



Պատմութիւն Մարիամու · եւ ծննդեան Յովակիմայ եւ Աննայի ։

Գլուխ։ ժթ։

ՅԱՆ, Զ․Ի ՈՒՆ,ՕՂ,Ք ՍՈՐԱ
ովակիմ եւ աննա ծերացեալ էին · եւ զաւակ ոչ ունէին · քանզի ամուլ էին։ Իսկ ՚իաօնք հին օրինացն՝ առեալ ո

վակիմ զմատաղն և երթայր երկրպագանել
'ի տաճարին տն̃. և մատուցանել զմատաղն. և
մինչ դեռ գնայր 'ի ճանապարհին, խաղաց
մատաղն Յովակիմայ. յառաջեաց քան զընկե-
րացն. Իսկ նոքա դժուարացան և ասեն.
ո՛վ այր դու՝ արհամարհեալ 'ի տեառնէ, և
նախատինք մարդկան. զի դու ամուլ և ան-
զաւակ ես. զի հացքո չէ ուտելոյ և մատաղդ
անընդունելի. զի դու չես հաւասար մարդ-
կան. ընդէ՞ր ընկեր լինիս մեզ. և խառնես
զմատաղն քո 'ի մեր մատաղն. և բազում նա-
խատինս ետուն նմա։ Իսկ Յովակիմ կալեալ
զմատաղն իւր, և որոշեալ 'ի նոցանէ ողբա-
լով և արտասուօք գնայր. և նոքա ուրախու-
թեամբ և խնդալով գնային. Իբրև հասին
'ի տեղի ուխտին, մատոյց Յովակիմ զմատաղն.
և զծունկն 'ի գետինն եդեալ, և զձեռս
տարածեալ առ Ած̃, աղօթէր արտասուօք
և ասէր. Ո՛վ տէր ըստեղծօղ և արարիչ
ամենայնի. զի տուեալ ես մ̃մ կենդանեաց
անձանց և պտղաբերութիւն և զաւակ որ
դէծնութեան. որ միշտ խնդան և ուրախա-
նան իվերայ զաւակաց իւրեանց. և ես մի
'ի նոցանէ անարգեալ անզաւակ և անպ-
տուղ. և նախատինք մարդկան. աղաչեմ ըզ
քեզ տէր. թէպէտ չեմ արժանի. այլ դու
արժանի արա զիս և մի անտես առներ ըզ
խնդրուածս իմ։ Նա՛ այլ բազում աղօթս և

մաղթանս մատուցանէր. և ապա դարձեալ 'ի
տունն իւր. և ետես զկինն իւր տրտմեալ. ա-
սէ այրն ովակիմ, ընդէ՞ր ես տրտում. և ասէ
աննա ընդէ՞ր ոչ լամք և տրտմիմք. որ ասելն
և նախատինք եմք 'ի մէջ աշխարհի քան զամ
կենդանիս: Ասէ այրն զնոյն լալով ասէ՝ թէ
զիս և որոշեաց 'ի յերամոց. վս որոյ և նախա
տինք արարին, թէ դուք ամուլ էք և անզա
ւակ. վսորոյ բազում լացս լացին և կոծեցին:
Ասէ ովակիմ ցկինն. ահա ած ընտացուցածս
քեզ լիցի. զի ես ելանեմ 'ի լեառն և անդ ա-
ղօթեմ. և ելեալ 'ի լեառն աղօթեաց պահօք
և ծոմով զքառասուն .խ. և աննա կինն նր նոյն
պէս պահօք և աղօթիւք պահեաց զքառասուն
.խ. և 'ի միւսում աւուր մինչդեռ նստէր ընդ-
հովանեաւ դափնիթեայ ծառոյն՝ լայր և
արտասուհէր և սուգ առնէր իվերայ իւրն
և ասէր. վա՜յ քեզ տա՛ռապեալ աննա. մինչև
ցայսօր որդի չունէիր և այժմ այրի եղեր:
Վա՜յ քեզ ա՛ննա նախատեալդ 'ի մարդկանէ
և անարգեալդ 'ի կանանց: Վա՜յ քեզ որ ան-
բեր և չոր ծառ ասեն քեզ: Վա՜յ քեզ զի ա-
մենայն ծառ և տունկ պտուղ բերեն և դու
ո՛չ. զի ամ թռչունք ձագ ունին և դու ո՛չ.
զի ամ սողունք և ձկունք պտղաբերեն և դու
ո՛չ: Վա՜յ քեզ ա՛ննա զի ամենայն գազանք և
անասունք ծնունդ ունին, և դու ո՛չ. և
այլ բազում բանիւ սուգ առնէր և լայր:

Եւ հայեցեալ ՚ի տէֆնէի ծառն, որ ճընճ-
ղուկն թռուցանէր ըզձագս իւր եւ ուրախա-
նայր, զձեռքն տարածեալ, յաչացն արտա-
սուս թափէր եւ ՚ի խորոց սրտէ գոչէր առ
տէր եւ ասէր: Տէ՛ր եւ արարիչ ամենայնի՛ ա-
րա զիս ուրախ իբրեւ զճընճղուկս զայս ձա-
գախառն երամով: Ի նոյն ժամայն երեւե-
ցաւ հրեշտակ տեառն եւ ասէ ա՛ննա՛ լուաւ
տէր աղօթից քոց. եւ ՚ի քէն ծընցի դուստր
մի երանելի. զի ամենայն ազգ եւ ազինք երա-
նեն զծնեալն ՚ի քէն. եւ անուն նր̅ կոչեսցի
ՄԱՐԻԱՄ որ թարգմանի լուսաւորեալ:
Իբրեւ լուաւ զայս ՚ի հրեշտակէն գոհացաւ
զաստուծոյ. եւ առեալ զոմն ՚ի յազգականաց
իւրոց երթայր առ այր իւր. զի աւետիս տա-
ցէ նմա: Իսկ ՚ի կէս ճանապարհին՝ գտեալ ե-
լաւ այրն իւր. եւ ասէ աննա ընդ ովակիմ.
երանի քեզ ովակիմ զի լուաւ տէր աղօթից
քոց. զի տալոց է մեզ ած̅ դուստր մի երանե-
լի. քանզի հրեշտակ ան̅ պատմեաց ինձ:
Եւ ովակիմ ասէ. զի ո՞վ քեզ ասաց հրեշտա-
կըն. նոյնպէս եւ ինձ պատմեաց. եւ ուրախու-
թբ̅ դարձան ՚ի տուն իւրեանց: Եւ ած̅ ետ
նոցա զխնդրուածս նոցա. եւ իբրեւ .է. ամիս
եղեւ, ծնաւ Մարիամ. զի այլ ոչ ոք էր ծնեալ
.է. ամսոյ. բայց Մարիամ ծնաւ .է. ամսական.
զի վն̅ փափագման ծնողացն շուտով եղեւ ծը-
նունդն Մարիամու:

Իբր յերազի տեսանէր ովակիմ. զի չոր գա
ւազանն իւր կանանչացաւ և արմատացաւ.
և եղև ծառ երկնաչափ և պտղալի. և ամ
կենդանիք ՚ի նմա ապաստանէին և զնմա որհ
նէին և գովէին. և ՚ի նմանէ ճաշակէին.
և յաճելանայր պտուղն նորա օրըստօրէ և
ոչ պակասէր: Իբրև զարթեաւ ՚ի քնոյ, գո
հացաւ զատեառնէ. և խոստացաւ զկոյսն
ծառայ տաճարին այ. Իսկ յամեն տարի յա
ւուր ծննդեան կուսին, տանէր զնր կոյսն
յերկրպագութի տաճարին այ. տանէր մա
տաղ և պատարագ և մեծ տօնախմբութի և
ուրախութիւն: Իբրև եղև մարիամ. գ̃. ա
մաց, կտրեցին յըստենէ. և տարան յերկըր
պագութիւն տաճարին. և սպիտակ երինջ մի
ընդ նմա ընծայ. Իբրև քահանայն ըննեաց
զերինջն, տեսանէր զի ՚ի միջեւս երակէն կաթն
ելանէր փոխանակ արեան: Իսկ այլ քահա
նայքն և ամ ժողովուրդքն տեսին զսքանչե
լիսն և զարմացան: Իսկ քահանայապետն մար
գարէացաւ և ասէ. դուք ամենեքեան վը
կայ եղէք. զի ՚ի մէկ կուսէ ծնանելոց է փըր
կիչն իսրայելի:

Իսկ ովակիմ յանձնեաց զդուստրն իւր քահա
նայից ՚ի տաճարին. և յայտնեաց նց զտեսիլն
իւր. և զաւետիսն հրեշտակին. և ինքն գնաց
՚ի տուն իւր. և յետ սակաւ ժամանակաց հան
գեան ՚ի խաղաղութի ինքն և կինն իւր. և մա

րեամ մնաց 'ի տաճարին ընդ այլ կուսանսն, մինչև .ժդ. տարեկան եղև. իսկ այլ կուսանքըն տեսանէին 'ինմանէ բան զարմանալի:

Իբրև ելանէին կուսանքն 'ի տաճարէն, մարեամ միայն մնայր անդ 'ի տաճարին. ձայն լըսէին՝ որք խօսէին ընդ կուսին. և իբրև մտանէին, միայն տեսանէին զմարիամ. երբ հարցանէին թէ ո՞վ էր որ խօսէր ընդ քեզ. և նա ո՛չ տայր պատասխանի:

Դարձեալ երբեմըն տեսանէին զի 'ի յաղօթելն մարիամու, լոյս փայլէին. և կուսանքն պատմէին քահանայիցն զտեսիլն. և քահանայքըն ո՛չ հաւատային. գային և աղօթել տային և ո՛չ ինչ տեսանէին, և սուտ համարէին զտեսիլն կուսանացն:

Իսկ տեսիլ երևեցաւ քահանային և ասէ. քննեա՛ զկուսանսդ և տես թէ ո՛րն է .ժդ. տարեկան. նմա տուր ամուսնանալ վիճակաւ ով որ 'ի ժամ աղօթիցն 'ի տաճարս գտանի. իբրև յառաւօտուն արձակեցան յաղօթիցն, ասէ քահանայապետն՝ ամեն մարդ մէկ նշան 'ի տաճարս թողէք. և դուք 'ի դուրս ելէք:

Իսկ ոմն զմատանին եթող. ոմն զոտիցն, և կամ այլ իրք մի. իսկ յովսէփ զուրպաքն եթող. զի ո՛չ գիտէր թէ զի՛նչ է խօսքն քահանային. ք՟ն զի ո՛չ էր եղեալ այնպէս. իբրև ելին ժողովուրդքն, քահանայն ասաց կուսանացն,

ամեն

կոյս մին նշան առցէ . իսկ մարիամ եւ առ-
զուարթն յօժարէ միայ ։

Դարձեալ կոչեաց ըզ ժողովուրդսն եւ պատ
մեաց նոցա զտեսիլըն հրեշտակին. եւ ասաց ա-
մէն մարդ առցէ զկոյսն՝ ի յամուսնութիւն
որ առեալէ զնշանն ։

Իսկ յովսէփ ասէ ես ծերացեալեմ. ունիմ
երիտասարդ որդիք եղբարք, ո՞չ է ինձ
պարտ ամուսնանալ ։

Ասէ քահանայն՝ ո՛չ թէ իմ է հրամանք, այլ
յաստուծոյ է հրամայեալ եւ պարտ է կատա
րել. եւ ասաց՝ թէ ամէն մարդ զիւր նըշա
նածն տանել եւ մաքուր պահել. եւ հարսա
նեաց պատրաստութիւն տեսանել. եւ յով
սէփ առեալ զմարիամ եւ տարաւ՝ ի տուն.
եւ ուրիշ խուց մի ետ նմա. եւ խրատեաց զմա
րիամ՝ հարկաւոր լինիլ եւ ո՛չ շրջիլ վայրա
բար ընդ ամենայն տեղիս . եւ ետ վերա
կացու նմա զմեծ դուստրն իւր սողոմէ
եւ ինքն ելեալ գնաց՝ ի յօտար եր
կիր . եւ մնաց կոյսն մարիամ
այնպէս երեք ա-
միս ։



Աւետիսն գաբրիէլի վասն Յօհաննու Կարապետի ։

Գլուխ։ Ի։

ԻԲՐԵՒ ԵՄՈՒՏ ՔԱՀԱՆԱՅԱ-
պետն Զաքարիա ՚ի տաճարն խընկար
կել, ետես յաջմէ սեղանոյն այր մի ահեղ.
եւ զահի հարաւ ընդ տեսիլն նր։ Եւ ասէր
Զ՚աքարիա ծնցի կին քո եղիսաբեթ արու
մանուկ. եւ կոչեսցես զանուն նորա Յովհան
նէս. նա եղիցի մեծ մարգարէ ՚ի մէջ իէլի. եւ
գնասցէ առաջի տեառն պատրաստել զճա
նապարհս նորա. նա եղիցի գլուխ ամենայն

մարգարէից. հոգւովն եղիայի և աւետաւոր
արքայութե. գինի և օղի մի արբցէ. նա եղե
ցի ըս՛իեղըն օրինաց և հաւատոյ. նորա՛ եղե
ցի ուրախութի նահապետաց և մարգարէից.
և նա եղեցի պատճառ ամ բարեգործութե:
Նորա՛ հաստատին հաւատք և սիւնք եկե
ղեցւոյ. նորա՛ շինին տաճարք և սիւնք և
տուն այ. նորա՛ կանգնին սեղանք, և խառ
նակին մարդիկք ընդ հրեշտակս. նորա՛ մար
դիկք յերկինս ելանեն. և դևք յանդունդս
կործանին. և այլ բազում բանիւ աւետիս
տայր զաքարիային: Նա՛ նա ասէ՝ դժուարին
է ինձ հաւատալ զայս. զի ես ծերացեալ եմ.
և կինն իմ անցեալ է զաւուրբքն իւր որպէս
կարէ ծնանիլ. և ասէ գաբրիէլ ո՞չ հաւատա
ցեր ինձ. ես եմ գաբրիէլ մեծ. որ կամ միշտ
առաջի այ. վն այն երևեցայ քեզ ՛ի կերպս
մարդկային. զի կարասցես դիմանալ. և եթէ
զփառքն իմ ցուցեալ էի քեզ, դու այժմ մե
ռեալ էիր ՛ի յահէ փառաց իմոց. ապա կապել
եղիցի լեզու քո. և այլ ո՛չ կարասցես խօսիլ
մինչև ծնանի մանուկն և նորա՛ արձակի լե
զու քո. և գնաց ՛ի նմանէ հրեշտակն: Իբ
րև ել զաքարիա ՛ի տաճարէն, հարցանէին
ժողովուրդքն թէ ընդէ՞ր այդչափ յամեցար
՛ի տաճարին. և նա՛ նշանացի խօսէր. թէ տե
սիլ տեսայ. զի կապեալ էր լեզու նորա. և մեր
ձեցաւ առ եղիսաբեթ և յղացաւ. և մինչև

վեց ամիս զանձն թաքուցանէր եւ ոչ ասէր
ումեք: Եւ յետ վեց ամսոյ յղութեան Եղի
սաբէթի՝ եղեւ զի մարիամ գնայր ՚ի յաղբիւրն
ջրոյ, էջ գաբրիէլ հրեշտակն ՚ի կերպս մար
դոյ. եւ ետ ողջոյն Մարիամու եւ ասէ. ողջոյն
ընդ քեզ Մարիամ լի շնորհօք տէր ընդ քեզ.
զի գտեր զշնորհս յայ: Իբրեւ լուաւ մարիամ,
երկեաւ դարձոյց ՚ի նմանէ եւ փախեաւ ՚ի տունն
եւ փակեաց զդուռն եւ զարհուրեալ դողայր եւ
ասէր ընդ միտս եւ քննէր, թէ որպիսի ինչ
իցէ աւետիքս ՚ի յանծանօթ մարդոյ. եւ կամ
նա ի՞նչ գիտէր զանունն իմ. մի թէ պատրող
ոք իցէ. եւ կամի խաբել զիս. Եւ մինչդեռ նա
զայս զմտաւ ածէր, յանկարծակի երեւեցաւ
այրն այն ՚ի մէջ տանն եւ ասաց. ողջոյն ընդ
քեզ մարիամ լի շնորհօք տէր ընդ քեզ՝ զի
գտեր զշնորհս յայ. զի որ ծնանելոց է ՚ի քէն
որդի այ կոչեսցի. եւ տալոց է նմա տր ած զա
թոռն Դաւթի հօր նր. եւ թագաւորեսցէ
ի վր տանն իէլի. եւ թագաւորութեան նր վախ
ճան մի լիցի: Ասէ մարիամ՝ որպէս լիցի ինձ
այդ. որ անփորձ եմ ՚ի մարդոյ. եւ կոյս եմ մար
մնով. ուստի՞ լիցի որդի առանց մարդոյ. մի
թէ կամի՞ս խաբել զիս. Եւ արտաքս զի ոչ կա
րեմ հաւատալ այդպէս սուտ բանից. զի ոչ
ոք գիտացէ զգալն քո եւ զգնալն. եւ թէ ոչ ե
լանես ՚ի տանէս, ձայնեմ որդւոցն յովսէ
փայ եւ գան եւ արտաքսեն զքեզ անարգանօք:

Ման հրեշտակն գիտեմ զի կոյս և անարատ
ես. անմեղ ես և ՚ի չարէ զատ ՚ի մէջ կանանց
ազգի. զի վն իւր պատրաստեաց զքեզ տր.
և ընդ քեզ հաճեցաւ և քաղցրացաւ ած.
զի դու ես տաճար և տեղի բնակութե նր.
քան զի որ ՚ի քէն ծնանելոց է ՚ի հոգւոյն
սրբոյ է և ճշմարիտ ած. զի առանց մեղաց՝
և առանց մերձաւորութե ծնանիս. զի հո
գին սբ եկեսցէ ՚ի քեզ. և զօրութի բարձ
րելոյն հովանի լիցի իվր քո: Ո ի այն ածն
բնակի ՚ի յորովայնի քում որով արարածքն ըս
տեղծան. զի այն ածն բնակի ՚ի քեզ, որ
յականարկելն իւրում ամ արարածք սարսին
և դողան. զի այն ածն բնակի ՚ի քեզ, որ ա
րեգակն և լուսինն և ամ աստեղք նովաւ
շրջին. զի այն ածն բնակի ՚ի քեզ, որ ինն
դասք հրեշտակք առաջի նորա դողան և բա
րեբանեն. օրհնեն և գովեն. բայց յահէ փա
ռաց ածութե ոչ կարեն հայիլ ՚ի նա:
Ման մարիամ. այր դու՝ երկնչիմ ՚ի քէն. զի
միտք իմ ոչ կարեն հաւատալ քեզ և բանից
զոր դու ասացեր. թէ արարածք ամ ըստեղ
ծանք են ՚ի նմանէ. և երկինք և երկիր ՚ի նմա
նէ դողան. արեգակն և լուսինն բանիւ նո
րա շրջին. և զի ասես թէ՝ դասք հրեշտա
կաց ոչ կարեն հայիլ ՚ի մեծութի փառաց
նր. և զարմանալ ասես թէ, յորովայն քո բնա
կի, զայդ ոչ կարեմ հաւատալ. զի յարեգակն

որ նորա ըստեղծուածն է ո՛չ ոք կարէ հայիլ եւտեսանել զերեսս արեգականն. եւ ո՞պ կարեմ հաւատալ թէ արեգականն ըստեղծօղն ՚ի յարգանդի իմ բնակեսցէ եւ ոչ այրեսցէ զիս. կամ այն յորմէ դաշք հրեշտակաց զարհուրին եւ ո՛չ կարեն հայիլ յերեսս նր̄, ո՞րպէս բնակեսցէ յարգանդի իմում եւ ո՛չ այրեսցէ զիս. անճառելին է ինձ հաւատալ քեզ զոր ասես. մի թէ դու ա՞յն ես որ խօսեցար ընդ եւայի ա̄ծանալ. եւ ՚ի պտղոյն ճաշակելովն արտաքսեցաւ ինքն, եւ արտաքսեաց զմեզ ՚ի դրախտէն։ Իսկ թէ մայրն մեր եւա ՚ի խօսիլն օձին. թէ քննեալ էր, եւ փութապէս չէր հաւատացեալ. եւ չէր կերեալ ՚ի պտղոյն, դեռ եւս ՚ի մէջ դրախտին էր ինքն, եւ մեք ամ̄ ծննդօքն նորա. զի ասաց օձն թէ երբ ուտես ՚ի պտղոյդ, ա̄ծ լինիս. եւ փութապէս առանց քննութե̄ հաւատաց եւ եկեր. եւ ամենայն ծնընդովքն գերի եղեւ ՚ի ձեռն սատանայի. զի այս . Ե̄ Ռ̄ Ճ̄ Ձ̄ . տարի է. որ ամ̄ ծնունդքն ադամայ ՚ի դժոխս տանջին վս̄ միոյ բանի. վս̄ այն ոչ կարեմ հաւատալ քեզ. զի զայս մեծ բանսդ զոր դու ասես, մարմնեղէն բնութ̄ին զայն ոչ կարէ տանել: Ասէ հրեշտակն գաբրիէլ. ես եմ մեծն գաբրիէլ որ կամ առաջի ա̄ծութե̄ն. նա՛ առաքեաց զիս առ քեզ կերպիւ մարդկային. զի մի զարհուրեսցիս. եթէ ցուցանեմ զփառքն իմ քեզ ոչ

կարեմ դիմանալ. զի ես եմ որ աւետեցի ար
ւի զաքարիայի և ոչ հաւատաց ինձ. վասն
որոյ կապեցի զլեզու նորա. զի այս .զ. ա
միս է որ յղացեալ է ազգականն քո եղիսա
բէթ. զի ոչ բացցի լեզուն զաքարիայ, մին
չև ծնցի մանուկն. զի վասն չհաւատալոյն
կապեցի զլեզու նորա. և դու հաւատաց
ինձ. զի ոչ եմ պատրող իբրև զսատանայ. և
դու ոչ եւայի: Ի յեւայէ պտուղ անի
ծից, և ի քէն պտուղ օրհնութեան:
Յեւայէ դրախտն փակեցաւ, և ի քէն
բացաւ: Յեւայէ փուշն մեղաց, և ի քէն
վարդն .Բ̃ն: Յեւայէ խաւարեցան մար
դիկք, և ի քէն լուսաւորին: Յեւայէ ա
նէծք, և ի քէն օրհնութի̃ւ: Յեւայէ ցաւք
և տրտմութի̃ւ, և ի քէն խնդութի̃ւ և ուրա
խութի̃ւ: Յեւայէ մահ, և ի քէն կեանք:
Յեւայէ դառնութի̃ւ, և ի քէն քաղցրու
թի̃ւ: Յեւայէ խռովութի̃ւ ը̃ն ընդ մարդկան,
և ի քէն հաշտութիւն ը̃ն ընդ մարդկան:
Ուրախ լեր և հաւատա հրաման ա̃յ երկնա
ւորին: Ով սրբուհի պանծալի և թագու
հի, և գովելի սուրբ տիրուհի: Ի այսու
հետև գովեն զքեզ սերովբէք և քերովբէք
փառաւորեն Գաբրիէլեանքս և Միքայէ
լեանքս, և ա̃մ դասք հրեշտակաց երգաբա
նեն զքեզ. աղաչեն զքեզ ա̃մ պարք մար
գարէից. և պարք նահապետաց գովեն զք

քեզ. և՛ի քէն ծննդեան ամ ազգք և ազինք և
քեզ երանեն. եւ քեզ աղաչեն ամ հաւատա
ցեալք: Հաւատամ ինձ. ապա թէ ոչ հաւա
տաս, պատուհաս առնուս նման զաքարիայի:
Նորա մարիամ զայս բանս լուաւ, երկեաւ
՚ի հրեշտակէն և ոչ ասաց պատասխանի մի
այլ հակառակ. այլ խոնարհութբ հնազան
դեալ հրեշտակին ասելով. թէ ես չունիմ
տեղ սատանայական բանի: Ապա թէ հրեշ
տակ ես դու, քո աւետիքն հաստատես
ցի լիս. եղիցի ինձ ըստ բանի քում ահա կամ
աղախին տն. զի նա ինքն գիտէ որ իմ ըստեղ
ծօղնէ. որդ և կամի այնպէս արասցէ կամք
նորա: Իսկ հրեշտակն երկրպագեաց սուրբ
կուսին և ասէ փութով երթալ առ ազգա
կան քո եղիսաբէթ. և անդ տեսցես զ՛քան
չէլիս որդւոյն քո. և մի ասասցես ումեք
զայս բանս. մինչև ինքն յայտնեսցէ. և գը
նաց ՚ի նմանէ հրեշտակն: Իսկ մարիամ գնաց
առ ազգականն իւր եղիսաբէթ, և նա էլ
ընդ յառաջ մարիամու. իբրև տեսին զմի
մեանս, ողջոյն ետ մարիամ եղիսաբէթի. և
խաղաց մանուկն յորովայնի մօրն. և երկրպա
գեաց յորովայն որ կուսին. և ՚ի ներքուստ
ձայնէր բարբառով մօր բերանոյն. ահա
մայր տեառն իմոյ եկեսցէ առ իս:
Օրհնեալ ես դու ՚ի կանայս և օրհնեալ է պը
տուղ որովայնի քո. և եղիսաբէթ ասէ ուս

տի է ինձ այս. զի երբ եմուտ ձայն ողջունի
քո յականջս իմ, խաղաց մանուկս յորովայնի
իմում. երկրպագեաց և ասաց զայս բանս. ե-
րանի՛ որ հաւատացէ: Իսկ մարիամ ասէր
մեծացուսցէ անձն իմ զտէր և ցնծասցէ հո
գի իմ ա՛ծ փրկչաւ իմով: և զփոխն լըման զա
մենին ասաց: Նա՛ անդ մնաց մարիամ ամիսս
երեք. Իսկ յորժամ մօտ եղև ծնունդն եղի
սաբեթի, առաքեաց զմարիամ ՚ի տունն յով
սէփայ և ասաց. դու գնա ՚ի քո տեղն կաց.
զի տէր առաջնորդեսցէ քեզ ո՛ղջ և կամք. և
մարիամ գնաց ՚ի տունն իւր: Նա՛ իբրև ծնաւ
եղիսաբեթ զորդին իւր, և եղև .ը. աւուր
ծննդեանն, եկին ազգականքն նորա զի թլ
փատեսցեն զմանուկն. և անուն դիցեն նմա.
հարցին եղիսաբեթի թէ զի՞նչ դիցուք զա
նունն. ասէ եղիսաբեթ. Յովհաննէս կոչե
ցէ՛ք զանուն դորա: Իսկ նոքա ասեն զի ոչ ոք
կայ յազգի քում Յովհաննէս. ապա հայրն նո
րա լեզու չունի. զնա իբր մեռած համարիմք.
և զաքարիա դիցուք զանուն դորա: Նա՛ եղի
սաբեթ ցհայրն հարցուցէ՛ք. իբրև հարցին
զաքարիայի, խնդրեաց տախտակ. և գրեաց
թէ, յովհաննէս է անուն դորա:

Իբրև թլփատեցին, կոչեցին Յովհաննէս:
Նաև զաքարիա զմանուկն ՚ի գիրկն իւր. և
ապա բացաւ լեզու նորա. Մարգարէացաւ
իվերայ որդւոյն իւրոյ և ասէր: Օրհնեալ

ՏՐ ԱԾ իսրայէլի որ յայցել և արար փրկու-
թի ժողովրդեան իւրոյ. զվոխն լման առաց:
Իբրև տեսին զայս մեծ ըսքանչելիս, ահ մծն
անկաւ ի վր ամենեցուն. և ասէին թէ՝ կամ
քնն է մանուկս և կամ մեծ մարգարէ:

Այ իբրև վեց ամսական եղև տղայն Յովհան
նէս ծնաւ Քրիստոս ՚ի բեթղեհէմ հրէ
աստանի ՚ի սուրբ կուսէն Մարիամայ: Իբրև
լուաւ հերովդէս թագաւորն, կամէր ըս
պանանել զՔրիստոս, և որսալ ձեռամբ մո
գուցն: Զի ՚ի լուան որ նք երկրպագին Քի.
և գնացին ընդ այլ ճանապարհ: Իբրև ետես
հերովդէս որ խաբեցաւ ՚ի մոգուցն, առա
քեաց կոտորեաց զամ մանկունսն բեթղա
հեմի: Իսկ եղիսաբեթ առեալ զմանուկն
յովհաննէս փախեաւ դէպ ՚ի լեառն. և հան
դիպեցաւ յապառաժ քար մի. և դարձաւ
յետս եղիսաբեթ. և ահա՛ դահիճքն հասին.
գոչեաց առ տր և ասէ՝ օրհնեալ տր ած իէլի.
զի դու շնորհեցեր ինձ զմանուկս այս, և
ուրախացուցեր զպառաւեալս. դու տր պա
հեա՛ զորդիս իմ և մի գալարեսցին աղիք իմ
կսկծանօք: Յայնժամայն պատառեցաւ
քարն և էառ ՚ի մէջ զմայրն հանդերձ որ
դովն, մինչև հինգ ամիս: Իսկ դահիճքն
դարձան կալան զաքարիա. զոր ըսպան թա
գաւորն փոխանակ որդւոյ իւրոյ ՚ի մէջ տաճա
րին. և յետ .Ե. ամսոյն՝ հրեշտակ երևեցաւ

եղիսաբէթի. և ասաց թաղել զմարմինն զա-
քարիայի. և դու մի՛ հոգար ասէ վն մանկանն.
քանզի երկիր կլեալ էր զմարմինն զաքարիայի.
բայց թաղումն ոչ էր կատարեալ. և եկեալ
եղիսաբէթ ՚ի տուն իւր. և մնաց մանուկն
ընդ հրեշտակս մինչև յերեսուն տարի. և
յետոյ եկն ՚ի յորդանան գետ և մկրտեաց

զՔրն. զի ամենեքեան ակն ունէին նմա
թէ նա՛ է քրիստոսն. որ յետոյ յայտ
նեցաւ այսպէս:

Իսկ յետ վեց ամսոյ աւետեացն Գաբրի-
էլի՝ եկն յովսէփ և մտեալ ՚ի տունն մա-
րիամու, զի տեսցէ զմարիամ. և մարիամ լը-
ւաց զոտս յովսէփայ. և եդ սեղան առաջի.
և հայեցաւ յովսէփ զորովայն կուսին մեծա-
ցեալ. նա տրտմեցաւ յոյժ. և ել տըխուր և
գնաց առ յընտանիսն իւր. և կոչեաց առ
ինքն զսաղովմէ դուստրն իւր և ասաց նմա
թէ մարիամ յղի է. դնա ծածկաբար և տես
թէ ընտոյգ է և զպատճառն իմացիր թէ ուս-
տի՛ եղև այդ, կամ ո՞վ արար: Իսկ նա գընաց
և ետես որ յղի էր. բայց քանի՛ որ հարցանէր՝
լայր և ո՛չ ինչ ասէր. իսկ սաղովմէ եկեալ
պատմեաց հօրն թէ ընտոյգ յղի է. քանի որ
հարցանեմ լայ և ո՛չ ինչ տայ պատասխանի:
Ասէ յովսէփ ցսաղովմէ ես զքեզ պահապան
եդի նմա այդ ի՞նչ էր որ դու արարեր. նա
խոստինք և ամօթ եղաք ամենեցուն. և ինքն

տրտմեալ եւ տարակուսեալ գնաց առ մարի
ամ եւ ասէ այդ ինչ է զոր դու գործեցեր .
զմեզ ծաղր արարեր ՚ի մէջ իէլի. զի ամ երի
տասարդք եւ կուսանք պահեալին զկուսու
թիւն իւրեանց. եւ դու միայն կողոպտեալ եւ
զրկեալ ՚ի կուսութե. այլ եւ ո՞չ կարեմ շըր
ջիլ ՚ի մէջ մարդկան. եւ այլ բազում բանիւք
նախատէր եւ ահացուցանէր թէ զստոյգն ա
սա՛ ո՞վ արար զայդ. եւ մարիամ լայր եւ արտաս
ւէր եւ ո՛չ ինչ տայր պատասխանի. եւ նա կըշ
տամբէր ասելով, թէ ո՛չ ասես ինձ ծածկա
բար, ՚ի մէջ հրապարակի տանջանօք ասել
տամ քեզ. եւ խայտառակեմ զի ամքն գիտեն
որ ես անմեղ եմ ՚ի դմանէ. զի յայն օր որ ըզ
քեզ ՚ի տուն բերի. թողի գնացի ահա՛ այսօր
եկի, զըղորդն ասամ: Նա՛ ասէ մարիամ թէ
չիտակն ասեմ, վախեմ թե եւ ո՛չ հաւատաս.
ասէ յովսէփ թէ զստոյգն ասես, հաւա
տամ: Նա Մարիամ՝ իմ վկայն ած է, եւ գա
բիէլ հրեշտակապետն. զի յիս մեղ ո՛չ գոյ.
զի ես այն օրն որ դու գնացեր եկեալ գնա
ցի յաղբիւրէն ջուր բերել. եւ յանկարծակի
այր մի ողջոյն ետ ինձ եւ ասաց՝ ուրախ լեր
բերկրեալ տր ընդ քեզ. եւ ես փախեայ ՚ի նմա
նէ եւ եկեալ մտի ՚ի տունս եւ փակեցի զդուռն.
եւ անցեալ ժամ մի տեսի որ յանկարծ երեւեցաւ
՚ի մէջ տան իմոյ կրկին այրն այն եւ ասաց. ող
ջոյն ընդ քեզ մարիամ լի շնորհօք տէր ընդ

քեզ. զի գուներ զշնորհս այ․ եւ ես ասացի թէ
զայր ո՛չ գիտեմ. ուստի լինիցի ինձ այդ. զոր
դու ասես. եւնա ասաց թէ՝ որ ՚ի քեն ծը
նանելոցն է, ՚ի հոգւոյն սրբոյ է․ եւ որդի այ
կոչեսցի: Նա՛ պատմեաց ինձ թէ ես եմ հը
րեշտակապետն Գաբրիէլ, որ կամ առաջի
աթոռոյ աստուածութե: Նա՛ ասաց մարիամ զամ
զոր ինչ լուեալ էր ՚ի հրեշտակէն եւ մի բառ
միոջէ պատմեաց յովսէփայ: Նա՛ ասաց յովսէ
փայ դու գիտես․ զայսքանս զոր ասացի քեզ՝
ամ բառոյք է եւ ճշմարիտ. իրաւապէս այս
պէս եղեւ: Ասէ յովսէփ թէպէտ ես հաւա
տամ. այլ ոչ ոք հաւատայ. զի լաւն այն է
որ ո՛չ իմանայ ոք․ տանեմ զքեզ ՚ի հեռաւոր
գիւղ մի եւ անդ թողում զքեզ. զի ո՛չ կա
րեմ վասն քոյ նախատինս կրել. իսկ մարիամ
լայր եւ սուգ առնէր: Նա՛ յովսէփ ՚ի տրտմ
մութենէն ննջեաց. եւ ՚ի տեսլեանն երեւե
ցաւ հրեշտակապետն Գաբրիէլ հրեղէն գա
ւազանաւ. եւ ՚ի յահէն մերձ էր ՚ի մեռանել
յովսէփ. եւ ահա հաւատացուցեալ հրեշտակապետն զյով
սէփ ասելով, ո՛չ երկնչիս դու յինէն, տէր
տրտմեցուցանես զմայր թագաւորին իմոյ.
քանզի որ ՚ի նմանէ ծնելոց է ՚ի հոգւոյն սրբ
է. եւ որդի այ կոչեսցի: Ապա դու եւս զգու
շութե ծառայեա՛ կուսին եւ մի՛ տրտմեցու
ցաներ: Իսկ յովսէփ զարթուցեալ ՚ի քնոյ
անտի, երկիրպագանէր Մարիամու եւ ասէր.

մի՛ տրտմիր մարիամ ծառայեմ քեզ. և պըտ-
ղոյ որովայնի քոյ. այսուհետև ընդ քեզ եմ
և մինչև ՚ի մահ ծառայեմ քեզ. զի յայտնի
եղև ինձ ՚ի տեսիլ հրեշտակապետին. և զամ
զոր ինչ ասացեր վասն աւետեացն գաբրիելի՝
ճշմարիտ է. և այլ բազում բանիւք ուրախա-
ցոյց զմարիամ. մի՛ ինչ երկնչիր այսու հե-
տև. զի դու ուր իցես ես ընդ քեզ լինիմ.
այս քան բանիւք մխիթարեաց յովսէփ ըզ-
մարիամ. զոր յետոյ լուան քահանայա-
պետքն զայս ամենայն ։

* Յաղագս փորձութեան սուրբ կուսին Մարիամու ։

Գլուխ ԻԱ ։

ԻԲՐԵՒ ԼՍԵՑԻՆ ՔԱՀԱՆԱ-
պետքն թէ յովսէփ եկեալ է, առաքե-
ցին առ նա սարկաւագ մի. զի իմաց ա-
րասցէ յովսէփայ վասն պատրաստութեան հար-
սանեաց և պսակ դնելոյ։ Իբրև գնաց սարկա-
ւագն ՚ի տունն յովսէփայ, և ասաց զխօսքն
և զպատուէրն քահանայապետին՝ յովսէփ մե-
ծարեաց զսարկաւագն ՚ի սեղան հացի. մինչ
դեռ հաց ուտէր սարկաւագն, հայէր և տե-
սանէր յորովայն սբ կուսին մեծացեալ. և գը-
նաց սարկաւագն պատմեաց քահանայապետին թէ
մարիամ յղի է։ Իսկ քահանայքն ոչ հաւատա-
ցին ասելով թէ յովսէփ այր արդար է ոչ առ-
նէ այնպիսի չարութիւն. բայց կին մի յղեցին զի տես-
ցէ զկոյսն մարիամ. իսկ կինն եկեալ ասաց. քահա

նայեցին, թէ ծանրացեալ յղի է․ և յետոյ
մարդ յղեցին յովսէփայ և ասեն՝ այր դու․
այդ ի՞նչ է զոր լսեմք վա՛ քոյ․ զի մեք զքեզ
արդար գիտեմք․ այդ ի՞նչ է զոր դու գոր
ծեալ ես․ վա՛յ է քեզ թէ արարեալ իցես
զչարութիդ․ զի ոչ ամաչեցեր ՛ի ծերութենէդ
և ՛ի յալեացդ։ Ասէ յովսէփ ես ոչ գիտեմ
զայդ բանդ զոր դուք ասէք․ զի յայն օրն յո
րում ետուք ինձ զաղջիկդ՝ և ես թողի ՛ի
տան իմում․ և գնացի ես ՛ի գործս իմ և ոչ գի
տեմ զի՞նչ պատահեցաւ դմա որ այժմ ե
կեալ եմ աստ։ Որոյ հրամայեալ զջուրն փոր
ձութեան ասելով կարէ՞ս ըմպել զջուրն փոր
ձութեան․ և նա ասէ դուք գիտէք․ և առեալ
յովսէփու զջուրն և նա էարբ, և ոչ ինչ վը
նասեաց․ և դարձեալ կոչեցին զմարիամ և
բերին յատեան դատաստանին․ հարցանէ
ին զմարիամ թէ ո՞վ արար զայդ։
Իսկ մարիամ լայր, և ոչ տայր պատասխանի․
և ահացուցանէին զնա և ասէին․ մեք գի
տեմք որ յովսէփ անմեղ է յայդմ գործոյ․
ասա դու թէ զի՞նչ կասես վա՛ քոյ։ Իսկ մա
րիամ լայր և ոչ ինչ ասէր։ Ասեն քահանայքն
ոչ կարես զերծանիլ ՛ի ձեռաց մերոց․ մի՛ վա
խեր ասա զճշմարիտն, թէ ո՞վ արար զայդ․
զի զքեզ նո՛ տացուք․ և թէ ոչ ասես, այրել
տամք զքեզ որ այլոց խրատ լինիցի․ զի ոչ
գործիցեն այդպէս չարիս։ Նա՛ մարիամ լա

լով ասաց թէ զատոյգն ասեմ, ինձ ոչ հաւա
տայք։ Ասեն քահանայքն զուղորդն ասա՛ որ
հաւատամք։ Ասէ Մարիամ վկայն իմ ած է
և հրեշտակապետն Գաբրիէլ. զի անփորձ
եմ՝ ի յախտից մերձաւորութէ. զի յորժամ
ետուք զիս յովսէփայ, տարեալ ՝ի ջոկ տուն
մի եդին զիս. և խրատեալ զիս պատրաստ
կենալ. և ինքն գնաց։ Իբրև ելի թէ գնամ
՝ի յաղբիւրն ջուր բերել. նա տեսի այր մի
որ ասաց ինձ ողջոյն ընդ քեզ. իբրև լսեցի ըզ
բանս զայս, առի զկուժն ջրոյն և փախեայ ՝ի
նմանէ. և գնացեալ մտի ՝ի տուն իմ. և փակե
ցի զդուռն և կայի դողալով վս բանին. թէ
որպի ինչ իցէ ողջոյնս անծանօթ մարդոյս. և
մինչ դեռ զայս խորհէի, դարձեալ յանկար
ծօրէն կրկին երևեցաւ այրն այն և ասաց
ողջո՛յն ընդ քեզ մարիամ, զի գտեր զշնորհս
այ. և սպասմեաց նշ զամ զոր ինչ ասացեալ
էր ցնա հրեշտակապետն գաբրիէլ. և թէ
հոգին սբ եկեսցէ ՝ի քեզ. և զօրութի բարձ
րելոյն հովանի լիցի ի վերայ քո. և զայս ա
սացեալ գնաց հրեշտակն. և ՝ի նոյն օրէ ե
ղև այսպէս. եթէ հաւատայք, բարի. և թէ
ոչ դուք գիտէք։ Իսկ քահանայքն այն բա
զումքննութի արարին. և ասացին թէ պարտ
է քնի ծնանիլ ՝ի կուսէն. բայց չէ հաւատա
լոյ թէ սա իցէ սբ կոյսն. թէ սա լինէր մինչ
՝ի տաճարին էր անդ լինէր իջումն սուրբ հո

գուայն բնակէին ՚ի նմա. ընդդէմ ՚ի տաճարէն դուրս և ՚ի յօտարս տան լինէր. և ամենեքեան հաւանեցան այս խօսիցս. և ոչ հաւատային մարիամու: Այլ դարձեալ ասեն մարիամու. ոչ հաւատամք զայդ բանդ զոր ասես. և տամք քեզ զջուրըն փորձութե երբ ոչ ասացեր զճշմարիտն. և մարիամ ասէ՝ տուացի կատոյգն և ոչ հաւատայք դուք գիտէք. ածէք ՚ի ջրոյն թէ սուտ եմ թող պատուհաս հասէ զիս: Իբրև ետուն ՚ի ջրոյն, խմեց և ոչ ինչ վնասեաց նմա. զի այն ջուրըն էր ի հելացուոց երդումն որ ՚ի նմայ սիսէ էր մնացեալ: Իսկ ով որ ըմպէր ՚ի ջրէն, թէ սուտ լինէր, ուռեննայր և պատառեալ սատակէր. և թէ անմեղ լինէր, ոչ ինչ վնասէր: Դարձեալ ոչ հաւատացին մարիամու. և ետուն ՚ի ձեռն կանանց զի տեսցեն զկուսութինն. և ասեն կանայքն թէ աղջիկս մարմնով կոյս է, և ծանրացեալ յղի է. և խաղայ մանուկն: Իբրև լուեցին քահանայքն, կոչեցին զյովսէփ և ետուն զմարիամ. զի պահեսցէ զաղջիկն մինչ ՚ի ծնունդն նր. զի տեսցեն թէ զի՞նչ լինիցի. Այլ առեալ յովսէփ զմարիամ և տարաւ ՚ի տուն իւր: Իսկ յաւուրն յայնմիկ հրաման ել յօգոստոս կայսերէ աշխարհագիր առնել. և ամ մարդ բնական ՚ի հայրենին երկիր իւր երթալ: Իսկ յովսէփ այս հայրն ՚ի բեթղեհեմ էր. և գրեցին զյովսէփ իւրո բեթղեհեմ. և առեալ զմարիամ տարաւ ընդ ինքեան և բնակեցին ՚ի բեթղահեմ.



✠ Վասն ծնընդեանն Ք՟ի ա՟յ մերոյ ՝ի սուրբ այրին

Գլուխ: ԻԸ:

ԵՒ ՅՈՐԺԱՄ ԳԱԲՐԻԷԼ առաքեցաւ առ ս՟բ կոյսն վ՟ն աւետեաց Յ՟սի, յայնժամ աստղ մի եկաւ ՝ի հնդկաց երկիրն մեծ և պայծառ. բայց ցած և խոնարհ. զի ՝ի հնդուստանէն զատ յայլ տեղ չէր երեւէր. և բազում իմաստասէրք ժողովեցան վ՟ն աստեղն. և քննութ՟ն արարին և ոչ կարա

ցին խմանալ. զի օրըստօրէ մեծանայր աստղն. և եղև իբրև զլուսին. և երևէր 'ի մէջ աստեղին 'ի կերպս կուսի. և մանուկ մի 'ի գըրկին: Իսկ մեծ վարդապետն նր քառասուն օր պահօք և աղօթիւք աղաչէր զԱծ յայտնել նմա զբնութի աստղին. իսկ 'ի կատարել քառասուն աւուրն, տեսիլ երևեցաւ վարդապետին և ասաց թէ, նշան աստղին այն է որ ծնաւ Քս 'ի յերկրին եհմայ: Իբրև լուաւ Մելքոն թագաւորն, առաւ դ. հազարապետ և .դ. ռ. հեծելով ելաւ 'ի ճանապարհ. և աստղն առաջնորդ եղև նր: Իբրև եկին հասին 'ի պարսկաստան, ելև Գասպար թագաւորն և մեծարեալ պատճեաց զնս և ասէ. այդ 'ի՞նչ բան է ըքո աստգալն. և կամ ո՞ւր կամիս գնալ: Իսկ Մելքոն թագաւորն պատմեաց նմա զամենայն և եցոյց զաստղն. հաւատաց և ուրախացաւ Գասպար թագաւորն. և նա առեալ .դ. հազարապետ և .դ. ռ. մարդով, և ելին 'ի ճանապարհ: Իբրև հասին յերկիրն արաբացւոց, գնաց ընդ յառաջ նոցա Պաղտասար թագաւորն արաբացւոց. և մեծարեաց զնս և տարեալ 'ի տուն և պատուեաց զնս և ասէ. այդ ի՞նչպէս բան է ձեր երկու պատուական թագաւորացդ գալն. և նք ասացին թէ այս աստղն որ շրջի ընդ մեզ և առաջնորդէ, նշանէ ծընընդեանն Քսի: Իսկ նա հաւատացեալ

ուրախութե՛, և առեալ ·Գ· հազարապետս
և ·Գ· Ճ· զօրականօք ել ընդ նոսա. որ եղեն
ամ̃ գունդք նոցա ·Փ· Թագաւորացն. ԺԲ
հազարապետօք և ԺԲ Ճ. հեծելազօրօք մին-
չև եօթն ամիս ու կէս գնացեալ հասին յե-
րուսաղէմ. և անդ ծածկեցաւ աստղն. զի
դեռ չէր ծնեալ ՙՔս̃. վա̃յն ոչ երևեցաւ
աստղն: Իբրև լսեցին երուսաղէմացիքն և
Թագաւորն հերովդէս, զահի հարան և ա-
սեն՝ զի՞նչ իցէ այս յանկարծ ժամու հեծե-
լի գալս. մի Թէ Թշնամի՞ իցէ. և խաբէութե̃
եկեալ իցէ. փութապէս ժողովեալ զամ̃ հե-
ծեալսն, կամէր ելանել հերովդէս և կռուիլ
ընդ նոսա: Իսկ իշխանքն և մեծամեծքն ա-
սեն. ո՛ղջ լեր Թագաւոր. զի դոքա մինչև
աստ խաղաղութե̃ եկեալ են. Իսկ դու սակաւ
մի համբերեա՛ց. զի առաքեսցուք առ նոսա
արս իմաստունս. և Թէ ունին չարութի̃, ել-
ցուք ՚ի պատերազմ ընդ նս̃. և Թէ չունին չա-
րութի̃, ած̃ զիւրեանց բանն առաջնորդես-
ցէ. զի ուր կամին գնալ գնասցեն. և հաճա-
նեցաւ հերովդէս. և ընտրեցին արս իմաս-
տունս. և բազում ընծայիւք առեալ գնացին
՚ի մէջ նց̃. և ողջունեցին զմիմեանս Թագա-
ւորքն և իշխանքն. և հարցեալ զիրան վասն
գալստեանն Թէ այս ·Գ· օր է որ աստ ե-
կեալ էք և անուշահոտութի̃ ձեր լցեալ է զքա-
ղաքս մեր. և դուք ել և մուտ ոչ առնէք ընդ

Թագաւորին մերոյ. այդ ի՛նչպէս բան է. և
կամ ա՞ւր կամիք գնալ. եկամ Թէ մեծ վաճա
ռակա՞ն էք. ասացէք որ իմանամք. և գնա
ցեալ պատմեսցուք Թագաւորին մերոյ:
Իսկ Մ՛ելքոն ասէ՝ ո՛չ վաճառականք եմք և
ո՛չ այլ ինչ խնդիրս ունիմք. զի մեք .գ. Թա
գաւորք եմք Հնդկաց. Պարսից. և Արաբա
ցւոց: Մեք լուեալ եմք Թէ Քս̄ ծնեալ է
՚ի յաշխարհս ձեր. և մեք առաջնորդութ̄ աս
տեղին եկեալ եմք մինչև աստ. զի այս .գ.
օր է որ ծածկեցաւ աստղն. և մեք վ̄ այն
նստեալ եմք աստ, մինչև երևի աստղն և ա
պա գնասցուք. և նոքա գնացեալ պատմեցին
Հերովդեի Թէ .գ. Թագաւորք են անԹիւ
հեծելազօրօք, և մեծամեծօք, և բռնաւորօք.
և բազում ընչիւք և ապրանօք, որք իմաս
տունք և կորովամիտք. բայց ոչ կարացաք իմա
նալ զմիտս նոցա: Իսկ Հերովդէս ասէ՝ չա՛ր
են խորհուրդք դոցա. զի խաբէութ̄ խը
ռել կամին զԹագաւորութիս իմ. ելցուք և պա
տերազմեսցուք ընդ նս̄: Իսկ իշխանքն ա
սեն՝ Թա՛գաւոր ո՛ղջ կաց. զի նոքա .գ. Թա
գաւորք են բազում զօրօք. Թէ գուցէ նո
քա յաղԹեսցեն, յայնժամ գերեն և աւե
րեն զա̄մ երկիրս մեր. ո՛չ արասցուք այս
պէս. այլ փորձեսցուք զնոսա և առաքես
ցուք և մեծարեսցուք զԹագաւորսն և զեր
խանս նոցա: Իսկ Հերովդէս Հաճանեցաւ

խրատուն այ̃․ և գնացեալ մեծարեցին․ ասեն,
թէ եկեալ մոգեն 'ի քաղաքս սակաւ մար
դօք անմեղեն․ և եթէ ոչ եկեսցեն, գիտա
ցիք որ թշնամիք են։ Իբրև գնացին և մեծա
րեցին զԹագաւորսն, թէ Թագաւորն մեր
կամի մեծարել զձեզ և պատուել՝ խօսիլ և
տեսանել զձեզ։ Ապա ելեալ Թագաւորքն
իշխանօք իւրեանց, առանց հեծելի մտին
'ի քաղաքն Եղ̃մ՛․ և տեսին զԹագաւորն Հե
րովդէս․ իբրև տեսին, ողջունեցին զմի
մեանս․ նստան և խօսեցան․ կերին և լիացան։
Ասէ Հերովդէս՝ յի՞նչ պէտս եկեալէք 'ի Հնդ
կաց․ ասեն մոգքն՝ ի՞նչ տեղ է ծնեալ Յս̃
նորածին Արքայն․ զի կամիմք տեսանել զն̃ա
և երկրպագանել նմա։ Իբրև լըւաւ զայս
Հերովդէս, ա՛հ մեծ անկաւ իվերայ նր̃․ և
ասէ՝ մեք զայդ ոչ գիտեմք։ Իսկ մոգքն ա
սեն՝ զարմանք այս են զի մեք 'ի հեռաստա
նէ գիտեմք․ և դուք 'ի մօտոյ ոչ գիտէք․
Ո 'ի այս ․Ը․ ամիս է որ մեք իմացեալեմք և
'ի ճանապարհ ելեալ կու գամք․ և 'ի ձեր եր
կիրս է ծնեալ դուք ոչ գիտէք։ Իսկ Հերով
դէս առաքեալ առ քահանայսն, եհարց նո
ցա թէ ո՞ւր ծնանիցի Քս̃ն․ և նոքա ասեն
'ի բեթղահէմ հրէաստանի 'ի քաղաքի դաւ
թի։ Իսկ Հերովդէս ասէ ընդ մոգսն՝ դուք
ուստի՞ գիտէք զն̃ա։ Ասեն մոգքն՝ գիր ու
նիմք մարգարէին աստուծոյ գրեալ և կնքեալ․

և նովաւ գիտեմք: Ասէ հերովդէս՝ բերէք
զգիրս ձեր. զի բացցուք և տեսցուք:
Ասեն մոգքն մեզ չիկայ հրաման բանալ և
կամ ցուցանել այլոց. զի որ գրեաց և կըն
քեաց նոյն ինքն բացցէ: Եւ բարկացաւ հե
րովդէս և ետ կապել զնոսա. և առժամայն
շարժեցաւ տունն. և փլաւ յապարանս թա
գաւորին և. ՀԷ. հոգի ՚ի ներքև հողն մտա
ցին և մեռան. և ել որդի հերովդէսին և բար
կացաւ հօրն. և արձակեաց զմոգսն. և հաշ
տեցոյց զհայրն իւր ընդ նոսա. և սիրով ըն
դունելութե՟ ուղարկեաց զնոսա և ասէ՝
Տէր առաջնորդեսցէ ձեզ որպէս և կամիք:
Իսկ հերովդէս ասէ՝ յորժամ գտանիցէք զմա
նուկն, բերջիք ընդ ձեզ. զի ես ևս երկիրպա
գից ընդ ձեզ. և կամէր խաբէութեամբ կո
րուսանել զմանուկն: Եւ ելին մոգքն և ան
կան ՚ի ճանապարհ. և երևեցաւ աստղն և ա
ռաջնորդէր նոցա: Եւ երևեցաւ հրեշտակն
յովսէփայ և ասէր առ զկոյսդ և գնա՛ ՚ի լեառ
նակողմն. և յովսէփ ասէ մարիամու՝ կամիմ
տանել զքեզ ՚ի լեռնակողմն, զի տէր ե
ցոյց ինձ այսպէս: Եւ հեծոյց ի վերայ իշոյ
զմարիամ. և ել ՚ի ճանապարհ. ետես յովսէփ
զերեսն մարիամու տրտմեալ և այլագունեալ
որ լայր դառնապէս. և ոչ ինչ ասաց նմա. և
դարձեալ ետես զի խնդայր և ուրախ լինէր,
և լոյս փայլէր յերեսաց նորա: Իսկ յովսէփ

եհարց զմարիամ և ասէ՝ զի՞նչ էր զի եր
բեմն տեսանէի զքեզ տրտում և տխուր և
լայիր. և երբեմն տեսանէի զքեզ ուրախ, և
լոյս փայլէին յերեսաց քոց. ասէ մարիամ,
տեսի զի ծնաւ մանուկս. և առ ժամայն ե
րեսնամեայ եղև և բազմանին զնա և թաղե
ցին. վասն այն տրտում էի և լայի ։
Եւ դարձեալ տեսի զի կենդանացաւ զօրու
թեամբ և փառօք և հրեշտակօք և ել ՚ի յեր
կինս. վասն այն ուրախացայ և խնդացի. և
սակաւ յառաջ գնացեալ՝ իջոյց զնա յով
ակէն. և յայս կոյս և յայն կոյս հայեր զի ոչ
կայր բնակութիւն մարդկան. և անդ կայր
քար այր մի մեծագոյն. և իջոյց զմարիամ ՚ի յայրն.
և յովսէփ գնաց զի գտցէ մանկաբարձ և շր
ջեալ աստ և անդ և ոչ եգիտ. և դարձեալ
եկն. և ետես որ մանուկն ծնեալ էր և ՚ի խան
ձարուրս պատեալ։ Իսկ ՚ի գիշերին յայնմիկ
հովիւքն էին ՚ի մօտ. որք պահէին զոչխարան
իւրեանց. և հրեշտակ տեառն երևեցաւ
նոցա. և փառք տեառն ծագեցին առ նմա.
և ասէ հրեշտակն՝ աւետարանեմ ձեզ ուրա
խութիւն մեծ. և ամ ժողովրդեանն. զի ծը
նաւ ձեզ այսօր փրկիչ որ է օծեալ Տէր ՚ի
քաղաքի Դաւթի. և այս ձեզ նշանակ, գը
տանիցէք մանուկ պատեալ ՚ի խանձարուրս։
Եւ յանկարծակի եղև ընդ հրեշտակին ընդ
այնմիկ. և բազմութիւն զօրացն երկնաւո

րաց, որք օրհնէին զա̃ծ և ասէին ։
Փառք ՚ի բարձունս ա̃յ և յերկիր խաղաղութի̃
՚ի մարդիկ հաճութի̃. և եղև իբրև վերացան
հրեշտակքն ՚ի յերկինս։ Ասեն հովիւքն ե-
կայք երթիցուք ՚ի յայրն. և տեսցուք թէ
զի՛նչ է բանս զոր տէր եցոյց մեզ։ Իսկ ե-
կին փութանակի և տեսին զմանուկն պա
տեալ ՚ի խանձարուրս և եդեալ ՚ի մսուրն ան
բանից։ Իբրև գընացին հովիւքն, այն աստղն
որ առաջնորդէր մոգուցն, եկեալ կանգ
նեցաւ ՚ի վե̃ր այրին. և գիտացին թագաւորքն
որ անդ է ծնեալ ՚Քս̃. և գտեալ սակաւ մի
մութն էր. և ՚ի ժամ առաւօտուն իջին յե
րիվարացն և հարին փողս և ցնծղայս և զա̃մ
երգս քաղցրաբարբառ եղանակէին. օրհնէ
ին և գովէին զա̃ծ. և փառաւոր առնէին.
հրճուէին և ուրախանային. և ասէին օրհ
նեալ է ա̃ծ որ արժանի արար զմեզ, այս
մեծ ուխտիս և ուրախութե̃ս։ Իբրև լուան
յովսէփ և մարիամ զձայն երգոյն և պարուցն,
՚ի դուրս եկին և տեսին զբազմութիւն զօ
րացն. թողին զմանուկն ՚ի մէջ մսուրն և փա
խեան. իսկ նոքա ձայնեալ ասեն. ընդէ՞ր
փախչիք ՚ի մէնջ զի մարդիք եմք իբրև զձեզ.
մեզ զայն ասացէք թէ ո՞ւր ծնաւ Յս̃ մա
նուկն։ Իբրև լուաւ մարիամ, դարձաւ և
եառ զմանուկն ՚ի գիրկն իւր և նստաւ. իսկ
յովսէփ մատամբ ցուցանէր նմ̃ զայրն։ 

Իբրև գտին զտեղին, խորհուրդ արարին և
մտին յերկրպագութի՛ մի մի. և մատուցին զոս
կին զզմուռնն և զխունկն և զկտաւն, և զայլ ծը
խանելիս մի մի մատուցին և երկրպագին և ե-
լին: Նաեն զի՞նչ տեսեր յորժամ երկրպա
գեցեր և զընծայսդ մատուցեր արքայ Բաղ
տասար. և նա ասէ՝ մանուկ մարմնով տեսի
որդի Աստուծոյ. և ՚ի յաթոռ հրեղինաց բազ
մեալ. և զօրք հրեշտակաց պաշտէին զնա:
Եւ նոքա ասեն բարւոք ասացեր: Ապա ա-
սեն արքայ Գասպար՝ յորժամ մատուցեր
զընծայսն քո և երկրպագեցեր, զինչ տեսեր.
և նա ասէ, տեսի մարմնով որդի ած զնա ՚ի
չարչարանս և ՚ի մահու և մեռեալ և կենդա
նացեալ. և զօրք անմարմինք ըսպասաւորէին
նմա: Եւ նոքա ասեն և դու բարւոք ասա
ցեր: Եւ ապա ասեն արքայ Մելքոն՝ դու
ո՞րպ տեսեր զնա. և նա ասէ՝ այր կատարեալ
մարմնով որդի ած տեսի բազմեալ յաթոռ
ածուէ՛ և դատէր զկենդանիս և զմեռեալս.
և զօրք հրեշտակաց ընդ մարդկան փառա
բանէին զնա. և նք ասեն՝ դու ևս բարւոք
ասացեր: Իսկ միաբան ասեն անհաւատալի
են բանքս. զի ո՛չ են տեսիլք մեր նման մի
մեանց. վաղիւն դարձեալ մտցուք և տեսցուք
թէ զինչ ըսքանչելիք ցոյց տայ մեզ ած:
Իսկ վաղիւն դարձեալ մտին և երկրպա
գեցին և ՚ի դուրս ելին. և կրկին միմեանց

հարցափորձ եղեն. և ասեն որքայ Մելքոն
զինչ տեսեր. ասէ ես զՔո երեկեան տեսիլն
տեսի, որքայ Գասպար. և Գասպար ասէ՝
ես զՔո երեկեան տեսիլն տեսի որքայ
Պաղտասար. և Պաղտասար ասէ, ես զՔո տե
սիլն տեսի որքայ Մելքոն։ Ապա հաւատա
ցին ճշմարտապէս. և հրամանաւ տէրէին ա̄մ հե
ծելազօրին մտանել և երկրպագանել. և
պատմեցին ամենեցունց զսքանչելի տե
սիլն։ Եւ յետ երեք աւուրն, մտին երեք
Թագաւորքն և երկրպագեցին և տեսին զնա
մանուկ՝ ի գիրկս մօրն և.ճ̄. հրեշտակ բազմա
սաւորէին նմա. և ապա կամեցան տանիլ զմա
նուկն առ հերովդէս. և դէմ առեալ հրեշ
տակն ասաց նոցա, թէ մի գնայք առ հե
րովդէս. զի կամի չար առնել ձեզ և ման
կանդ. և դուք գնացէք ընդ այլ ճանապարհ
խաղաղութ̄. և մեք հոգամք վասն մանկանդ։
Եւ նոքա ելեալ գնացին ընդ այլ ճանա
պարհ յաշխարհն իւրեանց։ Իբրև լուաւ հե
րովդէս, թէ Թագաւորք երկրպագեցին
և ելեալ գնացին և ոչ ազդ արարին, յետ
ճ̄. ամաց անցմանն՝ յղեաց զօրականս. և կո
տորեաց զա̄մ մանկունսն բեթղահէմի յեր
կու տարէն ՝ի վայր. մի թէ Քրիստոսն ՝ի
մէջ նոցա իցէ. ձ̄. դ̄. գեղջէ .ռ̄. դ̄ ճ̄ ի̄ դ̄.
մանկունս. վասն այն ասէ ՝ի սուրբ աւետա
րանն թէ, յերկեմենից ՝ի խոնարհ։

Որև փրկեսցէ զձեզ տէր ած̃ մեր, յամ̃ չա-
րեաց, յերևելեաց և յաներևութից և 'ի
փորձութեանց, առատ և 'ի հանդերձելումն
Ամ̃ն.



Այսմ [illegible] գալստեանն Քրիստոսի ի տաճարն.

Գլուխ ԻԹ.

ԻՍԿ ՅԱՌԱՋԻՆ ԺԱՄԱՆԱ-
կին կայր թագաւոր մի պտղոմէոս անուն
յոյժ գրասէր. որև հրամայեաց յամ̃ յերկ-
րէ զգրեանն բերել և թարգմանել. և 'ի հրէ-
ից ևս խնդրեաց զգիրս մարգարէից. և էին

Թարգմանիչք ․ՀԲ․ հոգի․ զորս բերեալ 'ի
քաղաքն աղեքսանդր և եդեալ զնս 'ի կղզի մի
Բ Բ․ հոգի յուրիշ յուրիշ սենեկի․ զի նստեալ
Թարգմանեսցեն 'ի հրէից 'ի հոռոմ լեզուն․
բայց ամենեցուն յարկաց դուռն 'ի ծովուն
էին, որ ոչ կարէին գնալ և գալ Թարգմա
նիչքն 'ի միմեանս։ Նաև զոր ինչ ասայր Թագա
ւորն յաւուրն Թարգմանչացն, զայն բերէ
ին և ընթեռնուին առաջի Թագաւորին և
նա տեսանէր թէ համանման են միմեանց
Թարգմանեալքն․ զի մի աղալ և սուտ բան գը
րեսցեն։ Յորոց մինն 'ի նոցանէ էր Սիմէօն
ծերունին․ որ էր երիտասարդ կորիճ տղայ․
և նա Թարգմանէր զեսայի մարգարէն․ և եկն
յայն տեղին, թէ ահա կոյս յղասցի և ծնցի որ
դի և կոչեսցեն զանուն նր Էմմանուէլ․ որ
Թարգմանի ը̅ մեզ ա̅ծ․ և գրեաց Սիմէօն և ըն
կերն իւր։ Նա դարձեալ 'ի միտ ածեալ թէ
այս բանս անհաւատալի է․ և փոշիման եղեն
'ի գրելն և եղծել զգիրն թէ, նոքա ոչ հաւա
տան․ ապա կրկին տարակուսեալ թէ միւսքն
գրեն, և մեք դատապարտիմք․ վասն որոյ
յառաւել տրտմութենէն 'ի քուն եմուտ
և զարթուցեալ 'ի քնոյն տեսին որ լու
սափայլ ոսկւով էր գրած ջնջեալ գիրն։
Վասն որոյ լալով և մեծաւ հառաչմամբ
ասաց թէ, երանի է յայնմ ժամանակին տե
սողաց զայն կոյսն, և զծնեալն 'ի նմանէ մա

նուկն Էմմանուէլ: Իսկ սուրբ Հոգին ազ
դեաց նմա և ասէ, ոչ տեսանես զմահ, մին
չև տեսցես զօծեալ մանուկն այն:
Ս̃ն որոյ գնացեալ անտի ՚ի տաճարն և անդ
աղօթէր, մինչև .ճ̃. Ծ Կ Է̃. տարի. և ական ու
նէր գալստեան փրկչին. և յայն փակեալ
դուռն նստէր զոր մարգարէն Եզեկիէլ ՚ի
բաբիլոնէ փակեաց ասելով թէ, դուռն այն
փակեալ կացցէ, ոչ ոք ելցէ և մտցէ, բայց
Տէր Ա̃ծն Ի̃էլի. վասն այնորիկ հայէր և
կարօտէր գալստեանն նորա: Իսկ ՚ի գալըս
տեանն. Խ. օրեայ ՚ի տաճարն հանդերձ մարբն
և ծնահարբն. և յօրինակէ ըստ հնոյն օրինաց,
առեալ .Բ̃. ձագս աղաւնեաց և տատրակաց
տանէր ընդ ինքեան ընծայ առ ՚ի յերկրպա
գանել ՚ի տաճարին: Ս̃ն էր յերեկոյին ժա
մուն. զի մտեալ էր երբ բերին ՚ի տաճարն:
Իսկ ՚ի հասանել ՚ի դուռն տաճարին դղրդե
ցաւ քաղաքն ա̃մ. և դուռն տաճարին ինքնին
բացաւ. և ա̃մ ժողովուրդն ՚ի դուրս վազեալ
թէ Տ̃ն աստ է: Ոմանք ջահս վառեցին. և
ոմանք ճրագ. ոմանք մոմ և անդ և աստ շրջե
լով թէ ա̃րն Է̃ յառաջ. վ̃ա այն ա̃ն ընդ յա
ռաջ ասեմք: Ս̃ն ծերոյն Սիմէօնի ազդ է̃
զև ՚ի հրեշտակէն. վ̃ա որոյ ելեալ ընդ յա
ռաջ Յ̃սի. և առեալ ՚ի գիրկս իւր փափագա
նօք և արտասուելով, աղերսէր ասելով. օրհ
նեալ է ա̃ծ զի կատարեցեր զխնդիրս իմ:

Նա ասէ. արդ արձակեա՛ տէր զծառայս քո մե-
ղուցեալ ըստ բանի քում ՚ի խաղաղութի. զի
տեսին աչք իմ զփրկութի քո զոր պատրաստե-
ցեր առաջի ամ ժողովրդոց: Այս ՚ի յայտնու-
թի հեթանոսաց և փառք ժողովրդեան քում
իսրլի: Նա օրհնեաց զնա սիմէօն, և ետ ՚ի մայրն
նոր և ասէ. ահա սա կայ ՚ի գլորումն և ՚ի կանգ-
նումն ՚ի մէջ բազմաց իսրլի. և նշան հակա
ռակութե. զի յայտնեսցին բազում սրտից
խորհուրդք: Նա անդ էր աննա դուստր փա
նուէլի յազգէ ասերայ. սա անցեալէր զա
ւուրբքն իւր ամօք բազմօք. կացեալ ընդ
առն ամս .է. ՚ի կուսութէ իւրմէ. և էր այրի
ամաց ութսուն և չորից. և ոչ մեկնէր ՚ի տա
ճարէն. այլ պահօք և աղօթիւք պաշտէր ըզ
ցայգ և զցերեկ զածծ. և սա ՚ի նմին ժամու յա
րուցեալ գոհանայր ՚ի տնէ, և խօսէր զնըմա
նէ. թէ սա է փրկիչն մեր ՚ի Քս. որում ակն
ունէաք: Իբրև լուեին ժողովուրդքն, զար
մանային զայն մանկանն. և ՚ի մէջ գիշերին Սի
մէօն արձակեաց զհոգին. և ահն անկաւ ի
վր ամ ժողովրդեանն, և ամքն հաւատացին
թէ քն է: Իսկ յովսէփ և մարիամ տեսին որ
յայտնի եղև փառք նր. և յահէն հերովդի ա
ռին զմանուկն ՚ի գիշերին և փախեան ծած
կաբար, և ոչ ոք իմացաւ: Իսկ յառաւօտուն
եկին ամ ժողովուրդքն զի նոր ըզքանչելիս
տեսցեն. և իբրև եկին ոչ գտին զյս ՚ի տաճա

րին. և 'ի բազում տեղիս շրջեցան վ̅ս յ̅ի և ոչ գտին ։ Իսկ հրեշտակն երևեալ յովսեփայ ասաց, առնուլ զմայրն և զմանուկն և երթալ 'ի յեգիպտոս։ Բարեխօսութե̅ սրբոյն սիմէօնի ծերունւոյն արժանի արա զ̅մ հաւատացեալքս ք̅ի աւետման Ա̅մէն ։



Սոյն պատմութի Յովհաննու Մկրտչին, որ եղ 'ի յանապատէ եկեղն 'ի Մելրոփս Գլուխ ԻԳ ։

Ի ՅՈՐՈՒՄ ԺԱՄԱՆԱԿԻ որ հերովդէս կոտորեաց զման կունսն բեթղահեմի , եղիսաբէթ

առեալ զմանուկն Յովհաննէս և փախուցէր։
Իսկ քարն բացաւ և կալաւ զմանուկն և պա
հեաց. ապա բեթղահէմացիքն գիտէին մեծ
և փոքր որ Յովհաննէսն այն յանապատին էր
և աննեա 'ի մարդկանէ. զի ոմանք ասէին
թէ մարգարէ կայ յայսմ անապատի. և այլք
ասէին թէ Քրիստոս է. և 'ի կատարել .Լ. ա-
մաց և .Զ. ամսից, եկն Յովհաննէս մկրտիչն
հրամանաւն Այ 'ի յորդանան. և բարձր և ա-
հեղ բարբառովն քարոզէր և ասէր. երանի
Այս ժողովրդեանն՝ որ հաւատան. զի բա
ցաւ ձեզ դուռն արքայութեան. եկա՛յք
'ի խոստովանութի և 'ի մկրտութիւն և յապաշ
խարութի, 'ի քաւութի և 'ի թողութիւն մե
ղաց Այս ժողովրդեանն. և գային յԱյս յերկ
րէ և լսէին զքարոզս 'ի նմանէ և մկրտէին 'ի
յորդանան գետ։ Իսկ փարիսեցիքն հարցա
նէին թէ դու ո՞վ ես որ մկրտես. Մարգա
րէ՞ն ես, կամ Քրիստոս ես. և նա ասէ ոչ մար
գարէն եմ և ո՛չ Քսն. այլ ես ձայն բարբա
ռոյ յանապատի. որպէս ասէ Եսայի մարգա
րէն. պատրաստ արարէ՛ք զճանապարհս Տն.
և ուղիղ արարէք զշաւիղս նորա. ես մկրտ
եմ զձեզ ջրով. և կայ 'ի միջի ձերում զոր
դուք ո՛չ գիտէք. որում չեմ արժանի բառ-
նալ զկօշիկս ոտից նորա։ Յորոյ վերայ տե
սանիցէք զհոգին սուրբ աղաւնակերպ, նը
մա լուծիցիք. նա է Քրիստոսն որդի աստու

ծոյ. զի՞նա մկրտեսցէ զձեզ հոգւով սրբ
ով: Եւ մինչ մկրտէր Յովհաննէս և գային
յամենայն կողմանց ժողովուրդք բազումք
և իբրև զմարգարէ ընդունէին զնա:
Եւ յաւուր միում մինչ մկրտէր, եկն Յս
՚ի յորդանան գետ. և զարհուրեալ գետն
յետս դարձաւ. իսկ յովհաննէս ետես և սա
սանեցաւ. և երկիրպագ յիսուսի և ասէր.
Տէր՝ ինձ պարտ է ՚ի քէն մկրտիլ և դու ա
ռ իս գաս: Պատասխանի ետ յիսուս և ասէ՝
Թոյլ տուր այժմ. զի այսպէս վայելէ մեզ
լնուլ զամենայն արդարութիւնս. և եկն
յովհաննէս դողալով և մկրտեաց զնա. և
անդ կոխեաց ՚ի Քս զգլուխ վիշապին. և ջախ
ջախեաց զնա. որ օրինակ էր սատանայի. և
զձեռագիրն ադամայ ջնջեաց. և իբրև ել ՚ի
ջրոյն, լոյս յերկնից իջաւ ի վերայ նր. և ա
ղաւնակերպ սուրբ հոգին էջ ի վր. և եր
կինք պատառեալ, գայր ձայն ՚ի յերկնից
որ ասէր, դա է որդի իմ սիրելի դմա լուա
րուք: Եւ յովհաննէս վկայեաց թէ սա է
գառն աստուծոյ որ բառնայ զմեղս աշխար
հի: Դարձեալ ասէ՝ թէ ես եմ աստղ առա
ւօտու. և սա է արեգակն արդարութե. որ
լուսաւորէ. վս որոյ պարտ է ինձ մեղմանալ
և սորա աճիլ: Իբրև լուան աշակերտքն
յովհաննու, թողին զնա և գնացին զհետ
քրիստոսի. և աշակերտեցան նմա:

Եւ յետ մկրտութեան՝ արար Քս երկոտասան աշակերտս. և արար ըսքանչելիս:

Զի ի Կանայ զջուրն ի գինի փոխեաց. զհիւանդս բժշկեաց. զբորոտսն սրբեաց. զկաղսն գնացոյց. զանդամալոյծսն առողջացոյց. համրաց լեզու ետ. և խլից լսել ետուր. զպոռնիկն մեղսն եթող. զմաքսաւորն արդարացոյց. զկոյրն լուսաւորեաց. և քանանացւոյն ըզդուստրն բժշկեաց. ե. հացիւ ե. հազ. կերակրեաց. և երկոտասան զամբիւղ կոտորացն յաւելաւ. է. հացիւ դ. հազ. կերակրեաց և է. զամբիւղ կոտորացն յաւելաւ. իվր ծովուն գնաց. ալեացն սաստեաց և հնազանդեցոյց. ի լեառն թաբօր ել. զմովսէս և զեղիեայ երևեցոյց ամծայն փառօքն. և զհայրենական ձայնն լսել ետ երեք առաքելոցն. և զաեռատես կինն բժշկեաց. զհարիւրապետին մեռեալ դուստրն կենդանացոյց. ինային քաղաքին այրի կնոջ զդուստրն կենդանացոյց դ. դ. աւուր մեռեալ զղազարոսն յարոյց: Այս զայս քան ըսքանչելիս առնէր Յս. նա դեռ հրեից ազգն ոչ հաւատային. և կամ խարդութբ առնէ ասէին զայս ամ:

Իսկ վն մեռելոցն զոր Քս կենդանացուցանէր՝ ջհուտ ազգն ասէին թէ, սուտ է. դեռ ոչ էր մեռեալ, և կենդանացուցանէր. և վն այն ոչ շուտով գնաց ՚ի գերեզմանն Ղազարու. քան զի յորժամ տեսանօղքն վկայեին

Թէ՝ մեք տեսաք որ Տր յարոյց զմեռեալն.
և չհաւատ ազգն ասէր, թէ ծանրացեալ էր. և
գտեալ չէր մեռեալ. զի ո՛չէր լուեալ թէ մե-
ռեալն կենդանանայ. մի թէ քան զմովսէս
մեծ է Յս. զի մովսէս ընդ այ խօսեցաւ. բայց
ոչ կարաց մեռեալ յարուցանել. Վն այն Յս
յետ չորս աւուրն եկն ի վր Ղազարու. քան զի
ուղարկեցին քորքն նորա և ասեն թէ, եղ-
բայրն մեր Ղազար զոր դու սիրէիր՝ մերձ է
՚ի մահ խնդրեմք՝ ի քէն զի եկեալ բժշկեսցես.
որպէս ասաց աշակերտացն Յս թէ Ղազարոս
բարեկամն մեր ննջեաց. և աշակերտքն ասեն.
եթէ ննջեալ՝ ապա ապրի. որպէս ասաց յայտ-
նապէս թէ՝ մեռաւ Ղազար. բայց այն մե-
ռելութին չէ ՚ի մահ. այլ վն փառացն. զի
փառքն այ յայտնի լիցի ՚ի նմա: Եւ Թումա
ասէ՝ եկա՛յք և մեք զի ընդ նմա մեռցուք. և յետ
երկուց աւուրց ասէ աշակերտացն, գնաս-
ցուք ՚ի բեթանիա. զի անդ էր ղազարոս մե-
ռեալ. որ և եկն ՚ի բեթանիա. և լուաւ մար-
թայ քոյր ղազարոսի եթէ գայ Յս. ել ընդ յա-
ռաջ նորա. և նա անկեալ ՚ի վր ոտիցն և ասէ,
Տր՝ եթէ աստ եկեալ էիր, ոչ էր մեռեալ
եղբայրն իմ. ասէ Յս՝ յարիցէ եղբայրն քո. ա-
սէ մարթա Տր գիտեմ որ յարիցէ յաւուրն
յետնում: Ասէ Յս՝ ես եմ յարութին և կեանք.
զի յորժամ կամիմ կենդանի առնեմ. իսկ մար-
թա առաքեաց առ քոյրն իւր մարիամ, թէ

կամի յն երթալ 'ի գերեզմանն։ Իբրև լուծաւ մարիամ, ել և գնաց. և որք եկեալ էին վն մխիթարելոյ զնն. զի և նոքա ընդ նմա եկին առ յն. և համարեցան թէ գնայ 'ի գերեզմանն զի լացցէ. և իբրև եկն մարիամ, լայր և ասէր. տէ՛ր՝ եթէ աստէիր դիպեալ՝ ոչ էր մեռեալ եղբայրն իմ. ասէ յն՝ մի՛ երկմտիր՝ զի յարիցէ եղբայրն քո։ Իբրև գնացին 'ի գերեզմանատունն, նա եհարց թէ. ուր եդիք զղազարոս. և նք ցոյց տվին զգերեզմանն. և իբրև եւեօ՛ արտասուեաց յն։ Իսկ հրէայքն ասէին՝ տես թէ, որչափ սիրէր զնա զի արտասուէ. և կէսքն ասէին ոչ կարէր ապրեցուցանել՝ զի մի մեռցի։ Իսկ յն ասէ՝ 'ի վե՛ր առէք զվէմդ, և բացէ՛ք զգերեզմանն։ Չայնեաց յն և ասէ՝ ղազարէ՛ ե՛կ արտաքս։ Եւ յասել բանին, կենդանացաւ և 'ի վեր եկաց ոտիւքն և ձեռօքն կապելովք. և երեսօքն վարշամակապատօք. և ասաց յն՝ լուծէ՛ք և թողէք երթալ։ Իբրև տեսին ամենայն հրէայքն, հաւատացին. և ոմանք 'ի նոցանէ գնացեալ 'ի քաղաքն պատմեցին քահանայից և իշխանացն, թէ ահա տեսաք աչօք մերովք. զի զղզ. աւուր մեռեալն կենդանացոյց յն. և պատմեցին ամ երուսաղէմացւոց զսքանչելիսն զոր արար յիսուս։

Որ և մեզ ողորմեսցի Քրիստոս Աստուած 'ի յարուցանել զմեռեալ հոգիս մեր մեղօք,

բարեխօսութե՛ք ամենօրհնեալ տիրամօր կու-
սին. եւ վերացուցէ ՛ի կեանս անմահ Ամէն:



✠ Յաղագս գալստեանն փրկչին յերուսաղէմ.

Գլուխ: ԽԱ:

ԲՐԵՒ ԵՒ ՏԲԵ ԹԱՆՈՒԹ
գեպյեզ մերձերթայր ընճանապարհ աւա-
քելովքեւ Ղազար ընդ նմա, կայեն մօտը

վուրդք բազումք իվերայ ճանապարհին և
·Բ· կոյր նստեալ էին մուրացիկք: Իբրև լուա-
ցին զգալուստն յի, ՚ի բարձր ձայն աղաղակէ-
ին յս որդի դաւթի ողորմեա մեզ: Ասէ յս
զի՞նչ կամիք զի արարից: Ասեն կոյրքն՝ ռա-
բունի զի բացցին աչք մեր: Ասէ յս՝ եղիցի
ձեզ ըստ հաւատոց ձերոց. և բացան աչքն
երկոցունց: Իբրև հասին ՚ի բեթեղէն ուր նրա-
տէր զաքէոս, և եսեալ զբազմութին ամբոխին,
եհարց թէ զի՞նչ իցէ այն. և ասեն յս անցա-
նէ. և անդ կայր թզենի մի իվ՟ր ճանապարհին:
Իսկ յս ետես որ զաքէոս ելեալ էր ՚ի թզենին
հայէր թէ ո՞վ անցանիցէ զի կարճ էր հասա-
կաւ. վս բազում ամբոխին. յոր հայեցաւ ի
վեր յս և ասէ, զա՛քէ փութա՛ էջ այտի. զի այ-
սօր արժան է ինձ ագանել ՚ի տան քում. և
էջ ընկալաւ զնա ուրախութբ: Իբրև տեսին
զնա, տրտնջէին և ասէին. թէ առ առն մե-
ղաւորի եմուտ ՚ի տուն նր: Եկն եկաց զաքէ-
ոս և ասէ՝ տ՟ր ահա զկէս ընչից իմոց աղ-
քատաց. և եթէ զոք զրկեցի՝ մէկին չորս յետ
դարձուցից և հատուցից. և ասէ յս՝ այսօր ե-
ղև փրկութն տանս այսմիկ. քանզի և սա որ-
դի Աբրահամու է. զի եկն որդի մարդոյ խնդ-
րել և կեցուցանել զկորուսեալն: Իբրև ել
անտի, առաքեաց ·Բ· աշակերտացն և ասէ՝
գնացէ՛ք ՚ի գիւղ որ հանդէպ ձեր կայ. և
անդ գտանիցէք էշ մի կապեալ և աւանակ մի

ընդ նմա. զի ոչ ոք է նստեալ ՚ի մարդկանէ
ի վ՟ր ն՟ր բերէք զնա. եթէ ոք հարցանիցէ թէ
ընդէ՞ր լուծանէք, ասացէք Տ՟ն իւրում պի
տոյ է։ Եւ գնացին գտին որ՟ ասաց նոցա
Յ՟ս։ Իբրեւ լուծանէին, ոմանք հարցանէին
եւ ասէին թէ ո՞ւր կու լուծանէք. եւ նոքա
ասացին թէ, Տ՟ն իւրում պիտոյ է. լուծին եւ
բերին զաւանակն ՚ի բեթփագէ. եւ իբրեւ հա
սին ՚ի լեառն ձիթենեաց, արկին աշակերտքն
զհանդերձս ի վերայ իշոյն եւ բազմեցուցին
զՅ՟ս ի վերայ նորա, եւ եկին զառ ի վայր ՚ի լեառ
նէն ձիթենեաց. եւ դիմեցին դէպ ՚ի յերէմ.
Եւ ամ՟ ժողովուրդքն ելին յառաջ, ծերք
ոստս ՚ի ծառոց մատուցանէին. եւ աղայքն ար
մաւենիս եւ հանդերձս տարածանէին առ
ճանապարհաւն։ Եւ հարցանէին թէ զի՞նչ
առնիցեմք Յ՟ի. եւ ասէին թէ ոսկի եւ արծաթ
ոչ առնէ եւ այլ ոչ ինչ. վասն այն ոստս եւ ար
մաւենիս մատուցանէին ասելով Օրհնեալ
եկեալ ՚ի յանուն Տ՟ն։ Իբրեւ եկն Յ՟ս եւ ե
մուտ ՚ի տաճարն, բերին առ նա կոյրս. կաղս,
եւ զամ՟ ցաւագարս. զհիւանդս. զանդամա
լոյծս եւ զամենեսեան բժշկեաց։ Իսկ զարմա
նային ամ՟ ժողովուրդքն ովսաննայ ասելով՝
օրհնութի՟ ՚ի բարձունս օրհնութի՟ որդւոյ
դաւ՟թի օրհնեալ եկեալ ՚ի յանուն տեառն։
Իսկ փարիսեցիքն ասէին վարդապետ՝ ո՞չ լը
սես զինչ ասեն, զի իբրեւ զած՟ օրհնեն զքեզ.

սատանեան դուզա զի ո՛չ գիտեն զինչ խօսին :
Ասէ Յս՝ իսկ թէ դոքա լռեսցեն, քարինքդ-
աղաղակեսցեն. և նոյն ժամայն քար մի բա
ցեալ զբերանն ասելով թէ, Օրհնեալ ե-
կեալ ՚ի յանուն տն: Նոյնպէս և քառասնա
հուր մանուկ մի զլեզուն բացեալ, նա ևս
օրհնէր ասելով. օրհնեալ եկեալ անուամբ
տն. և օրհնութիւն որդւոյ դաւթի :
Իսկ կենդանացեալն Ղազար և քորքն ընդ-
նմա շրջէին. և եւ ՚ի տաճարէն Յս և գնաց ՚ի
տունն գամաղիէլի. և անդ բերին բազում
հիւանդք և ցաւագարք և զամենեսեան բը
ժշկեաց: Իսկ անդ ամալոյծ մի որ բարձեալ
էին՝ որ ոչ կարացին ՚ի դըրանէն մտանել.
այլ բացեալ զառաստաղն իջուցին մահճօքն
առաջի Յսի : Եւ Յս ասաց ըստ հաւատոց
ձերոց եղիցի. և յասել բանին իսկոյն բժշկե
ցաւ: Եւ ՚ի յայնմ ժամու եկեալ էին ոմանք
՚ի Յաբգար Թագաւորէն, և կամէին տեսա
նել զՅս. բայց ոչ կարէին մտանել ՚ի բազ
մութէ ամբոխին. և տեսին զառաքեալն փի
լիպպոս և զԱնդրէաս. և ասացին թէ, կա
միմք զՅս տեսանել. և նոքա մտեալ ասացին
Յսի. և հրամայեաց Յս բերել զնս ՚ի ներքս.
իբրև եկին և երկիրպագին և մատուցին զնը
ւէրան և զթուղթն Աբգարու: Զոր գրեալ
էր, թէ ես Թագաւոր ծառայ Յսի. թէ
պէտ ամենեքեան տեսանեն զքեզ և այպա

հաւատամ․ ես առանց տեսանելոյ հաւատամ զքեզ․ զի դու ես Քս՟ որդի Այ՟ որ գալոց էիր․ զի ամ՟ խոնարհեցար յերկնից և իջեր վասն կորուսեալ բնութե՟ց մարդկան։ Նոյնպէս և ես կորուսեալ և ցաւագնեալ անդամօքս աղաչեմ զքեզ․ զի գաս և բժշկես զցաւս անձին իմոյ․ զի ոչ թէ թագաւորական իշխանութե՟ գլեցի իկր՟քո, այլ ծառայաբար աղաչեմ, գալ և լուսաւորել և փարատել յինէն զցաւս անձին իմոյ։ Իբրև կարդացին զթուղթն։ Տէր Յիսուս՝ է հաս ժամ զի փառաւորեսցի որդի մարդոյ․ այլ ոչ գամ․ բայց զմի ոմն յաշակերտաց իմոց յղեցից։ Իսկ պատկերահան մի յղեալէր թէ ոչ գայցէ, նա առեալ նկարեսցէ զպատկերն Յիսուսի․ զի տարցէ առ թագաւորն․ Իբրև ընկալաւ գրել, հայեցաւ յերեսն յն՟ի և սկսաւ քարշել զկերպարանն․ և դարձեալ հայեցաւ և ետես զկերպս ծերոյ․ զայն եղծեալ սկսաւ յուրեք կերպս նկարել․ և դարձեալ նայեցաւ որ յայլ կերպարանս փոխեալէ․ նա ապուշ մնաց։ Տէր Յիսուս ընդէ՞ր զարմացեալ կաս․ և պատկերահանն ասաց՝ Տ՟է՛ր կամէի զպատկեր քո նկարել․ զի տանէի առ թագաւորն իմ վս՟ տեսանելոյ և ոչ կարացի։ Տէր յս՟ ընդէ՞ր նկարես զպատկերս իմ․ ասէ ծաղկարարն՝ մեր Թագաւորն փափագ է քոյ տեսութն․ զի ասաց թէ երբ ոչ ժամանեսցէ

դալ նա, զպատկերն բերէք ինձ զի բժշկի
ցիմ 'ի ցաւէս ։ Նոյնժամ առեալ զդաստա
ռակն, արկ ընդ երեսօքն. և 'ի նոյն նկարե
ցաւ իւր դաստառակին. և զդաստառակն
ետ 'ի նմա և ասէ՝ առեալ տարէք զդաստա
ռակդ և տուք առ աբգար և ասացէք. Տէ՛. ան
գամ. Թէ բժշկեսցի ցաւն քո. զի երբ զպատ
կերս իմ տեսցես բժշկեսցի ցաւն քո. և յետ
համբառնալոյն իմոյ առաքեմ առ քեզ զԹադ
Թէոս առաքեալն. և 'ի տեսանելն զնա, ձայն
և լեզու ուղղեսցի. և 'ի մկրտելն քո ելցէ
մորթդ և Թափեսցի ամ իսցքո. և եղիցիս
որպէս նորածին մանուկ, անցաւ և անմեղ։
Որ և զմեզ արժանացուսցէ իւր Օրհնեալ
տեսութեանն Ամէն ։

✠ Ա[illegible]

## Գլուխ ԻՕ ։

ՍՆՕ Ի ԵՐԲ ՏԵԱՌՆ ԴԻՄԵՐՆ
հրէից, որ զայս ամ բաքանչելիս առ
նէ Յս, ժողովեցան և խորհուրդ արա
րին ասելով՝ այս ամ վս ծուլութեան մերոյ
եղև. վասն զի յառաջմանէ ոչ կորուսաք
զդա։ Ասան որոյ յայտնի արար զինքն. որ ըզ
մեռեալսն կենդանացոյց և զկոյրսն լուսա
ւորեաց՝ և զամ հիւանդսն բժշկեաց. և զժո
ղովուրդն ամ առ ինքն դարձոյց. զի մինչև
ցայսօր զդեղորայսն շրջէր ։ Իսկ այժմ 'ի
մէջ քաղաքիս և հրապարակիս առնէ բժշկան

չերլիս զի զկենդանացեալն Ղազար ամ̅ տե-
սօղք՝ հաւատային նմա: Ուստի պարտ է ըս-
պանանել զՂազար. եւ ապա զՅս̅: Իսկ ոմանք
ասեն՝ թէ ըսպանցուք զՂազար, վախեմք
թէ դարձեալ կենդանացուսցէ ՚ի մէջ քա-
ղաքիս. եւ ամ̅ ժողովուրդքն հաւատան ՚ի նա:
Ո՛ ՚ի յառաջ պէտի զՅս̅ ըսպանանել՝ որ ժո-
ղովուրդքն դարձցին ՚ի նմանէ. եւ մինչեւ ՚ի
չորեք շաբաթի օրն այսպէս ժողովէին եւ
խորհուրդ առնէին թէ, որպէս ըսպանցեն
զնա: Ո՛ ՚ի յամէն օր Քս̅ գայր ՚ի մէջ տաճա-
րին եւ քարոզէր. ապա կամէին ըսպանանել.
բայց երկնչէին ՚ի ժողովրդենէն :
Դարձեալ խորհուրդ արարին եւ ասացին
թէ՝ ոչ կարեմք ըմբռնել զնա ՚ի մէջ ժողո-
վրդեանն. զի ժողովուրդն քարկոծ առնէ
զմեզ: Եւ յերեկոյին հայեսցուք թէ՝ ո՛ւր
բնակի, նա կապեալ բերիցուք եւ բան մի հայ-
հոյանք դիցուք ի վերայ նորա եւ վկայեսցուք,
եւ մահապարտ է ասասցուք . եւ դիցուք ՚ի
բանտս դատաւորին . զի երբ ժողովուրդն
տեսանէ որ ՚ի բանդ եւ ՚ի յատեան դատաւո-
րին է. այլ ո՛չ կարեն խօսիլ եւ հակառակիլ.
Եւ ապա դատաւորին կաշառս տացուք, եւ ըս-
պանցուք զնա. զի յամէն երեկոյի պահապան
մարդս դնէին . զի ՚ի գալն եւ ՚ի գնալն գի-
տասցեն թէ ո՛ւր բնակիցէ. բայց ոչ գիտէ-
ին թէ ո՛ւր ելանէ կամ որպէս գայ ՚ի տա-

ճարն. զի յառաւօտէ տեսանէին ՚ի մէջ տա-
ճարին. և ոչ գիտէին թէ ո՞ւր գնայ, կամ ի՞նչ
պէս կու գայ: Իսկ տմ դպիրքն և իշխանքն
գային ՚ի տաճարն և խօսէին ընդ Յ̃ի, թէ
ըևս բանիւ որսայցեն զնա և ո՞չ կարէին. և
՚ի յաճուրն չորեքշաբաթի գնայց յուդա ՚ի
մէջ նց. և ասէ ինձ զի՞նչ կամիք տալ զի մատ
նեցից զիմ Յ վարդապետն. և ցոյց տամ ձեզ ՚ի
գիշերի զբնակութի նորա. և նոքա խոստա
ցան ·Լ̃· արծաթ տալ նմա: Իսկ ասէ յու
դա ՚ի վաղ գիշերն տեսից թէ ո՞ւր բնակիցէ
և ես եկից և տարայց զձեզ. և տաց ՚ի ձեռս
ձեր. և նոքա խնդացին վասն բանին:

Եւ ՚ի մեծի Եշի առաւօտուն ել Յ̃ս և
հրամայեաց աշակերտաց երկուց և ա-
սէ՝ գնացէ՛ք ՚ի քաղաքն. և յորժամ մը-
տանէք՝ հանդիպի ձեզ այր մի և սափոր ջրոյ
՚ի յուս նր. և դուք գնացէ՛ք ընդ նմա ՚ի տուն
յոր մտանէ. և տեսանէք զայր մի մեծատուն
ողջոյն տուք նմա և ասացէ՛ք վարդապետն
մեր ասէ կամի առնել զզատիկն. և նա ցուցա
նէ ձեզ վերնատուն մի մեծ զարդարեալ.
և անդ պատրաստեսջիք ըզզատիկն: Իբրև
գնացին աշակերտքն. այնպէս գտին զոր ա-
սացյն. ողջոյն ետուն և ասեն վարդապետն
մեր ասէ կամի առնել ըզզատիկն. և ցոյց
ետ նոցա զ վերնատուն մի զարդարեալ. և

անդ պատրաստեցին զզատիկն։ Իբրև եկն յիսուս բազմեցաւ 'ի վերնատունն առաքելովքն. և եհաս ժամ բաղարջակերացն։

Յս ասէ եղբարք· մի ոմն 'ի ձէնջ մատնելոց է զիս. և առաքեալքն զահի հարան և ասէին, մի թէ ե՞ս իցեմ։ և յուդա՛ ասէր մի թէ ե՞ս իցեմ։ Իսկ պետրոս ակնարկէր առ յօհաննէս հարցանել թէ ո՞վ իցէ. և նա անկեալ զլանջօքն Յիսուսի և ասէ՝ Տէ՛ր ո՞վ է։ Ասէ այն՝ որում ես թացից զպատառն և տաց. և սակաւ մի կեցեալ ետ յուդայի. և նա առեալ զպատառն գնաց առ քահանայապետսն. զի ոչ ոք իմացաւ յաշակերտայն. զի ո՞չ էր արժան յուդա ճաշակել 'ի սուրբ հաղորդէն. վասն այն 'ի դուրս ելաւ։ Իսկ 'ի յելանելն յուդայի, առեալ Յս զհացն 'ի սուրբ Աստուածային 'ի ձեռն իւր, Օրհնեաց, գոհացաւ, եբեկ, և ետ աշակերտացն իւրոց. և ասէ, առէ՛ք կերէ՛ք այս է ՄԱՐՄԻՆ ԻՄ. որ վասն ձեր և բազմաց բաշխի 'ի քաւութիւն և 'ի թողութիւն մեղաց։ Նոյնպէս և զբաժակն առեալ Օրհնեաց, գոհացաւ, էարբ, ետ իւրոց աշակերտացն և ասէ, արբէ՛ք 'ի սմանէ ամենեքեան այս է ԱՐԻՒՆ ԻՄ նորոյ ուխտի. որ վասն ձեր և բազմաց հեղանի 'ի քաւութիւն և 'ի թողութիւն մեղաց։

Օ է այսուհետև զայս արարէք առ իմոյ յիշա-

տակի՝ սուրբ պատարագ։

Իբրև ճաշակեցին, ել Յիսուս և եդ ամա-
զան և արկ ջուր. եդ աթոռ և առեալ զեն-
ջակ ՚ի ձեռսին և խոնարհեցաւ ՚ի վերայ եր-
կու ծնկանցն, և ասէ աշակերտացն թէ,
բերէք լուանամ զոտս ձեր։ Ասէ Պետրոս
դու զի՞մ ոտս լուանաս. ո՛չ ոք լուացես
զոտս իմ յաւիտեան։ Ասէ Յիսուս՝ թէ ո՛չ
լուացից զոտսքո, ո՛չ ունիս ընդ իս մասն։
Ասէ Պետրոս՝ Տէր՝ ո՛չ միայն զոտս իմ, այլ
զգլուխս և զձեռս իմ։ Ասէ Յիսուս ոչէ
պէտք լուանալ զգլուխս և զձեռս. այլ ո-
տիցդ պէտք են լուանիլ և մաքրել որպէս
զգլուխս և զձեռսդ։ Իբրև լուաց զոտս ա-
շակերտացն, ել Յիսուս և բազմեցաւ ՚ի
տեղի իւր և ասէ՝ զի՞նչ ասէք ինձ։

Ասէ Պետրոս՝ Տէր և Վարդապետ ասեմք
քեզ։ Ասէ Յիսուս՝ զի ես որ Տէր և Վար-
դապետ եմ, լուացի զոտս ձեր. նոյնպէս
և դուք արասջիք միմեանց. զի օրինակ մի
ետու ձեզ. և թէ կամիք կոխել զգլուխս
չար հպարտին սատանայի զխոնարհու-
թիւն ունիցիք և սիրեցէք զմի-
մեանս։ Որով մաքրիք ՚ի մեղաց,
և ՚ի յաղտեղութենէ աստի
կենացս ամէն։



Վասն խաչելութեան և չարչարանացն Քրիստոսի ։

Գլուխ ։ ԽԷ ։

ՀՈՍԿ ՅՈՒՐԲԱԹԻ ՕՐՏԱՆԱՄ-
գիշերին մինչ դեռ նստեալ էին, աս-
յա՜ յայսմ գիշերի ամենեքեան փախչե-
լոց էք լինել. և զիս միայն թողուցուք. բայց
չեմ միայն զի Հայր իմ ընդ իս է ։ Նաև պետ-
րոս

րոս՝ տէր Թէպէտ ամենեքեան փախիցեն
և ես ոչ. զի ոչ բաժանեցայց ՚ի քէն մինչև
՚ի մեռանիլ հասանիցէ։ Իսկ ասէ յս̃ ցպետ-
րոս՝ յայսմ գիշերի մինչ ՚ի հաւախօսիլն ե-
րիցս անգամ ուրասցիս չի գիտեմ ասելով. և
մինչ նա զայս խօսէր, եկն յուդա, և գունդք
բռնաւորացն ընդ նմա. ջահիւք և սուսերօք.
և յուդա համբուրեաց զնա։ Ասէ յս̃ ով
յուդա համբուրելո՞վ մատնես զվարդապետն
քո։ Իսկ յետուս ասէ ցհրեայսն՝ զո՞վ խնդ-
րէք. և նոքա ասեն զյս̃. ասէ Յս̃՝ ես եմ.
իբրև ասաց ես եմ ՚ի յետոս չոքան և հարան
՚ի գետին. և Յս̃ յարոյց զնոսա։ Իսկ ասէ
Թողէ՛ք զդոսա երթալ. և կալան զյս̃ և կա-
պեցին զձեռսն ՚ի յետս. և ՚ի նոյն ժամու հա-
նեալ պետրոս զսուրն էհար զականջն աջոյ
զծառային քահանայապետին. և տէրն մեր յան-
դիմանեաց զպետրոս ասելով՝ ո՞չ գիտես որ
այժմ զերկոտասան բիւրս հրեշտակաց կա-
րող եմ իջուցանել և կորուսանել զսոսա.
բայց պարտ է գրելոցն կատարել. և առող-
ջացոյց ծառային զականջն. և ՚ի նոյն ժամայն
աշակերտքն ամենեքեան փախեան։ Բայց
պետրոս և յօհաննէս միացին զհետ Յի̃. զի
տեսցեն զկատարածն. և տարեալ զյս̃ ՚ի
տուն քահանայապետին. և անդ բազում վը-
կայս բերին, հարցաքննեալ մինչ որ պատա-
ռեալ քահանայապետն զհանդերձս թէ,

ի՞նչ են վկայ սորա. որ ի՛նքն մարդ է եւ որդի
այ առնէ զի՛նքն։ Որ 'ինոյն տեղի երեք ան
գամ ուրացաւ պետրոս թէ, ո՛չ գիտեմ զնա,
մինչ որ հաւն խօսեցաւ։ Իսկ պետրոս յե
տեաց զքանն յի. եւ ելեալ դառնապէս. եւ հր
րէայքն բազում բանիւ նախատեցին զքսն.
եւ սուտ վկայս կացուցին, թէ հայհոյէ զած.
երբ լուսացաւ, տարան առ պիղատոս. եւ ա
մենայն հրէայքն երուսաղէմի ժողովեցան
իբրեւ. ժ ռ ռ. մարդ եւ եղեն կամակից ըս
պանմանն քի։ Իբրեւ նստաւ պիղատոս վն
դատաստան առնելոյ։ Եհարց թէ զի՞նչ
չար արար սա. իսկ հրէայքն ասէին, թէ
չէր չարագործ ո՛չ մատնէաք զդա քեզ։ Ասա
ասեն զի՞նչ է մարդ որ հայհոյէ զած. եւ զժո
ղովուրդսն մոլորեցուցանէ։ Սաէ պիղատոս՝
ես բազում հարձափորձ եղէ առանձին, եւ
ամենեւին ոչ ինչ խօսեցաւ բանս ինչ հայ
հոյութե. ո՛չ կարեմ՝ մահապարտ առնել զդ
դա։ Ասա նոյն ժամայն կոչեաց կինն նորա
զպիղատոս 'իններս եւ ասաց թէ, դու չունիս
բան ինչ ընդ դմա. այրդ այդ արդար է.
քանզի այսօր 'ի տեսիլս տեսի բազում ինչ. զի
չարչարեցին զդա հրէայքն եւ մեռաւ. եւ դար
ձեալ կենդանացաւ եւ նստաւ իվր հրեղէն
աթոռոյն. եւ չարչարէր զամենայն թըշնա
միս իւր։ Իբրեւ լուաւ պիղատոս, ել ար
տաքս եւ ասէ՝ չար ինչ ո՛չ գտանեմ 'ի սմա.

խրատեցէք եւ արձակեցէք զդա։ Իսկ հրեայքն միաբան ասացին, թէ արձակես զդա, չես բարեկամ թագաւորին. զի սա թագաւոր կոչէ զանձն իւր. եւ բազում աշակերտս ունի. եւ բազում հեծելազօր ժողովեալ եկամի թագաւորել։ Իբրեւ լուաւ պիղատոս, կոչեաց զյս̃ եւ ասէ՝ թագաւոր ո՞մն ես դու։ Նա ասէ յս̃՝ թագաւորութիւն իմ չէ աստի. թէ թագաւորութիւն իմ աստի լինէր, մարտնչէին աշակերտք իմ, որ ո՛չ կապեալ մնայի առաջի քո։ Ապա գալոց է որդի մարդոյ փառօք հօր եւ ամ̃ հրեշտակօք դատել զկենդանիս եւ զմեռեալս։ Իբրեւ լուաւ զբանս այս պիղատոս՝ ել արտաքս եւ ասէր ցնս̃. զի սահմանք է ձեր յամէն տօնի մահապարտ մի արձակել. ահա զայս արձակեցէք։ Նա նք̃ աղաղակեալ թէ, զբարաբբայն արձակեա մեզ, եզյս̃ ՝ի խաչ հան։ Իսկ պիղատոս առեալ զջուրն լուաց զձեռն ասելով թէ, ես անպարտ եմ յարենէ դորին. արիւն դորա ՝ի վր̃ ձեր եղիցի։ Նա նք̃ ասեն՝ արիւն դորա ՝ի վր̃ մեր, եւ ՝ի վր̃ որդւոց մերոց. եւ հանեալ զյս̃ ետ ՝ի ձեռս նոցա. եւ հրեայքն բարձրաձայն գոչէին ՝ի խաչ հան ՝ի խաչ հան զդա։ Նա առեալ դատաքն հրէից զյս̃, եւ եդեալ զխաչափայտն ՝ի յուսն, եւ զփուշ պսակն ՝ի գլուխն, շրջեցուցանէին զերուսաղէմաւ եւ ասէին, եկայք եւ տեսէք զմահ սուտ մարգարէին. եւ այլ բազում նախատանօք տանէ

ին զայն. և ՚ի յերրորդ ժամուն ՚ի ճաշ հանին.
և էր. առաջաւոր՝ զմէկն յայլ կողմն խաչեցին. և
զմիւսն ՚ի ձախակողմն։ Եւ ՚ի վեց ժամուն եր
կիր շարժեցաւ. վէմք պատառեցան. և գե
րեզմանք բացան. արեգակն և լուսինն խաւա
րեցաւ. և աստեղք երևեցան. և վարագոյր
տաճարին պատառեցաւ վերուստ ՚ի վայր. մին
չև .Թ. ժամ խաւար մնաց. իսկ .Թ. ժամոյն
պայծառացաւ. որև յովսէփ արեմաթացին
գնաց առ պիղատոս, և խնդրեաց զմարմինն
յի̃։ Իսկ պիղատոս ոչ հաւատայր թէ մեռեալ
իցէ. և առաքեաց զղունկիանոս հարիւրա
պետն. զի երթեալ տեսանիցէ թէ մեռա՞ծ
է թէ կենդանի։ Եւ իբրև գնաց, ետես ան
շնչացեալ. և գեղարդեամբն խոցեալ զկողն
յի. զի ստեսցէ թէ մեռած է թէ կենդանի.
իբրև խոցեաց, ցոլացաւ ՚ի կողէն արիւն և
ջուր. և կաթ մի անտի թռեալ ՚ի յաչքն հա
րիւրապետին, լուսաւորեաց զաչս նր̃. քան
զի մի ականի էր. և գնացեալ զղունկիանոս
ցոյց ետ զաչքն իւր պիղատոսի. և պատմեաց
զա̃մ ըսքանչելիսն և զարիւն և զջուր բղխելն
և զհուր ցոլանալն։ Իբրև լուաւ պիղատոս
զսքանչելիս, շնորհեաց յովսէփայ զմարմինն
տ̃ն։ Յետ այնորիկ յովսէփ գնաց իջուցանել
զմարմինն տ̃ն ՚ի խաչէն. և մինչ կամէր զբե
ւեռսն քելփէթինով հանել, նա հուր ցոլա
նայր ՚ի բևեռացն. վասն որոյ ՚ի յահէ անտի ՚ի

ծունկ չոքեալ եւ զձեռս համբարձեալ ասէ, Տ͞ր ա͞ծ Տ͞ր եւ հզօր Տ͞ր եւ անմահ որ խաչեցար վ͞ն մեր ողորմեա մեզ։ Եւ զայս երիցս ասա ցեալ, էջ մարմինն Տ͞ր եւ հանգեաւ ՛ի վերայ բազկացն յովսէփայ։ Եւ էր երեկոյ եւ փու Թապէս պատեցին կտաւօք, եւ էր ՛ի պարտի զի անդ քարէ փորեալ գերեզման մի. որ ոմն սոմնաս անուն հազարապետ փորել ետ վասն իւր. եւ նա գնացեալ ՛ի յօտար երկիր եւ ըսպա նեալ ՛ի յաւազակաց. եւ մարմինն մնաց յերկրի եւ Թռչունք զնա կերին. զոր մարգարէն գու շակեաց. եւ մնացեալ գերեզմանն ամայի. վ͞ն որոյ բերեալ եդին անդ զմարմինն յ͞սի. եւ վէմ մի մեծ արկին ՛ի դուռն գերեզմանին եւ գնա ցին։ Իսկ իւղաբեր կանայքն ՛ի հեռաստանէ հայէին. եւ տեսին Թէ ո՛րպէս եդաւ մարմին ն͞ր. եւ ՛ի շաբաԹ օրն նոցա կիրակի էր ո՛չ գնա ցին. Իսկ ՛ի շաբաԹ օրն քահանայապետքն գնացին առ պիղատոս եւ ասացին Թէ՝ մինչ դեռ կենդանի էր նա ասէր Թէ յետ երից աւուրց կենդանանամ. չիցէ աշակերտքն նորա գողասցեն եւ ասասցեն Թէ յարեաւ, եւ մոլորեցուցանեն զժողովուրդն։ Ասէ պի ղատոս զ͞մ զոր ինչ կամեցայք արարէք ա ռա՛նց կամաց իմոց. եւ այժմ չորս զօրական տամ ձեզ առէ՛ք գնացէ՛ք եզգուշացարուք։ Եւ Թէ կենդանանայ՝ գրեմ զձեզ առ կայսրն մեր որ ամենեքեանդ գերի վարիցիք ։ Եւ

պիղատոս զա̃մ հրաման գրեալ էր որ ինչ՝ ի ժամ
խաչելութեն նր̃. իսկ քահանայապետքն փակե
ցին մեծ վիմօք զգերեզմանն և զմռեցին և
մօհրեցին. դ̃. զինուոր. եւ ի. հրեայ պահա
պան եդին շուրջ զգերեզմանաւն պահել
զմարմին Տեառն Յս̃ի։



Ճառ ընդ Յարութեանն Քրիստոսի Աստուծոյ մերոյ ։

Գլուխ ԻԲ ։

Զ Ի ՅՈՒՐԲԱԹԻ ԱՒՐ ԵՐԵԿՈՅԻՆ
թաղեցին զՅս̃ ՝ի մեծի այն տապացեալ

մատուռին, որ փոքրիկ դուռն ունէր գե
րեզմանին: Յորժամ յաւելեալ Թաղեաց զյմ,
քար մի մեծ կափարիչ արկին ի վ̅ր դրանն և
գնացին. և ՚ի շաբաթու առաւօտն հրամանաւ
պիղատոսի եկին քահանայքն և իշխանքն հը
րէից և մտին ՚ի գերեզմանն և ա.ե սին զանեղին.
ապա կափարիչ վիմովն ծածկեցին զդուռն
և մոհրեցին. չորս զինաւոր և հարիւր քսան
ջհուտ պահապան եդին և գնացին. զի այն
չորս զինաւորքն կռապաշտք էին որ պահէ
ին զդուռն գերեզմանին. արթունք և պատ
րաստք էին. Ճ̅Ի̅. ջհուտքն շուրջ զգերեզմա
նաւն որք պահէին և ամենեքեան զրոյց
տային մինչև ՚ի լեց ժամն: Նա տեսին որ
յանկարծակի ձայնչումն եղև երկրէ յուժեղ քա
մոյ. և հրեշտակ յերկնից իջաւ և լոյս ճառա
գայթեցաւ ի վ̅ր ս̅բ գերեզմանին. և բացաւ
գերեզմանն. և ա̅ռն մեր յարեաւ լուսափայլ
կերպարանօք ՚ի գերեզմանէն. և պահապանքն
կիսամեռ եղեն. և այնպէս կիսամեռ մնա
ցին մինչև յառաւօտն. և մի ՚ի նոցանէ ոչ
կարաց շարժել ՚ի տեղացն մինչև յառաւօտն:
Իսկ իւղաբեր կանայքն ՚ի հեռաստանէ տե
սանէին զգերեզմանն և զԹաղումն. զի ՚ի շա
բաթ օրն ո՛չ գնացին վասն պատուիրանին:
Իսկ ՚ի կիրակի առաւօտու ՚ի հաւախօսին,
մարիամ մագդաղենացին եկն ՚ի գերեզմանն
որ էբլև այր էր խօսքն. և գնացքն ա̅ռ մար

դոյ. եկին եւ իւղաբերքն 'ի գերեզմանն վա
սերոյն • Բ՟ն: Բայց մարիամ մագդաղենա
ցին փութապէս եկ 'ի գերեզմանն եւ ետես
զգերեզմանն դատարկ. եւ ծիչ բարձեալ գնաց
ընդ այլ ճանապարհ եւ ո՛չ հանդիպեցաւ այլ
իւղաբերիցն. զի այլ իւղաբերքն ծրագով եւ
լուսով, եւ խնկօք եւ մոմեղինօք ըստ կանացի
բնութե եկին: Իբրեւ մարիամ մագդաղենա
ցին յառաջ գնաց եւ ետես զգերեզմանն դա
տարկ, լալով դարձաւ 'ի յառաքելսն եւ
ասաց նց, թէ գնացի 'ի գերեզմանն տեսի դա
տարկ զնա. ապա միւս կանայքն երկու դաս
գնացին եւ ոչ հանդիպեցան մարիամու մագ
դաղենացւոյն: Իսկ մարիամ ածածին եւ
միւս մարիամն, եւ սողոմէ մտին 'ի գերեզ
մանն եւ լացին. եւ տեսին հրեշտակ մի որ նս
տեալէր 'ի վր վիմին եւ ասէր կանանցն. ըն
դե՞ր լայք եւ զկենդանին ընդ մեռեալս
խնդրէք. չէ աստ՝ քանզի յարեաւ որպս ասաց
ձեզ յառաջագոյն. եկայք տեսէք զտեղին
ուր կայր մարմինն յիսուսի:
Իբրեւ դարձան նոքա գնալ առաքելոցն եւ
պատմել զյարութիւնն: Իսկ 'ի պատմելն, մա
րիամ յովսեփայ եւ այլ կանայք ընդ նոսա լսե
ցին զտեսիլ հրեշտակին. եւ նոքա եւս գնացին
'ի տեսանել զգերեզմանն. եւ տեսին երկու
հրեշտակ զմին 'ի յանարից կոյս, եւ զմիւսն յա
ջից: Նոցա եւս ասացին հրեշտակքն զի՞ խնդ

րէք զկենդանին ընդ մեռեալս յարեաւ
քն. եւ գնացէք ՚ի գալիլեայ եւ անդ տեսանիցէք
զնա. իբրեւ դարձան յառաքեալսն մարիամ
մագդաղենացին, ասէ եթէ՝ դատարկ տե
սի զգերեզմանն: Այլ մարիամ եւ սողոմէ ա
սէին թէ՝ մեք հրեշտակ տեսաք. եւ այլ կա
նայք ասէին թէ մեք եւս հրեշտակ տեսաք.
վն այն ՚ի մէջ աշակերտացն սակաւքին շատ
փաղփութիւք լինէին. զի ոչ միաբանեցան
խօսք նոցա: Այն երկին պետրոս եւ յովհաննէս
եւ գնացին ՚ի գերեզմանն տեսանել. եւ յառա
ջեալ յօհան գնաց եւ ետես զգերեզմանն դա
տարկ. բայց ոչ հայեցաւ ՚ի ներս. իբրեւ եկն
պետրոս, եւ եմուտ ՚ի գերեզմանն եւ ետես
զ վարշամակն որ յերեսին եդեալ էր՝ նա ՚ի
գլխոյ կողմն ծալեալ եւ եդեալ էր. վն որոյ
ասէին թէ ճշմարիտ է յարութիւնն Քի.
թէ գողացեալ էին, պատանովն տանէին. ընդ
էր հանէին զպատանն եւ զ վարշամակն:
Իսկ մարիամ մագդաղենացին գնացեալ էր
եւ շրջէր ընդ պարտիզովն՝ թերեւս գտցէ ըզ
մարմինն յի. լալով շրջէր եւ ասէր ով տր յս
այդ. ընչ էր զոր դու արարեր ընդ մեզ. զի
հաւատացեալ էաք թէ դու որդի այ ես. եւ
այսքան սքանչելիս առնէիր եւ զմեռեալսն
յարուցանէիր. զքեզ ընդէ՞ր գողացնել տը
ճիր. զայլոց մեռեալսն կենդանացուցիր.
եւ դու ընդէ՞ր ոչ կենդանացար եւ զմեզ ուրա

խոստացանէր իւ. զի ՚ի ժամ խաչելութեն քոյ լա՛
էր մեզ, քան թէ այսօր. թէպէտ լաց եւ սուգ
էաք. բայց ակն ունէաք թէ զքեզ կենդանի
կու տեսանեմք խնդայաք եւ պարծենայաք։
Նա այժմ ամօթ եւ նախատինք եւ ծաղր արա
րեր զմեզ. մինչդեռ այսպէս լայր եւ բազում
ողբս առնէր, նա դարձաւ յետոյս եւ ետես մարդ
մի. գիտաց թէ պարտիզպանն է. եւ ՚ի հարցա
նելն, ասաց յնա՞ ո՞վ մարիամ զո՞ խնդրես. եւ ՚ի
ձայնէն գիտացեալ անկաւ յոտսն բաղձմամբ
եւ սիրով առնէր ռա՛բբունի։ Իսկ տ՟րն մեր ասաց
մի՛ մերձենար յիս. այլ երթ դու յեղբարսն
իմ եւ ասա նց՟ գնալ ՚ի գալիլեայ եւ անդ տեսա
նել զիս. եւ նա գնացեալ պատմեաց աշակեր
տացն եթէ տեսի զտէրն. եւ ասաց ձեզ գնալ
՚ի գալիլեայ եւ անդ տեսանել զտէրն։ Որք
գնացին առաքեալքն, եւ այլ աշակերտեալքն
եւ իւղաբեր կանայքն. եւ այլ հաւատացեալքն
ընդ նոսա գնացին .Ծ՟Ի. հոգի. եւ անդ տեսին
զտէրն. եւ ասէ յնա ընդ առաքելոցն, տուաւ
ինձ ա՟մ իշխանութի՟ յերկինս եւ յերկրի. որպ՟
առաքեաց զիս հայր՝ նոյնպէս եւ ես առա
քեմ զձեզ. գնացէք այսուհետեւ աշակերտե
ցէք զա՟մ հեթանոսս մկրտեցէք զն՟ս յանուն
հօր եւ Որդւոյ եւ հոգւոյն սրբոյ. ուսուցէ՛ք
նց՟ պահել զա՟մ զոր ինչ պատուիրեցի ձեզ. եւ
ահաւասիկ ես ընդ ձեզ եմ զա՟մ աւուրս մին
չեւ ՚ի կատարած աշխարհի։

✠ Նաև այլ պատմութիւն վասն Յարութեան տեառն մերոյ

Գլուխ ։ ԻԹ ։

# ԵՒ ԸՆԴ ԱՌԱՒՕՏՆ ԵԿԻՆ

իւղաբեր կանայքն ՚ի գերեզմանն. և դեռ պահապանքն կիսամեռ անկեալ կային. Երբև լուեցին զձայն գալոյ նոցա որք լային. պահապանքն ելեալ գնացին քահանայապետացն և իշխանացն պատմել զյարութիւն .քի։ Իսկ .գ. զինաւորքն կամէին գնալ և պատմել պիղատոսի. բայց ասէին դեռևս ննջեալ է դատաւորն. երբ զարթնու, ապա գնամք պատմեմք։ Երբև լուան քահանայապետքն, փութապէս ժողովեցին զմեծամեծսն և խաբէութեամբ տարան զ.գ. զինաւորսն ՚ի ներքս նատունն ՚ի ծածուկ և կոչեցին .Ճի. պահապանսն և ահացուցին ընդ և ասեն ասացէք մինչ մեք ՚ի քուն էաք ՚ի գիշերին, եկեալ աշակերտքն նր գողացան զնա։ Այսպէս ուսուցին պահապանացն։ Իսկ .գ. զինւորքն ասացին թէ մեք յայտնի տեսաք, և ոչ կարեմք ծածկել. և քահանայքն գնացին բերին զյուդայի արծաթն և ետուն զօրականացն, թէ մի ասէք այնպէս. նք ասեն մեք զշիտակն կասեմք. սուտ ոչ կարեմք ասել. և հրէայքն ասեն. եթէ ոչ ասէք այդպէս ըսպանանեմք զձեզ. և զմարմին ձեր տանիմք ձգեմք ՚ի դուռն գերեզմանին. և ասեմք թէ աշակերտքն յն ըսպանեցին. և զարծաթն

տամք 'ի գլուխս արեանց ձերոց: Իսկ յաւէտ ն͞ց
առին զարծաթն և հաւանեցան յասելն այն
պէս: Եւ 'ի գիշերին յորում յարեաւ տ͞րն.
և բազում մարմինք ս͞րբց յարեան. որք ասէ ա
ւետարանն. և մտին 'ի քաղաքն ե͞ղմ. և համ
բաւեցին զյարութիւնն ք͞սի. և որք հին մե
ռեալք էին երբեմն զարթեալ շրջէին 'ի մէջ քա
ղաքին: Իսկ նոր մեռեալքն .Ժ. տարէն .Ի.
տարէն, գնացին 'ի տունս իւրեանց և պատ
մեցին զյարութիւնն ք͞սի: Իսկ ուրախացեալ
ընտանիք ն͞ց, կերակուրս պատրաստեցին. ա
պա անյայտ եղեն. վ͞ն որոյ յերկու շաբաթի
օրն մեռելոց կարգեցին. զի այն կերակուրն
մեռելոց տան: Դարձեալ երբ յայտնի եղև
'ի մէջ ս͞մ քաղաքին յարութիւնն ք͞սի, և համ
բաւն ն͞ր, գնացեալ ասացին պիղատոսի. զոր
և կոչեաց պիղատոս զզաւսն հրէից և ասաց՝
այս ի՞նչ է որ լսեմ վ͞ս Յ͞սի թէ կենդանա
ցեալ է ասեն. և հրէայքն պատասխանեալ
թէ սուտ ասեն. բեր զպահապանսն և հար
ցիր ն͞ց: Իսկ պիղատոս հրամայեաց բերել ըզ
պահապանսն և ուրիշ ուրիշ տեղ կացուցին.
և զմինն եբեր և եհարց թէ ի՞նչպէս տեսայք
զյ͞ս. և նա ասէ մինչ մեք 'ի քուն էաք աշա
կերտքն ն͞ր եկեալ 'ի գիշերի գողացան զնա.
և բերին զմիւսն. և նա նոյնպէս ասաց:
Իսկ պիղատոս յայտնապէս ասաց թէ սուտ
էք. զի դուք .Ճ͞Ի. հոգի էիք. ի՞նչպէս եկին

գողացան. եւ դուք ոչ իմացայք. ապա՞ ընդ ինչ
պէս ՚ի քուն էիք. եթէ ՚ի քուն էիք որպէս
իմացայք թէ գողացան. կամ ինչի՞ թողէք որ
գողացան. էր սուտ ասէք թէ գողացան:
Նա՛ յետ այնորիկ կոչեաց զայն .դ̃. պահա
պանսն եւ հարց զնոսա պիղատոս. թէ դուք
ի՞նչպէս տեսիք. եւ նք ասեն յայտնի յարեաւ
քս̃. մեք ոչ կարեմք ծածկել: Նա պիղատոս՝
ընդէ՞ր ոչ եկիք յառաջագոյն ասել ինձ. ա
սեն պահապանքն՝ մեք եկաք թէ պատմեմք,
դեռ մութն էր դու ննջեալ էիր. ասացաք
թէ երբ լուսանայ գամք ասեմք քեզ. եւ հրէ
այքն խաբէութ̃ կոչեցին զմեզ ծածուկ ՚ի
ներքնատուն մի. եւ ուսուցին մեզ թէ աս
ցէք մինչ մեք ՚ի քուն էաք աշակերտքն նր̃ ե
կեալ գողացան զնա. եւ մեք ասացաք թէ ոչ կա
րեմք ծածկել զյարութին յի̃ի: Նա՛ նոքա ասա
ցին՝ թէ ոչ ասէք այնպէս, զձեզ կապանա
նեմք. եւ զմարմինս ձեր տարեալ ձգեմք ՚ի դու
ռըն գերեզմանին. եւ ասեմք թէ աշակերտքն
սպանին. եւ եթէ գիտասցէ դատաւորն՝ զար
ծաթս զայս տամք նորա, վս̃ արեան գլխոյ
ձերոյ: Մք̃ որոյ վախեցաք եւ զայս կաշառս
առաք. եւ ասացաք թէ աշակերտքն նորա գո
ղացան. այս այսպէս եղեւ եւ դու ողջ լեր
դատաւոր: Նա՛ ըստ՝ եթէ կամիս, գնամք ՚ի գե
րեզմանն. եւ տես զտեղին թէ որպէս ըն
քանչելեօք յարեաւ պատմեսցուք քեզ: Նա՛

գնաց պիղատոս 'ի գերեզմանն · Քս̄ի · իսկ պահապանքն ցոյց տուին զկուածու զգերեզմանն քարով և կնքով շինեալ ամրագոյն · և պիղատոս ասաց ճշմարիտ է յարութին՝ մեք հաճատամք· բայց դուք պատմեցէք թէ ո՞չ տեսայք զյարութին նր̄· ասեն պահապանքն թէ 'ի դուռն գերեզմանին մեծ քար մի ե-դեալ էին և կնքեալ էին զ շրջապատն քահանայապետքն· և մեք չորս զինուորս պահէաք զդուռն գերեզմանին և .ծ՛ ի. ջհուտ շուրջ զնովաւ պահէին· և ծաղր առնէին թքանէին և այպանէին· և ասէին թէ այժմ պիտի կենդանանայ՞ տեսանեմք թէ որպիսի յարութին առնէ· ծիծաղէին հետ միմեանց։ իսկ յանկարծակի յանցեալ մէջ գիշերին՝ տեսաք որ հնչումն եղև և զօրք հրեղէնք իջին յերկնից· և լոյս մեծ ծագեաց· և մեք յահէ անտի 'ի հրեշտակացն կիսամեռ եղաք· և տեսաք զՅիսուս որ լուսափայլ կերպարանօք կենդանի յարեաւ 'ի գերեզմանէն · այս մեք այնպէս կիսամեռ մնացաք մինչև յառաւօտն· իբրև առաւօտ եղև, եկին ոմանք կանայք անուշահոտ խնկօք, լալով և ողբալով· իբրև լուաք զձայն նոցա զգաստացաք· և ելեալ եկաք թէ պատմեմք ձեզ, հրեայքն բերեալ ահացուցին զմեզ. և այս չափ արծաթս և կաշառս տվին մեզ. թէ ասացէք մինչ մեք 'ի քուն էաք աշակերտքն Յս̄ի եկեալ 'ի գիշերի

գողացան զնա. եւ ահա զոր ինչ տեսաք ասա
ցաք քեզ. իսկ այժմ դու գիտես. եւ պիղատոս
ետ ըմպանանել զսուտ պահապանսն. եւ ա
ռեալ զարծաթն ետ այնոցիկ որ զճշմարիտն
ասացին։ Իսկ յետ այնորիկ զգլխաւորսն հը
րէից մէկ մէկ ժողովեալ եդ ՚ի պահեստի
իբրեւ ՚ի գրաւէ ասելով թէ՝ ով դասք հրէ
ից, յայտնի լիցի ձեզ. ահա զոր ինչ հրաշս
արարեալ էր Յիսուս մինչեւ ՚ի խաչելութիւն եւ
յարութիւն զամենն ՚ի գիր առի. եւ դուք զոր
ինչ հաւատացիք նմա զչարչարանս եւ զհայհոյ
անս մինչ ՚ի խաչ դատապարտեալ հանեցիք
բռնութեամբ. նա զամենն գնեմ առաջի մեծի
կայսերն. եւ զձեզ ՚ի մահ եւ ՚ի գերութիւն տամ
ասելով՝ մնաց այնպէս. Նա ապա այսպէսն բանս
որ եղեւ առաքեալքն ոչ գիտէին. զի գնա
ցեալ էին ՚ի գալիլեայ տեսանել զՅս. իբրեւ
տեսին յարուցեալ զՔս ամենեքեան երկիր
պագին. եւ ուրախութեամբ դարձան եկին յե
րուսաղէմ։ Կոչեաց պիղատոս զպետրոս. եւ
գրեաց զօրինակ գրոյն չարչարանացն եւ խա
չելութեանն. թաղմանն եւ յարութեանն. եւ
ասաց տուր զայս գիրս ուր եգնայք քարոզէք
նա գիրն իմ վկայ լիցի ձեզ. բայց պատրաստ
կացէք ՚ի հրէից ազգէ յայսմանէ.

Իբրեւ տարաւ պետրոս զգիրն, եւ կարդաց ՚ի
մէջ առաքելոցն, ուրախացան եւ գնացին ՚ի
վերնատունն։ Որով նոցուն շնորհաց ա

առաքելոցն արժանացուք՝ եւ տեսոյն Ք͞ի աստ եւ ՚ի հանդերձելումն ամէն:

✠ Պատմեալ վասն յարութեան որ եղեւ նշանայից.

Գլուխ: Ա:

# ՄԻՆՉ ԴԵՌ ԳՆԱՅԻՆ ԿՂԷՈ

պաս եւ ոմն ընդ իւր յեմմաւուսայ ճանապարհին, որք խօսակցէին վասն չարչարանացն եւ խաչելութեան Ք͞ի, եւ զայն տեսեալ զի ոմն հասեալ յետուստ ընկեր եղեւ նոցա. եւ հարցանէր զնոսա թէ զինչ վիճիք եւ խօսիք. եւ նոքա ասէին վ͞ս Յիսուսի խօսակցիմք, զի այր արդար եւ ՚ի կուսէ ծնեալ, այսքան հրաշս գործեալ ՚ի մէջ իսրայէլի. զոր ՚ի նախանձու հրէից մատնեցին զնա առ քահանայապետսն եւ առ դատաւորսն. զոր չարչարեալ խաչեցին եւ թաղեցին. ահա այս ·գ·. օր է յորմէ հետէ եղեւ. բայց ոմանք կանանց եւ աշակերտացն զարմացուցին զմեզ թէ՝ տեսաք կենդանի ըզնա. մեք եւս յոյս ունէաք որ փրկութ͞ի էր հրէից, ոչ գիտեմք թէ ինչ եղեւ: Եւ Յ͞ս ասէ՝ ոչ գիտեմ զայրն այն զինչ խօսիք. եւ նոքա ասեն թէ դու միայն կաս յեր͞էմ որ ինչ գործեցաւ ոչ գիտես: Եւ յետ նորա իբրեւ անծանօթ լինելոյն ըսկսաւ պատմել ՚ի մովսիսէ եւ յա͞մ մարգարէից թէ պարտ էր Ք͞ի չարչարիլ եւ յերիր աւուր յառնել. վասն որոյ պարտէ հաւատալ ա͞մ գը.

րոցն որք գրեցան վասն յարութեան նորա։ Այլ
իբրև մերձեցան ՚ի գիւղն յոր երթային, և
նա պատճառէր թէ հեռագոյն ևս ուրեք
երթալ. և բռնադատեալ զնա ասելով առ
մեզ ագիր զի երեկս է և տարաժամեալ է օրս։
Վասն որոյ խոյս ետ և եմուտ ագանել ընդ նոսա.
Եւ եղև ՚ի բազմելն Յիսուսի ընդ նոսա, առեալ զհացն
եբեկ և ետ նոցա. և նոցա բացան աչքն առ ՚ի ճա
նաչելոյ զնա. և նա եղև աներևոյթ. և այլ ոչ
տեսին և զարմացան և ասէին թէ յիմարեալ
էին միտք մեր. յայնչափ պատմելն մեզ վասն
յարութեան իւրոյ և մեք ոչ իմացաք։ Այլ յետ
այնորիկ շուտով դարձան յԵրուսաղէմ և գնացին ՚ի
վերնատունն. և գտին զառաքեալսն նստեալ
ուրախութեամբ։ Իսկ կղէոպանքն աւետիս ե-
տուն առաքելոցն թէ, մինչ մեք գնայաք ՚ի
Ճանապարհին Էմմաւուսայ, երևեցաւ մեզ
և բացեալ մեզ զբան մարգարէիցն յաղագս
իւր, և գնացեալ ՚ի յօթևանն մեր առեալ
զհաց օրհնեաց և եբեկ և ՚ի նոյն ժամայն ծա
նեաք զնա. և նա անյայտ եղև առ ժամայն.
վասն որոյ ճմլեցան սիրտք մեր և եկաք առ ձեզ։
Այլ նոքա ևս նոցա պատմեցին թէ տեսաք զՏէրն
՚ի գալիլեայ և այսչափ խօսեցաւ ընդ մեզ։
Այլ մինչդեռ զայս խօսէին եկն եկաց Քրիստոս
՚ի մէջ նոցա և ասաց ողջոյն ընդ ձեզ. ես եմ մի
երկնչիք։ Իսկ նոքա զարհուրեցան. զի դուռն
փակեալ էր, և համարէին ոգի ինչ տեսանել.

եւ ասէ. յո̃ ոգի մարմին եւ ոսկր ոչ ունի. եւ բերէք զմատունս ձեր՝ շօշափեցէք եւ տեսէք թէ ո՞պ մարմին եւ ոսկր ունիմ. եւ փչեաց ՚ի նս̃ եւ ասէ՝ առէք զ՚ոգի սր̃բ. եւ ահա ես տու ձեզ իշխանութի̃ կապելոյ եւ արձակելոյ: Նոյն այս ա̃մ որ ինչ եղեւ նա ոչ էր անդ Թովմաս. որ յետոյ եկեալ Թովմա, ասացին նմա վ̃ն յարութե̃ն ՚Ք̃ի. եւ նա ասէ ցնս̃ եթէ ոչ տեսից ՚ի ձեռս նր̃, զնշան բեւեռացն, եւ արկից զմատունս իմ ՚ի տեղիս բեւեռացն, եւ մխեցից զձեռս իմ ՚ի կողս նր̃, ոչ հաւատամ: Նոյն յետ ութն աւուրց դարձեալ էին ՚ի ներքս աշակերտքն եւ Թովմաս ընդ նս̃. գայ Յս̃ դրօքն փակելովք. եւ եկաց ՚ի մէջ նց̃ եւ ասէ՝ ողջոյն ը̃ ձեզ. ապա ասէ ցԹովմաս բեր զմատունս քո եւ արկ այսր. եւ տես զձեռս իմ եւ զկողս իմ. եւ մի լինիր անհաւատ, այլ հաւատացեալ. պատասխանի ետ Թովմաս եւ ասէ ցնա, տր̃ իմ եւ ա̃ծ իմ: Իսկ յետ յարութե̃՝ մինչեւ .խ. օր ՚ի բազում տեղիս երեւեալ. նախ մարիամու մագդաղենացւոյն. եւ առաքելոցն ՚ի գալիլեայ. կղէոպանց ՚ի ճանապարհին: Այլեւ երկու անգամ դրօքն փակելովք երեւեալ: Դարձեալ ՚ի ծովեզերն. եւ այսպէս շրջեցաւ ՚ի բազում տեղիս. եւ երեւեցաւ հաւատացելոցն. որ ոչ կայ գրեալ ՚ի յաւետարանն. այլ որ ինչ գրեցաւն հաւատացելոցն բաւական են: Նոյն յետ .խ. աւուրն երեւեցաւ աշակերտացն իւրոց եւ ասէ. ող-

ջո՛յն ընդ ձեզ։ Իբրեւ տեսին աշակերտքն, խնդացին եւ ուրախ եղեն. եւ ասէ ցնոսա մա՛ն կունք ունի՞ք ինչ ուտելոյ. եւ նքա բերին խորխ մեղու եւ մասն ինչ ձկան խորովելոյ. եւ եկեր առաջի նց. եւ քարոզեաց աշակերտացն իւրոց. պա՛րտ է ասէր չարչարիլ խաչիլ եւ թաղիլ. եւ յարութն առնել. եւ զամ գրեալսն մարգարէից կատարել. վսն որոյ մեկնէր նց զամ գրեալսն ՚ի մարգարէից։ Այլ ՚ի վերնատունն դրօքն փակելովք զելանելն իմ եւ զմտանելն իմ յայտ նեցի ձեզ. զկուսածին ծնունդն իմ. զի մի երկբայիցիք վսն ծննդեան իմոյ. զի որպէս զփա կեալ դուռն ոչ բացեալ. նոյնպէս մնեալ յորովայն մօր իմոյ. եւ ելեալ՝ ոչ խախտեցան կնիք կուսութե նր։ Յետ այնորիկ առեալ զաշակերտսն իւր. եւ գնաց ՚ի լեառն համբարձ ման. եւ խոստացաւ զնսն առնելով թէ, որպէս առա քեաց զիս հայր. եւ ես առաքեմ զձեզ. գնա ցէ՛ք այսուհետեւ քարոզեցէ՛ք եւ ուսուցէ՛ք նց զոր ինչ պատուիրեցի ձեզ. եւ ահաւասիկ ես ընդ ձեզ եմ զամ աւուրս մինչեւ ՚ի կատարած աշխարհի։ Այլ առաքեալքն ասեն տ՛ր եթէ գնամք ՚ի քարոզութ ՚ի յօտար երկիր, մեք զնց լեզուն ոչ գիտեմք. եւ ոչ նքա զմերն. եւ որպէս ըն դունին զմեզ եւ զխրատն մեր։ Ասէ Յս՝ դուք նստարուք ՚ի քաղաքիդ երէմ մինչեւ ես եր թամ եւ առաքեմ զհոգին սբ. նա տացէ ձեզ շնորհս եւ իմաստութ ·հբ· ազգաց լեզուս իմա

նայք եւ խօսէք եւ քարոզէք ոչ̄ եւ կամիք. զայս
ասաց եւ օրհնեաց զն̄ս եւ մեկնեցաւ 'ի նոցա
նէ եւ վերանայր յերկինս. եւ բազմութի̄ զօրաց
հրեշտակաց ընդ նմա. որք երգէին հրեշ
տակքն եւ ասէին, համբարձէք իշխանք զդը
րունս ձեր 'ի վեր. եւ մինչ դեռ աշակերտքն
պշուցեալ հայէին, եկին առ ն̄ս .Բ. հրեշ
տակք եւ ասեն. արք՝ գալիլեացիք զի՞ հայիք.
այս յս̄ որ վերացաւ յերկինս՝ նոյնպէս գա
լոց է մարմնով եւ փառօք հօր դատել զկենդա
նիս եւ զմեռեալս: Եւ վերացաւ յերկինս.
իսկ առաքեալքն դարձան յեր̄մ. եւ էին հա
նապազ 'ի տաճարին քարոզէին եւ օրհնէին եւ
գովէին. եւ 'ի գիշերին գնային 'ի տն̄ վերնա
տունն եւ աղօթէին մինչեւ .Ժ. օր. եւ 'ի կիւրակէ
առաւօտուն յերրորդ ժամուն մինչ դեռ նքս
տէին 'ի տն̄ վերնատանն, ուժգին հնչումն
եղեւ. եւ զայն տեսին զի լուսով լցաւ վեր
նատունն. եւ տն̄ հոգին իբրեւ զհրեղէն լե
զուս իջեալ 'ի գլուխս առաքելոցն. որով լը
ցեալ հոգւոյն սրբոյ շնորհօքն. եւ ըսկսան
յայլ եւ յայլ լեզուս խօսել: Յս̄ որոյ եդեալ
կանոնս, խոստովանիլ զերրորդութի̄ եւ զմի
ածութի̄. զհայր եւ զորդի եւ զսբ̄ հոգի: Եւ յետ
նր̄ վիճակաւ գնացեալ յիւրաքանչիւր եր
կիր. եւ հաստատեցին զհաւատոն քրիստոնէ
ութե̄ ուղղափառ դաւանութե̄ եւ ճշմարիտ
խոստովանութե̄, զհայր եւ զՈրդի եւ զսբ̄ զհ̄

գրին. Հայր ծնօղ, և Որդի ծնունդ, և Հո
գին սուրբ բղխեալ 'ի Հօրէ. անձամբ յատ
կացեալ և բնութեամբ միացեալ. վասն որոյ
աստուածն անքննելի է և անհետազօտելի.
ո՛չ է պարտ քննել և զննել և իմանալ զանի
մանալին ած. զի միայն սուրբ առաքեալքն
իմացան որ ըստ աստուածորեցին բանին որդւոյն
միածնի. և հոգւոյն սրբոյ շնորհիւն այնքան
հաստատեցելոցս ծանուցին: Որով և մեք հայ
րապետքն ժողովեցան 'ի Նիկիայ և զառաքե
լադիր կանոնք կրկին և վերստին հաստատե
ցին. գ̅. ճ̅. ժ̅. ը̅. Հայրապետք. և եդեալ կարգ
և սահմանք որ ոչ այլայլին և ո՛չ փոփոխին այլև
այլ խօսիւք. զի բազումք հերձուածողք ե
ղեն յաղագս քննելոյ պատճառաւն և կո
րեան և դժոխոց բաժին եղեն. որպէս Արիոս,
Նեստոր, Մակեդոն, Սաբել, Ապողինար,
Եւտիքէս, Լեոն. և այլ բազումք ընդ նո
քին կորեան. և որք այժմ կամին 'ի խորս և
յանճելի քննութիւն մտանել իւրեանց մը
տացածին բանիւ. և այլ և այլ հերձուածս
խօսին, 'ի յատակս դժոխոց իջանեն:
Աղաչեմ զձեզ եղբարք հաստատուն կա
ցէք 'ի վերայ առաքելադիր և հայրապետա
դիր հաւատոց և կանոնաց:
Բարեխօսութեամբ սուրբ հայրապետացն
արժանասջի՛ք Քրիստոսի տեսոյն որ է օրհ
նեալ յաւիտեանս Ամէն:


Որ

*Բարբառ սքեմոյն Լատինէ տառեալ վասն հաւատոյ։

Գլուխ ։ ԼԱ։

# ԱԽ ԳԼՈՒԽ ԱՍՏՈՒԱԾԱՅՆ Ա-

ռաքինութեան հաւատանէ. որ նախ հաւատայ 'ի հայրն ած. և 'ի լուսոյ ծը-նեալ և 'ի մեր կուսէն 'ի ·Բ· Որդին ԱՅ. և 'ի նոյն ԱՅ մեր հոգին. որ էջ 'ի վերնատու-նըն և լուսաւորեաց զդասս առաքելոցն. և եթ շնորհս մեր առաքելոցն որք իմացան ·հԲ· զլեզուս և զգիրս. նոյնպէս և ս իմացան զխոր հուրդն ածային. քննեցին և իմացան զճշմա րիտ հաւատս և ճանապարհս արքայութե. այլ ո՛չ թողին զտեղի քննութե. զոր մեք քըն նեմք. ապա մերն այն է որ հաւատամք 'ի քա րոզուն մեր առաքելոցն.և աւետարանին քրի։ Այլև մեր հայրապետացն և կանոնաց նցն. և դաւանել զհայր և զորդի և զմեր զհոգին. ան բաժանելի մեր երրորդութի. և մի ածութի. զի այս է հաւատ քրիստոնէից և գլուխ ամ առաքինութեց։ Այլ թե հոգւոյն աղօթքն է. ոմն ասէ տէրն մեր քս թե՝ արթուն կա ցէք և յամ ժամ աղօթս արարէք. զի արժա նի լիցիք զերծանել յայնմանէ որ գալոցն է.

Ո՛ ի ·փ·. չար կայ գալոյ ամ մարդոյ. այլ ա-ղօթքն փրկէ զմարդ ·ա·. այս կեանքս է որ բաղում չար փորձանք և պատուհաս գայ մար դոյս. յորմէ աղօթքն փրկէ ·բ·. չարն հոգե վարի օրն է մահուն. և 'ի ճանապարհին

բազում փորձութի՟ և նեղութի՟ տեսանէ. բայց
աղօթքն փրկէ ·վ· չարն դատաստանին օրն
է. և թէ ունի հաստատ և բարեգործու՟թ, ն՟
բարութի՟ և հանգստութի՟ է. իսկ որ չունի
հաստատ՝ աղօթք և պահք, նմա բարկութի՟ դը
ժոխք և տանջանք է։ Դարձեալ ասէ տէրն
մեր թէ արթուն կացէք. զի ոչ գիտէք երբ
տ՟ր տանն գայ. և գտանէ զձեզ ՚ի քուն.

Ս ՚ի տ՟ր տանն մահն է. որ յանկարծակի հա
սանէ իվ՟ր մեր. և ոչ գիտեմք թէ յերեկոյին,
՚ի մէջ գիշերուն, կամ ՚ի հաւախօսուն, կամ
յառաւօտուն. երանի ծառային այնմիկ զոր
եկեալ տէրն գտանիցէ արթուն և պատ
րաստ. զի առաջին պահ գիշերուն տղայու
թիւն է. որ տ՟ր միտքն ՚ի չարին է. որ փափագ
ունի մեղաց և յառաջին քունն է ծանրացեալ:
Իսկ մէջ գիշերն՝ ·բ·. տարհան մարդոյն ա-
ւէ. որ վառեալ է հրով ՚ի մէջ մեղաց: Իսկ
·գ·. տարուն՝ հաւախօսն ասէ. որ երբեմն ար
թուն և երբեմն միտքն ՚ի չարն է: Իսկ ·դ·.և.կ.
տարուն. այն է՝ որ տ՟ր մարմինն թուլանայ ՚ի
մեղաց զ ղջայ և փոշիմանի. և այն է առաւօ
տըն որ զարթնի ՚ի քնոյ մեղաց: Բայց թէ
ծեր և թէ տղայ ամենեցուն մահն հասանէ.
ոչ ծեր ասէ. և ոչ տղայ. զի ոչ կարէ մարդ
գիտել թէ իւր մահն երբ լինի. վ՟ս այն ասէ
Յ՟ս թէ՝ արթուն կացէք և յամ՟ ժամ աղօթս
արարէք: Բայց պարտ է տղային առաւել

պատրաստ լինիլ քան զծերն. զի ծերն գիտէ որ մահն մօտեցեալ է. բայց տղայն հանց գիտէ թէ կու ծերանայ եւապա մեռանի. եւ յանկարծակի մահն իւր հասանի եւ կորուսանէ. վասն այն ասէ Տէրն, թէ արթուն կացէք յամ ժամ: Իսկ մարդն եթէ .Ծ. տարեայ լինի եւ ապա հրաժարի ՚ի մեղաց, ո՛չ է գովելի. զի մարդոյն հանց պիտի դառնալ ՚ի մեղաց՝ որ դեռ կարողութիւն ունի մեղք գործելոյ: Իսկ երբ յոյժ ծերանայ՝ ո՛չ կարէ գործել մեղք: Իսկ նա ի՞նչ վարձք ունի ՚ի մեղաց հրաժարելոյն. զի մեղքն յիւրմէ է հրաժարեալ: Դարձեալ ասէ Տէրն մեր. գանձեցէք ձեզ գանձ ՚ի յերկինս՝ ուր ո՛չ գող մերձենայ. եւ ո՛չ ցեց ապականէ. զի ուր գանձ ձեր է, անդ եւ սիրտ ձեր եղիցի. զի գանձ աշխարհիս անցաւոր է. նա գող կու գողանայ. եւ ցեց կու ապականէ. ջուրն կու փտէ. եւ հողն կու մաշէ. զի մեր հոգու բերքն յերկինս է. եւ մեր գանձ աղօթքն է եւ պահքն է եւ ողորմութիւն. զոր հրեշտակք կու ցանեն եւ ամպարեն յերկինս. եւ գնամք գտանեմք եւ լիանամք: Ինչ մարդ որ զայս նշանս ունի, գանձ է ամպարեալ յերկինսն. զի տէրն քո յամեն գիշեր աղօթս առնէր մինչեւ լուսանայր. ինչ պէտք էր նմա աղօթս առնել: Դարձեալ աղօթքն փառք է հրեշտակաց. զի այլ աւելի փառք չունին. քան զի հրեշտակաց ո՛չ պահք կայ եւ

ո՛չ ողորմութիւն. ո՛չ հիւրընկալութիւն. և ո՛չ ապաշխարութիւն. այլ՛ միայն աղօթեն օրհնեն և գովեն զԱստուած և փառաւորեն. զի նոքա միայն բարձր են քան զամենայն ինչ. ապա մարդն որ աղօթից ժիր է. ընդ հրեշտակս դասի և ընդ նոսասին օրհնաբանի. և զփառսն ընդ հրեշտակաց առնու. զի սատանայ մեծ հրեշտակ էր և հպարտացաւ. և ո՛չ մատոյց Աստուծոյ օրհնութիւն. նա ՚ի փառացն զրկեցաւ. և ՚ի լուսոյն խաւարեցաւ. յերկինսն էր՛ յանդունդս էջ:

Այնպէս և որ աղօթք չունի՝ զրկի ՚ի լուսոյն՝ և ընդ սատանայի ՚ի խորս անդնդոց իջանէ. զի աղօթքն հաւր է ամենայն բարեգործութեան. թէ պահք, թէ ողորմութիւն, թէ մատաղ, թէ եկեղեցի շինել, և թէ խաչ օրհնել, և թէ այլ բարեգործութիւն առնել, մինչ որ բարեգործութիւն չլինի և աղօթք, նա չէ կատարեալ: Դարձեալ Աբէլն գտաւ աղօթիւք հաճոյ եղև Աստուծոյ: Ենովք աղօթիւք և պահօք վերացաւ յերկինս: Նոյ աղօթիւք ապրեցաւ ՚ի ջրհեղեղէն: Աբրահամ աղօթիւք և հիւրընկալութեամբ արդարացաւ: Մելքիսեդեկ աղօթիւք և հաւատով քահանայապետ եղև: Յակոբ աղօթիւք Իսրայէլ կոչեցաւ. Յովսէփ աղօթիւք և պահօք յաղթեաց զչարն պոռնկութեան: Մովսէս աղօթիւք և պահօք խօսեցաւ ընդ Աստուծոյ. և ազատեաց զԻսրայէլ և պատառեաց զծովն և անցոյց զժողովուրդն. և խեղ

դեւաց ըմբշամարտօն զօրօքն նորին։ Նոյնս աղօ-
թիւք եւ պահօք վերացաւ յերկինս։ Դաւիթ
աղօթիւք եւ պահօք վերացոյց զմահն։ Երեք
մանկունքն աղօթիւք ապրեցան ՛ի մէջ հրոյն։
Սուրբ առաքեալքն քարոզէին ցերեկն եւ ՛ի գիշերին
աղօթէին։ Նմանապէս եւ սբք հայրապետքն ա-
ղօթէին եւ քարոզէին ժողովրդեանն։ Եւ Երկ-
նաւորք հրեշտակաց նման անդադար աղօ-
թէին։ Եւ Մարտիրոսքն թէպէտ զարիւնս հե-
ղին վս քսի, բայց յառաջ քան զկատարումն
աղօթս առնէին։ Քանզի ած մեզ նման հ-
րեշտակաց բերան՝ լեզու եւ միտք է տուեր՝ որ
կու օրհնեն զած. նմանապէս մարդոյս բե-
րան եւ լեզու եւ միտք է տուեր. վասնորոյ աղօթք
կու խնդրէ. որք լեզուաւ աղօթեն եւ խորհրդա-
ծեն. օրհնեն եւ ուսուցանեն. նոյնպս եւ ինն
դասուց հրեշտակաց։ Իսկ այն մարդն որ
փոխանակ աղօթիցն չարախօս լինի՝ եւ մարդ-
բամբասօղ՝ մատնէ, եւ նախատէ, մարդոյ չար
ուսուցանէ, եւ սուտ խօսի, եւ հայհոյէ, այն
պիղծ բերան սատանայի կոչի եւ ընդ սատա-
նայի տանջի։ Պարծեալ ՛ի ժամ առաւօտուն
ամ թռչունք ելեալ եւ քաղցրաբարբառ ե-
ղանակով օրհնեն եւ գովեն զաստուած. որ ո՛չ
հոգի ունին եւ ո՛չ տանջանք դժոխոց. զի ՛ի նո-
ցանէ որ աղօթք կու խնդրէ աստուած. ա-
պա որ չափ ՛ի մեզանէ աղօթք խնդրէ. որ
չափս բարիքս տուեալէ մեզ ՛ի կերակուր.

և զանդ պատրաստեալ արքայութին. զի թռ-
չունքն մեզ օրինակ է ասեր. զի զնոսա տես-
ցուք և մեք աղօթեսցուք: Պարձեալ ամ̃ կեն-
դանիք ՚ի ժամ առաւօտուն աղօթիւք օրհ-
նեն և փառաբանեն: Եւ գազանիքն և շունն
՚ի գիշերն ամ̃ արթուն կենան. թէպէտ չա-
րագործ են և ՚ի ժամ օրհնաբանութեն մրա-
փած լինին և անամօթ քնին: Իսկ այն մարդն
որ ՚ի գիշերն ուտէ և խմէ և մեղք գործէ.
և ՚ի ժամ առաւօտու յաղօթիցն ծուլանայ
և ՚ի քուն լինի, և ոչ աղօթէ, այնպէս մարդն
չար գազանաց և շան նման է: Պարձեալ ա-
ղօթարարն խօսակից է ա̃յ. զի յորժամ աւե-
տարան կամ գիրք կարդան, ա̃ծ խօսի ընդ-
մեզ. և յորժամ մեք աղօթեմք՝ մեք խօսիմք
ընդ ա̃յ. զի սուտ աշխարհիս թէ մէկն խօսա-
կից լինի թագաւորին հետ, ամեն մարդ ե-
րանեն զնա. ապա քանի հազար երանի այն
մարդոյն, որ խօսի ընդ ա̃յ: Պարձեալ թէ
մէկ մարդ առ ու տուր անէ, մէկ քանի ըն-
տանիկ շահ անէ՝ որքան ուրախանայ. իսկ ո՞ր-
քան մեծ շահ է որ ա̃յ հետ առ և տուր ա-
նես. և նորա համար աղօթես. և նա օրհնէ
զքեզ. շնորհս և ողորմութիւն պարգևէ քեզ:
Պարձեալ ամ̃ ինչ ըստացուածք ոսկւով և ար-
ծաթով լինի. թէ կերակուր և թէ ըմպելի,
և թէ հագանելիք. ապա աղօթքն ոչ ոսկւով
է և ոչ արծաթով. զի ամ̃ մարդ կարէ առ-

նել. թէ աղքատ եւ թէ հարուստ. ո՛չ ասէ
Տէրն մեր, խնդրեցէ՛ք եւ տացի ձեզ: Դարձեալ
ամ բան եւ գործ ժամանակաւ լինի. իսկ ա-
ղօթքն յամ ժամ լինի. թէ ամառն եւ թէ ձը-
մեռն, թէ ի տուն եւ թէ ի ղարիպութե. թէ
ի գիշերն եւ թէ ցերեկն. թէ հիւանդութի
եւ թէ առողջութի. եւ թէ աղքատութի եւ
թէ հարստութի. ոչ կարէ մարդ պատճառ-
բերել վն աղօթիցն. զի յամ ժամ այ ողորմու-
թե դուռն բաց է: Դարձեալ աղօթքն .Է.
կենօք զարդարէ զմարդն. քանզի աստ յամ
չարէ փրկէ զնա. եւ անդ իւր արքայութեն
արժանացուցանէ. եւ ի դժոխոց սատանայի
ազատէ: Դարձեալ թէ թագաւորի, կամ իշ-
խանի ծառայն երբ ոչ գտանի ի ժամ պատե-
րազմի, նա բարկանայ ծառային իւրոյ. եւ բըզ-
տուննն ահար հարկանէ եւ զինքն սպանանէ:
Օ. ի յորժամ քահանայն յաղօթս կանգնի,
կռուի ընդ սատանայի. ինչ քրիստոնեայ որ ոչ
գտանի ի կռուին, բարկանայ նմա ած. աստ
բազում փորձանաց հանդիպի. եւ ի դատաստա-
նի ի հուրն դժոխոց տանջի. զի ճշմարիտ
այն է. զի ած ինչ մարդոյ որ լեզու է տուեր
ի նմանէ աղօթք խնդրէ յօրն .Լ.Գ. ծունր.
եւ ի կէսն մարդէ .Կ.Գ. ծունր: Դարձեալ ա-
սէ Տէրն մեր՝ մուտ ի տուն քո, եւ փակեա՛
զդրունս քո, եւ կաց յաղօթս. եւ հատուսցէ
քեզ յայտնապէս. զի տուն սիրտն է. եւ

դուռն բերանն, եւ աչքն, եւ ականջքն է. զի յորժամ յաղօթս կանգնիս, մուտ ՚ի խորհուրդ սրտի քոյ. եւ խփեա՛ զաչս եւ զականջս. եւ զմիտ-քըդ առ Տծ արա. եւ զօր մահուն քո եւ զդատաստանն, զահն դժոխոց եւ զհուր գեհենոյն, զանքուն որդունսն, եւ զգարշելի դեմն սատանայի ՚ի միտ ած. լալով եւ արտասուօք, եւ ՚ի խորոց սրտէ հառաչմամբ գոչեա՛ առ Տծ. եւ նա լսէ ողորմածն Տծ աղօթից քոց. մաքրէ եւ լուսաւորէ զքեզ յՏմ յաղտէ մեղաց քոց: Դարձեալ պարտ է աղօթողին խոնարհ եւ նոխակալ լինիլ. եւ զբերանն մաքրել ՚ի չար խօսից եւ ՚ի հայհոյութե. եւ յՏմ պիղծ բանէ. եւ ապա աղօթէ. եւ այնպիսի աղօթքն հասանէ յականջս աստուծոյ եւ զփակեալ դուռն արքայութե բանայ: Դարձեալ ոմանք դնան ՚ի տեղի աղօթից զրոյց տան, եւ քսմեն. զի զայնպիսի աղօթքն ոչ ընդունի Տծ. զի ինքն ո՛չ աղօթէ, եւ զայլսն եւս հանէ յաղօթից. զի այնպիսի բերանն սատանայի բերան կոչի եւ թըշնամի Տյ: Ո՟վ Տծասէր ժողովուրդք հաստատուն կացէք ի մէջ աղօթից. զի աղօթքն փառք եւ պարծանք է հրեշտակաց եւ մարդկան նահապետաց եւ մարգարէից. պատիւ առաքելոց. խնդութի մարտիրոսաց. պսակ կուսանաց. զարդ քահանայից եւ կարգ. եւ փառք ժողովրդոց. յոյս եւ ապաւէն մեղաւորաց. զի ո՛վ որ կամի արժանի լինել տեսոյն Քրիստոսի, հա

նապաստ պատրաստ լիցի աղօթից. զի և արժա
նացուսցէ զձեզ և զմեզ իւր օրհնեալ տեսոյն

Ամէն։

Սոփերեմ ասացեալ Յովհաննու Ոսկեբերանի ասացէ Քրիստոս. ըստ ն
բանից յոյ արդարասիրի. և իւրանից յոյ պատրաստութեան

## Գլուխ. ԼԲ.

ԻՊՃ ՍՈՒՐԲԻՏ ՍՈՒՐԲԻՈՅ ԼԵզուն է արքայութեան և ամենայն բարութեան ժառանգորդ առնել զմարդն։ փառք և մեծութիւն. հարկինք և արբելութիւն. հեշտութիւն և անդորրութիւն. հարստութիւն և փարթամութիւն. բարեհամ աղբեւր. քաղցրալից բարի. անսուշահամ կերակուր. և զօրացուցիչ սրտի. ամենայնի լեզուն է մարդոյ։

Դարձեալ բարի լեզուն է առաջնորդ նահելոց. դատող կարուսելոց. ըսփոփիչ ախտացելոց. ուրախութիւն տրտմեցելոց. ազատիչ գերելոց. մխիթարիչ ագահորաց. ակն լուսոյ. և մարգարիտ անգին. մարմնոյն փառք. և հեշտութիւն հոգւոյն. բերդ ամուր և աշտարակ բարձր. խոստովանողաց մեղաց ջնջող. օրհնող և փառաբանող է. հրեշտակաց ձայնակից և խոստովանակից է։ Դարձեալ բարի լեզուն հաշտութիւն է թագաւորաց. և խաղաղութիւն է աշխարհաց. զի Քրիստոս ինքն ասէ երանի խաղաղարարաց. զի նոքա որդիք Այ կոչեսցին։

Դարձեալ ով որ լեզու բարի ունի ինքն փառաւորի և զայլսն փառաւորէ. ինքն մխիթա

րի, և զայլսն մխիթարէ. ինքն քաղցրանայ.
և զայլսն քաղցրացուցանէ. ինքն լուսանայ. և
զայլսն լուսացուցանէ: Այս այն առէ դաւիթ.
կարդացէք առ նա բերանով իմով. և բարձր
արարէք զնա՛ լեզուաւ իմով: Դարձեալ ասէ՝
բացէք զբերան իմ և առից զհոգի: օրհնեցից
զտր յամ ժամ. յամ ժամ օրհնութի նր ՚ի բե
րան իմ: Ամենքն մեր ոչ իմէք երջք զարդա
րեաց զառաքեալսն. այլ հրեղէն լեզուօք. զի
յորժամ էջ սբ հոգին հրեղէն լեզուաւ, զար
դարեաց զառաքեալսն. որով առաքեալքն
բարի և անուշ լեզուաւ քարոզեցին և զար
դարեցին զաշխարհս ամ: Այս այն առէ. Բա
թէ, ՚ի բանից քոց արդարասցիս. և ՚ի բանից
քոց պարտաւորեսցիս. զի անուշ լեզուն տա
ճար է այ, և օթևան հոգւոյն սբյ է:
Դարձեալ վն անդարձ մեղաւորաց և չարա
լեզու ամբարշտացն ասէ քն: Զար լեզուն
դժոխոց դուռն է և կոչնակ սատանայի: Զար
լեզուն օձ թունաւոր է, և գազան պատառ
ող: Զար լեզուն օձ թունաւոր է և ջուր
մահու. և անդատտան փշաքեր: Զար լեզուն
աւերիչ աշխարհի է և խռովութի թագա
ւորաց: Զար լեզուն մատնող է մեղաց և
բանբասող արդարոց: Զար լեզուն քակող է
օրինաց. և հայհոյիչ այ: Զար լեզուն կողոպ
տիչ է մեծատանց և սանձող աղքատաց:
Զար լեզուն խափանող է բարեաց. և յորդո

րէն չարեաց։ Չար լեզուն աղբիւր է դի
ւաց եւ ընկեր սատանայի։ Չար լեզուն մաս
նակից է յուդայի եւ դասակից հերձուածո
ղաց։ Պարծեալ չար լեզուաւ խաբեաց օձն
զեւա եւ զադամ, եւ հանեաց ՚ի դրախտէն։ Չար
լեզուաւ խաբեաց կայէն զեղբայրն իւր եւ
ըսպան։ Չար լեզուաւն կայենի դստերքն
խաբեցին զորդիսն սեթայ եւ անկան ՚ի մեղս
եւ ջրասոյզ արարին զաշխարհս։ Չար լեզուաւն
յուդա մատնեաց զՔրիստոս։ Չար լեզուօք ՚ի խաչ
հանին զՔրիստոս հրէայքն։ Չար լեզուօք զյով
հաննէս գլխատեցին։ Չար լեզուօք զստե
փաննոս քարկոծեցին։ Չար լեզուօք զսուրբն
Գրիգոր արկին ՚ի խոր վիրապն։ Չար լեզ
ուօք հերձուածողքն զաշխարհս ապականե
ցին. եւ ինքեանք չարաչար մահուամբ սատա
կեցան։ Եւ այլ բազում չարիս ներգործեալ
է այս չար լեզուաւ. զոր ոչ կարեմք գրով
պատմել. զի ահա մինչ աչօք մերովք տեսա
նեմք. զի սուտ թէ խաբէն եւ առնեն. թէ
գողութիւն. թէ շնութիւն. թէ պոռնկութիւն.
թէ ըսպանութիւն. թէ մատնութիւն. բամբա
սանք. եւ հայհոյեանք. սուտ երդմունք. եւ
սուտ վկայութիւնք. եւ այլ մեղք եւ չարագոր
ծութիւնք որդնալից լեզուաւ լինին։ Վասն այն
ասէ դաւիթ՝ դիր տէր պահապան բերանոյ
իմոյ եւ զդուռն ամուր շրթանց իմոց զի մի
խոտորեսցի սիրտ իմ բանիւ չարութեան։ 

Իսկ տէր մեր ասէ. Թէ ամ դատաւորկ բանի
համարս ատելոցէք յաւուրն դատաստանին:
Ապա ինչպս լինի այն մարդն՝ որ հանապազ
չար կու խորհի և չար կու խօսի. զի այնպի
սի չարախօսին ասէ տրն՝ իբև բանս քու մեղ
դատեցայց: Ձ ի արդարքն ամենեքեն լեզ
ւով արդարացան. Թէ Առաքելք. Թէ Վար
դապետք. Թէ Մարտիրոսք. Թէ Կուսանք ա
մենեքեան. Թէպէտ մարմնով ծերդնեցան և
ապաշխարեցին. բայց լեզուաւ արդարացան.
լեզուաւ քարոզեցին. լեզուաւ դաւանե
ցին. լեզուաւ աղօթեցին. լեզուաւ վկայե
ցին. լեզուաւ մարտիրոսացան. լեզուաւ խոս
տովանեցան. և ՚ի մեղաց մաքրեցան. զի ամ
վարդապետք գովեն զՅօհան Ոսկեբերանն.
և գրեալ է վարդապետաց նաև. վասն այն՝ զի
լեզուաւ մաքուր էր քան զամ մարդիկ:
Դարձեալ Անտօն ծննաւորն գրեալ է. ե. Ձ.
ծննաւորաց. և ՚ի քարոզելն ասէր, մի ասէք
Թէ կոյս եմք. զի որ բերանով կոյս է, նա
է կոյս. վա այն ասէ տէրն մեր, Թէ երանի
խաղաղարարաց զի նք որդիք այ կոչեսցին:
Դարձեալ ասէ Թէ՝ ամ դպիր աշակերտեալ,
նման է տանուտն որ հանէ ՚ի գանձէ իւր
մէ, զնոր և զհին. զի դպիր այնոցիկ ասէ, որ
ուսանի ՚ի սբ գրոց և խրատէ զայլս. և այն
պիսին արդարանայ լեզուաւ և աշակերտ լի
նի Քի. Թէ կարդացող և Թէ աշխարհա

կան՝ վհլին եւ զինոր կատակարանսն պարտ է ա̃մ
քրիստոնէից ուսանել, եւ ուսուցանել զայլսն:
Ա̃ռ որոյ այնպիսի քրիստոնէից ասէ տ̃րն՝ ե_
կայք օրհնեալք հօր իմոյ, ժառանգեցէք զար
քայութիւն ա̃յ. որ եւ զմեզ արժանացուսցէ
նոյն օրհնեալ ձայնին Ամէն:

Սրբոյն Եփրեմի ասացեալ վասն մարդեղութեանն Ա̃յ

Գլուխ ԼԳ:

## ՔԻՉ. ՕՐ ԻՆՉ ԱՐԱՐ ԱՍՏ

ուած զա̃մ հաւկս զոր ըստեղծ զեր
կինս եւ զերկիր. զլոյս եւ զխաւար, զգունդս
հրեշտակաց, զարեգակն եւ զլուսին, զաս
տեղս եւ զա̃մ լուսաւորս, զգազանս եւ զանաս
ունս, զսողունս եւ զթռչունս, զծառս եւ զբ
րոյսս եւ զա̃մ ինչ, ասաց եւ եղեն հրամայեաց եւ
հաստատեցան: Բայց զպ̃տկերն ադամայ իւր
ձեռօքն ստեղծ. եւ փչեաց ՚ի նա շունչ կենդա
նի եւ հոգի բանաւոր. եւ ապա բերեալ հնազանդ
արար նմա զա̃մ անասունս. եւ յետ ն̃ր ստեղծ
զկինն ՚ի կողէն, ընկեր եւ կենաց կցորդ. եւ սի
րեր ա̃ծ զադամ եւ զեւա. եւ միշտ գնայր ՚ի տե
սութի̃. եւ քաղցրութ̃ հայէր ընդ ն̃ս. վ̃ն այն
ասէ դաւիթ թէ, փառօք եւ պատուով պսա
կեցեր զնա եւ կացուցեր զնա իվ̃ր ա̃մ ձեռա
կերտաց քոց. եւ զա̃մ ինչ հնազանդ արարեր ՚ի ներ
քոյ ոտից ն̃ր: Գ̃ւարձեալ ասէ, մարդ ՚ի պատուի
էր եւ ոչ իմացաւ. հաւասարեցաւ անասնոց. եւ
յորում աւուր կերին զպտուղն, հրեշտակքն

դուրս արարին զադամ ՚ի դրախտէն. բայց
ո՛չ հեռացաւ սէրն ա՟յ. այլ առաքեաց զհր
րեշտակ և բերեալ զկենդանիս հնազանդե
ցոյց նմա. զի աշխատեսցին վս՟ ադամայ և որ
դւոց նորա. և հրեշտակք պահապան են իւ՟ր
մարդոյ. երկինք ցօղէ վասն մարդկան. արե
գակն և լուսինն լուսաւորէ վս՟ մարդկան.
ա՟մ անասունք ծնանին վարին և վաստակին
վս՟ մարդկան. զթռչնոց միսն ուտեն. և զգա
զանեաց մորթն և զմազն հաքնին ՚ի պէտս իւ
րեանց. և զծովու ձուկն. հողով և ջրով ա՟մ
ծառք և ծաղկունք պտուղ տան վս՟ մարդ-
կան. զայս ա՟մ արար վս՟ մեր. և վս՟ առաւել
սիրոյն կամէր խօսիլ ընդ մեզ և կերակրիլ.
բայց անհնարին է մարդկան խօսիլ և կերակ
րիլ ընդ ա՟յ: թէպէտ մովսէս խօսէր ընդ
ա՟յ. բայց ո՛չ կարէր հայիլ ՚ի փառս նր՟. զի
ամպով խօսէր ընդ նմա. զի ՚ի սիրոյն բաժա
նեալ ՚ի լուսոյն լոյսն անբաժանելի, ո՟ր նը
շոյլ արեգական, նոյնպէս որդին ա՟յ էջ ՚ի
յարգանդ կուսին. և մարմին զգեցաւ. նոյն
մարմնովն խօսակից եղև մարդկան. եղբայր և
որդի ասէր. ուտէր և ըմպէր. և զհետ մեղա
ւորաց խօսէր: Ո՛վ զարմանչելիս առնէր ա՟ծ
ասպէս. ապա յայնքան մեծութէ խոնարհեալ,
զաշակերտաց զոտն լուաց: Ս՟ա առաւել սի
րոյն խաչեցաւ և թաղեցաւ և յարեաւ. քա
կեաց զդժոխս և գերեաց զսատանայ. և խ

որ շրջեալ եկն երկրի, համբարձաւ փառօք
յերկինս ընդ հօր լուսոյն բազմեցաւ։ Նա՟
ա՟մ ինչ յայտնի արար ա՟ծ մարդկան. բայց
չորս բանս ծածուկ արար. և բերինով մարգա
րէից և առաքելոց յայտնի արար. քանզի
չորս բանքն մեկն ա՟ծութի է. որ անուանս է
հրեշտակաց. զի հրեշտակք կան հանապազ
շուրջ զաթոռովն ա՟յ՝ օրհնեն և գովեն և փա
ռաբանեն. բայց ոչ կարեն տեսանել զե
րեսս ա՟յ. զի թէ մարդիկք տեսանէին զլոյս
ա՟ծութե՟, ոչ կարէին դիմանալ և ամենեքեն
մեռանէին. և ոչ լինէր շինութ՟ աշխարհիս.
թէ պ՟տ ա՟ծութին ծ.ծուկ արար. բայց գործքն
և աքանչելիքն յայտնի արարին. զերկինս և
զերկիր. զարեգակն և զլուսին. զծով և զցա
մաք. և զ՟ը. տարերքս ։ Ո ի ա՟ծ արարա
ծովք ճանաչի. ո՟պ աբրահամ. և մելքիսեթ
ճանաչեաց. վասն այն տուէ դաւիթ երկինք
պատմեն զփառս ա՟յ. և զարարածս ն՟ր պատմէ
հաստատութին։ Իսկ թէ տեսանէին զա՟ծ՝
և ասպա հաւատային, այնպէսի հաւատացողքն
անփառք լինէին։ Իսկ թէ զարարածն տե
սանեն, և նովաւ քննեն և իմանան և ճանա
չեն զա՟ծ, այնպիսինքն մեծ փառաց տիրա
նան։ Արկուքն դրախտին պայծառութին՝
լոյսն պտուղն՝ ծաղիկն՝ անուշահոտութին՝
և զարդարանքն որք ծածուկ են. զի թէ ա՟մ
մարդ տեսանէր զնա, հրաժարէր յաշխար

հէս. և ո՛չ լինէր շինութիւն. և ո՛չ աճումն
մարդկան. այլ ամ մարդ միապէս լինէր. ո՛չ
փառք. և ո՛չ տանջանք: Երեքն դժոխքն է
որ ծածուկ է. թէ ամ մարդ որ տեսանէր
զտանջանս դժոխոց, ո՛չ մերձաւորութի՛ լի
նէր. ո՛չ աճումն, և ո՛չ շինութի՛ աշխարհի. և
թէ տեսանէր զփառսն արքայութե, և զտան
ջանսն դժոխոց և ապա հաւատայր նմա՝ ի՞նչ
փառք լինէր մարդոյն: Իսկ որ առանց տե
սանելոյ հաւատան՝ ՚ի սբ գիրս առաքելոցև
մարգարէից՝ և աւետարանին Քրի, այնպի
սիքն արդարք են և մեծ փառօք զարդարին
՚ի մէջ լուսոյ և արքայութեն. և որք ո՛չ հաւա
տան աւետարանին, տանջին ՚ի հուրն յաւի
տենից: Չորրորդ ծածուկ բանին Քրի մար
դեղութին է. որ ծածկեալէ զածութին մարմ
նով ՚ի մարդկանէ. զի բաց ՚ի յառաքելոցն ամ
մարդ զնա մարդ գիտէին: Իսկ թէ զիւր
փառքն ցոյց տայր, ամ մարդ միապէս հաւա
տայր. և ոչ լինէր փառք հաւատացողաց. քան
զի Քրս տարաւ ընդ ինքեան զ.գ. առաքելսն
զպետրոս զյօհաննէս և զյակոբոս. և ցոյց ետ
նց զմովսէս և զեղիա. և որ սակաւ մի զիւր
փառսն ցոյց ետ, անկան առաքեալքն ի վր
երեսաց իւրեանց և թմրեցան. և ոչ գիտէին
զի՞նչ խօսէին: Եւ յորժամ իջանէր ՚ի լեռ
նէն, ասաց մի ասիցէք զտեսիլդ մինչև որդի
մարդոյ չարչարեսցի խաչեսցի և յարիցէ յեր

բորդ ահուր. ապա թէ առնիցէր, եյայտնէր
զփառքն իւր, եւ ած մարդ տեսանէր զնա, հա
ւատայր նմա. եւ ոչ լինէր փառք հաւատացո
ղացն. այնպէս եւ ոչ տանջանք: Դարձեալ թէ
ՔՍ յայտնէր զփառս իւր, ոչ ոք խաչէր զնա.
եւ մահն ոչ կարէր հոգի առնուլ ՚ի նմանէ.
եթէ ՔՍ անմահ մնայր, ած գիրք եւ սաղ
մոս մարգարէիցն սուտ լինէր. զի ած գիրք
վկայեն վասն չարչարանացն ՔՍի. մատնու
թեն եւ խաչելութեն. թաղման եւ յարութեն եւ
համբարձմանն : Դարձեալ թէ ՔՍ ոչ չար
չարիւր եւ ոչ խաչիւր, ոչ լինէր յարութի եւ
ոչ փրկութի: Այլ թէ զՔՍ ոչ տեսանէին
մեռեալ եւ թաղեալ եւ դարձեալ կենդանա
ցեալ՝ ոչ հաւատային մարդիկք, թէ մեռա
նիմք եւ կենդանանամք. զի ոք զորդի զհօր
պարտքն վճարեաց. զի յայն փայտէն որ նոքա
ճաշակեցին, ՔՍ իւր նք խաչեցաւ. զի յոր
ժամ նք ուտիւք եւ ձեռօք կորեցին զպտուղն՝
՚ի նոյն ժամուն բեւեռեցին զոտն եւ զձեռսն
իւր խաչափայտին. զի յայն ժամուն որ ճաշա
կեաց զպտուղն. ՚ի նոյն ժամուն արբուցին
զլեղին ՔՍի: Ի յայն ժամուն որ զադամ
՚ի դրախտէն հանին. ՚ի նոյն ժամուն եդ զա
հազակն ՚ի դրախտին: Ի յորում ժամու
որ ադամ անկաւ ՚ի մութն. ՚ի նոյն ժամուն ե
դին ՚ի գերեզմանի զՔՍ: Ի յորում ժա
մու որ ՚ի մթին լայէին ադամ եւ եւայ. ՚ի նոյն

ժամուն. Եւ մուտ 'ի դժոխքն քակեաց եւ ա-
ւերեաց եւ ազատեաց զամենայն ծնունդս
նորա եւ յարուցեալ կենդանացաւ.
Զի որպէս ադամաւ ամենեքեան մեռան.
նոյնպէս եւ Քրիստոսիւ ամենեքեան կեն-
դանացան. վասն այն ասէ պօղոս մարդով
եղեւ մահ. եւ մարդով յարութիւն մեռելոց:
Զի որպէս քրիստոս մեռաւ եւ կենդանա-
ցաւ եւ անմահացաւ եւ անմահացոյց զադամ.
այսպէս եւ մեք հաւատամք որ թէ մեռա-
նիմք դարձեալ կենդանանամք գալստեամբն
քրիստոսի եւ այլ ո՛չ մեռանիմք: Դարձեալ
նա վ͞ն մեր չարչարեցաւ եւ խաչեցաւ. նոյն-
պէս եւ մեք պարտիմք չարչարիլ վասն ան-
ուանն ն͞ր. եւ վասն սուրբ հաւատոյս: Իսկ թէ
մեզ չարչարող չ՛լինի, նա մեզ պա՛րտ է որ
մեր կամաւ չարչարիմք. այսինքն պահօք եւ
աղօթիւք. ծոմով եւ ծնրադրութեամբ. եւ
զհարկս այլազգեաց անտրտունջ տալով վ͞ն
սուրբ հաւատոյս մերոյ. եւ թէ կցորդ լի-
նիմք չարչարանաց նորա, նոյնպէս եւ հա-
ղորդ լինիմք փառաց նորա: Վասն որոյ ո՛վ
աստուածասէր քահանայք եւ ժողովուրդք
ունկնդիր լերուք գրոց սրբոց. առաքելոց
եւ մարգարէից. եւ հաստատուն կացէք իմե-
րոյ քարոզութեան աւետարանին. որով
փառաւորիք յայս կեանքս եւ 'ի յայն կեան-
քն Ամէն.

✠ Մ՝եծի պահոց երկրորդ շաբաթին ուրբաթն․ Ընթերց 'ի գիրս-
նոյ Եսայեայ Մարգարէին որ ասէ ։

Գ. լուխ: Ա. Գ:

# Լ ՈՒԱՑԱՐՈՒՔ ՍՐԲԵՑԱ

րուք՝ ընկեցէք զչարիս յանձանց ձերոց. դադարեցէք 'ի չարեաց եւ գործեցէք զարդարութիւն. եւ թէ իցեն մեղք ձեր իբրեւ զծանծախարիթ սեւ, իբրեւ զձիւն խսպիտակ արարից. եւ եթէ իցեն որդան կարմիր, իբրեւ զասր սուրբ արարից. եւ եթէ լուիջիք բանից իմոց, եւ դադարեսջիք 'ի չարեաց ձերոց, եւ գործիցէք զարդարութիւն, զբարութիւս երկրի կերիջիք: Ապա թէ ոչ լուիջիք ինձ, եւ ոչ դառնայք 'ի մեղաց, նա սուր կերիցէ զձեզ. զի բերան Տն ամենակալի խօսեցաւ զայս: Այս է մեկնութիւն բանիս. զի 'ի մեծ պահոց առաջին երկու շաբաթին. նախ պարտ է լուացուիլ սրբիլ եւ մաքրիլ. այլ եւ զտուն եւ զամ ամանսն կերակրոց սրբել: Այլ նոյնպէս պարտ է սրբել զհոգին եւ զմարմինն. խոստովանիլ եւ հեռանալ 'ի մեղաց եւ 'ի ցանկութենէ. զի որպէս ամ ինչ ջրով մաքրի. նոյնպէս եւ մեղքն խոստովանութեամբ եւ արտասուօք մաքրին. եւ այսպէս մտանեն 'ի պաս եւ յապաշխարութիւն: Նոյնպէս եւ պարտ է զբերանն մաքրել 'ի չարախօսութենէ եւ 'ի բամբասանաց. 'ի քուֆր ասելոյ, 'ի ստախօսութենէ, եւ 'ի մատնելութենէ, եւ յամ դատարկ բանից, եւ յամ

չար խօսից: Նոյնպէս և մաքրել զսիրտն յինէն
գութէ̄. 'ի յոխակալութէ̄ և 'ի խռովութէ̄.
և յա̄մ չար խորհրդոց. և նոյնպէս խափել զաչսն
և զականջսն 'ի յարատ հայելոյ. և ևս զա̄մ
զգայարանսն մաքրել 'ի մեղաց և ապա մաքուր
հոգւով և մարմնով մտանել 'ի պաս և յապաշ
խարութի̄. և հեռանալ յա̄մ մեղաց. զի այս
ծ̄. աւուր պահօք, ջնջէ տարւոյն .ծ̄. շաբա
թու մեղքն. նոյնպէս հեռանալ պարտ է
յա̄մ մերձաւորութէ̄ և յա̄մ ցանկութէ̄ չա
րեաց. և 'ի պոռնկական խորհրդոց: Դար
ձեալ պարտ է յաղուհացից պահոցս՝ հեռա
նալ յարբեցութէ̄, և յա̄մ պարարտ կերակ
րոց 'ի գինւոյ և 'ի ձիթոյ, և յայլ անուշահամ
կերակրոց: Դարձեալ պարտ է զաղուհացն
աղօթիւք և պահօք պահել. զի զայնպիսի
պահսն ընդունի ա̄ծ: Իսկ որ առանց աղօ
թից պահէ՝ չէ ընդունելի. քանզի և սատա
նայ .է̄ ռ̄. տարի է որ պահք է. երբ միտքն
չար է, նա զրկեալ է յա̄յ լուսոյն. նոյնպէս
և մարդոյն երբ միտքն չար է չէ ընդունելի
պահքն առանց աղօթից և առանց սրբութե̄:
Իսկ որ հրաժարի և դարձեալ զսատանայի
կամքն կատարէ, այնպիսին զա̄ծ խաբող է,
զի անդարձ մեղաւորին պիղծ են պահքն և
աղօթքն. և թէ խունկ ծխէ, նա իբրև աղբ
է. և թէ դառն մատաղ անէ, ո̄չ շուն համա
րի զնա ա̄ծ. և թէ աղօթք անէ, իբրև զձայն

շան եգաղանաց համարի։ Իսկ ո՛վ որ կամի
պահքն և աղօթքն ընդունելի լինել ա՟յ. դառ-
նայ և մեղայ ասէ և ապաշխարէ. և այլ ո՛չ գոր-
ծէ. և ո՟ր պահէ զբերանն. զի պարտէ զպահքն
ո՟ր պահել աղօթիւք և մաքուր սրտիւ և կոյս
լեզուաւ. զի բերանոյ կուսութիւն առաւել
է քան զմարմնոյ կուսութիւն. Իսկ որ այսպէս
սրբութ՟ և մաքրութ՟ պահեն զպահսն, նա
ա՟ծ ընդունի զայնպիսի պահսն. զի ասէ. դար-
ձէք ՛ի մեղաց՝ և գործեցէք զարդարութի։
Ա՟ծ այն ասէ՝ թէ իցեն մեղքն ձեր իբրև
զծանծախարիթ, և իբրև ծրագի մուխ, իբրև
զձիւն ըսպիտակ արարից. զի ասէ ա՟ծ, թէ
լուէք ինձ, պահեցէք զճանապարհս իմ։ Ինքն
քս՟ զձեր սևացեալ մեղքն ջնջէ, և իւր աստ
ուածային լուսովն պայծառացուցանէ. քան
զի հոգին և մարմինն եղբարք են. զի մէկ տա
րին. ծ. է. շաբաթ է. անյագ ուտէք և ըմ
պէք և մեղանչէք և զմարմինս դարմանէք.
քանզի առաջաւորի պասովն այս մեծ պաս
ծ. է. օր է. թէ զայս. ծ. է. օրս սրբութ՟
պահէք, նա ջնջին մէկ տարուան մեղքն ծո
մով և աղօթիւք. վասն այն սահմանեցին ո՟ր
Հայրապետքն պահել սրբութեամբ զպասս
զայս ամենայն քրիստոնեայք. և մաքրիլ ՛ի
մեղաց. խոստովանիլ և հաղորդիլ ՛ի Սուրբ
Մարմնոյ և Ա՟րենէ Քրիստոսի. և ջնջի
գիր մեղացն ամենայն մեղուցելոցն ՛ի ձեռն

Մարմնոյ եւ Արեան Տեառն: Որ եւ ջնջեսցէ եւ մաքրեսցէ զմ̃ հաւատացեալս ՛ի մեղաց, եւ արժանի արասցէ իւր սբ̃ Մարմնոյ եւ Ա-րեանն ամէն:

✠ Քարոզ վասն խոստովանութեան, ՛ի մեկնութենէն Սուրբ Աւետարանին Բանն որ ասէ:

## Գլուխ ԼԱ:

## ԵԿԱՅՔ ԱՌ ԻՍ ԱՄԵՆԱՅՆ

վաստակեալք եւ բեռնաւորք եւ ես հանգուցից զձեզ. առէք զլուծ իմ ՛ի ձեզ եւ ուսարուք յինէն. զի հեզ եմ եւ խոնարհ սրտիւ. եւ գտջիք հանգիստ անձանց ձերոց. զի լուծ իմ քաղցր է եւ բեռն իմ փոքր ոգի. քանզի ծանրաբեռն մեղաւոր մարդն է որ մեղօք ծանրացեալ է եւ աշխատեալ. իսկ քս̃ սիրով առ ինքն կոչէ եւ ասէ՝ եկա՛յք առ իս ամ̃ աշխատեալք եւ ծանրաբեռնեալք. եւ ես հանգուցից զձեզ. զի քս̃ այնպէս ողորմած եւ մարդասէր է, զի ով ոք որ դառնայ առ ինքն՝ բժշկէ զամենեսին. եւ ՛ի տունն իւր մեծարէ. զի քս̃ի տունն եկեղեցին է. որ երթայ ՛ի քահանայն մեղայ տայ, եւ խոստովանի, եւ նա ծանր բեռն իւր̃ դնէ, երբ աղաչէ զա̃ծ, հեշտանայ եւ դիւրանայ. երբ սակաւ մի ապաշխարէ, նա թեթեւ բեռն, որ ծանրացեալ էր չարեօք. եւ զտանջանս դժոխոց ոչինչ առնէ: Եւ այն որ ասէ լուծ իմ քաղցր է. քաղցր լուծ նբ̃ օրինացն ասէ. եւ

յետ այնորիկ՝ ինք սեղանն մեծարէ զՔս, և
կերակրէ նբ հաղորդութբն. զի ոչ Զաքէոս
գնաց առ Քս. այլ Քս ինքն ձայնեաց ՚ի ներ
քոյ թզենւոյն և ասաց, զաքէ փութա՛ էջ այ
տի. զի ՚ի տան քում արժան է ինձ ագանիլ.
փութացաւ էջ և ընկալաւ զնա ուրախութբ.
Իբրև գնաց ՚ի տուն նր՝ ուտել ընդ նմ. որ
տնջէին փարիսեցիքն և ասէին ՚ի միմեանս,
թէ ընդէ՞ր ուտէ սա ընդ մաքսաւորս և ընդ
մեղաւորս: Իբրև գիտաց Յս, ասէ՝ ոչ է պէ
տոյ բժիշկ ողջոց՝ այլ հիւանդաց. ոչ եկի
կոչել զարդարս. այլ զմեղաւորս: Նոյնպէս
և Պոռնկին զմեղսն եթող. զմատթէոս մաք
սաւորն աւետարանիչ արար. և զմիւս մաքսա
ւորն արդարացոյց: Զանառակ որդին ըն
կալաւ. զքանանացի կնոջն աղաղակն ընկա
լաւ: Զհաւազակին զդրախտին դուռն բացաւ.
Զղունկիանոսն որ տիգաւ խոցեաց զկողն կե
նարարին՝ զնր աչքն լուսաւորեաց: զՊետ
րոսի ուրացութեան մեղքն եթող: Նա ու
սոյց առաքելոցն թողուլ զմեղս մարդկան.
զոր հարցեալ պետրոսի, թէ մեղիցէ եղբայրն
իմ քանիցս անգամ թողից նմա. մինչև .գ.
անգամ: դարձեալ ասէ թէ .է. անգամ մե
ղիցէ դարձեալ թողութիւն խնդրէ թողի՞ց
նմա: Ասէ տրն ոչ թէ .է. անգամ, այլ թէ
եօթանասնեկին եօթն հեղ մեղիցէ թող նր
մա. թէ որչափ գլորի մարդն, նա այնքան

կանգնիլ պարտ է. զի որ չափ մեղիցէ. նոյն չափ խոստովանիլ պիտի. զի կան ոմանք որ ասեն թէ մէկ մարդ մեղաց տայ, եւ դարձեալ գործէ, ոչ գտանէ թողութիւն. ոչ այնպէս. այլ՝ Ք͞ս հրամայեաց թողուլ. ապա ինչ մարդ որ ՚ի դարձ գայ, և այլ ոչ գործէ զմեղս. այնպիսին առաքելոց և սրբոց գտանէ, որք երբ հրաժարեցան, այլ ոչ գործեցին։ Իսկ որ խոստովանին և դարձեալ գործեն, և կրկին խոստովանին, նա թողութ͞ի գտանեն. բայց ՚ի փառացն խոնարհին. և ոչ հասանին առաջին խոստովանութ͞ե փառացն։ Դարձեալ կան ոմանք որ ասեն թէ, կենամք որ ծերանամք՝ ապա խոստովանիմք. այնպիսիքն կորնչին. զի յանկարծակի մահն հասանի. և այլ ոչ կարեն խոստովանիլ և ապաշխարել. և այնպիսիքն կորնչին ՚ի փառս սատանայի. զի անդարձ և անզեղջ սատակին. ոչ ոք կարէ փրկել կամ բարեխօսել նմա. ոչ որդի և ոչ եղբայր. ոչ դուստր և ոչ ողորմութ͞ի, ոչ կարեն փրկել զանդարձ մեղաւորն։ Իսկ ամեն քրիստոնէից պարտ է յամեն կիրակի մեղաց տալ. և .խ. օրն մէկ հեղ խոստովանիլ. և ՚ի տարին .բ. հեղ հաղորդիլ. Իսկ այնպիսիք որք ծերք են .խ. օրն մէկ հետ ճաշակել ՚ի ս͞բ կենարար մարմնոյն Ք͞սի։ Բայց ըստոյգ խոստովանանքն այն է որ դարձ գան ՚ի մեղաց. և այլ ոչ գործեն. թէ .ա. անգամ, կամ .բ. անգամ խոստովանի. և

դարձ դայ մեծ փառք է։ Իսկ որք բաղում
անգամ խոստովանին. և բաղում անգամ գոր
ծեն. և՛ ի յետին ժամանակին խոստովանու
թե մեռանին՝ մեծութեց ոչ հասանին. բայց
փրկին՛ ի դժոխոց։ Իսկ որն մեր սիրով մեծա
րեաց զմեղաւորն՛ ի դարձ և յապաշխարութի.
և իշխանութի եւս առաքելոց. հայրապետաց,
վարդապետաց, և քահանայից սիրով կոչել
զմեղաւորն և խրատել և քարոզել և թողութի
տալ. և հաղորդել. և փրկել զնա՛ ի դժոխոց։
Ապա առաջին օրէնքն ոչ այսպէս. զի բաղում
նահապետք և ածախօս մարգարէք. և քահա
նայք. և այլք թագաւորք ոչ ունէին իշխանու
թի թողուլ զմեղս մարդկան. զի ի ժամանակս
ադամայ եւ քահանայութին հրեշտակաց, որ
ադամայ և եւայի և աբելի զթաղումն հրեշ
տակք կատարեցին, բայց նոքա ոչ կարացին
տանել զլուծ քահանայութե. և ոչ ունէին
իշխանութի թողուլ զմեղս մարդկան։ Նա՛
յետ այնորիկ տուաւ քահանայութին Մելքիսե
դեկի. բայց ոչ ունէր իշխանութի թողուլ
զմեղս. վն այն ոչ եւս ած զքահանայութին
՛ի ձեռս հրեշտակաց. թէ քահանայութին մեր
՛ի ձեռս հրեշտակաց լինէր, հազար վայ էր
մեզ. զի նք սբ են և անմարմին. և ոչ են տե
ղեակ մեղաց. և ոչ են գիտակ բնութե մարդոյ.
և եթէ խոստովանէաք հրեշտակաց. նա մեզ
բարկանային և ոչ տային թողութի։

Այլ մարդասէրն մծ վս այն եւ իշխանութի
՚ի ձեռն մարդկան. զի մարմին ունին իբրեւ
զմեզ. եւ գիտակեն բնութեց մեղաց մարդ-
կան. երբ մեղայ ասեն եւ լալով խոստովանին.
նա ողորմեացի ասէ քահանայն եւ թողութի
շնորհէ մեզ: Իսկ ուրեն քս մարդասէր էր
փութայես ես թողութի. զոր քաղցր լուծն
եւ զթեթեւ բեռն դնել հրամայեաց ի վր մե-
ղուցելոց. զի այն է թեթեւ բեռն սակաւ ա-
պաշխարանքն է. որ ազատէ ՚ի ծանր բեռա-
նէ մեղաց եւ ՚ի դատուն տանջանաց, եւ քաղցր
լուծն մր պատուիրանքն է. Հաւատն Յոյսն
եւ Սէրն. պասն եւ աղօթքն եւ բերանոյ կուսու-
թին. զի այս է քաղցր լուծն: Դարձեալ քա-
հանային կարգն մեծ է. զի երեցփոխանն է
եւ վէքիլ քսի. եւ ունի իշխանութի կապելոյ
եւ արձակելոյ. զի զայս մեծ իշխանութիս ոչ
վս քահանայէն ետ. այլ վս ժողովրդեան ետ
զայս մեծութիս. զի նոքաւ ազատեսցին ժո-
ղովուրդքն ՚ի տանջանաց դժոխոց: Դար-
ձեալ քահանայքն հոգեւոր բժիշկեն. զի
փութով փարատեն զցաւս հոգւոյն. զի յայս
աշխարհս բազում ցաւս կայ. եւ կամին եր-
թալ առ հէքիմն. եւ վս .գ. պատճառի սա-
կաւք գնան. մեկն այն է որ դեղն արծաթով
ծախեն. հարուստ կարէ գնել. եւ աղքատն
ոչ .բ. այն է որ դեղն դառն է եւ չարահոտ.
ամեն մարդ ոչ կարէ խմել եւ ճաշակել .գ.

այն է որ բազումք գնան . ոսկի և արծաթ
տան և սակաւք բժշկին. վ՟ն այն սակաւք գտա
նան: Իսկ տէրն մեր Ճարտար հեքիմէ որ
հեր մեզ զ.քահանայն. և փութապէս կոչէ
առ ինքն և բժշկութի տայ առանց արծա
թի. զի գդեղն քաղցր է, որ է ոչ հաղորդու
թին. և որք հաճոյ ճաշակեն և ուզին խոս
տովանութե՛ բժշկին. վասն այն ասէ քս՟ ե՛
կայք առ իս. և ես հանգուցից զձեզ: Մ՛վ քոյ
արեամբ գնեալ ժողովուրդք՝ ունկնդիր լի
րուք քարոզիս. լացէք և արտասուեցէք խոս
տովանուք. և զձեր յանցանան Ճշմարտապէս
ասացէք քահանային. և պահօք և ապաշխա
րութե սրբեցէք զմեղս ձեր. և ապա Ճաշա
կեցէք զգդեղն հաղորդութե քոյ: Որով ար
ժանասցուք եւր օրհնեալ տեսոյն Ա.մէն:

*✠ Խորհուրդ խոստովանելոյ զմեղս առաջի քահանային.*

## Գլուխ: ԼԹ:

## ԵՐԵՔ ՊԱՐՏԻՔ ԽՈՍՏՈՎԱՆ

նանքն խոնարհաբար՝ զգլուխն բա
նալ առաջի քահանային. խփել զաչքն
և մտանել խուրան իւր, և քննել զմեղս իւր
զամ. և դնել զինքն որպէս մահապարտ, և
չար ծառայ. ոչ թէ տկար հիւանդացեալ
ըստ սաղմոսին որ ասէ. խոնարհեցո տր զունկն
քո, և լուր ինձ. զի աղքատ և տնանկ եմ
ես. զի ոչ եթէ հիւանդ էր դաւիթ կամ աղ
քատ. այլ վ՟ն մեղացն ասէր թէ հիւանդ եմ

եա. և զմն գործոյն առնէր թէ աղքատ եմ ես:
Նա՛ որք խոստովանին առաջի քո և առաջի
քահանային՝ պարտ է զինքն դաւթի նման
հիւանդացուցանել. և աղքատի նման աղա
չել. քննել զյանցանքն. և լալով ասել և աղա
ղակելով խնդրել զթողութի: Դարձեալ յոր
ժամ գործէ մարդ մեղս, լինի որպէս և գոր
ծելի. և թաղի ՛ի խորս դժոխոց. զի յաւուր
դատաստանին հրով վառի. և այրէ զգոր
ծողն: ահա քեզ օրինակ, թէ հարիւր տարի
գործելին ներքև հողոյն մնայ, ոչ փտի և ոչ
մաշի. նմանապէս թէ յերես հողոյն կենայ
տանակոխ առնեն զնա և ոչընչանայ: Նոյնպէս
և զմեղքն քանի որ չես խոստովաներ գործե
լոյ նման ծածկեալէ ՛ի հողոյն ներքև. ոչ փը
տի և ոչ կորնչի. երբ խոստովանիս, ձգես ըզ
նա ՛ի ներքև ոտից քահանային. և քահանայն
ած թողութի շնորհէ ասելովն՝ տանակոխ առ
նէ զնա և ոչընչանայ: Դարձեալ մարդն որպէս
պղինձ դառնէ և ժանգահատ. յորժամ խոս
տովանի և հաղորդի ըսպիտականայ որպէս զար
ծաթ. զի որպէս զպղինձն որ քանի սևանայ՝ նա
կլայեկեն. նոյնպէս որ սևանայ մեղօք մարդն
դարձեալ պարտէ նոր խոստովանիլ և հաղոր
դիլ և ըսպիտակել հաղորդութենն: Դարձեալ
եթէ զպղինձն յառաջ ձեռօք և ոտօք չի
շփեն և զկեղտն չի հանեն, ոչ առնու կլայեկ
և ոչ պայծառանայ. և երբ զկեղտն հանեն

եւ վըլանան, այպա առնուլ զիւրայն կին եւ ապխտակի
ոչ արծաթ. նոյնպէս խոստովանութիւն չփեւլ այն
ալի եւ հարբել. եւ արտասուօք լուանալ զմեղս եւ
ապա հաղորդիլ. որ մաքրէ զնա: Պղծել հան
դերձն քանի որ կեղտանայ՝ տաք ջրով եւ սա
պոնով լուանան եւ անձրեւն, եւ նա պայծա
ռանայ ոչ զառաջինն: Այնպէս շնորհքն
աւազանին, նոր հանդերձին զարդարէ զհո
գին. բայց երբ մեղք գործեն կեղտանայ. եւ
պարտ է խոստովանութիւն եւ տաք ջրով արտաս
սօք լուանալ. եւ աղօթից սապոնիւն հարել
եւ ապաշխարութիւն մաքրել եւ սրբել կրկին զառա
ջին մկրտութիւն: Մի այն դահիճ մարդա
ւէն քննէր զմեղքն իւր, եւ՝ ի գիշերն քուն
ոչ լինէր. լայր վս մեղացն. ոչ գրեալ է թէ
լուացի զամ գիշեր զմահիճս իմ. եւ արտասուօք
իմովք զանկողինս իմ թացի. նա մարդասէ
էր, եւ զսատանան ըման նա ասաց. եւ ա՟ծ ահայր
անուանեցաւ. եւ եյահէն դժոխոց զգիշերն
՝ի բուն արտասուէր եւ լայր: Իսկ ինձ նման
մեղաւորիս որքան պիտի արտասուք եւ լաց
որ մեր ասրերոյ եւ լեռներոյ չափ մեղքն քա
ւի. զի յորժամ խոստովանիմք, պարտիմք՝ ի միտ
ածել զօր հոգեւորին մերոյ. թէ որքան հե
ծեծլով եւ տագալով հոգի պիտի տամք. եւ մերկ
ելանեմք՝ ի նէ ա: Ա՟յլ եւ զահաւոր դատաստանն
Քրիստոսի. զանձն եւ զտանջանք դժոխոց, եւ զհանդս
տութի արդարոց, եւ զփառքն արքայութե.

զԱծ որոյ պարտիմք արտասուօք եւ լալով խոստո-
վանել, եւ դատանել զԹողութի։ Մ ի սուտե-
նա տէմ եւ անցաւոր. եւ Թէ կամիք փրկիլ՛ ի բաան-
ջանայ գործոց, մինչ աղօթեցէք պահօք եւ ո-
ղորմութբ եւ՛ իշխարհացն հեռ անալով. խոնար-
հութբ եւ հնազանդութբ եւ ընկերսիրութբ
կեալ. եւ զմեղս խոստովանելով. մի՛ անյոյս լինիք
զԱծ մեղաց, ասելով Թէ՝ մեր մեղքն բազում
են եւ ոչ լինի Թողութի մեզ. զի ո՛չ լսէք որ Տյ
ողորմութին անչափ է. զի ոպ լոյս արեգա-
կանն ծագէ, եւ փախչի խաւարն. նոյնպս երբ
ծագէ Տյ ողորմութին. զի ասէ Տրն մեր, Թէ
ջնջեմ իբրեւ զամպ զանօրէնութիս քո. եւ իբրեւ
զմէգ զմեղս քո։ Դւթ ասէ Տրն Թէ՝ դար-
ձարուք առ իս, եւ պատմեցէք առաջի իմ զմեղս
ձեր, եւ ես քաւեցից զանօրէնութիս ձեր։
*Քանզի բազմաց Թողեալ է. եւ մեծամեծ փոց
արժանաւորեցեալ։ Ոպ դաւԹի մարգարէին որ
շուրջ սպան. եւ զկինն բերսաբէ էառ. նա
եւ Մովսէս մարգարէն զեգիպտացին սպան
եւ էլ Տյ խօսեցաւ. Պետրոս ուրացող էր, դը-
լուխ առաքելոցն կոչեցաւ. Պօղոս քարկո-
ծեաց զՍտեփաննոս՝ Սբ բերան կոչեցաւ.
Մատթէոս մաքսաւոր էր, աւետարանիչ եղեւ.
Աւազակն գող էր եւ հարամի. նա դրախտին
արժանացաւ. պոռնիկ եւ շնացող Մարիամ քնի
հետ խօսակցեցաւ։ Իսկ այլ բիւր մեղաւորք
Թողութե արժանաւորեցան ։ Նոյնպս եւ մեք

սեսեալ զնն, յուսասցուք ՚ի տէր եւ զգաստացեալ
խոստովանեսցուք զմեղս մեր․ որով արժա
նասցուք ողորմութեան տն եւ հասանել մասին
ժառանգութե սրբոցն ՚ի լոյս Ամէն։

✠ Քարոզ վասն [illegible] ասացեալ։

Գլուխ։ ԼԸ։

ԵՐԿԵՐԱՒՔ ԵՐԿԵՐԱՒՔ
եւ զարհուրեցէք դողացարուք եւ սար
սափեցարուք վն անչափ մեղացն՝ ո
րում վայ ասաց տէրն մեր քս․ որպէս աւետա
րանն հրամայէ․ ամ մեղք եւ հայհոյութիւնք
մարդկան թողցի․ բայց որ հոգւոյն հայհոյէ
մի թողցի նմա․ ոչ աստ եւ ոչ ՚ի հանդերձե
լումն։ Արդ ոմանք ասեն թէ ․Բ․ի ամ քարոզն
քաղցր է՝ թեթեւ է եւ անխռով․ այս մէկ քարոզս
ընդէր բարկութե եւ դառն եւ ծանր կապանօք։
Իսկ վարդապետք ասեն թէ՝ քս ամ մեղաւո
րաց քաղցր բարբառէ․ սիրով մեծարէ ասե
լով․ եկայք առ իս ամ աշխատեալք եւ ծանրա
բեռնեալք․ ապա աստ ասէ թէ՝ թողցի մարդ
կան մեղք․ բայց հոգւոյն հայհոյութին մի
թողցի ոչ աստ եւ ոչ ՚ի դատաստանին։ Զայս
ճառ բարկութեն ․Բ․ի այս է՝ որ ամծ մարդոյս
միտք է տուեր եւ իմաստութի եւ լեզու նման հր
եշտակաց․ որ իբրեւ հրեշտակաց նման օրհ
նեմք եւ փառաւորեմք զած։ Իսկ յիշոցնա
տուն փոխանակ օրհնելոյն եւ գովելոյն զած՝
յիշոց տայ եւ հայհոյէ․ քան զի յորժամ բանով

զբերանն քուֆր ասօղն. Թ. դասք հրեշտկք
զարհուրին և զարմանան ը համբերութին այ.
քանզի սատանայ թշնամին է այ. բայց ոչ
կարաց հայհոյել այլ հպարտութբ խլայր
թափեցան. զի յիշուցնատուն քան զսատա
նայ այլ վատթար մեղաւոր է. վն այն բարկա
նայ ած առաւել խիստ յիշուցնատուողին:
Դարձել ամ թռչունք և կենդանիք ոչ հո
գի ունին և ոչ դատաստան. և ոչ զահ դժո
խոց և տանջանաց. նոքա քաղցրաձայն օրհնեն
զած. իսկ մարդոյն որ ած շնորհք է տուեր՝
խելք և իմաստութի և լեզու, թէ հրեշտկաց
նման օրհնեն զած. զի գիտեն որ դժոխք և
տանջանք կայ. և այ դատաստան կայ. զայս
ամ գիտեն, և մոռանան և յիշոց տան: Դար
ձեալ բերան մարդոյն տունն է այ. զի յոր
ժամ զայ անունն յիշեմք, ած մտանէ ի բե
րան և ելանէ. ոչ է պարտ պիղծ բերան բա
նալ: Դարձեալ բերանն քրիստոնէին՝ գե
րեզման է Քի. որ զքն մարմինն և զարիւնն
ճաշակէ. զի մեկ դուռն յոր մեծ մարդ մտա
նէ և ելանէ, զնա մաքուր կու պահեն. իսկ
այն դուռն յոր ած մտանէ և ելանէ, որչափ
մաքուր և սուրբ պիտի որ պահեն. նա փոխա
նակ մաքուր և սբ պահելոյն՝ հայհոյեն և
քֆրեն. վասն այն բարկանայ ած: Դարձել
բազում պէսպէս մեղք գործեն մարդիք.
գողութի. պոռնկութի. շնութի. ագահու

թի. եւայլ բազում մեղք. Թէպէտ հոգւոյն
կամս է, բայց մարմնոյն փափագն անզգանի։
Իսկ յիշոց տալն զհոգին այրէ, եւ մարմնոյն
իսկի շահ չունի. վասն այն բարկանայ ա̃ծ։
Դարձեալ թէ ա̃մ մարմինն մեղք գործէ.
թէ գողութի. թէ պոռնկութի. թէ բամբա
նութի. թէ ցանկութի. թէ գիճութի. թէ
ոխակալութիւն. այս ա̃մ մեղացն լեզուն է
բարեխօս, որ աղաչէ զա̃ծ վ̃ն մարմնոյն մե-
ղաց. երբ լեզուն կայս եւ մաքուր լինի։
Բայց որ լեզուն յիշուցնատու եւ հայհոյող
լինի, եւ որ ինքն կոյր լինի եւ այլոց կուրաց ո̃ղ
առաջնորդէ եւ բարեխօսէ. վ̃ն այն բարկա
նայ ա̃ծ։ Դարձեալ թէ ա̃մ մարմինն մեղք
գործէ՝ բերանն խոստովանի վ̃ն նորա. իսկ
թէ բերանն մեղք գործէ. այլ ո՞ր մարմինն
կարէ խոստովանիլ. կամ բարեխօսել վ̃ն բե
րանոյն։ զի քուֆր ասօղն յառաջ զիւր բե
րանն կու ապականէ. ապա թէ զայլս. վասն
այն ասէ դաւիթ թէ յեկեղեցիս օրհնեցէք
զա̃ծ. վասն ա̃մ մեղաւորաց ասաց դաւիթ
յեկեղեցին մտանել եւ օրհնել զա̃ծ. զի եկե
ղեցին վ̃ն մեղաւորաց է սահմանած թէ նո
վաւ արդարանայ. բայց քուֆր ասողին եւ
յիշոց տըւողին ասէ թէ. ընտրեցի ես ընդ
աղբ կալ ի տան ա̃յ. քան զբնականալ ի յարկան
մեղաւորաց։ քանզի քուֆր ասողին բերանն
դուռն է դժոխոց եւ տուն սատանայի.

վն այն բարկանայ ած ՚ի վրայ քուէֆր աստղին. զի
ոմն գարշ հոտ գայ ՚ի լեշէ և ՚ի նեխեալ բանէ.
նոյնպէս. քուէֆր աստղին հոտ չար գայ ՚ի բերա
նոյն. վն որոյ ոչ է արժան քուէֆր աստղին յե
կեղեցի մտանել. կամ ըստ այլ անուանն յիշել. և ոչ
յերկինս նայել. և թէ գտան մատաղանէ,
նա շուն համարի ած. թէ խունկ ծխէ, աղբ
համարի. թէ աղօթք անէ, իբրև զշուն առ
տր հաչէ. զնա պահքն պիղծ համարի. քան զի
պիղծ է պահքն. աղբ է խունկն. շուն է մա
տաղն. հարամ է հացն. մուրտառ է մորթածն.
զի թշնամի է այ. և ընկեր սատանայի. եղբայր
յուդայի և մակեդոնի: Չէ պարտ ընդ նմա ու
տել և ըմպել. կամ բարև տալ և առնուլ. կամ
հաց ուտել. և ոչ ՚ի հաց մեծարել. և ոչ ՚ի շէնս
թողուլ. զի բազում պատուհաս գայ յայ. վն
յիշոցն առնողաց. թէ սուր. թէ մահ. թէ գե
րութի. թէ կարկուտ. թէ կայծակ. թէ մա
րախ. թէ մուկն. թէ գալուկ կամ ջորեակ.
կամ ժանգ. կամ երաշտութի այս ամ ՚ի քուէֆր
աստղաց լինի. զի ոմն ասաց թէ ամ մեղք թող
ցի նմա. բայց որ զհոգին տր հայհոյէ, ոչ ու
նի թողութի յայսմ աշխարհիս, և ոչ ՚ի հան
դերձելումն: Ո՛վ որոյ թէ դուք մատաղ առ
նել կամիք, թէ զայսպիսի հայհոյիչ և քուէֆր
աստղն ՚ի քաղաքէն վարէք, և քարկոծ առ
նէք, առաւել է քան զձեր մատաղն և զողջա
կէզն. զի ով չբերան հայհոյէ, զքնի գերեզ

մանին հայհոյէ. և զՏէրն դատաւն. քան զի ած փր-չեաց յերեսս ադամայ և եդ ՚ի բեբրանն հոգի բանաւոր. նոյնպէս ած մարդոյ ետ զնոյն հոգի որ ՚ի բեբրանն մտանէ և կենդանանայ. և ՚ի բեբրանոյն ելանէ հոգին երբ մեռանի. վն այն ասէ ած թէ ամ մեղք թողցին. և որ զհոգին սբ հայհոյէ՝ մի թողցի: զի ով զբեբրանն հայհոյէ, զհոգին հայհոյէ: Նաև որ զգերեզմանն հայհոյէ, զՀայր և զՈրդի և զՍբ Հոգին, զխաչն, և զԱւետարանն հայհոյէ. զի նովաւ է կնքած և մօհրած գերեզմանն. նոյնպէս և զաւկերս քրիստոնէից. և զմկրտութիւն կամ զհաղորդութին. զայդ ամ հայհոյօղն՝ զհոգին սբ հայհոյէ. վն այն Քն բարկացել ասէ. թէ որ զհոգին հայհոյէ՝ ոչ ունի թողութի. զի ասացած մի տայք զսրբութի շանց. վն այնորիկ. գ՟ Ճ Ժ Է. Հայրպէտք, ոչ նզովեցին զքհնան. զկուապաշտն, ոչ զմարդասպանն. ոչ զգողն և ոչ զպոռնիկն. և ոչ զայլ մեղաւորսն. այլ նզովեցին զարիոս. զնեստոր. և զմակեդոն և զամ հերձուածօղսն. որ զհոգին սբ հայհոյեցին. ինչ մարդ որ հայհոյիչ է ընկեր է արիոսի. նեստորի և մակեդոնի. զի ընդ նմ անէծք առնու. գ՟ Ճ Ժ Է. Հայրապետացն: Քան զի ասացին Հայրպէտք և Վարդպէտք թէ չունի որք իշխանութի թողութի տալ քուփր ասողին. և ոչ հաղորդութի. երբ Քն ոչ տըւած թողութի, այլ ո՛վ կարէ տալ թողութի: Բայց Վար

դապետք եկեղեցւոյ սահմանեցին թէ մեկ մարդ անգիտութ՟բ հայհոյէ՝ եւ երբ դարձ գայ, ապաշխար՟նքն այն է. որ քահանայն մեկ քար դնէ ՚ի բերանն. որ քանի զրոյց տայ ՚ի միտն անկանի. այլ եւ ·Գ· տարի պահք պահէ. եւ քուփր չանէ. ապա թէ թողու՟ի գտանէ. ապա թէ կրկին մեղանչէ եւ անզեղջ մեռանիլ հասանի, նա ոչ լինի թողու՟ի. եւ ոչ տալ հաղորդու՟ի. եւ ոչ թաղել զմարմինն երբ սատակի. այլ զպատն ծակել եւ դուրս հանել. եւ յոտքն չուան ձգել եւ այնպես երեսի քարշ տանիլ եւ ձգել. ուր եւ սատկած շուն եւ գազանք եւ գէշք անդ հաճաքին: Արդ որոյ սիրելիք մեր ՚ի վերայ պատրաստ կացէք յա՟մ մեղաց. եւ առաւել յիշոց տալոյ եւ քուփր անելոյ. եւ զբերանն ձեր մաքուր պահեցէք յա՟մ աղտեղի խօսաց. եւ ուսուցէք որդւոց ձերոց սրբութ՟բ պահել զբերանս իւրեանց. որք արքայութ՟ն ա՟յ ժառանգ լինիջիք հանդերձ ծնողօք եւ ննջեցելովք Ամէն:

✠ Յօհաննու ոսկիբերանին է ասացեալ վասն ողորմութեան:

## Գլուխ: ԻԸ:

ԱՍ. Զ.Ի ՀՐԱՄԱՅԷ ՏԷՐՆ մեր եւ ասէ՝ վաճառեցէք զինչս ձեր եւ տուք ողորմութ՟ի. եւ արարէք ձեզ քսակ առանց հնանալոյ՝ գանձ անպակաս յերկինս ուր ո՛չ գող մերձենայ եւ ո՛չ ցեց ապականէ: Արդ ով ոք որ խնդրէ զարքայութ՟ին՝

նա զձեռն իւր արձակէ՝ խոստուրս ողորմութե
աղքատաց. զի որ ողորմի աղքատին՝ փոխ տայ
այ. ոսկի ասէ. Թէ առնուք և տացի ձեզ. զի ով փոխ
տայ մարդոյ, նոյն չափաւն առնու. բայց ով
փոխ այ, Թէ կէս սրտով տայ, նա մէկին հա
րիւր առնու. Թէ բոլորով սրտով տայ, նա մէ
կին հազար առնու։ Ոսկի ասէ տէրն մեր. Թէ
նմանեցաւ արքայութի այ հատին մանանխոյ.
որ փոքր է քան զամ բանջար. յորժամ բուսա
նի, արձակէ ոստս մեծամեծս. նոյնպս և ող
ղորմութի աղքատաց սերմէ արքայութե. ոսկի
ասէ տէրն, որ աստ սերմանէ անդ հնձէ. նոյն
պէս և աստ սակաւ ողորմութին սերմ լինի, և
յարքայութե պտղաբերց ծառ դառնայ՝ խոստանն
այ. զի որ աղքատին շոր մի տայ հագնելու,
նա այ կուտայ. զի Թէ զաղքատն կամ զօտարն
՚խոսուն տանի, նա զքս ՚խոսուն տանի։ (Ս) Ոսկի
քս ամէն մարդոյ ականջ և աչք է տըւեր,
բերան և ձեռք և ոտք է տուեր. նոյնպէս կա
րէր որ քս ամէն մարդոյ ապրանք տայր միա
պէս. ինչպէս այս Թռչունք և անասունք մի
ապէս արածին են. և կարէր քս զմարդն նոյն
պէս ստեղծել. վասն այն արար քս զմարդն մեծ
և փոքր, աղքատ և հարուստ. և Թէ ամքն միա
պէս լինէին, ոչ աշխարհս շինութի լինէր. և ոչ
կարէին մտանել յարքայութին այ. վասն այն ա
րար քս մեծ և փոքր. զի աղքատքն վարձնև վաս
տակեն, շինեն և տնկեն. զի նոքաւ ապրին.

Եւ տմ մեծատունք պարտ են աղքատաց ողոր-
մութի տալ. զի նովաւ ապրին. նոյնպէս և այս
հուրն դատաստանին աղքատքն փրկեն զմե-
ղաւորսն, թէ տուրք առեալ իցեն ՚ի նմանէ.
Պարծել երբ աղքատքն գնան ՚ի դուռն ո-
ղորմածի, և ասեն՝ այ համար արարէ՛ք ինձ ողոր-
մութի. իսկ ով սիրէ զնա՝ կու տայ. և որ ու-
նի և ոչ տայ՝ մեղք է նմա. և ամ աղքատի
փորձէ զիւր սիրելին և զթշնամին. զի ամ
մարդ գիտէ որ մեծութի և աղքատութի ա-
հօղն ամ է. զի մարդիք վարեն և ցանեն, և
թէ ամ ոչ տայ՝ ուստի կարեն ժողովել. թէ
գնայ ՚ի ճանապարհ և ամ ոչ տայ, ուստի կա-
րէ շահիլ. ՚ի ծով նստի՝ թէ ամ չպահէ, ո՞վ
կարէ ելանել ՚ի ծովէն. երբ գիտէք որ ձեր
հարստութին և աղքատութին ՚ի ձեռին այ է,
ապա պարտ է այ սիրոյն համար տալ աղքա-
տաց և եկեղեցեաց ողորմութի. որ յաջողումն
լինի ընչից ձերոց. իսկ ով որ ունի և ոչ տայ
աղքատին և եկեղեցւոյ, ոչ քահանայից և
ոչ օտարաց, և ոչ իւր ննջեցելոցն, երբ մե-
ռանի մարդն այն և հեռանայ յընչիցն, և
յորժամ փոշիմանի, այլ ոչ հասանի իւր ձեռքն
իւր ապրանացն. զոր ինքն աշխատէր և վաս-
տակեր է. զի այլքն ուտեն և ծաղր առնեն.
ապա ինքն մնայ զժողոված մեղքն. այլքն
ուտեն և խմեն և հագանին, և քեզ ամ շահ
չիկայ. Տես որ քանի ժամանակն ՚ի ձեռքդ է

բերզ ծառ ածել. զի յետոյ ծառ չէր կայ. քանզի
բաղում ագահք անկան 'ի դժոխս. որպ̃ աղ
քատ Ղազարն խոցոտեալ եւ ցաւալից անկեալ
կայր առ դրան մեծատանն. եւ կարօտէր փշ
րանաց հացին, նա ոչ տայր. զի 'ի փշրանաց
անտի շունք կերակրէին եւ լեզուէին զվէրս
նր̃: Եւ եղև աղքատին մեռանիլ եւ տանիլ
զնա 'ի գոգն աբրահամու. նոյնպէս յորժամ
մեռաւ մեծատունն անկաւ 'ի դժոխս եւ պա
պակէր 'ի մէջ հրոյն. որ եւ աղաղակէր առ աբ
րահամ. եւ ասէր. հա՛յր աբրահամ առաքեա՛
զղազար զի ծայր մատին ջուր բերցէ եւ զօ
վացուսցէ զլեզուն իմ. զի այրիմ եւ պապակիմ:
Ասէ աբրահամ յիշեա՛ զփառս քո առաջին
յոր մխիթարէիր. այժմ սա աստ ուրախանայ
եւ դու այդր տանջիս. քանզի յորում դու ու
տէիր եւ ըմպէիր. ագանէիր զբեհեզս եւ զծի
րանիս. եւ սա կարօտէր փշրանաց հացին, եւ
ոչ տայիր սմա. եթէ անդ առեալ էիր, եւ աստ
առնէիր. դու անդ ոչ տուեր, եւ աստ ոչ առ
նուս. դու այդր տանջիս. եւ սա աստ մխիթա
րի. Թէպէտ գանձ շատ ունէիր չէր տուեր.
վն̃ որոյ կաթ մի ջուր ոչ տայ առ քեզ: Այն
պէս եւ անողորմից լինի: Իսկ մարդ որ ողոր
մութի ունի՛ մեծ փառաց տիրանայ որպ̃ աբ
րահամ. յոբ. դաւիթ. Թգ̃ Հօրն Կոստանդի
անոս. եւ այլ բազում մեծատունք կերին եւ
կերակրեցին. զգեցան եւ զգեցուցին. լիացան

և լինացուցին. ասա մխիթարեցին. և անդ գլուխ
արդարոց կոչեցան. նոյնպէս և տէր ողորմածք
ասա. մխիթարին և յամէն չարէ փրկին. և անդ-
զարքայութին ժառանգեն. զի ինչ տան աղքա
տաց վն սիրոյն քի, վն մեկին հարիւրապատիկ
և հազարապատիկ առնեն: Իսկ այնոքիկ որք
ունին և ոչ ողորմին աղքատին, յանկարծակի
մահն հասանի և խլէ զմեծութին ինքեանէ և
յետոյ փոշիմանին և այլ ոչ հասանին. նման
չար մեծատանն այրին ի հուրն դժոխոց. ինչ
մարդ որ նշան ողորմուե չունի, ոչ գտանէ
ողորմուի յայ: Գրեալ է ածն տէր խնդրէ յամէն
մարդոյ ողորմուի. իսկ թէ ասեմք ասեն. չու-
նիմք ունաւոր տամք. զի յաղքատացն ուրիշ ողոր
մութին կու խնդրէ տծ. զի ջուր ցուրտ տալն
ողորմութին է. Ճանապարհ ցոյց տալն ողոր
մուին է. օտարաց տեղ տալն ողորմուին է. զան
գէտ ան խրատել ողորմութին է. կուրի առաջ
նորդելն ողորմութին է. վն այն ասէ, երանի
ողորմածաց. զի նք զողորմութին գտցեն: Իսկ
որք ողորմութիւն չունին և ասեն թէ զտծ
կու սիրեմք՝ սուտ են և սղալ: Ո՜վ ի յորժամ
նստի Քն յաթոռ դատաստանին, քաղցրա
գոյն հայի յաջակողմեանն և ասէ՝ եկայք օր
հնեալք իմ. զի քաղցեայ և ետուք ինձ ուտել.
ծարաւի էի և արբուցիք զիս. մերկ էի և զգ
եցուցիք զիս. օտար էի և ժողովեցիք զիս.
հիւանդ էի և եկիք առ իս. յայնժամ պա

պատասխանի տան և ասեն. Երբ տեսաք զքեզ քաղցեալ և ծարաւի. կամ մերկ. կամ հի֊ւանդ. կամ ՚ի բանտի. և զայդ արարաք քեզ:

Յայնժամ ասէ տէրն. Թէ որ փոքրկանցս արարէք ինձ արարէք. եկայք օրհնեալք հօր իմոյ ժառանգեցէք զարքայութիւն որ պատրաստեալ է սկզբանց իւրոց. յայնժամ զարդարեալ լուսով, փառաւորեալ խնդութեամբ և ուրախութեամբ, մտանեն յարքայութիւն նորա:

Դարձեալ հայի ՚ի դասս ձախակողմեան, լի ցասմամբ և բարկութեամբ. և ասէ՝ ծառայք չարք. քաղցեայ և ոչ ետուք ինձ ուտել. ծարաւի էի և ո՛չ արբուցէք զիս. հիւանդ և ՚ի բանտի էի, և ոչ եկիք առ իս: յայնժամ նմա մեղաւորքն ասեն. տէր երբ տեսաք զքեզ քաղցեալ. ծարաւի, հիւանդ, և ՚ի բանտի, և ոչ պաշտեցաք զքեզ: Նա՛ տէրն բարկութեամբ ասէ. երբ ոչ արարէք միոյ իմ անուան փոքրկանցս այսոցիկ, և ո՛չ ինձ արարէք. երթա՛յք յինէն անիծեալք ՚ի հուրն յաւիտենից զոր պատրաստեալ է սատանայի և կամարարաց նորա:

Յայնժամ պատառին անդունդք և կլանեն զնոսա. և տանջին ՚ի հուրն յաւիտենական. վասն այն ասէ տէրն մեր՝ յորժամ առնես ճաշ, և կամ ընթրիս, մի կոչեր զբարեկամս և մի զեղբայրս քո. մի զազգականս քո և զմեծամեծս քո. զի և նոքա փոխարէն հատուցանեն քեզ. այլ կոչեա՛ զաղքատս. զկաղս.

զկաղս․ և զկոյրս․ զի ոչ կարեն հատուցանել նքա․ այլ հատուսցէ քեզ տր․ զի ոչ եհարց մեծատունն՝ թէ զի՞նչ գործեցից որ զարքայութիւն ժառանգեմ։ Ասէ տրն մի շնար․ մի գողանար․ մի սպանաներ․ մի սուտ վկայեր․ և մի երդուճիր սուտ․ ասէ մեծատունն զայդ ամ պահեալեմ ՚ի մանկութենէ իմմէ․ այլ զի՞նչ գործեցից զի կատարեալ լինիցիմ։ Ասէ տրն՝ երթ վաճառեա զամ ինչս քո և տուր աղքատաց․ այս խօսքս դժուար թըւեցաւ մեծատանն՝ եւ եգնաց։ Յայնժամ ասաց տրն՝ դիւրագոյն լիցի մտանել մալխոյ ընդ ծակ ասղանն․ քան մտանել մեծատանն յարքայութիւն այ․ գիտացէք ամ մեծատունք․ զի աղքատաց տուրս չարճողին կու բարկանայ այծ․ և ՚ի խանձանս դժոխոց մատնէ զնա և ՚ի հուր գեհենին։ Իսկ զաքէոս որ մաքսաճոր էր և չար մեղաւոր՝ երբ ասաց թէ զկէս ընչից իմոց տաց աղքատաց, նոյն ժամայն քաղցրացաւ տրն և ասաց․ այսօր եղև փրկութի տանս այսմիկ․ զի անչափ սիրէ տր զաղքատն որ ասէ՝ երանի աղքատաց զի նոցա է արքայութիւն երկնից․ վն սիրոյ աղքատին ծնաւ յաղքատ և ՚ի յորբ կուսէ․ զի Քս ինքն աղքատօրէն շրջէր․ և աշակերտացն ասաց աղքատաբար շրջել իվր երկրի և քարոզել զա ամ երկիր։ Նաև հրամայեաց ամ կարգաւորաց և քահանայից սևազգեստ մաղեղինաւ

և աղքատօրէն կենալ. վն այն ասեն վարդա-
պետք. որ զաղքատն սիրէ՝ զած սիրէ. վն ո-
ղորմութե ասէ դաւիթ: Երանի որ խորհի
զաղքատն և զտնանկն յաւուր չարի փրկէ
զնա տր. զի վն աղքատի տըրոցն յայսմ աշխս,
՚ի չարա չարէ փրկէ զնա տր. և յայն կեանքն ՚ի
դժոխոց ազատէ և յարքայութին դասաւորէ:
Վն այն ասէ տրն՝ վաճառեցէք զինչս ձեր
և տուք աղքատաց. գանձեցէք ձեզ զգանձս
յերկինս. ուր ոչ գող մերձենայ և ոչ ցեց ա-
պականէ. թէ մարդ մէկ հաց տայ, կամ մէկ
փող, հրեշտակն տանի և ամբարէ. և ՚ի դա-
տաստանի աւուրն բերէ և ՚ի կշիռ դնէ. ըղ
մեղքն ող ծուխ դարձուցանէ. ինչպէս մէկ
կտոր հացին պետրոսի մեղքն ջնջեցաւ. նոյն
պէս և ամն մարդոյ օգնական է յաւուրն դա-
տաստանին ողորմութին տալն. զի յօհան ոսկի
բերանն ասէ. թէ ողորմութին զդժոխոց հուրն
կու զինջուցանէ. և զանքուն որդն ապականանէ
զմարդոյ մեղքն ջնջէ. և զդժոխքն աւերէ.
զմարդն հաւասար հրեշտակաց առնէ. զի ո-
ղորմութին պէտքէ յամն. ով գանձ ունի, ՚ի
գանձէն տայ. ով հաց ունի, ՚ի հացէն տայ.
ով այգի ունի, կամ կթան ունի, տայ. յան-
դեայց, յանդաստանաց, ՚ի հնձանէ, և ՚ի մա-
ւանէ, և յամն ընչից, թէ որ գտանի. քան զի
Տծ ՚ի կարողացն խնդրէ. վն որոյ պարտ է աղ-
քատին ողորմիլ. և զգերիս ազատել: դ. քաղ

ցեալսն կերակրել. զօտարն ընդունել. զտրտ-
մեալն ուրախացուցանել. զհիւանդսն տեսա-
նել. զարգահորն մխիթարել. զնեղեալսն թօ-
փոփել. զծարաւսն արբուցանել. զանդետսն
խրատել. մոլորեալսն ցճանապարհ ցուցանել. զե-
կեղեցիս զարդարել. զքահանայսն պատուել.
զորբս և զայրիս պահել. այս քան առաքինու-
թիւքս մօտ են առ ած. համայ, և գեր ի վերոյ
են և ընդունելի: Իսկ ով որ լսէ, պահէ և
առնէ, և լեալէր սրտիւ և գործով կատարէ՝
նա քս գովէ և ընդ արդարսն դասէ. և ընդ
հրշտկս պատուէ: Ամօրոյ աղաչեմ զձեզ պա-
հել զխրատս զայս. և յիշել զաղքատս ողորմու-
թբ՝ որով լինքն ողորմի ձեզ ք. յայս կեանքս բա-
րապատիկ պարգևէ. և՛ ի հանդերձելումն
խուր օրհնեալ տեառն արժանացուսցէ, որ է
անզրաւ յաւիտեանս ամէն.

✠ Աւրհնաւորութիւն .Թ. դասուց Հրեշտակաց. նոցին փա-
ռաւորութեանցն.

Գլուխ: Լ_Թ.

ԱՌԱՋԻՆ ԱԹՈՌՈՑ ԴԱՍ-
քըն. և փառաւորութին է նց այս:
Աթոռ քո ած յաւիտեանս յաւի-
տենից. գաւազան ուղղութե և գաւազան
արքայութե քոյ: Երկրորդ. Քերովբէից
դասքն՝ և փառաւորութին է նց: Օրհնեալ
են փառք տն՝ ի տեղւոջէ իւրմէ:
Երրորդ Սերովբէից դասքն՝ և փառաւորութ

նութի է նց։ Ս͞բ ս͞բ ս͞բ. տէր զօրութեանց
լի են երկինք և երկիր փառօք քո։

Չորրորդ դասքն Տէրութեց՝ և փառաբանու
թի՛ է նց։ Արքայութի՛ քո արքայութի՛ յաւի
տենից. և տէրութի՛ քո յազգէ մինչև յազգ։

Հինգերորդ Զօրութեանց դասքն՝ և փա
ռաբանութի՛ է նց։ Տէր հզօր զօրութե՛ իւ
րով. Տէր կարող ՚ի պատերազմի։

Վեցերորդ Իշխանութեց դասքն՝ և փա
ռաբանութիւն է նոցա։ Տացին քեզ հեթա
նոսք ՚ի ժառանգութի՛. և իշխանութի՛ քեզ
ընդ ա͞մ ծագս երկրի։

Եօթներորդ Պետութեան դասքն՝ և փա
ռաբանութի՛ է նոցա։ Դու ես քահանայա
պետ յաւիտեանս յաւիտենից. և տէր ընդ
աջմէ քումմէ։

Ութներորդ Հրեշտակաց դասքն՝ և փա
ռաբանութի՛ է նոցա։ Ողորմեա՛ դու ստեղ
ծեր. մի կորուսաներ զգործս ձեռաց քոց։

Իններորդ Հրեշտակաց դասքն՝ և փառա
բանութիւն է նոցա։ Փառք ՚ի բարձունս
աստուծոյ, և յերկիր խաղաղութիւն ՚ի մար
դիկ հաճութիւն։

✠ Կարգաւորութիւն ինն աստիճանաց եկեղեցւոյ։

Առաջին կարգ։ Դռնապանութիւնն։
Երկրորդ կարգ. Ընթերցողութիւնն։
Երրորդ կարգ. Երդմնեցուցիչն։
Չորրորդ կարգ. Ջահավառքն։

Հինգերորդ կարգ. Կիսասարկաւագն:
Վեցերորդ կարգ. Սարկաւագն:
Եօթներորդ կարգ. Քահանայութիւնն:
Ութներորդ կարգ. Եպիսկոպոսութիւն:
Իններորդ կարգ. Կաթուղիկոսութիւն:

Բանք ասացեալ եղեալ Բարսեղի: Կեսարացւոյ:

՚Ի ծնունդն քո: Աւրհնու ՚ի թլփատութիւնն:
Աւրէք էկքն երուսաղէմի: Չորս մն զազարու:
Հինգ յորժամ ՚ի չարչարանս երթայր. և ՚ի մա
րեն ողջմնայ էստ և գնաց ՚ի լեառն ձիթե
նեաց:

Բանք բան խօսեցաւ ՚ի խաչին:

Հայր թող սոցա զի ոչ գիտեն զինչ գործեն:
Մայր ահա որդին քո: Առաջակին այսօր ըն
դ իս իցես ՚ի դրախտին: Էլի էլի լամասա
բաքթանի: Հայր ՚ի ձեռս քո աւանդեմ զհո
գի իմ: Ծարաւի եմ: Ամենայն ինչ կատա
րեալ է: Է. բան:

✠ Բանք ասացեալ առ ճանապարհաւ Բարսեղի յայժ դատա
պարտեցին

Ակն ՚ի բեթանիա. և գայր կամաւ ՚ի չարչա
րանս:
Ալ ՚ի լեառն ձիթենեաց յորժամ առ ողջ
մնաս տայց աշակերտաց:
Յորժամ տարան առ աննա և ուրացան զնա
և դատապարտեցին:
Յորժամ տարան առ կայիափա և վկայեցին
և դատապարտեցին թէ արժանի է մահու:
Յորժամ տարան առ պիղատոս և հարին զը

Ճիռ եծեծեցին. Թքին և փուշ պսակ եդին։
Յորժամ տարան 'ի գողգոթայ և խաչեցին։
Յորժամ մեռաւ և եդաւ 'ի գերեզմանի. և
էջ 'ի դժոխս. և պատերազմեցաւ ընդ սա
տանայի։

✠ Յաղագս գնալոյն 'ի Հռոմ, Թագաւորին Մեծոյ Տրդատայ և Գրիգորի Սրբոյ Լուսաւորչին առ Կոստանդիանոս Թագա ւորն. և առ Սեղբեստրոս Հայրապետն

Գլուխ։ ԽԱ։

## ՅԵՏ ՀԱՒԱՏԱԼՈՅՆ ՏՐԴԱ

տայ Թագաւորին, անցեալ ամս ինչ հաւատաց 'ի Հռոմ Թագաւորն Կոս տանդիանոս։ Ընդ որ ուրախացեալ Սուրբն Գրիգոր Լուսաւորիչն, 'ի հաւատալն Կոս տանդիանոսի։ Վասն որոյ խորհուրդ արա րեալ հետ Տրդատ Թագաւորին Թէ՝ գը նամք 'ի Հռոմ վս՟ շնորհաւորութե՟ հաւատա ցելոյն Կոստանդիանոսի։ Որ եւելեալ .Հ՟. հեծելովք. և բազում ընծայիւք. և յոլով ոսկովք գնացեալ հասին 'ի Հռոմ։ Լուր լը ւեալ Կոստանդիանոսի զգալն Թագա ւորին Տրդատայ. ելեալ ընդ առաջ նորա Թմկօք և տաւղօք. և երգեհոնօք 'ի պատիւ Թագաւորին մերոյ Տրդատայ. և սրբոյն Գը րիգորի մերոյ լուսաւորչի. ուրախութիւնս և ցնծութիս անասելի և անպատմելի արա րեալ 'ի տեսանելն զմիմեանս. և քաղաքն ա հասարակ դղրդեալ։

✠ Թուղթն սրբոյ Կոստանդիանոսեան Մեծի կայսերն հաստատանդրեա նոսի. Եւ սուրբ պապոյն Սեղբեստրոսի. Եւ սուրբ Տրդատայ հայոց արքային. Եւ սուրբ Լուսաւորչին Գրիգորի։

# ՅԱՆՈՒՆ ԱՄԵՆԱԿԱՐՈՂ ՄԻՈՒԹԵԱՆ

համագոյ սուրբ երրորդութե հօր և որդւոյ և հոգւոյն։ Հօրն անհասի և անքննելւոյ, և միածնի որդւոյ նորա Տեառն մերոյ և փրկչին Յիսուսի Քրիստոսի։ Եւ կենդանարար և ազատիչ սուրբ հոգւոյն ամէն։ Այս կտակ կայսերական իմով հաստատուն և անփոխադրական. որ գծագրեցաւ հզօր հռոմանաւ ինքնակալ և միապայազն կայսերն Կոստանդիանոսի մեծ և օգոստափառ թագաւորաց Թագաւորի. տիեզերատարած և աշխարհակալ խրոխտ և անխոնարհելի իշխանութեանս հռովմայեցւոց։ Որ զօրութ Ճշմարտին այ տիեզերաց. 'ի ծագաց ովկիանոսի ահագին ծովու մինչև յեզր արևու յաղթող զօրութեամբ պարծանաց խաչին քսի։ Այսպէս սահմանագրեցաւ հրովարտակ հրամանաւ իմով մեծի Պապոյս հռովմայեցւոց և սեբեստոսի որ և սեղբեստրոս աթոռակալն գլխաւորաց Առաքելոցն Պետրոսի և Պօղոսի. որ երկրաւոր և երկնաւոր Բանալեօք ունիմ իշխանութի յարևմտից մինչև յարեւելս իվերոյ ամ ազգաց քրիստոսադաւանից. կապող և արձակող 'ի յերկինս և 'ի յերկրի. և հրա

մանաւան հզօր յընդհանուր եկեղեցիս Քրիստոսի:
Ուստի և՛ ի հրաճերմանէ հոգւոյն սրբոյ հա
սին առ մեզ զօրքն հայոց. և կենդանի վը
կայն Քրիստոսի, և մեծ խոստովանողն սրբազնակա
տար կաթուղիկոսն Տէր սուրբ Գրիգոր Լուսա
ւորիչն մեր արևելից և հիւսիսոյ : Սիրելի
եղբարք մեր՛ ի Քրիստոս. և բուռն բարեկամքս բարձ
րագահ իշխանութեան մերոյ, և հաւատարիմ
հազարապետք խորին խորհրդոց մերոց. ժա
ռանգակալք աշխարհակալ և տիեզերական սա
րքայից արքայութեան արշակունեաց. ժառա
նգեցին՛ ի մեսումն տեղւոյս թագաւորական տանս
արևմտեան. և արևելեան առանց սրբոց և
գլխաւորաց առաքելոցս: Նաև փոխանորդի
նոյն պատուելի պապին. պետրոսապատ և կայսերա
նորընծայ՛ ի հաւատս Քրիստոսի: Նաև մեծի դըշ
խոյն հեղինեայ հզօր թագուհւոյս: Նաև ծի
րանածին զարդու զահակաց զօրացելոյս:
Ընդ որս հրճուեալ բերկրեցաւ ամենահա
տատ թագաւորութիւն մեր. և մեծ ահանդես
հանդերձանօք ելաք ընդ յառաջ այրարա
տեան թագաւորութեան, և սքանչելեան գըն
դին: Նաև պատահեալ միմեանց երկրպագու
թիւն մատուցաք անմահ արքային մերոյ Յիսուսի
Քրիստոսի: Նաև ողջունեալք զմիմեանս դարձաք՛ ի
վկայարանս սրբոց առաքելոցս. և երկրպագե
ցաք ամենամեծ սրբոց նշխարաց նոցա, փառաւո
րելով զՔրիստոս զպսակիչն սրբոց:



Նաև

Նաև եկեալ ՚ի պալատն պանծալի բազմեցաք
արքայքս ՚ի միում բարձրաբերձ բազմականի.
և Հայրապետքս ՚ի միում գերահրաշ գահաւո
րի և զբազում աւուրս անցուցաք ՚ի հոգևոր
և ՚ի մարմնաւոր ուրախութեան։ Նաև հրամանն
հանաք ՟է ՟ամ տիեզերս որ ընդ իշխանութ՟եա
մերէ, զի ամենեքեան ուրախասցին ՚ի կերա
կուրս և յըմպելիս. և արգելցեն հարկահանք
յ՟ամ տեղիս յայսմ ամի յաղագս ցնծութ՟ե սըր
տից մերոց։ Իսկ ՚ի հրամանէ արքայ Լուսա
ւորչին, ազատեսցին գերեալքն. զերծցին
բանտարկեալքն. պատառեսցին մուրհակք
պարտապանաց. դատ և իրաւունք ելցեն
յարքունուստ ՟ամ որբոց և այրեաց. և հայրե
նազրկաց։ Իսկ ՚ի հրամանէ քաջ արանց եղ
բօրս մերոյ Տրդատայ՝ դարձցին ՟ամ դատա
պարտեալք որք ՚ի քրէական մեսաղս իցեն.
և թողցին ՟ամ պարտք արքունականք։ Ընդ
որս և աղ օրհնութ՟ե հրամանաւ Լուսաւոր
չիս՝ առաքեցաք ընդ ՟ամ աշխարհս իշխանու
թ՟ե մերոյ. ՚ի պանդխտանոցս և յառանին զեն
լիս, զի մի հեթանոսաբար լիցի ուրախութ՟իւ
մեր։ Նաև զդաւանութիւն ՟սբ հօրս մերոյ
Գրիգորի, արձանագրով քարոզեցաք յ՟ամ
եկեղեցիս ուղղափառաց։ Իսկ յորժամ հան
դերձեալ էին հրաժարել ՚ի մէնջ հոգեզուարդ
հայրս մեր և եղբայրս Տրդատ. փառօք մեծ
եղև առաջի սուրբ առաքելոցս. ՟Գ ՟Ճ. և Ի.

սինկղիտոսօք. և ի գ̄ Թագաւորօքս. և բազ
մաբիւր իշխանօքս ՚ի ներքոյ բարձր բազկիս
մերոյ ա̄յ օժանդակեալ։ Նա և բազկակից
եղբայրս մեր Տրդատ արքայ, իւրով գահե
րեց մեծամեծ նախարարօք եօթանասուն
հազարօք։ Իսկ երկոքին Հայրապետօքս իւ
րեանց արք եպիսկոպոսօքն, և քահանայիւք
և կամաւն ա̄յ. և միջնորդութ̄ սբ̄ ա̄ծածնին.
և սբ̄ Առաքելոցն. և ա̄մ սրբոց. երկոքին Թա
գաւորքս. և երկոքին հայրապետքս. և երկո
քին ազգս, հռովմայեցիք և հայք. միաբան և
միախորհուրդ համաշունչ եղբարք գրեցաք
միմեանց. և ուխտ եդաշինս հաստատեցաք
յաւիտենական ՚ի մէջի մերում առաջի փա
ռաց փայտի նշանիս Քի̄. արիական լատի
նացիքս. և անյաղթելի Թորգոմացիքս։ Նա
յաղագս հաւատարմութ̄ե հաստատուն և ան
ջրելի ուխտիս մերոյ՝ զահագին և զանգին ա
րեանն Քի̄ ՚ի մելանս խառնել գրեցաք Ֆը
րերք միմեանց. արևմտեան և արևելե̄ն ազգս
որ հաւատ և սէր և միաբանութ̄ի պարտիմք մի
մեանց ով̄ եղբայրացելոյն Քի̄ ա̄յ. Ճգնե
լով իւր̄ միմեանց մահու չափ. և մեռանելով
յօժարութ̄ իւր̄ միմեանց. սիրելեացն սիրե
լի լինելով. և թշնամեացն թշնամի։ Նաև եր
կուց ազգացս ո՛չ ոք իշխեսցէ միմեանց սուր
քարշել. և որք յանդգնին սուրք նոցա մտ
ցեն ՚ի սիրտս նց̄, և աղեղունք նոցա փշրես

ցին 'ի բազուկս հաւրեանց: Այլ այս ուխտա
դրութի̄ հաստատուն կացցէ 'ի մէջ երկուց
ազգացս մինչև 'ի կատարած աշխարհի: Իսկ որք
վերացուցին յայսմ վճռէս՝ որոշեալ լիցին 'ի
քնական հաւատոցն. և անէծս վկայէնին և
զյուդայի և զուխրասպան քահանայիցն ժա
ռանգեսցեն: Նզովեսցեն հրեշտակք և մար
դիկք երկնի երկրի: Նա այսմ խորհրդոյս և
մեք հրովարտակ ընդ ոսկեզիրս իշխանութ̄ե
մերոյ առաքեցաք. որք էք ընդ արևելեայն
կողս աներկիական ծովուն. և 'ի միջոցս պոն
դականև կասպիական պեղագոսացն: Պատմու
թի լիցի ձեզ ամ̄ ազգաց և ազանց. և լեզուաց.
թագաւորաց. աշխարհակալաց. և իշխանաց
ազգաց. և գլխաւորաց գաւառաց: Որք էք
յափրիկեցւոց աշխարհէդ. և յարաբացւոց. 'ի
միջագետաց աշխարհէդ. և կիլիկեցւոց. և
փռիւգեցւոց աշխարհէդ. ուր մեծն Նոյ կազ
մեաց զտապանն. 'ի պամփիլացւոց. և կա
պադովկացւոց. բիւթանացւոց, և գաղատա
ցւոց. պոնտացւոց. և ասիացւոց աշխարհէդ.
և ոնտոնացւոց. և 'ի դորանէ բիւզանդացւոց
մինչև 'ի դրունս հոնաց: Այլ հաւատարիմ
սահմանապահք իմ մեծդ միհրան թագաւոր
վրաց. և քաջդ ուռնայր արքայ աղուանից. և
այլ խառնիճաղանճ բազմութիքդ առ հաւրկ
որք 'ի խազաստան, և 'ի դելմաստան: Որք էք
հաստատե̄լ 'ի հաստահեղոյս գաւազանն եր

կամ թէ ՚ի խորոց և անխոնարհելի իշխանութեան
հռովմայեցւոց: Արդ հրաման ել ՚ի հզօր կա-
մաց իւրոց ՚ի Կոստանդիանոս կայսերէ. զի իւրոյ
ձեր կացուցի Թագաւոր և իշխան միահեծան
զմեծ արքայն Տրդատէս զհամամիտ և զհա-
մակարի եղբայրն իմ և զուղակից իմ բարե-
կամն. զի հրամանաւն իմով տիրեսցէ տիեզե-
րաց. իշխան աշխարհական` և հրամանահան
հզօր առ հասարակ ծովու և ցամաքի: Այլ մի
ոք իշխեսցէ ՚ի ձեռն դիմադարձ լինել հոյա-
կապ հզօրին հայոց կայսերակերպին տրդա-
տայ, որ յաղթեաց հրշէի բունամարտիկ բար-
բարոսի առաջի դիոկղետիանոսի Թագաւո-
րի: Արդ ՚ի հաստատել ինքնակալ և հզօր և մեծա-
պատիւ Թագաւորիս Թագաւորաց ընդ առաջ
ելէք դմա արքունական ընծայիւք. և մեծ
պատուականութեամբ երկրորդի Թագաւորու-
թեան իմոյ Տրդատայ մեծարելեան ահեղանը-
շան Թագաւորի: Զի ոչ մեք յարեւմուտս տի-
րեմք բոլոր [illegible]: Սոյնպէս և զՏրդատ յարե-
ւելս կացուցաք իշխել տիրաբար բոլոր աշ-
խարհիդ. միանգամայն կազմ և պատրաստ լե-
րուք ՚ի դէն զինուորութեց. արի արանց, և
ռազմամուտ երիվարաց. զինեալք և զօրա-
ցեալք հզօր զօրութեամբ մերով. և դուք մարտիջիք
առաջի անպարտելի քաջին Տրդատայ ՚ի գործ
պատերազմի ընդդէմ ատելեացն քրիստոսի. և Թըշ-
նամւոյն իմոյ շապուհոյ մոխրապաշտի. հա-

նելով և հալածելով զչօրսն ի՟ծ, անդրքան զմա
զանգարան և զտապարաստան: Նաև զիմ զկեն
պատերազմականս՝ և զհուռք հեծելոց և զիմ
պատրաստութի երկաթասարդաց, և երկվա
րաց հրամանաւ Տրդատայ առաքէք ՚ի կող
մանս ատրպատականայ և արաղայ: Նաև ժողո
վեցարուք անհուն բազմութե իւրև զաւագ
ատաւային ծովու՝ յաղագս պահակին հոնայ
դարբանդայ և դալարիայ. զէն զնա ՚ի մեծն
Տրդատ վստահացայ: Ողջլերուք մերով ող
ջունելովս: Այլ որոյ և մեք պատկեցաք զմեծ
արքայս Տրդատ՝ կայսերական թագիւ լու
սաւոր աչամէք յօրինեալ. և մեծամեծ մար
դարտօք շրջապատեալ. և զարդարեցաք զհրա
կայագուն հասակ սորա ծովային ծիրանեօք.
օքսոնականն մետաքսօք. մարգարտամանէօք:
Նաև զանգին գօտի հօրն իւրոյ հզօրի ածի ՚ի
մէջ Տրդատայ քաջի: Նաև չորեք հարիւր ան
դամ օծանեցաք զնա կայսերական զարդիւք
և զէնուք մերովք. արքունադրօշմն նշանա
ւոր կառօք. և ծովային ոսկեթելից երկվա
րօք ոսկետարօք հանձերլինօք. և նիզակօք վե
շապամբօք. դռամարտակօք՝ անգին փոհարօք.
դունագեղ գնդօք տպաղինօք. սիգնայօք,
խոռոսկե փայլօք. և զօրաս ընդոստ ահագնա
գոչ չխփորայիւք. երգեհոնօք, և զանոնօք
յորդաձայնիւք. և միանգամայն իսկ զամ զար
դուք և զամ պատրաստութե ՚ի պալատն իմ պա

Հասիրեցի զսիրեցեալս իմ: Ընդ որս մեծա-
փառ դշխոյս մեր մաքսինդեայ. և քոյրն իմ
սքանչելագեղ կոստանդիա, պատրաստեցին
ընծայս զարմանազանս, որովք պսակեցի ըզ
բամբիշն արևելային, զվայելչափայլ Թա-
գուհին զմեծ աշխարհին. և զհրճուագեղն օ-
րիորդի հայոց մեծաց զխոսրովիդուխտ՝ զքօ-
սիձայն՝ որոց առաքեցան Թագս և պսակս
յակունթեայ և յասպիս ամբարհաւաճ տե-
սիլս. և անդամանդեայս բազմաքանքարս. և
վարսակալս վայելչափառս. և այլ զարդս բա-
զումս յականց և յապրշմեղինաց գործ ձար-
տարաց. անդէռա և անդինք. դուլէսս դաշ-
մաստակոնս, ձի. բարձեալ ջորոց վաթսնից:
Այնպէս պսակեցի և զարդարեցեալն իմ զխոս-
րով դրամիկ իմով զաճակաճս կոստանդի-
նեաճ. որ ինչ մանկական հասակին է ցան-
կալի և արժանելեաց անընտել և անուեստնելի:
Իսկ հզօր հազարապետացս հայոց՝ պարգևե-
ցաճ՛ իմերմէ Թագաճորութեան նշանակս,
և դրօշս գաղմատակոնս. և վիշապագլուխ
փողս և փաստոս բարձրաբարբառս. և զէնս
և զարդս պատերազմականս արի արանց, և
երևելի երիվարաց. նժոյգ ձուլույինք. և պա-
հանք պատենազէնք անդծելի երկաթոյ. և
այլ անթիւ և անհամար օժ խաս ոսկեոյ և ար-
ծաթոյ. և յոյժ ակնանց պատուականաց. ալե-
հեց սպասիգ՝ ևկազմածոյ կանանց. ջորոց՝ ձի

ոց՝ բեւեռանց՝ Թգ̃ւորական հանդերձանաց. որովք յղփացուցանք զէօթանասուն հազարան հայաստ̃նեայց: Պարգեւեցի եւ սիրելի եղբօրն իմոյ Տրդատայ զսիրեցեալն իմ զբեթղեհէմ, քաղաք Դաւթի. զտեղի ծննդեանն Քր̃ի ՚ի սրբոյ կուսէն: Նաեւ սեփհական աշխարհս սահմանեցի նմա զպոնտոսն արմենիան՝ զկապադովկիայ զոր հանեալէր ՚ի հայոց պոմպէի կեսարեայ: Նաեւ այսէ բուն հայրենիքն Տրդատայ: ՚Ի լեռանէն արարատայ. եւ ՚ի գայլ գետոյն եղեսպոնտացւոց՝ մինչեւ ցհզօր գետն մեծ տիգրիս: Իսկ ՚ի կողմանց քոհաստանայ՝ որ չափ բաղուկն իւր բաւեսցէ՝ զթուրն թափեսցէ: Խնդրեցի յարքայէն Տրդատայ արս .գ̃ Ճ. հաստակաւ եւ արիութ̃ հոյակապք զորս եւ արմենիք անուանեցի. եւ կարգեցի ՚ի սպասաւորութիւն արքունական գահոյից իմոց. զօրեղ հզօրինչք ՚ի տուէ եւ ՚ի գիշերի եւ առաջապահեսցեն ՚ի պատերազմի: Ահամէ այսու հետեւ գալ ինձ ՚ի տեսիլս, եւ յայտնութիւն՝ զոր տէր եցոյց ինձ. յետ բաղումամաց իշխանքն հայոց տարադրեն զտունն Տրդատայ. եւ ինքեանք տարադրեն ՚ի հայրենեաց իւրեանց. եւ անկանին ընդ լծով ծառայութե այլազգեաց ամս բաղումս. եղուկ որ դիպեցին յայնմ ժամանակին. զի տառապանօք տառապէ ազգն հայոց՝ մինչեւ յելս հոգւոց իւրեանց. որոց փրկութի ՚ի մ̃նէ է

ղիցի. եւ օգնութի՛ յազգատոհմէ իմմէ. բայց
այս եղիցի ՚ի ժամանակս յետինս յորժամ յայտ
նեսցին նշխարք սրբոց Սուքիասանց քօշիցն
զոր ես ամփոփեցի առաջնորդութե՛ հրեշտա
կի տն ՚ի Զարեւանդ գաւառի։ Երեւեցան
յերկրի մերում հրաշք զարմանալիք ՚ի հայրա
պետէս հայոց, եւս եւ ՚ի թագաւորէս։ Բան
զի ՚ի գալ սոցա առ մեզ. եւ յանցանելն ըդ ծովս
յունականս։ Հաւաքեցի ես, եւ ժողովեցի զամ
խեղս՝ զկաղս՝ զկոյրս՝ զմիակողմանիս՝ եւ զան
դամալոյծս. եւ զայլս ամ որք նեղեալ էին ՚ի
պէսպէս ցաւս եւ ՚ի տանջանս. եւ զայսպիսիս
ժողովեալ հանի զնս տմն ըդ էմ սբյն Գրի
գորի՝ զորս միանգամ զամենեսեան աղօթիւք
բժշկեաց սբն Գրիգոր, մինչեւ զարմանալ
մեր ամենեցուն իմը տմի՝ զոր արար տր նո
վաւ, եւ փառաւորեցաք զՔս զփառաւո
րիչն սրբոց իւրոց։ Դարձեալ էր վիշապ մի
մեծ ՚ի կապետոնեին. զոր խորտակեաց նշանաւ
խաչին քի՝ սբն Սեղբեստրոս, եւ արգել զնա
յորջ իւր։ Յետ այսորիկ երեւեցաւ այլ վի
շապ մի մեծ եւ ահագին՝ ՚ի տանս մեր. եւ
բազում վնաս առնէր մարդոյ եւ անասնոյ։
Կայր էր ՚ի նոյն սահմանն միեղջերու մի մեծ
եւ ահագին։ Նոյնպէս եւ նա վնաս առնէր մեր
ձակայ սահմանացն. եւ մարտնչէին ընդ մի
մեանս հանապազ՝ մի եղջերին եւ վիշապն եւ ոչ
ոք իշխէր անցանել առ նոքօք։ Զոր լուեալ

սիրելւոյն իմոյ ՚ի մանկութէ Տրդատայ. զի
նեալ զմիտքն և ամրացուցեալ նշանաւոր խաչին
Քսի, և աղօթիւք սբ Լուսաւորչին, և ըստ
յաջողելոյն այ, եհար և եսպան զմիեղջերին
և զվիշապն. և կտրեալ զհանրակ եղջեւր մի
եղջերին՝ պարգևեաց ինձ թիւրակէս, և ան
դեղոյս թիւնահալած: Իսկ ես զհասարակ
խաչ մասինն Քսի, զոր մայրն իմ բերեալէր՝
զայն ետու Տրդատայ դեղաթափ և կենաց
պատճառ յաւիտենական յազգաց յազգս՝ ՚ի
փառս այ: Պատմեաց մեզ փառաւոր Փրերս
մեր Տրդատիոս՝ վասն ամի անցից անցելոց.
եթէ որչափ է տանջանօք էարկ զսբն Գրի
գոր յաղագս ՚ի Քսի հաւատոյ. բովանդակ
զերկու ամ չարչարանօք, անողորմ և անխնայ
հարկանելով զնա: Իսկ կամ թէ որչ զերեք
տասան ամ էարկ զնա կերակուր օձիցն ՚ի խոր
վիրապին՝ որ ՚ի դղեկին արտաշատու: Իսկ թէ
որպէս պատերազմեցաւ պոռնկական պաշ-
տօնութե է դասեր քվեր մօր իմոյ ընդ հա
մանուանդն իմ Հռիփսիմէ ՚ի վաղարշապատ
քաղաքի. և ես և զպարտութիւն՝ որ յաղթեցաւ
՚ի կուսէն զօրութեն Քսի: Կամ թէ որչ զա
նազան տանջանօք եսպան զնա, և զնկերսն նր.
զանեալն սրբութե ՚ի մէջս սանթեէ: Իսկ
թէ որչ յետ .է. աւուր սպանմանն Հռիփսի
մեայ՝ էհար իմզ նր բարկութ յայս, և այսա
հարեալ փոխեցաւ ՚ի կերպարանս վայրենի վարազ

զի։ Արդ թէ ո՞րչ տեսլեամբն երասարովեդխօսոյ՝
հանաւ սրբն Գրիգոր ՚ի վիրապէն՝ ՚ի ձեռն
Օտա նախարարի՝ և հաւատարմի արքայի: Արդ
թէ ո՞րչ Լուսաւորիչն աղօթիւք եհան ՚ի
զգազանութէ մարդկան զՏրդատ: Արդ յետ
կ ՟Է. աւուր Ս աղօթապետութեան՝ ետես աչօք
բացօք սրբն Գրիգորիոս զէջումն միածնին ՚ի
ճաճանչ պայծառն արքունի· և զսիւնսն հրոյն
սին և զխորանն երկնանման· և զձև և զլորին
ճած գմբեթաձևն կաթուղիկէին· և զայլ
խորհրդական տեսլեան զոր ծանոյց նմա հրեշ
տակն Տն: Արդ թէ որպէս ամփոփեաց զսրբն
Հռիփսիմէ՝ և զԳայիանէ, և զ՟Լ և ՟Է. ըն
կերս նց: Արդ ապա բժշկեաց զՏմ հայաստա
նեայց: Նաև զգաւառակալսն իւր ՚ի մարդկային
կերպարանս՝ յետ ՟Հ. աւուր: Ձ ՚ի յաւուր
քան զայս ոտքն և ձեռքն միայն փոխեալէին
վն ապաշխարութե՛ սատարութե սրբոցն
Աստուածոց և վն մեհենիցն քակման յերկրին
հայոց և խորտակման բագնեացն բնաջինջ·
և թէ ո՞րչ դևքն մարմնաւոր տեսլեամբ հակա
ռակէին, և պատերազմ յարուցանէին պաշտօ
նէիւք իւրեանց, ՚ի տաճարն ՚ի տեղին գիտա
նեայ: Զորս զամենեսեան հալածեաց հայրս
հանուրց Գրիգորիոս յաղթարշն մարտից, որ
է ՚ի հարաւակողմն կապրանական ծովուն, անդ
դադարեցան դմ դևքն՝ հալածեալ ՚ի հայոց:
Յիշեցուցանէր մեզ՝ և վասն Նունեայ և մա

նեայ վրաց վարդապետաւ։ Թէ ո՛րպ ՚ի մրձենի
թայ քաղաքի բժշկեցայ՝ բժշկական ախտէն
զստողովմէ՝ զդուստր սուօր, որ էր կին միհրա
նայ աղախնորդւոյն արտաշրայ պարսկի։ Նաև
ո՛րպ հրաշիւք քարոզեցաւ անուն քնի ՚ի լեռ
նամէջն կովկասու՝ ՚ի մէջ վայրենամիտ բար
բարոսացն։ Նաև զմենամարտելն իւր ընդ
գօթացւոյն գեթաւեհոնի ՚ի ձորապանաձիդ ձո
րացւոյն։ Զայս ա̃մ լուծեալ մեր ՚ի ձայն օրհ
նութե փառաւորեցաք զք̃ս ա̃ծ՝ որ զլոյս փա
ռաց իւրոց փայլեաց յընդհանուր կողմանս
հիւսիսոյ, յարևելս, յարևմուտս, և ՚իրոպիա
կան ծիր՝ յաբեթեան բաժնիս։ Նոյնպէս և
մեք պատմեցաք տրդատայ փեսայ եղբօրս իւ
մում, զպատերազմելն իմ յունական զօրօքս ընդ
խուժադուժ ազգացն՝ գօթացւոց. և զպար
տութի իմ յանկոյս դանուբայ գետոյն հզօրի.
և զերբեւումն իմ ՚ի յերկնից աստղանշան խա
չին, և զվերնագիրն լուսեղէն եթէ այսու
նշանաւ յաղթեսցես։ Զորոց զօրինակն ե
տու դնել ՚ի դրօշային իմոյ. և նկարել ՚ի փառս
սանջախաց՝ և ռըմպաց։ Նաև ՚ի նշանս պատե
րազմական զինուց և ՚ի կորդակս վեղէնդա
հացն, որով զօրացեալ զօրացն իմոց, հարին
զհոյլս հեթանոսականնան հիւսիսաբնականնան.
և զդառնալն իմ յաղթութբ ՚ի հռոմ։ Բայց ՚ի
ձընշելն զիս երկնչոյս իմոյ, ատեցի ճշմարտու
թե՝ և դարձայ ՚ի թշուառութի իմ. զի հա

բաւ ՚ի խելքս իմ ՚սուրն փափուկ՝ որ սպանանէ,
և ոչ տայ զգալ. դիմադարձ եղէ քննական հա
ւատոցս՝ և զմոլեկան պատերազմ յարուցի, և
զզօրս իմ կոտորեցի որ հաւատացեալքէին ՚ի
Քս: Բայց ոչ արար անտես Տր. այլ հարկ
զանձամբ իմով զեղափանդական բորոտութի,
զոր ոչ կարացին բժշկել ճարտարքն ճեմա
րանին սոփեստեսքն սոկրատեան. և գովել
դունդքն պալիանոսեան. մինչև յայցել մեզ
արեգակն ՚ի բարձանց. և լուսաւորեալ բժշ
կեաց զմեզ Տրս Սեղբեստրոս. և հաստատեց
՚ի հաւատս ճշմարիտս: Արդ՝ յայսմ հետէ
հնազանդ եմք հօրս մերոյ հոգևորի. և դնեմք
զթագ թագաւորութես մերոյ ընդ ոտիւք
հայրապետացս սրբոց. և մեք կամք ՚ի ներքոյ
ձեռին սոցա կամակատար ծառայ Տյ, և
հծարեալ սրբոցս: Զի հաւատամք ճշ
մարտութբ թէ .Է. սիւնք են յաշխարհի՝
՚ի միում ժամանակի: Մին սեղբեստրոս
յարևմուտս: Այլ սուրբն Գրիգոր՝ յարև
ւելս: Այլ սուրբն Անտոն ՚ի հարաւ: Այլ
Տրն Նիկողայոս ՚ի հիւսիս: Այլ սուրբն Մա
կար յերուսաղէմ: Այլ Տրն Յակոբ ՚ի մծբ
բին: Այլ սուրբն Եփրեմ ՚ի յուռհայ: Յիշա
տակ սրբոցս օրհնութբ եղիցի՝ և աղօթք սո
ցա և ամ սրբոց ՚ի վերայ ամ աշխարհի. և ս և
՚ի պայազատ պալատս մեր: Արդ՝ եկեղեցի
և եկեղեցականք ամենայն գոյիւք իւրեանց

ազատ՝ եւ անհարկ լինէին յամ դիմոսական հար-
կաց արքունի։ Նաեւ որք ունէին զնշան կու-
սութե եւ պարկեշտութե, որք եւ կանայք՝ հաւ-
խազգեստք, եւ պարեգօտահանդերձք, ամքն
ազատ լինիցին՝ եւ յարքունուստ զգեցցին, եւ
կերակրեսցին։ Իսկ որ անհնազանդեսցին
հրամանաց մերոց եւ ը հարկած արկանեն զե-
կեղեցի, կամ զքահանայս, կամ զկրօնաւոր՝
կամ զհաւատաւոր՝ հալածեալ լիցին յերե-
սացն մեր. եւ որոշեալք 'ի հաղորդութե մբ հա-
ւատոյս. եւ պատիժ պատուհաս կրեսցեն 'ի
մերմէ թգաւորութենէս, եւ յամ աթոռակալաց
մերոց։ Իսկ համօրէն մարդիք սեփհական աշ-
գաց դաղմատացուցս, ամենեքին անգլխա-
հարկ լիցին։ Բայց յամ վաստակոց իւրեանց
հնգեակ տացեն 'ի դրունս արքունի. եւ այլ
դիմոս մի երթիցէ 'ի դրունս նց։ Իսկ այլ
ազգ եւ լեզուք՝ որք մեծաւ պատերազմաւ
հնազանդեցուցաք. մեք եւ հայք. նք պարտին
մեզ զգինս գլխոց իւրեանց. բաց 'ի հնգե-
կէն։ Նա տան մեզ՝ ոսկի եւ արծաթ ըստ կա-
րի. 'ի տարին .գ. անգամ. 'ի գարնան՝ 'ի գլխէ.
եւ յամառան յանաանէ. եւ յաշունն յարդեանց
մտէ։ Իսկ աղքատքն եւ օտարքն ը այնոսիկ մի
յիշեսցին։ Բայց վանականք որք շրջին անահ
եւ շահէին 'ի մեր երկրիս, յամ իշխանութե մերում, եւ
ոսկէհանք եւ արծաթհանք՝ բաժինս հանցին մեզ։
Իսկ 'ի հանգչիլ հրամանաց հզօրիս մերոյ, եւս

ինքնագլուխ պատապապոյս Հռովմայ Սեղ-
բեստրոս՝ և ընդ նմին. յորժամ տեսաք զարդու-
զաւակս իմ Կոստանդիանոս կայսր, որ յիմ
զօրութէ խուրմէ զօրացոյց զպսակաւորն հայոց
մեծաց զՏրդատէս, և փառաւորեաց զազգն
հայոց և զմեզ: Սմին նման՝ և նոյն հանգունակ
ըստ այսմ սարսաւի. և ես յօժարեցայ ի պատ-
ւել զմեծ խոստովանողս Քրի զքահանակից իմ
Գրիգորիոս: Կամակցութե̄ կայսերս մեծի
հրամանահանի ի հնազանդեալս իմ մերձա-
կայ ազգս և յայլս յետագայցուոց իշխանութս. և
ժողովեցի զամ արք եպիսկոպոսունս. և զամ
ուխտ եկեղեցւոյ ի դուռն դռնաբացացս
արքայութե̄ ի պատուեալ պատշգամ սրբոցս
Պետրոսի, և Պօղոսի՝ գլխափոխանիս. Քրի:
Հաւքելով առ մեզ զզաւրութի իբցս որք կան
ի մերում ժիխ. ի Հերակլեան արձանէն մինչև
ի յարձանն մելիտեան. և ի խսեպաէ կղզոյն,
որ հայի ատալաս լերինն՝ մինչև ի խսկլեայ
կղզին, յորում կայ հրակատարն բառականիս:
Սոքօք ամենաքու մեք. և հզօր աջով իւր Առաքե-
լոցս, և նշանաւ խաչիս Քրի, ձեռնադրեցաք
զկաթուղիկոսս հայոց՝ զտէրն Գրիգոր. պատ-
րիարգ և հայրապետ հրամանահան տիեզերս
ժողով. համապատիւ մեր հզօր աթոռոցս. Ե-
րուսաղէմին. և անտիոքին. և աղէքսանդրին.
և օրհնեցաք զսա ահաւոր անուամբ իւր եր-
րորդութե՝ եդեալ իմ արժանաւոր գլխոյ իւր,

գա՛լստ՟ս առաքելոյս պետրոսի վարշամականս Ռ՟ոմի. և արարաք զսա պատրիարգ հայոց մեծաց. զի ինքն և տ՟մ աթոռաժառանգք սորա ինքնագլուխ եղիցին՝ յիւրեանց եպիսկոպոսացն առնլով ձեռնադրութ՟ի, առաջարկութե՟ թագաւորին իւրեանց։ Նա՟ հայոց հայրապետն ձեռնադրե կաթուղիկոս վրացին որ մերոյն նունեայ և մանեայ աշակերտեցան։ Նա՟ ուր լիցին հայ ազգք սփռեալ ընդ հանուր աշխարհաց այլ և այլ լեզուաց իշխանութ՟ի ունի հայոց պատրիարգն ձեռնադրել նց՟ կաթուղիկոս։ Նա՟ և ս՟ն աղուանից եղեցին ը՟ հնազանդութե՟ հայոց հայրապետին. և առաջնորդութե՟ աղուանից թագաւորին՝ հայոց հայրապետն ձեռնադրեսցէ նց՟ կաթուղիկոս։ Նա՟ պատրիարգարանքն .գ՟ են, երուսաղէմայն. անտիոքայն. և աղեքսանդրին. յորժամ պատրիարգ ձեռնադրեն, կամօք և ընտրութե՟ հայոց հայրապետին լիցի։ Նա՟ որ ոք նոր նստցի յաթոռ պատրիարգութե՟ զդաւանութ՟ի հաւատոյն իւրոյ զօր պա՛րտ էր մեզ ծանուցանել. զայն հայոց հայրապետին ծանուսցէ. զի զնա կարգեցաք մեզ գըլխափոխան, և հրամանահան ի վ՟ր ամ՟ աշխական միջնորդ։ Նա՟ յեղիցն արևու՝ մինչև ՛ի դրունս դրախտին. որում և վկայեաց հոգին ս՟բ սրբութե՟ և արժանաւորութե՟ սրբոյն Գրիգորի։ Ո՜ ի մինչդեռ կայաք ՛ի խորանին

ս̄բ՝ և զնշխարական աղօթան կատարեցաք, ահա
յանկարծակի լոյս անճառելի և անընտելի ՛ի
մարդկանէ էջ յերկնից ի վ̄ր սրբոյ սեղանոյն
և աղեղնանման սատօք ·է· կրկին կամար կա
պեցաւ ի վ̄ր սրբոյն Գրիգորի. և հիահրաշ
փայլմամբ ճառագայթափայլեաց լոյս երե
սացն ն̄ր. ո̄պ զդէմսն ·Ք̄ի ՛ի թաբօր: Իսկ մեք
ամենեքեան ապշեալ՝ ո՛չ իշխեաք հայել ՛ի
նա. մինչև կատարեաց զս̄բ պատարագն. և ՛ի
փոքր մի փարատել շամանդաղ ամպոյն՝ ապա
իշխեցաք մօտել, և տալ նմա համբոյր և սեր
սրբութե ըստ օրինացս քրիստոնէից: Ըստ
որում խոնարհեալ ա̄ծակարգեալ կայսրս ս̄բ
ըսպասաւորեալ ՛ի սերովբէից, եկն ահիւ
մեծաւ առաջի ս̄բ Լուսաւորչին, և ՛ի ծունկ
իջեալ՝ համբուրեաց զքարձս ն̄ր՝ ըստ օրինի
օփրանթէի. և ապա համարձակեալ համբու
րեաց զաջն՝ և զխաչն. և ապա զդէմսն իբրև
՛ի նոյն ինքն ՛ի Ք̄ս միանալով համբուրեաց շր
թանց: Ապա ասէ կայսրն Կոստանդիանոս՝
և Սեղբեստրոս. ո՛վ երանելիդ ՛ի հարս ս̄բ
հայրապետ. որ անքուն և անհանգիստ կա
լովդ քո նման ես զուարթնոցն երկնից. և ան
կերպակուր կալովդ քո՝ գերիվերոյ գտանիս
ա̄ծգիտնական վարդապետաց: Արդ՝ աղա
չեմք զքեզ սիւնդ անսասանելի ա̄ծ տ̄ի:
Սուա մեզ և զհաճատոյս մերոյ դաւանութե.
և աղօթեա վ̄ս ա̄ծ աշխարհի. և ս առաւել

վ՟ն մերոյ թագաւորութե՟. զի խաղաղութ՟բ
և հանդարտութ՟բ վարեսցուք զանխեղերական
իշխանութիս. և այսու կենօքս՝ վերին կենացն
և երկնից արքայութե՟ արժանաւորեսցուք:
Նմին նման Տրդատ կայսերակերպ՝ և ամ՟ թա
գաւորքն, և իշխանք, և եկեղեցականքն, և
արքունականք, հայք, և հռովմայեցիք. ան
կանէին առ ոտսն սրբոյն Գրիգորի, և խնդ
րէին զթողութի՟ մեղաց իւրեանց. և օգնութի՟
՚ի պատերազմի: Ա՟ռ որոյ և ես Սեղբեստրոս՝
որ եղէ ակնատես սոյնպիսի զարմանալեաց՝
որով պատուեաց ամ՟ զպարթեւն զայն մեծ,
մեծարեցի և ես զնա ըս՟ իմում կարի. տալով
նմա զ վակասն իմ պատուական, որ էր լեալ
սրբոյն Յակոբայ տն՟ եղբօրն՝ առաջին եպիս
կոպոսին երուսաղէմի: Նաև զամ՟ զարդս հայ
րապետութե՟ անձին իմոյ ՚ի ժամ ձեռնադրու
թե՟. և զմատանին իմ խաչաձև. և զգաւազանն
իմ գեղեցիկ ՚ի դեղաշէն ական, և ՚ի մաքուր
մարգարտաց յօրինեալ. և զամ՟ սպաս պատա
րագի սրբոյ սեղանոյս զոսկեղէն զսկիհ. և
և զմաղզմայս ՚ի խռիափերթ ական տպազիոնաց
բազմակշռաց: Նա՟ զմիթրն իմ սստակ և սպի
տակ՝ որ փակեղն Յս՟ի: Նաև զբժշկաբաշխ
ձեռան բազկօք հանդերձ երկոցունց առա
քելոցս Պետրոսի և Պօղոսի: Նա՟ լուսատու
ակունս պայծառս. և պատուական մարգա
րիտս՝ և ջոհար ակունս: Նա՟ այլ բազում

զարդս՝ անգինս եւ անգիւտս ա̃մ աշխարհաց. զոր առաքեցի ո̃ք խորանայն որ ՚ի խորին հայս են՝ յոր է՛ջ յայտնապէս միածին որդին ա̃յ. եւ ոսկի ուռամբ բախեաց զսանդարամետս անդնդոց. նաեւ սրբութե̃ սեննեկին՝ սանուն խմոյ սրբուհւոյն Հռիփսիմեայ՝ եւ մօր զգաստութե̃ Գայիանեայ՝ եւ ա̃մ ջահազգեստ կուսանացն: Տամ օծիտ օրիորդացն՝ դստերացն հռովմայեցւոց եւ մարցն հայոց, եւ վրաց, պայծառ եւ պանծալի պատրաստու̃ պատուշգամաց՝ կուսաստանի նց̃, ըստ արժանի սրբութեց նց̃: Նաեւ սրբոյ կարապետին Յովհաննու եւ Ս. Թանագինէ հայրապետին՝ առաքեցի ոսկի ծածկոց ծալովի. եւ ապարօշ սրբոյ սեղանոյն. եւ բազում սպասք ՚ի պէտս եկեղեցւոյն եւ եղբարցն: Յորով միաբանեալ մեք կայսրս՝ եւ հայրապետս՝ մասն առաքեցաք ՚ի սեղանն ՚ի տաճարին. Է̃. տաղանդս ոսկւոյ ՚ի հարկացն միջագետաց: Նաեւ եւս առաւել ընծայեցաք ընծայս բազումս՝ յընծայեաց ո̃ք տածածնին: Նա՛ վարագայ վերնակարօն. ո̃ք եղբարցն. եւ ո̃ք հօրն ղեւոնդեայ: Նա եւ ա̃մ եպիսկոպոսացն. եւ քահանայիցն. եւ կրօնաւորացն. եւ կղերիկոսաց եկեղեցւոյ. որք եկեալ էին զհետ Լուսաւորչին հայոց ետու տուրս մեծամեծս. եւ պատրաստեցի զա̃մ պիտոյս նց̃, ը̃ ծով եւ ը̃ ցամաք՝ Ճանապարհին որ յարեւելս. նաեւ նորա արքունականս. եւ

դեսպորանշանս՝ և հրոսակս պատրաստականս՝ մինչև ՚ի սահմանս հայոց: Պարգևեցի Ներսապատ պարթևիս մերոյ յիշատակ յաւէր ժենական յազգաց յազգս. ՚ի յեր̅մ քաղաք՝ իջևանք հայոց աղօթականացն՝ զվկայարան սրբոյն Յակոբայ՝ զեղբօրն Յօհաննու ա̅ծաբան աւետարանչին: Ի յարքունական գանձուցն շինեսցեն զեկեղեցի. և ածցեն պարիսպ բարձր շուրջանակի. և ՚ի ներքս՝ սըրահս և սենեակս առանձնականս որանց և կանանց ՚ի հայոց եկելոցն. և ռոճիկս նշ̃ և տ̅մ պիտոյք ՚ի գալն և ՚ի գնալն յարքունուստ լիցի: Պատրաստեցի և տեղի պատարագի սրբոյն Գրիգորի ՚ի յաւրուէ մեծի եկեղեցւոյն, զգողգոթայ խաչելութե տեղին. և ՚ի խնարեց կուպայի գերեզմանին Քրի զմիջի կանթեղն մշտավառ՝ որ կան .Գ. կանթեղք ՚ի վր գերեզմանին Քրի, յիշատակ Լատինացւոց՝ Հայոց՝ և Հելլենացւոց: Գրեցի և հրովարտակս ընդհանրականս, առ աւետարանչացն աթոռակալ պատրիարգունսն որ յարևելս. զի զհայոց հայրապետն համապատիւ ինքեանց տեսցեն. զի երկոտասան առաքելոցն չորքն անտանօր կատարեցան: Անդ կայ և պատկեր փրկչին՝ զոր առաքեաց Աբգարու՝ որ յառաջ քան զտ̅մ Թագաւորս նա հաւատաց ՚ի քս̅ տ̅ծ: Անդ կայ և փայտեղէն պատկեր ն̅բ տ̅ծածնին, զոր տիրամայրն եդեալ ՚ի վր̅

ամենամաքուր դիմացն, եթաց արտասուօք, և օրհնեաց. և լոյս յերկնից խաչանման կացեալ ՚ի պատկերն՝ յօր փոխման իւրոյ: Ընդ կայ և խաչամասն պատրոնիկէի, որ էր ՚ի պարանոցի Հռիփսիմեայ օրիորդին: Նաև այս մասն հեղինեայ և կոստանդիանոսի՝ զոր մեք պարգևեցաք Տրդատայ: Ընդ կայ և գեղարդն ղունկիանոսի հարիւրապետի, որով խոցեցաւ կող փրկչին՝ և բղխեաց ջուր և արիւն, նշանակ մկրտութե և հաղորդութե: Ընդ է և շիշ իւղոյն՝ զոր օրհնեաց ժբն և եւ առաքելոցն, որով հիւանդք առողջացան. և մեղաւորք արդարացան. որպէս պատմէ սբն Մարկոս՝ թափիչ և աւետարանիչ: Ընդ է բովանդակ նշխարք ովհաննու մկրտչին՝ զոր Յօհաննէս աւետարանիչն եհան ՚ի հրեատանէ՝ և եբեր յեփեսոս. և փերմելիանոս եպիսկոպոսն եբեր ՚ի կեսարիա. և սուրբն Ղևոնդէս պարգևեաց սրբոյն Գրիգորի: Նոյնպէս և զսրբոյն Աթանագինեայ՝ որ եղբայր էր մարիամայ մօր Արթանէսի և Ալրստակիսի: Ընդ են և ժծարբեալ ժբ արքայն Տրդատ. և ժծպետականին Գրիգոր զօրար թունն: Որոց տօաք հրաման. զի յժմ գրընացս ճանապարհաց իւրեանց՝ ուր և հանդիպեսցի նշխարք սրբոյ՝ առանց ժմ հակառակութեց՝ ժմ ոք մասն պարգևեսցէ. որ և մեք զբազումս երկոցունց Առաքելոցս

պարգևեցաք. և այլ անթիւ մասունս: Ս
որոյ յետ մեր վեհագոյն հրամանացս՝ հայոց
հայրապետին կա՛յ իշխանութիւն զոր ինչ կա
մեսցէ՝ ըստ առաքելական կանոնաց, կապել
և արձակել յերկինս՝ և յերկիր: Օրհնեալ քն
'ի հայոց հայրապետէն՝ օրհնեալ եղիցին 'ի
Քսէ և 'ի սրբոց Առաքելոց, և 'ի մէնջ, և յամ
սրբոց· և բանադրեալքն 'ի նմանէ՝ 'ի նմին
կացցեն մինչև զղջասցին: Եւ հրաման հա
նէ հայոց հայրապետն 'ի հայս· և 'ի հոռոմս· և
'ի վիրս· և յաղուանս· և յասորիս· և 'ի պարս· 'ի
ծովէ, մինչև 'ի ծով· 'ի գետոց մինչև 'ի ծագս
աշխարհի: Այս գիր միաբանութե և սիրոյ և
հաստատ հայրագրութե հայոց· գրեցաւ մե
րով հրամանաւ Կոստանդիանոսի կայսեր, և
Սեղբեստրոսի պապին 'ի մեծ սինհոդոսին 'ի
տօնի սբ Առաքելոցն: Լատին լեզուաւ մա
կադրեալ· և արքունական մատանեաւ մերով
կնքեալ, և ստորագրեալ: Եւ հաստատ
այսմ թղթոյ, և զմիաբանութե թուղթն Տրր
դատայ՝ և սրբոյն Գրիգորի, եդաք 'ի ջամբռն
արքունի: Իսկ զայս գիր աւանդեցաք 'ի
ձեռն ատենադպրին հայոց արքային՝ մեծ
իմաստին Ագաթանգեղոսի: 'Ի փառս Այ որ
է օրհնեալ յաւիտեանս Ամէն:

✠ Բարոյց յաղագս խոստովանութեան 'ի բանին որ ասէ ասա [illegible] Ասա [illegible] խոստովանութե [illegible] մեր հանապազօրեայ է [illegible] [illegible] 'ի [illegible] մեր:

## Գլուխ ։ ԽԸ ։

# Ի ՎԵՐԱՅ ԽՈՍՏՈՎԱՆՈՒԹԵԱՆ ՎԵՑ

իրս տեսանելի է։ Նախ զի որպիսի քահանայի պարտ է խոստովանիլ։ Երկրորդ թէ զինչ է արարողութիւն խոստովանութեան։ Երրորդ կատարեալ պարտ է խոստովանիլ։ Չորրորդ թէ որպէս պարտ է խոստովանիլ։ Հինգերորդ թէ որք են որ ոչ խոստովանեցան զյանցանս եւ պատժեցան։ Վեցերորդ թէ որք են որ խոստովանեցան եւ գտան թողութիւն ։

✠ Առաջեալ յառաջին գլուխն ասացեալ ըստ որպիսի քահանայի պարտ է խոստովանիլ։

Գիտելի է զի խոստովանութիւն է հարկաւոր որպէս մկրտութիւն. զի նախ մկրտութիւն է, եւ ապա այլ ամ խորհուրդն. նոյնպէս նախ խոստովանութիւն է, եւ ապա այլ ապաշխարութիւնք. պահք՝ աղօթք՝ ողորմութիւն. եւ այլն ըստ կարգի ։ Ո՛չ ի մի աւուր պահքն խոստովանութեան՝ ընդունելի է, քան թէ .ժ. որ առանց խոստովանութեան։ Այլ խոստովանութիւն .բ. է. մինն մտաւոր. եւ այս լինի այ. զի միշտ եւ հանապազ պարտ է զմեղս իւր տարածել առաջի այ. եւ միւսն բանիւ. եւ զայս պարտ է յայտնել քահանային ։ Իսկ որ աստ խոստովանի զմեղս՝ ազատի։ Եւ որ ոչ խոստովանի, դատապարտի։ Եւ որ աստ յայտնէ զմեղս, առաջի ատենին Քի ծածկեսցի։ Եւ արդ որ ՚ի մին

քահանայէն ծածկէ՝ անդ առաջի այ և հրեշ
տակաց և մարդկան և ամ արարածոց յայտնի։
Նման այն ասէ առաքելոյն. ապա թէ խոս
տովան լեր։

Նախ զի՝ խոստովանահայրն ճշմարիտ քահա
նայ լինի, և ոչ աշխարհական. զի քահանայն
ունի հրաման կապելոյ և արձակելոյ. և աշ
խարհականն ոչ։ Երկրորդ՝ զի ուղղափառ
լիցի. զի ոչ է ընդունելի խոստովանութին
հերձուածողին։ Երրորդ զի մի լիցի ընդ կա
պանօք. վն զի բանադրեալն ոչ կարէ ներ
գործել զքահանայական իշխանութիւնն։
Չորրորդ՝ զի մի լիցի խուլ. զի անհաշտ քա
հանայն ոչ կարէ զամ ընդ մարդկան հաշ
տեցուցանել։ Հինգերորդ՝ զի իմաստուն
և գիտուն լիցի. որ ճանաչէ զմեծ և զփոքր
մեղքն։ Վեցերորդ՝ զի ամրաբերան լինի.
որ ոչ յայտնէ զմեղս. և թէ դատապար
տեն և չարչարեն և սպանանեն՝ ոչ յայտ
նէ. և թէ յերդումն տանին՝ կարէ երդնուլ
թէ ոչ գիտեմ. որպէս եղև տղայի միոյ. զի
ետես զհայրն որ սպանին. երբ հարցին, ոչ
ասաց զսպանօղն. որ սպանին և զնա. և եղև
մարտիրոս։ Եօթներորդ՝ զի արդար լիցի և
սբ. և ոչ զառածեալ մեղօք. վն այն զի կոյրն
զկոյր ոչ կարէ լուսաւորել. կամ հիւանդն
զհիւանդն բժշկել։ Ութներորդ՝ ոչ է
պարտ խոստովանահօրն լինիլ ագահ. զի մի

վն ագահութե ինչս առեալ, ոչ թողութի
առնէ յանցանաց։ Իններորդ՝ մի՛ լիցի բար
կացօղ. զի յորժամ լսէ զմեղս բարկացեալ զը
կէ յապաշխարութե զմեղաւորն։ Տասնե
րորդ՝ մի՛ լիցի նախանձոտ. զի մի՛ վասն նա
խանձու յայտնէ զմեղս մարդկան։

Երկրորդ գլուխն որ է զինչ է պարտաւորութիւն խոստովանութեանն։

Նախ տեղիքն՝ ի ձախակողմն քահանային. զի մեղաւորքն ձախակողմեանքեն։ Երկրորդ ի վերայ ծնկացն պարտէ անկանիլ։ Երրորդ բացագլուխ թէ արու իցէ։ Չորրորդ տխրացեալ դիմօք։ Հինգերորդ կը ցեալ ձեռքն՝ իբր թէ սուրբ առեալէ ի վն մեղաց։ Վեցերորդ յոգւոց հանելով և հառաչելով։ Եօթներորդ արտասուելով և ոչ ծիծաղելով։ Ութներորդ ամօթալից դիմօք։ Իններորդ աւաղելով զինքն։ Տասներորդ զփրկութի խնդրելով ՚ի մեղաց։

* Երրորդ Գլուխն բոլոր Նշտարակեալ պարտ է խոստովանիլ՝ որպէս ասէ դաւիթ։

Խոստովանեցէք զմր բոլորով սրտիւ իմով. և ոչ զկէսն ասել. և զկէսն պահել. օրինակ քեզ. որ մարդ մի .Ժ. նետիւ հարեալ լինի, թէ զինն հանեն և զմէկն թողուն, այն մահացնէ զմարդն։ Պարձեալ եթէ ՚ի մէկ նաւ նաստիս՝ որ հարիւր ծակ ունենայ զինընսուն և զինն ամրացնեն և զմէկն թողուն, այն ընկղմէ զնաւն. նոյնպէս թէ զմին մեղքն ծածկեն,

կորուսատ է մարդոյն։ Երկրորդ՝ զա̃մ մին քա
հանայի պարտ է խոստովանիլ և ո՛չ այլ և այլ
քահանայի։ Երրորդ՝ զիւր մեղքն պարտ է
խոստովանիլ և ո՛չ զայլան պատճառել։ Ո՛վ ի
թէ զայլոց հարախօսօղ և բամբասօղ լինիմք,
ո՛չ գտանեմք թողութի̃ւ. ո՛պ ադամ պատճա
ռեաց զեւա. և եւա զօձն։ Չորրորդ՝ զմեղքն
պարտ է խոստովանիլ. և ո՛չ զարդարութի̃. զի
են ոմանք որ զարդարութիւս խոստովանին. զի
ո՛պ մեղքն խոստովանութե̃ քաւի, այսպէս
և արդարութի̃ն կորընչի։ Հինգերորդ՝ հա՛
նապազ պարտ է խոստովանիլ. զի հա՛նապազ
մեղանչեմք՝ որ գեռ նոր է մեղքն. և՛ ի միտն
ունի. և թէ յամէ, մոռանայ։ Եւ թէ յա̃մ
որ ո՛չ կարէ խոստովանիլ, յամէն կիրակի
պարտ է խոստովանիլ. և թէ վասն ծուլութե̃
ոչ խոստովանին. նա՛ ՚ի տարին .դ̃. անգամ և
թէ ոչ՝ նա քրիստոնեայ չէ այնպիսին։ Վեց
երորդ՝ զմահու չափ մեղքն որ մի հետ ուղիղ
խոստովանեալէ՝ բաւական է նմա առ՚ի փրկու
թի̃։ Եօթներորդ՝ յառաջ քան զխոստո
վանիլն պարտ է խոկալ զա̃մ մեղս. և՛ ի միտ ա
ծել. զի առաջի խոստովանահօրն լման ասէ.
զի են ոմանք որք յանկարծակի գան ՚ի խոս
տովանութի̃. և մոռանան և ոչ ինչ ասեն. ո՛պ
այն կինն որ գրեաց ՚ի թղթի. և ետ ՚ի Նար
սեղ հայրապետն։ Ութներորդ՝ հաստատով
լիցի խոստովանութի̃ն. զի հաստատացէ թո

ղուէ մեղաց ՚ի ձեռն խոստովանութե՟ եւ իշխա
նութե՟ քահանայի՛ն։ Եւ յուսով լիցի. զի յոյս ու
նիցի արդարանալոյ, եւ որբելոյ ՚ի մեղաց. եւ սի
րով լիցի. զի սիրեսցէ զխոստովանութի՟ն եւ
զորբութի՟ն. եւ ատեսցէ զմեղս։ Այլ եւ համար
ձակ լիցի. եւ ոչ վ՟ս ամօթանաց ծածկեսցէ զմեղս.
ո՞չ այրի կինն որ զպոռնկութի՟ն ծածկեաց.
եւ ՚ի յերկու վիշապացն տանջեալ չարչա
րեցաւ. ո՞չ գրեալ է ՚ի հարանց վարս։
Իններորդ տրտմութ՟ եւ արտասուօք պարտ է
խոստովանիլ. զի ուրախութ՟ գործեցէք ըզ
մեղս. եւ տրտմութ՟ պարտ է խոստովանիլ. այլ
եւ տրտմութի՟ն ցուցանէ թէ փոշիման է ՚ի մե
ղացն. եւ ատէ զնա. այլ եւ արտասուս պարտ է
հեղուլ. զի զջերմութի՟ սրտին նշանակէ. որ
զ զղջացեալ է. եւ զմեղքն լուանայ. ո՞չ ջերմն
ջուր զհանդերձն։ Տասներորդ կամաւ պարտ
է խոստովանիլ. ո՞չ ասէ մարգարէն. ես կա
մօք իմովք խոստովան եղէց քեզ. զի կամաւ
գործեցաք զչարիս. եւ կամաւ գործեմք զբա
րիս. այլ եւ կամաւն վարձաւորիլ է. եւ ոչ կա
մաւն ՚ի հարկէ է եւ անվարձ. վ՟ս այն ած զկա
մաւոր զ զղջումն խնդրէ։ Ապա պարտ է ամ
մարդ՝ ծեր եւ տղայ այր եւ կին, ուսանիլ ըզ
կերպ խոստովանելոյն. եւ իւր կամաւն գայ ա
ռաջի քահանայի՛ն եւ իւր լեզուաւն խոստովա
նի. Իսկ չէ այն ըստ կարգի. որ նստին նոքա
եւ քահանայքն խոստովանին եւ նք ՚ի հեռու.

Այնպէս է ոչ թէ քահանայն նմա խոստո-
վանի։ Այլ թէ ազատ լինի եւ ամօթխածյա-
ռաջ պարտ է ուսուցանել քահանային զհա-
սարակ խոստովանութի՛ն. եւ յայնժամ ինքն
խոստովանի հանապազ։

Ա՛ռ թէ բազում անգամ խոստովանի զմի
մեղքն՝ ողորմութի՛ն ո՛չ իջանէ ի վե՛ր նորա ա-
ռատապէս՝ եւ բազում պսակ է նորա։

✠ Չորրորդ Գլուխն Է՝ որպէս պարտ է խոստովանիլ։

Նախ պարտէ զմեղքն խոստովանիլ, թէ
ուր գործեաց զմեղքն։ Երկրորդ զժամա-
նակն եւ զօրն. թէ տէրունի է թէ լուր։ Եր-
րորդ զհասակն, թէ յինչ հասակ գործեաց
զմեղքն։ Չորրորդ զքանիքն պարտ է խոս-
տովանիլ։ Հինգերորդ զտեսակ մեղացն ո՛չ
եգործեաց։ Վեցերորդ զգործակիցն թէ
ընդ արուի՝ եւ թէ ընդ իգի. կամ ընդ անաս-
նոյ։ Եօթներորդ զկամայն եւ զակամայն։
Ութներորդ զգիտութ՟ եւ զանգիտութ՟
մեղքն պարտ է խոստովանիլ։ Իններորդ
թէ ընդ այլ ազգոյ է գործեալ զմեղքն թէ
ընդ քրիստոնէի։ Տասներորդ թէ ընդ ազ-
գականի է, թէ ընդ օտարի. Դարձեալ թէ
կուսի, թէ ընդ ամուսնացելոյ։

✠ Հինգերորդ Գլուխն Է որք են որ ոչ խոստովանեցան ի
պատժեցան։

Նախ ադամ յետ յանցմանն՛ ի հարցանել ա՛ծն
ո՛չ խոստովանեցաւ զյանցանս. եւ վասն այն

պատուհասեցաւ: Երկրորդ կայէն յետ ըս
պանանելոյ զաբէլ՝ եհարց տ̃ր ա̃ծ. եւ նա ոչ
խոստովանեցաւ: Երրորդ ջրհեղեղացիքն ոչ
զղջացան եւ ոչ խոստովանեցան զյանցանս
քարոզութ̃ե նոյի. վ̃ն այն ջրով սատակեցան:
Չորրորդ սոդոմայեցիքն ոչ խոստովանեցան
զյանցանս խրատուն ղովտայ. վասն այն հրա
ցեալ անձրեւօք կորեան: Հինգերորդ որ
դիքն ահարոնի. նաբաթ եւ աբիութ. առանց
խոստովանութ̃ե եւ մեղօք ինչ մտին ՚ի սուրբն
ս̃ն խունկ արկանել. եւ հրով այրեցան: Վեց
երորդ ոզիա քահանայ ՚ի թիւրել Տապանա
կին ս̃ն, ՚ի կուրակէն մեղօք առանց խոստո
վանութ̃ե մերձեցաւ, եւ անկեալ մեռաւ:
Եօթներորդ յահուր մտաւ ՚ի Տապանակն
ս̃ն նայելով անարժանութ̃բ, անկան ՚ի ժո
ղովրդենէն արք. ծ ռ: Ութներորդ աքար
զարմին ոչ խոստովանեցաւ զգողութ̃ի իւր,
մինչեւ յայտնեցաւ առաջի եսուայ եւ քար
կոծեցաւ: Իններորդ յուդա սխմոնեան ոչ
ճշմարիտ ասաց մեղաց. վ̃ն այն ոչ գտաւ թո
ղութիւն եւ խեղդեցաւ: Տասներորդ սի
մոն կախարդն եւ յուլիանոսն եւ հերձուածողքն
ոչ զղջացան եւ ոչ խոստովանեցան զյան
ցանս իւրեանց եւ պատուհասեցան:

✠ Վեցերորդ Գլուխն գիտելի է, զի բազումք խոստովանեցան
զյանցանս եւ գտան զթողութիւն յանցանաց իւրեանց:

Նախ ղամէք յետ սպանման կայենի խոստո

վանեցաւ կնոջ Ուրիայ՝ և ոչ պատժեցաւ։ Երկրորդ Իսրայէլ՝ յորժամ անկաւ՝ ի հորթապաշտութիւն. և յետոյ զղջացան. և գտան թողութիւն որք կամեցան։ Երրորդ Դաւիթ խոստովանելով զյանցանս պոռնկութեան, և մարդասպանութեան, թողութեան արժանացաւ։ Չորրորդ Մանասէ թագաւորն խոստովանութեամբ և ապաշխարութեամբ և արտասուօք գըտաւ զթողութիւն։ Հինգերորդ Աքայաբ թագաւորն յետ սպանանելոյ զՆաբովթ քահանայն՝ յանդիմանեաց զնա Եղիա. և նա զղջացաւ և երկեաւ յերեսաց Տն. և ոչ ետ Տր Տծ չար տեսանել յաւուրս նորա։ Վեցերորդ Նինուէացիքն խոստովանելով և ապաշխարելով, գտան զթողութիւն։ Եօթներորդ Պոռնիկ կինն Մարիամ՝ ի տունն Սիմօնի խոստովանեցաւ Քրիստոսի. որև ասաց տէրն՝ դուստր թողեալ լիցին քեզ մեղք քո։ Ութներորդ աւազակն խոստովանելով՝ ի խաչին զտէրն, հաւատաց. և երկնից արքայութեան արժանացաւ։ ասելով այ

սօր ընդ իս եղիցես ՝ի դրախտին։

Իններորդ Պետրոս առաքեալն յետ ուրացութեան, զղջացաւ և խոստովանեցաւ զյանցանս. և գտաւ թողութիւն։ Տասներորդ բազում մաքսաւորք և պոռնիկք խոստովանեցան և արդարացան. և գտան զթողութիւն յանցանաց և մեղաց իւրեանց։

✠ Նորին յաղագս Գրիգորի Եւագրի ճառն պղծման պատու-
հասի. ՚Ի բանն Յովելեայ որ ասէ՝ փող հարէք ՚ի Սիոն. սրբեցէք
պահս. քարոզեցէք պաղատանս՝ ժողովեցէք՝ ծերակոյտս:

## Գլուխ. ԽԶ.

[illegible]
ինչ ասեմք. Նախ թէ ո՞րպ փոփոխական
է մարդոյն բնութիւն: Երկրորդ թէ՝ ո՞րպ
զերծանիմք ՚ի պատուհասէն: Երրորդ թէ՝
կարողութիւն մարդոյ պաշտմամբ եւ պաղատա
նօք արտասուօք եւ պատարագօք հաշտեցու-
ցանել զԱծ. եւ զպատուհաս մեղացն անցու-
ցանել ՚ի մարդկանէ:

✠ Առաջնոյս յաղագս Գլխոյն Առաջնոյս, թէ ո՞րպէս փոփո-
խական մարդոյ բնոյն:

Գիտելի է զի ասեն վարդապետք, թէ փո
փոխական է մարդոյ բնութիւն. երբեմն ՚ի
չար եւ երբեմն ՚ի բարին: Զի յորժամ անձն
իշխան կամօք օրինացն Այ հնազանդիմք, ՚ի
բարին փոխիմք. եւ զբարին գործեմք. եւ յոր
ժամ թողումք զօրէնս Այ, եւ հետեւիմք կամաց
չարին, փոխիմք ՚ի չարն եւ գործեմք զչարն:
Արդ յորժամ գործեմք զբարին, ՚ի բարութիւն
Այ վայելեմք. ասա մարմնով զխաղաղութի
եւ զառողջութի, եւ այլն. եւ անդ հոգւով ըղ
կեանսն յաւիտենից. որպ ասէ Պաւղոս· բա
րի առնէ բարեաց եւ: Իսկ յորժամ գործեմք
զչար, փոխէ իւր մեր զպատուհաս չարեաց.
ասա մարմնոյ հիւանդութի, սով, տարաժամ

մահ, եւ զայլսն որպ դառնիթ ասէ, պահէ զոր
զամենեսեան ոյք սիրեն զնա: Բան զի չար
մեղացն՝ իմէնջ է. եւ զպատուհասին չար՝ ա̃ծ
առնէ: Իսկ անդ զատանջանս դժոխոցն որպ
ասէ դառնիթ՝ զթիւրեալս յափշտակութ̃ տա
նի զնս̃. այսինքն որթիւրեալքն յուղիղ գնա
ցից, բնութ̃ քարշէ՛ ի հուր դժոխոց: Իսկ
աստ մարմնով պատուհասէ՝ կրկին նմա վը
րէժ եւ պատիժ. կամ խրատ եւ հարուածս:
Եւ սոքա այնպէս զանազանին: Նախ զի խը
րատն սիրելեացն եւ բարեկամացն է. որպ ա
սէ սողոմոն, զոր սիրէ Տ̃ր խրատէ: Իսկ վը
րէժն թշնամեաց եւ ատելեաց՝ որ հատուցումն
տայ չար գործոց նց̃. որպ ասէ մարգարէն.
Ա̃ծ վրէժ խնդրի. եւ հատո զհատուցումն ամ
բարտաւանից: Երկրորդ խրատն Ա̃յ բարկու
թբ̃ եւ քաղցրութբ̃ է. զի դարձուցանէ՛ ի չա
րեաց. եւ վրէժն դառնութբ̃ եւ բարկութբ̃.
որպ ասէ մարգարէն՝ Տ̃՛ր մի սրտմտութբ̃
քով յան՛՛: Երրորդ վրէժն պատիժ է աշ
խարհի կորստեան. որպ առ ջրհեղեղաւն. որպ
սոդոմայեցիք. որպ յեգիպտոս եւ՛ ի փարաւոն:
Իսկ խրատն է որպ իսրայէլացւոցն. յորժամ
թողին զերեսս Ա̃յ. կամ՛ ի կուռս. կամ յայլ
ինչ չարիս խոտորէին: Նաեւ երբեմն սով.
երբեմն սուր. երբեմն հիւանդութի. մահ
եւ գերութի տայր եւ խրատէր զնս̃: Եւ յոր
ժամ դառնային՛ ի մեղաց ա̃ծ դարձուցանէր

զգերութի̅, զառմն եւ զայլն. եւ տայր նմ̅ լռուե
առողջութ̅ եւ զայլ բարիս: Այսպէս յամ̅ ժա
մանակ, եւ յամ̅ տեղիս առնէ. զի յամ̅ տեղիս
մեղս գործեն մարդիկք: Որպ̅ աւելածուն
հանապազ սրբէ զտունն, նոյնպէս այսպիսի
խրատս որ շրջի ի վե̅ ամ̅ աշխարհի որպ̅ աւելէ,
որ սրբէ զմեղաւորսն յաշխարհէ. զի ուր
մեղքն է անդ է պատուհասն. թէ ՚ի բոլոր
աշխարհն, թէ ՚ի մի գիւղն, եւ թէ ՚ի մի տուն,
եւ թէ ՚ի մի անձն մարդոյ. անդ ընթանայ խը
րատն աստուծոյ, եւ պատուհասն. զի մեղքն
մեր որպէս խնդրակ լինի. եւ զպատուհասն
առ մեզ կոչէ:

✠ Տեսցուք եւ զերկրորդն բն. ո՛րպէս ազերծանիմք ՚ի պատուհասէնս
Առ գիտելի է՝ զի մարդասէրն ա̅ծ որ ըզպա
տուհասն տայ. եւ զայն ուսուցանէ մեզ մար
գարէիւն թէ՝ ո՛րպէս զերծանիմք ՚ի պատու
հասէն: Ահ փող հարէք ՚ի սիոն: Սիոն զե
կեղեցին նշանակէ. եւ փողն ժամահարն է եւ
քարոզողն: Սրբեցէք պահս՝ քարոզեցէք պա
ղատանս, ժողովեցէք զծերակոյտս. այսինքն
զծերս եւ զտղայս. զայր եւ զկին. զփեսայ եւ զհ
հարսն յառագաստէ. քահանայք եւ աշխար
հականք ժողովին ՚ի տաճարն աստուծոյ. լա
լով եւ ողբալով, եւ արտասուօք կարդան եւ
պաղատին առ ա̅ծ: Արդ ·գ· բան խրատ տայ
մեզ մարգարէն Յովէլ: Առաջին փող հա
րէք յայտնապէս:

Երկրորդ ժողովեցէք աստ զմ̃մ հաստակս։ Չոր
րորդ քարոզեցէք զպապատանս։ Հինգերորդ
արտասուօք պաղատեցէք առ ա̃ծ։ Վեցե
րորդ խնայեա տ̃ր ՚ի ժողովուրդս քո. և մի
տար ՚ի նախատինս անզգամաց օտարաց. և
այլն։ Յայս ·զ̃· բանիւս խրատէ զմեզ մարգա
րէն, հրամանաւն ա̃յ և ուսուցանէ։

✠ Սուրբն որ ասէ փող հարէք. յայտնապէս նշ՚ ծածուկ փայտ
հարկանէք. այլ յայտնի վասն չորս պատճառի.

Վասն զի ամենեքեան գիտասցեն թէ վասն
այս խրացս է մեր խնդիրքն և պաշտօնս. կամ
երաշտի. կամ տարաժամ մահու. կամ գերու
թե և այլն։ Որ ամենեցուն մէտքն և աղա
չանքն ՚ի յայն լինին։ Երկրորդ զի պատու
հասն ծածուկ ոչ է. որ ծածուկ աղաչեմք
զա̃ծ. այլ յայտնի են. վ̃ն այն յայտնապէս
պարտ է. աղաչել զներողն ա̃ծ։ Երրորդ ծա
ծուկ մեղացն ծածուկ պարտ է ապաշխարել։
Սակայ յայժմ մեղքս մեր յա̃մ ժ̃ի յայտնի է. որ
ծուլացեալ եմք ՚ի բարիս. և ժիր եմք ՚ի չարիս.
Թողուլ և զօրէնս ա̃յ. և անօրինիլ արբեցու
թ̃բ և պոռնկութ̃բ սպանութ̃բ և այլովքս. վ̃ն
այն պարտ է յայտնապէս դառնալ ՚ի մեղաց
և ապաշխարել ուղղութ̃բ։ Չորրորդ պատճառ.
զի յորժամ լսէ ա̃ծ, և կատարէ զխնդրքն
հանձքն, յայտնի լինի ա̃մ ժ̃ի. և անուանն ա̃յ
փառաւորի. թէ նա ետ զպատուհասն վ̃ն
մեղաց մերոց. և նա դարձոյց յետս, վ̃ն ողոր

մութիւն եւ գթութիւն խորոյ. վն այս .դ. պատ
ճառաւս հրամայէ փող հարկանել եկեղե
ցին ժողովել.

✠ Երկրորդ քանզի որ ասէ ժողովեցէ՛ք զամենայն հասակս ծծեր
ստնդիաց ստնդիայս.

Եւ այս վն .դ. պատճառաւ: Նախ զի մեղքն ամենեքեան գործեցաք. ծեր եւ տղայ. քահանայ եւ աշխարհական. այր եւ կին ամենքն զԱծ բարկացուցաք մեղանչելով. պարտ է ամենեցուն ապաշխարել. եւ հաշտեցուցանել զԱծ: Երկրորդ զի պատուհասն ամենեցուն է եկեալ. երաշտութիւն հիւանդութիւն սով եւ այլն. վն այն պարտ է ամենեցուն լալ. եւ դարձուցանել զպատուհասն: Որպ ընդ օտար հեծելոցն ժողովին ամ քաղաքացիքն եւ կռուին այնպէս մեզ պարտ է եւ միմեանց օգնական լինել պահօք եւ աղօթիւք ընդ պատուհասին կռուել: Երրորդ՝ զի բազմաց պաշտօնն եւ խնդրուածքն առաւել հաճոյ է Այ քան զմիոյն: Չորրորդ պատճառ պարտ է ամենեցուն ժողովել. զի թէ ոմանց ոչ լսէ զի անարժանք են: կամ ՚ի ծերոց ալէքն խնայէ, կամ ՚ի տղայոց դէմն ողորմի, կամ զառընդերայց անմեղութիւն տեսանէ, կամ զմարց հառաչանքն լսէ. զհարսին եւ զփեսային աղաչանելըն ընդունի. եւ զայլոցն. վն այն պարտ է յեկեղեցին ժողովել եւ պաշտօն կատարել:

Լաւս զպահք ասէ և ըզպաղատանս. վն. է. պատճառի. մին զի ուտելն և ըմպելն ըզմարմին ծանրացուցանէ. և ծուլանայ յաղօթիցն. վն այն պարտ է պահօք և ծոմով և ծարաւով թեթևացուցանել զմարմինն. և ապա միտքն թեթևանայ. և առ ած ելանէ աղօթիւք: Երկրորդ պարտ է զմարմինն սրբել աղօթիւք յամ մեղաց. այսինքն զախտս՝ և զլեզուս, և զձեռս. և ապա նք սրբի, և նք ձեռօք և լեզւ հաճ աղօթել առ ած: Եւ վն պահոց գիտելի է. զի կրկին է պահք. մի պահք է հանապազորդ. և միւսն օրըստօրէ. այն որ հանապազորդ ասի, այն է որ միշտ զամ զգայութիւս մեր պահեմք ՚ի մեղաց. զաչքն յարատ հայելոյ, և զլսելիս մեր ՚ի չար լսելոյ. զլեզուն ՚ի բամբասելոյ. և զմիտքն ՚ի չար խորհելոյ, և զայլն: Այսպիսի պահօք պարտ է սրբել զհոգի և զմարմին մեր ՚ի մեղաց:

Երկրորդ պահքն այն է որ ոչ է հանապազ. այլ օրըստօրէ պահեմք ՚ի մսոյ, ՚ի գինւոյ, և յայլ ամ պարարտ կերակրոյ: Եւ այս պահքս յերկուս բաժանի. մինն այն է որ զկանոնել պահք պահեմք ըստ աղուհացից պասն. և.ժ. շաբաթ ՚ի տարին պահքէ. և չորեք շաբաթն և ուրբաթն յառաքելոց և հայրապետաց կանոնեալէ: Եւ միւս պահքն այն է որ խոստովանիմք տյ վն ապաշխարութե և թողութե մեղաց: Եւ վն պատուհասի. կամ այլ ինչ

իրաց պարտ է որ այլ աւելին ուխտեմք եւ պա
հեմք. ըստ այնմ ուխտս դնէք եւ կատարեցէք.
այս է պահոց խրատն։

✠ Չորրորդ բանն որ ասէ ժողովելոյ պաղատանաց։

Պաղատանք աղաղակն է սրտին. որ ժողովելով եւ թախանձելով խնդրեմք յԱյ վասն ինչ իրաց եւիցէ։ Եթէ վասն պատուհասի։ Եթէ վն մեղաց, եւ վասն ամ իրաց։ Արդ՝ յորժամ պաղատանօք ի խորոց սրտէ աղաղակեմք առ Ած, եթէ արժանաւոր եմք լսէ. եւ տայ զխնդիրն. եւ եթէ անարժան եմք եւ յայնժամ առաւել տայ վն ·է· պատճառի։ Նախ զի սովորեմք ի խնդրելն, յորժամ գիտեմք թէ անարժանիցս լսէ Ած, առաւել խնդրեմք։ Երկրորդ՝ զի թէ վասն բարեկամութե ոչ տայ. սակայն վն ժտութե տայ. զի մի խափառ թախանձիցեմք ըստ Տրն ասէ։ Երրորդ թէ արժան եմք եւ թէ անարժան՝ պարտ է ամենեցուն խնդրել, զի ամենեցուն լսէ Ած։ Չորրորդ յամ ժամ պարտ է խնդրել եւ մի ձանձրանալ. զի զոր ինչ խընդրեմք ի՛նմանէ առնումք. ըստ Տրն ասէ խնդրեցէք եւ առնուցուք։ Եւ վն առաւելութե կրկնէ զբանն. թէ ամ որ խնդրէ առնու։

✠ Հինգերորդ խրատն որ ասէ, սրբատառօք լուսեղէն հոգեւորաց։

Այս ինքն՝ քահանայք եւ պաշտօնեայք եւ ժողովուրդք ի դուրան տաճարին. վն զի տրտմա
հօք աղաղակեալն սիրելի եւ հաճոյ է Այ։

Սաճ այս վն̃ բազում պատճառաւ է:

Նախ զի արտասուօք զջերմ սէր նշանակէ զոր ունիմք առ ած̃. զի յորժամ կակղիմք և տրտմիմք, յայնժամ երանէ՛ 'ի սրտէն գոլորշիքն և երթայ 'ի գագաթն, և ծանրացեալ իջանէ յաչսն և լինին արտասուք: Նոյնպէս յորժամ վասն մեղաց տրտմի և կակղի սիրտն վն̃ պատուհասին որ բարկացուցաք զած̃, արտասուէ որ է նշան ջերմ սիրոյն ա̃յ: Երկրորդ՝ պարտ է արտասուել և լալ. զի ուրախութբ̃ գործեցաք զմեղս, և հեշտացաք. ո̃պ ասէ իմաստունն. այլ ամբարիշտ ծիծաղելով գործէ զմեղս. իսկ յորժամ զ զղջանամք պարտէ լալ և կականել և ապաշխարել զմեղս մեր:

Երրորդ պարտ է լալ և ողբալ. զի սուգն և լացն յետոյ յուրախութի̃ դառնայ. ո̃պ դաւիթ ասէ. դարձոյց զսուգ իմ յուրախութի̃ զերծ": զի այս կենացս սուգն 'ի հանդերձեալն յուրախութի̃ փոխի. և ուրախութի̃ն 'ի տրտմութի̃. ըստ այնմ երանի սգաւորաց, զի նոքա մխի": և վայ ձեզ որ ծիծաղիք զի սըգասջիք: Չորրորդ պարտէ լալ. զի ո̃պ զհուր ջուրն շիջուցանէ. նոյնպէս և զհուր մեղացն և զտանջանս դժոխոցն ջուր արտասուացն շիջուցանէ 'ի մէնջ. և զի հուր է մեղքն և այրեցող զհոգիս մեր. ո̃պ ասէ սողոմոն. ծրարեսցե՞ ոք հուր 'ի հանդերձն և ոչ այրեսցի. կամ գնասցէ՞ ոք ի վր̃ կայծականց հրոյ՝ և ոչ

ի արշաւեցէ զոտս իւր. գիտացի՛ք եղբա՛րք զի
բազում ունիմք զհուր մեղաց ծրարեալ ՚ի
հոգի և ՚ի մարմինս մեր. և պա՛րտ է բազում լա
լով և հառաչելով և ողբալով արտասուս հե
ղուլ որ շիջուցանէ զհուր յանցանաց մերոց:
Հինգ երորդ պա՛րտ է արտասուս հեղուլ.
զի որպ՟ ջուր լուանայ զաղտեղութի՟ մեղաց.
զի մեղքն աղտեղութի՟ է հոգւոյն. որպ՟ ասէ
դաւիթ առաւել լուա զիս: Լուա՛ աղտեղեալ
հանդերձին .գ̃. ինչ պիտոյ է զի սրբեսցի.
Նախ ջերմ ջուր .բ̃. սապոն .գ̃. ձեռօք հար
ծելն: Նոյնպէս աղտեղեալ հոգւոյն՝ արտա
սուս ջերմ ջուրն է. ողորմութիւնն առաւ
քսա սապոն է, և հարուածս ձեռացն այն
է որ չարչարեմք զմարմինս ՚ի պահս ՚ի յաղօթս
և այլ ճգնութիւնս և ապաշխարութիւնս. այս
պէս սրբի մեղաւոր հոգին: Վեց երորդ
պարտ է լալ և արտասուօք խնդրել յայ՟. և
զայս ունիմք ՚ի մանուկ տղայոց. զի թէ ա
ւանց լալոյ զստինս խնդրեն, ոչ տայ մայրն
իւրեանց. այլ յորժամ գտանեն զարտասուսն
հառաչեն և լան. և յայնժամ մայրն նոցա առ
նու ՚ի գիրկս, և սրբէ զարտասուս և տայ զստ
ինս և համբուրէ զորդին: Նոյնպէս և մեք
յորժամ ցամաք աչօք խնդրեմք յայ՟ ոչ տայ
զխնդիրն. այլ յապաղէ: Այլ յորժամ արտա
սուս հեղումք. և ՚ի խորոց սրտէ հառաչեմք
առ նա, լսէ մեզ. զի նա է ծնող մեր. մին որ

ստեղծեաց զմեզ յոչնչէ. եւ միւսն որ զմեզ ծը
նաւ մեր աւազանաւն հոգւով: Երրորդ որ
գին եմք արեան որդւոյն քո: Չորրորդ ճա
շակեցաք զմարմին եւ զարիւն քո: Այլ եւ զհո
գին մեր ընկալաք: Այսպէս բազում կերպիւ
շնորհօք որդիք եմք քո: Եւ նա որ ծնօղն է
մեր. քան զհայր գթած է. եւ քան զմայր ողոր
մած. յորժամ տեսանէ զարտասուհալից դէմս
մեր եւ զկողկողագին պաղատանս, շարժի ող
րմին արարչական գթութեամբ դէմ ընդառաջ
ելանէ որպէս անառակ որդւոյն եւ առնէ 'ի
գիրկս խնամոցն. եւ սրբէ զարտասուս եւ համ
բուրէ զմեղաւոր հոգին. եւ զամենայն խնդրելս մեր
կատարէ. վասն այն պարտ է մեզ արտասուօք
լալ եւ խնդրել 'ի նմանէ. զի անցուսցէ 'ի մէնջ
զցասումն պատուհասի յանցանաց մերոց:

✠ Ա էջ երրորդ բանին խրատ փոյ մեզ մարգարէին նաւասույանէ.

Թող զայս ասասցեն արտասուհալից պաղա
տանս. Խնայեա տէր 'ի ժողովուրդս քո. եւ մի
տար 'ի նախատինս օտար ազգաց զժառանգու
թիւն քո. զի մի ասիցեն թէ ո՞ւր է Աստուած նոցա:
Երկու բան ուսուցանէ մեզ յաղօթելն.
Նախ խնայեա Տէր 'ի ժողովուրդս քո. քո
եմք ժողովուրդք. եւ խաշն արօտի քո. եւ քո
ժառանգութիւն. զի դու փրկեցեր զմեզ. որպէս
զքո խնայեա. եւ ոչ որպէս օտար զքեզ ծա
նեաք. զի հաւատացաք յԱստուած. եւ 'ի քեզ յու
սացաք. եւ ոչ ունիմք այլ Աստուած բայց 'ի քէն. մեք

մեղաք՝ մեք անօրինեցաք և ապըստամբեցաք՝ ի
քէն. դու ած մեր և մեք գործք ձեռաց քոյ
եմք ամենեքեան: Երկրորդ բանն որ ասէ և
մի տար ՚ի նախատինս օտար ազգաց. զի մի ա-
սիցեն թէ ո՞ւր է ած նց: Այսինքն մի տար
զմեզ ՚ի նախատինս, և ՚ի բամբասանս այլազ-
գեաց որ ասեն թէ անհաւատք են և չարք
են և անօրէն են. և նախատինք մեր առ քեզ
վերանայ: Յայնժամ ասեն հեթանոսք, թէ
ո՞ւր է ած նց. ո՞ւր է ամենակարօղն ած. ո՞ւր
է զօրութի նր. ո՞ւր է ըսքանչելիք նր. ո՞ւր է
օգնել նր. ո՞ւր է վրէժն նր. ոպ ասէր հռափ-
սակ, և հայհոյէր զած թէ ո՞ւր է ածն Եզե-
կիայի. զի վս նր զամ բարձունս և զսեղանս
կռոցն կործանեաց. ընդէ՞ր ոչ օգնէ նմա.
յայնժամ վրէժխնդիր եղև ած. և սատա-
կեաց զամ զօրս նց ՚ի գիշերի: Այս . ԺԵ . բա-
նիւս աղաչանաց լսէ ած և փրկէ զմեզ յե-
կեալ հասեալ պատուհասէ որ շուրջ պա-
տեալ է զմեզ: Առաջին՝ բան խոնարհութե
մերոյ, և աղաչանաց ՚ի դէմս մեր: Երկրորդ
բան՝ կոչել զած ՚ի յօգնութի մեզ. և խնդրել
վրէժ ՚ի թշնամեաց մերոց: Այսէ . Գ . բան
խրատն՝ զոր ուսուցանէ մեզ մարգարէն.
աղօթք դառնալ առ ած և դարձուցանել
զեկեալ հասեալ պատուհասն ՚ի մէնջ:

✠ [illegible]

Պիտանելին զի տեսեն Վարդապետք թէ՝ կարողութիւն է մարդոյ հաշտեցուցանել զԱծ պաշտամամբ և պաղատանօք. արտասուօք և պատարագօք. և զպատուհասն անցուցանել ՚ի մարդկանէ ։

Նաև այս յայտնէ ՚ի .գ. իմն օրինակաց. և վկայութեանց: Առաջին օրինակ ունիմք զնինուէացիսն: Նինուէ էր քաղաք մեծ ՚ի մէջ պարսից և ասորոց. և վն չարեաց նց կամեցաւ պատուհասել զնս Ած: Նաև հրամայեաց Յովնանու երթալ քարոզել. և յովնան ոչ կամէր գնալ: Նաև ոչ կամէր զփրկութն հեթանոսաց և անհաւատից .գ. զի գիտէր մարգարեական հոգւով զփրկելն նց. և ինքն ստուտ մարգարէ լինէր ՚ի մէջ իսրայելի. վասն այն փախեաւ. և եմուտ ՚ի նաւ և խռովեցաւ ծովն. և վիճակ արկին. և ել վիճակն յովնանու. և զյովնան ընկեցին ՚ի ծովն և հրամանաւն Այ եկուլ կէտն. և յետ .գ. աւուր եհան ՚ի ցամաքն. ցուցանէ թէ ոչ գոյ փախչիլ յերեսաց Այ: Նաև եմուտ ՚ի նինուէ. բոլոր լայնութիւն քաղաքին միոյ աւուր ճանապարհ էր այլ Յովնան .գ. օրն վճարեաց քարոզութն և զայս ասէր. յետ երից աւուրց կործանեսցի նինուէ. ոչ ուտէր և ոչ ըմպէր և ոչ նընջէր. ՚ի մեծաց ոչ երկնչէր. և ՚ի մեծատանց կաշառ ոչ առնէր. առանց պատկառանաց զմահ քաշէր. ՚ի քարոզելն յովնանու խռովե

ցաւ քաղաքն. մէգ և մառախուղն պատեաց.
և ըմբռնեաւ շարժիլ. և երերայր։ Յորժամ թա
գաւորն ընկեց զթագն ՚ի գետինն. քուրձ
զգեցաւ և նստաւ ՚ի վերայ մոխրոյ. նոյնպէս մե
ծամեծք և իշխանք. և ·գ· օր պահք քաղաքէն.
մեծի և փոքու. մարդ և անասուն ոչ էին ճա
շակեցին. և ոչ ջուր արբեցին. և մարք զս
տինս տղայոց ոչ տացեն։ Արդ ամենեքեան
դարձան ՚ի պաղատ և ՚ի խունգ և ՚ի յողբ և ՚ի յար
տասուս. զի թէ թագաւորն քուրձ զգեցաւ և
իշխանքն. ո՞վ էր որ հանդերձ զգենոյր կամ
՚ի վերայ անկողնոյ հանգչէր. ուտէր կամ ըմպէր
կամ ծիծաղէր և ուրախանայր. շնայր պոռն
կէր գողանայր յափշտակէր և զրկէր կամ
հարկանէր զոք. վասն այն յետ ·գ· աւուր քա
ցաւ ողորմութ դ.ո.ւ.ն. և ապրեցան ամենե
քեան։ Ո՛վ այսպիսի ապաշխարեց ՚ի մեղաց և
ոչ լուաւ Ած։ Նոքա ոչ ունէին օրէնք և ոչ
մարգարէք. և ոչ բնութեամբ զօրինացն գործ։
Արդ մեք ունիմք զօրէնս և զմարգարէս և զա
ւետարանն՝ որում ոչ լսեմք։ Նոցա միանգամ
քարոզեաց մարգարէին և ապաշխարեցին.
և մեզ հանապազ քարոզեն և ոչ դառնամք
՚ի մեղաց. Նոցա մահ մարմնոյ խոստացաւ և հա
ւատացին և զերծան։ Արդ մեզ դժոխք որ
մահ է հոգւոյ, և արքայութի որ կեանքն է
յաւիտենական և ոչ հաւատամք.

✠ Երկրորդ օրինակ ունիմք զմարգարէն դանիէլ

Յորժամ կամեցաւ ա՟ծ պատուհասել զնա երկուք հարուածովք։ Եւ այն եղև պատճառ. զի կամեցաւ ՚ի Թիւ առնել զժողովուրդն։ Եւ յորժամ Թուեաց .ը̄ ճ ռ̄. էր ցեղն Իղի։ Եւ յուդայի ցեղն .ե̄ ճ ռ̄. այր պատերազմող. Թող զայլս. և բենիամինի ցեղն և քահանայից ոչ անկաւ ՚ի Թիւ։ Եւ մեծամտեցաւ դաւիթ Թէ ժողովուրդ իմ բազում է քան զմովսեսին. զի յորժամ էհան յեգիպտոսէ .զ̄ ճ ռ̄. էին պատերազմողք։ Նոյնց ա՟ծ ժողովուրդ իմ է և ես բազմացուցանեմ. դու ընդէ՞ր մեծամտիս։ Եւ առաքեաց առ նա զնաթան մարգարէն և ասէ .գ̄. պատուհաս եմ պատրաստեալ ժողովրդեանս. այսինքն .գ̄. ամ սով։ Կամ .գ̄. ամիս սուր և գերութիւն։ Կամ երեք օր մահ։ Դու ընտրեա՛ ՚ի սոցանէ. և Դաւիթ ընտրեաց իմաստութեամբ զմահն. զի սովն և սուրն սաստիկ էր. զբարիս և զչարս ՚ի միասին պատժէր։

Եւ մահն ընտրութե՟ն ոչ խնդրայ մեղաւորաց կուտի. կամ երեսս ոչ առնէ՝ ոչ մեծի և ոչ փոքու. ոչ ծերի և ոչ տղայի. ոչ մեծատանց և ոչ աղքատաց։ Եւ ետես դաւիթ զհրեշտակն և սուր ՚ի ձեռին։ Եւ յառաւօտէն մինչև .զ̄. ժամն .հ̄ռ̄. սատակեաց. և այսու համարով .ե̄ ճ կ ռ̄. կամէր կոտորել ՚ի միում աւուրն. և ոչ ինչ մնայր։ Յայնժամ ետես դաւիթ զահագին պատուհասն. և

անկաւ ՛իվր̃ երեսացն և պաղատեաց զՀան
դերձս իւր. և ասաց՝ Տ՛ր սուր քո ՛ի յիս և՛ի
տուն Հօր իմոյ անմեղ ժողովուրդն զի՞նչ մե
ղաւ և դադարեցաւ սուրն: Յա՟ ասաց Ած
Երթ ՛ի կալն ուռնայի և գնեա՛ զեզինս նր̃. և
զտմ կալոյն. և մատո ինձ ողջակէզ. և արար նոյն
պէս. և էջ Հուր յերկնից և ընկալաւ զպատա
րագս նորա. նշանակ է զի յորժամ ուխտեմք
զինչ և իցէ ՛ի նոյն ժամայն դադարի ցասումն
Տյ. և յորժամ կատարեմք զուխտն, յայնժամ
երևի ՛ի մեզ ողորմութիւն Տյ:

* Յաղագս որոյ օրինակ ունիմք . Ո . Եզեկիա թագաւորին

Յորժամ եկն ռափսակ ասորի. ՃՁԵՌ. զօրօք
և պաշարեաց զԵղ̃մ, և առաքեաց թուղթ նա
խատանաց առ Եզեկիա թագաւորն և յԱծ
և ասէ, ո՛չ ոք յաստուածոցն կարացին փրկել
զքաղաքն իւրեանց ՛ի ձեռաց թագաւորին
իմոյ. և ոչ ձերն կարէ փրկել զձեզ. եկէ՛ք և
Հնազանդեցէ՛ք: Ապա թէ ո՛չ. զմիմեանս ու
տիցէք ՛ի քաղաքիդ. ապա սրոյ և Հրոյ ճարակ
տամ զձեզ, և զքաղաքդ ձեր. սով և աՀ և դո
ղումն և սուր պաշարեսցէ զքաղաքդ ձեր:
Յա՟ սովմնաս և եղիակիմ և յովաք Հազարա
պետն բերին զթուղթն առաջի թագաւո
րին. և նա առ զթուղթն, քուրձ զգեցաւ.
բոկ և գլխիբաց ընթացաւ ՛ի դուռն տաճա
րին Տյ. և արտասուալից աղօթեաց. և եդ
զթուղթն ՛իվր̃ սեղանոյն: Յա՟ առաքեաց

ա̃ծ զմարգարէն եսայի առ նա եւ ասէ, երթ ՛ի տուն քո եւ պատրաստեա զզօրս քո. եւ երթ ը-առաճօան. եւ ժողովեա՛ զկարաս նո՛ց ՛ի քաղաքդ. եւ ՛ի գիշերին ե՛ց հրեշտակն եւ սատակեաց զՃՁԵ Ռ. եւ առաւօտ գնաց ՛ի նապուլուս առ Թագաւորն իւր. եւ փախստական գնաց ՛ի նինուէ: Եւ սարասար եւանդրամէլէք սպանին զհայրն իւրեանց սրով ՛ի տաճարի կռոցն. եւ ինքեանք փախստական եկին ՛ի հայս: Այսպիսի աղօթիւք եւ արտասուօք զպատուհասն յետ դարձոյց եւ սատակեաց:

* Զօրութ յայտ է ՛ի [illegible]:

Որ գերեք ոե զա̃ծ ողորմած եւ գթած կոչեն. ոչ մեղանչես դաւիթ եւ այլ մարգարէքն ասեն. գթած ողորմած երկայնամիտ եւ բազում ողորմ է եւ ճշմարիտ՝ որ զղջանայ ի վը չարեաց մարդկան մարդասէրն ա̃ծ:

Ո՛վ ոք որ ընթեռնույք՝ միով հայր մեղայիւ յիշեցէք զպատճառն եւ զաշխատասիրս սորին:

* Աշխատաւորն տառապեալքն առաւե՞լ են քան յորդ՞ ցեղ. քան ո՞-ք հարստութեանս:

Պուղու խ: խՊ:

ՊԵՏՐՈՍ ԵՒ ԱՆԴՐԷԱՍ ՛Ի ցեղէն նեփթաղիմայ: Յակոբոս եւ Յօհաննէս ՛ի ցեղէն զաբուղոնի: Փիլիպպոս ՛ի ցեղէն ասերայ ՛ի բեթսայիդայ գալիլեացւոց: Մատթէոս ՛ի ցեղէն իզաքարայ ՛ի նազարեթէ: Սիմոն ՛ի ցեղէն եփրեմի ՛ի կա-

նայ գալիլեացւոց: Յակոբոս ալփեայ ՚ի ցե-
ղէն մանասէի: Յուդա յակոբեան ՚ի ցեղէն
յուդայի: Յուդա մատնիչ ՚ի ցեղէն դանայ:
Մատաթիա փոխանակ նո ՚ի ցեղէն ռուբէ-
նի: Պօղոս ՚ի ցեղէն բենիամենի: Յովհան-
նէս մկրտիչն ՚ի ցեղէն ղեւեայ: Դեբէոս ՚ի
ցեղէն սիմոնի:

✠ Ո՞ւր չարչարեցան սոքա. կամ որո՞վ մահուամբ:

Պետրոս ՚ի հռոմ խաչեցաւ ՚ի ներոն կայ-
սերէ: Եւ Պօղոսի ՚ի նոյն ներոնէ սրով գը-
լուխն հատանի: Անդրէաս ՚ի պատրասէ զա ելլա-
դացւոց խաչիւ կատարեալ յեգէպտայ դա-
տաւորէն: Յակովբոս յերուսաղէմ սրով ՚ի
հերովդէսէ: Յովհաննէս յեփեսոս խորով
մահուամբն կատարեցաւ: Փիլիպպոս յերա-
պօլիս յեփիփիմէ քաղաքի կախեալ:
Բարդուղիմէոս յարաբինոն քաղաքի ՚ի հայս
զմորթն քերթելով այնպէս կատարեցաւ:
Թովմաս ՚ի հնդիկս ՚ի կալամիդէա քաղաքի մոր-
թելով վկայեաց: Սիմոն ՚ի բոսպորոն վերինուամն
սրով կատարեցաւ: Յուդա յակոբեան ՚ի ռու-
էսիմէն կախեալ եւ նետաձիգ եղեալ ՚ի նոցա-
նէ եւ այնպէս կատարեալ: Մաթէոս ՚ի հայ
՚ի պատնատրուկ արքայէ: Մատաթիա յեռուեղ-
սոն սարգցւոց քարկոծեալ եւ ընկեցեալ ՚ի
ծովն. եւ հանեալ թաղեցին զնա ՚ի բեխրոսն. յո-
րում պատահի նմա հանգստարանն ՚ի նշխարն:
Յովհաննէս մկրտիչն հերովդէս գլխա-

տեալ։ Յակոբոս եղբայր տն յերուսաղէմ Թափչով հարեալ զգլուխն, և կայ 'ի լերինն ձիթենեաց ընդ սիմոնի։ Յակոբ ալփեայ 'ի հնդիկս 'ի մարմարիկէս։ Մարկոս 'ի յաղեքսանդրիա քաղաքի քարշեալ. և կայ անդ. Ղուկաս 'ի Թեսաբասի եօթն դրունս. և Քրիստոսի փառք յաւիտեանս Ամէն ։

✠ Քարոզ վասն ննջեցելոյն ասացեալ սրբոյն Գրիգորի աս Նիւսացւոյն ։

Գլուխ։ ԻԹ

## ԱՅՍՊԷՍ ԱՍԷ ԵՐԱՆԵԼԻՆ

Յոբ 'ի բերանոյ ննջեցելոցն. Թէ ողորմեցարուք ինձ ո՛վ բարեկամք իմ. զի ոչ ունիմ ողջ անդամ գործելոյ. քան զի օտարացան բարեկամք իմ և հեռի եղեն սիրելիք իմ, և մերձաւորք իմ. զի ոչ կարեմ գործել. և ո՛չ մուրանալ. ո՛չ 'ի տեղէ 'ի տեղ շրջել։ Ո՛վ ծառայք այ ողորմեցարուք ինձ. զի ոչ եթէ յոբ վս իւր ասէ. այլ 'ի բերանոյ ննջեցելոցն ասէ ողորմեցարո՛ւք ինձ. ոպ ասէ տէրն մեր Քս. զի յորժամ առնես ճաշ և կամ ընթրիս, մի՛ կոչեր զբարեկամս քո և զդրացիս, և զմեծամեծս, զի նոքա զփոխարէնն հատուցանեն քեզ։ Այլ կոչեա զաղքատս՝ զխեղս՝ զկաղս՝ և զկոյրս. նա երանելի լինիցիս։ Նաև ո՛վ աղքատ, եթէ ո՛չ մեռեալն. կամ ո՞վ է կոյրն, թէ ո՛չ ննջեցեալն. կամ ո՞վ է օտարն, եթէ ո՛չ մեռեալն ։ Զի յոր

ժամ մեռանի մարդն և փոխեցանի յոճէս, գը
նոց յերկիր հեռանանր. օտարացանի և հեռա
ցանի 'ի ծնողաց. յազգականաց և յընտանեաց,
յորդւոց և դստերաց, և յամ մերձաւորաց.
երբ մեռանի մարդն, աղքատացանի. թէ թա
գաւոր և թէ իշխան. զի ամ մարդ աղքատա
նայ և ապա մեռանի. զի մեծութ .Է. նշան
կայ որ այն նշանաւն մեծանայ մարդն. զի
յոր մահուն յայնմ.Ա. նշանն գեղեցկութիւնէ.
Բ. նշանն զօրեղութիւնն է որ ուժով լի
նի .Գ. այն է որ իմաստութն և ճարտարախօս
լինի .Դ. այն է որ շատ գանձ ունենայ .Ե.
նշանն այն է, որ 'ի մեծամեծ իշխանաց և թա
գաւորաց ազգէ լինի. նա նովաւ մեծանայ.
ապա 'ի ժամ մահուանն այս ամ խափանի.
թէ գեղեցիկ է, դեղնի և գիշանայ. թէ ու
ժեղ և զօրաւոր է, թափի ուժն և ոչ կարէ
շարժիլ. թէ իմաստուն և խելօք է, նա գնայ
խելքն և չքանայ իմաստութիւնն. թէ հա
րուստ է, աղքատանայ. և ոչ կարենայ ձեռք
ածել ընչիցն. կամ թգւոր է, անկանի 'ի փա
ռացն. և յամէ աղքատանայ և ապա մեռանի.
վա այնորիկ արար ամծ՝ զի ամ մարդ խրատ առ
ցէ. և յիշէ զօր մահուն և հոգէ վարէն: Ա ա
այն ասէ թէ, թգւոր մի կայր որ իշխէր .Ժ.
թագաւորաց. և ունէր .Ճ. քաղաք. և 'ի յօր մահ
ուան իւրոյ կապել ետ զպատանն իւր 'ի վե
րկայն ձողոյն. և տէլալ ձգէց 'ի մէջ քա

ղաքին Թէ, այս մեծ Թագաւորին ահա մահ
ուան օրն հասաւ. եւ յափշտակեաց զամ մեծու-
Թի Թագաւորին մերոյ. միայն Թէ՝ այս սպա
տանս տանի ՚ի յաշխարհէ բաց ՚ի գործոցն. զի
ո՛րպ մերկ գայ ՚ի յերկ՛ այլ նոյնպէս գնայ ՚ի յաշ
խարհէս. զի ոչ բերաք ինչ. եւ ոչ տանել կա
րեմք: Ո՛րպ ասէ սուրբ իմաստունն. ո՛վ հող եւ
մոխիր, զի՞րդ հպարտանաս եւ խնդաս. զի մե
ղօք յղացար՝ մերկ եւ ապուշ զի ծնար, եւ չարով
մեռանելոց ես. եւ ցաւօք կրես զկեանս. զի դեռ
դատաստանի ահին եւ դժոխոց տառապին կայ.
ապա ընդէ՞ր հպարտանաս. քանզի իմաստունն
սուրբ յետ մահուան օրն կոչեաց զամ բարե
կամս եւ զդրացիս իւր՝ խրատէր զնս եւ ասէր.
եղբարք զիս տեսէք. եւ զձեր ճարն իմացէք.
զի ո՛րպ ես հեծեծանօք եւ դառն մահուամբ
կու մեռանիմ. նոյնպէս եւ դուք մեռանելոց
էք. զի ո՛րպ ես հեռանամ ՚ի տանէս եւ յընտա
նեաց, որդւոց եւ դստերաց. նոյնպէս եւ դուք
զերկիրք յամ ընչից եւ ապրանաց յորդւոց եւ զա
հակաց. մերկ եւ դատարկ ելանէք յաշխես. զի
ոչ բերաք ինչ եւ ո՛չ տանիմք ինչ. զի գնամք
յերկիր հեռաւոր. նա շատ պաշար պիտի մեզ.
քանզի ով որ բարեգործութի ունի, երանե
լի է եւ չէ օտար. ամ մք եւ հրեշտակք սուրբ
լին են նմա եւ բարեկամք. բայց մեղաւորին,
ծնօղքն եւ բարեկամքն Թշնամի դառնան
իւրն։ Ս̃ այն ասէ՝ ննջեցելոյն Թէ ողորմե

ցարուք ինձ. զի անճառ է աղքատ ննջե
ցեալն. զի յայս կեանս՝ բազում ճար ունին
աղքատքն. վարեն և ջնձեն. գողանան և յափշ
տակեն. մուրանան և առնուն. գնեն և վա
ճառեն. խափեն և խլեն. իսկ անդ ոչ վարել
կայ և վաստակ առնել. ոչ ջնձել և ոչ ժողո
վել. ո՛չ մուրալ և ո՛չ գործել. այլ յա̅մ դիմաց
փակեալ է արքայութիւնն ա̅յ: Իսկ թէ բա
րի յիշատակ ունին ննջեցեալքն, աչքն միշտ
՚ի յետ մնացքն հային. և ողորմութի̅ խընդ
րեն ՚ի յիշատակաց իւրեանց. վասն զի զա̅մ
ինչսն յետ թողին և գնացին. թէ տուն և
թէ այգի. վ̅ն այն մեռելք աչքն յետևն են:
Դարձեալ թէ որ ծնողքն են մեռած, և ո՛չ
ունէին ինչս յ̅ե, պատրաստին նոքա միշտ ողոր
մութի̅ խնդրել ՚ի զաւակաց իւրեանց. քան
զի բազում աշխատանք ունին իւր̅ զաւա
կացն. զի .Թ. ամիս յարգանդի պահեցին. կա
թամբ դիեցուցին. գիշերն ՚ի բուն արթուն
կացին. ՚ի հրոյն փախուցին և ՚ի ցրտոյն ծած
կեցին. ՚ի բարձր տեղեաց և ՚ի գազանաց պա
հեցին. ՚ի յայլոց գողացուն. խափեցին և յափշ
տակեցին. ստութբ̅ բազում ինչս կողոպտե
ցին վ̅ն զաւակացն կերակրելոյ և հագուցա
նելոյ. մինչև ՚ի չափ հասակի բերելով. դար
մանելով. խրատելով. առ վարպետն տալով.
հետն դեգերելով. խանդաղատելով. և մին
չև ՚ի կարգ աշխարհի ածելով. բազում նե

ղութիւն վիճակս եւ զտառապանս կրելով վասն
զաւակաց իւրեանց. ամենեքին զհոգիս իւ-
րեանց կորուսին. թէ ինչ է մեր մեղքերն է:
Իսկ որդիքն թողեալ զգութ ծնողացն ամե-
նեքին ոչ ողորմին հոգւոյ նոցա. ապա այն է
որ ասէ. թէ ողորմեցարուք ինձ: վասն որոյ
պարտ է որդւոցն թէ .Ժ. հաց ունի մէկն տայ
ծնողաց հոգւոյն. իսկ թէ չունի եղասուն աղ-
քատ է. նա աղօթս առնէ. զմօր կաթն յիշե-
լով եւ՛ իգիշերն անհանգիստ մնալով: Դար-
ձեալ զաւակն ըղորդ սիրելի պիտի ծնողացն,
եւ ո՛չ սուտ սիրելի. զի սուտ սիրելին, եւ չի
տակ սիրելին .գ. ցեղէն ճանաչի. զի սուտ
սիրելին յորժամ հարուստ է սիրէ զնա. երբ
աղքատ է ո՛չ սիրէ. միւս եւս յորժամ մօտ է՝
սիրէ. երբ հեռանայ մոռանայ. քանի ողջ է
եժիր սիրէ զնա. երբ հիւանդանայ եղեղ-
նանայ ատէ զնա: Իսկ հաճատարիմ սիրելին,
հայրն եւ մայրն է. քանի մօտ է որդին յանդի-
մանէ եւ ասէ. երբ հեռանայ որդին, սիրտն
դալարի, եւ աղիքն մորմոքի: Դարձեալ քանի
ժիր է որդին եւ առողջ՝ սակաւ սիրէ. երբ
հիւանդանայ, ծնողացն ՚ի սիրտն արիւն կա-
թէ: Դարձեալ քանի հարուստ է որդին, ո՛չ
հոգայ վ͞ն ն͞ր. բայց յորժամ աղքատանայ,
նա ՚ի հոգս եւ՛ ի տրտմութիւն անկանի վ͞ն զա-
ւակին. վասն այն ծնօղքն ճշմարիտ սիրելի
են. զի ծնօղքն սովամ մնան, եւ զզաւակն կե-

րակրեն· իւրեանք մերկ միան, և զզահական
զարդարեն։ Նոյն ընդարձ փոխարինին, և որ
դիքն պատրաստական են սիրել զծնօղս իւրենց·
և հոգալ զհոգս նոցա պաշտամամբ և պատա
րագօք· զի մեծ վարձք է յիշել զննջեցեալսն·
զի 'ի դժոխոց ազատի ·Ա· վարձք այն է որ
ինքն ևս ազատի 'ի պարտուց· և Ած քաղցրա
նայ նմա· և ողորմութիւն շնորհէ ·Բ· վարձքն
այն է որ իւր որդիքն տեսանեն և ուսանին·
և նք ևս յիշեն զննջեցեալսն իւրեանց ·Գ·
այն է որ ննջեցեալք վսն իւրեանց աղօթս
առնեն· որպէս հրեշտակին տասց լուսաւոր
չին· Թէ ննջեցելոց բանն և գործն այն է,
որ յիշատակ բարի ունէնեան, և օրհնեն զյի
շատակս իւրեանց· և խնդրեն յԱյ բազում
պարգևս և զողորմութիւն։ Իսկ որ չար յիշա
տակ ունին, նա աղաղակեն առ Ած ջնջել
զյիշատակս իւրեանց· և ընդ անյիշատակս
համարեսցին։ Ո՛վ Ածասէր ժողովուրդք
մի մոռանայք զյիշատակս ձեր· այլ հանա
պազ յիշեցէք պաշտամամբ և պատարագօք· զի
քաղցրանայ Ած իվր այնպէս յիշատակին· և
մեկին ·Ճ· կու տայ Ած տուողացն· զի որ ո
ղորմի ննջեցելոցն, և տայ յիշման, քաղցրա
նայ Ած իվր այնպիսի յիշատակին· և 'ի բազում
փորձանաց ազատէ· վասն որոյ յիշատակ լերուք
ծնողաց ձերոց յաղօթս ձեր և յիշեցէք զի և
դուք յիշեալ լինիջիք առաջի Այ։

Յաղագս [illegible] թողութիւն տալոյ մեղանչողին ամենա-յն ընկերին վասն ոխակալութեան որ ասէ:

Գլուխ: ԽԵ:

Քի ով հրամայէ տէր մեր ասելով՝ թէ բարի արարէք ատելեաց ձերոց. և օրհնեցէք զանիծիչս ձեր. զի տէրն քս յառաջ ճգնութիս ինքն առնէր և ապա ուսուցանէր: Ու ի յորժամ զաւետրն մեր կամէին ըմբռնել, պետրոս եհար զականջն մաղքոսի սրով. իսկ տէրն առեալ զականջն, եդ ի տեղին և բժշկեաց: Նոյնպէս և զլունկինոսա որ գնաց և խոցեաց զկողն քն, նա արիւն և ջուր բղխեաց. և զկուրացեալ զաչսն լուսաւորեաց. զի միականի էր: և յորժամ բևեռեցին զտէրն ի խաչին, և երբ հարկանէին զբևեռսն, նա ասէր հայր՝ թող նոցա զմեղս զի ոչ գիտեն զինչ գործեն: Վս զմեղս ուսուցանելոյ ասէր. որ արասցէ և ուսուսցէ նա մեծ կոչեսցի: Դարձեալ ասէ քս՝ զոր ինչ հայրն գործէ, և որդին նմին նման գործէ: զի ամ քրիստոնեայք քնի որդիք են. ինչ մարդ որ ասէ քրիստոնեայ եմ պիտի որ քնի նման վս իւր չար կամին բարի խնդրէ. իսկ որ յաւազանն է մկրտեալ, քնի որդի է. և պարտ է նման հօրն առնել. ապա թէ ասեմք քնի որդի եմք, և ոչ լսեմք զհրամանս, ոչ կարեմք լինել որդի նր: Վս ոխակալութեան ասէ. զի քնի անունն անոխակալ է. ինչ մարդ որ ոխա

պահէ, եւ քէն անէ, նա սատանայի որդի է.
Եւ չէ քնի որդիք: զի առաջին մեղքն ոխակա
լութիւն է որ սատանայ ոխացաւ ընդ ադամայ.
եւ արտաքսեաց զադամ ՚ի դրախտէն. եւ կատա
րեաց զոխակալութիւն: Նոյնպէս կայէն ոխա
ցաւ ընդ աբէլի. եւ սպան զնա. նոյնպէս եւ
յուդա ոխացաւ ընդ յսի, եւ մատնեաց զնա
վն արծաթոյ. զի ոչ .ժա. առաքեալքն որ
դիք էին քնի. նոյնպէս եւ յուդա որդի էր.եւ
երբ ոխացաւ եւ մատնեաց զքրն, եւ յորժամ յա
րեաւ քն, եւ էջ ՚ի դժոխս, ազատեաց զմեղա
ւորս. բայց կրկին կապանօք կապեաց զսա
տանայ. զկայէն եւ զյուդա. վասն զի այն ե
րեքն ոխակալքեն, եւ ընդ սատանայի կա
պեալքեն եւ տանջին: Նոյնպէս եւ որք ոխա
պահեն, հեռանան ՚ի քնէ, եւ ընկեր լինին սա
տանայի. եւ ընդ նմա տանջին, վն այն ասէ տրն.
Երանի այնոցիկ որ մքրեն սրտիւք. զի նոքա
զած տեսցեն. զոր պարտ է մեզ օրինակ առ
նուլ ՚ի քնէ. որ վն խաչողացն թողութիւն
խնդրէր. եւ զղունկիանոսի մեղքն եթող. եւ
զաւջքն երաց: Սբ յովհաննէս մկրտիչն զիւր
գլխատողին մեղքն եթող. նոյնպէս ըստե
փաննոս նախավկայն վն իւր քարկոծողացն
խնդրէր զթողութիւն. իսկ առաքեալքն վն
իւրեանց տանջողացն եւ չարչարողացն աղա
չէին առ ած դառնալ ՚ի կռապաշտութե.
եւ որդիս արքայութե առնէին: Ով ի լուսա

ւորիչն մեր Գրիգոր .ԺԵ. տարի 'ի խոր վիրա
պին չարչարեցաւ, և ոչ անէծ քետուր տրդա
տայ. և երբ խոզացաւ՝ փոխանակ չարութե նր
մկրտեաց և լուսաւորեաց. և որդի հոգւոյ արար
զնա. և զամ հայազգունս. նոյնպէս և որ ա
նուննս քրիստոնեայ է. պարտ է քեզ հնազանդ
լինել և զլուսաւորչի խրատն լսել. և զնորին
համբերութին 'իմաստ առնել. և չար կամին քո
բարի առնել. և անոխակալ լինել: Զի է մեք
և ընտրեալք և ամ առաքեալք բարի առնէ
ին ատելեաց իւրեանց: Բայց փիլիպպոս ա
ռաքեալն ոչ համբերեաց չարչարողաց իւ
րոց որ զինքն գլխիվայր խաչեալ էին. և անի
ծեաց զնս. որ 'ի գետինն անցան. նա ած բար
կացաւ առաքելոյն փիլիպպոսի ասելով. Թէ
ես իմ խաչին զինչ խօսեցայ. վն որոյ խ.օր 'ի
դրունս դժոխոց հրակիզեալ այրեցաւ. և ա
պա ազատեցաւ. զի զայն օրինակ ետ մեզ
քս. զի երկիցուք և ոչ չարին չար հատուցա
նել. վն այն ասէ թէ, մի՛ կալ հակառակ չա
րին. զի թէ դու չարին չար հատուցանես,
նա զհոգիդ և զմարմինդ կորուսանես. վասն
այն ասէ տէրն մեր. Թէ երբ կոյր կուրի
առաջնորդէ, երկոքին անկանին 'ի խորխո
րատ. և դու թէ ոխ պահես, և չար առնես
նմա, հոգւով կուրանաս. նոյնպէս և նա թէ
չար գործէ քեզ, հոգւով կուրանայ և. Երդ
այլ անկանիք 'ի խորս դժոխոց և տանջիք: Թէ

որք չար կամիք քեզ, եւ դու բարի կամենաս նո
մա, ա̃ծ ՚ի քո կողմն լինի եւ քո բանից յաջողու-
թիւն լինի հանապազ. թէ պատուհաս զնա,
նա ՚ի քէն ամաչէ. ապա ընկանի քեզ բարե
կամ լինիլ. յայնժամ դու որդի ա̃յ լինիս:
Իսկ թէ դու բարի կամենաս նմա. եւ նա
չար կամենայ քեզ. նա ա̃ծ զքո չարն ՚ի նորա
վերայն թափէ. ո̃պ ասէ դաւիթ, դարձցին
ցաւք ՚ի գլուխ նորա: Դարձեալ ասէ գուբն
զոր փորեաց եւ պեղեաց, ՚ի նոյն անկցի ՚ի խոր
խորատ զոր եւ գործեաց: Դարձեալ ասէ
տէրն մեր. յորժամ բարի առնես ատելեաց
քոց, նա կուտեսցես զկայծակունս իվ̃ գլլ
խոյ նր̃. վա̃ այնպիսեացն ասէ քս̃. թէ չարն
չարեաւ կորիցէ, նա զայգին տայ այլոց. այ
գին վա̃ արքայութե̃ ասէ. որ խլէ ՚ի նմանէ
զարքայութի̃ն, զմկրտութի̃ն, զհաղորդութի̃ն.
եւ ապա մերկացեալ թափօր առաքի ՚ի հուրն
դժոխոց. զի ո̃պ մեղապարտն աստ մերկացու-
ցանէ. եւ ապա ըսպանանէ. նոյնպէս ՚ի դա
տաստանին առնեն զմկրտութի̃ն եւ զհաղոր
դութի̃ն, եւ ապա առաքեն ՚ի դժոխս: զի մեր
մեծ աղօթքն հայր մերն է զի գլուխ է ամե
նայն աղօթից. երբ ասեմք հայր մեր որ յեր
կինս ես. որով հայր կոչեմք զա̃ծ, եւ լինիմք
որդի նորա. ապա պարտէ մեզ առնել
զկամս նր̃. զխոնարհութիւնս. զհամբերու
թիւնս. զսէր եւ զա̃մ բարեգործութիւնս.

եւ ապա կարեմք ասել Հայր մեր որ յերկինսդ
ես եւ թէ զգործս սատանայի ունիմք, որդի
սատանայի լինիմք. Ի՞նչպէս կարեմք ասել
Հայր մեր որ յերկինս: Պարտել ասեմք Հայր
մեր որ յերկինսդ ես մի եղեցի. եւ կամք քո՛
որպէս յերկինս եւ յերկրի. որպէս հրեշտակք յեր
կինս զքո կամքդ կատարեն ասեմք: Արդ թէ
զգործս սատանայի գործեմք, խաբեմք զանձն.
Եւ ո՞րպ կարեմք մեզ Հայր ասել. կամ որդի նմա լի
նիլ. զի զսատանայի կամքն կատարեմք. եւ Հայր
մեր սատանայ լինի. այլ որպէս Հայր մեր ա-
սեմք: Արդ ասեմք զՀաց մեր հանապազորդն
տուր հաց մեր հանապազորդին ասէ, որ աստուա-
ծոյ հացն է: Արդ թէ զգործսն սատանայի
կատարեմք, ո՞րպ կարեմք խնդրել զհացն նմա.
եւ կամ ճաշակել ՚ի սեղանոյ նորա: Պարծեալ ա-
սեմք թո՛ղ զպարտիս մեր, ո՞րպ եւ մեք թողումք
մերոց պարտապանաց. զի մեք մեր բերանովն
ասեմք, թէ դու զմեր պարտքն թող ինչպէս
մեք մեր պարտապանին զպարտքն թողումք.
ո՛չ թէ արծաթի պարտքին ասէ այլ վասն մե-
ղաց պարտքին ասէ. ինչ մարդ որ քեզ զուր
ասէ. կամ մատնէ, կամ ծեծէ, նախատէ, հայ
հոյէ, եւ բազում վիշտս հասուցանէ. եւ դու
նմա բան մի չասես համբերես, եւ չար ո՛չ առ-
նես նմա, նա քեզ պարտաճորեցաւ. եւ երբ
գայ մեղայ տայ քեզ, թո՛ղ նմա, որ լինիս ճըշ-
մարիտ որդի նորա. եւ կոխես զգլուխն սատանայի.

եւ ապա կարես ասել հայր մեր եւ ճաշակել ըզ
հացն, եւ ասել թողուլ զպարտս մեր. յորժամ
քո մէկ աղօթքն մեծ լինի յայդ մօտն, քանց այ
լոց ·Ճ· կանոն սաղմոսն, յայնժամ ինչ խընդ
րես յայդ առնես։ Իսկ թէ չարին ընկեր լի
նիս, ինչպէս նա չար առնէ. նոյնպէս եւ դու
առնես. երկուքդ եւս լինիք ընդ սատանայի.
եւ յայնժամ ձեր հայր մեղային ճշնաս է. քանզի
քո բերանովդ չար կու խնդրես. վն̃ այն ասէ
տ̃էրն. ՚ի բերանոյ քումմէ դատեցից զքեզ ծա
ռայ չար։ Նոքա արդ զայս յօրինակ առէք յա
ռաջնորդաց մերոց զյովհաննէս Մկրտիչն.
զստեփաննոս նախավկայն. զառաքեալքն.
զմարգարէքն. զմարտիրոսքն. զճգնաւորքն.
որք ամ̃ենքն չար առնողին իւրեանց, բարի առ
նէին. եւ համբերէին ամ̃ նեղութեանց։ վն̃ որոյ
արդարացան եւ ընտիր գտան. ըստ նմին օ
րինակի թէ կամիք դ̃ոյ որդի լինել, հեռացէք
յոխակալութ̃է. զի յոխակալութ̃է բազում
չարութիւն յառաջ գայ. մատնութ̃ի, ըսպա
նութ̃ի, եւ այլ բազում չարիք ՚ի նախանձէ ծնա
նին։ Վասն այն ասէ տէրն. մի կալ հակա
ռակ չարին. եւ դաւիթ ասէ՝ մի նախանձիր
ընդ չարս։ Պօղոս ասէ, լաւ եմ ՚ի բարկու
թենէ եւ հանգիր ՚ի յարտմութ̃է. Ս.ղլ եւ խո
տորեա ՚ի չարէն. եւ արա զբարի։
Վասն որոյ պարտիք հետեւիլ եւ հեռանալ եւ
լինել անոխակալ. զի արժանի լինիցիք ար

քայութեն նորա, և ու բաժանաջինք ՚ի փառս այս
Հրեշտականս :

* Նորին Գրիգորի Եռամեծի Խորագէտ հռետորին Հայոց վարդապետի որ ասացեալ է Յաղագս շնորհաշնորհութեանն մեղաց առհասարակ

Գլուխ : Խ.Օ. :

Հարց .

Որպէս զանազանին ՚ի միմեանց մեղք, անօրէնութիւնք, և յանցանք :

Պատասխանի Երկելն երոք: Նախ զի մեղքն յարմարին մարմնոյն. որ մեղկանայ և թուլանայ. Իսկ անօրէնութիւնք հոգւոյն են՝ զի օրէնքն հոգւոյն են: Իսկ յանցանքն են՝ միտաց տեսութեն: Երկրորդ յանցանք է կոխել զօրէնս և յանցանել: իսկ մեղք է յօրինաց կատարուածն ոչ հասանիլ. և երկոքեան սոքա անօրէնութիւնք են. Երրորդ, որ ինչ նախ քան զօրէնսն գործէին՝ մեղք կոչէին. որպէս ՚ի դարս նոյի և յայլսն : Իսկ յետ օրինացն՝ անօրէնութիւնք: որպէս վասն այնոցիկ որք էին յանապատի անդ՝ ասէ, անօրինեցաւ ժողովուրդն: Չորրորդ, մեղք են կամաւորքն. և յանցանք ակամայքն: Նաև որպէս բերէին պատարագ վն մեղացն ՚ի ջնուամն՝ բերէին և վասն յանցանացն.

Վասն յանցանաց մտացն Հարց.

Ոմանք զյանցանս մտաց կատարեալ մեղս դնեն. բերելով վկայութիւն ՚ի քսէ թէ՝ շնացաւ ՚ի սրտի իւրում: Եւ ոմանք ոչ ինչ համա

րէին զայնցանս մտաց. և ո՛չ դնէին ՚ի կարգս մեղաց. տալով օրինակ թէ ո՞վ ՚ի դատարկ անզանոյ ո՛չ ինչ կերակրին. այլ իբրև ՚ի պտղոյ ծառոց տեսութե՛ միայն վայելեն։ Արդ՝ ՚ի սոցանէ ո՞ր իցէ ճշմարիտ։ և կամ հակառակք իցեն միմեանց, թէ ո՛չ։ Պտս։ Ասեմք թէ ո՛չ են հակառակք միմեանց. այլ երկոքեանն ճշմարիտք են. զոր ցուցանելոց եմք յետոյ։ Բայց արդ՝ նախ զայս ասասցուք, թէ մեղք մտացն կատարեալ մեղք են վասն բազում պատճառի։ Նախ ՚ի ներքունական անսուտ հրամանացն. թէ որ հայի ՚ի կին մարդ ցանկութեամբ, անդէն շնացաւ ՚ի սրտի իւրում։ Եւ այս յերևի իսկ. զի որ հայեցաւ ցանկական մտօք ՚ի կամս իւր՝ գործեաց զմեղս։ Եւ այն զի խափանեցաւ գործ մարդոյն ՚ի ժամանակէն, կամ ՚ի տեղւոյն կամ ՚ի դիմաց պատճառեցաւ. ապա ուրեմն կատարեալ է մեղք մտացն։ Երկրորդ յայտ է ՚ի բաժանմանէ. զի յերիս բաժանի տեսակ մեղաց. այսինքն ՚ի մտաւորն, ՚ի բանաւորն և ՚ի մարմնաւորն. վասն զի յերից գոյացեալ է մարդն. ՚ի մտաց, ՚ի հոգւոյ, և ՚ի մարմնոյ։ Արդ մեղք մտաց թէպէտ ըստ բանականին և մարմնականին չէ՛ կատարեալ, այլ ՚ի տեսակս իւր՝ է կատարեալ. զոր օրինակ կանանչ բոյս ՚ի ցօղոյն ՚ի հասակ չէ կատարեալ, այլ ՚ի տեսակս իւր կատարեալ է։ Վասն որոյ և տէրն

յորժամ տեսաց զցանկութիւն շնութ̃, յաճել
իւր̃ թէ 'ի սրտի իւրում. զի մի կարծիցի մար
մնական շնութի. այլ խոհեկան և մտաւորա.
պա ուրեմն կատարեալ են մեղք մտացն: Երկ
րորդ հպարտութիւն և նախանձն և սոցին նը
մանք՝ մեղք են. և սոքա մտօք և ոչ մարմնով
կատարին. որպէս յայտ է 'ի բանսարկուն սատա
նայ որ յանցեաւ հպարտութ̃ և նախանձով.
արդ՝ որք զնոյն ախտանան մտօք՝ զնոյն մե
ղանչեն և զ̃ նմին պատժին. որպէս ասէ առակն.
նախանձու բանսարկուին եմուտ մահ յաշ
խարհ. որոյ որ կցեալ ընթանան, 'ի նորին սա
կի են: ապա ուրեմն կատարեալ են մեղք մը
տացն: Չորրորդ, 'ի զղջմանէ. զի մտօր մեղք
է զղջալի է և խոստովանելի. ըստ այնմ, ըզ
մեղս ատեցի և անարգեցի: Իսկ արդ՝ եթէ
յանցանք մտացն խոստովանելի են, ուրեմն
մեղք են: Այլ արդ՝ զղջանալ և խոստովա
նիլ պարտ է զհպարտութի և զնախանձ, զատե
լութի և զայլն, և ապա գտանել թողութի.
ըստ այնմ, ասաց դաւ. նախ զանօրէնութիս քո՝
զի արդարասցիս: ապա ուրեմն կատարեալ
մեղք է: Հինգերորդ. զի մեղքն զանազանի
'ի կամայն և յակամայն. 'ի գիտութի և յանգի
տութի. ըստ որում զանազանին և պատիժք
մեղացն. ըստ տն̃ բանի որ ասէ, արբցէ գան
բազում, և գան սակաւ: և զանազանութի նց̃
է 'ի մեղս մեղուցելոյն: ապա ուրեմն կատա

րեալ մեղք են մտացն. զի զմանս առաւել պատժեն և զոմանս սակաւ: Վեցերորդ, զի սկիզբն և արմատ ամ մեղաց՝ զմիտսն ասաց քն. ըստ այնմ, ՚ի սրտէն յառաջ գայ չարակնութի, ցանկութի, և այլն: Եւ եթէ՝ յառաջ հածոյ՝ արտաքսոյ բերանն: Որդ՝ եթէ ծընունդն մեղքէ, ուրեմն և ծնօղն այսպիսի ծննդոցս առաւել է մեղք: Եթէ յառաջ հածքն չար են՝ չար են և միթերքն: Վն որոյ ծառ չար՝ պտուղ չար առնէ: Յօթներորդ յայտնէ ՚ի յանդիմանութեց տն. ըստ որում ասէր երբեմն ցաշակերտսն իւր. զի՞ խորհիք ՚ի սիրտս ձեր թերահաւատք: Եւ եթէ՝ զի՞ փորձէք զիս կեղծաւորք: Տե՛ս զի ո՛չ բանիւ և ո՛չ գործով էր, այլ միայն ՚ի միտս ունէին. բայց յանդիմանեցան ՚ի տնէ: Զայս և առ պետրոս ասէր տրն. թերահաւատ ընդէ՞ր երկմտեցար. եւ եթէ ո՛չ խորհիս դու զայն, այլ զմարդկան: ապա ուրեմն կատարեալ մեղք են ՚ի խորհրդոց մտացն: Ութներորդ, յընդդիմակէն. զի թէ աղօթելն մտօք միայն՝ և ամք պահել զմիտս՝ առաքինութե կատարել ըստ առաքելոյն, թէ սաղմոս ասացից մտօք, և այլն. և տրն. եթէ մբք սրտիւ՝ զած տեսցեն. ապա ուրեմն և հայհոյելն մտօք՝ և մախալն՝ և ննջելն՝ կատարեալ չարութիւնք են և մեղք: Զոր մարդարէն ընդ մարդասպանս կարգէ ասելով. զայր արիւնահեղ և զնենգա

ճոր՝ պիղծ առնես դու զ՟որ: Իններորդ զի
թէ հաճատն կայոյն կանէրն՝ մ՟ծայլին առա
քինութիւք են, և լաւագոյն են քան զ՟մ ա-
ռաքինութիւնս. ըստ որում ասէ պօղոս՝ առքա ե-
րեքեան, և մեծ քան զսոսա՝ սէր է. և ո՟ք են
՚ի միտս. ըստ այնմ, սիրեսցես զ՟տր ա՟ծ քո յա՟մ
սրտէ քումմէ և ՚ի մտաց քոց. և սրտիւ հաճա
տալ՝ արդարութի է ասէ առաքեալն. ապա
ուրեմն անհաւատութի և յուսահատութի և
ատելութի մեծագոյն չարիք են ՚ի միտս քան
զ՟մ չարիս: ո՟պ ուսուցանեն գիրք ս՟բք: իսկ
ապա կատարեալ մեղք են: Տասներորդ յայտ
է ՚ի համաձօրութե. զի երբեմն ախտն շարժէ
զմիտս, և երբեմն միտքն շարժէ զախտն. ո՟պ
ասէ երանելին Եւագրիոս. մինչ յերկինս
մեայ հասակս՝ ախտն շարժէ զմիտս ՚ի ցան
կութի. և անտի յառաջ միտքն շարժէ զախտն:
արդ՝ եթէ շարժումն ախտից մեղք է ըստ
որումն է. ուրեմն և շարժումն մտաց մեղք է
ո՟պ ցուցաք: Նաև զ՟մ գլխաւոր մեղս՝ ութ
հզօր խորհուրդ ասէ ս՟բն Եւագրիոս. վ՟ն զի
նախ ՚ի խորհուրդն անկի ա՟մ սերմն մեղաց.
և ապա բուսանի ՚ի մարմինն և անձի: Դար
ձեալ ասեն վարդապետք եթէ խորհրդոցն
մեղք՝ որ ընտրէ կամաւ և հեշտանայ՝ առա
ւել չար է քան զգործոցն ըստ պատահմանն:
Նոյն յայտ է ՚ի չորից: Նախ՝ զի չարութի խոր
հրդոցն՝ ՚ի բոլոր հոգին և մարմինն սփռի.

ոգ̅ թոյն օձի. իսկ գործ մարմնոյն՝ յայն մասն միայն սփռի՝ որում պատահեցաւ։ Երկրորդ՝ ոգ̅ կառ և կառավար. եթէ մարմինն թիւրի՝ միտքն ուղղէ զնա. իսկ թէ կառավարն թիւրի՝ կառն ոչ կարէ ուղղել զնա. այլ երկոքինն գահավիժին։ Երրորդ, արբեալն ՚ի խորհրդոյ՝ արհամարհէ զօրէնս զամօթ և զերատ մարդկան. իսկ գործ մեղացն՝ բերէ յինքն զտրտմութի̅՝ զբարբջանս՝ զապաշաւ և զերկիւղ։ Չորրորդ, խորհուրդ մեղացն ճշմարիտ և բարի ցուցանէ զգործն. նաև սիրելի և հեշտ. վասն որոյ յօժարի և եռայ ՚ի կատարել։ Իսկ գործն՝ ընդդէմ նորին՝ սուտ երևեցուցանէ զխորհուրդն, և չար ցուցանէ զգործն և զազրալի. վ̅որոյ տրտմի յետոյ և նեղի. աստ զպատճառ մեղացն և դառնոյ յինքն. որպէս ամենի եղև։ Ապա ուրեմն յայտ է թէ, առնել չար է խորհուրդն արբեալ. որ ոչ շարժէ զզղջումն։ վ̅որոյ ասէ առաքեալն՝ լաւ է ամուսնանալ քան զջեռնուլ։ Դարձեալ ևս յայտնի. որ խորհրդոմն է պղծեալ՝ ոչ կարէ ճանաչել զինքն մեղանչական գոլ. այլ ՚ի գործ մարմնոյն իմանայ զչարիս իւր. վ̅ որոյ զղջայ և ապաշխարէ։ Ապա ուրեմն յայտ է թէ ոգ̅ գործ մարմնոյն առ այլս է չար. այսպէս և խորհուրդ մեղացն՝ առնել ինքեամբն է չար։ Վ̅որոյ պարտ է զգուշանալ սրբութ̅ սրտին

քան մարմնոյն ։ Զի է հոգի է Աստ. և յիմացա-
կան միտս և ՚ի հոգիս բնակի. և չէ օգուտ մար-
մնոյն սրբութի, յորժամ միտքն զբաղեալ է
՚ի չարիս. հեռանայ ՚ի նորայն ած և ՚ի բնակու-
թէ նր. զի հոգին Սբ ած փախչի ՚ի նենգութենէ ։
Այժմ պատասխանեսցուք հարցմանցն ։
Յանցումն մտաց՝ կրկին է ։ Առաջինն է սա
կամ ինչ յանցումն միայն ըստ անասնութեն,
և ըստ բնական մտածութե մերոյ առ այն իրս
զորս անթըռ̃ելի գոլ աղերսէ մարգարէն ա-
սելով. զյանցուածս իւր ո՞վ կարէ առնուլ
՚ի միտ ։ Զի որպէս սողումն անձողոպրելի է քարոզէ
յամենայն մարդկային մտաց. ասելով, ո՞ պարծիցի
միտս Սբ ունիլ ։ Իսկ երկրորդ յանցումն է .
որք մտօք հեշտացեալ մեղկանան ըստ անասնու-
թէն՝ և հաճանին խոկացեալք ՚ի նոյն ։ և այս-
պէս լինի կատարեալ մեղք. խառնեալ օտա-
րին գաղտապէս՝ ընդ մտածութեն բանա-
ւորապէս ։ Վն որոյ աղօթէ մարգարէն. ՚ի
գաղտնեաց իմոց Տր արա՛ զիս Տր, և յօտարէն
պահեա՛ զծառայս քո ։ Այս ուրեմն յայտնի
է լուծումն տարակուսանացդ ըստ կարգի ։
և ո՛չ ոք ՚ի նոցանէ հակառակ գոն միմեանց

որպ ասասցաւ ։ Հարց ։

Վասն է՞ր Տէրն Եւագրիոս ութն խորհուրդ-
ասէ մեղաց, և այլ վարդապետք եօթն ա-
սեն զմահու չափ մեղսն ։ Պատ ։ Նախ ասեմք
եթէ համաձայնք են միմեանց. զի և Տէրն և

ագրիոս եօթն ասէ. զի տրտմութի և ձանձ-
րութի մի երևին. զի տրտմութի ՚ի պակասու-
թէ բարւոյն լինի. իսկ ձանձրութի՛ յաճել
համոյ բարւոյն: վն որոյ այլ վարդապետք
ախտ ծուլութե կոչեն զնա. զի ծուլութին
յերկուց իրաց երևի. մի, զի յետս դառնայ
՚ի հոգևոր բարւոյն և ծանրանայ ՚ի գործելն.
այսինքն պահել և աղօթել և այլն. և ըստ այսմ
կոչի տրտմութի: Եւ. միւս, զի դառնայ ՚ի
հեշտալին որ է հանգիստ մարմնոյ. ըստ որում
կոչի ծուլութի: Եւ դարձեալ, զոր նոքա
նախանձ ասեն՝ սա ամբարհաւաճութի ասէ.
որ է փառասիրութի զի փառասէրն զիւր
փառս և զիւր բարիս միայն սիրէ. իսկ զայլոցն
յաչաղէ և ատէ: Այս յայտ է թէ համաձայն
նին միմեանց: Իսկ խորհուրդ ասէ վասն դե-
հաց. զի անմարմին է դևն: Դարձեալ, զի
ամմեղք նախ ՚ի խորհուրդն սերմանին, և ա-
պա բուսանին և աճին գործելով: Դարձեալ
ասեմք թէ այլ վարդապետք վն այն եօթն
ասեն զմեղսն, զի .դ. տարերք են մարմնոյն,
և երեք զօրութիք ոգւոյն. այսինքն բան՝ ցա-
սումն և ցանկութի: Հպարտութին է բանին. նա-
խանձն ցանկութեն. և բարկութին ցասմանն:
Իսկ և ծուլութին է հողոյն. ագահութին
հրոյն. որկրամոլութին օդոյն. և բղջախոհու-
թին ջրոյն: վն որոյ ասին եօթն մեղք գլխա-
ւորք: Դարձեալ ասեմք զեօթն ներքինան

ըստ երից մասանց հոգւոյն սոյնպէս գոլ. հպարտութիւն ևնախանձն առ ներքինս և առ վերինս: ևցասմանն է բարկութի ևծուլութի. առաւելն ևնուաղն. ևցանկութեեն այլքն. զի ցանկայ ադահել և որկորըստել և պոռնկել: Այլ ոմանք ասեն թէ յեօթանց անտի հինգն մարմնականք են, ևերկուքն հոգեկանք. զի սատանայ հպարտացաւ յերկինս ևնախանձեցաւ ընդ մարդոյն: Իսկ այլքն ամենեքեան մարմնականք: Այլ ոմանք զերկուսն միայն ասեն մարմնական. այս է որկորըստութի ևբղջախոհութի. ևզայլսն ամ հոգեկան ասեն: Այլ ես ասեմ թէ յեօթանց անտի երկուքն պարզ հոգեկանք են. այսինքն հպարտութի ևնախանձ. ևէ հպարտութիւնն իմացմանն, ևնախանձն կամաց: Իսկ երկուքն են պարզ մարմնականք. այսինքն որկորըստութիւն ևբղջախոհութիւն: Այլ երեքն խառն՝ ի հոգւոյն և՝ ի մարմնոյն. որք են բարկութիւն ծուլութի ևագահութի: Այլ յերից յայսցանէ հաւասար հոգւոյն և մարմնոյն՝ է բարկութիւն. ևառաւել մարմնոյն՝ ծուլութիւն. իսկ առաւել հոգւոյն՝ ագահութիւն: Այս ըստ նոցա որք եօթն ասեն զմահու չափ մեղսն: Իսկ մեք Եւագրիոս ութն խորհուրդս հզօրս ասէ: Առաջինն որկորըստութի. երկրորդ պոռնկութի. երրորդ արծաթսիրութի. չորրորդ տրտմութի.

հինգերորդ քաղցրութի. վեցերորդ ծանծ
րութի. եօթներորդ ամբարհաւանութի.
ութներորդ հպարտութիւն։

Եւ վասն հինգ պատճառի։ Նախ ըստ չորից
տարերց այլ և այլ որակութեց լինելն ութն
խորհուրդ մեղաց։ Ի յանիկքն՝ յօդոյ՝ որկորա
մոլութի և հպարտութի. զի վերընթացէ և քար
շօղ։ ՚Ի ջրոյ պոռնկութի և փառասիրութի. որ
դէմ է և թոյլ. զի փառասէրն ՚ի բանս այլոց
մեղկի և թուլանայ։ ՚Ի հրոյ ագահութիւն և
բարկութի. զի պարունակօղ է և ջերմ։ ՚Ի հո
ղոյ տրտմութի և ծանծրութի. զի ցուրտ է
և հակօղ։ Երկրորդ դարձեալ զի չորք են տա
րերք. և չորս ազգմունս միաւորեց հոգւոյն
յիւրաքանչիւր տարերս ըստ այսմ օրինակի։
Որկորամոլութին օդոյ. պոռնկութին ջրոյ.
ագահութին հրոյ. տրտմութին հողոյ։ ապ
ասացաք։ Եւ ըստ միաւորութե հոգւոյն ՚ի
տարերս, յօդւոյ և ՚ի հրոյ բարկութի. յօդ
ւոյ և ՚ի յօդոյ ամբարտաւանութի. յօդւոյ
և ՚ի ջրոյ փառասիրութի. յօդւոյ և ՚ի հողոյ
ծանծրութի։ Եւ լինի ըստ այսմ ութն։

Երրորդ՝ զի հինգ են զգայութիւնք. և մի
բոլոր մարմինն. ուստի ծնանին վեց խոր
հուրդք այսպէս։ Որկորամոլութին է ճաշա
կելեաց և պոռնկութին շօշափելեաց. արծաթ
սիրութին տեսանելեաց և բարկութին լսելեց.
և ծանծրութին բոլոր մարմնոյն. փառասիրու

թիւն և հպարտութի են հոգւոյն և մտացն որք լինին ութն։ Չորրորդ՝ վեց են շարժութիք մարմնոյն. այսինքն, ՚ի վեր, ՚ի վայր, յաջ յահեակ, յառաջ, և ՚ի յետս. յորոց յառաջէն ամ̃ խորհուրդք մեղացն այսպիսի եղանակաւ։ ՚Ի վեր շարժմանէն ծնանի հպարտութիւն և փառասիրութիւն. զի յատուկ է սոցա ՚ի վեր ամբարձումն։ բայց զանազանին ՚ի միմեանց. զի հպարտն զբարձրամտութիւն ՚ի ներքուստ ունի. և փառասէրն յարտաքուստ յայլմէ բերանոյ ընդունի զփառս գովութե̃։ ՚Ի վայր շարժմանէ, տրտմութի և ձանձրութի. որ է ծուլութիւն. զի միշտ ծանրանայ և ո՛չ գործէ զբարիս. և միւսն տրտմի և պակասի։ Յաջ շարժմանէն արծաթսիրութի. զի ժողովէ ինչս՝ պատճառելով զբարիս։ Յառաջ շարժումն բարկութի. զի ասէ վս̃ չարեաց բարկանամ։ Իսկ յետս և յահեակ շարժումն է որկորստութի և պոռնկութի. զի է յետս դարձումն ՚ի ճշմարիտ բարւոյն, և ընթացումն զհետ ահեակ և սուտ բարւոյ։ Այսպէս յառաջ գան ՚ի վեցից շարժմանց ութն խորհուրդք։

Հինգերորդ, ոպ̃ ասեն այլ վարդապետք թէ լինելութի մեղաց է անկարգութի կամաց։ Իսկ անկարգութի կամացն կրկին է. զի կամ ցանկանայ ո՛չ ցանկալեաց. կամ հրաժարի յոչ հրաժարելեաց։ Ըստ առաջին կարգին

Թէ ցանկայ ներքսապէս՝ է՛ հպարտութիւն և
փառասիրութիւն: և թէ ցանկայ արտաքսա
պէս՝ է արծաթսիրութիւն և ագահութիւն:
Իսկ թէ կցէ ցանկութին առ ստորև հեշ
տալիս լինել կրկին: զի թէ հեշտալին այն է
'ի պահպանութիւն անհատին՝ լինի որկորրստու
թիւն. զի յօժարի անկարգապէս 'ի կերակուրն:
և թէ է՛ 'ի պահպանութիւն տեսակին՝ լինի
բղջախոհութիւն. զի յօժարի անկարգապէս 'ի
պոռնկութիւն: Այս ըստ առաջին մասին՝ որ
ցանկայ ոչ ցանկալեաց: Իսկ երկրորդ ան
կարգութիւն կամաց է՛ որ հրաժարի յոչ հրա
ժարելեաց: Եւ այս լինի երրակի ըստ երից
մասանց հոգւոյն: զի կամ հրաժարի ևթիւրի
բանականականն. որ է՛ նախանձ: կամ թիւրի
ցասմականն. որ է բարկութիւն: և կամ թիւրի
ցանկականականն. որ է՛ ծուլութիւն. այսինքն
ձանձրութիւն և տրտմութիւն: Ուստի յայտ
է թէ վասն էր են ութն խորհուրդք:

## ✠ Հարցումն

Վասն է՞ր այլ վարդապետք առաջին մեղք
զհպարտութիւն ասեն, իսկ մեք Ագահութիւն՝
զորկորրստութիւն: Պատ: Առաջին մեղք է հը
պարտութիւն, որով սատանայ մեղանչեաց յեր
կինս և անկաւ յերկիր: Եւ ապա է՛ նախանձն.
զոր ընդ մարդոյն արարին: Նաև ասեն թէ
վասն փառաց աստուածանալոյ մեղանչեաց ադամ. և
վասն նախանձու առն՝ կինն նախ եկեր զպը

տուղն։ վս այն առաջին է ամբարտաւանու թին որ է հպարտութին. և ապա ը նմա նա խանձն. և այլն ըստ կարգին։ Իսկ սուրբն Յհ ագրիոս՝ առաջին զորկորըստութիւնն դնէ վս երկց։ Նախ՝ զի մարդն առաջին ՚ի դրախ տին որկորըստութբ մեռաւ. և այն եղև ա

ռաջին մեղք մարդկայինս բնութե։

Երկրորդ՝ զի ՚ի մանկունեան հասակաւ՝ նախ որկորըստութին տիրէ. և ապա յերիտասար դութե՝ պոռնկութիւնն զօրանայ. և ՚ի կա տարեալ հասակին՝ ագահութիւնն. և յետ այ նորիկ՝ տրտմութիւն, ծուլութիւն և այլն։ Երրորդ, զի շղթայք մեղաց պայմանս ունին զկարգն։ Նախ որկորըստութբ մարդ զօրո վայնն լնու. և ապա պոռնկութբ թափէ զնա. և յետ այնորիկ ժողովէ արծաթս, զի լնու ցու զորովայնն և պոռնկեցի։ ապա ՚ի պակա սիլ ոսկոյ՝ տրտմի. և թէ ոչ հակառակի բարկա նայ ընդդէմ նցա. և ապա ծանծրանայ յամե նայնէ։ Իսկ փառամոլութիւն և հպարտու թիւն ոչ են յայսց կարգաց. այլ յորժամ զվերջիս զայսոսիկ յաղթէ՝ ապա փառա սիրի և հպարտանայ։ Որպէս յաջակողմն խո տորին. իսկ առաջինքն ձախակողմեանք են։ Այս է հպարտութիւնն առաւել մեղք քան զամենայն վասն բազում պատճառի։ Նախ՝ զի այլ մեղք կամ ընդդէմ մարմնոյ իւրոյ է, կամ ընկերին։ իսկ հպարտութին

է մեղանչումն ընդդէմ այ, որ սատանայինն։ Երկրորդ, զի այլ ամ մեղք մարմնականն է, և գիտեմք զմեղս լինելն․ իսկ հպարտու- թիւնն անմարմին է և անօսր․ և ոչ կարեմք գիտել զմեղանչումն։ Երրորդ, զի զայլ մեղս մեղսաւորքն գործեն․ իսկ զհպարտութիւն արդարքն և ընտիրքն․ որ երբեմն հրեշտակք յեր- կինս։ Չորրորդ, զի այլ մեղօք կամք մեր անկար- դանայ․ այլ հպարտութբ իմացմամբս յիմա- րեմք, և ապշիմք․ և ապա կարգօք անկարգա- նամք։ Հինգերորդ, զի յամ մեղս գտանի հպարտութիւն․ զի որ առանց սիրոյ այլ առաքինութիւնք ոչ ինչ են, նոյնպէս ա- ռանց հպարտութե ամ մոլութիւնք ոչ ինչ են․ զի յամ մեղս երևի հպարտութի այսպէս․ զի ամ մեղք խոտորումն է պատուիրանացն այ․ և խոտորումն զհետ հեշտութե մարմնոյ․ այն է հպարտութի որ խոտեմք և անարգեմք զճշ- մարիտ բարին․ և ապա խոտորիմք և հետևիմք զհետ փոփոխական բարւոյն․ և այսպէս երե- ւի հպարտութի յամ մեղս։ Վեցերորդ, զի զամ բարիսն որք ՚ի մեզ են՝ արտաքս հանէ հպ- պարտութի․ զի զոր օրինակ եկեալ խաւարն հանէ զլոյսն․ այսպէս և ՚ի հանդիպել հպար- տութեն՝ ելանեն ամ բարութիւնք մեր։ Եօթն- երորդ՝ զի հպարտքն ոչ ունին հանգիստ մ- տաց և մարմնոյ․ քան զի որքան մարդն խո- նարհ է այնքան հանգիստ է ։

Ութն երորդ՝ զի Այ. ու. եստանց ախտիցն էր ինչ երևեցուցանեն մեզ. որպէս գոյութիւն՝ զինչս. և պատուհասութին զհեշտութին. իսկ հպարտութեն ոչ գոյ ամենևին անկանելութի: Իններորդ, զի Այ ոք որ առ պատուհնիկն երթայ՝ գիտէ ճշմարտութբ թէ վրիպեցաւ ՚ի ճշմարտութենէն. իսկ ամբարտաւանն ոչ իմանայ զմեղսն զոր գործէ հպարտութբ. այլ գիտէ և եթէ առաքինութի է: Տասն երորդ, զի Այ մեղաւորաց ներէ Այ ժամանակս ինչ՝ զի զղջասցին. իսկ հպարտին ոչ. զի մարգարէն ասէ Տէր ամբարտաւանից հակառակ կայ: և թէ՝ տեսի զամբարիշտն վերացեալ և բարձրացեալ. անցի և ահա ոչ էր, խնդրեցի և ոչ գտաւ տեղի նորա:

✠ Վասն սատանայի մեղաց հարցումն:

Վասն էր սատանայի մեղքն մեծ է և անթողելի քան զմարդոյն: Պատ: Այսպէս մեղանչէ սատանայ և մարդ. զի զլոյսն Այ անձնիշխան կամօք և իմացմամբ մերժէ, և սիրէ զխաւար. որպէս ոք զգալի ակն խփէ և զրկէ ՚ի լուսոյն և սանէ զխաւարն. նոյնպէս և նոքա: բայց կրկին է զրկումն լուսոյ՝ մինն որ ՚ի ճառագայթէ լուսոյն զակն խփէ և խաւարի. և միւսն է՝ որ ընդ դէմ բոլորակի արեգականն հայիցի՝ կորուսանէ զլոյսն և խաւարի: Արդ՝ մեղանչելն մարդոյ այնպէս է՝ որ զակն խփեաց ՚ի լուսոյն և խաւարեցաւ: սակայն լոյսն ծա

դէ դեռևս իմ՛ն աչացն. և սակաւ ինչ փայ լէ 'ի ներքս. և յորժամ բանայ՝ տեսանէ ըզ լոյսն վաղ վաղակի։ և այսպէս մարդ զոկի մե ղօք 'ի շնորհաց լուսոյն։ Նոյն լոյս խնամոցն ա̃յ չէ հեռացեալ՝ և փայլէ սակաւ ինչ 'ի ներքս 'ի տրտնջականն. և յորժամ դառնայ 'ի մեղաց, վաղ վաղակի շնորհաց լուսոյն արժա նի լիցի։ իսկ մեղանչելն սատանայի այնպէս է, որ ընդդէմ արեգականն հայի՝ զլոյսն կո րուսանէ և խաւարի. նոյնպէս և սատանայ ընդդէմ ա̃յ հպարտացաւ. որ ասաց եդից զաթոռ իմ յամպս և յաստեղս. ամպ մարգա րէքն են կամ հրեշտակք. և աստեղք վերբին. յայնժամ լոյս իմացականերին կորեաւ և շիջաւ 'ի սատանայ։ և լոյս շնորհացն ոչ ներգործեց 'ի նմա. և 'ի նոյն տերութեալ հաստատեցաւ ան զղջապէս։ վ̃ս որոյ մեծ է մեղք սատանայի և թողութե̃ ոչ հասանելի։ Նոյնպէս մեծ են մեղք հպարտութե̃ քան զա̃մ մեղս մարմնականս։

✠ Վասն Մերդկան Մեղաց Հարցումն։

Վ̃ս էր է՝ զի մարդոյս գործ և անասնոց հա սարակք են. և մարդոյ միայն է մեղք։ Պա։ Վ̃ս բանին և անձնիշխան կամացն. զի անձն իշխան կամք անասնոց ոչ է. այլ բանականին միայն. վ̃ս որոյ թէպէտ գործն նոյն է, այլ բանն և կամքն ոչ են նոյն։ այսպէս ասպս գի տելի է, զի և հրեշտակք վասն այն մեղանչե ցին, զի են բանականք և անձնիշխանք։ յայս

մանկէ այսպ ՚ի միտ առ երկու ինչ: Նախ, զի
որ կամաւ և գիտութբ մեղանչէ, քան զա
կամայն առաւել է և քան զանգիտութեն.
զի Թէպէտ և սորա մեղքն, այլ պատիժն
նուազ է. որպ անասնոյն քան զմարդոյն:
Երկրորդ ՚ի միտ առ. զի որ առաւել գիտու
թբ և կամօք մեղանչէ՝ առաւել պատժի
քան զայն որ նուազ ունի զգիտութին: և կամ
որպ առաւել է մեղք հրեշտակին քան զմար
դոյն: վսն այն մեղք միոյ քահանայի՝ ըստ չա
փոյ մեղաց բոլոր ժողովրդեանն է: որպ յայտ
է ՚ի պատարագէ նորոյն. զի վսն բոլոր ժողովր
դեանն մին էր զոհարան՝ և վսն միոյ քահա
նայապետին մին: և զշնացեալ դուստր քահա
նային այրէին. և զժողովրդեանն քարկոծէ
ին: և վայ ինձ, զի անձամբ զանձն իմ դատա
պարտեմ: Հարցումն

Ո՞րն է պատճառն, որ արամութի և ցան
կութի և այլն ՚ի յանբան կենդանիսն գոր
ծեն. իսկ ՚ի մեզ ախտ և մեղք: Պատ. Սոքա ՚ի
յանբանսն ո՛չ միայն գործեն, այլ և պահպա
նող նոցա. զի արտիճն ապրին մարմնակեր գա
զանքն՝ և հեշտ ցանկութբ բազմածին կեն
դանիքն անձին: և երկչոտութբ ապրին լապա
տակք, և տկարք ՚ի հզօրաց: և նման բազմամար
մինք. և ատելութբ զերծանի ոչխարն ՚ի գայ
լոյ. և խորխտութբ մեծարգոյ առնէ զձի. և
այլն նմանապէս: Իսկ գործքս այսոքիկ որ նշ

պահպանօղքեն՝ մեզ մեղք համարին։ Եւ
այս վն երկու պատճառի։ Նախ, զի ՚ինքն չա-
փաւորեն ախտքս. իսկ ՚ի մարդն առաւել
և անչափ։ Եւ զայս առնէ միտքն իբրև մշակ՝
որ առաւել զսերմն և բազմաքեղունս աճե-
ցուցանէ. այսպէս և միտք խորհելով զչարս
զայսոսիկ՝ ախտս առաւելու։ որպ յայտ է ՚ի
տրամելին։ զի խորհուրդն մշակ եղեալ՝ յետոյ
՚ի յոխս և ՚ի քէնս և ՚ի նախանձս յաւելու ՚ի
մեզ։ Նոյն յայտ է՝ զցանկութի և զպոռնկու-
թի յաւելու հանապազ ՚ի մեզ։ Նասունք
յերեւանց ժամանակին ունին զկատարումն։
Նոյնպէս և զորկրամոլութին յաւելու միտքն
հնարելով զանազան կերակուրս և ըմպելիս.
որպ և զայլն ամ յաւելու անչափութբ։ Երկ-
րորդ պատճառ. զի զայսոսիկ անասունք գոր-
ծեն ըստ բնական կարգի. իսկ մեք ՚ի հակա-
ռակն փոխեմք։ որպէս անպտուղ երկիր կո-
րուսանէ զբարի սերմունս և փուշ բուսու-
ցանէ. նոյնպէս և մեք զբարի սերմանս զոր
եդ ած ՚ի մեզ՝ ՚ի չարն փոխարկեմք։ Որ բար-
կութի բարի է ՚ի դէմս չարեաց, փոխեմք ընդ-
դէմ բարւոյն։ Եւ զցանկութի զոր ունիմք առ
բարին փոխեմք և ցանկամք չարեաց։ Նոյնպէս
և զխոհեմութին փոխեմք ՚ի չար խորհուրդս
և ՚ի խորամանկութի։ [illegible] սէրն զոր առ ած
պարտիմք, փոխեմք առ երկրաւորս և ՚ի
մեզս։ Նախ պարտէր զմեզ, այժմ ատեմք

զարդարութիւն։ Խորոխտալ պարտեր առ
չարեաց և ո՛չ հնազանդիլ. այժմ անհնազանդ
եմք օրինացն Այ. և անքարհաւա՛ծ եմք առ
ընկերաց։ Մնարդեմք զհոգիս մեր որ է պատ
կեր Այ. և պատուեմք զմարմինս որ անասնոց
է պատկեր։ Ըստ այնմ, մարդ ՚ի պատուի էր.

Եւ այլն. Հարցումն

Ո՞ինչ է մեղք և մահ և դառն մահ։
Պատ. Մեղք այն է՝ յորժամ ՚ի կրօնս լինի
որք՝ գթէն մեղօք. և դարձեալ ապաշխարեն։
Իսկ մահ որ ազատութե՟ մեղանչէ. թէպէտ ա
ո՛չ գիտէ՝ մահանայ հոգին։ Իսկ դառն մահ
է մահոն չարին. որ գիտութե՟ մեղանչէ. այս է
դառն մահ յաւիտենից։ Հարց. Ո՞րն է գի
տութե՟ մեղանչելն։ Պատ. Այն է որ գիտէ
զՃշմարիտն և առնէ զսուտն։ Եւ յերկուս
դէմս որոշի. Նախ՝ ՚ի գործն և ՚ի պատիժն.
յորժամ գիտէ որք թէ այն գործն մեղք է՝
բայց գործէ. որև գիտէ զպատիժ այն մե
ղացն թէ ծանր է։ Երկրորդ՝ գործօղն. որ
ունիցի Ճշմարտութիւն ինչ ըստ կարգի, թո
ղու զայն և առնէ զմեղս։ Երրորդ՝, ՚ի յԱծ
գիտութիւն՝ որ եկեալ իցէ ՚ի Ճշմարիտս. և
գիտէ զքն՝ Այծ Ճշմարիտ. թողու և գործէ
զմեղս կամ զհաւատոն։ Սորդ՝ երեք են գիտու
թե՟ մեղանչելն. վասնորոյ ասէ Յօհաննէս,
թէ անգիտութե՟ մեղանչէք՝ թողու ձեզ
Այծ. ապա թէ գիտացեալ զնա և այնպէս մե

ղանչէք՝ զառաջինն և ս խնդրեսցէ ՛ի ձէնջ։
Իսկ կատարածոր մեղքն գրած է ՛ի բանս հին օ-
րէնացն ՛ի ի̅ը̅. գլուխն։

Վասն մեծութեան մեղաց հարցումն ։

Որպէս է մեծութի մեղաց։ Պատ. Ոմանք ըստ բազում եղանակի ասեն. այսինքն պատճառաւ մեծ. որպէս մեղք արուեստկին։ հասարակութե՝ որպէս ազգամայն։ ազնուութե՝ որպէս յուդայինն։ դժուարաթողութե՝ որպէս մեղքն որ ընդդէմ է հոգւոյն սրբոյ։ կամ վասն գաւ՝ որպէս ադխտութին։ Նմանջատութե՝ որպէս ազահութին։ գխրատտութե՝ որպէս գիճութին։ դըժուարանխտութե՝ որպէս հպարտութին։ մտակուրութե՝ որպէս բարկութեանն։ կամ բարկացուցանելով զԱծ՝ որպէս կռապաշտութին։ և այլք ոմանք ինչ ասեն։ Այլ ես ասեմ և հաւանիմ, որ .ժ. գոլ ասեն զմեծութեան մեղաց. և համեմատի այն .ժ. բատոյորդութեցն։

Նախ՝ ըստ գոյացութե և ըստ տեսակին. զի մարդն է տեսակ, և տեսակն գոյացութեան։ ըստ գոյացութեն այսպէս. զի .ժ. պատուրանք և .է. մահու չափ մեղքն ըստ գոյացութե մեղք։ որպէս շնալն, և գողանալն, և սպանանելն, և սուտ վկայելն. և թէ երկու մարդ գործեն զայսպիսի զմեղս, սպանանելն մեծ է քան զսուտ վկայելն, և այլն նմանապէս։ Երկրորդ, ըստ որակին. որպէս թէ երկու մարդ գործեն զորովայնամոլութի. մինն կա

մեր լինուլ զպէտս իւր, և անգիտութե անկան
յորովայնամոլութի. և միւնն յօժարութբ և փա
փագանօք անկան։ Այն որ փափագանօք ան
կանի՝ մեծագոյնէ քան զմիւսն։ Նոյնպէս և
զոմ մահու չափ մեղսն իմասցիս։ Այլ և ը
ռակ է կամաւն և ակամայն. գիտութբն և
այլն։ Երրորդ ըստ քանակին այսպէս. ոմն մի
անգամ գործեաց զպոռնկութին և ոմն .Ճ.։
այն որ բազում գործեաց՝ մեծապէս պատժի
քան զմիւսն։ Չորրորդ ըստ առընչին. այս
ինքն թէ առ ինչ իրք գործեաց զմեղսն. զի
մարդն չորս դիմօք գործէ զմեղս. այսինքն
ընդդէմ այ, ընդդէմ եկեղեցւոյ, ընդդէմ ըն
կերին, և ընդդէմ անձին իւրոյ։ Որ ընդդէմ
այ լինի, ասէ աւետարանն ամ մեղք թող
ցին մարդկան. բայց ընդդէմ հոգւոյն սբյ
հայհոյութին ոչ թողցի։ Ահա որ մեծ է քան
զամ մեղք։ Նոյնպս և եկեղեցւոյ քան զայլն։
Հինգերորդ ըստ ուրին թէ ո՛ւր գործեն
զմեղքն. այսինքն կամ՝ ի վանք կամ յեկեղե
ցի որ է տուն այ. կամ՝ ի գիւղ և կամ՝ ի քա
ղաք, կամ թէ՝ ի պոռնկատունս։ որ յեկեղե
ցին գործէ՝ մեծ է քան զայլն։ Վեցերորդ
ըստ երբէին. թէ երբ գործեն զմեղքն. այս
ինքն՝ ի տղայութեն թէ՝ ի ծերութեն. ՝ի
սուրբ աւուրս, թէ՝ ի տէրունականս. զի որ՝ ի
տօնս գործի՝ մեծ է քան զմիւսն։ Նոյնպէս
և ունելն զոմ մահու չափ մեղս. թէ գոր

ծեալ է և թողեալ։ զի որ հաստատեալ է մեղքն յինքն՝ առաւել մեղանչէ։ Նոյնպէս առնելն կամ կրել. ընդդէմ բնութեան առնել՝ ծանրէ քան որ առնէ և կրէ ըստ կարգի բնութեան։

Վասն Սոդոմականի մեղաց հարցումն։

Ո՞նչ է մեղքն ընդդէմ հոգւոյն սրբոյ որ ո՛չ թողցի։ Պատ. Միենայն մեղք հաստարակաբար ընդդէմ ոգւոյ է, երեքն և միոյ. այլ յատկապէս ըստ երեց դիմացն. որ տկարութբ մեղանչէ՝ է ընդդէմ հօր. և տգիտութբն՝ ընդդէմ որդւոյ. իսկ չարութբն ընդդէմ հոգւոյն սրբոյ։ այսինքն յօժամ կամքն կարէ և գիտէ ըդ̃ դէմ կալ չարի իմն. սակայն ընտրէ զայն վ̃ն չարութեան։ Արդ՝ մեղքն որ ընդդէմ հոգւոյն սրբոյ է՝ մանաւանդ եղանէ՝ ի չարական անձնիշխանութենէ. և ուղղակի մարտնչի ընդդէմ հոգւոյն սրբոյ. յիրաւի ուրեմն է անթողլի։ Այս և առաւքեալն ասէ. կամակար մտօք մեղանչելն՝ անթողելի է պատարագաւ. այլ ահեղ ակնկալութե դատաստանի. և այրեցուածոց հրոյ։ Այլ բազմադիմի է մեկնութին՝ որ տուեալ բանն զոր դեոյ մարդոյ՝ թողցի։ Նախ առ հրէայսն. որք գիտէին զհոգին սբ շնորհաց բաշխօղ. ուսուի ելից հոգին սբ զբեեզեբուղ ճարտարապետ և զօծն արփեան շնորհս թըղէ Յիսուսի. և զըկէին զզօրութի հոգւոյն սրբոյ։ Երկրորդ՝ զի

գլխաւորին զնա մծ ՚ի մարգարէիցն։ Եւ եդ նմ
օրէնս թէ որ զմծ անարգէ՝ քարկոծեսցի։
Եւ զի խիստ էր հայհոյութիւնն, խստագոյն
քարկոծեցան տանջանօքն յաւիտենից։ Եւ
զի չունէին պատճառս հայհոյութե հոգւոյն
սրբոյ, ոչ զորդւոյ. զոր տեսանէին մարմին
զգեցեալ, ուտել եւ ըմպել. տքնիլ եւ ննջել.
Չորրորդ՝ որք միայն զորդւոյ ասեն բանս
սակաւ պատժին. զի մի է յերրորդութեն.
իսկ որ զփառակիցն՝ եւս կրկնապատիկ հա
տուժնի նմա։ Հինգերորդ, նման սատանայի
լինին որք ուրանան զպատճառն գոյութե
հոգւոց իւրեանց. յիրաւի ապա ոչ սատա
նայ ոչ ունի թողութի ՚ի կեանս յայս՝ եւ ոչ
՚ի հանդերձեալն, եւ գործունեայն ՚ի նմին։
Վեցերորդ՝ Ած երբեմն բարերարէր եւ եր
բեմն տանջէր. իսկ հոգին սուրբ միշտ շնոր
հաբաշխէ եւ պարգեւատու։ Եօթներորդ՝ թէ
առ մարդ մեղանչեն՝ առ Ած բարեխօսեն
եւ հաշտի։ իսկ թէ Այ՝ զո՞վ աղաչեն. ապա ու
րեմն անհաշտ մնայ։ Եւ զի ոչ թողու զմեղս՝
անհաշտ լինի. վն այն մեղքն անջինջ եւ ան
թող լի մնայ։ Ութներորդ՝ ոչ ասաց թէ, որ
խնդրեսցէ ապաշխարութի՝ արգելից զգութ
եւ ողորմութի. այլ թէ ոչ թողցի. որով յայտ
է թէ առանց զղջման եւ տանջանաց ոչ թող
ցի։ Իններորդ որ ոչ խոստովանի, կամ թէ
րի եւ կամ անկատար լինի. յիրաւի որք ոչ հա

հաստատն թողութե խոստովանութե՝ ոչ թող
ցի աստ կամ անդ։ Տասն երորդ՝ վ(ասն) հոգե
մարտին մակեդոնի. որ հայհոյէր զհոգին ս(ուր)բ
,նըծայող ասելով քան զհայր և զորդի ոչ թող
ցի նմա։ Իսկ անթող լի մեղաց վեց են պարա
գայք. այսինքն յուսահատութիւն. յանդըգ
նութի. մարտնչիլ ընդ դէմ զճշմարտութին
ճանաչելոյ. նախանձ ընդ դէմ եղբայրական
սիրոյն. խստասրտութի և անզղջութի մինչ
խապառ. Թիւ նչ ասածել լինի այսպէս. զի
երեք են ՚իթողութին. այսինքն թողօղն. և
այն որում թողու. և պատրաստութի նորին։
Որդ՝ ՚իթողուլն երկու են. այսինքն ողոր
մութի և արդարութի։ ընդ դէմ առաջնոյն
յուսահատութին. և ընդ դէմ երկրորդին
յանդգնութին։ Իսկ յայն որում թողեալ
լինի՝ երկու ինչ պահանջի. այսինքն ցաւ վ(ասն)
գործելոց, և մտադրութի վ(ասն) ոչ գործելոցն։
ընդ դէմ առաջնոյն՝ է խստասրտութին. և
ընդ դէմ երկրորդին՝ անզղջութին մինչ ի
սպառ։ Դարձեալ պատրաստութին ՚իթողութի՝
լինի կրկին. այսինքն ճանաչումն ճշմարտին
և սէր բարւոյն. ընդ դէմ առաջնոյն է մար
տընչիլ ընդ դէմ զճշմարտութին ճանաչելոյ։
ընդ դէմ երկրորդին՝ նախանձն որ է ընդ
դէմ եղբայրական սիրոյն։

Յաղագս Ս անապաշխարելեան մեղաց հարցումն.

Ս՞ինչ է զանազանութիւն մեղաց։ Պատ։

Մեղք անուանին մի է՝ և բոլորապէս յերիս տե-
սակս բաժանի: այսինքն ՝ի սկզբնական. ՝ի
մահացուն. և ՝ի ներելին: Արդ՝ թէպէտ հո-
գին ոչ լինի սերեալ ՝ի հօրէ որպէս մարմինն,
սակայն սկզբնական մեղքն անցանէ ՝ի հօ-
րոյն ՝ի հոգիս զհետ եկեղեցւոյն միջնոր-
դութեան մարմնոյն ցանկութեան ծնելոյն. զի
որպէս ՝ի մեղանչել հօրն ապականեցաւ մար-
մինն ադամայ և եղև դիւրաստահ առ վատթա-
շոտ ցանկութիւն. ապա և սերեալ մարմինն
քարշելով ընդ ինքեան զապականութիւն աղ-
տեղացուցանէ զհոգին: Նաև այս է. զի սկզբ-
նական մեղքն է ՝ի մարմինն և հոգին: այլ
՝ի մարմինն նիւթօրէն և սկզբնաբար. իսկ ՝ի
հոգին տեսականաբար և իբր յենթակայոջ:
Իսկ ներելի մեղքն՝ է յանցանք փոքրագոյն.
քան զի ՝ի մանկունս յետ մկրտութեան նախ
յառնեն ներելիքն և ապա մահու չափքն: և
կոչի ներելի, իբր ներելի և թողլի. զի ակամայ
և անփութութեամբ հանդիպի: Իսկ մահացուն՝
մեղք է գլխաւորօրէն .է. կամ .ը. որպէս ասա-
ցաւ. և կոչի մահացու՝ զի պարտական առ-
նէ զմարդն յաւիտենից մահուն: գիտա-
ցեալք զայսոսիկ՝ այժմ տեսցուք զզանազա-
նութիս սոցա: Արդ՝ մեղք սկզբնական հո-
րինք զանազանի յայլոց: այսինքն ՝ի մահաց-
ուէն և ՝ի ներելւոյն: ըստ միութեան, ըստ հա-
սարակութեան, ըստ հաստատութեան, և ըստ

որակի տարբերութե։ Նախ ըստ միութե. զի մի է միշտ սկզբնականն և բաժանի ոչ մահացուն յեօթն. և ներբելին յերեք։ Երկրորդ ըստ հաստատակութե. զի հաստատակաբար որ ոք որ հաղորդի բնութեա, հաղորդի և սկզբնականին. զի մահացուն ոչ էր Յերբեմիա և ՚ի Յօհաննէս. որք սրբեցան յորովայնէ. Թէպէտ ոչ զերծանէին ՚ի ներբելոյն։ Ս. կոյսն Մարիամ ածածին՝ էր ազատ ՚ի մահացուէն և ՚ի ներբելոյն. բայց ոչ յսկզբնականէն. որ հոգւոյն սրբով մաքրեցաւ։ բայց միայն Տէրն մեր Յս. Քս. էր ազատ ՚ի սկզբնականէն։ Որոյ պատճառ է, զի ՚ի սերմանէ ոչ էր. այլ ՚ի մաքուր արենէ կուսին էառ մարմին։ Երրորդն ըստ հաւասարութե. զի սկզբնականն հաւասարապէս է ամ մարդկան։ Նա զի ոչ է որպէս մահացուն մեծ կամ փոքր. ոչ հնութի մեծ է քան ըղպտունըրկութի. և մարդասպանութի քան զգողութի։ Չորրորդ ըստ տարբերութե որակացն։ Նախ զի սկզբնականն հարկիւ և ակամայ տիրէ. իսկ այլքս ըստ կամաց։ Երկրորդ զի ըսկզբնականն բնութե հետևի. իսկ այլք անձին։ Յաղագս որոյ այն որ ըստ բնութե է միշտ ըստ բնութե և յորդիս անցանէ։ իսկ անձնականն ոչ. զի ներգործութբ է առացեալ զայնոսիկ։ Իսկ զանազանի մահացուն և ներբելին դաւաճելութ և նմաղութ.

որպէս առաւել է հարուածն օձի քան զլուոյ. և նետի քան զփշոյ. այսպէս և մահացուն է առաւել քան զներելին։ Պարզեալ զանազանին ըստ թւոյ. զի մահացուն յեօթն բաժանի· որք են գլխաւորագոյն. իսկ ներելին թէպէտ որ ոչ է յերիս տեսակս ըստ մեծութեան և ըստ նուաղութեան. այլ մանրամասնաբար յանթիւս ելանէ. որպէս ծիծաղել, փայրաբանել և այլն։ Այս բաժանումն է ըստ տեսակի մեղաց։ Պարզեալ ըստ ենթակային բաժանի մեղքն յերիս. այսինքն մեղք սրտին. մեղք բերանոյն. և մեղք մարմնոյն։ Մեղք սրտին է մեղք խորհրդոյն. մեղք բերանոյն է մեղք լեզուին. և մեղք մարմնոյն՝ է առ հասարակ զգայարանացն։ Պարզեալ զանազանին սոքա. զի մեղքն խորհրդոյ կայանայ յերիս. ՚ի տեսանելն՝ ՚ի հաճանելն՝ և ՚ի կամելն։ Եւ մեղք լեզուին՝ ՚ի սուտն՝ ՚ի զրուրն՝ և յայտնի բաճելն։ Զի սուտ է բառնալ զոր ունի. և զուր՝ դնել զոր ոչ ունի։ իսկ անիրաւելն բանիւ՝ առ վերինս և առ ներքինս և առ հասարակ։ Այլև մեղք մարմնոյն՝ ՚ի հեշտանալն՝ ՚ի խաղվորելն՝ և ՚ի կապելն ՚ի մեղս։ Այսպէս զանազանին մեղք ըստ նիւթոյ և ըստ ենթակային։ Պարզեալ ըստ կատարման բաժանի մեղքն յերիս. այսինքն ՚ի գործ մեղացն՝ և յունակութիւն՝ և ՚ի պայտուծն. և սոքա այսպէս զանազանին։ Նախ՝ զի գործ

մեղացն է՝ ՚ի զգայութիւս ներքինս, կամ ար
տաքինս: Եւ ունակութիւնն է՝ ՚ի խորհուրդն՝ ՚ի
կամքն՝ և ՚ի պատիժն՝ ՚ի հոգին, կամ ՚ի մարմինն:
Պատճառաւ բաժանի. զի գործ մեղացն է ան
ցեալն և գնացեալն: Եւ ունակութիւնն է մնա
ցեալն միշտ. և պատիժն է՝ ՚ի հանդերձեալն
որ է ապագայն: Պատճառաւ զանազանին. զի
գործ մեղացն է յայլմէ առ մեզ, կամ ՚ի մէնջ
առ այլս. այսինքն ՚ի պատրանաց բանսարկ
ուին և ՚ի չար ոմանց առ մեզ. և ՚ի մէնջ առ ըն
կերակիցս մեր: Իսկ ունականութի մեղացն
՚ի մէնջ առ մեզ. զի կամաւորապէս կրեցաք,
և կամաւ պահեմք առ մեզ: Իսկ պատիժն է
յայլմէ առ մեզ. այսպէս յարդար իրաւանցն
Այ առ անիրաւս հասեալ: Պատճառաւ զանա
զանին ազգս ըստ տեղւոյն. զի գործ մեղացն
է ՚ի սեռս անկելոյն. և պատիժն է ՚ի սեռս
կրելոյն. և ունակութիւն ՚ի սեռս ունելոյն.
ոչ այլ է ունելն և կրելն. այսպէս այլ է ու
նակութի մեղացն, ունելն զմեղս, և կրելն
զպատիժն: Այսքան ըստ տեսակի ըստ նիւ
թոյ և ըստ կատարման զանազանութի:

✠ Յաղագս Մահացուաց Մեղաց հարցումն:

Ո՞րն է մեղք: Պատաս: Մեղքն սահմանօ
րէն այս է. մեղք է դարձուցանել զերեսս
յանփոփոխ բարւոյն որ է Այծ. և դառնալ
առ փոփոխական բարին որ է արարածս:
Պատճառաւ մեղք է խօսք և գործք և ցանկու

թի որ լինի ընդդէմ օրինացն այ· վասն զ-րոյ անկանի մարդ ՚ի բարկութին այ։ Ոի թէպէտ անպատեհ է ասել զբարկութիւնն առ ած· զի է անփոփոխելի քաղցրութիւն· այլ կամքն որ մեղաւորքն են՝ վասն չար գործոցն տանջեալ լինելն, բարկութի ասի այ։

Հարցումն·

Ո՞ր ինչ է ամբարտաւանութիւնն։ Պատա. Ամբարտաւանութիւնն է՝ որ բաղձայ զյատուկ բարձրանալն իւր՝ և անկարգ և անսահման լինի։ Եւ սկիզբն ամ մեղաց ամբարտաւանութին է· որպ ասէ սուրբ· զգուշանալ պարտ է յամբարտաւանութենէ· զի զհրեշտակն և կարաց խաբել և սատանայ դարձոյց։ Ոի սատանայ այլ մեղս ո՛չ գործեաց, քան թէ խորհեցաւ զյատուկ բարձրանալն իւր· որպ ասէ եսայի, ելից ի վր ամպոց և զաթոռն իմ եդից յատեղս և եղէց նման բարձրելոյն· յորժամ զայս խորհեցաւ՝ արտաքսեցաւ յերկնից։ Եւ զայս նշան ընտրելոցն է խոնարհութին. և անարգանացն է ամբարտաւանութիւնն։ Հարցումն·

Ո՞ր ինչ է նախանձ։ Պատա. Նախանձ է նախանձիլ ընդ այլոց բարեբաստութիւ. զի որպ ամբարտաւանութիւնն հանէ զմարդն յայ· նոյնպէս և նախանձն զմարդն ինքն հանէ յինքենէ։ Եւ որպ օձ յայգւոյ ծաղկէն մեռանի· նոյնպէս նախանձոտն սատակի՝ յորժամ

տեսանէ զբարիս ընկերին։ Հարցումն։

Զի՞նչ է բարկութիւն։ Պատ. Բարկութի՛ւն է ցասումն հոգւոյ. որով ընդդէմ այլոց յառնէ։ Զգուշանալ պարտ է ՚ի բարկութենէ. եւ առաւել ՚ի դատաստանի ժամու. զի մարդ բարկացեալ ոչ ճանաչէ զճշմարտութիւն։ Վն որոյ ասաց Արիստոտէլ Աղէքսանդրու թէ յապաղեա՛ ՚ի վրէժ խնդրութեանն, մինչեւ անցցէ բարկութիւնն։ Դարձեալ բարկութեամբ զպատկերն այ կորուսանեմք ՚ի մեզ. եւ հոգին սբ փախչի ՚ի բարկացեալ հոգւոյ. զի խաղաղութիւն է տեղի նորա. իսկ յորժամ սուրբ հոգին ելանէ, պիղծ հոգին՝ այսինքն սատանայ բնակի ՚ի նմա։

Հարցումն։

Զի՞նչ է ծուլութիւնն։ Պատ. Ծուլութիւն է հեղգութի հոգւոյ՝ ոչ սկսել ՚ի բարին. կամ տաղտկանալ ՚ի սկսեալ բարւոյն եւ ոչ կատարել։ Սա է անուցանող ամ մեղաց՝ եւ մայր դատարկաբանութեան։

Հարցումն։

Զի՞նչ է ագահութիւն։ Պատ. Ագահութի է անկարգ ցանկութի ունել յինչսն. եւ այս է մեծագոյն չար աշխարհի։ զի չէ աճելի աղքատ քան զայն՝ որ ցանկայ աճելի ունել։ զի նման է ջրգողեալ հիւանդի. որ որ քան առաւել ըմպէ՝ առաւել ծարաւի. այս է արմատ ամ չարեաց ասէ առաքեալն. ագա

հութիւն, որ է կուսապաշտութիւն։ Որում տամանք
ցանկացեալք՝ վրիպեցան ՚ի հաւատոյ. եւ զան
ձինս արկին ընդ բազում ցաւօք։ այս ագա
հութիւնս վաճառեաց զՔս։ Հարցումն.

Ո՞ ինչ է երկրամոլութիւն։ Պատ. Երկրամոլու
թիւն է անսահման բաղձանք ուտելոյ եւ ըմպե
լոյ։ Սորա նախաստեղծքն մահացան. եւ վս
այս մեղացս է որ մեք եւս մեռանիմք։ զի զկե
րակուրն ՚ի հարկաւոր ժամանակին պարտ
է ուտել. այսինքն որ քաղցեալ լինի. այլ ո՛չ
յամ ժամ որ լինի յագ։ Հարցումն

Ո՞ ինչ է բղջախոհութիւն։ Պատ. Բղջախո
հութիւն է ցանկութիւն որ յամ ժամ լինում զցան
կութիւն իւր վավաշոտ. այս ազգ գործ խոզից
է յատուկ եւ ո՛չ մարդկան։ այս է որ հեռա
ցուցանէ զմարդ յԱյ։ զի սբք միայն տեսա
նեն զԱծ. այս է քաղցն որ կշտանալ ո՛չ ու
նի. արբած եւ ծարաւած. քա՛ղցր դառնու
թիւն, ՚ի կենդանի մեռեալ։ Սա է ծառն չար
որ պտուղ ո՛չ բերէ. որ յետոյ հատանի եւ ար
կանի ՚ի հուրն յաւիտենից։ Յորոց փրկեսցէ
՚ի Քս Ած զմեզ հաւատացեալս անուանն իւ
րոյ։ Ամէն։

[illegible]
[illegible] Հարցումն

Գլուխ։ ԽԶ.

ՔԱՆԻ՞ ԵՆ ԺԱՄՔ ԱՂՕԹԻՑ
եւ ո՞րք։ Պատ. Գիտելի է, զի ՚ի հին օ

րէնսն մովսէսի ․է․ ժամեր աղօթից․ որպէս ա-
սէ դաւիթ, եօթն անգամ յաւուր օրհնե-
ցից զքեզ։ Ա՟յ էր առաջին ժամն նշ՟ էր երե-
կոյին։ Ա՟յ զի սկիզբն աւուր՝ զերեկոյն ասէ-
ին․ որպէս ասէ դաւիթ՝ ես առ ած՟ կարդացի
և նա լուաւ ինձ յերեկոյս, և այլն։ և այս ՚ի
հանգստեան ժամուն․ և այս ՚ի մէջ գիշերին
և այս յառաւօտին․ որպէս ասէ դաւիթ՝ ՚ի մէջ
գիշերի յառնէի։ Եւ ընդ առաւօտս կան-
խեցից։ Զայս .գ. ժամս աղօթից ՚ի գիշերի
կատարէին․ և զերեքս ժամն՝ ՚ի տուէն։
Այս է՝ նախ յերրորդ ժամուն․ և այս ՚ի վեց-
երորդ ժամուն․ և այս յիններորդ ժամուն
որ էր առաւօտ ժամուց աղօթից նշ՟։ Իսկ ՚ի
նորա յաւելան կրկին ժամք յեկեղեցիս քրիս-
տոնէից․ այսինքն յետ առաւօտուն արևա-
գալն․ և յետ երեկոյին խաղաղականն․ և լի-
նին ինն անգամ աղօթք ըստ իննուց դասուց
հրեշտակացն։ այլև ինն են աստիճանք եկե-
ղեցւոյ։ Եւ զայս մարգարէն ուսուցանէ ա-
սելով․ օրհնեցէք զած՟ մեր և սաղմոս ասասցէք
անուան նորա․ ճանապարհ արարէք այնմիկ՝ որ նըս-
տի ընդ արևմուտս։ Եւ դարձեալ ասէ, թա-
գաւորութիւնք երկրի օրհնեցէք զած՟ և սաղ-
մոս ասասցէք տն՟․ ճանապարհ արարէք այնմիկ
որ նստի յերկինս երկնից ընդ արևելս։ Այս
է՝ որ էր յերկինս երկնից բանն ած՟՝ ՚ի պայ-
ծառ և ՚ի լուսաւոր դասուց հրեշտակաց օրհ-

նախանձեալ, եկն 'ի յերկիր որ է արեւմուտ և խաւար. և եղև որդի մարդոյ: Այս միտս մեք ազգս քրիստոնէից՝ յելս արեւու՝ և 'ի մուտս՝ համայն վերին զուարթնոցն աղօթեմք առ ած: Առ առաջին ժամ աղօթիցն 'ի մէջ գիշերի. վն զի 'ի մէջ գիշերի յարեաւ ·Քս· և 'ի մէջ գիշերի հասարակ յարութիւն մեր լինելոց է: վն որոյ յայսմ ժամու սկիզբն է աղօթից բոլոր աւուրն. յորում ասեմք զՏր եթէ զշրթունս և զայլ սաղմոսն 'ի դէմս հօր Տրյ. յայս միտս՝ զի որք կապեցաք մեղօք ով նախաստեղծքն 'ի ճաշակմանէն, զարձակումն խնդրեմք բերանոյ հոգւոյ և մարմնոյ մերոյ: Առ ·Դ· փոխն վն չորեք նիւթեայ բնութեան. և վն ·Դ· պահու գիշերոյն. յորս բազում նեղեաց զմեզ թշնամին մեր, գանկատիմք նմա և խնդրեմք զփրկութի: Առ ·Ճ· Տր ողորմեան, ըստ թուոյ հարիւր ոչխարին միոյն մոլորեցելոյ: Առ յիսուն 'ի մարտիրոսաց տօնան, զի ազատութի է: Առ երեք Տր ողորմեան 'ի տէրունական տօնան: Երկրորդ ժամն է օրհնութի երից մանկանցն 'ի դէմս որդւոյն՝ որ էջ 'ի հնոց աշխարհիս և փրկեաց զմեզ: Առ ·Գ· անգամ ած քաւեա ասելն, առ երրորդութին սբ, որ Տրն ուսոյց մաքսաւորին. և մեք խրատեցեալք զնոյն երգեմք: Երրորդ ժամն է արեւագալին առ հոգին սբ: Այս երեք ժամքս 'ի գիշերին կա

տարին։ Իսկ չորրորդ ժամն ՚ի ցերեկին՝ եր
րորդ ժամուն առաջին ողորմեան է ՚ի դէմս
հոգւոյն սրբոյ. որ յերրորդ ժամուն էջ յա
ռաքեալսն։ Հինգերորդ ժամն՝ միջին ողոր
մեանն է և պատարագն։ ողորմեան ՚ի դէմս
հօր որ առաքեաց զորդին ՚ի խաչ. և պատա
րագն ՚ի դէմս որդւոյն՝ որ խաչեցաւ վասն
մեր։ Վեցերորդ ժամն վերջին ողորմեան է
յիններորդ ժամուն. յորում ·Քս· աւանդ
եաց զհոգին ՚ի ձեռս հօր։ Իսկ այժմուս
երեք ողորմեան և պատարագն ՚ի միասին կա
տարին։ Եօթներորդ ժամն է խոնարհեցոն
և պարեցոն ՚ի խորհուրդ թաղմանն ՚Քսի։
Ութներորդն է խաղաղականն յետ երե
կոյին առ հոգին Տր։ Իններորդն է հան
գստեան ժամն ՚ի դէմս հօր. յորում ամեմք
զեկեսցէն և ննջեմք. որ է վերջ և կատարու
մնից ժամուց բոլոր աւուրն։ Իսկ եկեղե
ցին ունի ·Թ· փոխ բոլոր. պահապան ին
նուց հանապազորդ գիշերոյն. և զվեց կի
սափոխան յաւելեալ ժամուցն մինչև ՚ի հինգե
տասանն։ Իսկ խաղաղականն որ է ՚ի կարդալն
·Է· փոխն է, ՚ի պահպանութի եօթն զգայարա
նացս և ՚ի մաքրութի անցեալ գործելեացն։
Նաև այս գիտելի է. զի ՚ի գիշերին չորս ան
գամ կատարի. այսինքն հանգըստեանն, ՚ի
մէջ գիշերին, յառաւօտին, և յարևագալն.
վն զի չորս պահ է գիշերն։ Իսկ

Առաջինն է, յորում ասեմք զեկեղեցէն. երկ-
րորդն է՝ մէջ գիշերին. երրորդն է հաւա-
խօսին, և չորրորդն է լոյս առաւօտուն:
Այս տերին յայտնի ժամս զգուշանալ պատ-
ճիրեաց մեզ. այսինքն արթուն կալ և աղօ-
թել: Որպէս ասէ, ո՛չ գիտէք թէ յորում ժա-
մու գող գայ. յերեկորեայ, ՚ի մէջ գիշերի,
՚ի հաւախօսի. և ընդ առաւօտս: Զի հասակ
ամ մարդոյ ՚ի չորս փոփոխի. երեկոյ է տղայ-
ութիւնն. յորում նոր զգամք ՚ի խաւար կեն-
ցաղոյս. մէջ գիշերին է երիտասարդութիւն.
յորում առաւել թմրիմք ՚ի մեղս. հաւախօսն
է ալևորութիւն. և առաւօտն ծերութիւնն
որ մերձ է ծագման հանդերձելոյ աշխար-
հին: Այս դարձեալ չորեքնիւթեայ է բնու-
թիւս մեր մարմնոյ. և սոքօք յանցանեմք. զմ̃
որոյ չորս անգամ աղօթեմք ՚ի գիշերի ՚ի դէմս
մարմնոց մերոց: Իսկ ՚ի ցերեկի աղօթեմք
․Է․ անգամ. Նաև վասնզի հոգին եռամա-
նեայ է. այսինքն բան՝ ցասումն՝ և ցանկութի̃.
և ունի իմացումն կամք, որք լինին ․Է․: Այս
դարձեալ հոգին ունի հինգ ներքին զգայա-
րանս. այսինքն զգայութի̃, երևակայութի̃,
կարծիք, տրամախոհութի̃, և միտք, որ է յի-
շողութի̃: Նաև հինգ են զգայութիք մար-
մնոյ որք են արտաքինք. այսինքն, Տեսանե-
լիք, Լսելիք, Հոտոտելիք, Ճաշակելիք, և
Շօշափելիք: սոքօք զմ̃ չար և զբարի գոր-

ծէ մարդն. վն որոյ հինգ անգամ աղօթեմք
՚ի ցերեկի:

✠ Նորին Գրիգորի տարբերութիւնն հասարակի վասն առանձնականի
աղօթից հարցմամբ:

## Գլուխ. ԽՄ.

ՈՐՊԷՍ ԶԱՆԱԶԱՆԻՆ Ի միմեանց հասարակ աղօթքն և առանձնականն: Նախ՝ զի հասարակ աղօթքն է հարկաւոր. իսկ առանձնականն կամաւոր: Երկրորդ հասարակն վճարէ զպարտս. և առանձնականն նուէթէ զպտուղս: Երրորդ հասարակն զգայարանօք կատարի. իսկ առանձնականն ՚ի մտաց լուսափայլի: Չորրորդ հասարակ աղօթքն է միակի պատիւ և փառք. և առանձնականն կրկնակի: Ապա թէպէտ առանձնականն կամաւոր է սակայն իմն վանականաց որք են աբեղայք՝ կրօնաւորք, հարկաւոր է վն .դ. պատճառի: Նախ ՚ի տէրունական բանիցն է յայտ. որ ուսոյց հասարակ աղօթել. ըստ այնմ, որ երկու և երեք ժողովեսցին և այլն: Նոյնպէս ուսոյց և զառանձնականն ասելով մուտ ՚ի սենեակ քո և աղօթեա ՚ի ծածուկ: և ինքն բազում անգամ առանձինն կայր յաղօթս: Երկրորդ վասն զի քահանայք եմք՝ պա՛րտ է հասարակ աղօթել. և զի աբեղայ պա՛րտ է առանձնական աղօթել: Երրորդ՝ զի ունիմք զընութիւն հասարակ, պա՛րտ է հասարակ աղօթել. և զի ունիմք

անձն եւ դէմ յատուկ, պարտ է առանձնակի աղօթել: Չորրորդ՝ վասն հասարակ եւ յայտնի մեղաց պարտ է հասարակ եւ յայտնի աղօթել. եւ վասն առանձին գլորմանն պարտ է առանձնակի աղօթել ապաշխարութեամբ: Եւ այս գիտելի է՝ թէ ոմանք հանապազ յետ ամ կարգեալ աղօթից՝ առանձնակի աղօթեն. այլ որք ոչ ժամանեն, պարտ է յամ աւուր կըրկին անգամ, այսինքն յայգ եւ յերեկոյ:

Նախ զի հոգի եւ մարմին է մարդն: Եւ դարձեալ՝ մինն սկիզբն եւ պատճառն է գիշերոյ, եւ միւսն տուընջեան: Եւ դարձեալ վասն ելից մեր եւ մտից, որ է մահ եւ կեանք: Չորրորդ վասն այսր աշխարհիս եւ հանդերձելոյն՝ հասարակ եւ առանձնակի աղօթեմք կըրկին ՚ի փոխարձանաց: Իսկ ոմանք եւս կատարեալ ամենայնիւ՝ յերեք ժամանակս աղօթեն առանձնակի. մին ՚ի մէջ գիշերի. յառաջ քան զհասարակաց ժամն. եւ մի յայգն եւ մի ցերեկն: Եւ է այս խորհրդաւոր. Նախ զի յերից եմք գոյացեալ. այսինքն ՚ի մարմնոյ եւ ՚ի հոգւոյ եւ ՚ի մտաց՝ որպէս ասեն ոմանք. վասն որոյ երեք առանձնական աղօթս մատուցանեմք: Եւ դարձեալ երեք է ժամանակն. այսինքն անցեալն ներկայս եւ ապագայն: Եւ դարձեալ երեքեն որպիսութիւնք մեր եւ փոփոխմունք. այսինքն աստի կեանս, եւ յետ մահուն, եւ յետ յարութեն. վասնորոյ երիցս աղօթեմք առանձնակի:

Նաև այս խորհուրդ՝ երեք ատանձնական ա-
ղօթքն. և.թ. հասարակական որք լինին .ժբ.
անգամ աղօթք. զի տիւ և գիշերն .իդ. ժամ
լինի. ապա ընդ երկու ժամն մի անգամ ա-
ղօթեմք: որով յայտ է՝ զի կէս աւուրն որ
է .ժբ. ժամն՝ աղօթելի է մեզ յամենայն օր. և
կէսն այլ մարմնական հոգոց պարապել գոր-
ծոյ աշխատութեան ննջելոյ կամ այլ ինչ ի-
րաց: Կարծել ուսանիմք երկոտասան անգամս.
և ըստ իւրաքանչիւրոցն մի մի ժամս աղօ-
թեմք: Նաև զերկոտասան գունդս հրեշ-
տակացն երկնից, և զերկոտասան առաքելան
բարեխօս մատուցանեմք առ Ած: Կարծեալ
երկոտասանին կրկին վեց է. հանապազ վեցն
կի շարժմամբ հոգւով և մարմնով մեղանչեմք.
վասն որոյ երկոտասան ժամուք աղօթիցն թո-
ղութիւն խնդրեմք ասելով ՚իգթած մարդասէ-
րէն Այ. որ է օրհնեալ յաւիտեանս:

✠ Նորին Գրիգորի Տաթևացւոյն քարոզ չէին, վասն անուանց որդւոցն Յակոբայ:

Գլուխ: ԽԹ.

ԻՆՉԻ ՈՐ ՐԱՍԻՆ՝ ՈՐԴԻՆ
նԺը ոչ մեռանին: Գրի: Ոմանք որդին
զխիղճ մտացն ասեն. ուր յուցածն ի
վերայ: Նաև՝ ինէ ր.քուստ խիղճ մտացն՝ եկայր
տաքուստ անկրուն որդունքն հրեղենք: Նաև
անկրուն ասին. զի անդադար տանջեն: Եւ ոչ
մք յատկուէն որդանցն՝ զի երևելեօքս անե

թեւոյթն իմանի։ Արդ նախ զի՞ խնէնջ է որդն
Երկրորդ, և ապականեալ մասին։ Երրորդ,
զի առ մեզ մնայ կենդանի։ Չորրորդ, յոր
ժամանականի, յայլս ո՛չ մտանէ։ Նոյնպէս և
հրեղէն որդունքն ՛ի խնէնջ ծնանին։ և ՛ի խն-
զաց աղանձն։ և առ մեզ մնայ. և խոստովանու-
թիւ սատանէ։ Հարց. Իսկ յարութեան ապա զգայա-
կան կենդանի լինի։ Պատ. Ո՛չ լինի. զի որ
դունքն այնոքիկ ո՛չ են զգայական կենդա-
նիք. այլ հրեղէն տանջանք են զգայական
մասին. և ոմն որդս այս ո՛չ ունի զգայարանս.
նոյնպէս և հրեղէն որդունքն։ Հարց. Որպէս
գտանեն զմարդն։ Պատ. Ոպ գառն զմայրն՝
և նորա զծնողան իւրեանց. զի այսպէս ասեն
վարդապետք թէ՝ յորժամ յղանայ ոք ՛ի կնո-
ւր զխորհուրդ մեղացն ՛ի սատանայէ, ներքին
առեալ որպէս յաւանէ և ՛ի ծնանել մեղացն՝
ծնանին և որդունք ՛ի հրեղէն ծովուն որ է
հարան. և որքան գործեմք զմեղս, այնքան
բազմանայ ծնունդ նց։ և ծնուլութի և հեշ
տութի մեր՝ անուանդ է նոցա։ և յորժամ ա
ռաքին մեղաւորքն ՛ի հուրն յաւիտենից՝
գտանեն որդունքն այնոքիկ զծնողս իւրեանց
ոպ գառինք զմարսն։ Հարց. Տեսանեն ար
դարքն զմեղաւորսն յայնպիսի տանջանս։
Պատ. Արդարքն տեսանեն զնս ՛ի տանջանսն
և ուրախանան. զի զերծան յայնմանէ. որ ցու
ցանէ յառաջի կայր։ այլ զկնի դատաստա

նին բարիքն Թէպէտ տեսանեն զչարսն ՚ի տանջանս՝ բայց չարք ո՛չ երբէք այնու հետև տեսցեն զբարիսն որպէս ցուցաւ։

Հարց. Ո՞չ ցաւին արդարքն ՚ի տեսանել զնոսա յայնպիսի տանջանսն։ Պատ. Ո՛չ. Թէպէտ հայր տեսանէ զորդի, կամ մայր զդուստրն, և կամ զեղբայրն և զքոյրս, ոչ միայն ո՛չ ցաւի, այլ այնպէս լինի հեշտալի որպ̃ տեսանելմք զձըկունս որք խաղան ՚ի վտակս. որպ̃ ասէ Դաւիթ. ուրախ եղիցի արդարն յորժամ տեսցէ զհատուցումն մեղաւորաց։ Հարց. Ո՞չ խընդրեն յաղ̃ վ̃ նոցա։ Պատ. Ո՛չինչ ՚ի յօրն դատաստանի աղօթեն արդարք վ̃ մեղաւորաց. այլ յետ այնորիկ վ̃ դատապարտելոցն ո՛չ խնդրեն. զի ա̃ծ դնէ մ̃ի գող խմանան վ̃ նց̃ զխնդիրն. և դարձեալ այնպէս միաբանեալք են ընդ ա̃յ՝ զի զդատաստանն ա̃յ հ̃մ իրօք հաճոյ թըւի նց̃։ վ̃ այնորիկ այնոքիւք ուրախ լինին ՚ի փառս ա̃նձանց. և փառաւորեն զամենաբարերարութիւն և զմի̃ածութիւն. որում փառք և երկրպագութիւն յաւիտեանս Ամ̃էն։

✠ Սրբոյն Գրիգորի Լուսաւորչի առաջնորդի Տարօնեցւոյն վ̃ ճառքէ վասն նեռին հարցմունք.

Գլուխ ԺԳ.

## ՆԵՌՆ ՈՒՍՏԻ ԼԻՆԻ.

Հ[արց]. Պատ. Ի խօսման ասէ կին յեգիպտոսէ իջեալ լինի. և արդ ուր կինն զովտոսյ եր՝ նովքէ. մերն ՚Յերուսաղէմ՝ անուանն տայ նմա

հռովմ. անդ ՚ի քուն ձայն լսէ թէ կին
դու յղացցիս զմեծ ոմն. զյղանալն ապակա
նութեն և կուսութեն. ասեն թէ ՚ի ներքի
նեաց առանց խառնելոյ ՚ի ներքս անցեալ
յղութի առնէ. և ծնունդն ՚ի քորացին, և
անունդն ՚ի խաբեթայիդա. և թագաւորելն
՚ի խոխզանդիա. հօր անուն ոօմելոս ասեն։
մին ձեռն և ոտն երկայն. և մինն կարճ։ մէն
ակն խաժ. և միւսն սև։ Այս այլ վարդապետք
ասեն եթէ նեռն յղանայ ՚ի խառնմանէ և ծըն
ցի ՚ի բաղէ. սակայն ՚ի յղանալն իջանէ չար
հոգին ՚ի յորովայն մօրն. և նովք զօրութեն և
ներգործութեն ծնանի մանուկն և սնանի
և հասանէ յերիտասարդութի։ վն որոյ ասի
որդի սատանայի։ Որդ՝ ծնանի ՚ի բաբիլոն
՚ի ցեղէն դանայ. և եկեսցէ յեդեմ. և թլփա
տեսցէ զինքն. և ասէ հրէիցն թէ ես եմ քն
խոստացեալն ձեզ. և ժողովքն հրէից յարես
ցին ՚ի նա. և լինիցի բռունն բղջախոհ ՚ի ցան
կութիւ կանանց բայց ըստ վեր երևութեց
ցուցանէ զսրբութի. զի դիւրաւ խաբես
ցէ։ զանօթ իւր հզարատացուսցէ. թգ ասէ
դանիէլ յարիցէ ընդ դէմ իշխանաց իշխա
նին. այսինքն ընդ դէմ քի։ և ջանայցէ փո
խել զօրէնս և զկրօնս. և լինիցի յանդուգն.
զի ոչ համարի պատիւ յայ. զի յապաղէ դա
տաստանն. ըստ սաղմոսին, բարձեալեն իրա
ւունք յերեսաց նր։ Այլ և լինի հայհոյիչ.

զի խօսեսցի բան ընդդէմ բարձրելոյն. եւ տա-
ցէ երկրպագանել պատկերի նորա. եւ դրօշ-
մն զամենեսեան 'ի ճակատն եւ յաջոյ ձեռն:
Որպէս ասէ տեսիլն Յօհաննու: Նաեւ խոս-
տովանեսցի զինքն գոլ քս̃ եւ ճշմարիտ որդի
այ̃: Նստցի 'ի տաճարն, զոր շինեսցեն նմա
հրէայքն: Եւ ասասցէ թէ յառաջ քան զիս
ո՛չ ոք է ճշմարիտ քրիստոնեայ. այլ նեռ ինքն
ամենեքեան: Եւ որպէս 'ի քս̃ բնակեալ է
ամ̃ լրութիւն ած̃ութե̃, ո՛պ ասէ Պօղոս 'ի Թե-
սաղոնիկեցւոցն. Նոյնպէս եւ 'ի նեռն՝ ամ̃
լրութիւն անօրէնութե̃. զի 'ի նմա բնակի գը-
լուխն ամ̃ չարեաց: Եւ հրեշտակ բարի նախ-
կարգեսցի 'ի պահպանութիւն նեռին. այլ
յորժամ խօսեսցի 'ի չարիս՝ մինչ զի զպաշ-
տօնն այ̃ յինքն ձգեսցէ, յայնժամ 'ի բաց
կացցէ 'ի նմանէ հրեշտակն: Զի նա է գա-
զանն որ ել 'ի ծովէն եւ ունէր գլուխս .է.
այսինքն զամ̃ իշխանս. եւ եղջիւրս .ժ. այս
ինքն զայնոսիկ՝ որք մարտնչին ընդ .ժ. բա-
նեան օրէնսն:

Հարց. Զի՞նչ է անուն նեռին: Պատ. Եբ-
րայեցերէն կոչի՝ արմաւ̃իլէ. այսինքն՝ ուրա-
նամ: Եւ Յունարէն. անթէմիոս. այսինքն՝
հակառակ: Եւ Դաղմատերէն. տիտան. այս
ինքն՝ արեգակն. կամ հակայ: Եւ այս գիտե-
լի է՝ զի անուն նեռին ջնջեալ եւ կորուսեալ
է 'ի սր̃բ գրոց. վա̃ այն զանազանապէս կոչեն:

(361) (Խ.Զ.)

զի տէրն՝ պղծութիւն կոչէ զնա, և առաւօտքն։ և
Դանիէլ, փոքր եղջիւր։ և ասեն օթիլն գազան։
և նահապետն Յակոբ, օձ դարանակալ ՚ի ճա-
նապարհի։ Երեմիա՝ երեկոր որսացեալ յող
գէն դանայ։ և Յոհաննէս՝ նեռն կոչէ։ և
Պօղոս՝ մարդ անօրէն և ապականած և որդի
կորստեան ասէ։ իսկ համար անուանն ՚ի
յեղլադացուցն ՚ի մէրս թարգմանեալ այս է
ՈԿԶ. որ է Ռուբանամ Կլամաճ. Օ. սրա
ըինչն երկնի և երկրի. և զայս ՚ի ճակատն և
յաջոյ ձեռին տայ դրոշմել։ Նա դարձեալ՝
է վեց հարիւրեակ, վեց տասնեակ, և վեց
միակ։ այս է ՚ի գլխաւորութիւն մէկի, այսինքն
եղելոյ ապըստամբութեանն. զի որքան ա-
ճուրք եղև աշխարհ, այն քան ամօք յանկ է-
լանէ։ Դարձեալ նշանակէ զնոյն ապըստամ-
բութիւնս. որ յառաջին և միջին և վերջին
ժամանակս ընէելոց է. զ վեց հարիւրն զամա
՚նոյի. որ էր վեց հարիւր ամաց. և ջրհեղե-
ղաւ ջնջեցան ապստամբքն։ Իսկ վաթսունն
զնաբուքոդոնոսորի պատկերն .կ. երկայն և վեց լայն.
յորում ընդարձակեցաւ կռապաշտութիւն։ Նա
վեցն ՚ի կատարումն վեց դարուն. յորում
եղջէ ապըստամբքն և կորուսցէ զբաղդուն.
զորմէ ասի՝ հրեղէն վիշապն տամուքեն քար-
շեաց ընդ իւր զերրորդ մասն աստեղաց։

✠ [illegible]

Որպէս պատրէ՝ նեռն զմարդիկ։ Պատ. Չո

ըեւք եղանակօք քարոզէ ընդ իւր զմարդիկ.
ոմն ասէ առաքեալն տուանն նէ՞ քարոզէր ընդ իւր
զերրորդ մասն աստեղաց յերկնից՝ իջերկիր։
Նոյն՝ քարոզէ գծարան տոօք. եւ զեւարիսն տան
ջանօք. զպարզամիտսն քարոզութբ. եւ սքան
չելեօք։ Մին է օձ դարանակալ՝ ի ճանա
պարհի. որ ասաց Յակոբ յաղագս դանայ. եւ
զհեծեալն եղջերօք շորէ. ք. Նախ՝ պատրեսցէ
զեկեղեցականս խորամանկ քարոզութբ. եւ
ընդդէմ խօսեսցի աստուածայինն եւ արգե
լուցու զուղղափառ վարդապետս. զի մի քա
րոզեսցեն։ Երկրորդ սուտ սքանչելեօք եւ կա
խարդութբ պատրեսցէ զկրօնաւորս. մինչ
խօսիլ տայցէ քաղնեաց եւ լերանց դնալ՝ եւ
ծառոց ծաղկիլ եւ չորանալ. եւ մեռելոց յառ
նել. եւ հրոյ իջանել յերկնից. եւ չար հոգւոյն
խօսիլ տայցէ այլեայլ լեզուս։ Եւ կախար
դութբ երեւեցուսցէ զինքն մեռեալ եւ ե
րեքօրեայ յարուցեալ. եւ զայս ամ արասցէ
դիւականն երեւմամբ եւ կախարդականն արուես
տիւք։ Երրորդ սուտ պարգեւաց տրօք պատ
րեսցէ զմեծամեծս եւ զաղքատս. զի իւրքն
նեռն գտանիցէ գանձս ծածկեալս. զի սուտ
բարեպաշտութբ նոցա՝ զայլս խաբեսցէ։
Չորրորդ զօրավիգս զմարմնաւորս աշխ. եւ
տանջանօք պատրեսցէ։ քանի զի մեծամեծ եւ
խստագոյն չարչարանս տացէ պաշտօնէիցն
Քի։ Եւ որպէս նեռն լինիցի անօրէնք քան

զքմ̃ յառաջագոյն հալածիչսն. նոյնպէս և ո̃ք ժամանակին այնորիկ՝ լինիցին զօրեղագոյն քան զքմ̃ յառաջագոյն մարտիրոսսն ։

✠ Վասն գօգայ և մագօգայ հարցումն ։

Ո՞ինչ են գօգ և մագօգք։ Պատ. Ասեն ոմանք թէ .ժ. ցեղքն իսրայէլի որք փակեցան ՚ի մէջ լերանցն կապելոց՝ զոսա ասեն հրեայքն ելանել ՚ի կատարածի և գալ յերուսաղէմ։ Այլք ասեն թէ գօգայ և մագօգայ՝ խմացեալ լինին զօրք նեռինն. որ ՚ի կատարածի աշխարհի մարտնչին ընդ եկեղեցւոյն աստուծոյ։ Այլ գօգ նոքա են՝ որովք սատանայ գաղտաբար հալածէ զհաւատացեալսն։ և մագօգ՝ որովք յայտնապէս հալածէ զեկեղեցին։ Իսկ այլք ասեն թէ՝ գօգ ասին հեթանոսք. և մագօգ սատանայ։ Բայց՝ ՚ի կատարածին փոքր լինին հասակք մարդկան քան զմերս. որպէս մերս այժմ քան զառաջնոցն ։

✠ Վասն Ենովքայ և Եղիայի ։

Ընդ երևել նեռին պղծոյ՝ և ՚ի թագաւորելն ՚ի յերուսաղէմ, եկեսցեն Ենովք և Եղիա։ որպ̃ ասէ Մաղաքիա, և դարձուսցեն զսիրտս հարց յորդիս։ այսինքն զի ուսուսցեն վերջնոցն զհաւատս փրկչին մերոյ. յոր և ինքեանք իսկ հաւատացին։ Հարց։ Որպիսի հասակաւ գայցեն։ Պատ. Նոյն հասակաւ գայցեն՝ որով փոխեցան։ Նոքա երկու ծիթե

նիք. այսինքն օծեալք հոգւով սրբով: Եւ երկու աշտանակք, որք լոյս տան ամենեցուն: Եւ քարոզեսցեն զաւուրս ·ռ̄մ̄կ̄· այսինքն ·գ̄· ամ եւկէս: ոպ̄ ասէ տեւելն: այն չափ՝ որ չափ եւ քս̄ քարոզեաց: Որք եւ յետ այնորիկ սպանցին ՚ի նեռանէն յերուսաղէմ. եւ անկեալ լիցին մարմինք նոցա ՚ի հրապարակս զերիս տիւս եւ զերիս գիշերս: Եւ յետ այնորիկ սպանօղք նոցա լուծիցեն այսպիսի բարբառ. Եղիա եւ Ենովք՝ ելէք աստ: եւ յարիցեն եւ ելանիցեն ամպօք յերկինս: Եւ յետ մահուան նոցա՝ Թագաւորեսցէ նեռն այլ եւս տասն եւ հինգ օր.

✠ Մասն երկոտասաներորդ նեռային խորհրդածութեան հարցումն

Որքան ժամանակ թագաւորէ նեռն.

Պատ: Թագաւորէ նեռն զաւուրս ·ռ̄մ̄ղ̄ հ· եւ ը̄· ըստ Դանիէլի. որ է ամիս երեսուն երկու. եւ ամք ·գ̄· եւ կէս: զի ժամանակ՝ որ է ամ մի. եւ ժամանակս՝ որ է երկու ամ. եւ կէս ժամանակ, որ է կէս ամ: Եւ յայս քան միջոցս լինի հալածումն եկեղեցւոյ: եւ այսպէս կարճեսցին աւուրքն այնորիկ ողորմութեամբն այ: եւ կարճեալ՝ ոչ զժամ աւուրցն ասէ, այլ զթիւն: Եւ յետ այնորիկ ՚ի լեառն ձիթենեաց՝ ուստի համբարձաւ քս̄, Տէր իշխանութեամբն իւրով՝ սպանցէ զնեռն: Եւ թէ ինքեամբ եւ եթէ ՚ի ձեռն միքայելի ՚ի մէջ վրանի եւ յաթոռն իւր սատակեսցի. եւ գլորեսցի

մարմին նորա ակներև ժողովրդեանն իւրոյ։
որպէս և մարգարէն, դաւանեալ արասցէ
Տր զյարուցեալն իւր՟ երկրի ՚ի լերինն Տե։
Նա յետ այնորիկ ոչ առժամայն դայցէ Տր
՚ի դատաստան։ այլ տացէ խաղաղութիւն յա-
հուր ․խ․ է․ առ ՚ի հանդիստ սրբոցն եկռապաշ
խաւարութիւն թիւրելոցն։ Յաղթէ որքան ՚ի
մէջ այն ․խ․ է․ ահաւորն՝ ոչ ոք գիտէ։ Արդ
արքանեակք նեռինն յետ մահուն նր՟ ուրա-
խասցին և առասցեն իւրեանց կանայս․ և ասաս-
ցեն՝ թէ պէտ մեռաւ իշխանն մեր, սակայն
մեք ունիմք անհոգութի՟ և խաղաղութիւն։
Նա մինչ դեռ ասիցեն զայս՝ յանկարծակի
եկեսցէ իւր՟ նոցա սատակումն․ որպէս յաւուրս
նոյի՝ ըստ բանի փրկչին։ Արդ հրեշտակքն դարձ-
ցին յայնժամ ՚ի հաւատս քի՟․ և եկեղեցի տր՟
խաղաղութե՟ հանգիցէ մինչ ՚ի կատարած աշ-
խարհի․ զի նորոգեսցին դիւթութիւնք և
պատրանք մարդկան։

✠ Սրբոյն Գրիգորի Եռամեծի ասացեալ, Վասն փոփոխման մարդոյ Հարցումն։

Գլուխ ․ ՃՀԱ․

ՈՐՔԱՆ ԵՆ ՓՈՓՈԽՈՒՄՆ
մարդոյ։ Պտ։ Եօթնապատիկս ․է․ Նախ
ըստ տարերց, ՚ի լինելութի՟ և յապականու-
թի՟։ Երկրորդ՝ ըստ տնկոց ՚ի մանկութի՟
և ՚ի ծերութի՟։ Երրորդ՝ ըստ կենդանեաց․
յողջութի՟ և ՚ի հիւանդութի՟։ Չորրորդ՝ ըստ

բանական հոգւոյն յառաջինութի և ՚ի չա-
րութի։ Եւ մանաւանդ ·գ·։ Նախ՝ ըստ իմաց-
ման ՚ի տգիտութի. և ՚ի գիտութի։ Երկրորդ
ըստ ախորժակին ՚ի տրտմութի և յուրախու-
թի։ Երրորդ՝ ըստ արտաքին ընչից յաղքա-
տութի և ՚ի փարթամութի։ Որ ամենեքեան
լինին ·է· փոփոխմունք կենցաղական. ըստ
Դանիէլի որ ասէ ·է· ժամանակ փոխեսցին
ի վր քո։ Եւ գիտելի է՝ զի հրեշտակք ոչ ու-
նին զայսպիսի փոփոխմունս, զի ոչ են տար-
րականք. և ոչ ըստ ժամանակի։ Այլ ըստ ի-
մացման առաւելուն ՚ի գիտութի. և այն ոչ
է նոցա փոփոխումն այլ աճումն իմաստութե։
Այսպէս և ՚ի յարութեն սուրբք զայսպիսի
փոփոխմունս ոչ ունին. այլ հրեշտակաց հա-
ճասարք են առանց փոփոխման, և անձին միշտ
լուսափայլ իմաստութեն տն։ Եւ այլ իմն յե-
ղանակ փոփոխման ըստ իմաստասիրացն ·դ·.
ըստ մարմնոյն ջերմ և ցրտական։ Եւ ըստ հո-
գւոյն բարի և չար. և ըստ մտացն իմաստու
և տգիտութի. և ըստ բոլոր անձինն. ողջու
և հիւանդութի. վասն որոյ յայսցանէ ազատ
զուարթացոյցս տն սուրբք։ Որդ՝ այլ տն փո-
փոխմունք ասացան իմերոյ ՚ի զանազան տե-
ղիս։ Այլ վն ողջութե և հիւանդութե մե-
ծութե և աղքատութե այժմ ասասցի։

✠ Վասն ծերութեան աղքատութեան քարոզ։

Վասն էր ոմանք մեծատունք են և ոմանք

աղքատ։ Վասն Մեծութի մարդոյ պատճա
ռի ՚ի չորից։ Նախ՝ յաշխատութեց վաստա
կոց. ըստ որում ձեռաց մեծացուցանեն. և
այս բարի է։ Երկրորդ ՚ի զրկանաց և յափշտա
կութեց. և այս չար է։ Երրորդ՝ ՚ի պատահ
մանէ դիպւածոյ. և այս միջակ է։ Չորրորդ
տուրք Այ է ըստ այնմ, որ աղքատացուցանէ
և որ մեծացուցանէ. և իմէ արծաթ և ոսկի
ում կամիմ տաց զնա։ Եւ տայ Ած զմեծու
թին վն .դ. պատճառի։ Նախ՝ զի թէ բարի
է մարդն, ընտրէ Ած և տայ զմեծութին որ
կարօտելոց ՚ի գործ ածէ. և այս կենօքս զայն
կեանքն շահի։ Երկրորդ՝ թէ չար մարդ լի
նի, տայ Ած զմեծութին որ ՚ի դատաստանի
պատասխանի չունենայ թէ ինձ զի՞նչ տւիր
որ զքեզ սիրեի։ Երրորդ՝ և վատ մարդոյ
տայ մեծութի. թէ այն իրօքն ՚ի յԱծ դառ
նայ, և ասէ ՚ի միտս իւր, թէ ես անարժան
էի և զայս ետ ինձ Ած. և թէ զպատուիրանս
նր պահեմ, և զայն կեանքն տայ։ Չորրորդ՝
տայ զմեծութի նորա, որ բազում չար է. և
մի մասն բարեաց ունի։ Եւ զայն վճարե
աստ. զի ՚ի դատաստանին ակն բարւոյ այլ
ոչ ունենայ. որպէս մեծատունն որ ընկա
լաւ զբարիսն ՚ի յայս կեանքս։ Նոյնպէս և
աղքատութին բնականապէս բաժանի ՚ի.դ։
Առաջինն՝ ՚ի ծուլութեց. ըստ այնմ որ քը
նածն է զգեցցի զպատառատուն։ Երկրորդ

որք կամաւ աղքատանան վասն Քրիստոսի։ Երկրորդ՝ ՚ի հանդերձելոյ լինի։ Չորրորդ՝ որո՛յ Աստուած տայ։ Եւ լինի այս վասն չորս պատճառաց՝ Նախ զի մանս աղքատ առնէ Աստուած. զի զարքայութիւն մեծատանց վաճառեսցեն։ Ոչ ի որ ողորմի աղքատին՝ փոխ տայ Աստուծոյ և ինքն վճարէ որ ողորմածն է։ Երկրորդ՝ տայ զաղքատութիւն և փորձէ զմարդն. որպէս հրովն փորձէ ոսկին թէ լաւ է թէ վատ. թէ համբերող. թէ ոչ։ Երրորդ՝ զլաւ մարդն աղքատացնէ և փորձէ. թէ յընչի՞ցն սիրէր զԱստուած, թէ՞ յաղքատութեան այլ նոյնպէս. որպէս յոբայն։

Չորրորդ՝ որ ամեն գործքն բարի լինի և մին մեղք է գործեալ, տայ Աստուած աղքատութի՝ որ այնու չարչարի և մին մեղքն վճարի։ Եւ այն կենաց մէջ և արժանաւոր արքայութե ժառանգորդ լինի։

Վասն հիւանդութեան՝ ներքելոյ Հարցումն

Ո՞չ ինչ է հիւանդութիւնն։ Պատասխանի։ Հիւանդութի է անչափակցութի տարերց մարմնոյ։ Որ առաւելու և նուազէ ջերմ և ցուրտ խոնաւ և ցամաք։ Եւ լինի հիւանդութի ՚ի չորից հինգ պատճառաց։ Նախ անզգաստութի, կամ պակասութի հարկաւոր պիտոյից. կամ յարտաքին աստահակութե օդոց։ Երկրորդ՝ որ անզգուշեն ՚ի մեղս տայ Աստուած զհիւանդութի ՚ի խրատ ուղղութե։ Երրորդ՝ հիւանդութիւն է ընտրելոց՝ զի փորձ երև

եսցին 'ի յամօթ չարին որպէս յոբայն: Զորրորդ-
նախախնամութե. զի մի հպարտասցին. որպէս
խթն առաքելոյն Պօղոսի: Եւ զի մի մարդիկ
թիւրեսցին արտաքոյ բնութեան լեալ:

Հարց. Պարտ է բժշկական դեղով վարել հի-
ւանդաց: Պատ. Ըստ զանազան ցաւոց եւ զա-
նազան դեղս կազմեաց արարիչն Ած. որպէս
յարմարեալ 'ի ծաղիկս 'ի պտուղս եւ յայլսն:
Լաւ է բժշկութիւն բազում անգամ ժուժ-
կալութի ուսուցանէ ընդդէմ անչափու-
թեան կերակրոց. եբր թէ նա է առաւել
պատճառ հիւանդութե: Այլ 'ի բժշկու-
թեն ոչ 'ի դեղն, այլ յԱծ յուսալ պարտ է
որ դեղով եւ առանց դեղ կարող է բժշկել.
որպէս մշակն յորժամ սերմանէ, ոչ 'ի գործն
այլ յԱծ ապաւինի: Նաեւ պաղատիս թզոյ
եդաւ վէրացն Եզեկիայ. եւ ողջացաւ: Արդ-
եթէ ըստ բնականին է հիւանդութի՝ պարտ
է բժշկական դեղով առողջանալ. իսկ թէ
այլ իցէ. նայել պարտ է առ ինքն. թէ որ
յանցանք առաւել զօրացեալ է յինքն, զայն
պակասեցուցանել: Այլ որ արդարութիւն
նուաղեալ է՝ զայն ուղղել. յայնժամ լինի
բժշկութի հոգւոյ եւ մարմնոյ 'ի յԱծյ. եւ ոչ 'ի
դեղոց: Պարզեալ վասն հիւանդութեան
գիտելի է: Ո՞ր է 'ի մէջ մահու եւ կենաց:
Այլ թէ պէտ մարդ ոչ գիտէ զօր մահու իւ-
րոյ՝ այլ երկս նրա տուեալ է Ած 'ի զգուշու-

թի մեզ եկարապետ մահուն։ Նախ՝ զապխտա
կութի ալերացն։ Երկրորդ զապականութիւն,
այսինքն ուժոյ, տեսութեանն, և այլոցն։
Երրորդ զհիւանդութիւն. զի տեսեալ զառ
աս գիտեմք զմահն մերձեալ։

✠ Յաղագս ՚ի Քրիստոսի որ ասէ. Խոստովանութեան Պետրոսի ընդէր զխո
ղովուրդն։

Գլուխ ԺԹ.

Ի. Զ. Ի ՅԱՐԱՐ.Չ ԷՆ ԺԱՄԱՆ.
նախին նահապետքն յերկար ապրէին
վասն ուսուցանելոյ զած պաշտու
թիւնն որդւոց իւրեանց. և յորժամ եւս ած
զգրաւոր օրէնս՝ ամենեքեան ՚ի գրոց ուսա
նէին զպատուիրանս ած. և այլ ոչ կարօտէին
ուսուցանելոյ մարդկան։ Վասն այնորիկ հո
գին սբ թելադրեաց քերթողին Դաւթի .հ.
տարի զժամանակ կենաց մարդոյ. և աւելին
.Ձ. եթէ քան զեկսէն տարէն աւել ապրի՝ ցա
ւօք և հեծութբ՝ դառնութբ և տկարութբ
լինի կեանք մարդոյն։ Իսկ Դաւիթ որ զժա
մանակ մարդոյս .հ. տարի եդ՝ նոյնպէս և
ինքն եօթանասուն տարի ապրեցաւ ։Լ. ա
մաց էր որ թագաւորեաց. և .խ. ամ արար թա
գաւորութիւն։ Իսկ Մոս ՚ի ժամանակս ծե
րութե, հրամայեաց իշխանաց եւ դպիրանս
դպիր նախարարացն թողուլ զժողովուրդն
զերկոտասան ազգն իսրայէլի. ՚ի դանայ մինչ
չև ՚ի բերսաբէ. ըստ օրինակին զոր թողեաց

Մովսէս․ յորժամ անցին ընդ ծովն։ Նաեւ զժո
ղովուրդն այսպէս թուեաց ․Ի․ տարեկանէն
մինչեւ ՚ի․Կ․ տարեկանն ՚ի սոյն մէջ կատարեալ
մարդ համարէին, որ կարէր ՚ի պատերազմ ե
լանել. եւ եղեւ ․Զ․ Ճ․ Ռ․ ժողովուրդն Մովսէ
սի։ Նաեւ կամեցաւ իմանալ Դաւիթ եւր ժո
ղովուրդն շատ է թէ Մովսէսի․ վասն որոյ հրա
մայեաց թուել. եւ չար թուեցաւ բանն յաչս
իշխանաց. եւ ասեն ցԴաւիթ՝ ո՛չ է արժան
համար մտանել ՚ի մէջ ժողովրդեան. մի՛ արաս
ցէ զբանդ զայդ արքայ. Աստուած քեզ շատ ժողո
վուրդ է տուեր եւ փառք. եւ յայլ յաւելցէ
Աստուած. ըստ ամենայնի զոր ինչ ցանկացէ անձն քո.
միայն մի՛ արասցես զբանդ զայդ. եւ բարկա
ցաւ Դաւիթ եւ հրամայեաց գնալ եւ թուել.
եւ ապա սկսաւ թուել ․Զ․ ամիս ըստ օրինա
կին Մովսէսի ․Ի․ տարեէն մինչեւ ՚ի վաթսուն
տարեկանն. եւ եղեւ ․Ե․ Ճ․ Ռ․ մինակ ՚ի յուդայի
ազգէն էր. եւ բոլորանդակ ․ԺԳ․ Ճ․ Ռ․ էր ժողո
վուրդն Դաւթի. զատ ՚ի ղեւտական ազգէն
որ ոչ թուեցաւ ․Է․ Ճ․ Ռ․ աւելի էր քան զժո
ղովուրդն Մովսէսի։ Նաեւ առեալ զթիւն հա
մարոյն եւ ՚ի գիր բերեալ, ետուն Դաւթի. եւ
փքացաւ եւ հպարտացաւ Դաւիթ ՚ի միտս իւր եւ
ասէ. լինի թէ ես աւելի մարդ եմ քան զՄով
սէս. որ իմ ժողովուրդս եւ փառքս շատ է
քան զնորայն. եւ չար թուեցաւ բանն յաչս
Աստուծոյ։ Նաեւ առաքեաց Աստուած զԳաթ մարգարէն

առ Դաւիթ: Նա ասէ՝ Երթ եւ ասա ցդա
ւիթ. Դաւիթ՝ ժողովուրդ իմէ, եւ ես եմ
անձեցուցեալ եւ բազմացուցեալ. իսկ իմ ժողո
վրդեանս դու ընդդէմ հպարտացար։ Նորա
այդ ժողովուրդն քեզ հպարտութեան պատճառ
եղև՝ զժողովուրդն առնեմ ՚ի ձեռաց որ քո
սրտի մեծութիւն խափանի. երիս չարիս ածեմ
իվերայ քո .գ. տարի սով. կամ .գ. ամիս սուր
եւ գերութի . կամ .գ. օր մահ. այլ այնչափ
ողորմած եմ քեզ ասէ՝ զոր որ դու խնդրես
յայդ .գ. պատուհասէդ, զայն կուտամ։ Նա
գնացեալ Գաթ մարգարէ առ դաւիթ եւ
ասաց զհրաման ածն. եւ ասաց Գաթ ցդաւիթ
տուր ինձ պատասխանի զի երթայց առ տէր
եւ ասացից նմա. եւ ասէ դաւիթ վտանգ է ինձ
յամ կողմանէ. եւ ոչ կարեմ տալ պատասխանի.
այլ կաց աստ ՚ի գիշերիս առ իս. եւ ես խոկայց
՚ի սրտի իմում. եւ յառաւօտու տաց քեզ պա
տասխանի։ Նա եբաց նմա զտունն. եւ ետ նը
մա՝ ջահ եւ սեղան. եւ զգիշերն ամ անքուն կա
ցեալ դաւիթ խոկաց ՚ի սրտի իւրում եւ ասէ.
եթէ խնդրեմ .գ. ամ սով. ով որ մեծատունք
են ունին ամբարեալ ցորեան եւ անասուն
բազում ապրին. եւ աղքատքն սովամահ կորն
չին. սով ոչ կարեմ խնդրել.
Նա ասաց եթէ խնդրեմ սուր եւ գերու
թիւն նոքա ով որ բերթ եւ ամրոցք ունին
որ ամուր տեղիս են ապրին. եւ այնպիսիքն

որ ՚ի դաշտս բնակեալքն ամենեքեան խսուր
և ՚ի դերութիւն մատնին. և ոչ զայդ կարեմ
խնդրել. և ասաց այլ մանչն ընտրութեան ա՟յ
է. և ժողովն իմն յանցաւորացն. զմանչն կու
խնդրեմ ասաց. Թէպէտ մանչն ա՟յ սուրբ է. դի
ժար է քան զմարդոյ. այլ անկեալց ՚ի ձեռան
ա՟ն. և մի ՚ի ձեռս մարդոյ. զի բազումէ ողոր
մութիւն նորա. Թէպէտ կու բարկանայ ա՟ծ,
բայց ողորմութիւն հետ բարկութեան խառն
է. խնայելով կու տայ զպատուհասն զի ա՟յ
խրատն է. վասն այն պատժէ զմեղաւորսն,
զի դառնան ՚ի մեղաց. և գան յապաշխարու
թիւն. զի ա՟յ խրատն կենաց և բարեաց պատ
ճառ լինի. և երբ մարդն որ ՚ի մարմնաւոր թըշ
նամեաց ձեռն մատնի, երբև զքաղցեալ կա
տաղի գազան ապանանէ զմարդն. Թէ՛պէտ
յետոյ փոշիմանի. այլ ո՛չ կարէ կենդանացու
ցանել. վ՟ն այն աւէ լաւէ ՚ի քո ձեռդ մատ
նած, քան քո ստեղծուածին: Եւ երբև ա
ռաւօտ եղև, կոչեաց Դաւիթ զԳաթ մար
գարէն. և ասաց կամք ա՟ն օրհնեալ եղիցի.
երբ մեզ բարկացեալ է .գ՟. պատուհասէն
անպատճառ զմէկն կու տայ. գոհութիւն իւր
մարդասիրութեան. այնչափ ողորմած է զո՛րն
որ ես խնդրեմ զայն կու տայ. Թող զմանչն տայ
մեզ. ոչ սով տայ և ոչ գերութիւն: Եւ ա
պա դարձաւ Գաթ մարգարէն և տարաւ
զբանն առ ա՟ծ: Եւ կոչեաց դաւիթ զիշ

խաչին եւ պատմեաց նոցա զբանն տն. եւ ամենե-
քեան քուրձ զգեցան եւ նըստան ի վերայ մոխ-
րոյ. եւ սկըսան լալ եւ աղաղակել առ ած եւ թա-
գաւորն սեւ քուրձ զգեցաւ: Ապա իբրեւ լը-
ւաւ զմահ ժողովրդեանն, կոչեաց զատենա-
դպիրսն. եւ կացոյց ի վերայ դրանցն երուսաղե-
մի առ 'ի գրել զմեռեալսն. զի տեսցուք ա-
սաց թէ որչափ մեռանին յայս մէկ օրս. զի
·փ·. օր է հրամանն մահուն. եւ ինքն անկաւ
ի վերայ ծնկացն. եւ եզարկ զթագն 'ի գետինն
երկիրպագ տն. եւ այնպէս ողորմ արտասուելով
աղօթէր: Ապա անկաւ մահ 'ի քաղաքն. եւ կո-
տորէր անողորմ. եւ իբրեւ էանց ·փ·. ժամա-
հուրն ·հ·. մարդ մեռաւ. եւ ներգացան դը-
պիրքն որ գրէին՝ առին զկաղամարն եւ զքար-
տէզն. եւ մտին առ թագաւորն. եւ ընկեցին ա-
ռաջի նր բարկութբ եւ ասեն. թէ մէկ ճար
մի եւ հնարք մի իմացիր. թէ չէ՝ ջնջեցաւ
ազգս. եւ ասեն՝ եթէ մինչեւ յերեկոյն այս-
պէս մեռանին, այլ ոչ ինչ մնայ ազգս մեր. եւ
անցանէ ճրագն խաւարելոյ: Ապա ասէ Պա-
հիթ այլ ի՞նչ ճար կայ քան զած. եւ ելին ա-
մենեքեան 'ի տանէն ողբալով. եւ իբրեւ եկն
Պահիթ 'ի մէջ քաղաքին՝ ետես այր մի Յու-
նա անուն զթագաւորն. եւ ընթացեալ ընդ-
յառաջ երկիրպագ նմա. ասէ թագաւորն
ցՅունա տուր զեզինա քո, զի արարից ողջա-
կէզ եւ պատարագ ածն տն. լինի թէ մեզ ողորմի

և զայս մահատարածամն բառնայ ՚ի միջանէ: Ասէ Որռնա եզինք քեզ ողջակէզ. կամ՝ լուծն՝ փայտ ողջակիզին. և օրայն այրեցին: Եւ ասէ արքայն Դաւիթ ոչ այդպէս. այլ առ զգինն եզանց քոց. զի ընդունելի լիցի տ̃յ. և ետ նմա .Ձ. սիկղ արծաթոյ. ոմանք ա-սեն .Ո̃. դահեկան է. և գնեաց զեզինքն և զկալն կահէուքն բոլոր. և կանգնեաց զսեղան ՚ի մէջ կալին. և կոչեաց զքահանայսն. և զե-նին զպատարագն. և եդ զփայտն ողջակիզին և զմիս զոհարակին իւր և իբրև պատրաստե-ցաւ, եհաս օրն ՚ի վեց ժամն. և նայեցաւ Դա-ւիթ ՚ի վեր. և ետես զհրեշտակն զի կայր բարձր իւր քաղաքին. և ունէր սուսեր մերկ յաջոյ ձեռին. եզարկ զԹադն ՚ի գետինն և անկաւ առաջի սեղանոյն իւր երեսաց իւ-րոց. աղաղակեաց առ Տ̃ր և ասէ, հովիւս եմ մեղայ. խաշինքս զի՞նչ արարին. սուր քո յիս և ՚ի տուն հօր իմոյ. և եկաց Դաւիթ լալեն մեծ առաջի տ̃յ. և նոյն ժամայն ողորմեցաւ ա̃ծ և հաշտեցաւ ընդ ժողովրդեանն: Այս պէս և զտ̃րն .Գ̃. ժամն տարին ՚ի գողգոթա. և ՚ի.Զ̃. ժամն խաչեցաւ և պատարագեցաւ իւր խաչին. և իբր անմեղ զենմամբն հաշտե-ցոյց զհայրն ընդ արարածս. և եբարձ զմահ որդւոցս ադամայ: Վասն այն ասէ Մարկոս աւետարանիչն, էր ժամ իբրև երրորդ. և հանէին զնա ՚ի խաչ: Եւ Ներսէս ասէ. ե-

լեր յերրորդ ժամ 'ի խաչին վն ադամայ նա
խաստեղծին: Ը 'ի ·գ· ժամն կազմեցին և
պատրաստեցին. և ·զ· ժամն ապա խաչեցաւ.
և այն որ ասաց դաւիթ թէ՝ դուն 'ի քո
միջդ արդար դատաստան արարեր, վն
այն ողորմեցայ քեզ: Այսպէս պարտ է ամ
մարդոյ յիւր միջքն դատաստան առնել.
զիւր մեղքն և զանօրէնութին ինքն իմանալ
և ինքն իւր անձին ատոխ և դատախազ լինել.
և ինքն պարտ է իւր մեղացն համար զինքն
տուգանել և տանջել և պատժել. և ապաշխա
րութբ և ողորմութբ և արտասուօք զհոգին
'ի մեղաց ազատել: Իմաստուն մարդն ինքն
պիտի զիւր մեղքն և զպակասութին իմանայ.
և զինքն հեռացուցանէ 'ի մեղաց. և հանա
պազ խոնարհ մնայ. արտաքեկ և միջակոտր.
և 'ի խորոց սրտէ հառաչելով լայ զիւր մեղքն
և յանձն առնու զհնազանդութե զլուծն.
և ապաշխարութբ պիտի զիւր մեղաց ցաւն
իմանայ. և գնայ առ իմաստուն բժշկի մօտ
որ է Վարդապետն և Քահանայ. և առնու ըղ
դաւն դեղն ապաշխարութե. և ցաւօք և կսկծ
մամբ հանէ զմեղաց ցաւն յանձնէն. և ապա
խաղաղի. և հանգիստ առնու. այսպէս պարտ է
ամ մարդոյ յիւր միջքն արդար դատաստան
առնել. և ամ մարդ զիւր գործսն քննել. ըղ
փուշն մեղաց քաղել. զի ցորենն ամբողջ մնա
ցէ և բարի գործով պատրաստ մնալ աւուր

մահուան. եւ ոչ է պարտ զապաշխարութիւն
'ի ժամ ծերութեան ձգել. ո՞վ ասէ սիրայք մի
մնալ 'ի ժամ մահուան արդարանալ. եթէ 'ի
ժամ մահուան դառնայ մարդ 'ի մեղաց ազա
տի. այլ ընդ արդարս ոչ պսակի. 'ի ժամ ամա
ռանն ջանա՛ վաստակել զբարիս՝ որ է ժամա
նակ երկրագործութեան. եւ մեք ընկենուլ զժա
մանակ ապաշխարութեան 'ի ծերութեան. որ է
ձմեռն անպտուղ եւ անբարի ժամանակ:
Աղաչեմ զձեզ եղբարք՝ զձեր հոգւոյ Տէրն
տեսէ՛ք, կարդալով զայս սբ գրեանքս. որ ոք
վս մեր գրեալեն յառաջագոյն. զոր եւ մեք
տեսանելով յուսամք առ ողորմածն ած, եւ
մեղայ գոչեմք առ նա 'ի խորոց սրտէ. եւ նա
թողութիւն շնորհեսցէ մեզ եւ խեւր օրհնեալ տե
սոյն արժանի արասցէ Ամէն:

Նորին Գրիգորի Եպիսկոպոսի ասացեալ յաղագս աշ. կատարածին
Կրօնաւորի Խոյախէփոյ Հարցման

Գլուխ: ՃՂԳ:

ՅՕՐՈՒՆ ՑԵՂԻ ԵՒ ԱՐՔԱՅԱԶՆ
կոյան: Պետք: փառաւորեալ եւ միշտ
կոյան ածածին Մարիամ, 'ի թագաւո
րական ցեղէն էր դաւթի. ըստ որում երդ
ման տր ճշմարտութեն. եւ ոչ ստեաց. 'ի պտղո
ղոյ որովայնէ քումմէ նստուցից յաթոռ քու:
Եւ դարձեալ թէ՝ զաւակ նր յաւիտեան
կայցէ. եւ աթոռ նր որ արեգակն առաջի
իմ. եւ որպ լուսին զի հաստատեալ է յերկինս:

Եւ Եսայի ասէ՝ ելցէ գաւազանն յեսսեայ
եւ ծաղիկ յարմատոյ նր̃։ Եւ Յովսէփ արդարն
էր՝ ի թագաւորական ցեղէն. ոչ պատմէ ծն̃
ախօսն Մատթէոս եւ Ղուկաս։ Մատթէոս՝ ի
սողոմոնէ իջանէ առ յովսէփ։ եւ Ղուկաս՝ ի
նաթանայ ածէ զազգաբանութիւն առ կոյսն
ելանէ։ Զի ոչ էր օրէն զկանայս յազգահա
մարն թուել։ Այլ եւ օրէն էր նորա, որ իւրա
քանչիւր ոք յազգէ իւրմէ առնոյր իւր կին.
եւ ոչ յօտարէ։ Եւ զյովսէփ՝ արդար վկայէ
աւետարանն։ Այլ ոչ էր արդար թէ անցա
նէր զօրինօքն ա̃յ։ Այլ եւ քահանայքն ոչ ան
ցանէին զօրինօքն. եւ ոչ յօտար ազգէ առյին
նմա կին. ապա յայտ է թէ՝ ըստ մարմնոյ կոյսն
էր յազգէն յովսէփայ։ Եւ Յովսէփ էր որ
դի դաւթի որպէս ցուցաւ։ Եւ այսպէս է
յայտնի պատմութիւն։ Զի՝ ի՛ ցեղէն նաթա
նայ որդւոյ դաւթի այր մի անուն ղեւի ծը
նաւ երկու որդիս զմելքի եւ զպանթեր. եւ
ծնաւ Մելքի զհեղի. եւ հեղի զյակոբ. եւ Յա
կոբ զՅովսէփ։ Եւ Պանթեր ծնաւ զվերա
պանթերն. եւ վերապանթեր ծնաւ զյովակիմ.
եւ յովակիմ ծնաւ զՄարիամ կոյս։ Դարձեալ
վս̃ յովսէփայ գիտելի է։ Զի՝ ի՛ ցեղէն Սո
ղոմոնի որդւոյն դաւթի մատթան առեալ
կին ծնաւ զՅակոբ։ Եւ յետ մահուանն մատ
թանայ մելքի՝ ի ցեղէն նաթանայ որ որդի էր
Ղեւեայ եղբայր պանթերայ առեալ զնոյն կին

մատթանայ. և ծնաւ զհելի: Եւ յակոբ և հե-
լի եղբարքէին ՚ի միոյ մօրէ. Յակոբ ՚ի ցե-
ղէն սողոմոնի որդի մատթանայ. և Հելի ՚ի ցե-
ղէն նաթանայ որդի մելքեայ: Եւ հելի մե-
ռաւ անորդի. որ էր յազգէն նաթանայ.
իսկ Յակոբ որ էր յազգէն սողոմոնի՝ առեալ
զկին եղբօրն ըստ օրինացն՝ զի յարուսցէ
զաւակ եղբօրն և ծնաւ զյովսէփ.

Եւ այսպէս բնութե̃ որդի էր յակոբայ. և
՚ի ցեղէն սողոմոնի. և օրինօք որդի էր հելի
որ ՚ի նաթանայ: Եւ այսպէս .է̃. եղբօր
թոռունքէին. Մարիամ կոյսն և Յովսէփ ՚ի
հարց կողմանէ: Մելքեայ և պանթերի ՚ի
նաթանայ: Իսկ ՚ի մօրէ կողմանէ՝ Մարիամ
էր ՚ի քահանայից ցեղէ երիս դստերս.
Առաջինն մարիամ. երկրորդն սովլէ. եր-
րորդն աննա: Մարիամ ամուսնացաւ ՚ի բեթ-
ղեհէմ և ծնաւ զսողոմէ զմանկաբարձ յ̃ի.
ո՞չ որ մայր եղև որդւոյն զեբեդեայ. զի այն
սողոմէ դուստր է յովսեփայ ա̃ծահօրն. և
սովլէ ՚ի նոյն բեթղեհէմ ծնաւ զեղիսաբեթ
մայր մկրտչին. իսկ աննա ամուսնացաւ ՚ի գա-
լիլեայ ընդ յովակիմայ. և ծնաւ զա̃ծածինն
մարիամ՝ ՚ի պրոպատիկէ ՚ի տուննն յովակիմայ.
և անունի տարեալ եղև ՚ի տաճարն ա̃ծ: Եւ
այսպէս սողոմէ. և եղիսաբեթ. և մարիամ
ա̃ծածինն .գ̃. քերց դստերքէին: Իսկ յո-
վակիմ արդարն էր ՚ի թագաւորական ցեղէն

յուդայ ․Լ․Է․ երորդ ՚ի թուանց նաթանայ
յորդւոյն դաւթի. փառաւոր եւ մեծապատուն
յոյժ։ Որպէս զի լիցի կոյսն մարիամ յազգէ
հարց ՚ի թագաւորական ցեղէն. եւ յազգէ
մօր ՚ի քահանայից։ Զի թէպէտ փակեալ
էր օրէնքն խառնեալ երկուց ցեղիցն ընդ
միմեանս։ Սակայն զեղացուցն ոչ գոյր ժա
ռանգութի եւ բաժին, խառնէին երբեմն
ընդ թագաւորական ազգն յուդայ. որպ Ա
հարօն ունէր զդուստրն ամինադաբայ, նաա
ասոնի իշխան յուդայ։ Նմլ եւ յովդէդեայ քա
հանայապետ զդուստր յովրամ արքայի ընդ
քուր ոքոզիայ։ Նյապէս եւ յովակիմ ՚ի յու
դայէ էր եւ ունէր զաննա դուստր նաթա
նայ ՚ի ցեղէն ղեւեայ. վս այն ազգական մա
րիամու զեղիսաբէթ ասէր գաբրիէլ։ Եւ վս
այն խառնեցան ․Բ․ ցեղքն. զի ծնեալն ՚ի նո
ցանէ ․Քս ըստ մարմնոյ թագաւոր եւ քահա
նայ լինէր. ըստ այնմ դու ես քահանայ յա
ւիտեան. եւ թէ տայ նմա զաթոռս թագաւո
րութե տանն դաւթի։ Զի ՚ի օծեալք որքա
էին քահանայք եւ թագաւորք յորոց եւ քա
զումք մարգարէք եղեն։ Եւ սոյնպէս եւ ․Քս
եղեւ երկուց զարմիցն մի քահանայ եւ թագա
ւոր ճշմարիտ եւ մշտնջենաւոր քահանայ եւ
թագաւոր յաւիտեան։ Նա է աթոռն որ
պէս արեգակն եւ լուսին հաստատեալ յեր
կինս կացեալ եւ մնացեալ։

Հարց։ Մ̃է՞ր խօսեցեալ եղև առն կուսին նր̃.
Պատ. Մ̃ի բազում պատճառաւ։ Նախ՝ զի կուսին
մ̃ր նշանակեսցէ զմ̃ր եկեղեցի խօսեցեալ
ք̃ի որ նմանապէս է կոյս։ Երկրորդ՝ զի յովսէ-
փու ցուցանիցէ աղքատութիւն կուսին. որ
արամբն չարադրիւր։ Երրորդ՝ զի յովսեփ վը-
կայ լիցի ողջախոհութեան կուսին։ Չորրորդ՝ զի
մի՛ փառաւորհամբաւ լիցի ընդ ծնանիլն իբր ոչ
ունելով այր։ Հինգերորդ՝ զի մի՛ դատապար-
տեսցի իբր անժուժկալ. զի էր ՚ի քահանայ-
ական ցեղէն։ Այլ այսպիսիքս այրեալ լինէ-
ին. իսկ այլ շնացողք քարկոծէին։ Վեցերորդ՝
զի կոյսն լինէր սփոփեալ և կազդուրեալ ըն
պատսպարութեան առնն։ Եօթներորդ՝ զի ծը-
նունդն ք̃ի թաքուցեալ լինի ՚ի սատանայէ։
Ութներորդ՝ զի մի՛ հրէայքն համարելով
զք̃ս ոչ ունելով օրինաւոր ծնունդ՝ երե-
ւեցին իրաւն ՚ի հալածելն զնա։ Իններորդ՝
զի մի՛ երևեսցի տեղի հակառակ օրինաւո-
րացն. որ գովէր զպսակն։ Տասներորդ՝ որպ̃
՚ի դրախտին մերկ էին ադամ և եւա և ոչ ամա-
չէին. զի անմեղք էին։ Նոյնպէս յովսէփ և
մարիամ մերկ էին ՚ի մեղաց և առանց խղճի ա-
մօթոյ։ Այլ գիտելի է զի ՚ի տաճարն .ժդ. ա-
մաց էր. և առ յովսէփայ խօսմանն .գ. ամիս
եկաց. և հրեշտակն աւետեաց. և ՚ի ք̃ն համ-
բարձմանն .իը̃. ամաց էր. և յորժամ փոխե-
ցաւ առ ք̃ս .կ. ամաց էր։ Ո՛վ արարուհի կոյս

տօնածին բարեխօսեալ առ միածին քո որդին
՚ի ժամ միւսանգամ գալստեան նորին ։

Նորին Գրիգորի փոխեալ հեղինակի ասացեալ Սրբոյ ալեա-
ըեան հասինս

Գլուխ ՃՁԴ.

# Ի՞ՆՉ Է ՍՐԲՈՒԹԵԱՆ

սին որ ասէ՝ սուրբ է տաճար քո սքան-
չելի։ Պատ. Սրբութիւն ՚ի չորս բա-
ժանի։ Նախ սրբութիւն հաստատուն. որպէս շնորհք
մկրտութեան և խոստովանութեան. զի որք յան-
ցանեն ընդ նա սրբին։ Երկրորդ՝ շնորհք է
ղականն. որպէս սրբեալքն յարգանդէ Երեմիաս,
և Յովհաննէս մկրտիչ. որպէս ասէ գիրն՝ յար-
գանդէ սրբեցի զքեզ։ Երրորդ, շնորհք
կուսութեան որ ևս է յատկական եղանակ.
որպէս սրբոյ կուսին։ Չորրորդ, հրեշտակական
սրբութիւն. որ է երկնային և հաստատագոյն
և անդրդուելի սրբութիւն։ Հայրս Սուրբ զանա-
զանէին ասքա։ Պատ. Զ անապատին ՚նք ներգոր-
ծութեամբ խորհրդոց։ Առաջին որ է հաստա-
տուն սրբութիւն մկրտութեան, մերժէ զմեղս և
տայ զշնորհս։ Սակայն արմատ մեղաց, որ է
ցանկութիւն, և դիւրահաւանութիւն ՚ի մեղանչելն
մնայ. որպէս յայտ է ՚ի մկրտեալս որք կարեն մե-
ղանչել։ Երկրորդ՝ սրբութիւն արգանդին մեր-
ժէ զմեղս և հերքէ զդիւրահաւանութիւն մեղան-
չելոյն մահու չափ. որպէս Երեմիային և Յովհան-
նուն։ Երրորդ՝ սրբութիւն յատկական. որպէս

որբոյ կուսին. բառնայ զսկզբնական մեղս և
զարմատն. և զդիւթ հասուէ մեղանչելոյն մա
հու չափ և ներբելաքէ ու։ Եւ գիտելի է թէ
պէտ մեծագոյն է ըստ ինքեան սրբութի որ
գանդին, քան զսրբութի մկրտութեն. զի որ
պահորէ զկնիքն. այլև բանայ զդուռն ար
քայութեան. այլև պատրաստէ զմարդն առ
'ի խորհուրդս ամե։ Զի որ ոչ ներգործեն այլ
երկրորդին եղական շնորհքն։ Իսկ չորրորդ սր
բութի լիակատար շնորհաց 'ի վերին դասուն
որ է հրեշտակային, գերազանցէ զամենե
քումբք։ Եւ ունի երիս ներգործութիս.
'Նախ` անբաժանելի միաւորութի, բանակա
նին առ ած։ Երկրորդ բոլորովին նմանութի
ըստորին մասանց բանականին։ Երրորդ հա
մակ հանապազորդ ներգործական դարձումն
բոլոր մարդոյն առ ած. որով մարդն ածայ
ին քաղցրութե զմայլի. որպէս հրեշտակք
'ի բոլոր սրտէ, յամ անձնէ, և յամ զօրութէ
մինչ ներգործաբար դիմեն առ ած. և յիւ
րաքանչիւրան ծառայութի 'ի նմա ած։
Արդ` ունէր ոք կոյսն զհասարակ շնորհացն
մկրտութի։ Զի 'ի խորհուրդ մկրտութե 'ի
յառնուլ ջուր` հոգին սբ և զօրութի բարձ
րելոյն. և ողջոյն հօրն 'ի ձեռն հրեշտակին.
որ հերքէր զմեղս ըստ մկրտութեն։ Սա ու
նէր և զշնորհս սրբութե յարգանդի. զի յո
րովայնէ սրբեցաւ յարգանդէ։ Զի որմէ ա

սի յերգս արար տէր զքեզ. և հաստատեաց
պատրաստեաց զքեզ զյարգանդէ գեղեցիկդ
՚ի կանայս: Նաև ունէր շնորհք արգելք ՚ի
մեղաց մահու չափ և ներելապէս. որպէս
Յովհաննու և Երեմիայի: Նաև իմ՟ մյնը՝
ունէր և զերրորդն սրբութեան. որ կուսու
թե խորոյ էր յատկական. զընջումն ՚ի բունսկզբ
նականէն և յարմատոյ մեղաց: Նաև հաստա
տէ զայս բան ահեստարանին որ ասէ՝ հո
գին սուրբ եկեսցէ ՚ի քեզ: Զի գալ հո
գւոյն սրբոյ՝ պատճառ էր կրկին ներգոր
ծութե. այսինքն սրբութե արմատոյ մեղաց.
և պտղաբերութե կուսածին զահակին ծը
նանիլ և կոյս մնալ յետ ծննդեանն: Զի ու
նի մայրական ինդութիւն հանդերձ կու
սութե պատուով: Իսկ զչորրորդ սրբութին
որ է միաւորութե բանականին առ ա͞ծ. և
միշտ ներգործա͞ղս դիմել առ ա͞ծ ո͞ղ հրեշ
տակք. զոր ընկալաւ ա͞ծածին կոյսն ՚ի յղա
նալն զորդին ա͞յ: Նաև յինն ամիս ՚ի տաղաւար
արգանդի տարեալ զա͞ծ բանն: Նաև ըզմայ
լեաց ՚ի բոլոր սրտէ և յա͞մ անձնէ և ՚ի զօրու
թէ միշտ գործապէս դիմեալ առ ա͞ծ հաս
տատեցաւ: Սա և գերազանցեալ քան ըզ
հրեշտակս այսու: Նախ զի նոքա ՚ի գոյացա
կան փառսն ոչ աճիլ կարեն և ոչ նուազիլ:
իսկ երանուհի կոյսն կարէր յառաջանալ յար
դիւն և ոչ նուազիլ: Երկրորդ՝ զի հրեշտակք

’ի հարկէ բնութե՟ ունէին զկուսութի. իսկ
Աստուածածինն զայն պահեաց մաքրութբ մարմնոյ
զկուսութի ողջախոհուե: Երրորդ, որպէս
գերազանցէ քան զամ պատիւ մայր այ լինել.
այսպէս գերազանցէ քան զամ շնորհք հե
ղեալ ՚ի Աստուածածինն. այս է գերագոյն շը
նորհք. որ պատրաստեաց զնոյն առ մայրու
թի այ: Այսմ յայտ է որպիսութի սրբութե
կուսին:

Ո՛վ գերագոյն եւ գեր անընդման կոյս Մարի
ամ, անհամեմատ եւ ըղձանչելի կոյս, անբիծ
եւ անխախտ կոյս՝ նախ քան զծնունդն, և ՚ի
ծննդեան. եւ յետ ծննդեան. որ ոչ գտաւ
յայլ կուսանսն. զի որք կոյս լինին՝ ոչ են
մայր. եւ որք մայր են՝ ոչ են կոյս. իսկ դու
կոյս եւ մայր, մայր եւ կոյս. կոյս անքատակ եւ
մայր այ: Ընկալնիմք ուրեմն առաջի քոյոյ
մայրութե եւ կուսութե, բարեխօսեա անդա
դար մաղթանօք առ ծնեալն ՚ի քէն միածին
որդին, առնել զմեզ անշաղախս ՚ի մեղաց, եւ
մայր բարեգործութե. որով արժանասցուք
տեսութե որդւոյ քոյ միածնի. Ամէն:

✠ Ասն ամենօրհնեայ հրեշտակին, նորին Գրիգորի Եռամեծի
հայրապետին:

Գլուխ: ՃԽԹ:

ԱՌԱՔԵՑԱՒ ՀՐԵՇՏԱԿՆ ԳԱԲ
րիէլ աւետեաց կուսին, եւ ոչ մարդ:
Ղուկ: Ա. Ի. պատճառն: Նախ՝ զի

ա̃ծ էր որ ծնանէր, պա՛րտ էր զի և ածեալ
ծօրն հրեշտակ ա̃յ լինէր։ Երկրորդ՝ վ̃ն ազ
գականութեան կուսին առաքեցաւ կոյսն
առ կոյսն շնորհօք։ Երրորդ՝ զի նորոգումն
որ լինելոց էր ծննդեամբ կուսին՝ ոչ միայն
մարդկան էր, այլ և հրեշտակաց. պարտ էր
հրեշտակին աւետաւորել կուսին ։
Չորրորդ՝ զի անկանական լիցի ամենևին և
անկարծ ՚ի չարաց՝ զատուցեալ տ̃ր կոյսն ՚ի
ձեռն հրեշտակին աւետաբանել զյղութի̃,
և ո՛չ ՚ի ձեռն մարդոյ։ Հինգերորդ, զի դեղն
պատասխանէ՛ հիւանդութեան. զի որպէս սա
տանայ օձին խօսեցաւ առ կոյսն Եւա, այս
պէս տ̃րն մեր հրեշտակաւն առ կոյսն մարի
ամ. եղութի̃ առ եղութիւն. ծառայ առ ծա
ռայ. բան առ բան ։ Հայր։
Ո՞ւնչ է ողջոյն որ ասէ ուրախ լեր բերկ
րեալ տ̃ր ընդ քեզ։ Պ̃տս Ողջոյն ո՛յս է հան
դերձ բերողիւն և առաքողիւն և կուսիւն,
որ ցուցանէ զատան գերազանցութի̃ պատ
ծոյ կուսին։ Նախ զի ա̃ծ էր ողջունատուքն՝
խօսէր զկոյսն ՚ի հարանութի̃ կուսութե̃ կու
սաբեր լինիլ պտղովն։ Երկրորդ, զի հրեշտակ
էր ողջունաբերն, կոյս և անապականն բնութի̃։
Երրորդ, զի կոյս էր ողջոյնընկալն և գերա
զանց քան զա̃մ կոյս, որ ցուցաւ։ Չորրորդ՝
զի ասելն ուրախ լեր՝ ՚ի յայլ թարգմանու՝ է
ողջ. ցուցանէ զողջութի̃ և զանմեղութիւն

կուսին։ Հինգերորդ՝ ցուցանէ զշնորհն որ ասէ լի՛ շնորհօք, ըստ այլ թարգմանչաց։ Վեցերորդ զգերազանցութիւն տէր ընդ քեզ։ Եօթներորդ, ուրախ լեր, ընդ դէմ տրտմութեան որ առաջացաւ և այժ՝ տրտմութբ ծնցիս որդի. և ինքն ասէր՝ ցնծացաւ հոգի իմ յած փրկիչ իմ։ Ութներորդ՝ զի ասէր տէր ընդ քեզ. զբառս զայս ընդունելութ դնէ ընդ քեզ. այսինքն տէրն յետ ծննդեան ընդ քեզ է յաճխտեանս յաճախտենից. որպէս ասէր ընդ աշակերտսն՝ ես ընդ ձեզ եմ զամ աւուրս։ Իններորդ՝ զի ոչ մարգարէիւ յայտնեաց կուսին, որ էր աղօտ գիտութի համեմատել ընդ հրեշտակին. այլ ՚ի ձեռն հրեշտակապետին վկայեալ և աճեցեալ զհաւատս ՚ի գիտութի։ Տասներորդ, այն քան գերազանցեց պատիւ կուսին. զի այն է զոր մարգարէք գուշակեցին զլինելոյն։ Իսկ սմա ընդ խօսից հրեշտակին եղև կատարումն։ Հարցս

Որքանէ ողջոյն։ Պատ։ Ողջոյն ըստ աշխարհի տրամատի ՚ի է, և սա զուգի ամենեցունց։ Նախ ասի ողջոյն ըղձական առողջութեան. ըստ այնմ ողջ լեր արքայ։ Երկրորդ ըղձական շնորհաց՝ ըստ առաքելոյ. շնորհք ընդ ձեզ։ Երրորդ ըղձական խնդութեան՝ որպէս ՚ի տուբիթայն խնդութի քեզ։ Չորրորդ ըղձական օրհնութ, որպէս ՚ի հաւատութն ասէ. օրհնեսցէ զքեզ տէր։

Հինգերորդ տէրունական խաղաղութիւն. ըստ այնմ, խաղաղութիւն ընդ ձեզ ես եմ մի՛ երկնչիք։ Իսկ ողջոյնս այս ունի համազուգել ընդ ամենեսին. քանզի պարունակէ զողջութիւնն ընդ ասելն, ողջոյն. եւ զշնորհս յասելն, լի՛ շնորհօք. եւ զխնդութիւնն, ուրախ լեր բերկրեալդ. եւ զխաղաղութիւն՝ Տէր ընդ ձեզ։ Իսկ զօրհնելն ասաց Եղիսաբեթ օրհնեալ ես դու ՚ի կանայս։ Պարձեալ ողջոյնս այս ունի նշանակութիւն գերազանցութեան կուսին. այսինքն, բնութե, շնորհաց, եւ փառաց։ բնութեան՝ յասելն, օրհնեալ ես դու ՚ի կանայս. որպէս եւ ինքն ասէր յայսմ հետէ երանեսցեն ինձ ամենայն ազգ։

Հարց։

Զինչ յայտնէ. պատգամ հրեշտակին։

Պատ. Վեց իրս յայտնէ մեզ աստանօր պատգամ հրեշտակապետին։ Նախ թէ որպէս պատճովեստ զողջոյն կուսին ասելով՝ ուրախ լեր լի շնորհօք։ Երկրորդ, թէ որպէս գերազանց գովեաց զնա ասելով՝ Տէր ընդ քեզ օրհնեալդ ՚ի կանայս։ Երրորդ՝ թէ որպէս քաղցրութեամբ զօրացոյց զնա ասելով՝ մի՛ երկնչիր Մարիամ։ Չորրորդ թէ որպէս զգուշութեամբ կատարեաց զպատգամն ասելով՝ ահա յղասցիս եւ ծնցիս որդի։ Հինգերորդ թէ, որպէս գեղեցկաբար մեկնեաց զեղանակ յղութեանն ասելով՝ հո

գին սբ եկեսցէ ՚ի քեզ։ Վեցերորդ, եղ-
զարմատ հաւատոյ կաթուղիկէ եկեղեցւոյ
ատելով, որ ծնանելոցն է ՚ի քէն սբ է եւ որ-
դի այ կոչեսցի։

✠ Նորին դարձեալ, վասն .է. բանից նորին հարցումն

Ո՞ր ինչ ցուցանեն պատասխանիք կուսին։
Պատ. Երկու երեւի ՚ի սուրբ գիրս երկխօսու-
թիւն. մինն ՚ի մէջ եւայի եւ բանսարկուին ու-
րով մուծաւ մահ ՚ի ներքս։ եւ միւսն ՚ի մէջ մա-
րիամու եւ հրեշտակին. յորմէ եղեւ կեանք։
Արդ սրբուհի կոյսն ՚ի յողջոյն հրեշտակա-
պետին .գ. իրս արար։ Նախ ընտրութի. զի
խորհէր թէ որպիսի ինչ իցէ ողջոյնս այս։
Երկրորդ՝ զհարցումն. զի խնդրէր թէ որ-
պէս լինիցի ինձ այդ։ Երրորդ՝ զհաճա-
նումն. զի պատասխանեաց թէ ահաւասիկ
կամ աղախին տեառն։ Արդ եւ ծանիր՝ զի
յընտրողութիւնն ոչ էր վաղ վաղուկ որպէս
եւա. եւ ՚ի հարցանելն յամր՝ ոչ էր երկբայ որ-
պէս զաքարիա. եւ ոչ ՚ի հաճանելն յամր որ-
պէս սառա։ Նոյնպէս պարտ է ամ մարդոյ
յորժամ լսիցէ զբանն՝ նախ խորհիլ եւ հար-
ցանել եւ ապա հաճանիլ։ Խորհիլն՝ զի ըն-
տրեսցէ զճշմարիտն. եւ հարցանելն զորպիսու-
թիւնն։ Իսկ հաճանիլ՝ այս է հնազանդիլ եւ
ուսուցանել։ Արդ թէ առանց ընտրողու-
թեան ամ բանի հաճանին, կորիցեն որպէս
եւա։ Եւ թէ ամենեւին անհաճան եւ յամր լինին

պատժին որպէս զաքարիա. այլ միջինն ուղիղ
է և բարի: Իսկ հաւանական պատասխանիք
սրբուհւոյ կուսին մարիամու են .է. բանք.
որք ցուցանեն զչորեսին առաքինութիս
նորա: զի ասելն ահաւասիկ՝ ցուցանէ զյօ
ժարական հնազանդութիւնն: աղախին տն̄՝
բացատրէ զկատարեալ խոնարհութիւնն. լի
նիցի ինձ, յայտնէ զբորբոքեալ սէրն. ըստ
բանի քում, նշանակէ զկատարեալ հաւատն:
Այլ և ծանիր, զի .է. բանս լինէ սուրբ
գիրք զոր խօսեցաւ սրբուհի կոյսն. առա
ջին՝ որ ասաց որպէս լինիցի ինձ այդ, զի
զայր ոչ գիտեմ: Երկրորդ՝ ահաւասիկ կամ
աղախին տեառն: Երրորդ՝ յորժամ ետ ող
ջոյն եղիսաբեթի: Չորրորդ՝ մեծացուսցէ
անձն իմ զտ̄ր: Հինգերորդ՝ որդեակ զինչ
գործեցեր մեզ զայդ: Վեցերորդ՝ գինի ոչ
ունին: Եօթներորդ՝ զինչ ասասցէ ձեզ՝ ա-
րասջիք: Առաջինն նշանակէ զմեծ խոհեմու-
թի̄ն: Երկրորդն զխորագոյն խոնարհութի̄ն:
Երրորդն՝ զքաղցր մարդասիրութիւնն:
Չորրորդն՝ զգոհացողական աղօթքն:
Հինգերորդն՝ զմեծագոյն սէրն:
Վեցերորդն՝ զընդարձակ գութն:
Եօթներորդն՝ զօգտակար ուսմանն:
Ահա տես զի տմ̄ բանք կուսին կարճ. այլ ա-
ղօթքն և գովութի̄քն երկար: զոր պարտէ
և մեզ զնոյն առնել, մանաւանդ կանանց:

Գլուխ։ ՃՂԹ ։

# ՎԱՍՆ Է՞Ր ԱՍԵՄՔ ԱՍՏՈՒԱԾԱԾԻՆ

զկոյսն։ Պատ․ Բազում պատճառաւ եկեղեցի մեր խոստովանի Աստուածածին ըզսուրբ կոյսն։ Նախ զի ծնեալն ի նմանէ Աստուած է։ արդ եթէ ծնեալն Աստուած է՝ ուրեմն և ծնօղն Աստուածածին է. և անդրադարձեալ։ Այլ՝ որ գիրք մեր վկայէ ամենաճշմարիտ հաւատոյ բանն դաւանէ Աստուած խոստովանիլ զծնեալն ի կուսէն. ապա ուրեմն և ծնօղն Աստուածածին։ Երկրորդ՝ մարգարէն Եսայի ասէ կոյսն յղասցի և ծնցի որդի զէմմանուէլն։ Իսկ Էմմանուէլն թարգմանի մարդացեալ Աստուած. ապա ուրեմն կոյսն որ ծնաւ զէմմանուէլն, մայր է Աստուծոյ մարդացելոյ։ Երրորդ, հրեշտակապետն աւետեաց կուսին թէ որ ծնանելոցն է ի քէն սուրբ է և որդի Աստուծոյ է. ուրեմն և ծնօղն Աստուածածին է ճշմարտապէս։ Չորրորդ, առաքեալն ասէ գաղատացւոց. առաքեաց Աստուած զորդին իւր որ եղև ի կնոջէ. արդ եթէ որդին Աստուծոյ եղեալ է կնոջ որդի, ուրեմն կոյսն սուրբ՝ մայր է որդւոյն Աստուծոյ և Աստուածածին։ Նոյնպէս է որ ասէ բանն մարմին եղև, յայտ է թէ ի կնոջէ, ուրեմն մայր բանին մարմնացելոյ։ Հինգերորդ՝ որդի կնոջ ասի ոք որ լինի մարմին ի նմանէ թէ պէտ ի հոգւոյն Աստուծոյ է. նոյնպէս և որդին Աստուծոյ որդի է կուսին որ էառ մարմին ի նմանէ թէ

պէս ա͞ծութ͞ին 'ի հօրէ՛ է. ապա ուրեմն ա͞ծ-
ածին է կոյսն: Վեցերորդ՝ մայր մարդոյ ա-
սի կինն որ ծնաւ զմանուկ, թէպէտ հոգին
ոչ է 'ի մօրէն. այլ վ͞ն միաւորեալ մարմնոյն
մարդածին կոչի. նոյնպէս և կոյսն ս͞բ՝
ա͞ծածին է վ͞ն ա͞ծացեալ մարմնոյն: Եօթնե-
րորդ՝ ասաց Եղիսաբէթ՝ և ուստի՞ է ինձ այս
զի եկեսցէ մայր տ͞ն իմոյ առ իս. և նոյն է
տ͞րն և ա͞ծն գոլ. ուրեմն կոյսն ս͞բ մայր է տ͞ն
և ա͞յ: Ութներորդ ասաց հրեշտակն 'ի ծնըն-
դեանն. ծնաւ ձեզ այսօր փրկիչ որ է օծեալ
տ͞ր. արդ ծնեալն տ͞ր՝ ծնեալէ 'ի կուսէն. ա-
պա ուրեմն կոյսն՝ տիրամայր է և ա͞ծածին:
Իններորդ՝ ասաց աբրահամու թէ 'ի զաւա-
կի քում օրհնեսցին ա͞մ ազգ. և առաքեալն
ցուցանէ թէ ք͞ս է զաւակն այն. ո͞ղ 'ի հռ-
օմայեցւոցն ասէ թէ, ք͞ս է 'ի հարցն ըստ
մարմնոյ որ է վ͞ր ամենեցունց ա͞ծ: այլ ո՛րդ՝
ք͞ս ո՛չ է որդի աբրահամու և ո՛չ 'ի հարցն է
թէ ոչ է որդի կուսին. ուրեմն ըստ մարմնոյ
ա͞ծ է ք͞ս, և ա͞ծածին է ծնօղն և մայր ըստ
մարմնոյն ք͞սի:

Տասներորդ, յայտ է 'ի քանչելեաց ծնըն-
դեանն. զի էր անսերմն յղացումն, անապա-
կան ծնունդն, և անխախտ կուսութ͞ին. ու-
րեմն ա͞ծ է ծնեալն այսպիսի հրաշիւք. ա͞ծ-
ածին է և ծնօղն ս͞բ:

Պահանողացս զկուսութիւն քո մարիամ,

լեր պարիսպ ամրութե֊ եւ զէն օգնութե֊. զի
անյաղթ մնալով ՚ի հրապուրանաց պատրողա
կան լեզուաց, մնասցուք ՚ի ճշմարիտ ուղղափա
ռութե֊. որով արժանասցուք փառաւորել
զորդին քո միածին ած անքննելին ընդ հօր եւ
ընդ հոգւոյն ճշմարտիւ։ եւ գովաբանել զքոյդ
երջանիկ կուսութ֊ ընդ անմահից դասուց
յարքայութե֊ն երկնից անզրաւ յաւիտե
նիւ Ամէն ։

Սորին Գորգենայ վասն ժամանակաց մարդեղութե֊ն ։ Բան հարցման

Գլուխ։ ՃԽԱ։

ԻԱՐԳՍ ՈՉ ՅԱՌԱՋ. ԱՅԼ ՈՉ
յետոյ մարդացաւ քս։ Պատ։ Առյամ
պատասխանէ պայծառ ջահն մերն Յոհան ոս
կեբերանն, թէ զոր օրինակ բժիշկքն ոչ ՚ի սկզբ
բան ցաւոց եւ ոչ ամենեւին անագան տան ըզ
դեղն հիւանդին. զի անօգուտ է եւ վնասակար.
այլ ՚ի դեպ ժամու յորում առողջասցի։ նոյն
պէս եւ բանն ած թէ կարի իսկ յառաջին
դարս էր մարմնացեալ՝ ոչ յաւուրս նոյի աբ
րահամու եւ կամ մովսեսի, լինէր կրկին վնաս
Նախ՝ զի ոչ խնդրեին, բաւ որում եւ ոչ ցան
կային։ Երկրորդ զի ոչ հաւատային, վն
որոյ եւ ոչ գիտէին։ Իսկ թէ ամենեւին հուսկ
յետոյ անագան ՚ի վերջին դարս էր եկեալ
լինէր եւ այսպէս .Բ. պակասութի։ Նախ՝ զի
յուսահատութե֊ վրիպէին։ Եւ երկրորդ զի
այնքան բազմութե֊ք հաւատացելոցն կորընչէ

լոյց էին. զի ոչ վայելէր ամենիմաստ գիտու-
թեանն այ. այլ ՚ի դիպող ժամու, յորում ցաւն
զօրացաւ և կարօտացայք բժշկութե, եկն և
երևեցաւ մարդասէր փրկիչն և առողջա-
ցոյց զկարևորն խոցեալ բնութիս. ըստ որում
բժիշկ անուանէր զինքն ՚ի ձեռս աւազակաց
անկելոյ հիւանդին: Ոպ և եսայեաւ ասաց,
՚ի ժամանակին ընդունելութե լուայց քեզ,
և յաւուր փրկութե օգնեցից քեզ: Իսկ այլ
վարդապետք ասեն թէ ետ զբնական օրէնսն
նոյն և յառաջ քան զնա. և զքանանականն ա-
բրահամու. իսկ զգրաւորն մովսէսի: և թէ յայն
ժամանակի փրկեալ լինէաք, կարծէաք թէ
յօրինաց անտի եղև փրկութիւն: այլ յորժամ
նկուն եղեն օրէնքն ամ և ոչ կարացին փրկ-
կել` եկն և երևեցաւ նոյն ինքն օրէնսդիրն
և փրկեաց զմեզ. զի մի՛ յօրինաց, այլ ՚ի շնոր-
հաց անտի իմացուք զարդարութի և զփրկու-
թի մեր. ոպ գրէ Պօղոս գաղատացւոցն, ոչ
արդարանայ մարդ ՚ի գործոց օրինաց. այլ ՚ի
հաւատոցն ՚ի Քի: Իսկ մեր վարդապետք, ոպ
մեծն ներսէս և այլքն ասեն թէ արարած
առաջին ադամն ՚ի վեցերորդումն աւուր ՚ի
պատկեր տէրական. և յանցանելն ըզպատուի-
րանն` կործանեցաւ ՚ի կորուստն ապականու-
թե. Իսկ նորն ադամ նոյն ՚ի վեց դարուն
յայց ել և խնդրեաց զկորուսեալ պատկերն ՚ի
թիւ խորհրդաւոր կատարեալ վեցերորդին:

Ասէ՛ առաջին դարն Ադամայ. երկրորդն Ենովքայ. երրորդն Նոյի. չորրորդն Աբրահամու. հինգերորդն Մովսէսի. վեցերորդն յորում ծնաւ փրկիչն մեր Քրիստոս եւ փրկեաց զմեզ եւ բժշկեաց։ Որպէս ասէ մեծահայրն Դաւիթ. առաքեաց զբանն իւր եւ բժշկեաց զնոսա. եւ փրկեաց զնոսա յապականութենէ իւրեանց։ Ասէ ոմանք սոյնպէս Թճէն. առաջին դարն յԱդամայ մինչեւ ի Նոյ. երկրորդն ի Նոյէ մինչեւ յԱբրահամ. երրորդն յԱբրահամէ մինչեւ ցգերութին բաբելացւոց. չորրորդն ի գերութենէն մինչեւ ի Մովսէս. հինգերորդն ի Մովսիսէ մինչեւ ի Քս̃. վեցերորդն ի Քէ̃ մինչ ի կատարած աշխարհի. եօթներորդն մեռելոց դարն. ութներորդ յարուցելոցն։

Որում յարուցէ զմեզ Քրիստոս Ած̃ մեր ի կեանան յաւիտենից. եւ արժանիս արասցէ փառաւորել զամենասուրբ երրորդութիւն յաւիտեանս յաւիտենից Ամէն։

Նորին, վասն բանին մարդեղութեան Հարցումն։

Գլուխ։ ՆԲ։

ՎԱՍՆ Է՞Ր ԲԱՆՆ ՄԱՐՄԻՆ Եղեւ, եւ ո՛չ Հայր կամ Հոգին։ Պատ։ Նախ անպատշաճ էր թէ հայր լինէր մարմնացեալ. զի հայր անսկիզբն է. եւ այնժամ ո՛չ ոք լինէր առանց ըսկզբան։ Երկրորդ, զի թէ հոգին Սբ̃ էր մարմնացեալ՝ լինէին յայն

ժամերկու որդիք: Երրորդ, զի թէ հայր
էր մարմնացեալ՝ մի և նոյնն լինէր հայր և որ
դի. նոյնպէս հոգին ոչ լինէր որդի և հոգի.
այլ որդին որդի եղև և անշփոթ մնացին եր
րորդութեն դէմք: Չորրորդ, զի միտք և հո
գին ոչ երևին. այլ բանն երևի և՛ ի դուրս
գայ, և մարդիկ տեսանեն և գրեն. վս այսո
րիկ բանն մարմնացաւ և ոչ հայր կամ հոգի:
Հինգերորդ, բանն պատկեր է հօր եական՝
և մարդն պատկեր նմանութե. վսայն բանն
ած եղև պատկեր մարդոյ: Վեցերորդ, դար
ձուցանել զմարդն յորդեգրութին այ՝ բա
նական որդւոյն էր պատշաճ. վսորոյ որդին
այ որդի մարդոյ եղև. զի զմեզ արասցէ որ
դիս այ: Եօթներորդ, բանին էր պատշաճ
պատմել զհօրն և երևիլ մեզ. որպ՝ ի մեզ ներ
տրամադրեալս բանն յառաջ գայ և լինի բար
բառ. և գրեալ՝ ի քարտիզի՝ երևի և շօշափի:
Ութներորդ, զի լինիցի պատճառ փրկու
թե որ եղև պատճառ գլորման. զի մարդն
ցանկացաւ գիտութեն այ որ է յատուկ որ
դւոյ և անկաւ. նոյնպէս նովին գիտութեն
պարտէր և կանգնիլ: Այլ և իմաստու
թեանն հօր պարտէր նորոգել զխնդրող
իմաստութեն որ է՝ ի մարդն: Իններորդ, վս
հաստատ ժառանգութե խոստացելոյն, զի մի
ասիցէ ոք ցհայր՝ տ՛ր դու ունիս որդի և ժա
ռանգ. վսայն եկն որդին և հաստատեց մեզ

զժառանգութիւն իւր ասելովն, եւ ուխտեմ ձեզ որպէս հայր ուխտեաց ինձ զարքայութիւն։ Տասներորդ, զի սէր հօր երեւեսցի առ մեզ. որպէս ասէ յօհաննէս, այնպէս սիրեաց ած զաշխարհս՝ մինչեւ զորդին իւր միածին ետ։ Այլ եւ ցուցանէ թէ զայլ ամ բարութիս ոչ խնայէ մեզ զոր ինչ խնդրեմք 'ի նմանէ. ուստի ասէ առաքեալն, որ յիւր որդին ո՛չ խնայեաց՝ զի արդ ո՛չ նովաւ հանդերձ զամ շնորհեսցէ մեզ։

✠ Սորբին վասն յարգանդէ ծննդեան Հարցումն։

Վասն է՞ր յարգանդէ ծնաւ Քս։ Պատ. Ասեմք եթէ յետ յղացման բանին յարգանդի կուսին օրինօք՝ եւ ոչ օրինօք բնութե, ժուժկալեալ ամաց իննից եւ աւուրց հնգից, հասարակաց ասեմ եւ անդրանկաց ըստ հնգից յաւելեալ թուոց, նախասահմանեցծին նախ արար չորէ աւուրց։ Յետ որոյ ծնեալ 'ի նոյն կուսական արգանդէ՛ եւ ո՛չ յայլ ինչ մասնէ։ Նախ, զի ո՛չ լինէր այն որդի ըստ բնութե ծնողին. ուստի եւ ո՛չ եւա ադամայ։ վսն որոյ յարգանդէ ծննդեամբ եղեւ որդի կուսին։ Երկրորդ, զի ո՛չ ինչ անդամ զազրալի է 'ի մարդն. այլ ամենայնն հաւասարեն յարդարութի եթէ ո՛չ եկամուտ ինչ խառնիցի 'ի նմա։ Երրորդ, զի ո՛չ ինչ յորոց ստեղծ ած՝ դարչի բնականիլ. մանաւանդ յարգանդի զարդարեալ բնութե. զի զոր ստեղծ ձեռօք բնա

կին 'ի տան ձեռագործն իւրոյ։ Չորրորդ, զի
նա է օգնական բնութեամբ, մարտնչելով ա-
ծելութեամբ ընդդէմ պակասութեան մահու. պարտ
ուրեմն էր բանին կենաց՝ ելանել յայնմ
անդամոյ որ պատերազմի ընդ մահու։
Հինգերորդ՝ զի սրբեսցէ զբոլոր բնութիւն
մեր 'ի մեղաց 'ի ախտիցն 'ի մեղջն և 'ի կատարութեամբ.
որ է սրբովքն՝ կեանք և մահ։ Վասն որոյ զի սրբ-
բեսցէ զականջականն մեղան 'ի կուսական ար-
գանդէ հոգւով սրբութեան ծնաւ։ Ուստի
և սրբութի մեղաց մերոց արարեալ ըստ ա-
ռաքելոյն։
Հարց։ Ո՞ր ինչ է սքանչելիք յղութեանն։
Պատ։ Նախ ուր ինչ անդ բնութիւնն կորոյս
զօրէնս իւր. այսինքն 'ի կազմանէ կերպին որ
ոչ է ըստ բնութեան կարգի. այլ ըստ անքնարա-
զօր կարողութեան միայնոյն Աստուծոյ։ Երկրորդ՝ սքանչե-
լիք էին 'ի մայրն. Եթէ որպէս ասեն վարդա-
պետք։ զի էր պտղաբերութի առանց ապա-
կանութե կնքոյ. յղացեալ առանց ծանրու-
թե. ծնեալ առանց երկանց. քանզի տարած
յինքեան ասողն զարեգակն։ Ուռն զորթն։
առուն զաղբիւրն։ ստեղծած զստեղծօղն։
դուստրն զհայրն։ զի նա եղև մայր հօր, և
դուստր զաւակին։ և էր 'ի վերջոյ քան զա-
ւակն, փոքրագոյն քան զպարունակեալն յին-
քեան։ Այլ միայն էր մայր և կոյս, որ ընդ այ
ունէր զորդին։ Ո՛ երծեալ յանխծից։ զի ա-

նիծեալք էին կուսանք և ամուսնացեալք. կուսանք զի ոչ ծնան. ամուսնացեալք զի ցաւօք ծնան: Սակայն զերծաւ յերկուցն ածածին կոյսն: Զի կոյս էր և ծնաւ և զցաւս ոչ զգաց: Նաև որդ̃ ասացաւ՝ ունի մայրական խնդութիւն հանդերձ կուսական պատուով: Զի որդ̃ զհայելին ոչ բեկանէ շառաւիղ արեգականն: Նոյնպէս և զամբողջութիւն կուսին. մուտ և ելոյ բանին ոչ խախտեաց: Սակայն և ՚ի զաւակէն էին բազում սքանչելիք. զի իսկոյն էր անդ բաժանումն արեան, թանձրանալն, ձևանալն, հոգևորելն և ածանալն: և այս ոչ ըղհետ երերաց, այլ համանգամայն յանկարծօրէն ներգործեալ յո̃յ: Նաև թէպէտ կատարեալ լի և անթերի էին մասունք մարմնոյն քի̃. այլ այնքան փոքրիկ, մինչ զի հազիւ անկանէր ընդ տեսութ̃ մարդոյ: Նաև այն ևս էր սքանչելիք, որ ՚ի փոքրագոյն մարմինն ընկալեալ եղև հոգի բանական, և տեսականօրէն որդ̃ քառասնօրէ՛յ մանուկ յարգանդի: Դարձեալ ՚ի նկիղքն յղութե̃ անդ՝ գիտաց բանական հոգւոյն զամ̃ միաւորեալ ընդ բանին: և էր կատարեալ ՚ի զմայլումն. և ոչ միայն Ճանապարհորդ, այլ և ըմբռնող միշտ և յաւիտեան: Սակայն ոչ յամ̃ մեղաց և լի ամ̃ շնորհօք և առաքինութ̃. զի ՚ի լրութէ̃ նր̃ մեք ամենեքեան առաք զշնորհս ըստ յօհաննու: Սակայն ունէր հայր ՚ի յերկինս և մայր ՚ի յերկ

րի։ Նաև անդ հայր առանց մօր, և աստ մայր առանց հօր։ Պարձեալ մարդեղութեն, եղև տրն ծառայ. յաւիտենականն ժամանակաւոր. անչափն փոքրիկ. վեհագոյնն ստորնագոյն. անպարագրելին տեղակալ. պարզն բաղադրեալ. բանն թանձրացեալ. անտեսանելին տեսեալ. անշօշափելին շօշափեալ. անմահն զենեալ. և այլն։ Եւ ո՞վ կարէ մատախոհ լինել. զի բարձօղն աշխարհի՝ ձեռամբ կընօջն բարձեալ լինի. հացն հրեշտակաց կերակրի. որ նստի ՚ի քրոբէս ՚ի մսուր դնի. և արձակօղն ՚ի կապից խանձարրօք պատի։

Այլև հանդիստն աշխատելոց՝ վաստակի. զօրութիւնն երկնից տկարանայ. և կեանքն ամենեցուն մեռանի. և զայլն նմանապէս ասացեալ սրբոց։ Այլև ՚ի կողմանէ կերպին եղեն զարմանալիք. զի յղացումն տն ո՛չ էր ՚ի սերմանէ առն։ Նաև՝ զի կազմեցի զօրութբ բարձրելոյն ՚ի հոգւոյն սրբոյ և ո՛չ նպաստութեամբ մարդոյ։ Երկրորդ, զի մի՛ ապականութի կրեսցէ մարմինն ապականութե բարձաղէն։ Երրորդ, զի մի՛ էցէ ՚ի ներքոյ ըսկզբնական մեղաց։ Այլև ո՛չ կանանցական սերմն եղև նիւթ մարմնոյն Քի։ Նաև, զի ո՛չ վայելէր մաքրութեան կուսին։ Երկրորդ՝ զի առանց ձեռին հատաւ ՚ի կուսական լեռնէն ըստ դանիէլի։ Երրորդ, զի մի՛ էցէ ըստ հասարակաց կարգի։ այլ ՚ի վեր

քան զբնութիւն որպ տուացաւ: Այլև ոչ ի մը
սոյ կամ յոսկերաց որպ Եւա ի կողէն: Նախ, զի
այն ոչ լինէր ծնունդ: Երկրորդ, զի նէր
գործութեան մասն՝ ոչ լինի զօրութեան բոլոր.
վասն որոյ ոչ է նիւթ ծննդեանն: Ապա ու
րեմն պատշաճ էր զի լինէր նիւթ մարմնոյն
Քրիստոսի մաքուր արիւնն կուսին. ըստ որում
մանկունք հաղորդեցին մարմնոյ և արեան.
և ինքն իսկ կցորդեցաւ նոցին ասէ առաքեալն:
Նախ, զի ապականիւր կուսականն ամբողջու
թիւնն: Երկրորդ, զի զօրութեան ունի և ոչ է
ներգործական մասն. յաղագս որոյ պատրաս
տեաց նիւթ արեան՝ կազմել զօրութեամբ
սուրբ Հոգւոյն՝ զի լինիցի Ճշմարիտ մայր
Քրիստոսի: Եւ այս ի վայրկեան ժամու. որպէս ա
սացաւ ի վերոյ: Պարծեալ վն նշանացն քի
սանն վարդապետք այսպէս: Նախ, անսերմն
յղութիւնն: Երկրորդ ընդ մտանելն յար
գանդ կուսին՝ շնչաբերելն և գտանելն որ
պէս քառասնօրեայ: Երրորդ, խայտալն յօ
հաննու: Չորրորդ հովուաց և մոգուց գալն:
Հինգերորդ, բանալ դրանն ի գնալն քա
ռասնօրեայ ի տաճարն: Վեցերորդ սիմէօ
նի գգուելն: Եօթներորդ խորտակել կռոցն
եգիպտոսի: Ութներորդ, երկոտասան ա
մեայ վարդապետելն: Իններորդ, իջանել
Հոգւոյն ի յորդանան, և ձայնելն հօր:
Տասներորդ յաղթելն փորձողին:

✠ Նորին դարձեալ բէ՛ որդւոյն տէր ծննդեան Քրիստոսի ։

✠ Հարցմանց ։

Գլուխ ։ ՃԺԹ ։

# ՔԱՆԻ՞ ԵՂԱՆԱԿԱՒ ԷՐ

ծնունդն տեառն Քսի ։ Պատ ։ Ոմանք եռակի ասեն. այսինքն, ածայինն, և մարդկայինն, և շնորհօք։ Առաջինն՝ ի Հօրէ. երկրորդն՝ ի մօրէ. և երրորդն՝ ի միտս սըրբոցն։ Այլ երեքեան ծնունդքս են ըստ երից գոյացութեանցն որ՝ ի Քս. այսինքն ածութիւն, մարմին և հոգի։ Զի՝ ի Հօրէ միշտ ծնանի ած. և՝ ի մօրէ միանգամ ծնաւ մարմին. իսկ՝ ի միտս ծնանի բազում անգամ։ Այլ ոմանք ըստ չորրորդ եղանակի ասեն. երեքն յառաջագոյն եղեալ. և չորրորդն ծնունդ փրկչին ։ Առաջին ծնունդն ոչ յառնէ և ոչ՝ ի կնոջէ. որպ ադամայն։ Երկրորդն յառնէ առանց կնոջ. որպէս եւա։ Երրորդն յառնէ և՝ ի կնոջէ. որպ հասարակաց ծնունդն։ Չորրորդ եղանակն որ կատարումն է այլոցն, ՝ի կնոջէ առանց առն. որպ ծնունդն Քսի զօրութբ հոգւոյն սրբոյ։ Իսկ վարդապետք եկեղեցւոյ՝ բովանդակեալ զամ վեց եղանակաւ ասեն զծնունդն Քսի։

Նախ ծնաւ՝ ի Հօրէ բանն ած յառաջ քան զյաւիտեանս անժամու և անպատում ծնընդեամբ. որպ ասէր յառաջ քան զարուսեակ ծնայ զքեզ։ Երկրորդ ծնունդ՝ իջումն բա

նին յարգանդ կուսին մինչեւ ծնեալ ՚ի մօ
րէ. ըստ հրեշտակին որ ասէ, որ ՚ի նմայն
ծնեալ է՝ ՚ի հոգւոյն սրբոյ է։ Երրորդ ծը
նունդն ՚ի մօրէ. ըստ որում ծնաւ մարմնով եւ
երեւեցաւ մեզ. ըստ հրեշտակին թէ՝ ծնաւ
ձեզ այսօր փրկիչ օծեալ տէր։ Չորրորդ՝
ծնունդ ասի եւ մկրտութիւն. զի օրէնադրեաց
մեզ վերըստին ծնունդ ասելով՝ թէ ոք ոչ
ծնցի վերըստին ՚ի ջրոյ եւ հոգւոյ՝ ոչ կարէ
մտանել յարքայութիւն այ։ Հինգերորդ՝
յարութիւնն ՚ի գերեզմանէն. զի որպէս ՚ի
կուսական արգանդէ. նոյնպէս ծնաւ ՚ի
կոյս գերեզմանէ վիմափակ կնքեցելով։ Նմա
նապէս եւ յարութիւնն մեր կոչի ծընունդ
՚ի հանդերձեալ կեանսն. ըստ այնմ, յարու
թեան որդիքն են եւ հաւասար հրեշտակաց։ Վեց
երորդ՝ ծնունդ շնորհօք ՚ի խրատս հաւա
տացելոց ըստ Պօղոսի, եթէ փորձ ինչ ունիք
զՔրիստոսի, որ ինեւ ընդ ձեզ խօսի։ Եւ ինքն ա
սէր, որ ունի զբանս իմ նա է իմ մայր։
Եւ աստուածաբանն ասէ, կանայք կոյսք լերուք.
զի Քրիստոսի լինիցիք մայր։

✠ Սրբոյն Գրիգորի Լուսաւորչի ասացեալ, թէ ծննդեանն է որ
դէն Հարցումն

Գլուխ։ Կ։

ՈՐՊԷՍ Է ՄԻԱԾԻՆՆ ՈՐՔԱՆ
քան ծնունդ ունի։ Պատ. Աստուածաբանն
ասէ, միածինն որդին նա պատմեաց մեզ։

Լաւն՝ ասի միածին. զի նա միայն է համագոյ
ծնողին ծնունդ. ըստ այնմ, բանն էր ՚ի սկզբ
բանն է առ ա՟ծ: իսկ այլ ա՟մ ծնող յառաջ է
քան զծնեալն: Երկրորդ, զի նա միայն ՚ի հօրէ
ծնեալէ անմայր ըստ այնմ. ելի ՚ի հօրէ և եկի
յաշխարհ: Երրորդ՝ զի նա միայն է ՚ի հօրէ ծը
նեալ. և չունի եղբայր. և զի հոգին է ՚ի հօրէ
սակայն բղխումն և ոչ ծնունդ. անբաժան
՚ի ծնողէն, ըստ որում բանն էր առ ա՟ծ:
Հինգերորդ, նա միայն է ծնունդ համահա
ւասար կատարելութեամբ զօրութ՟ և իմաս
տութ՟ ընդ հօր. ըստ այնմ, որպէս գիտէ զիս
հայր, գիտեմ և ես զհայր: Վեցերորդ՝ նա
միայն է ծնունդ անուր և աներբ որպէս ա
սէ՟ յառաջ քան զամենայն բլուրս ծնաւ զիս
և յառաջ քան զարև: Եօթներորդ՝ նա մի
այն է միշտ և անդադար ծնունդ. զի ոչ որ
պէս ՚ի ժամանակի դադարի. այլ որպ՟ լոյս ՚ի
հրոյ միշտ և անհատապէս ծնանի: Ութն
երորդ՝ նա միայն է ծնունդ ՚ի հօրէ և ոչ
երբէք հայրանայ. զի ոչ ունի յինքենէ ծը
նունդ. որպէս նա ՚ի հօրէ: Իններորդ՝ ա
սի միածին ըստ մարմնաւոր ծննդեան ՚ի մօ
րէ ծնեալ առանց հօր. ըստ այնմ որ ասաց
հրեշտակն որ ծնանելոցն է ՚ի քէն ՚ի հոգ
ւոյն սրբոյ է: Տասներորդ՝ ասի ոմանց
թէ, ՚ի ժամ ծննդեանն Ք՟սի արգելան ա՟մ
ծնունդք մինչև ծնաւ բարձօղն երկանց

ամենայն ծննդոց. զի նա լինելոց անդրանիկ
ամ ծննդոց։

Հարց. Ապա ո՞պէ անդրանիկ. ծնաւ ասէ զօրդին իւր զանդրանիկ եւ եդ ի մսուր։

Պատ. Անդրանիկն անուն կրկին ունի իմացումն. նախ՝ ի բազում եղբարս. եւ երկրորդ՝ երեց եւ առաջին։ Աստ գիտելի է. որպէս մի ածին կոչի անմարմնաբար եւ ըստ մարմնոյ։ Նոյնպէս եւ անդրանիկ ծնունդ ի հօրէ։ Սա զառաջինն կոչի անդրանիկ յորժամ եղեւ ի բազում եղբարս, լինելով մարդ եւ որդի ադամայ։ Այլեւ անդրանիկ ծնաւ ի մօրէ առաջին ծնունդ. թէպէտ ոչ ունի եղբայր ի կուսէն. անդրանկութիւն իւր ո՛չ խափանի։ Իսկ անդրանիկ՝ ըստ որում երեց եւ առաջին ասի ըստ չորից։ Նախ՝ զի նա ի հօրէ է ըստ առաւել եւ եղելալքս ի հօրէ։ Այլ երիւք տարբերութեամբ։ Զի նա յառաջ քան զյաւիտեանս. եւ մեք ի ժամանակի. նա ծնունդ ի հօրէ. իսկ մեք արարածք. նա բնութեամբ ծընունդ. եւ մեք կամացն։ Երկրորդ, անդրանիկ է սրբութեամբ. որ ո՛չ արար մեղս, եւ արդարացոյց զմեզ։ Երրորդ, կոչի անդրանիկ ըստ հոգւոյն շնորհաց. զոր նախ ընկալաւ իւր գլուխ եւ հեղ յանդամս։ Չորրորդ, յարութեամբն ըստ այնմ եղեւ անդրանիկ մեռելոց. եւ պտուղ ննջեցելոց։ Սա՛ աստ գիտելի է։ Զի ի ·դ· ինչ միայն յատուկ է քն. եւ ո՛չ այլ ումեք

պատշաճի մարդկայինս ազգի։ Նախ՝ զի ըս
կզբնական արդարութեան ծնաւ և պատմա
ուի անսերմն յղացումն։ Երկրորդ. նա միայն
՚ի գործոց արդարացաւ որ երևեցաւ մարմ
նով արդարացաւ հոգւով։ և ամենեքեան
մեղան և նուաղեցան ՚ի փառաց ըստ առա
քելոյ։ Երրորդ, ՚ի նա միայն գտաւ մտաց ուղղ
ութիւն ըստ առաքելոյ. մեք զմիտս քրիստոսի ու
նիմք։ Իսկ այլ մարդկան միտք հաստատեալ
են ՚ի խնամս չարի վկայէ ած. և ո՞ պարծեսցի
միտս մեր ունիլ ասէ առաքեալն։ Իսկ մեք ո՛չ ՚ի
գործոց, այլ ՚ի հաւատոյն քրիստոսի ընկալաք զըս
կզբնական արդարութիւն. և զներգործութիւն
մարմնոյ և զօրութիւն մտաց։

Նորին Գրիգորի եպիսկոպոսի Տաթևացւոյ հեղինակի ասացեալ.
ԻԲ ՚ի բաղէս տուի գլուխ առաքելոց Պետրոսի Հռոմայեցւոց

Գլուխ։ ԿԸ։

ՊԵՏՐՈՍ ԳԼՈՒԽ ԱՌԱՔԵ
լոցն. որպէս գրէ Դիոնեսիոս ՚ի. գլուխն
եկեղեցական քահանայապետութեան։ Վասն
որ զգլուխն ընթերցար, զհամակարգն ընդ
եր մտաւացար։ Գլուխ ասէ և համակարգ նո
ցին։ Եւ գլուխ կոչի վասն երից. նախ՝ վասն դա
ճանութեան նախնին։ Երկրորդ՝ վասն առաւել
սիրոյն։ Երրորդ՝ վասն ծերութեանն։ Եւ համա
կարգ է նց ըստ առաքելութեան ըստ քահա
նայապետութեան. զի ամենեքեան համահա
սար առին զիշխանութիւն առաքելութեան

քահանայապետութե. համահաւասար՝ և
յայտ է 'ի նորին: Նախ՝ զի յետ յարութեան հա
ւատար ետ զիշխանութիւն. փչեաց 'ի նոսա
զոր ոք կապէք կապեալ լիցի. և այլն: Եթէ
գնացէք աշակերտեցէք զամ հեթանոսս. որ
է իշխանութի քահանայութե: Երկրորդ՝
զի միւրոն 'ի համբարձմանն, ձեռս եդ իւր նո
ցա և օրհնեաց զնս. և արար զնոսա առ հաւաս
րակ եպիսկոպոսունս: Երրորդ՝ զի յետ համ
բարձմանն յորժամ էջ հոգին սբ արար զնո
սա կաթուղիկոսունս առ հասարակ: Նա-
յայտ է յայսմանէ որ կաթուղիկոսն ոչ կա
րէ կաթուղիկոս ձեռնադրել: Նաև եպիսկո
պոս առնէ. և յետ փոխման առաջնոյն նստի
կաթուղիկոսն երկրորդ. ոպ և Քս արար. զի
որքան մարմնով ընդ առաքելսն էր եպիս
կոպոսունս արար զնս. և յետ համբառնա
լոյն հոգւովն սրբով արար զնս կաթուղիկո
սունս: Չորրորդ. յայտ է զի իւրաքանչիւր
առաքեալ յիւր վիճակն ընթացեալ ձեռ
նադրեցին եպիսկոպոսունս. ոպ Թադէոս
'ի Հնդիկս: Յօհաննէս յեփեսոս. և ոչ ոք գը
նաց առ Պետրոս 'ի հռոմ. և ոչ Պետրոս յայլ
վիճակս ձեռնադրեաց զոք: Նաև յայտ է
թէ համահաւասարքեն երկոտասանքն իշ
խանութբ: Որև զդատողական աթոռս եր
կոտասանիցն հաւասար շնորհեաց. նստջիք
ասէ և դուք յերկոտասան աթոռ դատել

զերկոտասան ազգն իսրայէլի։ Ասէ թէ ոք
ասիցէ զի՞նչ է խորհուրդ երկոտասանիցն։
Ասեմք եթէ տրն երկոտասան գունդս ա
սաց հրեշտակաց իւրաքանչիւր դասուց. և
երկոտասան կենդանակերպ յերկինս։ Երկո
տասան ամիսք տարւոյ. և երկոտասան ժամք
աւուր։ Երկոտասան անդամք մարդոյ և դը
րունք։ Երկոտասան ազգ իսրայէլի. և երկո
տասան մարգարէքն։ վ̄ո որոյ և տրն երկոտա
սան թիւ ընտրեաց առաքելոցն. և ետ երկո
տասան աթոռ դատաւորական։ Ասէ թէ ոք ա
սիցէ՝ յորժամ համակարգ են իշխանութե
ա̄մ երկոտասանքն. ապա ո՞ր է գլուխ առա
քեալն պետրոս։ Ասեմք թէ Պետրոս գլուխ
է առաքելոցն ո՛չ որ եպիսկոպոսն. քահա
նայից. կամ կաթողիկոս եպիսկոպոսին։ Այլ
ո՞ր ՚ի մէջ համակարգեից քահանայից՝ միւսն լի
նի հայր։ Ասէ որպէս ՚ի կենդանակերպս,
խոյն գլուխ է. և առաջին։ Ասէ ո՞ր ՚ի դասս
հրեշտակաց միւսն գնդապետ երկոտասան
գնդին։ Ասէ թէ ոք ասիցէ՝ առանձին իշխա
նութիւն ունի քան զայլսն. նախ՝ զի նմա ասաց
տաց քեզ զփականսն։ Ասէ թէ դու դարձցես
և հաստատեսցես զեղբարս քո։ Ասէ թէ արա
ծեա՛ զոչխարս իմ։ Ասեմք առ այս եթէ ո՞ր ՚ի
մէջ սերովբէից և քերովբէից և աթոռոց ո՛չ
առ վերագոյն և նուաստագոյն՝ զի համա
կարգ են և շուրջ զԱծ։

Նաև որպէս ՚ի մէջ անձնաւորութեանցն ոչ է մեծ և փոքր. նոյնպէս ՚ի մէջ առաքելոցն ոչ է մեծ և փոքր իշխանութեամբ. սակայն կարգ գոյ ՚ի մէջ նոցա և պատիւ և հնազանդութիւն և սէր. այլ իշխանութեամբ համահաւասարք էին։ Պատասխանեմք առաջնոյն որ ասէ. տաց քեզ զփականս. ոչ թէ յայնժամ ետ, այլ յայնժամ խոստացաւ, և յետոյ ետ։ որպէս խոստացաւ նմա տուցանել յերկոտասան աթոռ, և յետոյ ետ նոյնպէս և զայն։ Նաև վէմ դաւանութիւնն էր՝ որ խոստովանեցաւ զՔրիստոս որդի Աստուծոյ կենդանւոյ. և ՚ի վերայ այնմ դաւանութեան շինեցաւ եկեղեցի քրիստոնէից։ Առ երկրորդն ասեմք, թէ ընդ ուրացութիւն պետրոսի սիրտ ամենայն առաքելոցն տրտմեցան և կոտորեցան. և ՚ի զղջումն նորա ամենեքեան հաստատեցան ՚ի վերըստին։ Այլև դարձ նորա և կանգնումն, հաստատութիւն եղև ամենայն ուրացողաց և մեղաւորաց։ Առ երրորդն ասեմք թէ՝ երիցս հարցումն սիրոյն և արածելն զաշխարհն՝ վասն
երից ուրացութեանն էր բժշկութիւն։

Զի որ մասն որ խոցի՝ նորին է բժշկական դեղն դնելի. և ոչ առ այլ ջիգ։ Նաև թէ ոք ասիցէ, երևի աստ թէ ոչ է պարտ հնազանդիլ առաքելոյն պետրոսի և աթոռոյ նորա։ Ասեմք առ այս, եթէ դժուարինս խօսիս։ Առաքելոյն Պետրոսի հնազանդ եմք որպէս Քրիստոսի. նա և Պօղոսի և ամենայն Առաքելոցն և Աշա

կերտայն ամենեցուն. և հեռաւորաց նոցա և
աթոռոցն։ Եւ այլ չորեքն հնազանդեալք ոմ
աթոռակալից ․Ի․Ճ․։ Եւ երից սբ ժողովոյն։
Որ ՚ի նիկիա յաւուրս մեծին կոստանդեա
նոսի ընդդէմ արիոսի ժողովեցան հարքն
սբ ՅԺԸ։ Եւ յաւուրս մեծին թէոդոսի
․ՃԾ․ քն․ որ ՚ի կոստանդնուպօլիս ընդդէմ
հոգեմարտին մակեդոնի։ Եւ ․Մ․ քն․ որ յե
փեսոս ժողովեցան ընդդէմ նեստորի չարա
փառին և մարդադաւանին։ Այսոցիկ սբ հարց
և սոցին հետեւողաց հնազանդիմք։ Եւ զնոյն կա
նոնսն ունիմք և զդաւանութի․ և պահեմք
մինչև յեւր շնչոյ մերոյ։ Այլ զչար և զդժնդու
րաց ժողովն քաղկեդոնի որ ՚ի ձեռն մարկիա
նի և անիծելոյն պղծերի՝ ոչ ընդունիմք.
և զընդունօղսն նզովեմք. զի անդ բաժանե
ցին զբանն ՚ի մարմնոյ և պատառեցին զկանոն
սբ հարցն։ Եւ փոխեցին զտօնս տէրունա
կանս։ Եւ լուծին զպահս ՚ի ձուկն և ՚ի ձէթս։
Եւ ․Է․ ․Զ․ բերուս սպանին ուղղափառաց դա
սուց. որպէս յայտ է ՚ի պատմութիս սրբոյն միայ
կէլի։ Եւ ․Գ․ ․Ճ․ ամ աւելի՝ բազում ազգ Ֆր
ռանկաց ոչ հնազանդեցան չար ժողովոյն
քաղկեդոնի։ Արդ՝ եկեալ եղբա փորձեա
ցուք թէ ով զդաւանութի առաքելոյն ու
նի և զկանոնքն, նա է հնազանդ նմա։ Եւ խոս
տովանիմ զՔն ճշմարիտ սէր և քննութե որ
դի ԱՅ. և դու բաժանեալ մարդ դաւանես,

և շնորհօք որդւն այ։ Եւս անապականն պատա-
րագեմ զքի̄ն ոչ կանոնքն է առաքելոցն և
կղեմայ։ Եւ դու ապականես ջրով և զայլն
ոչ յառաջի կայդ սասայի։ Արդ զի՞նչ կա
միս որ հնազանդեմք պետրոսի․ ուրանամ
պարտ է զքի̄ն որ լինիմք հնազանդ պետրոսի,
եթէ եղծանել զպահս. թէ պ̄ամ պիղծ կերա-
կուր ուտել. թէ զ․է․ քորս ․է․ եղբարցն
տալ կամ զանին քոյրն միւս եղբօրն. ոչ
քո սուտ պետրոսին կանոն է։ Եւ զայլն լը-
ուեմ։ Եւ թէ ոք ասիցէ բարկացար կարի՞ ոչ
զայդ ասեմ հնազանդեալ։ Այլ ոչ լուսաւո-
րիչն գնաց ՚ի հռոմ։ ոչ վս̄ ձեռնադրութե̄,
այլ վս̄ սիրոյ և միաբանութե̄ երկուց ազգաց
և ուղղափառ թագաւորացն Տրդատայ և
Կոստանդիանոսի։ Ուստի յայտ է զի առե̄լ
էր զքահանայութի̄։ Եւ մկրտեալ զթագա-
ւորն և լուսաւորեալ զազգս։ Եւ շինեալ
եկեղեցիս։ և փոխանորդ իւր նստուցյալթո-
ղորքն Ռոստակէս համանման նորին առաքե-
նութե̄ և որդի ըստ մարմնոյ. և ապա գնաց
՚ի հռոմ։ Եւ թէ ոք ասիցէ ՚ի կեսարիա ձեռ-
նադրեցաւ ՚ի Ղեոնդիէ պատրիարգէ։
Ասեմք եթէ սուրբն գրիգոր ՚ի կեսարիա
ձեռնադրեցաւ ոչ յայլմէ առաքելոյ. այլ
՚ի սրբոյն Թադէոսէ. որոյ էր վիճակս հայ-
ոց։ Զի է առաքելայն Թադէոս յորժամ ձեռ-
նադրեաց զադդէ յուռհայ, և ապա ՚ի կե-

սարիա եկն և ձեռնադրեաց առաջին եպիս
կոպոս զԹէոփիլոս· զայն՝ յորոյ անունն գը
րեաց ղուկաս զաւետարանն և զգործսն առ
Թէոփիլոս: Եւ այսպէս Ղևոնդիոս ձեռնա
դրեալ 'ի նմանէ պատրիարգ· յորմէ ձեռնա
դրեցաւ Լուսաւորիչն մեր: Եւ այս էր
պատճառն հայոց անդ ձեռնադրութե գնա
լոյն: Եւ վասն այն աԹոռս համայնս հիմնե
ցին· և սեփհական քաղաք է հայոց կեսարիա:
Եւ սուրբն անդ ծնաւ և սնաւ· զի յղացեալ
էր 'ի գերեզմանին Թադէոսի· և սնաւ անդ
ուր առաքեալն սկըսաւ քահանայագործել.
և փոխեաց յինքն զշնորհս նորա· անդր և
զեալ եպիսկոպոս. և 'ի հռոմ գնացեալ, եղև
հայրապետ և պապ: Ո՛ր այսպէս սահմանե
ցին· զի ինքնակալ Թագաւոր մի· և ինքնա
գլուխ հայրապետ մի նստցի 'ի հայս. և Թա
գաւոր մի ինքնագլուխ և հայրապետ մի 'ի հը
ռոմ. և իւր միմեանց դիցեն զանձինս 'ի մահ.
և սոսկալի գրով եղեն միմեանց եղբարք Թա
ցեալ զգիրն յահաւոր խորհուրդն. և բաժա
նեալ զսուրբ տեղիս տնօրինականս. և ետուն
զսբ յակօբն պատրիարգին. և զգողգոԹայն և
զսբ կարապետն և զսնարան. և արկեալ վի
ճակս իւր յարութեն, անկաւ հայոց և տոր
մեցան ոմանք յազգէն. այժմ հեզն ամի ոբն
Գրիգոր ետ նոցա՝ զի նոքա շինեսցեն ընդ
արձակ· զի դեռ չէր շինեալ և սահմանեալ

զօրեղեան. եւ կախեաց կանթեղս յանուն ազ-
գաց: Եւ նա խնդրեաց յԱյ զէջումն լուսոյն
՚ի նշան յարութեան Քսի: Եւ վս այն այլ
ազգ ոչ հաւատան. զի յառաջին չէկայր մինչ
՚ի նա. եւ առաւել վասն այն անուանեցաւ
լուսաւորիչ. այս էր պատճառ գնալոյն ՚ի
կեսարիա եւ ՚ի հռոմ: Այլեւ ծանիր զայս. զի
·Գ· գլխաւորագոյն աթոռք կարգեցան
ընդ բոլոր տիեզերս վասն չորից աւետա-
րանչացն: Յանտիոք վասն Մատթէոսի. Յա-
ղեքսանդրիա վասն Մարկոսի: ՚ի Հռոմ վս
Ղուկասու: Յեփեսոս վասն Յօհաննու:
Ո՛ր յետոյ մեծն Կոստանդիանոս զայս ա-
թոռս յեփեսոսէ ՚ի կոստանդինու պօլիս
փոխեաց: Այլեւ յառաջին ժողովն ·Գ· ա-
թոռ ինքնագլուխ հաստատեցան. Երէմ վս
գերեզմանին Քի. եւ կիպրոս վս գերեզմանին
ղազարու: Եւ հայք վասն սբ լուսաւորչին
Գրիգորի. տոքա ·Է·. սիւնք ·Է·. խարիսխք են
եկեղեցւոյ. գլուխ կարգեալ ընդ բոլոր տի-
եզերս ամ̃ սասացած:

Եւ թէ ոք ասիցէ ազգս հայոց յետին է հա-
ւատացեալ: Ասեմք թէ ոչ ինչ է այս նախա-
տինք մեզ. զի հեթանոսք յետոյ հաւատացին
եւ լաւագոյնք են քան զհրեայս. եւ վերջին մը-
շակքն ընդ առաջինսն առին զվարձս. եւ
որք նախանձեցան կորեան:

Պարծեալ ասեմք՝ թէ զի արդ յետին՝ զի

ուրկար Թագաւորն հայոց նախ քան զխաչն
հաճատոց ՚ի Քրիստոս և երանեցաւ ՚ի նմա
նէ։ Նաև յառաջ տրդատ հաճատոց. և ա-
պա կոստանդիանոս. և յայտ է զի սակ ա-
գաթանգեղ. յայնժամ լուծաւ տրդատ է
թէ հաճատոց ՚ի Քս կոստանդիանոս որ
դէն կոստայ. այլև ՚ի խորեն հռիփսիմեանց
գալըյն յայտնի է։ Պարձեալ ասեմք եթէ
·գ· առաքեալք ունէին հայք։ Ս. Թադէոս
և Ս. Բարթուղիմէոս. և Յուդայ յակոբեան
որ կայ ՚ի յորմի որ սեփհական քաղաքէ հայոց։
Նաև կենսաբուղխ սուրբ աճետարանն ըզ
Թադէոս առաքեալն մեր յերկոտասանիցն
սակ զեքէոս, որ անուանեցաւ Թադէոս.
յայտ է ՚ի Քսէ զանունն փոխեալ որպէս ըզ
պետրոսին և զորոտմանն. և այս է պատճառն
որ ոմանք յեօթանասնիցն ասեն։ Ո ի եօ
թանասուն աշակերտացն գրուել և վարդա
պետ է որ ՚ի մէջ պետրոս երկոտասանիցն. և առա
ջինքն ամ ուրեք յետնոցն անուանմբ կոչեցին.
այս է սորայ պատճառն. և ՚ի գալն յերկիրս
հայոց, ետուն նմա օգնական զհուզն օծման
զոր քրիստոս օրհնեալ էր և զգեղարդն. և այ
լոց ազգաց չկայ այս պարծանքս զի մեր մե-
ռոնս հանապազ և մինչ զնոյն շնորհ ունի։
Նաև թէ գիր չունէր մեր ազգս։ Տե՛ս զայն
որ յոյժ տաճաւ մեզ գիր ՚ի մէջ մովսեսին է լի.
և այլ ո՞ր ազգ պարծի այսու։

Գլուխ։ ԿԲ։

## Ի՞ՆՉ ՊԱՏԱՍԽԱՆԵՄՔ

որք բամբասեն զազգս հայոց ոչ միաբանել այլոց։ Այլև ասեն թէ ընդհանրական կանոն ճշմարիտ է քան զառանձնական։ Նաև ազգս որք են յոլով ազգաց։ Պատ. Ասեմ առ այս։ Նախ՝ եթէ ոչ ամ տարբերք է առանձնականն սուտ. որպէս ասելն, ամ մարդ արդար. ոչ ոք մարդ արդար։ Նա զի սոքա ընդհանրականք են, և ոչ են ճշմարիտ. այլ սուտ։ Նաև ոմն մարդ արդար է. և ոմն մարդ ոչ է արդար։ Նա սոքա առանձնականք և ճշմարիտք. որպէս ասի ըստ իմաստասիրացն։

Դարձեալ թէպէտ ըստ պորփիւրի, մասն բոլորին հետևի. որպէս անհատն տեսակին. և տեսակն սեռին։ Սակայն ըստ արիստոտելի սեռն և տեսակն անհատին հետևին. զի են երկրորդ գոյացութիւ։ իսկ անհատն է առաւել և իսկագոյն և առաջին գոյացութի. որ է առանձնական և մասնաւոր ոպ ազգս մեր։ Դարձեալ գոյ առաւել ճշմարիտ. գոյ և նուազ ճշմարիտ. ոպ գոյ առաւել բարի. որպէս ասեմք՝ զի որ ըստ ինքեան է ճշմարիտ և ըստ ինքեան բարի՝ առաւել է. և որ ըստ պատահման է ճշմարիտ կամ բարի՝ նուազ է. վասն զի ըստ ինքեանն գոյացութէ և հարկաւորք է. այսինքն անփոփոխ և միշտ։

իսկ ըստ պատահմանն կարելի՛ է, եներըն դունականն. այսինքն փոփոխական եւ երբեմն: Օրօրինակ յորժամ ասիցէ ոք զքարին բարի գոլ՝ այսինքն ըստ ինքեան, ճշմարիտ է եւ այս, այլ ըստ պատահման՝ ոչ ցուցանէ: Ապա յայտ է, զի նուազ ճշմարիտն առաւել ճըշմարտին հեռանայցի. ոչ նուազ բարին առաւել բարւոյն. եթէ ընդհանուրն եւ եթէ մասնաւորն: Այլ արդ՝ ազգս հայոց ունի զառաւել ճշմարիտն եւ զառաւել բարին ՚ի դաւանութիւնն եւ ՚ի կարգս. այսինքն ՚ի հաւատս եւ ՚ի գործս: Ապա պարտին ամ̃ ազգ սորա հետեւիլ: Դարձեալ ճշմարիտն մի է եւ սուտն բազում. եւ բարին մի է եւ չարն բազում. եւ առաքինութիւն մի է. եւ մոլութիւնն բազում: Այլ արդ՝ կարելի է, զի մինն բազմաց հակառակեսցի եւ յաղթեսցէ. ոչ ազգս հայոց զայս ամ̃ որ բազումեն եւ ո՛չ մի: Դարձեալ որ ոք մերձ է ՚ի ճշմարտութիւն, նա՛ առաւել է ճշմարիտ. ոչ որք մերձ են լուսոյն եւ ջերմութե՝ առաւել լոյս են եւ ջերմ: Այլ արդ՝ ճշմարտութի է առաքելական կանոնքն եւ հայրապետականնն. եւ երից սուրբ ժողովոյն առաւել մերձ է եւ անշարժ մնացեալ ազգս հայոց: Դարձեալ զուտ է եւ անխառն իսկապէս ճշմարիտն քան զխառնեալն ՚ի սուտ: Այլ արդ՝ յամ̃ ազգաց ելին հերձուածողք որ է սուտ. եւ խառնեցան ընդ ճշմարտութեն.

Իսկ յազգէ հայոց ո՛չ ոք իշխեաց խօսել հերձուած. և զայլոցն ոչ ընկալան: վ֊ն այն մնաց ճշմարտութիւն եկեղեցւս և անխառն 'ի ստութէ: Դարձեալ յայտնապէս ասել ո՛չ է հարկ թէ տ֊մ բազում պատուական է քան զմի. զի ահա գոյացութի՜ մի է և պատահումն բազում. և արեգակն մի է և աստեղք բազում. և գլուխն մի է և անդամք բազում: Որ և պատուական է վարդապետն քան զաշակերտն. և զօրավար քան զզօրս. և կառավարն քան զկառս և այլ: Նմանապէս և ազգս հայոց թէպէտ մի լինի, կարէ պատուական գոլ բազմաց: Դարձեալ, 'ի նախ ստեղծման մարդն միա՛յն էր, և կենդանիք բազում: Եւ Նոյ միայն արդարացաւ, և բազումք կորեան: Եւ Եբեր միա՛յն պահեաց անխառնակ զնախնական լեզուն: Աբրահամ միա՛յն էր տ֊ծապաշտ. և քանանացիք բազում: Յոբ միա՛յն համբերօղ. և ազգն բազում: Յովսէփ միա՛յն և եգիպտացիք բազում: Եւ զայս վ֊ն էրէ՛ երկարել ինձ. զի ցուցանի թէ ո՛չ է պարտ միոյն ճշմարտի բազում ստոց հետեւիլ. և լաւ է մի ակն պատուական քան զբազում անպիտանս: Եւ թէ ոք ասիցէ, ապա և լաւ է տարաձայնութի՜ քան զհամաձայնութի՜. և բաժանումն քան զմիութի՜: Ասեմք առ այս թէ՝ ո՛չ է հարկաւոր տ֊մ ուրեք. զի գոյ և տարաձայնութի՜ բարի քան զհամաձայնու

թի. միաբանութի ոչ է բարի ընդ հերձուա-
ծօղս. զի լաւ է բաժանումն 'ի չար ժողովր-
դոց քան զմիաբանութի: Դարձեալ զոր օ-
րինակ բազումք ընթանան 'ի մի ճանապարհ.
և ամենեքեան թողեալ զնոյն ընդ այլս գը-
նացեն, և մինն մնացեալ 'ի նոյնն, ոչ ասեմք
թէ մինն բաժանեցաւ 'ի ճանապարհէն.
այլ այլքն: Այսպէս և ամ ազգ քրիստոնէից՝
զնոյն ունէին ճանապարհ դաւանութե և ա-
ւանդութե յառաքելոցն անտի մինչ 'ի ժո-
ղովն քաղկեդոնի. և յետ անտի բաժանեցան
ամ ազգ յամ կրս. ոպ յայտ է յուրաքանչիւր
եկեղեցիս. իսկ մերս դաւանութիւն ամին
նոյնն եկաց մնաց. զոր ունէր նախ 'ի սրբոյն
Գրիգորէ լուսաւորչէ և 'ի նմանեացն նր. ա-
պա յայտ է թէ ոչ ազգս հայոց եթող և բա-
ժանեցաւ. այլ նոքա թողին զուղիղն և բա-
ժանեցան: Դարձեալ բնաւորեալ է մար-
դոյ, զի ամ ոք կարծէ զինքն ճշմարիտ և ար-
դար. այլ որ ունի զճշմարտութիւն՝ նա է ճշ-
մարիտ և արդար: Զոր օրինակ .է. ոք 'ի դա-
տախազին իւրաքանչիւրն զինքն կամի և կար-
ծէ ճշմարիտ գոլ. այլ մերձ եկեալ դատաւո-
րին վկայիւք յայտնեսցի ճշմարիտն:
Նմանապէս և ամ ազգ քրիստոնէից ասէ
զինքն ճշմարիտ: Այլ դատաւոր միտքն կա-
ցուցեալ .է. վկայ զամբիծ հաւատս և զօրէնս
որ են հաւատք և գործ, զի առ որս և իցէ. Բն

նմա է ճշմարիտ։ Նա՛ զի ճշմարիտ վկայք են
սոքա. և տէր մեր առ կուրացեալ հրէայսն
զսոյն կացոյց վկայ ասելով. թէ և ինձ ոչ հա
ւատայք, սակայն գործոցն հաւատացէք։
Մերդ՝ քեր ածցուք վկայ զայս առ դատա
ւոր միտս. և դատեսցուք ուղղութբ. այլ ոչ
զրպարտութբ։ Զայս ասեմ, զի որ ինչ անօ
րէնութիւն է ազգիս հայոց, նոյն է օրէնք
այլազգեաց. և որ մեր երկբայութիւն է
նոյն դաւանութի է նոցա։ Որպէս զի՞նչ
ասեմ համառօտ. թէ թերութի է մեր քա
ժանել զբանն ՚ի մարմնոյն յերկու բնութիս,
և յերկու դէմս, ՚ի կրկին կամս, և ՚ի գործս.
այլ դաւանութի նց այս է. ոպ զի մի լիցի
լուծ նց ած մարդացեալ. կամ մերս բնութի
ընդ ածութեն միաւորեալ. ոպ ընդ արձա
կապէս ցուցանէ ածաբանն Կիւրեղ ՚ի գիրս
պարապմանց. իսկ անօրէնութիւն մեր՝ լու
ծումն պահոց առանդեալ յառաքելոց ան
տի. դ. զ. յիսուսնա և զչորեք շաբաթն և զուր
բաթն. և զայլ շաբաթապահս ՚ի նիկիական
ժողովոյն օրէնութբ պահել հրամայեցաւ։
Այլ արդ՝ լուծումն պահոցս այսօրէնկ օ
րէնք է նոցա. նա և ՚ի ձուկն ՚ի ձէթ և յայլ
սոյնպիսիս։ Ո՞չ առաքեալքն առաքելքն եդին
զչորս զայս, խորշիլ յարենէ և ՚ի զօհից, ՚ի
հեղձուցելոյ և ՚ի պոռնկութէ։ Այլ արդ՝
հեղձուցեալն սուրբ և կերակրելի է նց. և

պտուղնկութիւննն անխտիր։ Ո՛չ ապաքէն Մով-
սէս ՚ի հինն որոշեաց զաւուրբս եւ զամանակս. մա-
նաւանդ թէ յաւուրս նոյն գոյր ընտրու-
թի. այսպէս ցուցած եւ մեզ պահելի իբր
զբնական օրէնս. այլ սոցա ո՛չ ինչ է պիղծ
՚ի կենդանեաց։ Զի ամ՟ որ ՚ի բերան մտանէ
ընդ արտաքս ելանէ ասէն. եւ այլ բազում եւ
զանազան աղգապղծութի ընդ հոգեւորս եւ
ընդ մարմնաւորս .է. եղբարց եւ .է. քերց, եւ
ընդ քերց հոգեւոր մօր. եւ անխտիր ՚ի բազմանց
կողմնս եւ այլս բազումս որ զազիր է խօսելոյ
օրէնք է նոց, իսկ մեզ անօրէնութի։ Ապա եւ
յայտ է յայսցանէ թէ առ մինն իցէ ճշմա-
րիտ հաւատք եւ օրէնք, նա է ճշմարիտ եւ ո՛չ
այլքն. թէպէտ բաժանեալ լիցի ՚ի նոցանէ։

✠ Սորին դարձեալ վասն միաբանութեան նախաժամանման եկեղե-
ցւոյ. Հռոմայեցւոց.

Գլուխ։ ԿԳ։

ԱԶԳ ԱՌ ԱԶԳԻՍ ԲԱԺԱ-
նեալ լինի դաւանութեան եւ եկեղեցա-
կան կանոնական սահմանաւ որ են
աւանդութիւնք եւ հաւատք եկեղեցւոյ։ Արդ բա-
ժանումն յառաջ քան զդաւանութեան եւ եկեղեցա-
կան կանոնականն սահմանել առաջեալ լինի. այս-
պէս եւ առ միաբանութիւն է խնամալ։ Արդ առաջել
միաբանութի ասել, զորս կանոնական սահմա-
նադրութի է, քան որ դաւանութեան եւ եկեղեցւ։
Արդ յայտնի է միաբանութիւնս որ ըստ կա-

նոնի յաւէտ միաբանութի՝ զայս է իմանալ:
Ուսանել միաբանութի որ ըստ բոլորին որի
նադրութեց սահմանաց կամ ըստ գլխաւոր
բազումնեցն լինեցի. եւ ոչ մասամբ միով միա
բանեալք եւ բազմօք զանազանեալք :
Մանաւանդ թէ հակառակեալք եւ ընդդի
մացեալք, եւ այն որ 'ի գլխաւորագոյնս, ոչ ա
սի միաբանութի. եւ զի որդ միաբանութի ա
սեցէ ոք զայն: Եւ զինչ այս՝ այսինքն է :
Զ ազգս քրիստոնէից տեսանեմք: Զի ոչ
ըստ անհամն եւ զմիութի կանոնական սահմա
նի ունել: Զի ահա լատինացիք առանձնա
կանս ունել ահանդութիս: Նախ 'ի բաժա
կէն ոչ տալ ժողովրդեանն: Երկրորդ միքա
հանայ երիցս անգամ 'ի միում աւուր պատա
րագս մատուցանել: Երրորդ՝ եւ զայն 'ի միում
եկեղեցւոջ առանց խտրութե: Չորրորդ՝
եւ յերկուսեան ծրագալոյցս ոչ առնել պատա
րագ: Հինգերորդ՝ զբեւրթագուրն զոր ա
սեն: Վեցերորդ՝ զհոգին 'ի հօրէ եւ յորդւոյ
բղխումն: Եօթներորդ, այլ ազգ ունել զտօն
սրբոց. եւ ոչ ըստ այսմաւուրաց: Ութնե
րորդ, 'ի բոլոր աշուհացն պատարագել:
Իններորդ, կին ոչ առնուլ քահանայից. եւ
զմորուսն ածիլել. եւ զգլորեալն կանգնել
անխտիր: Տասներորդ, կանանց միրոնութի
առնել. եւ աշխարհականաց խոստովանել.
այլ եւ կրկին միրոնել: Եւ այլք գոն յոլովք:

Մանաւանդ՝ զկեղծաւորել վիճիլս. զչորս
շաբաթս ոչ պահել: Ի ըսկզբան պահոցն
լուծանել: Անզեղջ խոստովանիլ. զպիղծ կեն
դանիս ոչ խտրել. եւ զհեղձուցեալս ուտել.
եւ այլ բազում ինչ: Իսկ յոյնք: Առաջին նա
խաւարեցեալք պատարագին: Երկրորդ, կրկ
կին ջուր ջերմ եւ ցուրտ: Երրորդ, զբոլոր
հաց պատարագին ոչ հանել ՚ի սեղան. այլ
մասն ինչ:
Չորրորդ մնացուած պատարագին որ ին
քեանք քաջ գիտեն: Հինգերորդ, զչեզոքս
աբեղայ առնեն: Վեցերորդ, զձեւ զգես
տուն այլաբար ունել: Եօթներորդ, ՚ի պահս
եւ յաղօթս եւ յայլ առանձնութիս բազում ու-
նել որոշումս: Ասորիք: Առաջին ուրբաթս
զեղծ. Երկրորդ, ոմանց խոստովանութի ոչ
առնել: Երրորդ միով մատամբ զնշան դրոշ
մել: Չորրորդ՝ հրաման տալ առագաստարկա
հագաց կին առնուլ եւ քահանայ լինել: Հինգ
երորդ, ոմանց թլփատութի ունել: Վեցե
րորդ, եղհաց պատարագին ձիթով օծանել:
Եւ այլք գոն յոլովք. զոր յորժամ պարապով
ոք քննեսցէ՝ գտանէ: Եւ այսպէս բազում
ունելով իւրաքանչիւրոք սահմանս առան
ձին. եւ միայն հայքն նախատեալ լինին որ ոչ
ունել միաբանութի ընդ այլս ՚ի քրիստոնէից.
այլ առանձին միայնաբար ընթանալ եւ այ
սու որ հակառակ երեւեալք:

Բայց պարտ է այնոցիկ որք ոչ գիտիցեն, եւ կամ թէ կամաւ ագիտանան ցուցանել ըզ միաբանութիւն ազգիս հայոց առ այլ քրիստոնեայս: զի գիտասցեն յամօթ լիցին յաղթեալք ՚ի ճշմարտութենէն:

Նախ լուծինացիս զսուգաւորութիւն հայաստանեայց եկեղեցւոյ: Նախ զհաց պատարագին բաղարջ առնել: Երկրորդ, գառն զենուլ ՚ի տօնս: Երրորդ, վասն ննջեցելոց ՚ի յանբանից զենուլ եւ տալ ողորմութիւն աղքատաց: Չորրորդ, զտօն սրբոցն յառաջի կայն անցուցանել օր: Հինգերորդ՝ յայսմաւուրքս ոչ տօնել ըստ յունաց. այլ այլով օրինակաւ տօնել: Եւ այլք գոն պարապով տեսեալք:

Իսկ ասորիք ունել միաբանութիւն: Նախ՝ ՚ի լուծանել զճրագալուցն, ՚ի պահնիր յիւղ եւ յայլ կերակուր բաց ՚ի մսոյ: Երկրորդ, ՚ի Քրիստոս բնութեցն միացելոյն մի ասել բնութիւն ըստ սրբոյն Աթանասի եւ Կիւրղի: Երրորդ, յերեք սրբեանն զխաչեցարն յաւելուլ: Չորրորդ, ՚ի ժողովոյն քաղկեդոնի խորշիլ. եւ այսոքիկ առ ասորիս: Եւ առ յոյնս ունել միաբանութիւն հայոց: Նախ ըստ դրութէ կարգի աղօթիցն որ յեկեղեցիս նոցա: Երկրորդ, ՚ի յաղուհացն ոչ ունել հրաման պատարագ մատուցանել բաց ՚ի շաբաթէ եւ ՚ի կիրակէէ: Երրորդ, առ քահանայս զգուշութիւն օրինօք ունել. թէպէտ եւ ոմանք կաղան առ

այս։ Չորրորդ, յարդէն ժամանակիս այսմա
հուրօք տօնել ոմանց։ Եւ այսօրէկ առ յոյնս։
Բայց ոմանք բերանաբաց եղեալ հակառա
կին ՚ի ծնունդն. եւ որ ընդ նորին ամենեցուն
առ հասարակ միաբանեալ բաց ՚ի հայոց։ Եւ
այսօրէկ աւանդութիք եւ ոչ հաւատ։ Եւ է
զով միաբանութե՝ մասամբ եւ ոչ յոգնագոյնս։
Եւ ըստ այսմ միաբանութեամբ՝ եւմերս տե
սանեմք եկեղեցի ունել եզով միաբանու
թիւն առ այլ քրիստոնեայս։ Որպէս ահա
յերկոսեան Ճրագալոյցսն այսինքն ՚ի ծնըն
դեանն եւ ՚ի յարութեանն միաբանին հայք
եւյոյնք եւասորիք. բայց լատինք ոչ. վասն
զի սոքա պատարագ մատուցանեն ՚ի նախա
տօնակ ծննդեանն եւյարութեանն. եւ լա
տինք ոչ։ Եւ ՚ի հաց պատարագին՝ զխօլորն
մատուցանել եւ ոչ մասն ինչ հայք. ասորիք.
եւյոյնք։ բայց լատինք ոչ։ Եւ յառնուլ հայք
զաստիճան սարկաւագութեան ոչ տան
հրաման կին առնուլ հայք. լատինք. եւյոյնք.
բայց ասորիք ոչ։ Եւ այսօրէկ Թէպէտ եւ
ոմանց ոչ թուեսցին, որ փոքր կարծեցելք.
սակայն աւանդութի եւոչ հաւատ։ Որպէս
եւ տօն ծնընդենն զոր միաբան ասեն տօնեն
այլոց քրիստոնէից բաց ՚ի հայոց. զի եւայն ա
ւանդութի է եւ տօնախմբութի. եւոչ հաւատ։
Եւ ոչ բարկանայ առ այս. Քո յայլ եւայլ ժա
մու տօնել։ Զի եւս մի ՚ի խորհրդականաց

տօնից կենարարին մերոյ։ Նա ոչ միաբանին
յայս տօնախմբութ̃ի մեր հաւատացելոց ժո
ղովուրդ։ Իսկ վ̃ս ջրոյն զինչ պարտ է ասել.
զի յոյնք թերի ցուցինեն զլատինացւոց խառ-
նումն ինքեանց կրկին խառնմամբն։ Նա
զայս ՚ի խորհուրդ առեալ։ Այսքան առայս։

✠ Վասն հայոց ուղղիս

Իսկ ազգիս հայոց ՚ի յայս առանձնական բա
րութի պարգևեալ այսոքիկ։
Առաջին՝ դարձան որպէս հրաշիւք։
Երկրորդ, սրբոյն Գրիգորի. որ վ̃ս շինաւէ
եկեղեցւոյ տեսիլն։
Երրորդ, ՚ի յերկոտասանից առաքելոցն, ե-
րեքն հայոց. քարոզութիւն և վախճանն։
Չորրորդ, Աբգարու թագաւորին նախըն
ծայի ՚ի քս̃ հաւատալն։
Հինգերորդ՝ Աստուածապարգևեք Գիրն։
Վեցերորդ, տապանն նոյի յարարատեան ՚ի
լեառն մասիս։
Եօթներորդ, եդեմաբուղխ երից գետոց
հոսումն։
Ութներորդ, զի արևելեանք կոչին հայք։
Իններորդ, և յայսմ կողմանէ և ա̃ծատունկ
դրախտն։
Տասներորդ՝ և յայսմ կողմանէ շարժին լու-
սաւորքդ ՚ի յընթացս իւրեանց. որ են կարա
պետ մեծին լուսոյ ծագմանն։ Վ̃ս զի արե
գակն առաջարուէ քս̃ հայրիկան փառօք և մ̃ծա

գումար դասուք նկարապետեալ մծայլին
նշանն անուխ գալոց է ըստ աւետարանն, ո՞պ փայ
լակն որ ելանէ յարեւելից․ այսպէս և գա
լուստն որդւոյ մարդոյ․ յորում փառք և գո
րութիւն ընդ հօր եւ որդւոյ և սուրբ հոգ
ւոյն ամէն ։

✠ Գրիգորի Լուսաւորչի [illegible] հաւատոյ․ [illegible] Ս տր
դասելոյ․ [illegible] [illegible] [illegible] [illegible] ։
Ո՛չ որպէս փայլակն որ ելանէ յարեւելից եւ երեւի մինչեւ յարեւ
մուտս՝ այնպէս եղիցի եւ գալուստ որդւոյ մարդոյ ։

Գլուխ․ ԿԴ ։

## ՓՐԿԱԿԱՆ ԳԱԼՈՒՍՏՆ

Զ Քնի Աստուծոյ մերոյ կրկին ան գամ ասեն նր գիրք և հոգեւլեալք վարդապետք եկեղեցւոյ։ Առաջին ծածուկ և ողորմութեամբ որպէս զանձրեւ ի վերայ գեղմանն։ Եւ երկրորդն, յայտնի և հրով․ ըստ այնմ տծ մեր յայտնապէս եկեսցէ․ և հուր առա ջի նր բորբոքեսցի և այլ։ Առաջին գալուստն հնարհաց և ողորմութեան։ Եւ երկրորդն արդարու թեան է և ատանջանաց․ վն այն ասէ յաւետարա նին ո՞պ փայլակն որ ելանէ յարեւելից․ այնպէս եղիցի և գալուստն որդւոյ մարդոյ։

Դարձեալ զգալուստքն ի դատաստան․ բ․ ազգ ասեն։ Առաջինն է, յորժամ գայ ի յօր մահու մարդոյն․ վն առանձին դատաստանի։ Եւ երկրորդ յորժամ գայ ի կատարածի օրն վն ամ հասարակ դատաստանի։ Ազ առաջին

գալստեան ասէ տեսիլն. յիշեա ուստի ան-
կար եւ ապաշխարեա. եւ զառաջին գործն քո
արա. ապա թէ ոչ՝ գամ եւ շարժեցից զաշ-
տարակն քո ՚ի տեղւոջէ իւրմէ, թէ ոչ ա-
պաշխարեսցես: Ո՜ ՚ի հաւատացեալ մարդն
յորժամ անկանիս ՚ի մեղս եւ ոչ զղջաս, յայն
ժամ Քս գայ ՚ի յօր մահուն. եւ աշտարակն
որ է ամ բարի գործքն բառնայ ՚ի նմանէ:
Ապա թէ դարձեալ զղջանայ, ամ բարի
գործքն միան առ ինքն: Ահա վա այս գալս-
տեան ասէ քս վա ընտրելոցն. ես երթամ եւ
պատրաստեմ ձեզ տեղի. դարձեալ գամ եւ առ-
նում զձեզ առ իս:

Այլ այս առաջին դատաստանն թէ սրբոցն
է թէ չարեացն երեք կերպիւ անկատար
է: Նախ զի յօր մահուն ոչ լինի տրուեալ
վարձն սրբոց. եւ ոչ տանջանքն չարեաց. զի
զայս ՚ի յարութեան առնուն հոգւով եւ մար-
մնով, որ միաբանին գործեցին զբարի կամ
զչար. այլ հոգիք սրբոցն ունին զփառս իւ-
րեանց յուսով. եւ ուրախացեալ են ՚ի բարի
գործս: Նոյնպէս եւ չարեաց հոգիք տանջին
յերկիւղէ հրոյն. այլ եւ չարչարին ՚ի դոր-
ծոց իւրեանց:

Երկրորդ, զի այս առաջին դատաստանս ի-
ծածուկ է. զի թէ ուր հոգին որ ելանէ ՚ի նմին
ժամու գիտէ, թէ ՚ի կորուստն ելոցէ, թէ ՚ի
փրկելոցն. այլ այժմ ամ մարդիք ոչ գիտեն.

Նաև ո՛չ գիտեն զայն թէ չարքն վասն մե֊
ղաց կորընչին. և սուրբքն վասն արդարու֊
թե՟ փրկին:

Երրորդ, զի թէպէտ ՚ի յօր մահուն բաժա֊
նին ՚ի միմեանց բարիքն և չարքն, մին մին. այլ
ո՛չ միանգամայն ամենեքեան. վ՟ այնորիկ հա֊
սարակ դատաստան որ լինելոց է, հա՛րկ է որ
զայս ·գ՟· թերութիւնս լնու:

Առաջինն որ բարիքն հոգւով և մարմնով ըզ֊
փառս ժառանգեն. չարք հոգւով և մարմ֊
նով զտանջանսն յաւիտենից առնուն:

Երկրորդ, պակասութիւն լցուսցի. որ ամենե֊
քեան առ հասարակ գիտասցեն ըզփրկու֊
թիւն ընտրելոցն. և ըզկորուստ չարեացն.
Նաև զայն թէ վասն է՞ր ոմանք փրկեցան
և ոմանք կորեան:

Երրորդ, զի բարիքն և չարքն միանգամայն
բաժանին ՚ի միմեանց. բարիքն ՚ի յարկսն ելցեն.
և չարքն ՚ի դժոխս իջցեն. վ՟ այն հասարակ
դատաստանն յո՛յժ ահագին լինի. քանզի ա֊
ահ ո՟ղ փայլակն որ ելանէ:

Ա՟ զի փայլակն բազում յատկութիւն ունի

Առաջին զի փայլունն լուսաւոր է. այսպէս
գալուստն ․ Ք՟ի փայլուն լինի լուսաւոր.
ո՟ղ ասէ առաքեալն Պօղոս մինչև եկեսցէ
տ՟ր որ լուսաւորեսցէ զգաղտնիս խաւարի և
յայտնեսցէ զխորհուրդս սրտից:

Երկրորդ, զի փայլակն զկայծուղն թողու և

զպինտն հալէ. որպէս ասեն թէ զթուրն այրէ. և զթափքն ոչ. և զարծաթն ՚ի մէջ քսակին հալէ և զքսակն ոչ. նոյնպէս գալուստն Քի զքարասիրտն այրէ և զխոնարհն ոչ. որպէս ասէ սողոմոն. տր ամբարտաւանից հակառակ կայ. տայ շնորհս խոնարհաց ։

Երրորդ, փայլակն յորժամ հարկանէ, զոր ինչ յերկուս բաժանէ. նոյնպէս և գալուստն Քի յերկուս բաժանէ զմարդիկ. զարդարսն ՚ի յաջմէ. և զմեղաւորսն ՚ի ձախմէ. որպէս ասէ յաւետարանին. թէ որդի մարդոյ յորժամ նստցի յաթոռ փառաց իւրոց. յայնժամ մեկնեսցեն զնոսա ՚ի միմեանց. որպէս հովիւ մի զի մեկնեսցէ զօդիսն յայծեաց։

Չորրորդ, զի փայլակն շուտով գայ ՚ի վայր. նոյնպէս Քս ՚ի կատարածի շուտով իջանէ յերկնից. որպէս ասէ տեսիլն Յօհաննու. ահա հասից վարձահատոյց գայ վաղ վաղակի և հատուսցէ իւրաքանչիւր զգործս ։

Հինգերորդ, զի որպէս փայլակն յայտնի երևի. նոյնպէս և գալուստն Քի յայտնի լինի. որպէս ասէ սաղմոսն. ած մեր յայտնապէս եկեսցէ և ած մեր մի դադարեսցէ։

Վեցերորդ, որպէս փայլակն յանկարծակի ծագէ. նոյնպէս և գալուստն Քի յանկարծակի լինի. որպէս ասէ Պօղոս ՚ի թեսաղոնիկէ. յորժամ ասիցեն թէ խաղաղութի և շինութի, յայնժամ հասցէ նց յանկարծակի սատակումն

ոպ̅ երկնային. վ̅ն այն և Ք̅ս ասէ. թէ ոպ̅ էր յաւուրսն Նոյի. ուտէին ըմպէին մինչև եկն

ջրհեղեղն և կորոյս զամենեսեան :

Եօթներորդ, ահարկու է տեսութ̅ն. այսպէս և տ̅ր մեր ահարկու է փառօք իւր̅ ա̅մ մեղաւորաց. ըստ այնմ, երկիցեն հեթանոսք յանուանէ քումմէ :

Ութներորդ, ՚ի պատառուածս ամպոյն երևի փայլակն. այսպէս և ՚ի գալարիլ երկնից ոպ̅ զմագաղաթ երևեսցի գալուստ տեառն մերոյ Յ̅ի Ք̅ի հանդերձ ա̅մ երկնային զօրօք.

Իններորդ, զի կայծակն յոյժ ահագին է և ոչ ոք կարէ կալ ընդդէմ նր̅. և ոչ թաքչի ՚ի նմանէ. Այսպէս ահագին է գալուստ Ք̅ի. ոպ̅ ասէ սաղմոսն. դու ահաւոր ես և ո՞ կարէ կալ առաջի քո: և եսայի ասէ՝ ահ տեառն անհնարին և լի բարկութ̅ և սրտմտութ̅ անել զտիեզերս անապատ և զմեղաւորս սատակել ՚ի նմանէ :

Տասներորդ, զի փայլակն ՚ի թանձր և ՚ի մթացեալ ՚ի հեղեղաբեր և ՚ի կարկտաբեր ամպոց լինի. և ՚ի յահագին ձայթմանէ որոտման կայծակն յերկիր թափի. այսպէս և ՚ի կատարածի աւուրն Տէրն մեր Յ̅ս Ք̅ս թանձրացեալ բազմութ̅ հրեշտակաց մթատեսիլ և ահագին դիմօք երևի իւր̅ մեղաւորաց. և ասիցեն բլրոց թէ ծածկեցէք զմեզ. վ̅ն այն ասէ ոպ̅ փայլակն որ ելանէ յարևելից և երևի :

Եւ տալ՝ պատմագամ գաղտնեաց. ՃԻԵ օրն անգիտելի է մարդ-
կանէ:

Նախ թէ օրն այն անգիտելի է մարդկա-
նէ: Երկրորդ .ԺԵ. նշանք որ լինին յառաջ
քան զդատաստանն: Երրորդ, վն վերջին հր-
րոյն. եկատարածի աշխարհին: Չորրորդ, վն
փողոյն: Հինգերորդ, վն դատաւորին քն:
Վեցերորդ, վն մատնողաց մեղաւորաց:
Եօթներորդ, վն վկայիցն: Ութներորդ վն
դատաստանին: Իններորդ, վն նեղութե ա-
հուրն:

Առ Նախ տեսցուք զառաջինն գլուխն թէ
գալուստն քն եկատարած աշխարհի անգի-
տելի է մարդկան թէ երբ լինելոց է. որպ ա-
սէ առաքեալն Մատթէոս, թէ զօրն զայն
ոչ ոք գիտէ. ոչ հրեշտակք յերկինս. եւ ոչ որ-
դի. բայց միայն հայր:

Ա.յլ զբանս զայս թէ ոչ որդի գիտէ, վար-
դապետք .Գ. ազգ մեկնեն:

Նախ զի որդին յայնմ կողմանէն գիտէ որ
ած է. այլ մարդկութեն գիտէ քն յայնմ
կողմանէ, որ միացեալէ ընդ բանին այ:

Երկրորդ, զի .Բն գիտէ զօրն զայն ինքն
ըստ ինքեան. այլ ոչ ասաց վասն մեր. զի ոչ
յայտնեց առաքելոցն եւ ոչ այլոցն: Եթէ ոք
հարցանէ թէ վասն էր ոչ յայտնեաց քրիս-
տոս զօրն զայն. վարդապետք ասեն թէ վն
.Գ. պատճառի:

Առաջին զի երկիցուք եւ զգուշասցուք. եւ
հանապազ 'ի բարեգործութիւնս լիցուք զի
վարձս բազումս առցուք։ Ո՜ եթէ գիտէաք
զօրն զայն, բազում չարիս առնէաք. Թէ յոր
ժամ մերձի օրն՝ ապաշխարեմք. այլ այժմ եր
կու իրք զմեզ զարհուրեցուցանէ. մին զոր
մեր մահու օրն ոչ գիտեմք. եւ միւսն որ զՔսի
գալստեան օրն։ Ո՜ երկոսեանն յայտնի գի
տեմք որ լինելոց է. այլ ո՛չ գիտեմք ե՛րբ լի
ցի. զի պատրաստ լիցուք որպէս ասէ տէրն.
եւ դուք եղերուք պատրաստք. զի յորում ժա
մու ո՛չ կարծիցէք՝ գայ որդի մարդոյ։
Երկրորդ պատճառ՝ ոչ յայտնեաց վասն ան
հոգութեան մարդկան. վասն զի առաջին
գալուստն Քսի յայտնի էր 'ի գիրս մգս. այլ
մարդիք ծուլացան եւ ո՛չ կարացին գիտել.
որ նախատեաց զնոսա Քս ասելով. կե՛ղծա
ւորք՝ զերեսս երկնի եւ երկրի գիտէք փոր
ձել. իսկ զժամանակս զայս զի ո՞րդ ո՛չ փոր
ձէք։ Եւ յորժամ եկն. Քս ո՛չ ընկալան զնա.
այլ նախատանօք սպանին. վս այն զերկրորդ
գալուստն Թաքոյց 'ի մարդկանէ. զի յան
կարծակի հասանիցէ ի վերայ գլխոց նոցա։
Այլ ո՛չ կամի առնել զերկիւն գալուստն ծա
ծուկ ո՛րպ զառաջին. այլ բազում հրեշտակօք
եւ փառօք զի ամենեքեան երկիցեն 'ի նմանէ։
Երրորդ պատճառ՝ զի Թէպէտ բազում ինչ
բաշխեալ է աստուած ազգիս մարդկան. այլ

է ինչ որ ընդ Խոսրով իշխանութե՟ն եղ. զի ե-
րևեսցի թէ ա՟ծ է այսինքն զատեղծման աշ-
խարհիս եդ ընդ ձեռամբ Խոսրովու. զի ինքն մի-
այն ըստեղծեաց. և ո՛չ ոք օգնեաց նմա. ո՛չ ի
հրեշտակաց և ո՛չ ՚ի մարդկանէ: Նայև զկա-
տարած աշխարհիս եդ ընդ Խոսրով իշխանու-
թե՟ն. զի ինքն միայն գիտէ և ո՛չ ումեք յայտ-
նեաց ո՟պ ասաց քս. ո՛չ է ձեզ գիտել զժամս
և զժամանակս զոր Հայր եդ յիւրում իշխա-
նութեան:

Երկրորդ Գլուխն ասելի է վասն ժԵ. նշանացն որ լինելոց են:

Ո ի նախ քան զգալուստն քսի բազում նը-
շանք լինելոց է. որպէս ասէ աւետարանն.
եղիցին նշանք յարեգակն և ՚ի լուսին և
յաստեղս. որ են լուսաւորքն: Նա թէ ո՟պ
նշանք լինին յարեգակն և ՚ի լուսինն և յաս-
տեղս որ են լուսաւորքն: Նատ թէ ոս յայտ-
նի ասէ, թէ արեգակն խաւարեսցի և լու-
սինն ոչ տացէ զլոյս իւր. և աստեղք յերկ-
նից անկցին. և զօրութիւնք յերկնից շարժես-
ցին: Խաւարումն արեգական և լուսնի ո՛չ
լինի ըստ կարգի բնութե՟ն. զի թէ ըստ բնու-
թե՟ն լինէր, կարէին աստղաբաշխք գտանել
զօրն զայն: Այլ լինի սքանչելեօք ա՟յ յա-
ճուրս խաչելութե՟ն քսի. և անկումն ո՛չ լի-
նի ճշմարիտ աստեղաց. այլ այնոցիկ որ ՚ի գո-
լոշից երկրի երևին: Դարձեալ և այս գի-
տելի է. զի առաջին նշանք որ լինին յառաջ

քան զդատաստանն։ Յորոց գոչէ Ղուկաս. երևեսցին նշանք յարեգական և ի լուսնին և յաստեղս. և յաշխարհի տագնապ հեթանոսաց. և յահեղ բարբառոյ իբրև ծովու խռովութեանց։ Առաջին բանք յայտնի է. յովէլ ասէ. արեգակն դարձցի ի խաւար. և լուսինն յարիւն. մինչև եկեալ իցէ օր տեառն մեծ և երևելի։ Եւ տեսիլն Յովհաննու ասէ. տեսի զի ահեղ և շարժումն մեծ. և արեգակն դարձաւ ի խաւար և եղև գիշեր մթին. և լուսին բոլորովին եղև յարիւն. և աստեղք յերկնից թօթափեցան։ Իսկ վասն խռովութեանց ծովու կարծեն ոմանք թէ ոչ ինչ դարձցին. բայց այնմ որ ասէ տեսիլն ծով այլ ոչ ևս։

✠ Եւ այլ վարդապետք ասեն ըէ տեսեալ ի գիրս հրէից որ ըն թեռնուն է .ԺԵ. նշանն ի հնգետասան աւուրս յառաջ քան զդատաստանն։

Յառաջին աւուրն բարձրասցի ծովն .խ. կանգուն ի վերայ բարձրագոյն լերանց. և կացցէ իբրև զպարիսպ շուրջ պաշխարհաւս։
Յերկրորդ օրն իջցէ ծովն ի խոնարհ մինչ զի հազիւ երևեսցի։
Յերրորդ օրն կէտք մեծամեծք ելեալ ի վերեաց ծովուն գոչեսցեն մինչև յերկինս։
Ի չորրորդ օրն կործանեսցին ամ շինուածք յահագին հողմոց. և թռչունք և գազանք և անասունք ի մի վայր ժողովեսցին. և աղաղա

կեսցեն զի վաղճան նոցա հասեալէ։
՛Իհինգերորդ օրն ծառք եւ տունկք եւ բոյսք,
զցօղ արեան կաթեսցեն յերկիր։
՛Իվեցերորդ օրն վէմք ընդիրեար հարկա
նիցեն. եւ ՛ի դ՟. մասունս բաժանեսցին։
Յեօթներորդ օրն գետք հրեղէնք յարի
ցեն ընդ դէմ երեսաց հաստատութե՟ մին
չեւ յարեւելս ընթանալով։
Յութներորդ օրն եղիցի ընդհանուր գետ
նաշարժ. մինչ զի ո՛չ կարեն կանգնիլ կեն
դանիք. այլ յերկիր անկանիցին։
Յիններորդ օրն ամ՟ լերինք եւ բլուրք եւ
ձորք հաւասարեսցին։
՛Իտասներորդ օրն ելեալ մարդիք՝ որք էին
՛ի լերինս ՛ի յայրս եւ ՛ի խորշս երկրի՝ շրջեսցին
որպէս խելագար. եւ ո՛չ կարասցեն խօսիլ
ընդ միմեանս։
՛Իմետասաներորդ օրն ամ՟ գերեզմանք յարե
ւելից մինչեւ յարեւմուտս բացցին. եւ դիա
կունքն կանգնեսցին առ ափն գերեզմանին։
Յերկոտասաներորդ օրն թռչեսցին աստե
ղաց անկանիլ յերկնից։
Յերեքտասաներորդ օրն մեռանիցին ամե
նայն մարդիք։
՛Իչորեքտասաներորդ օրն վառեսցին եր
կինք եւ երկիր եւ օդ հրով։
՛Իհնգետասաներորդ օրն՝ եղիցին երկինք
նոր եւ երկիր նոր. եւ յառնեն ամ՟ մեռեալք։

Դարձեալ նշանք չարչարանացն քի այ մե-րոյ խաչն. բեւեռքն. եւ այլն. որ բերեցին ա-ռաջի դատաւորին. եւ 'ի մարմին նր երեւե-ցին ըստ պէս խոցուածոց նորա` ոպ ասէ զաքա-րիա. հայեսցին 'ի նա յոր խոցեցին: Նաեւ տե-սանեն խաչօղքն եւ չար հրեայքն. եւ ճանաչեն եւ ասեն թէ սա է նա զոր մեք խաչեցաք յե-րուսաղէմ. յայնժամ խաչօղքն եւ ուրացօղքն դատապարտին եւ կորնչին: Իսկ երկրպա-գուքն պարծին 'ի նա` բերկրին եցնծան եւ ուրախանան:

Երրորդ վասն վերջին հրոյն [illegible] ասէ

Ո՛չ նախ քան զդատաստանն հուր մեծ եւ սաստիկ վառի. որպէս ասէ դաւիթ հուր առաջի նորա բորբոքեսցի, եւ շուրջ զ՛՛: Կո-չեսցէ զերկինս 'ի՛: Վարդապետք ասեն թէ այն հուրն ընդ ամ երկիր սփռի. եւ բարձրա-նայ 'ի վեր ամ լերանց .ժե. կանգուն. որպէս եւ ջրհեղեղն. այրէ եւ մաքրէ զամենայն աղ-տեղութիւն աշխարհի: Նաեւ զորս 'ի բնութէ աղտեղանայ ոպ .դ. տարերքս վասն ընդ մի-մեանս խառնմամբ: Երկրորդ եւ զամ աղտե-ղութի մաքրէ, որ 'ի մեղաց մարդկան: Նոյն հուրն զորս գտանէ կենդանի մարդ առ-ժամայն այրէ 'ի մոխիր դարձուցանէ: Եթէ ոք ասէ ո՞ւր է հուրն այն որ գայ 'ի կատարա-ծի: Ասեմք թէ հուրս այս որ մաքրէ զաշ-խարհս: Նաեւ զդատաստանն սկսանի. ոպ ասէ

Դաւիթ. հուր առաջի նորա գնասցէ այ
րեսցէ շուրջ զթշնամիս": Եւ յետոյ 'ի դա
տաստանին յերկու բաժին լինի. մին բաժին
այրեցողութին ծանրութին և մթութին. և զամ
աղտեղութին զոր էառ յաշխարհէս որոշէ.
և փաթաթի զմեղաւորօքն և ընկղմէ 'ի դը
ժոխքն. և տանջէ զնոսա զամենայն ։

Եւ միւս բաժինն լոյսն և թեթևութին բարձ
րանայ և լինի պսակ և ուրախութիւն ընտրե
լոցն. որպ ասէ Դաւիթ. ձայն տեառն հատա
նէ զբոց հրոյ: բոց զլոյսն ասէ՝ և հուր զայ
րելն: Եւ աւետարանն ասէ. որոյ հեծա
նոցն 'ի ձեռին իւրում և սրբէ զկալ իւր.
և ժողովէ զցորենն յշտեմարանս. և զյարդն
այրեսցէ անշէջ հրով. որ է հուրս այս տան
ջանարանք յաւիտենից։

✠ Չորրորդ գլուխն ասելի է վասն փողոյն։

Զի 'ի գալուստն Քրիստոսի ամ մարդիք 'ի դա
տաստան կոչին ձայնիւ փողոյ: Եւ զի ամ
մարդ գալոց է 'ի դատաստան 'ի փոքուէ մին
չև ցմեծամեծս. որպէս ասէ տեսիլն. ահա
հասեալ գալոց է ընդ ամպս. և տեսցեն ամ
ակք. և նոքա որ խոցեցին զնա ողբասցեն զին
քեանս իւրերայ նորա ։

Այլև վարդապետք ասեն թէ յաւուրն դա
տաստանի.գ. ցեղ մարդիկ երևեսցին. ոմանք
ոչ լինին դատեալ այլ դատեն զայլս և փրը
կին. ոմանք կատարեալ արդարք են, որպ ա_

ռաքելքն մարգարէքն մարտիրոսքն և այլքն:
Ոմանք ո՛չ լինին դատեալ. այլ կորընչին որպ՟
անհաւատքն և չարքն. զի նոքա ՚ի վաղուց հե
տէ դատապարտեալք են. որպ՟ ասէ քն՟. որ
ո՛չ հաւատայ յորդին այ՟ արդէն իսկ դատա
պարտեալ է. Ոմանք դատեալ լինին կրկին,
այսինքն ճշմարիտ հաւատացեալք որ զղջա
ցեալ են յամ՟ մեղաց իւրեանց: Ոմանք ՚ի դա
տաստան մտանեն բայց կորընչին. այսինքն
հաւատացեալքն որ մահու չափ մեղօք մե
ռանին և ո՛չ են զղջացեալ և խոստովանեալ
զմեղս իւրեանց ՚ի կենդանութե՟: Իս՟ զի ձայ
նիւ փողոյ յառնեն ասէ քն՟ յաւետարանին.
զի առաքեսցէ զհրեշտակս իւր փողով մե
ծաւ. և ժողովեսցեն զնտր՛: Իս՟ առաքեալն
պօղոս ասէ. ինքն տէր հրամանաւ, ՚ի ձայնէ
հրեշտակապետի, և փող այ՟ իջանէ յերկնից.
և մեռեալք ՚ի ք՟ն յարիցեն:
Որպ՟ ասեն վարդապետք վն՟ փողոյն այն, թէ
այնպէս սարսելի է որ թէ ուտեմ, թէ ըմ
պեմ, թէ զինչ և առնեմ, այնպէս երևի ինձ,
թէ փողն այն գոչէ յականջս իմ և ասէ ա
րիք ամ՟ մեռեալք. և տուք զհաշիւն ըստ գոր
ծոց ձերոց: Որպէս այն թագաւորն որ բը
նաւ ո՛չ ուրախանայր. բայց արդար դատաս
տան առնէր. և հարցին զթագաւորն մէջ
նորդութե՟ եղբօրն, թէ ընդէ՞ր ո՛չ ուրախա
նաս. և նա ասէ ցեղբայրն վաղիւն քեզ տաց

պատասխանի. և վաղիճն հրամայեաց փող հար
կանել. և երկեն յայժ. և ետ բերել զեղբայրն
իւր. և նորաստոյց զնա մերկ իվր փառած աթո
ռի միջոյ. և հուր ՚ի ներքոյ աթոռոյն. և սուր
կախեալ իվերայ գլխոյ. և այլ սուր յառա
ջուստ և յետուստ յաջ և յահեակ կուսէ. և
ետ բերել գուսան և այլ ուրախութի առա
ջի նորա: Ապա ասէ թագաւորն եղբայր ընդ
էր ո՞չ ուրախանաս: Ապա ասէ եղբայրն՝ ո՞րպ
ուրախանամ յայսչափ նեղութիս: Ասէ թա
գաւորն՝ նոյնպէս և ես տեսանեմ զիս ՚ի մէջ
բազում նեղութեց. քանզի ո՞րպ դու վախե
ցար ՚ի ձայնէ փողոյ որ չես ինձ վնասակար.
նոյնպէս և ես երկնչիմ յետին փողոյն. զի
մեղաւոր և յանցաւորեմ ես: Ապա փոխեալ ա
թոռ մարմինս է. և հուր ՚ի ներքոյ գերեզ
մանն. և սուր կախեալ իվր իմ դատաստանն
այ. և սուր յաջուստ կուսէ՝ է յիշատակ ըմ
մեղաց իմոց. և յետուստ յիշատակ օր մահուն
իմոյ. և ՚ի յաջ կուսէ՝ երկնչիմ թէ ՚ի մեծու
թենէ հրեշտակաց զրկիմ. և յահեակս թէ
ընդ դիւաց տանջիմ. վսն այն ո՞չ կարեմ ու
րախանալ. և լուեալ զօրացն յողբ և յարտա
սուս դարձան և ամենեքեան հաւանեցան:
Ապա այսպէս պարտ է մեզ մարդոյ ձայն փո
ղոյ յականջս պահել և ո՞չ ուրախանալ իվր
աշխարհիս: Այլ թէ որպէս իցէ փողն այն՝
ոմանք ասեն թէ մարմնօրէն. և այլք Ճշմա

րիտ ասեն թէ հոգևոր լինի. վասն զի ձայն հրեշտակի լինի. կամ ահագին ձայնն Քրիստոսի. այլ անուանն նորա փող կոչի. զի 'ի հինն փող հարկանէին. վասն .դ. իրաց. մինն վասն խորհուրդ առնելոյ. Երկրորդ վասն պատերազմի. Երրորդ վասն տօնի: Նոյնպէս վասն ահուր դատաստանին փող հարկանի. զի ամենեքեան ժողովին առ հասարակ 'ի խորհուրդ. այլ տօն մեծ լինի ամենայն սրբոց. օրհնեալ է ամէն:

✠ Հինգերորդ գլուխն ասէ լի է վասն դատաստանին Քրիստոսի: Եւ գիտելի է զի տէրն մեր Յիսուս Քրիստոս ոչ իջանէ իվերայ երկրի, այլ ի վերայ երեսաց օդոյն նըստի պայծառ քան զարեգակն. զի ամենեքեան տեսցեն զնա: և 'ի դատելն յոյժ բարկանայ ի վերայ մեղաւորաց. և քաղցր է ի վերայ սրբոց. ոչ թէ փոխէ զկերպս իւր առ նոսա քան. այլ մի և նոյն կերպարանօք երևի նոցա. որպէս թագաւորն միապէս երևի սիրելեաց իւրոց և մահապարտաց. բայց սիրելեացն իւրև զհրեշտակ. և մահապարտացն որպէս ըզ թշնամի: Նոյնպէս և յայնժամ լինիցի: Եւ ահարկու ի վերայ ամենայն մեղաւորաց՝ ասէ տեսիլն Յօհաննու. տեսք նորա իբրև զլոյս հրոյ. և ձայն նորա իբրև 'ի ջուրց բազմաց. և 'ի բերանոյ նորա սուր երկբերանեան սրեալ ելանէ: Նոյնպէս և դաւիթ ասէ. այսպ թէ ոչ դառնայք առ նա՝ զսուր իւր սրեսցէ և զաղեղն իւր լարեալ և 'ի նմա պատրաստեալ է. և զնե':

Սուրբ արդարութին այն է որ այժմ Թաքու-
ցեալէ 'ի պատենս ողորմութե իւրոյ. բայց
յայնժամ մերկացուցանէ 'ի պատենից ողոր-
մութեան. և ցուցանէ մեղաւորաց։
Իսկ աղեղն ունի զայս յատկութի. զի որք
են 'ի փայտին կողմն որ ծուռ է՝ պնդաս հար-
կանէ. և որք 'ի լարին կոյս որ ուղորդ է՝ ոչ
հարկանէ։ Նոյնպէս աղեղն դատաստանին
այն հարկանէ և խոցոտէ զմեղաւորսն, որք
'ի ծուռ կողմանն են. որպէս ասէ դաւիթ. ապ-
րեցուցանէ զայնոսիկ ոյք ուղիղեն սրտիւք։
Առ այս գիտելի է. զի կարէ ոք 'ի ձեռաց
երկրաւոր Թագաւորաց զերծանիլ. զի .Ե.
կերպիւ Թիւր դատաստան առնեն։ Նախ՝
զի երկնչին 'ի մեծամեծաց, յորժամ զան 'ի
դատաստան։ Երկրորդ վասն Թշնամութե։
Երրորդ վասն ագահութեան. զի առնուն
կաշառ։ Չորրորդ վասն սիրելութե զի ե-
րես առնեն նոցա։ Հինգերորդ վս տգի-
տութե՝ զի ոչ գիտեն ուղիղ դատաստան առ-
նել։ Նայլ կարէ ոք փախչել 'ի դատաւորէն,
յորժամ առայլ ոք, որքան զնա մեծ ընԹանայ
որպէս 'ի .Հ. առաջեան. 'ի.Ռ. առաջն երԹայ։
Նայլ քս արդար դատաւոր է. և ոչ առնէ
Թիւր դատաստան այս .Ե. կերպիւ։
Նախ զի ոչ երկնչի յումեքէ. այլ ամենե-
քեան 'ի նմանէ երկնչին և դողան զի մծ է։
Երկրորդ ոչ առնու կաշառս. զի ոչ իւրաց

ինչ կարօտէ նա։

Երրորդ եւ ոչ վասն թշնամութեան. զի որ ինչ ստեղծեր է ոչ ատէ նա. բայց միայն ըզմեղս. զոր ինքն ոչ է ստեղծեալ։

Չորրորդ եւ ոչ վասն սիրելութեան երես առնէ. զի ասէ աւետարանն թէ ոչ առնու ակն յումեքէ.

Հինգերորդ եւ ոչ վասն տգիտութեան. զի ամենագէտ է եւ իմաստութի հօր է։

Այլ ոչ կարէ ոք զերծանել ՚ի նմանէ եւ երթալ առ մեծագոյնս ոք. զի նա է թագաւոր թագաւորաց. բայց սուր երկբերանեան ելանէ ՚ի բերանոյ նորա։ Այն է զի կորուսցէ զհոգի եւ զմարմին մեղաւորաց եւ արկցէ ՚ի գժոխս. տէր ողորմեա։

Այս ձայն որպէս ջուրց բազմաց այն է. զի յաւուր ուրբաթու յորժամ հեղաքար բարբառեաց եւ ես. ՚ի ձայնէ գառին հրեշտակքն ըզգետնի հարան։ Յայնժամ յաւուրն դատաստանին ՚ի ձայնէ Միածնոյն յորժամ գոչէ զինչ լինիցին. ով ասէ մարգարէն Ամովս. առիւծ գոչեաց. եւ ով իցէ որ ոչ սասանեսցի։ Այս յահագին ձայնէն ասիցեն լերանց թէ անկերուք ՚ի վերայ մեր. եւ բլրոց թէ ծածկեցէք զմեզ յերեսաց բարկութեան դատաւորին։ Վասն որոյ աղաչեմ եղբարք փութացարուք յապաշխարութի. զի մի մատնեսցուք ՚ի ձեռն այսպիսի դատաւորին. զի ասէ

առաքելոյն ահ մեծ է անկանել ՚ի ձեռն այ։

Վ Եօթներորդ Պօղոսին տանելի է վասն մարմնոյ մեղաւորին։

Ասեն Վարդապետքն թէ առաջին մեղքն մատնէ զմեղաւորն. որպէս գողն որ զգողութին ՚ի շալակն ունի եւ կու մատնէ զինքն թէ գող է։ Նոյնպէս մեղաւորն զմեղքն ՚ի շալակն ունի. եւ կարէ այժմ ՚ի վայր ձգել զմեղքիւր եւ ոչ կամի։ Յայնժամ թէ կամենայ ձգել, ոչ կարէ. զի երթայ զհետ նորա. եւ որպէս ըստուերն երթայ զհետ մարդոյ եւ ցուցանէ. նոյնպէս եւ մեղք իւրաքանչիւր մարդոյ զինքն ցուցանէ եւ վկայէ թէ մեղաւոր է ։

Երկրորդ՝ մատնօղք են դեւք. զի որպէս գողք զգողակիցսն մատնեն. նոյնպէս սատանայք մատնեն զմեղաւորս . զի ոչ ինչ մեղք լինի յաշխարհս որ սատանայ կցորդ չէ եղեալ։ Նա այսպէս ասէ սատանայ առաջի այ. թէ մարդս այս յորժամ մկրտեցաւ, ասաց երդմամբ թէ հրաժարիմ ՚ի սատանայէ . եւ յետ գնացից նր եւ ՚ի խաբէութեց նր եւ սուտ ասաց զի զքեզ թողել է եւ յիս դիմեալ է եւ զիմ կամքս է կատարեալ. եւ ինձ հնազանդ կեցեալ է քեզ ոչ. եւ յայն օրն մեծ ամօթ բերեն մեղաւորքն ՚ի Քսի։ Զի ասէ սատանայ առ Քս. թէ մարդն ստեղծեր ՚ի հողոյ. եւ զաշխարհս նմա տուեր ՚ի ժառանգութի . եւ իջր այսր ՚ի խաչ ելեր վասն նոցա եւ փրկեցեր. Նոքա զայս ամենայն երախտիս մոռացան եւ զհետ

ինձ եկին. որ չեմ ստեղծեալ զնա. եւ ոչ զաշ-
խարհի բարութիւն առաւել. եւ ոչ կարեմ խա-
չել զնա ինձ: Սոյն ասէ Յովհան ոսկեբերանն.
թէ լաւ է ես ՚ի դժոխս տանջիմ. քան այն-
պէս ամօթ բերեմ քեզ: Երրորդ, մատնօղեն
մեղաւորաց նք որ զչար օրինակ առեն ՚ի նո-
ցանէ. եւ ասեն թէ նա ուսոյց մեզ: Որպէս ա-
սեն յառակս թէ մանուկ մի առնէր գողութիւն
սակաւ. եւ հայրն ոչ խոտորէր զնա, այլ զգո-
ղանան յինքն առնոյր. եւ նա վստահացեալ ե-
ղեւ անհնարին գող. եւ յորժամ կալան եւ տարան
զնա կախել՝ ասէ ցհայրն եկ համբուրեցից
զքեզ: Եւ եկեալ ատամամբ զքիթն հօրն եկտ-
րեաց. եւ յորժամ սաստեցին զնա. ասաց թէ
դա ուսոյց զիս գող լինել. զի ոչ խրատեաց
զիս. եւ կալեալ զհայրն եւս կախեցին: Այսպէս
դատապարտի ամ մարդ որ այլոց չար օրինակ
լինի: Եւ առաջնորդք որ հայրեն ժողովր-
դեան եւ ոչ խրատեն զմեղաւորն՝ զկաշառա-
կերս եւ զշահակերս՝ զարբեցողս եւ զայլ մեղա-
ւորս: Այլեւ որ առնուն կաշառս եւ թողու-
թիւն տան ՚ի մեղս իւրեանց, նոքա եւս տանջին.
որպէս ասէ առաքեալն պօղոս. թէ ոչ մի-
այն որք զայն առնեն, այլ որք կամակիցք
լինին գործելեաց:

Չորրորդ՝ մատնիչքն վատ քրիստոնէից՝ լի-
նին անհաւատք. որպէս ասէ Տ̃ն յաւետա-
րանն. թէ որք նինուէացիք յարիցեն ՚ի դա-

տաստանի եւ դատապարտեսցեն զսոսա զի ոչ
ապաշխարեցին: Ո՜ ի սեն անհաւատք՝ թէ
ծանուցեալ էաք զՔս՞ հաւատացեալ էաք.
Իսկ սոքա որ ունէին զՔս՞ եւ բազում վար-
դապետս ընդէ՞ր ոչ ապաշխարեցին:
Հինգերորդ՝ մատնիչք մեծատանց մեղա-
ւորաց լինին մեծութիւնք եւ գանձք նոցա.
որպէս ասէ Յակոբոս: Այսուհետեւ մեծա-
տունք՝ լացէք եւ ողբացէք ի վր՞ թշուառու-
թե՞ցն որ գալոց է ի վերայ ձեր. մեծութի՞ն ձեր
ոչ ինչ. հանդերձ ձեր կերակուր ցեցոյ. ար-
ծաթ եւ ոսկի ձեր ժանկահար. եւ ժանգ նոցա
լինիցի ձեզ ՚ի վկայութի՞. եւ կերիցէ զմարմինս
ձեր իբրեւ զհուր գանձեալ յաւուրն յետ-
նոյ. վս՞ զի զմեծատունս վերակացու եդ Ած
իւր գանձուցն, զի խնամ տարցեն աղքատաց.
եւ զինչս իւրեանց ՚ի հոգեւոր գործս ածցեն.
եւ կարօտելոցն բաշխեսցեն: Բայց յորժամ
պահեն եւ ոչ տան աղքատաց, նոքա մատնեն
թէ պահեաց զնա ագահութե՞ կամօք եւ ոչ
ետ աղքատաց: Վեցերորդ՝ մատնօղք լինին
երկինք եւ .դ. տարերքն. որ .դ. աղբ ձայնիւ
խորատեն զմեզ ասելով: Ո՜վ ՚ի քեզ եւ տմարե
փախիր. այսինքն առ ՚ի մէնջ զծառայութի՞ն
մեր. եւ ծառայեմ մոյ. եթէ ոչ առնես այդ-
պէս՝ փախիր ՚ի տանջանաց դժոխոց մատնե-
լոց եմք զքեզ: Առաջին ձայն որ ասէ առ՝ է
ծառայական: Երկրորդ որ ասէ տուր՝ է

խրատական. և որ ասէ փախիր' է՛ երկիւղա
կան։ Վասն զի երկինք ասէ ես ծառայէի
քեզ լուսով տալով։ Արակն ասէ՝ ես զքեզ ջեր
մացուցանէի. և զիմ կերակուրս քո եփէի որ
ուտէիր։ Օդն ասէ՝ ես զառ ու տուր շըն
չոյդ տայի քեզ։ Ջուրն ասէ՝ ես արբուցա
նէի զքեզ, և տանէի զծարաւն քո։
Հողն ասէ՝ ես ունէի զքեզ իվ̃ր ինձ. և սնու
ցանէի զքեզ ամ̃ պտղօք որ յինէն են։ Որդ
մեք ծառայեաք քեզ. զի վ̃ քո ստեղծեաց
զմեզ ած̃։ Նոյնպէս և դու վասն այ̃ ըստեղ
ծար. որպէս առնէիր ի մէնջ ծառայութի,
պարտէր և քեզ ծառայել այ̃. զի մի լինիցի
այն որ ստեղծ զքեզ վ̃ քո, տանջեսցէ զքեզ
իմիք։ Զի ասէ երկինք՝ ծառայութի ըն
կալար, և ծառայութի ոչ արարեր այ̃. փախիր
զի ես հրահոսանամ քեզ կայծակամբք։ Հուրն
ասէ՝ ես այրեմ զքեզ։ Օդն ասէ՝ ես կար
կուտ և ցաւտումն ածեմ իվ̃ր քո. Ջուրն ասէ՝
ես կլանեմ զքեզ և խեղդեմ։ Երկիր ասէ՝ ես
կլանեմ զքեզ։ Իսկ դժոխքն բացեալ զբե
րանն ասէ՝ ամենեքեան հալածեն զքեզ. ե՛կ
առ իս և ես ընկալայց զքեզ. վ̃ այն պարտ է
մեղաւորին ապաշխարել զմեղս։

✠ Յօթներորդ կիւրակէին ասելի է վասն վերջին դատաստանին։

Օ ի յօրն դատաստանին .գ̃. Ճշմարիտ վը
կայք լինին ընդդէմ մեղաւորին. որ ոչ եր
բեք ասեն սուտ։ Նախ վկայն՝ ի վերուստ ք̃ն

ած։ Եւ ժ. ՚ի ներքուստ խղճմտանք։ Եւ դ. արտաքուստ հրեշտակք։ Առաջին ճշմարիտ վկայ է Յս. Քս. որ է ճշմարիտ ած եւ դատաւոր։ Յորժամ նստցի յաթոռ փառաց իւրոց, յայնժամ երեւին ամն գործիք չարչարանացն Քսի, խաչն, Բեւեռքն, Գեղարդն, Եղէգն, փուշ պսակն, Քացախն, եւ լեղին։ Եւ փայտեղէն խաչն որ Քս ՚ի վր նորա խաչեցաւ ՚ի լուսոյ կազմեալ երեւեսցի. եւ զամ բարիս որ արարեալ է մեղաւորաց՝ յիշէ եւ երախտամոռ գոլն ցուցանէ նոցա. եւ զհինգ խոցուածս Ձեռացն եւ Ոտիցն եւ Կողիցն ցուցանէ նմա։ Եւ ասէ ո՛վ մեղաւորք՝ անզգոյք եւ երախտամոռացք։ Ես ստեղծի զձեզ ՚ի պատկեր իմ. եւ վն ձեր մարդ եղէ. եւ գնեցի զձեզ արեամբ իմով. եւ վն ձեր խաչեցայ եւ բեւեռեցայ. քացախ եւ լեղի արբի. եւ գեղարդեամբք խոցեցայ. եւ զձեզ առաւել սիրեցի քան զիս, զի վն ձեր մեռայ։ Ո՞ւր է ծառայութիւն իմ։ Ո՞ւր է պտուղ չարչարանաց իմոց. զիս խոտան համարեցայք քան զհող եւ զմոխիր. զի ամն մեծութիւն աշխարհիս խոտան է, եւ իբրեւ ծաղիկ խոտոյ։ Եւ զիս խոտան համարեցայք, քան զամ մեղս. զի ՚ի ներքոյ մեղաց մոռացայք զիս։ Յայնժամ ստուգ առնուն ամն մեղաւորք. ստուգ առացեն հրեշտակք. զի տեսցեն կենդանի եւ կենդանարար, զայն որ ինքեանք սպանին. եւ տեսցեն զխոցուածն զի ո՛չ կարեն

ուրանալ։ Սուտ առնուն կուապաշտքն. զի
փոխանակ ա՛յ՝ կուոցն երկիրպագեցին։ Սուտ
առնուն հերձուածողքն, զի զեկեղեցին ան
բոխեցին։ Սուտ առնուն սուտքրիստոնէյք
զի անուամբ միայն են և ոչ գործովք։ Սուտ
առնուն ամ անհաւատք որք ՝ի Քս ոչ հա
ւատացին. ոպ գրեալէ՝ ի յաւետարանն։ Եւ
ապա երևեսցի նշան որդւոյ մարդոյ յեր
կինս՝ այսինքն, խաչն. յայնժամ կոծեսցին ամ
ազգ երկրի։ Եւ տեսցեն զորդի մարդոյ ե
կեալ զօրութեամբ ընդ ամպս երկնից զօրու
թբ և փառօք բազմօք։ Երկրորդ, Ճշմարիտ
վկայ է խղճմտանք մարդոյն ոպ ասէ Պօղոս.
վկայութբ միտաց իւրեանց. և յանդիմանեալ
զմիմեանս ՝ի խորհրդոց իւրեանց։ Եւ դանիէ
էլ ասէ. ատեան նստաւ և դպրութիւք բա
ցան. այսինքն ծածկեալ խղճմտանք մարդ
կան բացան. վասն զի իւրաքանչիւր ոք զամ
մեղս իւր ՝ի միտ ածէ։ Եւ մեղք ամ մարդոյ
յայտնին առաջի ամենցուն։ Եւ Յօհան ասէ՝ ի
տեսիլն, թէ տեսի զմեռեալս մեծամեծս և
զփոքունս որք կային զաթոռովն. և գիրք բա
նային. և այլ գիր բացաւ որ է գիր կենաց. և
մեռելոցն դատաստան եղև յայնցանէ՝ որ
գիրն նխ գրեալ էր։ Նայս գիրքս բ է մին ան
ձին. և միւս հասրակ։ առանձին գիրն բազում
է և հասարակն մի։ Սորդ ապետաք ասեն թէ
գիրքս այս յորում ամ գործք մարդկան գրեալ են

չար եւ բարի, ո՛չ է մարմնաւոր: Զի եթէ մարմնաւոր էր, անչափ մեծ լինէր. եւ թէ մարմնապէս ընթեռնուին զմեր գործս մարդկան, երկար ժամանակի կարօտանար: Այլ գիրքս այս հոգեւորք են. գիրք բազում են խիղճ մըտաց իւրաքանչիւր մարդոյ: Իսկ մին գիր կենաց է Յսի Քսի. որ ամ գործք մարդկան գըրեալ է՛ ի նմա. զի գիտութիւն Քսի գիտէ զմեր գործս մարդկան. եւ՛ ի Քսի զօրութենէն ամենեքեան ընթեռնուն զգիրս իւրեանց, եւ զգործս իւրեանց. վսն որոյ փութով լինի դատաստան մզ: Երրորդ ճշմարիտ վկայ է պահապան հրեշտակն՝ որ ընկեր է եղեալ մարդոյն. եւ վկայ ամ գործոց նր: Ասացին վարդապետք թէ մի՛ գործեր մեղս յանկիւնս կամ՛ ի հրապարակս. զի հրեշտակն քո մօտ է առ քեզ եւ տեսանէ:

✠ Ութներորդ գլուխն գիտելի է վասն դատաստանին թէ ո՛ւր լինելոյ:

Զի Յս Քս դատաւորն յորժամ հարցաքննութիւն առնէ ընդ մարդկան, եւ դատապարտէ զչարս յայնմ տեղւոջ ուր ինքն դատապարտեցաւ՛ ի խաչին մերձ յերուսաղէմ: Վսն այն Յովէլ ասէ, ժողովեցից զամ ազգս. եւ իջուցից զնոսա՛ ի ձորն յովսափաթու. եւ դատեցայց զնոսա անդ. Իսկ յովսափաթու ձորն է՛ մերձ՛ ի լերանն ձիթենեաց: Ապա Քս ո՛չ իջանէ ի վր երկրի. այլ ի վր երեսաց օդոյն

նստի պայծառագոյն քան զարեգակն. զի ա-
մենեքեան տեսցեն զնա։ Եւ գժոխայինքն
ծանրացեալ կուտին ի վ՟ր երկրի՝ խոնարհեցին եղ.
այլ մեք թռչին յօդս առաջի Տ՟ին. որպ ա-
սէ Պօղոս թէ յափշտակեսցուք ամպօք ընդ-
յառաջ տեառն յօդս։ Եւ յայնժամ կատա-
րի բանն Աննայի մօրն Սամուելի. թէ Տէր
յերկնից որոտաց. եւ ինքն դատէ զամ ծագս
երկրի որ արդար է։ Եւ այս գիտելի է՝ զի
որպ լինի յարութիւն անձրեւու. նախ որոտայ, եւ
ապա կայծակն կայծէ. եւ յետոյ սաստիկ անձ-
րեւ, կամ կարկուտ գայ. Նոյնպէս ՚ի կատա-
րածի աւուրն ·Ը·. ամպամ որոտայ քն ի վե-
րայ մեղաւորաց։ Նախ լինի նախ թէ՝ ·Ա·Քաղ-
ցեայ եւ ոչ ետուք ինձ ուտել ·Բ·. ծարաւի էի
եւ ոչ արբուցիք զիս ·Գ·. Մերկ էի եւ ոչ զգե-
ցուցիք զիս. ·Դ·. Օտար էի եւ ոչ ժողովեցիք
զիս. ·Ե·. Հիւանդ էի եւ ոչ տեսէք զիս ·Զ·. ՚ի
բանտի էի եւ ոչ եկիք առ իս։ Եւ ապա կայ-
ծակէ ՚ի վերայ նոցա բանն այն որ ասէ. Եր-
թայք յինէն անիծեալք ՚ի հուրն յաւիտե-
նից զոր պատրաստեալ է սատանայի։

Եւ յետոյ գայ ՚ի վերայ նոցա անձրեւ եւ կար-
կուտ սաստիկ տանջանաց. որպէս ասէ դա-
ւիթ, տեղասցէ ՚ի վերայ նոցա հուր եւ ծը-
ծումբ, այս մրրիկ բաժին բաժակի նոցա։

ԺԱ. Երորդ գլուխն ասէ լինել զաւն ներգործութեան աւուրն դատաստանին

Նախ առաջին նեղութիւն է՝ զի երկինք ե-

երկիր ՚ի մի վայր ժողովին. այսինքն հրեշ
տակք և մարդիկք. որպէս ասէ աւետարանն զօ
րութիւնք երկնից շարժեսցին. Զի եթէ յե
րևիլ երկրաւոր թագաւորին դղրդի երկիր,
որչափ ևս առաւել յերևիլ երկնաւոր թա
գաւորին: Դարձեալ օրն այն նեղութիւն է
մեղաւորաց յամ կողմանց: Զի ՚ի վերուստ
կուսէ դատաւորն է բարկացեալ. և ՚ի վայր
կուսէ դժոխքն է բացեալ զբերանն. ՚ի յաջ
կուսէ մեղքն իւրեանց որք մատնեն զնոսա.
՚ի ձախ կուսէ դևքն անհամար քարշեն զնո
սա ՚ի դժոխս և ՚ի տանջանս: ՚Ի ներքուստ
խիղճ մտացն այրէ զնոսա. և արտաքուստ
հուրն այրէ զաշխարհս: Ո՛վ մեղաւոր ու՞ր
փախիցես, թագչիլ ո՛չ է հնար. և եթէ յայտ
նիլ երևիս ո՛չ կարես համբերել: Եւ արդ՝
ու՞ր փախիցես ո՛վ մեղաւոր. թէ յերկինս,
ո՛չ կարես. քանզի ասէ դաւիթ թէ ելա
նեմ յերկինս դու անդ ես. թէ իջանեմ ՚ի
դժոխս և անդ մօտ ես: Եւ թէ առ հրեշ
տակս ապաւինիս ո՛վ մեղաւոր պահել զքեզ՝
ո՛չ առնուն յանձն. զի այժմ պահեն, այլ
յայնժամ փախչին ՚ի մեղաւորաց: Եւ թէ ՚ի
սրբս ապաւինիս ո՛վ մեղաւոր՝ ո՛չ ընդունին.
զի անցեալ է ժամանակ ողորմութեան. և հա
սեալ է ժամանակ դատաստանին. որպէս ասէ
դաւիթ՝ յորժամ առնիցեմ, զուղիղն դատե
ցայց. այսինքն ո՛չ միայն ՚ի չարեաց, այլ և

զայնոսիկ որ ուղիղ երեւին առաջի մարդ-
կան. եւ պիղծ են առաջի այ: Արդ յորժամ դա-
տաստան առնէ Քս փրկիչն մեր՝ ելցէ 'ի բե-
րանոյ նր բանն այն. Թէ երթայք յինէն ա-
նիծեալք 'ի հուրն յաւիտենից: Յայնժամ
ծառայք դատաւորին ոչ միայն ժամանակս
ինչ. կամ տարի, կամ ամիս, կամ օր մի. այլ 'ի
նմին ժամու կատարեն զհրամանն Թագաւո-
րին. ոպ ասէ աւետարանն Թէ ելցեն հրեշ-
տակք եւ մեկնեսցեն զչարսն. եւ արկցեն զնո-
սա 'ի հնոց հրոյն. անդ եղիցի լալ եւ կրճել ա-
տամանց: Արդ յայտնապէս յայտնի է, Թէ ա-
տեան ողորմութեան այ քաղցր է քան զատեան
իրաւանց: Արդ՝ զի՞նչ ունիմք այլ հնար.
բայց Թէ այժմ դատապարտեսցուք ըզմեզ,
խոստովանելով զմեղս մեր առաջի խոստովա-
նահօրն զղջմամբ եւ ապաշխարութբ. զի մի՛
դատեալ ընդ այծիւսն, լուիցուք զերթայքն
յինէն անիծեալք 'ի հուրն յաւիտենից:
Այլ կացցուք ընդ աջմէ 'ի դասս ընտրելոցն,
լսելով զքաղցր ձայն, եթէ եկայք օրհնեալք
հօր իմոյ ժառանգեցէք պատրաստեալ ձեզ
զարքայութիւն ամէն:

✠ Սրբոյն Գրիգորի տաթեւացւոյ, վասն Մելքիսեդեկի Հարցումն:

Գլուխ. ԿԱ:

ՈՒՍՏԻ՞Ն ՄԵԼՔԻՍԵԴԵԿ.
Զի Հօրն անուն Մելքի. եւ մօրն
Սաղայ. եւ քաղաքին Սաղեմ. 'ի մանկու-

Թէ կուռոց նուիրեցաւ. և հրեշտակն Տն յայտնի
տակեալ անտի զնա յանապատն, մինչև հա
սոյց ՚ի կատարումն: Այս ՚ի Թաբօր լերինն
ամպ խոնարհեալ՝ ձեռն կարկառեալ ձեռ
նադրեաց ասելով. այս Մելքիսեդեկ ան
հայր անմայր չհամարեալ յազգս. նմանեալ
որդւոյն Այ: Ո՛վ ՚ի տղայ մանուկեր՝ ոչ ոք
գիտէր զնա: Եւ ոչ նա զոք ճանաչէր զի քա
նանացի էր. և ամենայն փարուց նոցա. բնա
կէր ՚ի ներքոյ գողգոթայէն ուր ադամայ գե
րեզմանն էր: Իւր ձեռօքն ցանէր և որթ
փատատակէր իւր բաժակն: Սոր եկեալ աբ
րահամ. և նա ել ընդ առաջ նորա ջերմ բա
ղարջ հացով և գինւով օրինակ աէրունեան
խորհրդոյն: Եւ անդ օրհնեաց զաբրահամ. և
տասանորդէր առյաւարէ անտի:

Հարց. Ո՞ինչ է որ եփրեմ ՚ի գիրս կցորդաց
ասէ: Մելքիսեդեկ որ նա ինքն է սեմ:
Պատ: Ո՛չ երկ անուն է և ոչ այլ ինչ. այլ իբր
նա ասէ զպատճառն՝ եղծ ա՛ր է հասկանա
լոյ: Նոյ օրհնեաց զսեմ. Սեմայ որդի ոչ գոյր
որ նման իւր օրհնէր զնա: Աբրահամ որդի
էր ՚ի հասանէն սեմայ արժանի օրհնութեան.
բայց սեմ չէր կենդանի որ օրհնէր. և Թա
րայ չէր օրհնօղ: Մելքիսեդեկ ՚ի նո դէմն
առեալ, զնորա գործնելով. օրհնեաց զաբ
րահամ. և Սեմ կոչեցաւ:

Որ ինչ զանազանի քահանայութիւն Մելքիսեդեկի և Աբրահամու։ Պատ. Երեք շնորհօք հաճատարքեն Մելքիսեդեկ և Աբրահամ. այսինքն, քահանայութեամբ՝ թագաւորութեամբ՝ և մարգարէութեամբ։ Զի յորժամ Աբրահամ սեղան կանգնեաց, եցոյց զքահանայութիւն։ Եւ յորժամ կոտորեաց զթագաւորսն քոդողոմորայ, եցոյց թէ թագաւոր թագաւորաց է։ Եւ յորժամ խօսեցաւ Ած ընդ նմա, եցոյց զմարգարէութիւն։ Նոյնպէս և Մելքիսեդեկ թագաւոր էր Սաղիմայ. որ և անուանն յայտնէ Մելքի որ է թագաւոր. իսկ քահանայ՝ զի հաց և գինի պատարագ մատոյց։ Իսկ մարգարէ՝ զի օրհնեաց զաբրահամ։ Առ. զանազանին պատարագաւն։ Նախ՝ զի Մելքիսեդեկ ունէր պատարագ հաց և գինի. և աբրահամ ոչ ունէր։ Երկրորդ՝ զի աբրահամ յետոյ պատարագեաց զկենդանիս, որ էր նշանակ ժամանակեայ պատարագին Ահարոնի։ Առ. Մելքիսեդեկին էր նշանակ յաւիտենական պատարագին Քսի, ՚ի տեսակ հացի և գինւոյ։ Երրորդ՝ աբրահամուն ուտէ և ուտի շնչաւոր և արիւնաւոր։ Առ. Մելքիսեդեկին անխիղճ որ միշտ ուտի անշունչ և անարիւն։ Չորրորդ՝ աբրահամուն սաղմիւ և ախտիւ ծնեալ։ Եւ Մելքիսեդեկին յերկրէ ծնեալ, և յերկինս սնեալ. որ առաւել յարմարի Ճշմարտութեան ՚ի յերկ

նից իջեալ և՛ ի կուսէ ծնեալ: Հինգերորդ՝
մելքիսեդեկ մարդկան նուիրեաց ոպ Քս
առաքելոցն և մեզ. և աբրահամու ոչ: Վեցե-
րորդ՝ մելքիսեդեկ նուիրեաց զպատարագն
և ընկալաւ զտասանորդն. ոպ Քս պարգևէ
հաւատացելոց զշնորհս. և առնու զտաս
նեակս զկատարեալ և զբարի գործս. կամ
զտասն բանեան օրէն .Ժ. զգայարանօք:
Եօթներորդ՝ մելքիսեդեկ ինքնին մատոյց
զպատարագն քաղցելոց և ծարաւելոց. ոպ
և Քս ոչ միջնորդօք հրեշտակաց կամ մարդ-
կան. այլ ինքնին բաշխեաց զմարմին և զա
րիւն իւր քաղցեալ և ծարաւեալ ազգի:
Ութներորդ՝ ոպ և Աբրահամ ճաշակեաց
զպատարագն մելքիսեդեկի. և ոչ հաղորդե
ցաւ ընչիցն սոդոմայ: Նոյնպէս և որք հաղոր
դին մարմնոյն Քի, ոչ մերձենան ՚ի զանա
զան ախտս մարմնական անթլփատութե և զո
հից դիւական: Իններորդ՝ քահանայութի
և պատարագն մելքիսեդեկի առաջին էր և
երկնաւոր: Իսկ աբրահամուն յետ նր երկ
րաւոր: Վս որոյ ասէ մարգարէն՝ Ճշմար
տութի յերկրէ բուսաւ որ է աբրահամ. ար
դարութիւն յերկնից երևեցաւ որ է մելքի
սեդեկ. ըստ այնմ քահանայ էր ասէ այ բարձ
րելոյ: Տասներորդ ոչ միայն պատարագաւն.
այլ և անուամբ և տեղեաւն և օրինակ էր
Քի: Զի մելքի որ է թագաւոր. և սեդեկ

արդար. եւ սաղիմն խաղաղութի թարգմանին: Եւ տէր մեր Յս Քս թագաւոր յաւիտենական. եւ արդարութի արար մեզ. եւ հաշտեցոյց զմզ ընդ մարդկան: Այսքան զանազանութի է քահանայութեն Մելքիսեդեկի եւ աբրահամու:

✠ Դու ես Քահանայ յաւիտեան ըստ կարգին Մելքիսեդեկի:

Օրինակ եւ համեմատութի Մելքիսեդեկի առ Քս: Նախ՝ որ Մելքիսեդեկ յանցաւոր եւ յանիծեալ ազգէն քանանու. եւ Տէր մեր եւ առ մարմին՝ ի դատապարտեալ ազգէ մարդկային. ըստ այնմ, թէ փառն մեր անէծս կոչեցաւ: Երկրորդ, զՄելքիսեդեկ քահանայ առաջին վկայէ գիր ըստ մովսեսի. թէ քահանայ էր այ բարձրելոյ. եւ անդրանիկն մեր եւ առաջին քահանայապետն եմուտ՝ ի ներքին կողմն վարագուրին ասէ Պօղոս: Երրորդ, զի Մելքիսեդեկ քահանայ. ոչ ըստ մարմնական ինչ օծմամբ իւղոյ որպէս այլոցն. այլ շնորհօք հոգւոյն տեառն անընդմիջաբար: Եւ Քն օծեալ ոչ ՝ի յիւղոյ ինչ երեւութապէս օծման. այլ միանալով ընդ բանին այ ասի օծեալ. ըստ այնմ, վս այսորիկ եօծ զքեզ այ այ քո: Չորրորդ, ըստ անհանակոչութեն. զի Մելքիսեդեկ որ է թագաւոր. եւ թագաւոր էր սաղիմայ. եւ Քս թագաւոր գոլով անվախճան. ըստ հրեշտակին թագաւորութեն նր ոչ գոյ վախճան:

Հինգերորդ, որ տալ սեդեկ, այսինքն արդար։ և վասն տեառն ասէ մարգարէն․ զիրաւունս քո արքայի տուր․ զարդարութիւն քո որդւոյ թագաւորի։ Նա՛ թէ գործք ձեռաց նորա արդարութիւն և իրաւունք են․ այս է զոր արարին մարդկային ազգի․ որք զըրկեալք էին 'ի սատանայէ ։ Վեցերորդ, զի սաղեմայ ասէ՝ որ է երուսաղէմ․ և թարգմանի խաղաղութիւն։ Նա՛ ․ Քրիստոս թագաւոր վերնոյն երուսաղէմի․ և զնոյն խաղաղութիւն ետ առաքելոցն զոր 'ի ծննդեան հրեշտակք երգէին։ Եօթներորդ, զի Մելքիսեդեկ անհայր անմայր չհամարեալ յազգս․ և Տէրն մեր անմայր յերկինս անհայր յերկրի․ և զազգատոհմն նորա ո՞ պատմեսցէ ասէ մարգարէն Եսայի։ Ութներորդ՝ զի Մելքիսեդեկ պատարագ հաց և գինի մատոյց աբրահամու ։ Նա՛ Տէրն մեր նովիմբ աւանդեաց զփրկական մարմին և զարիւն իւր։ Իններորդ, զի զայս ո՛չ 'ի ձեռս ծառայից․ այլ ինքնին ընդառաջ ել աբրահամու և ետ։ Նա՛ Տէրն ո՛չ 'ի ձեռս հրեշտակաց Սերովբէից և Քերովբէից, և ո՛չ միջնորդութեամբ մարդկան ընտրելոց Նահապետաց, մարգարէից, առաքելոց, և մարտիրոսաց․ այլ նոյն ինքն խոնարհեալ 'ի մերս ինքեամբ արար զփրկութիւնս մեր ։ Տասներորդ որպէս Մելքիսեդեկ ետ զայն, և ընկալաւ յաբրահամէ զտասանորդսն․ նոյն

պէս եւ չէրն մեր եւս հաւատացելոցն զկե
նարար մարմինն եւ զարիւնն. յորոց խնդրէ
զգործս .Ժ. աւուրս. այսինքն զկատարեալս.
եւ զկատարումն .Ժ. բանեան օրինացն. ՚ի յորս
է մաքրութի .Ժ. զգայարանացս. որպ ՚ի վե
րոյ ասացաւ ։

✠ Քարոզ վասն ողորմութեան ՚ի յետ ասացելոյն Պօղոսի որ ասէ. Աղաչեմ զձեզ՝ նախ քան զամենայն առնել աղօթս, խնդրուածս, պաղատանս: Գլուխ: Ա.Ս ։

Այս գիտելի է՝ զի .գ. են տեսակ բարի գործոցն. այսինքն պահքն՝ աղօթքն՝ ողորմութիւն: Այլ թէ վասն էր են երեքեան. ասեմք վասն .գ. պատճառի: Նախ զի ամ հոգեւոր գործք վերածին առ աղօթքն. եւ ամ գործք գթութե վերածին առ ողորմութիւն. եւ ամ գործ կշտամբելոյ զմարմինն վերածին առ պահքն: Երկրորդ յերեք բաժանին ամ մեղք ՚ի ցանկութի մարմնոյ. եւ ՚ի ցանկութի աչաց. եւ յամբարտաւանութի աստի կենաց. որպ ասի կաթուղիկեայց: Արդ պահօքն յետս դառնամք ՚ի ցանկութե մարմնոյն. ողորմութբն ՚ի ցանկութե աչաց. եւ աղօթիւքն յամբարտաւանութե աստի կենաց: Երրորդ պատճառ՝ զի պահօք կարգաւորի մարդն առ ինքն. ողորմութբն առ ընկերն. եւ աղօթիւքն առ ած: Չորրորդ պատճառ զի երիւք հաստատեաց զմարդն. այսինքն մարմնով եւ հոգւով եւ ընչիւք. եւ ՚ի նցնէ բաժին խնդրէ ած. պահքն է ՚ի մարմնոյ բա

րեաց. աղօթքն 'ի հոգւոյն. և ողորմութիւն յըն
չիցն: Հինգերորդ պատճառ՝ զի պարտական
մարդն .գ. կերպիւ վճարէ. այսինքն կամ
պահելով կամ տալով. կամ աղաչելով: և մեք
զպարտս մեղացն սոյնպէս վճարեմք. պահեմք
զմեզ պահելովք. տալ զփրկանս ողորմութեամբն. և
աղաչեմք աղօթիւքն: Վեցերորդ պատճառ
զի .գ. են թշնամիք հոգւոյս, այսինքն մարմինս, աշխարհս,
և սատանայ. և երիւք պատերազմիմք և յաղ
թեմք զսոսա. զմարմինս պահօք յաղթեմք. և
զաշխարհս ողորմութեամբ. և զսատանայ աղօթիւք:
Եւ .գ. են ամենաբարեգործութիւնք քրիստոնէից:
Երկրորդ գիտելի է՝ զի աղօթքն մեծ և սքան
չելի գործք է քան զայլսն: և այս վասն բազում
պատճառի: Նախ զի աղօթքն պարտք է և հար
կաւոր. և ողորմութիւն և պահքն կամաց. թէ կա
միս պահես և ողորմիս. և թէ չկամիս ոչ: այլ ա
ղօթքն պարտք է վասն այն պիտի վճարել. և հար
կաւոր է՝ առանց որոյ հոգին ոչ կարէ կեալ.
վասն հրամայէ տէրն յամենայն ժամ կալ յաղօթս և ոչ
ձանձրանալ: Երկրորդ զի պահքն և ողորմու
թիւն երբեմն լինի. այլ աղօթքն յամենայն ժամ. որպէս
ասէ առաքեալն յամենայն ժամ աղօթս արարէք. և
մարգարէն օրհնեցից զտէր յամենայն ժամ և այլն:
Երրորդ զի աղօթքն դիւրաւ կատարի. զի թէ
տկար է կամ ծեր, ոչ պահէ. և թէ աղքատ՝
ոչ ունի ողորմութիւն. իսկ աղօթքն ծեր և տղայ,
առողջ և հիւանդ, հարուստ և աղքատ, առ-

ձեռն պատրաստ ունին։ Չորրորդ՝ պտուղն ողորմութեան արտաքին ընչիցն է բաժին. իսկ աղօթքն 'ի ներս 'ի նմ սրտէ և յանձնէ պատարագ զոր ո՛չ արհամարհէ ած։ Հինգերորդ՝ պտուղ ողորմութեան մասամբ նմանք են այ. իսկ աղօթքն բոլորին. զի մտօքն մաղթէ. սրտիւն աղաղակէ. աչօքն արտասուէ. և ականջօքն լը սէ. բերանովն սաղմոսէ. և ձայնիւն խօսի. և բոլոր մարմնովն ծունր կրկնէ։ Վեցերորդ ողորմ արդարութեան յայլ առաքինութեան խառնի, 'ի խո նեմութեան յարիութեան կայալոն. այնպէս աղօթքն յամ բարեգործութիս. զի յորժամ պահեմք կամ ողորմիմք՝ աղօթեմք, զի ընդունելի լի ցի։ Եօթներորդ զի պտուղն մեր ողորմու թեանք՝ այժմ յերկինս ելանէ ևգանձի. այլ մեք ո՛չ. իսկ աղօթիւք և մտօք այժմ մեք յերկինս ելանեմք և մտանեմք 'ի ներքին վարա գուրին ընդ այ լինիմք։ Ութներորդ՝ պա հօք առ մեզ կարդացորիմք, և ողորմութե առ ընկերս. իսկ աղօթիւք առ ած կարդա ցորիմք ընդ այ խօսակից լինիմք։

Իններորդ պտուղն ունի ողորմութիւն որպէս օրինականն գնաց խոժոռեալ. իսկ աղօթքն ո՛ր քան յերկարէ ուրախանայ ա ղօթօղն. զի անճառելի խնդութիւն լոյս և սէր ծագէ 'ի միտս աղօթողին. վասն որոյ ասէ դաւիթ ուրախ լիցին սիրտք այնոցիկ որք խնդրեն զտէր։

Տասներորդ՝ ի պահոցն սատանայ ոչ փախչի. զի նա համապազ՝ ի պահս է. և ողորմութե մերձ լինի և խափանի: այլ յաղօթիցն փախչի յոր ժամ յիշեմք զանունն այ և զայլ սրբց. և կամ խաչ յերեսս նկարեմք. որպ խաւար՝ ի լուսոյ հալածի և ամ որոգայթք նր ցրւին: Մետասաներորդ զի պահքն քեզ է օգուտ, և ողորմութիւն որոց ետուր. իսկ աղօթքն քեզ և այլոց. և ամ աշխարհի արդարոց և մեղաւորաց, կենդանեաց և մեռելոց է օգուտ: Երկոտասաներորդ աղօթքն սոյնպէս անուն յայտնէ աղ. այսինքն որպ աղն յամ իր խառնի և զամ՝ ի համ բերէ. սոյնպէս աղօթքն յամ բարի գործս խառնի, քաղցր և ընդունելի առնէ այ: Այսպէս բարի է աղօթիցն գործք քան զայլ տեսակս առաքինութե և հաճոյ այ:

Արդ հարցումն թէ զի՞նչ է աղօթքն, խնդրուածքն, պաղատանք, և գոհութիւնքն: Գիտելի է նախ զի աղօթքն խօսք է ընդ այ. խնդրուածքն ներքսայի է. պաղատանքն հանդերձելոյն. գոհութիւն վն առաւել պարգևացն. Երկրորդ ասեն՝ աղօթք է բարձանք մարդոյ առ ած սրբ և համարձակ խօսիւք. և խնդրուածք է որ լինի վն հարկաւոր և ժամանակաւոր իրաց. պաղատանք է կալ առաջի այ և ժտել զհոգևոր օրհնութիւն. և գոհութի է՝ ի ճանաչմանէ երախտեացն այ: Երրորդ աղօթք է՝ համբարձումն մտաց առ ած՝ ի ցուցանել զամ պակասութիւ

մեր. և խնդրուածքն է որ լինի վասն այնր որ զանձն արժանաւոր համարի առնուլ. որպէս խնդրուածքն՝ որ լինի յետ բազում պահոց և ճնշելոյ զմարմինն. իսկ պաղատանքն է հայցել զողորմութիւն վասն չարչարանացն քրիստոսի և սրբոց նորա. և գոհութիւն է գովել զաստուած յընկալեալ բարեացն: Չորրորդ դարձեալ աղօթք է որ լինի ի քահանայէն ի ժամ պատարագին յետ ժամամուտին և տէր ողորմեային. և խնդրուածքն է որ լինի ի ծածուկ նախ քան զպատարագն. պաղատանք է որ լինի ի ներս ի կանոնն վասն կենդանեաց և մեռելոց. և գոհութիւն է որ լինի յետ հաղորդելոյն: Հինգերորդ գիտելի է վասն աղօթից զի ոմն աղօթէ պտղաւէտ. և ոմն անպտուղ: Որդ պտղաւէտն բազում տեսակս ունի: Նախ որ լինի ամօթով և խոնարհութեամբ. որպէս աղօթք մաքսաւորին որ ոչ իշխեր զաչս ի յերկինս համբառնալ. և անառակ որդին ասէր, հայր մեղայ յերկինս և առաջի քո ոչ եմ արժանի կոչել որդի քո: զի որպէս անհաճոյ է աստուծոյ յանդգնութիւն մեղաւորին. նոյն քան հաճոյ է նմա աղօթք և խոնարհութիւն զղջացելոյն: Երկրորդ որ լինի մաքուր փափաքանօք որպէս աղօթք շուշանայ որ ասէր՝ աստուած ծածկագէտ դու գիտես զի սուտ վկայեն վասն իմ. վասն որոյ փրկեաց զնա աստուած. և զսուտ վկայսն զծերսն կորոյս: Երրորդ է որ ընդարձակ բաղձանօք որպէս մովսէս ասէր թէ, թողուս զմեղս նոցա թող՝ ապա թէ

ոչ եւ զիս ջնջեամ ՚ի դպրութենէն յոր գրեցեր։
Չորրորդ որ լինի գոհացող ըղձմամբ. որպէս ասէ
պօղոս կողոսացւոց. աղօթից ստէպ կացէք
պնդեալ ՚ի նմին գոհութբ. այսոքիկ են պտ
ղաւէտ աղօթք։ Իսկ անպտուղ աղօթքն նոյն
պէս ունի բազում տեսակս։ Նախ է կեղծա
ւորացն որ լինի միայն շրթամբք. որպէս ասէ Ե
սայի, ժողովուրդս այս շրթամբք պատուէ զիս
եւ սրտիւ հեռացեալ մեկուսի է յինէն։ Զի
ասեն վարդապետք թէ, որպէս ձայն առանց ե
ղանակի է նման ձայն ճայից. այնպէս ա
ղօթք առանց ջերմութե սրտի, է փչուն ե
զանց. որպէս զանազանի ցորեան եւ յարդ, թեփն
եւ ալեւրն, մորթն եւ կենդանին, նոյնպէս է
ձայնական աղօթքն ջերմ սրտից. զի չար հո
վիւն միայն զոչխարին մորթն հատուցանէ
տեառն որ չէ ընդունելի. զի զողջակէզս զիւ
ղալիցս մատուցից քեզ ասէ մարգարէն։ Երկ
րորդ անպտուղ աղօթք անհամբերն է փու
թանակի. որպէս եղիա խնդրեաց մահ անձին
իւրոյ. երրորդ թագաւորութեց։ Երրորդ
է յանդգնաբարն. որպէս որդիքն զեբեթեայ
խնդրէին զարքայութն առանց ըմպելոյ զբա
ժակն։ Չորրորդ ծաղրական որպէս փարիսեց
ւոյն. այնպիսիքն ՚ի յերկինս ոչ համբառնան
զձեռս այլ ՚ի յերկիր անտի խնդրելով զվարձս
վն այն ծաղրական ասէ. զի ոչ խնդրեն յայ
զողորմութն. այլ իբրեւ զպարտս. որպէս ասէ պա

հեմ երկիցս 'ի շաբաթու և այլն. վա՛ այն տէ՛ն
զընդդէմն ուսուցանէ, յորժամ զա՛մ առնիջիք,
ասասջիք թէ ծառայք անպիտանք եմք:
Պարծեալ գիտելի է զի աղօթքն յե՛ս բաժա
նի: Նախ որ վա՛ խնդրեան ոք աղաչէ զա՛ծ. վա՛
հոգւոյ կամ վա՛ մարմնոյ, արքայութե՛ և այլն:
Երկրորդ այլ ոք աղաչէ վա՛ նորա և այն կոչի
օգնականութի՛. և զայս ունիմք նախ 'ի սրբոց
խնդրել որք են յերկինս մերձաւորք ք՛ի.
որպ՛ ասէ յոբ եթէ տեսցես զոգի ս՛բցն ապա
ւինեա 'ի նա. այս է որ ա՛մ սրբոց յա՛մ ա
ւուրսն կատարեմք եղբարբխօսութի՛ նոցա
խնդրեմք: Երրորդ պարտ է որ ժողովուրդն
խնդրէ 'ի քահանայէն որպ՛ ասէ՝ աղաչեսցէ
քահանայն վա՛ նր՛ և թողցի նմա: որպ՛ և քա
ւեաց ահարօն վա՛ ժողովրդեանն և դադա
րեցաւ սատակումն: Չորրորդ պարտ էին խնդ
րել զաղօթս 'ի միմեանց և առաւելորդք 'ի
ժողովրդոց. որպ՛ ասէ առաքեալն, եղբայր յեղ
բօրէ օգնեալ: և պօղոս 'ի կողոսացւոց խընդ
րէր, աղօթս արարէք եղբարք վասն մեր,
զի բացցէ մեզ զդուռն քարոզութեան բա
նին: և թէ պատերազմակից լինել ինձ յա
ղօթս: Հինգերորդ պարտ է աղօթել վա՛
նոցա որք 'ի տէր մեռանին մարմնով. կամ
մեղօք հիւանդ են: որպէս ասէ յակոբոս,
աղօթս արարէք ի վերայ միմեանց. և յօհան
նէս յառաջին կաթուղիկէյան ասէ, եթէ ոք

ուսուցէ զեղբայր իւր մեղուցեալ մեղս ոչ առ
'ի մահ, խնդրեսցէ եւ տացի կեանս մեղուցե
լոյն: ✠ Վեցերորդ գիտելին՝ զի ․է․ կեր
պիւ լինին աղօթքն հաճոյ: Նախ զի ոչ այլ ինչ
խնդրեսցէ միտքն, բայց զայն միայն զոր ա
ղօթէ. այսէ զոր ասէ պետրոս. լերուք զո
ւարթունք յաղօթս. զի ամեն վարդապետք
թէ ուղխտութբ աղօթէ, որ աղաչէ զած զի
հայեսցի 'ի նա. եւ նա ոչ ինքեան միտս դնէ
եւ ոչ այլ: Երկրորդ որ մեծաւ բաղձանօք ա
ղօթէ. որպէս ասէ յերկրորդ օրէնսն. խնդրե
ցէ՛ք զտէր ած ձեր յամ սրտէ ձերմէ. եւ այն
աղաղակել սրտին. որպէս ասէր տէր ցմովսէս
զի՞ գոչես առ իս: Երրորդ ջերմ արտասուք.
որպէս աննա ցանկագին անձամբ եկաց յաղօթս
առ տէր եւ ելաց լալով. վնորոյ էառ զխնդ
րելին, որպէս ասէ առաջին թագաւորութեցն:
զի ամեն վարդապետք թէ՝ արտասուք բռ
նադատեն զաղաչանս: Չորրորդ խոնարհու
թի. որպէս ասէ սաղմոս, հայեցաւ տէր յաղօթս
խոնարհաց եւ ոչ արհամարհեաց զխնդրուածս
նց. որպէս քանանացին որ նմանեցոյց զինքն շան
եւ էառ զխնդրելին. նոյնպէս եւ մաքսաւորն
խոնարհութբ էջ արդարացեալ 'ի տուն իւր:
Հինգերորդ աներկբայութի. որպէս ասէ մար
գարէն, միամտութբ սրտիւ խնդրեցէ՛ք զտէր.
զի երկմտեան ոչ առնու. որպէս ասէ յակոբոս, որ
երկմտեանէ մի՛ ակն ունիցի առնուլ ինչ յայ.

եւ այս է պատճառն զի ոչ հաճատոյ թէ ա-
մենակարող է ած եւ զամ բարիս մեր կամի։
Վեցերորդ. յերկարելն յաղօթս. որպ ասէ ղու-
կաս զանիրաւ դատաւորէն, թէ վն աշխատ-
ունելոյն արար դատաստան. զի թէ վն բա-
րեկամութե ոչ տայցէ, սակայն վն ժտութե
տայցէ։ Եւ եթէ ոք ասիցէ մի շատախօս լի-
նիք ասէ. պատասխանեմք թէ յերկար աղօ-
թելն ոչ է խօսան. զի տէրն հանէր զգիշերն
'ի գլուխ յաղօթսն որպ ասէ ղուկաս. այլ շա-
տախօսութիւն է աճելորդ բանի խնդրել զմար-
մնոյ եւ զանարժան իրս։ Եօթներորդ է ջեր-
մեռանդութի աղօթիցն. զի հուր եռացնէ
զջուրն. սոյնպէս ջերմեռանդութի զաղօթս.
եւ որպ խնկոյն ոչ ելանէ ծուխ թէ ոչ դնի 'ի
հուրն. նոյնպէս եւ աղօթքն ոչ ելանէ առ ած
եթէ ոչ 'ի ջերմ սրտէ. որպ ասէ ուղիղ եղի-
ցին աղօթք իմ որպ խունկ առաջի քո։ Վեց
երորդ գիտելի է զի .է. են արգելմունք ա-
ղօթից։ Նախ մեղք աղօթողին որպ ասէ սաղ-
մոս զմեղս թէ տեսանէի 'ի սրտի իմ թէ լուի-
ցէ ինձ տէր. զի որպ գէջ աչկն ոչ կարէ հայիլ
'ի լոյսն. նոյնպէս միտք մեղօք մածեալ ոչ ըն-
դունի զշնորհս ած։ Երկրորդ որ զանօգուտն
խնդրէ որպ պօղոս. զի 'ի մարմնոյն ոչ եբարձ
զի այն էր օգտակար նմա։ Երրորդ թէ անար-
ժանք են վն որոց խնդրէ. որպ ասէր առ ե-
րեմիա մի աղաչէր վն դոցա զի ոչ լսեմ քեզ։

Չորրորդ չար խորհուրդքն արգելուն. ով
աստ սիրեցեալքն, ճանճք մեռեալք զպղրա
ցուցանեն զիւղս անուշս. մեռեալ ճանճք
են չար խորհուրդք որ կորուսանեն զշնորհսն
այ, և ՚ի բաց մերժելի է. ով աբրահամ ՚ի բաց
մերժեր զթռչունսն որ նստէին ՚ի վր յօշելոյ
պատարագին: Հինգերորդ խստասրտութին.
նախ ընդդէմ օրինացն այ. երկրորդ ընդդէմ աղ
քատաց. երրորդ ընդդէմ մեղուցելոց. զի ա-
սէ առակն, որ ոչ լսէ օրինաց այ գարշելի
է աղօթք նր: և դարձեալ ասէ որ ոչ լսէ տը
նանկին, և ինքն ոչ լսիցէ նմա. և տէրն հրա
մայէ եթէ թողուցուք մարդկան զյանցանս
նոցա, թողցէ և հայրն ձեր զյանցանս ձեր:
Վեցերորդ յետ աղօթիցն յանձնելու ՚ի մեղս.
ով ասէ սիրաք մինն աղօթէ և միւսն անի
ծանէ ո՞ւմ լսէ տր. այսինքն որ այժմ աղօթէ
և զկնի հայհոյէ. այլև մեղքն հեռացուցանէ
յայ, վն այն զաղօթքն ոչ լսէ. ով ասէ սաղ
մոս ոյք հեռի ՚ի արարին զանձինս ՚ի քէն կորի
ցեն: Եօթներորդ է թիւր խնդրելն. այս է
թէ խնդրեմք զկենսն յաւիտենից բերանով
և ոչ սրտիւ. ըս աղաղակի լսեմք ով ասէ սաղ
մոս. լուեցի ես առ աղաղակել զօրհանապազ.
սոյնպէս աղօթքս ոչ լինի լսելի այ: Ութն
երորդ գիտելի է զի վն բազում իրաց օգուտ
և գովելի են աղօթք. նախ զի բազում անգամ
յորդորէ տէրն ՚ի սբ գիրս ով ասէ երեմիա,

կարդա առ իս եւ տաց քեզ պատասխանի. եւ սաղ
մոսն ասէ՝ կարդասցէ առ իս եւ ես լուայց նը
մա. եւ տէրն ասէ պարտ է յամ ժամ աղօթս
առնել. զի թէ ոչ կամէր զտալն ոչ յորդորէր
՚ի նմին զխնդրելն. եւ նա առաւել կամի զտալն
քան զառնուլն. Երկրորդ օրինակ ունիմք եւ
՚ի մբ գրոց. որ անկարօտն էր աղօթից, այլ վս
մեղուցելոց ասէ հանէր զգիշերն ՚ի գլուխ
յաղօթան այ. եւ թէ ել ՚ի լեառն կալ յաղօթս.
եւ թէ նստարուք անդր մինչեւ ես կացից յա
ղօթս. եւ այլ բազում: Երրորդ աղօթքն յոյժ
պատուական է. նախ զի հրեշտակք մտուցնեն
առաջի այ. դարձեալ՝ յորժամ աղօթեմք ընդ
այ խօսիմք եւ ընդ այ կամք: Չորրորդ օգուտ
է աղօթք ՚ի յայս կեանս. զի .գ. են որ ա
ծեն զմարդն յաղաղակել. որպէս հուրն եւ ջուրն
թշնամիք. այսինքն զի յամ օր բորբոքիմք ՚ի խղ
ճէ մտաց ՚ի հուր գեհենին. վսյ ջուր արտաս
ուացն շիջուցանէ: Դարձեալ յամ օր ալեկո
ծիմք ՚ի չար խորհրդոց արտից մերոց. վսյ ա
ղաղակեմք ընդ աշակերտացն տն փրկեա զմեզ
զի կորնչիմք: Դարձեալ թշնամին՝ հանապազ
մերձենայ ՚ի դրունս զգայութեց մերոց. վսյ խնդ
րեմք յայ զօգնութի. եւ զի այնպիսի փորձութք ոչ
է ՚ի հանդերձեալն. վսյն անդ աղօթքն ոչ է
հարկաւոր այլ աստ: Հինգերորդ աղօթքն ա
ռողջացնէ զհիւանդս որպէս ասէ առակորդն՝ ՚ի
հիւանդութե քում աղօթէ առ այ եւ բժշկեսցէ

Այլ եւ երկարակեաց առնէ. որպ ասէ եզեկի-
էլ, ճայ աղօթից քոց եւ տեսի զարտասուս
քո եյաւելում ՚ի ժամանակս քո ամս .ժե.:
Վեցերորդ ՚ի վշտաց իշխանաց՝ որպ ասէ ե-
րեմիա, դոչեցէք առ ած եւ ՚ի բռնութե իշ-
խանաց փրկեսցէ զձեզ. որպ ազատեցաւ պե-
տրոս ՚ի բանտէն վս աղօթից եկեղեցւոյն: Այլ
եւ առնէ յաղթող ՚ի պատերազմի. որպ մովսէս
յորժամ տարածանէր զձեռն ՚ի յաղօթս յաղ-
թէին զամաղէկ: Եօթներորդ փախուցանէ
զդեւս ըստ այնմ այս ազգ ոչ ելանէ եթէ ոչ
պահօք եւ աղօթիւք: Այլ փրկէ յորոգայթից
ըստորում չիք հնար զերծանիլ յորոգայթից
բայց միայն պահօք եւ աղօթիւք: Ութներորդ
լուսաւորէ զմիտս. զի իմս բանին ՚ի գործքն
եւ պետրոս ՚ի տանիսն կալ յաղօթս, ասեն վար-
դապետք թէ տարակոյան առաւել լուծանի
աղօթիւք քան թէ ուսմամբ. այլ եւ առա-
քեալքն աղօթելով լցան հոգւով սրբով:
Իններորդ աղօթքն բանայ զերկինս. որպ ասէ
ղուկաս բացաւ երկինքն ՚ի յաղօթելն յս. նոյն
պէս եւ փակէ զերկինս. որպ ՚ի յաղօթելն եղիայի
փակեցաւ երկինքն եւ ոչ ետ զանձրեւ: Այլ ՚ի
դէմ կայ բարկութե այ որպ զաապար. որպ ասէ
սաղմոսն, փութացե լայրն անարատ աղօթիւք
եւ խնկօք եւ եկաց ՚ի դէմ բարկութեն. եւ վս ծուլ-
տաւաջնորդաց ամբաստան լինի եսայի. ոչ ոք
որ կարդայ զանուն քո եւ յարուցել ըմբռնես

ցէ զքեզ: Տասներորդ աղօթիւք առնուն
զինչև խնդրեսցեն. ըստայնմ զոր ինչ խընդ-
րեսք առնուցուք: Եւ դարձեալ եթէ .Ը. և .Գ.
՛ի ձէնջ միաբանեսցին յերկրի վս՟ ամ՟ իրաց
զինչև խնդրեսցեն, եղիցի նց՟ ՛ի հօրէ իմմէ ։
Ձ՟ ի վե՟ այսր ամ՟ աղօթքն օգուտ է խաղա
ղութե՟ կենցաղավարելոյ. ոչ՟ առաքեալն տիմո
թէոսի առէր առնել աղօթս խնդրուածս՝
վս՟ թագաւորաց և ամ՟ իշխանաց. զի խաղաղու
թե՟ և հանդարտութե՟ վարեսցուք զկեանս մեր
որում և զմեզ արժանի արասցէ քս՟ ած՟ ողոր
մութե՟ն իւրոյ. և նմա փառք յաւիտեանս
յաւիտենից ամէն ։

Հիմնք գրչոյս

Պատմութիւն և ճառ, Ս՟ան ըստեղծմանն
ադամայ, և մարդանալոյն ՙՔ՟սի ած՟յ մերոյ։

Գլուխ ։ Ա. ։

Պատմութի՟ սադայելեան դասուն, թէ որ
պէսի պատճառաւ անկաւ ՛ի փառաց իւրոց։

Գլուխ։ Բ. ։

Ս՟ն ելանելոյն ադամայ և եւայի ՛ի դրախտէն։

Գլուխ ։ Գ. ։

Ա.յլև մեկնութի՟ վս՟ ադամայ և մարդկային
բնութեա։ Գլուխ ։ Դ. ։

Պատմութիւն յաղագս կայենի և Աբելի ։

Գլուխ ։ Ե. ։

Ա.յլև պատմութի՟ բանիս պարզաբար, թէ ոչ՟

տաստանորդեն երկնչիցի իւրեանց բանիւ
հրեշտակին։ Գլուխ։ Զ։
Վասն աւետեացն սեթայ զոր ետ ա՟ծ ադա
մայ յաղագս Աբէլի զոր ըսպան կայեն ՚ի մը
խիթարել Ադամ եւ Եւայ։
Գլուխ։ Է։
Այլ եւս զմեկնութիւն Ենաւքայ։
Գլուխ։ Ը։
Յաղագս հիւրընկալութեանն խրատ։
Գլուխ։ Թ։
Վասն հիւրընկալութեն Աբրահամու իւր̅
Ճանապարհին։ Գլուխ։ Ճ։
Վասն ծննդեանն Իսահակայ։
Գլուխ։ ՃԱ։
Այլ պատմութի Յակոբայ նահապետին։
Գլուխ։ ՃԲ։
Յաղագս գերութեան որդւոցն Իսրայէլի։
Գլուխ։ ՃԳ։
Այս է մեկնութիւն բանիս եւստակիս։
Գլուխ։ ՃԴ։
Պատմութիւն վ͞ն Մանասէի թագաւորին։
Գլուխ։ ՃԵ։
Պատմութի Տապանակի ուխտին Տեառն մ͞յ։
Գլուխ։ ՃԶ։
Երանելւոյն Եփրեմի խուրին ասորւոյ ասա
ցեալ յաղագս Նինուէի։ Գլուխ։ ՃԷ։
Այլ մեկնութիւն բանին վասն Յօնանու։
Գլուխ։ ՃԸ։

Պատմութիւն Մարիամու. և ծնողացն Յովա-
կիմայ և Աննայի։ Գլուխ։ ԺԹ։
Աւետիք Գաբրիէլի վասն Յօհաննու և Զա-
քարիայի։ Գլուխ։ Ի։
Յաղագս փորձութեան սբ. կուսին Մարիամու։
Գլուխ։ ԻԱ։
Վասն ծննդեանն Քրիստոսի տեառն մերոյ ՝ի սբ. այրին։
Գլուխ։ ԻԲ։
Վասն քառասնօրեայ գալստեանն Քրիստոսի ՝ի տա-
ճարն։ Գլուխ։ ԻԳ։
Այլև Պատմութիւն Յովհաննու Մկրտչին,
որ էր ՝ի յանապատին և եկն ՝ի մկրտութիւն։
Գլուխ։ ԻԴ։
Յաղագս գալստեանն Քրիստոսի յերուսաղէմ։
Գլուխ։ ԻԵ։
Վասն մատնութեանն Քրիստոսի։
Գլուխ։ ԻԶ։
Վասն խաչելութեան և չարչարանացն Քրիստոսի։
Գլուխ։ ԻԷ։
Զաւ մեծի Յարութեան Քրիստոսի տեառն մերոյ։
Գլուխ։ ԻԸ։
Եւ այլ պատմութիւն վասն Յարութեան տեառն
մերոյ։ Գլուխ։ ԻԹ։
Դարձեալ վասն յարութեան որ եղև Կղէոպանց։
Գլուխ։ Լ։
Քարոզ սրբոյն Եփրեմի ասացեալ վասն հա-
ւատոյ։ Գլուխ։ ԼԱ։

Եփրեմի ասացեալ Յաղագս մեկնութեան
առակին Քսի, թէ ՚ի բանից քոց արդարաս
ցիս. և ՚ի բանից քոց պարտաւորեսցիս։

Գլուխ ։ ԼԲ ։

Սրբոյն Եփրեմի ասացեալ վասն մարդե
ղութեանն աստուծոյ ։

Գլուխ։ ԼԳ։

Մեծի պահոց երկու շաբաթի աւուրն Քա
րոզ ՚ի բերանոյ Եսայեայ Մարգարէին որ ա
սէ։ Գլուխ։ ԼԴ ։

Քարոզ վասն խոստովանութեան ՚ի մեկ
նութի Սուրբ Աւետարանին Քսի որ ասէ։

Գլուխ ։ ԼԵ ։

Խրատ վասն խոստովանելոյ զմեղս առաջի
քահանային։ Գլուխ։ ԼԶ ։

Քարոզ վն յիշոցնատողաց ասացեալ։

Գլուխ ։ ԼԷ ։

Յոհաննու ոսկեբերանին ասացեալ վասն
ողորմութեան ։

Գլուխ։ ԼԸ։

Կարգաւորութիւն .Թ. դասուց Հրեշտա
կաց և նոցին փառաբանութեցն ։

Գլուխ ։ ԼԹ ։

Յաղագս գնալոյն ՚ի հռօմ Թագաւորին մե
րոյ Տրդատայ և Գրիգորի մերոյ Լուսաւոր
չին առ Կոստանդիանոս Թագաւորն և սեղ
բեստրոս հայրապետն ։

Գլուխ ։ Խ։

Քարոզ յաղագս խոստովանութե՛ ՚ի բանին որ ասէ առաքեալն։ Զայս թէ խոստովան լինիմք զմեղս մեր հաւատարիմ է նա և արդար առ ՚ի թողուլ զմեղս մեր ։

Գլուխ ։ ԽԼԸ ։

Նորին Գրիգորի Եռամեծի քարոզ վասն պաշտման պատուհասի ՚ի բանն Յովելայ որ ասէ. փող հարէք ՚ի Սիոն՝ սրբեցէք պահս՝ քարոզեցէք պաղատանս՝ ժողովեցէք զծերակոյտս։

Գլուխ ։ ԽԼԹ ։

Սարկաւագաց առաքեալքն ուստի էին կամ յորմէ՞ ցեղէ. կամ ո՛ւր կատարեցան ։

Գլուխ ։ ԽԿԻ ։

Քարոզ վասն ննջեցելոցն ասացեալ սրբոյն Գրիգորի Տաթևացւոյն ։

Գլուխ ։ ԽԿԻ ։

Քարոզ Գրիգորի Տաթևացւոյն ասացեալ մեկնութիւն աւետարանին վասն ոսկալուսթեան որ ասէ ։

Գլուխ ։ ԽԼԱ ։

Նորին Գրիգորի Եռամեծի և քաջ հռետորի հայոց վարդապետի ասացեալ յաղագս զանազանութե մեղաց առ հասարակ ։

Յայս գլխոյս մէջն տասնևեօթն կերպիւ հարցմունք կայ վասն որպիսութե մեղաց ։

Գլուխ ։ ԽՄ ։

Նորին Գրիգորի Եռամեծի աշակերտի մեծին Յոհաննու որոտնեցւոյ վասն առ հասա

րակ աղօթից Հարցումն:

Գլուխ: ԽԷ:

Նորին Գրիգորի տաթևեանն հեղինակի վասն առանձնական աղօթից Հարցումն:

Գլուխ: ԽԸ:

Նորին Գրիգորի Տաթևացւոյ քարոզ չէն վասն անպտուն որդւանցն Հարցումն:

Գլուխ: ԽԹ:

Նորին Գրիգորի Լուսամեծի առաջնորդի Տաթևեանն վերծանակի վասն Նեռին Հարցումն:

Գլուխ: Ծ:

Նորին Գրիգորի եւ առաւելի ասացեալ Վասն փոփոխման մարդոյ Հարցումն:

Գլուխ: ԾԱ:

Քարոզ ՚ի բանն որ ասէ. և հրամայեաց Դաւիթ թըրճել զժողովուրդն իւր:

Գլուխ: ԾԲ:

Նորին Գրիգորի ասացեալ Յաղագս Ա.զգա բանութեան լուսոյն և յօրինէ վայ Հարցումն:

Գլուխ: ԾԳ:

Նորին Գրիգորի տաթևեան հեղինակի ասացեալ Վասն սրբութէ կուսին Հարցումն:

Գլուխ: ԾԴ:

Մ՟ ածնանեաց հրեշտակին նորին Գրիգորի Հարցումն: Գլուխ: ԾԵ:

Նորին Գրիգորի դարձեալ վասն ասելոյ տեառն ածին զկնոյան Հարցումն:

Գլուխ: ԾԶ: 

Սորին դարձեալ վասն ժամանակաց մարդեղութեանն Քրիստոսի հարցումն։
Գլուխ։ ԾԷ։
Սորին, վասն բանին մարդեղութեան հարցումն։ Գլուխ։ ԾԸ։
Սորին դարձեալ թէ որքան ասի ծնունդ Քրիստոսի հարցումն։
Գլուխ։ ԾԹ։
Սորին Գրիգորի Եռամեծի ասացեալ, թէ միածին է որդին հարցումն։
Գլուխ։ Կ։
Սորին Գրիգորի Եռամեծի Տաթեւեան հեղինակի ասացեալ, թէ որպէս ասի գլուխ առաքելոց Պետրոս հարցումն։
Գլուխ։ ԿԱ։
Սորին Գրիգորի վասն թէ, միայն են որոշեալ հայք հարցումն։
Գլուխ։ ԿԲ։
Սորին դարձեալ վասն միաբանութեան եւ բաժանման եկեղեցւոյ հարցումն։
Գլուխ։ ԿԳ։
Գրիգորի Եռամեծի քաջ հռետորի եւ տիեզերալոյս Վարդապետի Քարոզ մն գալըստեանն Քնի եւ դատաստանին։ Զի որպ փայլակն որ ելանէ յարեւելից եւ երեւի մինչեւ յարեւմուտս՝ այնպէս եղիցի եւ գալուստ որդւոյ մարդոյ։ Գլուխ։ ԿԴ։
Սորին Գրիգորի ասացեալ վասն Մելքի

սեղեկի քահանային հարցումն ։

Գլուխ ։ ԿԷ ։

Քարոզ վասն աղօթից ՚ի բանն առաքելոյն Պօղոսի որ ասէ. Աղաչեմ զձեզ՝ նախ քան զամ առնել աղօթս, խնդրուածս պաղատանս։

Գլուխ ։ ԿԸ ։

✠ Յիշատակարան

ՓԱՌՔ ԱՄԵՆԱՍՈՒՐԲ ԵՐրորդութեան Հօր եւ Որդւոյ եւ Հոգւոյն սրբոյ։ Որ գերակարող զօրութ̃ նոյնոյ ամենախնամ արարչին ա̃յ, եհաս ՚ի կատար տպեցման հոգենորոգ գիրքս այս, որ կոչի ժողովածու ։

Ասացեալ ՚ի սրբոց Վարդապետաց չահ եւ օգուտ հոգւոց եւ մարմնոց առ ՚ի յընթերցումն եւ յունկնդրութիւն անձանց հաւատացելոց, ՚ի փառս ամենասուրբ երրորդութ̃ն

Ամէն

՚Ի Թըւականութեանս մերում. ՌՃԺԶ ին ։

՚Ի մարտի ․Ի․ ։

՚Ի հովուապետութեան տիրակառոյց արփիացընցուղ եւ երկնահանգոյն աթոռոյ Սրբոյ Էջմիածնի, Արհիական գլխոյն եւ Սրբազան Հայրապետին, Լորեցս երանելւոյն Տեառն

Աբրահամու Գերերջանիկ Կաթուղիկոսին
ամենայն Հայոց:

* Եւ ՚ի Պատրիարգական տեսչութեան. Բ̃նա
հռչէկ եւ լուսասահման քաղաքին Երուսաղէ
մի, եւ Բ̃նահին Աթոռոյ Սրբոյն Յակոբայ
ՏԵԱՌ՛Ն Եղիազարն վսեմական դիտապե
տի Տեառն Գրիգորի սրբազան եւ բանի
բուն Վարդապետի Բաղիշեցւոյ:

* Եւ յառաջնորդութեան մայրաքաղաքիս
Կոստանդնու պօլսոյ Տեառն Յօհաննիսի
քաջ իմաստ եւ լիաշնորհ Վարդապետի Բաղի
շեցւոյ: Ո՛վ Տէր Աստուած ընդ երկայն
աւուրս արասցէ զնուիրեանսն ՚ի փառս իւր
եւ ՚ի պարծանս մեր. Ամէն:

Արդ՝ որք ընթեռնոյք զսա եւ կամ ըստա
նայք. յիշեսջիք զպատճառ կրկին տպեց
ման ՚ի սր որ բազում ծախս ծախեաց ՚ի տպելն.
այսինքն զտէրացու Մ՛նացականն կոստան
դնու պօլսոյ համբերձ ծնողօքն իւրովք:
Այլեւ յիշեսջի՛ք ընդ նմին եւ զչիմիշկեզեկցի
ուսթա Ահետն՝ որ նա եւս արդեամբ յոյժ օգ
նեաց յաղագս տպեցման սորին: եւ զորդեակ
նորին զկէորակոսն: Նաեւ յիշեսջի՛ք զկազմա
րար տէրացու պետրոսն զկեսարացի որոյ միջ
նորդութեամբն իսկ եղեւ ՚ի լոյս ածումն սորա:
Եւ եւս յիշեսջի՛ք եւ զհայրն իմ ըստ հոգւոյ
ըզպատուելի տէր Գրիգորն, որոյ օրինա
կաւն գաղափարեցաք զսա:

Պարծեալ յիշել աղաչեմ եւ զքաջամարտիկ
եւ զքրտնաջան աշխատաւոր մշակս գործա
րանին իմոյ, զընթերցասէր եւ զքրտնաթափ
վաստակաւորն իմ զԽաչերն: Ընդ նմին եւ
զծերունի հայրն նորա զԳրիգորն: Նաեւ
զշարաքարդօղ եւ զյրծօղ գրոյս կապարեայ
զտիրացու Ստեփաննոսն եւ զտիրացու Ան
տօնն. որք դեգերէին յամրաժամ ընդգործա
նութեանս սորա:

Յիշեցէք եւ զհանգուցեալ ծնօղն իմ զմահ
տեսի Սարգիսն. եւ զեղբայրն իմ զՊետրոսն,
ամենայն ննջեցելովքս ՚ի Քրիստոս.

Նաեւ վերջապէս յիշեցէք եւ զիս զտրուպս եւ
զանխմաստս հանդերձ նորաբողբոջ որդե
կաւն իմով Սերապիոնիւ: Քանզի զաշխա
տանս ոչ սակաւս կրեցի զցայգ եւ զցերեկ ՚ի
սրբագրութեան սորա, բերելով ՚ի գործ ջանասէ
լութեն որ ՚ի վաղնջուց ՚ի շահիզ կանոնա
ւոր արհեստի փոքրիշատէ ընդունակ կարի
իմում. եւ զայն յոյժ ըշտապմամբ զի մի ինչ
արգել տայց ՚ի տպմանէ մշակացս:

Մեծորոյ առ այս խնդրեմ ՚ի ձերդ ազնուակա
նութէ ՚ի հարցդ իմոց եւ յեղբարցդ, զի ներե
ցէք սխալանաց մնացածոցն որ ՚ի սմա:

Զի եւ դուք ընկալջիք զներումն յանցանաց
ձերոց ՚ի Քնէ.

Փառաւոր ամենից Սրբոյ Երրորդութեան Պատիւ:

Ա Մ Է Ն



Ն